

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ
ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

*(ձեռնարկ բուհերի բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետների համար)*

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.51g7

Հ 282

*Ձեռնարկը հրատարակության են
երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետը և հայոց լեզվի ամբիոնը:*

Հեղինակ-կազմողներ՝

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Գ. Մ. ՆԵՐՍԵՍՅԱՆ,

Շ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ս. Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գրախոսներ՝

բ. գ. թ., դոց. Ա. Սարգսյան,

ֆիզմաթ. գ. թ., դոց. Գ. Միքայելյան

Խմբագիր՝

բ. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան

Հ 282 Հայոց լեզու և խոսքի մշակույթ (ձեռնարկ բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար)/ Հեղինակ-կազմողներ՝ Յու. Ս. Ավետիսյան, Գ. Մ. Ներսեսյան, Շ. Ս. Գևորգյան, Ս. Վ. Գաբրիելյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2021, 332 էջ:

Ձեռնարկում նկարագրվում են հայերենի տարբերակները, ժամանակակից հայոց լեզվի հիմնական գործառնություններն ու գործառնական ոճերը, ներկայացվում են խոսքի դրսևորման ձևերը, խոսքային վարվեցողության (էթիկետի) նորմերը, խոսքի արժանիքներն ու հրապարակային խոսքի առանձնահատկությունները, բանավեճի արվեստը: Առանձին հավելվածներով տրվում են գրագրության ձևեր, հայերենի կետադրության հիմնական կանոնները, ինչպես նաև ուղղագրության և կետադրության համը բնագրեր և թելադրության նյութեր:

Տեսական գիտելիքներին զուգահեռ՝ տրվում են նաև գործնական առաջադրանքներ և վարժություններ:

Ձեռնարկի և՛ տեսական, և՛ գործնական նյութը ունի ընդգծված մասնագիտական ուղղվածություն. վերաբերում է ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, երկրաբանություն և բնագիտական այլ առարկաների, ինչպես նաև մաթեմատիկայի և ինֆորմատիկայի լեզվին:

Նախատեսված է բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայոց լեզվով և խոսքի մշակույթով:

ՀՏԴ 811.19(07)

ԳՄԴ 81.51g7

ISBN 978-5-8084-2479-1

DOI: <https://doi.org/10.46991/YSUPH/9785808424739>

© ԵՊՀ հրատ., 2021

© Ավետիսյան Յու. Ս., Ներսեսյան Գ. Մ.,

Գևորգյան Շ. Ս., Գաբրիելյան Ս. Վ., 2021

Լեզուն շատ մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Մասնավորապես ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչների համար լեզուն ոչ միայն հաղորդակցության, այլև մտածելու, հայտնագործելու շատ կարևոր միջոց է: Որպես այդպիսին՝ լեզուն հասարակության մեջ էլ բոլոր հաղորդակցության միջոցներից ամենակարևորն է: Ասում ենք՝ ամենակարևորը, որովհետև առաջացել ու մշակվել է բնական ճանապարհով: Լեզուն պետք է միշտ գործածվի լավ, կատարյալ ձևով, այսինքն՝ տեղին և նպատակասլաց, հետևաբար անհրաժեշտ է, որ նա շարունակ կատարելագործվի, զտվի և դառնա հաղորդակցման, պայքարի սուր զենք:

Վիկտոր Համբարձումյան

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈՆԱՐԵՆ

Ժամանակակից բարձրագույն կրթության հիմնական խնդիրներից մեկը անհատականության զարգացման համար պայմաններ ապահովելն է: Մա ենթադրում է կրթական այնպիսի միջավայրի ստեղծում, որտեղ կրթություն ստանալով՝ անհատը հետագայում կարողանա ինքնադրսևորվել ոչ միայն իր մասնագիտության մեջ, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Հաղորդակցման հմտություններին տիրապետելը կյանքում հաջողության հասնելու ամենամեծ գրավականն է: **Հաղորդակցվելու շնորհքը մարդու մեծագույն հարստություններից մեկն է:** Ազդու, գեղեցիկ, տպավորիչ, տրամաբանված խոսքը հզոր գործիք է բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հասարակության մեջ և հանրային կյանքում որոշակի դիրք ունենալ, կարիերա ստեղծել կամ պարզապես ներդաշնակ հաղորդակցվել մարդկանց հետ, միջավայրում ներկայանալ որպես նպատակային, բանիմաց ու հետաքրքիր անձնավորություն:

Այդ նպատակին է կոչված ծառայելու նաև «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի դասավանդումը բուհերում: Տարիներ առաջ անհրաժեշտություն առաջացավ բուհերի ոչ բանասիրական ֆակուլտետների համար ստեղծելու հայոց լեզվի և խոսքի մշակույթի դասագիրք¹: Այն նախատեսված էր բոլոր ֆակուլտետների, բայց առավելապես՝ հումանիտար ուղղվածություն ունեցող ֆակուլտետների առաջին կուրսեցիների համար. վերլուծությունները, բերված օրինակները, դիտարկումները գերազանցապես հումանիտար ոլորտից էին՝ իրավագիտություն, քաղաքագիտություն, պատմագիտություն, արվեստ

¹ Տե՛ս **Ավետիսյան Յու. և այլք**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016:

և այլինչ: Բնականաբար, հեռանկարում նախատեսված էր կազմել նույնատիպ մեկ այլ դասագիրք՝ բնագիտական ուղղվածությամբ: Ավելին, նախատեսվում էր, զետեղվող տեսական նյութին զուգահեռ, դասագրքում ներառել նաև գործնական առաջադրանքներ և վարժություններ՝ կազմված հատկապես բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

Եվ ահա, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի մի խումբ աշխատակիցների շնորհիվ ստեղծվեց այս գիրքը՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ»՝ բուհերի բնագիտական ֆակուլտետների համար: Այս գրքի հիմքում դրված են վերը նշված նույնանուն դասագիրքը և «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկի»² նյութի մի մասը. դրանք արդեն մի քանի տարվա փորձարկում են անցել: Սույն դասագիրքը, ինչպես արդեն ասացինք, ունի նաև գործնական նյութերի բաժին՝ տեսականորեն մատուցվող դասերին զուգահեռ: Դասագրքի այս նոր կառուցվածքը՝ տեսական և գործնական նյութի համատեղ մատուցումը, կարծում ենք, նախընտրելի է և օգտագործողին կօգնի առավել արդյունավետ յուրացնելու անհրաժեշտ գիտելիքները:

Հասկանալի է, որ դասագրքում ամփոփված և՛ տեսական, և՛ գործնական նյութը բնագիտական բոլոր առարկաների համար չէր կարող նույն խորությամբ ու հավասար ծավալով ներկայացվել: Ավելին: Հեղինակները չեն ջանացել շատ խորանալ նեղ մասնագիտական հարցադրումների և վերլուծությունների մեջ, նախ՝ որովհետև դասընթացի բնույթից ելնելով՝ դրա անհրաժեշտությունը չկար, և հետո՝ դա դժվարություններ կստեղծեր բոլոր մասնագիտությունների գծով հավասարապես և հեշտությամբ յուրացնելու գրքում ներկայացվածը: Եվ վերջապես. դասագրքում ամփոփված և՛ տեսական, և՛ հատկապես գործնական նյութը կոչված է առավելապես ուղղորդելու ուսանողի հետաքրքրությունները և գիտելիքների յուրացումը. դասընթացի իրականացման գործընթացը ենթադրում է զուգահեռ լրացուցիչ տեղեկատվության և գիտելիքների մատուցում, որը ուսուցանողի կողմից կիրականացվի լրացուցիչ գրականության և բնագիտական տվյալ ենթադրություն հատուկ գործնական մշակված նյութի մատուցմամբ: Ենթադրվում է նաև ուսանողների ստեղծագործական ակտիվ մասնակցություն այդ աշխատանքներին:

Կարծում ենք՝ սույն ձեռնարկը ուսումնառության ընթացքում կօգնի բնագետ ուսանողներին տիրապետելու խոսքային հաղորդակցման հմտություններին,

² Տե՛ս Ներսեսյան Գ., Գաբրիելյան Ս., Գևորգյան Շ., Կիրակոսյան Ս., Քամայան Ա., Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., 2016:

ձեռք բերելու մասնագիտական կարողություններ, իսկ հետագայում՝ դրանք հաջողությամբ կիրառելու նաև աշխատանքային գործունեության մեջ:

Այս գիրքը իր տեսակի մեջ առաջին փորձերից է: Հեղինակները սիրով կընդունեն բոլոր այն առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կնպաստեն կատարված աշխատանքը մշակելուն:

ՄԱՍ 1

ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

*1.1. Լեզվի հասարակական դերը, հիմնական հատկանիշները (6): 1.2. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում (7): 1.3. Հայոց լեզվի ձևավորումը (8): 1.4. Հայոց լեզվի տարբերակները. բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու (10): 1.5. Գրական հայերենի զարգացման փուլերը. գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար (12): 1.6. Արևմտահայերեն և արևելահայերեն (14): 1.7. Պետական լեզու. հայոց լեզվի գործառնությունները (15): **Վարժություններ և առաջադրանքներ (16):***

1.1. Լեզվի հասարակական դերը, հիմնական հատկանիշները: Լեզուն **հասարակական** երևույթ է: Այն ստեղծվում է հասարակության, ժողովրդի կողմից՝ ծառայելով մարդկանց որպես հաղորդակցման միջոց: Լեզվի միջոցով մարդիկ միմյանց հայտնում են իրենց մտքերը, հասնում են փոխըմբռնման: Լեզվի շնորհիվ են ապահովվում սերունդների միջև կապը և ժառանգորդությունը, հոգևոր-մշակութային առաջընթացը: Լեզվական օրենքները առարկայական (օբյեկտիվ) բնույթ ունեն, այսինքն՝ գործում են խոսողի կամքից անկախ: Հասարակական գործոնը մեծ դեր ունի լեզվի զարգացման մեջ. հասարակական զարգացած կյանքով ապրող և քաղաքակիրթ ժողովրդի լեզուն նույնպես զարգացած է:

Հասարակական մյուս երևույթներից (մշակույթ, կրթություն, գիտություն ևն) և նշանային այլ համակարգերից (շարժումներ, լուսային, ձայնային, գունային, գծային ազդանշաններ ևն) լեզուն առանձնանում է մի շարք էական հատկանիշներով.

1. Լեզուն հաղորդակցման **հիմնական և կարևորագույն** միջոց է: **2.** Լեզվի՝ իբրև նշանային համակարգի **նշանակիչի** դերում հանդես է գալիս **ձայնը**՝ իր բոլոր հատկանիշներով: **3. Մտածողության** արտահայտման ձև է. ընդհանրացնում է **անհատական** ու **հասարակական** փորձի արդյունքները: **4.** Գոր-

ծառվում է հասարակական կյանքի **բոլոր ոլորտներում: 5. Ազգային գոյության** հիմնական ձևերից մեկն է, ինչպես մշակույթը, տնտեսությունը, բանակը, տարածքային ամբողջականությունը: **6. Համակարգ** է, որի տարրերը սերտորեն փոխկապակցված են. յուրաքանչյուր միավոր լեզվական կառուցվածքում ունի իր տեղը, դիրքը, դերը, գործառույթը:

1.2. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Ըստ գոյության ձևերի՝ տարբերակվում են **մեռած լեզուներ**, որոնք դադարել են գործածական լինելուց կամ ձուլվել են առանց էական հետք թողնելու, և **կենդանի լեզուներ**, որոնցով հաղորդակցվում է սովյալ սերունդը:

Մեռած լեզուները մեզ հայտնի են դարձել սոսկ պահպանված գրավոր հուշարձանների, արձանագրությունների, նկարագրությունների և այլ տեղեկությունների շնորհիվ: Հին աշխարհում բազմաթիվ լեզուների մահացման պատճառներից է եղել հսկա կայսրությունների ստեղծումը (օր.՝ հին պարսկական, հելլենական, արաբական ևն), երբ վերոհիշյալ լեզուները կրող նվաճված ժողովուրդները զանգվածաբար ոչնչացվել են նվաճողների կողմից, և կամ արմատավորվել ու գերիշխող է դարձել կայսրության հիմնական լեզուն (օր.՝ լատիներենը՝ Հռոմեական կայսրությունում): Մեռած լեզուները հաղորդակցման տարբեր ոլորտներից դուրս մղվելուց հետո երբեմն հազարամյակներ շարունակ կարող են պահպանվել որպես պաշտամունքային լեզուներ, ինչպես, օրինակ՝ լատիներենը՝ կաթոլիկ եկեղեցում, գրաբարը՝ հայ առաքելական եկեղեցում ևն:

Ըստ տարբեր հաշվումների՝ աշխարհում կան 2500-3000 մեռած և կենդանի լեզուներ, որոնցից այժմ գործածվում են ավելի քան 500-ը:

Ըստ տարածվածության (ըստ խոսողների քանակի)՝ առաջին շարքերում են չինարենը (1,2 մլրդ), անգլերենը (1,1 մլրդ), իսպաներենը (0,5 մլրդ), ռուսերենը (260 մլն) ևն: Հայերենը դասվում է առաջին հարյուր լեզուների շարքին (9-10 մլն):

Ըստ այն հատկանիշի, թե լեզուներից որը քանի երկրում **պետական կարգավիճակ** ունի, պատկերը հետևյալն է. միայնակ կամ տեղական լեզուների հետ միաժամանակ պետական կարգավիճակ ունեն ֆրանսերենը (27 երկրում), արաբերենը (23), անգլերենը (20), իսպաներենը (19), ռուսերենը (7), չինարենը (3) ևն: Հայերենը պետական լեզու է 2 երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում: Պետական կարգավիճակ ունեն 116 լեզուներ:

18-րդ դարում, երբ լեզուները դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէին, կատարվեց դասակարգման առաջին փորձը՝ **աշխարհագրական** դասակարգումը. առանձնացվեց լեզուների 5 խումբ՝ ըստ մայրցամաքների: Ինքնին հասկանալի է, որ նման դասակարգումը գիտական արժեք չուներ, քանի որ անտեսված էին լեզուների միջև եղած ներքին կապերը, էական ընդհանրություններն ու տարբերությունները: 19-րդ դարի սկզբում պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչները, հիմնվելով լեզուների ծագումնաբանական ցեղակցության տեսության վրա, հաստատեցին, որ լեզուների միջև եղած ընդհանրությունները ծագում են միևնույն աղբյուրից. ցեղակից լեզուներն առաջացել են նախկինում գոյություն ունեցած մի ընդհանուր լեզվից՝ **նախալեզվից** կամ **հիմնալեզվից**, որի պատմական զարգացմամբ կազմավորվել են առանձին ժողովուրդների լեզուները՝ իրենց ուրույն ընթացքով և սեփական առանձնահատկություններով:

1.3. Հայոց լեզվի ձևավորումը: Աշխարհի լեզուները թեև բազմաթիվ են, սակայն դասակարգվելով ըստ ծագման՝ ընդգրկվում են համեմատաբար սահմանափակ խմբերի մեջ: Ցեղակցական կապեր ունեցող առանձին լեզուների ամբողջությունը կոչվում է **լեզվաընտանիք**: Լեզուների ծագման գիտական տեսության համաձայն՝ հայերենը պատկանում է **հնդեվրոպական** լեզվաընտանիքին, որն ամենաբազմալեզու և լավ ուսումնասիրված լեզվական ընտանիքն է: Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից մեկն է. այն հնդեվրոպական հիմք լեզվից անջատվել է վաղնջական ժամանակներում՝ մեզանից 6000 տարի առաջ. ձևավորվել է հայասա-արմենական ցեղերի ու ցեղախմբերի լեզուների հիմքի վրա՝ սկզբնապես հաստատվելով **հնդեվրոպական նախահայրենիքի** (Փոքր Ասիա – Դանուբի ավազան – հարավային Ռուսաստանի տարածք) կենտրոնական շրջանում:

Հայոց լեզվի ծագման ու ցեղակցության վերաբերյալ տարբեր տեսակետներ ու վարկածներ են եղել: 19-րդ դարի առաջին կեսին եվրոպական մի շարք արևելագետներ (Պետերման, Վինդիշման, Մյուլլեր և այլք), հաստատելով հայերենի հնդեվրոպական լեզու լինելը, այն սխալմամբ համարում էին հնդիրանական ենթաճյուղին պատկանող մի բարբառ: 1875 թ. լույս տեսավ Հայնրիխ Հյուբշմանի՝ «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» աշխատությունը, որում հեղինակն առաջ քաշեց և ապացուցեց այն տեսությունը, որ հայերենն ինքնուրույն մի ճյուղ է հնդեվրոպական լեզվաընտանիքում և չի մտնում հնդիրանական ենթաճյուղի մեջ: Այս տեսակետը հետագայում զարգացրեց Հ. Աճառյանը և ցույց տվեց, որ հնդեվրոպական լեզուների արևելյան

խմբի մեջ մտնելով՝ հայերենն իսկապես իբրև ինքնուրույն ճյուղ է ներկայանում և առավել մերձավոր ցեղակցության մեջ է իրանական, հունական և սլավոնական լեզուների հետ: Այսպիսով, հայոց լեզուն ցեղակից է հնդկերենին, պարսկերենին, աֆղաներենին, քրդերենին, հունարենին, ալբաներենին, սլավոնական ու եվրոպական գրեթե բոլոր լեզուներին ևն:

Մինչև մ. թ. 5-րդ դարը հայերենի վերաբերյալ գրավոր վկայությունները խիստ սակավ են. այս շրջանում հայերի՝ սեփական գիր ունենալու մասին շրջանառվում են մի շարք հավանական և իրական փաստեր: Այսպես՝

- Ըստ Մովսես Խորենացու վկայության՝ Դարանաղյաց Անիում եղել են մեհենական հայագիր մատյաններ, որոնք հաստատում են մեհենական մշակույթի, հայկական գիր ու գրականության առկայությունը:
- Օտար աղբյուրների որոշ հեղինակներ (օրինակ՝ հույն պատմիչ Փիլոստրատոսը (մ. թ. 2-րդ դար)) գիր ունեցող ժողովուրդների շարքում թվում են նաև հայերին:
- Վարդան Արևելցին (13-րդ դար) խոսում է Կիլիկյան Հայաստանում գտնված դրամների մասին, որոնք դրոշմված են եղել հայերեն գրով:
- Դեռևս Կորյունը նկատում է, որ մաշտոցյան այբուբենից առաջ եղել են «դանիեյան» նշանագրեր³, որոնք հայերենի հնչյունական կազմը չարտահայտելու պատճառով մի կողմ են թողնվել:
- Ոմանց կարծիքով՝ հայերը դեռևս 4-րդ դարում ունեցել են հունականից և ասորականից տարբեր շարժական տոմար, որը նույնպես կողմնակի կերպով ակնարկում է հայ դպրության առկայությունը:
- Հեթանոսական աստվածների պանթեոնում հայերն ունեցել են գրի ու դպրության աստված՝ **Տիրը**. նշանակում է՝ գրի պաշտամունք ունեցող ժողովուրդը պետք է որ գիր ունենար: Ի դեպ, **գիր** բառը հայերենի հնագույն բառերից է և ժողովրդի հիշողության մեջ մնացել է **գիր անել**, **գրողը տանի** և այլ դարձվածքներում:

Մեր հարևան գրեթե բոլոր ժողովուրդները գիր են ունեցել, ուստի տրամաբանական է, որ հասարակական աշխույժ կյանքով ապրող, զարգացած, հարևան հարուստ մշակույթների հետ սերտորեն առնչվող հայ ժողովուրդը ևս պետք է գիր ու դպրություն ունենար: Ավելացնենք նաև, որ 5-րդ դարի գրի առնվելու

³ «Դանիեյան» գրերի մասին տե՛ս նաև **Մովսիսյան Ա.**, Կարևոր դիտարկում «Դանիեյան» նշանագրերի մասին, «Պատմություն և մշակույթ», Եր., 2017, էջ 7-12:

շրջանում հայերենը գեղեցիկ ու ոճավորված լեզու էր, ուներ մշակված քերականական կառուցվածք, հարուստ բառապաշար. նրանով շարադրվել ու թարգմանվել են գիտական, պատմական, փիլիսոփայական ծանրակշիռ երկեր, կատարվել է Աստվածաշնչի թարգմանությունը, զարգացել են բանաստեղծական արվեստը, թատրոնը, դպրությունը: Գրավոր նախազարգացում չունեցող լեզուն չէր կարող այսպիսի գործառնություններ ու հասարակական դեր ունենալ: Այսուհանդերձ, փաստ է, որ նախամեսոպոյան դպրությունը ոչնչացվել է, և այս շրջանի հայերեն գրավոր խոսքի որևէ նմուշ մեզ չի հասել:

Հայերենի պատմության այդ շրջանը՝ մինչև 5-րդ դարը, կոչվում է **հայերենի նախագրային շրջան**: Գրերի գյուտից (405 թ.) հետո սկսվում է հայերենի պատմության **գրային շրջանը**, որն իր հերթին բաժանվում է երեք փուլի՝ **հին հայերեն** (գրաբար՝ 5-11 դդ.), **միջին հայերեն** (կիրիկյան հայերեն՝ 12-16 դդ.), **նոր հայերեն** (աշխարհաբար՝ 17-րդ դարից սկսած)՝ իր երկու գրական տարբերակներով՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

1.4. Հայոց լեզվի տարբերակները. բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու:

Բարբառներ: Բարբառները լեզվի տարածքային տարբերակներ են և սպասարկում են հասարակության որոշակի հատվածների: Յուրաքանչյուր բարբառի բնորոշ են հնչյունական, բառային և քերականական առանձնահատկություններ, որոնցով էլ այն ինքնուրույնություն է դրսևորում և տարբերվում է մյուս բարբառներից ու գրական լեզվից: Խոշոր բարբառներն ունենում են նաև ենթաբարբառներ կամ խոսվածքներ. դրանց միջև եղած տարբերություններն ավելի քիչ են:

Բարբառների առաջացման հիմնական պատճառը տարածքային և լեզվական տարանջատվածությունն է: Հայերենի բարբառների թիվը հասնում է մոտ վաթսուհին: Լեզվաբանության մեջ առավել ընդունված է դրանց՝ Հ. Աճառյանի կողմից կատարված դասակարգումն ըստ ձևաբանական հատկանիշների՝ սահմանական ներկայի կազմության: Այդ մոտեցմամբ առանձնացվում են երեք ճյուղի բարբառներ:

1. Ում ճյուղ: Ներկան կազմվում է **ում**, **ամ**, **իմ** կամ նման այլ մասնիկներով (գնում եմ, էթըմ եմ). այս ճյուղին են պատկանում, օրինակ, Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի, Ջուղայի բարբառները:

2. Կը ճյուղ: Ներկան կազմվում է **կը, կու, գը, գի** մասնիկներով (կը խօսիմ, կուգամ, երգեմ գը): Այս ճյուղին պատկանող բարբառներից են Պոլսի, Կարի-նի, Մշո, Վանի, Կիլիկիայի բարբառները:

3. Ել ճյուղ: Ներկան կազմվում է **ել, ալ, իլ** վերջավորությամբ դերբայներով (կարդալ եմ, գրել եմ, չեմ գրել). այդպիսիք են Մարաղայի, Խոյի, Ուրմիայի բարբառները: Հետագայում **ել** ճյուղից առանձնացվել է **ս** ճյուղը՝ **գրես եմ, կարդաս եմ** (Մեղրու, Ուրմիայի, Հաղրուօթի բարբառներ):

Ազգային լեզվի զարգացումն ու փոխադարձ շփումները տանում են բարբառների աստիճանական վերացման:

Խոսակցական լեզու: Խոսակցական լեզուն տարածական ավելի մեծ ընդգրկում ունի, քան բարբառները, և միջին դիրք է գրավում գրական լեզվի ու բարբառների միջև: Այն իր մշակվածությամբ զիջում է գրական լեզվին. գործառական հիմնական ոլորտը բանավոր հաղորդակցումն է: Բարբառային տարրերը աստիճանաբար կարող են անցնել խոսակցական լեզու և մշակվելուց հետո փոխանցվել գրական լեզվին. այդ ճանապարհով գրական լեզու անցած բառերից են՝ **իրիկուն, աշնանացան, ավազակալել, գայլաձուկ, դեղձաչիր, երեքնուկ, գայլախնձոր, իշառվույտ, լորենի, լերդանալ, կեչի, կեղնել, կտցահարել, հասկակալել, մոշահավ, չեչաքար, սալջարդ, տանձուտ:**

Գրական հայերեն: Գրական հայերենը բարբառների ու խոսակցական լեզվի հիման վրա ձևավորված և գրական մշակման ենթարկված, կանոնարկված լեզվի տարբերակն է: Նրա հիմնական հատկանիշներն են՝ **1. մշակվածությունն ու նորմավորվածությունը, 2. միասնականությունը և հանրահասկանալիությունը, 3. ոճական բազմազանությունն ու բազմաթեքությունը:** Գրական լեզուն գործառվում է հասարակական կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում՝ առօրյա հաղորդակցում, գեղարվեստական գրականություն, գիտական ու պաշտոնական գործունեություն, մամուլ, կրթություն ևն:

Ազգային լեզու հասկացության համեմատությամբ **գրական լեզու** հասկացությունն ավելի նեղ իմաստ ունի. **ազգային լեզուն** որպես ազգ ձևավորված հայ ժողովրդի լեզուն է, որն ընդգրկում է մարդկանց խոսքային գործունեության բոլոր ոլորտները, ներառում է բարբառները, ժարգոնը, խոսակցականը: **Գրական լեզուն** համաժողովրդական ազգային լեզվի մշակված, խստորեն նորմավորված ձևն է. գրական լեզու էր **գրաբարը**, մասամբ՝ **միջին հայերենը**. ներկայումս մենք ունենք ազգային գրական լեզվի երկու տարբերակ՝ **արևելահայերեն և արևմտահայերեն:**

1.5. Գրական հայերենի զարգացման փուլերը. գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ արևմտահայերեն և արևելահայերեն: Հայոց լեզու կամ հայերեն ասելով՝ հասկանում ենք մեր լեզվի բոլոր տարբերակները՝ գրաբար, միջին հայերեն, գրական նոր հայերեն՝ երկու ճյուղերով՝ արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառներ, խոսակցական հայերեն:

Գրաբար (5-11-րդ դդ.): Հայերենի գրային շրջանի սկզբում (5-7-րդ դդ.) գրաբարը համաժողովրդական՝ և՛ գրական, և՛ խոսակցական լեզու էր: Գրաբարի ծաղկման շրջանը 5-րդ դարն է, որը Հ. Աճառյանը բաժանում է երկու ենթաշրջանների՝ **նուկեդարյան** կամ **մեսրոպյան** (405-460 թթ.) և **ետոսկեդարյան** կամ **ետմեսրոպյան** (461 թ.-ից հետո): Գրաբար բառացիորեն նշանակում է **գրի պէս**. պատճառն այն է, որ 7-րդ դարից սկսած՝ այն աստիճանաբար դադարում է ժողովրդի բանավոր հաղորդակցման լեզու լինելուց և մնում է միայն գրավոր լեզու, այսինքն՝ գրի ու գրականության լեզու՝ **գրաբար**: Հետագա զարգացման ընթացքում գրաբարի հիմքում սկսում է ձևավորվել միջին հայերենը, գրաբարի մեջ նաև մուտք են գործում բարբառների և աշխարհաբարի տարրեր:

Գրաբարը կանոնարկված, մշակված լեզու էր, ուներ հարուստ բառապաշար, մշակված քերականական կառուցվածք: Գրաբարից վկայված բառերի թիվը հասնում է 70 հազարի: Արդի հայերենը կառուցված է գրաբարի հիմքի վրա և պահպանում է նրա հիմնական հատկանիշները լեզվական բոլոր մակարդակներում: Բացի հիմնական բառապաշարին պատկանող բառերից՝ գրաբարից աշխարհաբարին են փոխանցվել զուտ գրաբարյան բազմաթիվ բառեր՝ **ակադձուն, ամանոր, արագոտն, գուղձ, դշխո, հիրավի, պախուրց** ևն, դարձվածքային արտահայտություններ՝ **ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, դարձ ի շրջանս յուր, ի խորոց սրտի, ձայն բազմաց՝ ձայն Աստծո, ձայն բարբառո հանապատի, քավ լիցի** ևն, քերականական կազմություններ՝ նոր կամ նորացված նշանակությամբ՝ **առթիվ, առձեռն, ընդամին, ի դեմս, իրավամբ, կեցցե, հայոց, ձեռաց, մասին, շնորհիվ** ևն:

Գրաբարով ստեղծվել է մատենագրական, իմաստասիրական, թարգմանական հարուստ ժառանգություն՝ Մովսես Խորենացի՝ «Հայոց պատմություն», Կորյուն՝ «Վարք Մաշտոցի», Եզնիկ Կողբացի՝ «Եղծ աղանդոց», Դավիթ Անհաղթ՝ «Սահմանք իմաստասիրության», չափածո հարուստ գրականություն՝ Մեսրոպ Մաշտոցի տաղերն ու շարականները ևն: 5-րդ դարում գրաբարով թարգմանվեց Աստվածաշունչը:

Միջին հայերեն (12-16-րդ դդ.): Այս շրջանում իբրև համընդհանուր գրական լեզու շարունակում էր գործածվել գրաբարը, իսկ խոսակցական ոլորտում՝ բարբառների հիմքի վրա ձևավորված միջին հայերենը: Միջին հայերենը կապող օղակ է դառնում գրաբարի և աշխարհաբարի միջև և՛ ժամանակագրական առումով, և՛ լեզվական որակի տեսակետից: Կիլիկյան շրջանում միջին հայերենը գրաբարին զուգահեռ սկսեց կատարել գրական լեզվի որոշ գործառույթներ և դարձավ Կիլիկյան թագավորության պետական լեզուն, սակայն չվերածվեց համահայկական գրական լեզվի, ինչպես գրաբարը կամ աշխարհաբարը: Այդ պատճառով միջին հայերենը հաճախ անհիմն անվանում են **կիլիկյան հայերեն**: Արդի հայերենի բառապաշարին միջին հայերենից քիչ թվով բառեր ու արտահայտություններ են փոխանցվել, որոնք հիմնականում խոսակցական բնույթի են՝ **գաթա, խավիժ, լավաշ, գզիր**. Ֆրանսերենից է փոխառվել **պարոն** (բարոն) բառը:

Միջին հայերենով նույնպես ստեղծվել է գեղարվեստական, պատմագրական, գիտական հարուստ գրականություն՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների աշխարհիկ տաղերը, Ֆրիկի սոցիալական քնարերգությունը, Նահապետ Քուչակի հայրենները, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունը» ևն:

Աշխարհաբար կամ **նոր հայերեն** (17-րդ դարից սկսած): **Աշխարհաբար** տերմինի առաջացումը կապվում է **աշխարհիկ, աշխարհական** բառերի հետ: Սկզբնական շրջանում անվանվել է նաև քաղաքացիական հայերեն, աշխարհորեն, աշխարհական լեզու, իսկ ավելի ուշ՝ **նոր հայերեն**: Գրական հայերենը աշխարհաբար հայերենի գրականացված տարբերակն է, որը կոչվում է նոր գրական **հայերեն** կամ **ժամանակակից հայերեն** (արդի հայերեն)՝ իր երկու ճյուղերով՝ արևելահայերեն և արևմտահայերեն: 19-րդ դարից սկսած՝ հայոց ազգային մշակույթի և քաղաքական զարթոնքին զուգահեռ ձևավորվեց **հայոց ազգային գրական լեզուն**:

Մինչև 19-րդ դարի կեսերը գրավոր հաղորդակցման հիմնական լեզուն գրաբարն էր: Գրաբարի կողմնակիցները պայքարում էին գրաբարը վերականգնելու, ընդհանուր հաղորդակցման լեզու դարձնելու համար՝ պնդելով, որ գրաբարը կանոնարկված, մշակված լեզու է, մինչդեռ աշխարհաբարի կողմնակիցները համոզված էին, որ հաղորդակցման լեզու միայն կարող է լինել թեև քիչ մշակված, բայց ժողովրդին հասկանալի, կենդանի լեզուն: Գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների այդ պայքարը հետագայում կոչվեց **գրապայքար**: 19-րդ դարի կեսերին հարցը լուծվեց հօգուտ աշխարհաբարի, և

գրապայքարի արդյունքում գրաբարն աստիճանաբար դուրս մղվեց գրավոր լեզվից՝ իր տեղը զիջելով աշխարհաբարին: Գրաբարի գործածությունն այժմ շարունակվում է միայն եկեղեցական արարողությունների ժամանակ, դասավանդվում է ավագ դպրոցում և բուհերի որոշ ֆակուլտետներում: Աշխարհաբարը մշակվեց, հղկվեց և համահայկական գրական լեզու դարձավ 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին:

1.6. Արևմտահայերեն և արևելահայերեն: Աշխարհաբարի **արևմտյան գրական տարբերակը** ձևավորվեց Կոստանդնուպոլսում՝ առավելապես Պոլսի բարբառի հիման վրա: Աշխարհաբարի տրոհումը երկու ճյուղերի պայմանավորված էր արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով.

1. Հայաստանը 387 թ. բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որի հետևանքով գերիշխող լեզուները և քաղաքակրթությունները տարբեր ազդեցություններ ունեցան աշխարհաբարի վրա. արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղավ թուրքերենի, ավելի ուշ՝ ֆրանսերենի ազդեցությունը, իսկ արևելահայերենի վրա՝ ռուսերենի:

2. Արևմտահայերենը հնչյունական համակարգով, քերականական որոշ հատկանիշներով ավելի սերտ առնչություններ է պահպանել միջին հայերենի հետ, իսկ արևելահայերենը նույն հատկանիշներով առավել մոտ է մնացել գրաբարին:

3. Տարբեր են նաև երկու տարբերակների բարբառային հիմքերը. արևելահայերենը հիմնվում է Արարատյան բարբառի (Երևանի խոսվածքի՝ **ու**մ ճյուղի), իսկ արևմտահայերենը՝ Պոլսի (**կը** ճյուղի) բարբառի վրա:

Արևելահայերենն ու արևմտահայերենը մեկ ազգային լեզվի երկու դրսևորումներն են՝ տարբերակները կամ ճյուղերը. երկուսին էլ հատուկ են գրական լեզվի հատկանիշները, երկուսն էլ մշակված ու կանոնարկված են և ծառայում են հայերենով խոսող հանրության բանավոր և գրավոր հաղորդակցմանը: Արևմտահայերենը գիտական և պաշտոնական ոճերում համեմատաբար քիչ է մշակված, նորմավորման ինչ-ինչ հատկանիշներով զիջում է արևելահայերենին, հարուստ է զուգաձևություններով. այն Մփյուռքի հայության բավականին սովոր հատվածի ընդհանուր հաղորդակցման լեզուն է, դպրոցի, մամուլի, գեղարվեստական գրականության լեզուն: Արևմտահայերենով ստեղծված են հարուստ մշակույթ, գեղարվեստական և գիտական գրականություն:

1.7. Պետական լեզու: Հայոց լեզվի գործառնությունները: Արևելահայերենը **պետական լեզու է:** 1918 թ.՝ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո, հատուկ հրովարտակով հայերենը հռչակվեց պետական լեզու: Խորհրդային Հայաստանի Սահմանադրությամբ հայերենին վերապահված էր պետական լեզվի կարգավիճակ: Ներկայումս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ունի Հայաստանի և Արցախի Հանրապետություններում:

Լեզուն իրականացնում է բազմապիսի գործառնություններ. դրանցից առավել կարևորներն են՝

- **հաղորդման** գործառնություն. մարդիկ լեզվի միջոցով հաղորդակցվում են, տեղեկատվություն են փոխանցում,
- **արտահայտման** գործառնություն. լեզվի միջոցով դրսևորվում են մարդու հույզերը, զգացմունքներն ու ներաշխարհը,
- **ճանաչողական** գործառնություն. լեզվի նշանային համակարգի միջոցով իրականացվում կամ ամրագրվում է մարդու գիտակցությունը. լեզուն հանդես է գալիս իբրև գիտակցության գործիք, արտացոլում է մարդու մտածական գործունեության արդյունքները:

Առանձնացվում են նաև այլ գործառնություններ՝ **ներագղման** (խոսքը հասցեագրված անձի վրա ազդելու միջոց լինելը), **նշանակողական** (իրերի, երևույթների, դրանց հատկությունների ու փոխհարաբերությունների նշանակումը), **մետալեզվային** (երբ մի լեզվի միջոցով նկարագրվում է ինչ-որ այլ լեզու. այսպես, օրինակ՝ հայոց լեզվի՝ ռուսերենով գրված քերականության առարկան հայերենն է, մետալեզուն՝ ռուսերենը), **գեղագիտական-բանաստեղծական** (լեզուն ընկալելը որպես առանձին գեղագիտական արժեք, որով ինքնատիպություն է տրվում, կենդանություն է ներարկվում հաղորդակցությանը) ևն:

Նշված բոլոր գործառնությունները իրականացնում է նաև հայոց լեզուն: Հայերենը նախ և առաջ **պաշտոնական գործավարության** լեզու է. Հայաստանի Հանրապետությունում այն պարտադիր գործառնություններ ունի պետական-պաշտոնական գործունեության բոլոր ոլորտներում՝ մաքսային և հարկային ծառայություններ, դատարան, հանրակրթություն, զանգվածային լրատվություն: Հայերենն են ընդունվում և հրապարակվում օրենքներն ու օրենսդրական մյուս ակտերը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ հայերենի առկայությունը պարտադիր է գովազդներում, ցուցանակներում, պիտակներում և զանգվածային օգտագործման այլ տեքստերում: Հայերենը նաև **կրթության, գիտության, գեղարվեստական գրականության, թատրոնի, կինոյի** լեզու է:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Որո՞նք են լեզվի հիմնական հատկանիշները:
2. Ինչպիսի՞ն է աշխարհի լեզուների պատկերն ըստ ծագման, տարածվածության, պետական կարգավիճակի: Ի՞նչ է նշանակում մեռած լեզու:
3. Թվե՛ք մի քանի լեզուներ, որոնց հետ հայերենը ցեղակցական կապ ունի:
4. Ի՞նչ տարբերություններ կան գրական ու խոսակցական լեզուների և բարբառների միջև:
5. Ո՞ր հայերենով են շարադրված տրված հատվածները⁴:

ա) Այսպես որ ԼԵ (35) տարին կու սկսնու ալեւորութիւնն, որ գիջութիւնն եւ տաքութիւնն երկուքն այլ կու պակսի: Եւ ի Կ (60) տարուն յետեւ ծերութենէ եւ յետեւ այսոր զայն տաքութիւնն եւ գիջութիւնն, որ ի ծննդենէն բերել կու սկսնու եւ պակասել եւ հատանել: Եւ այս պակասիլն եւ հատանիլն անճարակ է եւ պիտի, որ լինի եւ այնպես հատնի այդ տաքութիւնդ, որպէս որ ճրագին եղն հատնի, ճրագին՝ նայ լոյսն կու վատուծի (ԱՍ):

բ) Եւ ինքն երկրաչափութիւնն գտաւ յաստեղաբաշխութենէ: Քանզի ուշ եղեալ առաջինքն խոկային՝ թէ որ տեղիք երկրի ընդ որով կացեալ իցեն մասամբք երկնային բոլորակին: Եւ զմեծութիւն տուրնջեան եւ գիշերաց, եւ գոր ի վերայ երկրի, եւ գոր ի ներքոյ երկրի, միշտ բերելով յայտնեն (ԱՇ):

գ) Հայաստանում ճշգրիտ գիտությունների և բնագիտական ուղղության հիմնադիրը Անանիա Շիրակացին է: Նա գիտականորեն բացատրել է Արեգակի և Լուսնի խավարումները, մակընթացությունն ու տեղատվությունը, պաշտպանել Երկրի գնդաձևության մասին տեսակետը: Միջին դարերում բնագիտության բնագավառում զգալի ավանդ են ներդրել Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագը, Հովհաննես Երզնկացին, Ղուկաս Վանանդեցին և ուրիշներ:

դ) Ի՞նչ պետք, ի՞նչ պետք սակայն ըսել այս բոլորը, որ արդեն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու դժգոնութիւնը ունի: Ի՞նչ պետք մանաւանդ զբաղիլ պարագաներով, որոնց լաւագոյն դարմանը բառերուն ու խօսքերուն ույժը չի կրնար կազմել բնավ... Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն բարք, ըմբոնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն (ՇՇ):

⁴ Մեջբերումներում հիմնականում պահպանված է բնագրային կետադրությունը:

ե) Եւ լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգականէ գայ ի նա լոյսն: Եւ յայտ անտի է, ասէն, յորմէ կուսէ արեգականն իցէ, յայնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել: Եւ ըստ հեռաւորութեան արեգականն՝ սակաւ գայ ի նա լոյսն. եւ ըստ տակաւ տակաւ մերձենալոյն՝ յաճախէ ի նա լոյսն. եւ յորժամ մաւտ հասանէ ի նա՝ լնու. եւ յորժամ անցան է զարեգականր՝ սկսանի տակաւ նուաղել. եւ որչափ ի բացն հեռանայ՝ այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչէւ ամենեւին նուաղէ (ԵԿ):

6. Գրաբարով ստեղծված ի՞նչ գործեր գիտեք. թվէ՛ք դրանցից մի քանիսը:

7. Թվէ՛ք միջին հայերենով ստեղծված գեղարվեստական, գիտական, պատմագրական գործեր:

8. Օգտվելով բառարաններից՝ դեմ դիմաց դո՛ւրս գրեք արևելահայերեն և արևմտահայերեն համարժեքները⁵:

ա) Վատ, ատամ, անիկա, կծել, զլիցերին, զագար, կոնակ, հրաջերմ, հոն, գեշ, ուռուցքաբանություն, նա, լսել, ստեպոլին, խածնել, քիմիկոս, քաղցրիտ, լրանալ, քացախիլ, սակավագին, մեջք, սախարին, նշագրել, այտուցաբանություն, մտիկ ընել, մակագրել, բիկարբոնատ, էժան, բնալույծ//տարբաբան, լմննալ, այնտեղ, երկածխատ, ակոռ, քութեշ, ացետիլ, շաքարին:

բ) Ծերակույտ, ելնմտագետ, դաշտագետին, դեղատոմս, աշխարհագունդ, դեղաթափ, վերջնագիր, ախտարժարծ, ֆիզիկոս, ոռոգիչ, ներքնաձիգ, մանիշ, բեկարույծ, իսկագիր, հիվանդակառք, սառնանուշ, քարածուխ, ձայնասփյուռ, ախտաբորբոք, վավերագիր, վճռագիր, գլոբուս, բնախույզ, յոդ, պաղպաղակ, տնտեսագետ, սենատ, հարթավայր, բժշկագիր, հակաթույն, շտապօգնության մեքենա, հակուղիղ, ոսկրաբույժ, գետնածուխ:

9. Օգտվելով բառարաններից՝ գրե՛ք տրված բառերի իմաստների տարբերությունները արևելահայերենում և արևմտահայերենում:

Մուղ, գնացք, բանավոր, անուշ, ձգել, վայրկյան, հոտել, մականուն, պահարան, գրագետ, քանակ, պապուկ, տնտեսագետ, անցք, անսվաղ, եկամուտ, լսարան, պտտել, լաթ, դաշնակ, հով, կարգել, ձեռնարկ, իմանալ, գետնախնձոր, հանդերձյալ, պարապ, ընդծովյա, շառ, անլիություն, հակակշիռ:

⁵ Բառարանները տե՛ս <http://www.nayiri.com/> կայքում:

ՄԱՍ 2

ԽՈՍՔ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ:

ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան: Խոսքի մշակույթ հասկացությունը: Կապը այլ գիտաճյուղերի հետ (18): 2.2. Խոսք (19): 2.3. Խոսքի դրսևորման ձևերը (20): 2.3.1. Համառոտ և ծավալուն խոսք (20): 2.3.2. Բանավոր և գրավոր խոսք (20): 2.3.3. Մենախոսություն և երկխոսություն (22): 2.3.4. Արտաքին և ներքին խոսք (23): 2.3.5. Հեղինակային և ուրիշի խոսք (23): 2.3.6. Արձակ և չափածո խոսք (23): 2.3.7. Պարբերություն (24): Վարժություններ և առաջադրանքներ (24):

2.1. Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան: Խոսքի մշակույթ հասկացությունը: Կապը այլ գիտաճյուղերի հետ: Խոսքի մշակույթի ուսումնասիրության **առարկան** խոսքն է, խոսքի արժանիքները, հաղորդակցական յուրահատկությունները, դրա դրսևորման առանձնահատկությունները լեզվի գործառական տարբերակներում: **Նպատակը՝** ուսումնասիրել խոսքը, հաստատել խոսքի ընդհանուր օրինաչափությունները և դրա միջոցով հասարակության մեջ մշակել գրական խոսքի բարձր ճաշակ:

«Խոսքի մշակույթ» **հասկացությունը** կիրառվում է երկու հիմնական նշանակությամբ:

ա) Խոսքի մշակույթը բանասիրական գիտությունների գիտաճյուղ է: Ուսմունք է խոսքի հաղորդակցական որակների համակարգի մասին:

բ) Մարդու գիտելիքների և ունակությունների ամբողջությունն է, որ ապահովում է լեզվի նպատակաուղղված կիրառությունը հաղորդակցման համար: Սա ենթադրում է գրավոր և բանավոր խոսքի նորմերի իմացություն և դրանց

տեղին ու արտահայտիչ գործածություն՝ խոսքի բովանդակությանը և նպատակներին համապատասխան⁶:

Իբրև գիտաճյուղ՝ սերտ առնչություն ունի տրամաբանության, հոգեբանության, գեղագիտության, գրականագիտության և այլ գիտաճյուղերի հետ: Բնականաբար, առավել շատ ընդհանրություններ ունի լեզվաբանական մյուս գիտությունների հետ՝ ընդհանուր լեզվաբանություն, լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու ևն: Վերջիններիս ուսումնասիրության նյութը լեզուն է՝ իր ձևավորման հարցերով, զարգացման ընթացքով, կառուցվածքով, մակարդակներով: Խոսքի մշակույթը, ինչպես ասվեց, ուսումնասիրում է լեզվի կիրառական տարբերակը՝ խոսքը: Ավելի սերտորեն է առնչվում ոճագիտության հետ, այնքան, որ հաճախ դրանք դիտարկվում են նույն դասընթացում՝ **Խոսքի մշակույթ կամ Ոճագիտություն** ընդհանուր վերտառությամբ: Այդ երկու ճյուղերի սահմանները տակավին հստակորեն որոշարկված չեն. լայն առումով՝ խոսքի մշակույթի ուսումնասիրության նյութը ներառում է նաև ոճագիտության հարցերը՝ լեզվական նշանի ոճական կիրառությունները, գործառական ոճերը ևն:

2.2. Խոսք: Իրենց մտքերն ու զգացմունքներն արտահայտելու, հաղորդակցվելու համար մարդիկ օգտագործում են լեզվական նշանները և դրանց կիրառության կանոնները: Այդպես է առաջանում խոսքը կամ խոսողությունը՝ խոսքային գործունեությունը:

Խոսքը լեզուն է գործածության մեջ, լեզվի կիրառական տարբերակն է կամ արտահայտությունը: Լեզուն նույնպես, ինչպես մտածողությունը, կարողություն է, տվյալ լեզվին տիրապետող մարդու խոսելու կարողությունը: Խոսելու կարողության իրացումը այլ բան չէ, քան մտածելը, որը միշտ լեզվական ձևավորում ունի և դառնում է խոսք:

Խոսքը լեզվից տարբերակվում է մի քանի հատկանիշներով.

- Խոսքը անհատական, հոգեբանական երևույթ է՝ պայմանավորված խոսողի անհատական հատկանիշներով, լեզվամտածողությամբ, իսկ լեզուն հասարակական, սոցիալական երևույթ է:

⁶ Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 280:

- Խոսքը փոփոխական է, շարժուն և ենթակա է արտալեզվական ուժեղ ազդեցության (հասարակական, քաղաքական ևն), իսկ լեզուն ձգտում է կայունության, անշարժության:

- Խոսքը պատմական երևույթ է, մինչդեռ լեզուն ապաժամանակային է, ոչ պատմական և համեմատաբար անկախ է պատմական կարճ ընթացքից:

Լեզվական փոփոխություններն ու տեղաշարժերը սկզբնապես ձևավորվում են խոսքում և ապա, քանակային ու որակական արժեքով որոշակի համակարգի վերածվելով, աստիճանաբար անցնում են լեզվին և ձևավորվում որպես լեզվական կանոն (նորմ): Այսպիսով՝ լեզուն զարգանում է խոսքային մակարդակում և խոսքի միջոցով:

2.3. Խոսքի դրսևորման ձևերը: Ըստ մի քանի սկզբունքների՝ առանձնացվում են խոսքի հետևյալ տարատեսակները՝ **համառոտ** և **ծավալուն**, **բանավոր** և **գրավոր**, **մենախոսություն** և **երկխոսություն**, **արտաքին** և **ներքին**, **հեղինակային** և **ուրիշի**, **արձակ** և **չափածո** ևն:

2.3.1. Համառոտ և ծավալուն խոսք: Ըստ **ծավալի**՝ խոսքը լինում է **համառոտ** և **ծավալուն**: **Համառոտ** է, երբ նրանով քիչ բան է ասված: Խոսքի նվազագույն միավորը նախադասությունն է՝ մեկ ամփոփ, կարճ միտք. սա նշանակում է, որ համառոտ խոսքը կարող է արտահայտվել նույնիսկ մեկ բառով՝ «Այո՛», «Կիտսենք», «Իհա՛րկե» ևն: Համառոտ խոսքի օրինակներ են առածներն ու ասացվածքները, կոչերը, վերնագրերն ու անվանումները: **Ծավալուն** խոսքը մտածությունների մի ամբողջ շարք է, օրինակ՝ ընդարձակ նկարագրությունը, զեկուցումը, պատմվածքը, ավելի ծավալուն՝ վեպը, վեպերի շարքը ևն:

2.3.2. Բանավոր և գրավոր խոսք: Ըստ **արտահայտման եղանակի**՝ խոսքը լինում է **բանավոր** և **գրավոր**: Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին: Այն հնչող խոսքն է և ձևավորվում է հաղորդակցման ընթացքում: Չափազանց մեծ են հնչերանգի հնարավորությունները՝ նվազայնությունը, տեմպը, բարձրությունը, ելևէջումը ևն, կարևոր դեր են կատարում տրամաբանական շեշտը, դադարը, արտասանության հստակության աստիճանը ևն: Իբրև կանոն՝ ենթադրում է խոսողի և լսողի անմիջական շփում. հնարավորություն կա անմիջական կապ ստեղծելու լսարանի հետ: Բանավոր հաղորդակցումը հիմնականում իրականանում է միաժամանակ լսողական և տեսողական ուղիներով: Բանավոր խոսքի արտահայտչականությունը էապես ուժեղացնում են արտալեզվական գործոնները՝ շարժումները, դիմախաղը, հա-

յացքը, կեցվածքը, տարածական վարքը, հագուստը, փոխադարձ ընկալումը, արձագանքը են: Սովորաբար այն **հանպատրաստից** բնույթ է ունենում. խոսողը ստիպված է միաժամանակ և՛ մտածել, և՛ խոսել, ուստի հաճախ ձևավորվում է ընդհատումներով, հատվածաբար, սակայն կարող է լինել նաև նախապես պատրաստված ու մշակված (զեկուցում, ճառ են):

Այս խոսքին բնորոշ է **անշրջելիությունը**. ինչպես ասում են՝ «Երեք բան երբեք չեն վերադառնում՝ արձակված նետը, ասված խոսքը, անցած օրերը», «Ասվածը էլ հետ չես բերի», կամ՝ «Քանի դեռ խոսքը բերանումդ է, դու ես նրա տերը. հենց բերանիցդ դուրս եկավ, նա է քո տերը»: Մա նշանակում է, որ հաղորդակցական լուրջ իրավիճակներում մեծ պատասխանատվություն պետք է դրսևորել ասվածի նկատմամբ, ծանրութթն անել յուրաքանչյուր բառ: Արտահայտության ձևերն են զեկուցումը, գրույցը, բանավեճը, ճառը, կոչը են:

Բանավոր խոսքի անմիջական նպատակը որոշակի տեղեկություն կամ բովանդակություն արագ հաղորդելն ու ընկալելն է. խոսքի այս տեսակին բնորոշ են գրական լեզվի նորմերից շեղումները: Գործածական են խոսակցական բառեր, արտահայտություններ, խոսքային համառոտ կառույցներ՝ թերի ու միակազմ նախադասություններ, առավելապես պարզ նախադասություններ, բարդերից՝ շարահարությամբ (առանց շաղկապների) կապված բաղադրիչներով համադասական նախադասություններ: Հազվադեպ են դերբայական դարձվածները, ավելի հաճախակի են հանդիպում եղանակավորող բառեր, ձայնարկություններ, զանազան միջարկումներ, կրկնություններ. բնորոշ են զեղչումը, շարադասական խախտումները:

Գրավոր խոսքը ձևավորվում է մարդկության զարգացման համեմատաբար բարձր փուլում՝ որպես գրանցման նշանային համակարգ: Իրացվում է գրային պայմանական նշանների (տառեր, գաղափարագրեր, պատկերագրեր են) գործադրմամբ, ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով: Գրավոր խոսքը բացառիկ կարևոր դեր է կատարում մարդկային մտքի մշակման, մտածողության զարգացման և կատարելագործման մեջ. այն քաղաքակրթության զարգացման չափազանց էական գործոն է:

Գրավոր խոսքը հնարավորություն է տալիս մարդկության կուտակած գիտելիքը ամրագրելու և փոխանցելու սերնդից սերունդ: Այն հաղորդակցման միջնորդավորված ձև է, որի վրա անմիջականորեն չի ազդում ընթերցողների արձագանքը: **Անհամեմատ մշակված է**. հեղինակը կարող է անդրադառնալ գրածին, ուղղել, փոփոխություններ կատարել, դարձնել ավելի տպավորիչ ու

ագդեցիկ: Գրավոր խոսքում հիմնականում գործառուում է խստորեն նորմավորված գրքային-գրական լեզուն:

Գրավոր կամ բանավոր խոսք ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ՝ խոսքի թեման, տեսակը, լսարանը, իրավիճակը, միջավայրը, խոսողի անհատական կարողությունները, հմտությունը ևն: Այսպես օրինակ՝ գիտական զեկուցումը, հաշվետվությունը, դատավճիռը, ուղերձը, տեղեկագիրը և խոսքի այլ տեսակներ բնական են հնչում, եթե արտահայտվում են գրավոր ձևով: Փաստաբանի ելույթը, ողջույնի կարճ խոսքը, բաժակաճառը կամ շնորհավորանքի մտերմիկ խոսքն ավելի տպավորիչ են, երբ բանավոր են հնչում. նման դեպքերում հուշաթուղթ օգտագործելը թուլացնում է խոսքի ազդեցությունը: Բանավոր արտահայտիչ, գրավիչ խոսքի արվեստին տիրապետելը շնորհքի և բանիմացության նշան է:

2.3.3. Մենախոսություն և երկխոսություն: Ըստ մասնակիցների քանակի՝ տարբերակում են **մենախոսություն** և **երկխոսություն**: Առաջինը մեկ մարդու խոսք է, որով նա դիմում է այլ անձի կամ լսարանի կամ ինքն իրեն. մենախոսության տեսակներ են գիտական զեկուցումը, դասախոսությունը, ելույթը ևն: Խոսքի այս տեսակը սովորաբար ծավալուն է, նախապես մտածված ու ծրագրված: Կարևոր դեր ունեն արտալեզվական միջոցները՝ լսարանի արձագանքը, միջավայրը, իրադրությունը ևն: Մենախոսելիս լսարանի կամ խոսակցի վրա տպավորություն թողնելու և ներագդելու համար փորձ ու հմտություններ են պետք:

Երկխոսության ժամանակ հաղորդակցումն իրականացվում է երկու կամ ավելի անձերի միջև. սա **իրադրային** խոսք է, սովորաբար հանպատրաստից է և մեծապես պայմանավորված խոսքային իրադրությամբ: Երկխոսության ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ոչ խոսքային հաղորդակցման միջոցները՝ խոսակիցների փոխհարաբերությունն ու մտերմության աստիճանը, տրամադրությունը, քննարկվող խնդիրների բնույթը, խոսողների սոցիալական և ինտելեկտուալ մակարդակը, այլ անձանց ներկայությունը ևն: Հաճախ **հատվածական** բնույթ է կրում. եթե զրուցակիցները մտերիմներ են, լավ գիտեն իրար կամ տիրապետում են քննարկվող խնդիրներին, ապա զրույցն ընթանում է սահուն, փոխըմբռնման պայմաններում, ուստի կարող է ընդմիջարկվել, կրճատվել: Խոսքը կտրտվում կամ հաճախակի ընդմիջարկվում է նաև այն դեպքում, եթե զրուցակիցները հուզված են կամ բանավիճում են: Բոլոր դեպքերում շատ կարևոր է, որ խոսակիցները կարողանան լսել իրար,

հասկանան ասելիքը և ապա արձագանքեն. հակառակ պարագայում խոսքը կձախողվի՝ վերածվելով մենախոսության կամ չստացված երկխոսության:

2.3.4. Արտաքին և ներքին խոսք: Ըստ **արտահայտման ձևի**՝ խոսքը կարող է լինել **արտաքին** և **ներքին**: **Արտաքին** խոսքը հնչյունական-արտասանական կամ գրային իրացում ունեցող խոսքն է. դրանով է մարդը ներկայանում հանրությանը, իր միջավայրին, շրջապատին:

Ներքին խոսքը անձի ներաշխարհում ընթացող լռելյայն խոսքն է. այն հնչյունական կամ գրավոր դրսևորում չունի, ուղղված չէ ունկնդրին կամ էլ հասցեագրված է երևակայական, ենթադրական որևէ խոսակցի: Սա մի տեսակ նախապատրաստություն է բարձրաձայն խոսքի և արագ կարող է վերածվել մենախոսության կամ երկխոսության: Մեր մտածողությունն ու ներհոգեկան գործընթացները չեն կարող ընթանալ առանց խոսքի օգնության, ուստի երբ մենք լուռ ենք, այնուամենայնիվ խոսում ենք. ներքին խոսքը մտքերն ու գործողությունները կանխատեսելու և ծրագրելու միջոց է: Այս խոսքին բնորոշ է **հատվածականությունը**, քանի որ մարդը սեփական մտքերը ծավալուն շարադրելու կարիք չունի. միայն մեկ բառ-հասկացությունը բավական է նրան՝ որևէ ընդարձակ միտք գիտակցելու կամ հասկանալու համար, հետևաբար օգտագործվող լեզվական միջոցները հասնում են նվազագույնի: Իր այս բնույթով ներքին խոսքը կարելի է համարել արտաքին խոսքի նախապատրաստման փուլ:

2.3.5. Հեղինակային և ուրիշի խոսք: Ըստ **պատկանելության**՝ տարբերակում են **հեղինակային** և **ուրիշի խոսք**: Հեղինակային խոսքը խոսողից կամ գրական ստեղծագործության հեղինակից սերող խոսքն է՝ ի տարբերություն ուրիշի խոսքի կամ գրական հերոսների խոսքի: **Ուրիշի խոսքը** այլ անձի ասած (գրած) խոսքն է, որը մեջբերվում է հեղինակի (խոսողի) կողմից գրավոր կամ բանավոր կերպով: Հաճախ է հանդիպում առօրյա-խոսակցական լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, գիտական խոսքի որոշ տեսակներում:

2.3.6. Արձակ և չափածո խոսք: Արձակ խոսքը, որպես կանոն, կառուցվածքային ու ծավալային սահմանափակումներ չունի. խոսքի բնական վիճակն է և աչքի է ընկնում լեզվական ամենաբազմազան միջոցների գործածությամբ: Չափածո խոսքին բնորոշ են կառուցվածքային ու ծավալային որոշ պայմանականություններ՝ ընդունված կամ պարտադրված ձևեր ու հատկանիշներ (հանգ, ուրիշ, չափ, կշռույթ, լեզվական ձևերի ու ոճական միջոցների ընտրո-

ղականությունն են): Սա մի տեսակ արհեստական խոսք է, մտածողության ոչ բնական եղանակի արդյունք:

2.3.7. Պարբերությունը տեքստի՝ իմաստային ինքնուրույնություն և միասնություն ունեցող հատվածն է, որը կազմված է առնվազն մեկ նախադասությունից: Պարբերության նախադասությունները կապված են բովանդակային ու ռիթմահնչերանգային որոշակի ներդաշնակությամբ, բնորոշվում են կառուցվածքային, իմաստային ավարտվածությամբ, մասերի համաչափությամբ, կապակցվող տարրերի միատեսակությամբ, արտասանական գրեթե նույն տևողությամբ և հնչերանգային հստակ անցումներով:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Որո՞նք են լեզուն և խոսքը բնութագրող տարբերակիչ հատկանիշները:
2. Թվարկե՛ք խոսքի դրսևորման ձևերը:
3. Բերե՛ք համառոտ և ծավալուն, չափածո և արձակ, հեղինակային և ուրիշի խոսքի օրինակներ:
4. Նշե՛ք խոսքի բանավոր և գրավոր տեսակներին բնորոշ հիմնական հատկանիշները:
5. Համեմատե՛ք տրված հատվածները. նշե՛ք՝ ինչ հատկանիշներով են բնութագրվում մենախոսությունն ու երկխոսությունը, արտաքին և ներքին խոսքը, հեղինակային և ուրիշի խոսքը:

ա) Հայր պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից: Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի: Եվ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ ապրելը պարտադիր չէ: Եվ հարյուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապվում հավաքական, չպարտավորեցնող, սրտագին սիրով:

Հայր հավաքական գոյությունից վեր է դասում հավաքական սերը առ ոչինչ: Հարյուրամյակներ շարունակ մաս-մաս մեր հայրենիքը դարձնելով պատմական՝ մաս-մաս ուժեղացնում ենք մեր հարևաններին, ուժեղացնելով՝ հոչակում թշնամի, նեղվում ենք թշնամու հարևանությունից, անիծում ենք մեր իրական հայրենիքի փոքրությունը և երագում մի հզոր, մի խաչակրաց բա-

նակ, որ դարձյալ կգա ու կանցնի մեր հայրենիքի, մեր պատմական հայրենիքի, մեր հարևանների վրայով ու այս անգամ, գուցե, հավերժորեն մնա (ՎՄ):

բ) Մի երեկո հորս կրտսեր եղբայր Սեդրակը, հեծանիվը նստած, փողոցով ցած իջավ: Նա հեծանիվի ոտնակը դեմ տվեց փայտե մայթեզրին ու մոտեցավ.

- Ինչու՞ ես այդպես մտահոգ , - ասաց նա:
- Առաջ մենք որտե՞ղ ենք ապրել, - հարցրի ես:
- Դու ծնվել ես այստեղ, - պատասխանեց նա: - Դու քո ամբողջ կյանքն այս հովիտում ես ապրել:
- Իսկ որտե՞ղ է ապրել իմ հայրը, - հարցրի ես:
- Հին երկրում, - ասաց նա:
- Քաղաքի անունն ի՞նչ էր:
- Բիթլիս:
- Քաղաքը որտե՞ղ էր:
- Լեռներում: Լեռներում էր կառուցված:
- Իսկ փողոցնե՞րը:
- Փողոցները քարերով էին սալարկված, ծուռումուռ էին ու նեղ:
- Հորս Բիթլիսի փողոցներում հիշո՞ւմ ես:
- Իհարկե, նա իմ եղբայրն էր:
- Դու նրան տեսե՞լ ես, - հարցրի ես: - Դու հորս տեսե՞լ ես լեռներում կառուցված քաղաքի փողոցներով քայլելիս:

Ես վեր կացա, աստիճաններից ցած թռա ու քայլեցի տան առջև (ՎՄ):

գ) «Քանի դեռ խանգարիչներս չեն եկել՝ ինձ հաշիվ տամ: Ես գնում եմ Երևան: Էս՝ ես եմ, էս՝ բեռներս. սա՝ օժիտը՝ ամեն ինչ ամբողջական. երկու բարձ, երկու վերմակ, երկու ներքնակ. սավանների փողը պետք է առանձին դնել. սրանք՝ կարպետը և գորգը. այո՛, կարպետը և գորգը. այս՝ երկու կտոր. (կայարանը լիքը ժողովուրդ - աղջիկ ես՝ բեռներդ ական պահիր). խնձոր, ձու՝ չորս կտոր: Պանիր, կարագ՝ վեց կտոր: Ղաուրման՝ յոթ, մեղրը՝ ութ. ձեռքիս մածուն-մուծունը՝ ինը: Երևան եմ գնում, ինը կտոր բեռ ունեմ: Պանիրն ու կարագը խուրջինի ակներում՝ դարձավ մեկ կտոր - ութ կտոր, մածուն - մուծունը պանրի վրա՝ յոթ կտոր, մեղրը կարագի հետ խուրջինի մի ակնում վեց կտոր, խնձորը մնում է առանձին, ձուն՝ առանձին: Վեց կտոր, վայո՛: Եթե ինձ չշաղեն՝ վեց կտոր բեռ ունեմ: Հիմա գնացքներում գողությունները քչացել են, էգուց Երևան եմ: Վայո՛» (ՀՄ):

6. Տեքստը բաժանե՛ք պարբերությունների. կետադրե՛ք և ըստ անհրաժեշտության՝ լրացրե՛ք բաց թողած տառերը:

1) Ոչ միայն Երկիր մոլորակի այլ... երկնային քիչ թե շատ զգալի մեծություն ունեցող մարմինների կար...որ առան...նահատկություններից մեկը նրանց բազմալորտային կառուցվա...քն է: Երկրագնդի կենտրոնից դեպի ազատ տի...զերք ու...ված եր...ակայական ճանապար...ին կհանդիպենք հետ...յալ ուլորտներին մի...ուկ մի...նապատյան (մանթիա) երկրակեղ... ջրոլորտ մ...նոլորտ: Սրանք Երկրագնդի մեջ այնպես են դասավորված ինչպես երեխաների համար պատրաստած խաղալիք գնդերը որտեղ արտա...ին գունդը կիսելիս մի...ից դուրս է գալիս մեկ ուրիշը նրա կիսվելուց հաջոր... գունդը մինչ... որ հասնում են անբաժանելի մի...ուկին: Որն է երկնային խոշոր մարմինների ոլորտային կառուցվա...քի պատճառը: Եթե միան...ամից պատասխանելու լինենք ապա կասենք քիմ...ական տա...երի զանգվածների տարբերությունները:

2) Հայտնի է որ ինչ-որ զանգված ունեցող մարմինը կարող է դեպի իրեն ձ...ել մեկ այլ զանգված այս եր...ույթի մեկնաբանությունն ամ...ովված է Նյուտոնի օրենքում համաշխար...ային ձ...ողության օրենքում: Յուրաքանչ...ուր երկնային մարմին ունի ձ...ողականություն որն անվանում են ծանրահա... (գրավիտաց...ոն) ուժ: Երկրի վրա մենք ունենք ծանրության մեկ չափանիշ որը մոլորակի վրա ամենուրե... գրեթե նույնն է ա...շան տարբերություններով: Օրինակ Երկրի վրա նույն մար...ը կկշռի ասենք ու...սուն կգ բայց Լուսնի վրա վեց ան...ամ պակաս իսկ աստղերի վրա միլ...նավոր կիլոգրամներ: Երկնային մարմիններն իրենց ձ...ողական ուժով բավականին հեռու տիրույթներից ձ...ում են ավելի փոքր մարմիններ երկնաքարեր և վեր...իններս ձ...տում են հասնել այդ երկնային մարմնի ծանրության կենտրոնին: Երկրագնդի վրա էլ նույն օրինաչափությունն է նկատվում: Գոյություն ունի նաև մեկ այլ օրինաչափություն տարբեր մարմիններ տարբեր ծավալ են զբաղեցնում և տարբեր չափով են ձ...վում Երկրագնդի կողմից:

3) Մեր Գալակտիկան գոյություն ունի առնվազն տաս... միլ...արդ տարի այդ ըն...ացքում նրա կազմում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ: Ամեն տարի մի քանի տասն...ակ աստղերի նոր բ...նկումներ են տեղի ունենում իսկ մի քանի հար...ր տարին մեկ Գերնոր աստղերի սուպերնովաներ հզոր պայթ...ններ որոնց հետ...անքով աստղի կառուցվա...քը տակնուվրա է լինում: Գալակտիկա...ի աստղերը դասակար...ման սկզբ...ունքներ ունեն ըստ գունակազմի բաժանվում են տաս... դասերի: Յուրաքանչ...ուր դաս իր հեր...ին բա-

Ժանվում է էլի տաս... ենթադասերի որոնք արտահայտվում են թվերով զրո...ից ի...ը և գրվում են դասի կո...քին:

4) Ամենից ջերմ աստղերը զրո դասին են պատկանում մակեր...ութային ջերմաստիճանը երկու հազարից հասնում է հինգ հազար աստիճանի որի պայմա...երում տեղի է ունենում հել...ումի ի...ոնացում իսկ աստղի մի...ուկում ջերմամի...ուկային ո...ակցիաներ: Մեր Արեգակը դասվում է G2 դասին այն դեղին թզուկ է վեց հազար աստիճան մակեր...ութային ջերմաստիճանով: Աստղաքիմ...ական ուսումնասիրությունները ցույց են տալիս որ քիմ...ական կազմի տեսակետից աստղերը բավականին նույնատիպ են ջրածնահել...ումային ինքնալուսավորվող ջերմ գազա...ին գնդեր են մի քանի միլ...ոն կիլոմետրի հասնող տրամագծով: Աստղերի վեր...ում նշված դասերը ստե...ծում են այսպես կոչված Գլխավոր հաջոր...ականություն որի վերին մասում ջերմ աստղերն են սպիտակ երկնագույն ցածր աստիճաններում կարմիր թզուկները:

ՄԱՍ 3

ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ⁷

3.1. Ընդհանուր բնութագիր (28): 3.2. Արտալեզվական գործոններ (29): 3.3. Հնչերանգ և դիմելաձև (32): 3.4. Իրադրություն և խոսքային կադապարներ (34): Վարժություններ և առաջադրանքներ (40):

3.1. Ընդհանուր բնութագիր: Ճիշտ հարաբերությունների ձևավորման և անմիջական շփման համար լեզվական գիտելիքների պաշարն անհրաժեշտ նախապայման է, բայց միակը չէ: Զրույցն արվեստ է, որին տիրապետելու համար անչափ կարևոր են ոչ միայն լեզվական գիտելիքները, այլև էթիկետի կանոնների իմացությունն ու կիրառությունը: Էթիկետը երեք բաղկացուցիչների ամբողջությունն է՝ **արտաքին տեսք, վարվեցողություն և խոսք**⁸. սրանք զգալիորեն փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Խոսքային էթիկետի տարբեր սահմանումներ կան⁹: Ընդունված է ասել, որ այն խոսքային տեղին միջոցների և վարվեցողության կանոնների համադրությունն է հաղորդակցական որևէ իրավիճակում: Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր ազգ մշակում է խոսքային և վարվեցողության էթիկետի իր կանոններն ու յուրահատկությունները, որոնք երբեմն խստորեն հակադրվում են միմյանց:

Այսպես՝ Ճապոնիայում, որպեսզի չվիրավորեն (չնեղացնեն) զրուցակցին, անգամ բացասական պատասխանի դեպքում չեն գործածում «Ո՛չ», «Զգի-

⁷ «Խոսքային էթիկետ» բաժնի տեսական նյութը կրճատումներով և որոշ փոփոխություններով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Մարգարյան Լ.** (Տե՛ս «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Եր., 2016, էջ 441-468):

⁸ Հմմտ. **Стернин И.**, Русский речевой этикет, Воронеж, 1996, էջ 3-4:

⁹ Տե՛ս **Формановская Н.**, Речевой этикет и культура общения, Научно-популярное изд., М., 2005, էջ 68, 73: **Стернин И.**, նշվ. աշխ., էջ 4: «Стилистический энциклопедический словарь русского языка», под ред. М. Кожинной, М., 2003: «Русский язык и культура речи» (соавт. **Гойхман О., Гончарова Л., Лапшина О.** и др.), М., 2009, էջ 117 ն: Խոսքային էթիկետի, մասնավորապես դրա հիմնադրությունների մասին տե՛ս նաև **Грайс Г.**, Логика и речевое общение, «Новое в зарубежной лингвистике», выпуск XVI, М., 1985, էջ 217-238:

տեմ», «Չի լինի», «Ճիշտ չես» արտահայտությունները¹⁰, իսկ Արևմուտքի և Արևելքի տասնյակ ազգերի խոսքային մշակույթում սրանք անհամաձայնությունն արտահայտող չեզոք միջոցներ են: Կամ՝ արաբները, բուլղարացիները համաձայնություն, հավանություն արտահայտում են՝ գլուխը աջուձախ տարուբերելով, իսկ անհամաձայնությունը՝ գլխի հետ ու առաջ շարժումով: Սակայն տասնյակ ազգերի համար այդ շարժումները ճիշտ հակառակ նշանակությունն ունեն: Մի ազգի համար ցածրաձայն խոսելը չիմացության, շփոթմունքի վկայություն է, մեկ ուրիշի համար՝ պատվի ու հարգանքի, կամ՝ մի ազգի համար հայացքը հատակին հառած խոսելը հարգանքի նշան է, մեկ ուրիշի համար՝ արհամարհանքի նն: Խոսքային և վարվեցողության էթիկետի այսպիսի տարբերությունները խորապես ազգային, պատմական, ավանդական և կրոնական կնիք ունեն:

Սակայն կան հատկանիշներ, որոնք, անկախ ազգային պատկանելությունից, ընդհանուր և համապարտադիր են խոսքային էթիկետի համար: Դրանցից են՝ **չափի զգացողությունը, զսպվածությունը** (որոնք արտահայտվում են ինչպես խոսքով, այնպես էլ հագուստով, շարժումով, դիմախաղով), **հավասարակշռվածությունը, ուշադրությունը, հարգանքը խոսակցի հանդեպ, փոխզույգումը, փոխընկալումը**: Նշվածներից որևէ մեկի անտեսումը կարող է բացասաբար ազդել գրույցի ընթացքի վրա:

3.2. Արտալեզվական գործոններ: Կան տարատեսակ իրողություններ, որոնք հաղորդակցման գործընթացի մուտքն են և ուղղակիորեն պայմանավորում են խոսքային էթիկետը: Դրանք պայմանականորեն կարելի է անվանել արտալեզվական գործոններ, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է վարվեցողության որոշակի պահանջներ և թելադրում խոսքային համապատասխան միջոցներ: Դրանք միասնաբար ձևավորում են հաղորդակցման ողջ գործընթացը: Այդ գործոններից են՝ միջավայրը, անհատի հասարակական դերը, հագուստը, ավանդույթն ու ծիսակարգը, տարածական վարքը, գրուցակիցների դիրքը, հայացքը, շարժումը, դիմախաղը: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Ա. Միջավայր: Հաղորդակցական հարաբերությունները, ըստ միջավայրի, բաժանվում են 3 խմբի՝ **պաշտոնական, ոչ պաշտոնական** (մտերմիկ), **կիսապաշտոնական** (պաշտոնական-գործնական): Դրանցից յուրաքանչյուրին բնորոշ է վարվեցողության և խոսքի ուրույն մշակույթ: Միջավայրը խոսքային

¹⁰ Sté u **Фролова О.**, Японский речевогой этикет (лингвистический аспект), Новосибирск, 1997 (էլ. հասցե՝ <http://www.philology.ru/linguistics4/frolova-97.htm>):

Էթիկետը պայմանավորող ամենից գլխավոր գործոնն է. այն էլակետ է մյուս գործոնների համար:

● **Պաշտոնական միջավայր.** բնորոշ է ղեկավար-ենթակա, ուսուցիչ-աշակերտ, դասախոս-ուսանող, հաճախորդ-սպասարկու, անձանոթ-անձանոթ և այլ հարաբերություններին: Խոսակցիցներից պահանջվում է խոսքային և վարվեցողության կանոնների կատարյալ պահպանում: Այս միջավայրում շփումները պետք է ընթանան որոշակիորեն սահմանված կարգով, քանի որ, անկախ ոլորտից և այլևայլ հանգամանքներից, առավելապես գործում է մեկ կարգի հարաբերություն՝ **գերադաս-ստորադաս:** Յուրաքանչյուրը պետք է հստակորեն ճանաչի և իրականացնի իր գործառույթները: Այս իրավիճակում պետք է բացառվի հատկապես անհատական-զգացական մղումներով թելադրվող գործելաոճը:

● **Ոչ պաշտոնական միջավայր.** բնորոշ է ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների հարաբերություններին: Այս միջավայրը վարվեցողության և խոսքային էթիկետի կանոնների ազատությամբ, նաև բազմազանությամբ անմիջականորեն հակադրվում է պաշտոնականին: Հարաբերությունները անկաշկանդ են, գերակայում է հատկապես հավասարը հավասարի հետ սկզբունքը, շփումներում մեծ է հատկապես զգացական վերաբերմունքի դերը: Մակայն իրավիճակին խորթ մի երրորդ անձի ներկայությամբ ազատ շփումները պետք է որոշակիորեն սահմանափակվեն:

● **Կիսապաշտոնական միջավայր.** բնորոշ է գործընկերների, ոչ մտերիմ ծանոթների, հարաբերություններին: Այս միջավայրի համար փոքր-ինչ բարդ է որոշակի չափանիշներ սահմանելը. այն պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակների համադրություն է, որում խոսքային և վարվեցողության կանոնները գերազանցապես պայմանավորված են իրավիճակային հանգամանքներով և անընդհատ ենթակա են փոփոխության: Ծանոթության աստիճանը, տեղը, ժամանակը, տարիքը, սեռը, այլ անձանց ներկայությունը որոշում են, թե խոսքային էթիկետի որ դրսևորումից օգտվեն խոսակիցները:

Բ. Հասարակական դեր: Առանձնացվում է երկու տեսակ՝ **կայուն** (տևական) և **փոփոխական:** Առաջինը պայմանավորված է տարիքով, սեռով, մասնագիտությամբ, բնակության վայրով, աշխատանքային դիրքով ևն: Ըստ այդմ՝ առանձնացվում են, օրինակ, կնոջ և տղամարդու, ծնողի և երեխայի, ղեկավարի և ենթակայի, մեծի և փոքրի դերեր: Երկրորդը պայմանավորված է միայն միջավայրի փոփոխությամբ: Այս դեպքում առանձնացվում են գործընկերոջ, ըն-

կերոջ, հյուրի, ուղևորի, անցորդի և այլ դերեր, որոնցից յուրաքանչյուրի համար խոսքային էթիկետը սահմանում է որոշակիորեն տարբեր կանոններ¹¹:

Գ. Հագուստը պետք է լիովին համապատասխանի անհատի դերին, գտնվելու տեղին, ժամանակին և ճշտորեն լրացնի նրա կերպարը: Ժամանակի ընթացքում հանրային տարբեր ոլորտների համար (օր.՝ զինվորական համակարգ, կրթական, բանկային ոլորտներ են) ստեղծվել և ստեղծվում են համազգեստներ:

Դ. Ավանդույթին և ծիսակարգին առնչվող խոսքային և վարվեցողության կանոնները սովորաբար փոխանցվում են ժառանգորդաբար: Սրանցով պայմանավորված խոսքային կառույցներ են բազում բարեմաղթանքները, օրինանքները («Յոթ որդով սեղան նստեք», «Կյանքդ ջրի նման երկար լինի») ևն:

Ե. Տարածական վարք: Խոսակիցների միջև, ըստ իրավիճակի, պետք է պահպանվի որոշակի տարածություն: Պայմանավորված ավանդույթով և զանազան գործոններով՝ տարածական վարքականոնի չափանիշները փոփոխական են: Օրինակ՝ անգլիացիները, ֆրանսիացիները նույնիսկ ոչ պաշտոնական շփումներում պահպանում են որոշակի տարածություն միմյանց միջև, մինչդեռ իտալացիները, Արևելքի որոշ ժողովուրդներ, այդ թվում նաև հայերը սովորություն ունեն քիթ քթի տալով զրուցելու նաև այնպիսի իրավիճակներում, երբ խոսակիցների միջև որոշակի տարածություն պահպանելը ուղղակի պարտադիր է: Համենայն դեպս, խոսքային վարվեցողությամբ մենք առավելաբար հետևում ենք քաղաքակրթական միջազգային չափանիշներին:

Զ. Հայացք, դիմախաղ, շարժում: Զրույցի ընթացքում խոսակցին պետք է պահել ուշադրության կենտրոնում, պարբերաբար նայել նրան: Ողջ զրույցի ժամանակ, անկախ տևողությունից, **աչքերին անընդմեջ նայելը ճիշտ չէ**. սևեռուն հայացքը ճնշում է զրուցակցին: Թերևս առավել նպատակահարմար է ժամանակ առ ժամանակ հայացքը սահեցնել խոսակցին մոտ առարկաների վրա:

Խոսելիս մարդիկ միմյանցից ազդակներ են ստանում նաև **դիմախաղի և շարժումների միջոցով**¹²: Այս դեպքում նույնպես չափի զգացողությունը անհրա-

¹¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Крысин Л.**, Речевое общение и социальные роли говорящих // Социально-лингвистические исследования, М., 1976:

¹² Հաղորդակցման ընթացքում շարժումների և դիմախաղի նշանակության մասին մանրամասն տե՛ս **Пиз А.**, Язык телодвижений. Как читать мысли окружающих по их жестам, М., 2003: **Խաչատրյան Տ.**, Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012, էջ 21-34:

Ժեշտություն է: Հաստատապես հաճելի չէ դեմքի՝ ոչինչ չասող արտահայտությունը: Այդ դեպքում գրուցակիցը թողնում է անտարբեր, սառը մարդու տպավորություն և վանում խոսակցին: Բայց նաև հաճելի չեն դիմային ակտիվ և տարատեսակ շարժումները, որոնք պարզապես կարող են հոգնեցնել կամ նյարդայնացնել խոսակցին:

Կարևոր են նաև շարժումները. անշարժ և մոայլադեմ գրուցակիցը թողնում է ծանր տպավորություն, և դժվար է նրա հետ շփման եզր գտնելը: Չափի զգացողությունը, զսպվածությունը խոսքային և վարվեցողության նորմերի անհրաժեշտ նախապայմաններ են:

3.3. Հնչերանգ և դիմելաձև: Բոլոր իրավիճակներում գրույցը սկսելու համար առանձնակի կարևոր են ձայնի հնչերանգն ու համապատասխան դիմելաձևը: Ըստ էության, դրանք կատարում են կարգավորող դեր, խոսքի սկիզբն են և նպաստում են առաջին տպավորության ձևավորմանը:

Ա. Հնչերանգ: Զրույցի ընթացքում ձայնի բարձրությունը պետք է լինի այնքան, որ խոսակիցը չլարվի և կամ ստիպված չլինի մի քիչ բարձր խոսել: Պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերում խոսքը պետք է արտաբերվի հստակ, ձայնի հանդարտ և անխախտ հնչերանգով՝ առանց հուզառատ խանդավառության կամ վրդովմունքի: Նույնիսկ ամենաթեժ գրույցի ժամանակ արժե հիշել խոսքային էթիկետի կարևոր պայմաններից մեկը: Ձեր կարծիքը, որքան էլ այն ճշմարիտ լինի, չպետք է հնչի որպես անվերապահ դատողություն կամ «դատավճիռ»:

Պետք չէ այնքան բարձր խոսել, որ մի երրորդ անձ կամա-ակամա վերածվի հարկադիր ունկնդրի:

Բ. Դիմելաձևեր: Յուրաքանչյուր գրույց սկսվում է դիմելաձևից: Խոսքային միջավայրով պայմանավորված՝ դիմելաձևերը կարող են ունենալ հետևյալ դրսևորումները.

1. Պաշտոնական **չեզոք** իրավիճակում, երբ գրուցակիցը դեկավար է, և գիտեք նրա ազգանունը, դիմե՛ք՝ **պարոն / տիկին**-ով: Այս դիմելաձևը կարելի է գործածել՝ համադրելով պաշտոնի անվանը՝ **պարոն / տիկին նախարար / ռեկտոր / վարչապետ / տնօրեն**: Պաշտոնական վերամբարձ խոսքում ազգանվանը կամ անվանը պետք է ավելացնել **հարգելի, հարգարժան, մեծարգո, պատվելի** բառերից մեկը (սա տարածված է հատկապես գրավոր խոսքում՝ պաշտոնական նամակ, ուղերձ, դիմում ևն): Իսկ եթե խոսքն ուղղված է բազմա-

մարդ լսարանի, ապա գործածվում են նույն դիմելիքները՝ առանց ազգանվան կամ պաշտոնի անվան՝ **հարգելի՛ տիկնայք / պարոնայք / տիարք / հյուրեր** են:

2. Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում, երբ չգիտեք խոսակցի անուն-ազգանունը, և զրույցն էլ ակնթարթային բնույթ ունի, կարելի է գործածել **Դուք** հարգական ձևը կամ **պարոն, տիկին, երիտասարդ (տղաս), օրիորդ (աղջիկ), հարգելիս** բառերը: Իսկ եթե զգում եք, որ զրույցը երկար է տևելու, ապա նախապես կարելի է ճշտել դիմելիքները հետևյալ հարցումներով. «Ներողություն, Ձեզ ինչպե՞ս դիմեմ», «Կներե՞ք, ի՞նչ է Ձեր անունը», «Կասե՞ի՞ք Ձեր ազգանունը»: Պաշտոնական այնպիսի իրավիճակներում, երբ Ձեզ նույնպես չեն ճանաչում, ճիշտ է, որ **Դուք** էլ ներկայանաք՝ նշելով Ձեր անունը (անուն-ազգանունը), ըստ անհրաժեշտության՝ նաև հասարակական դիրքը: Ի դեպ, վերջին տարիներին հատկապես սպասարկման ոլորտում Արևմուտքի ազդեցությամբ բավականաչափ տարածվել է անվանաթերթիկ (փեյջ) փակցնելու մշակույթը: Փոքր-ինչ ուշադիր լինելու դեպքում կարելի է կարդալ խոսակցի անունը (ազգանունը) և դիմել ըստ այդմ:

Չպետք է մոռանալ, որ պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերում խոսակցին միշտ պետք է դիմել **Դուք**-ով: Ընդ որում, խոսքը հավասարապես վերաբերում է երկու կողմերին՝ անկախ նրանից՝ ղեկավար է, թե՞ ենթակա, դասախոս է, թե՞ ուսանող, ավագ, թե՞ կրտսեր գործընկեր: Եվ քանի դեռ զրուցակցից չեք ստացել **Դուք**-ից **դու**-ի անցնելու ակնարկ կամ առաջարկ, խորհուրդ չի տրվում ինքնակամ փոխել դիմելիքները: Աշխարհում ընդունված դիմելիքներն է մասնագիտության, զբաղմունքի անվան գործածությունը. ըստ այդմ՝ որոշ դեպքերում կարելի է ասել մատուցող, վարորդ են: Իսկ եթե շփումը պարբերական է ու երկարատև, ապա ուղղակի պետք է հարցնել անունը:

Գործնական շփումներում հասարակական տարբեր դիրքերում գտնվող անձինք կարող են մտերմանալ և ինքնաբերաբար անցնել ոչ պաշտոնական հարաբերությունների: Այս դեպքում բնական է **դու-դու** տարբերակը: Սակայն, անկախ մտերմության աստիճանից, պաշտոնական որոշակի միջավայրում, մանավանդ դիրքով ցածր կամ տարիքով փոքր անձանց ներկայությամբ ճիշտ է **Դուք-Դուք**-ի գործածությունը: Իսկ եթե առանց պայմանավորվածության

Դուք-ից անցնում էք **դու**-ի, ապա սա երկու նշանակություն կարող է ունենալ. կա՛մ բավարար չափով բարեկիրթ չէք, կա՛մ չէք հարգում գրուցակցին¹³:

3. Ոչ պաշտոնական իրավիճակներում (հատկապես խոսակցական լեզվում) տիրում է դիմելաձևերի խայտաբղետ բազմազանություն. **բալես / բալիկս, հոգիս, արես, ազիզ (ջան), մորաքույր (մորքուր), եղբայր, հորեղբայր (հոպար) ջան, կյանք(ս), սիրելիս, ընկեր (ջան)** ևն: Մրանք առօրյա մտերմիկ շփումներում խոսքին հաղորդում են հուզական ինչ-ինչ լիցքեր: Առավել բնորոշ են ընտանեկան, ընկերական հարաբերություններին, և այս շփումներից դուրս թերևս **չարժե կիրառել**: Հարկ է միտքն ու խոսքը հարմարեցնել, վարժեցնել նրան, որ ոչ պաշտոնական դիմելաձևերը չտեղափոխենք պաշտոնական կամ կիսապաշտոնական միջավայր:

3.4. Իրադրություն և խոսքային կաղապարներ¹⁴: Անկախ մեր գործունեությունից՝ յուրաքանչյուրս մշտապես հայտնվում ենք այնպիսի իրավիճակներում, երբ պետք է ողջունել, ծանոթանալ, շնորհակալություն հայտնել, ներողություն խնդրել, հրաժեշտ տալ, շնորհավորել ևն: Հանգամանքներով պայմանավորված՝ տարբեր են դրանց իրացման խոսքային կաղապարները, որոնք նպաստում են հարգալից և բարեկիրթ հաղորդակցմանը:

Հնարավոր է ծանոթանալու երկու իրավիճակ՝ ա) Ձեզ են ծանոթացնում որևէ մեկին, բ) Դուք անձամբ պետք է ծանոթանաք: Առաջին դեպքում անպայման գործածեք «(Շատ) հաճելի է», «(Շատ) ուրախ եմ», «Ուրախ եմ մեր ծանոթության համար» խոսքային կաղապարները: Երբ Դուք եք ծանոթանում, դիմե՛ք «Կարելի՞ է Ձեզ հետ ծանոթանալ», «Թո՛ւյլ տվեք ծանոթանալ/ներկայանալ», «Ծանոթանանք, եթե դեմ չեք» արտահայտություններով:

Նոր ծանոթությունների ժամանակ խորհուրդ է տրվում շատ չխոսել: Ինչպես բոլոր հարաբերություններում, նոր ծանոթությունների դեպքում հատկապես կարևոր գործոններից է **լսելը**: Աշխատե՛ք չընդհատել, և քանի դեռ չեն հարցրել Ձեր կարծիքը, մի՛ շտապեք ինքնարտահայտվել ու մի՛ միջամտեք մյուսների գրույցին: Հրաժեշտ տալիս ցանկալի է ասել՝ «Ուրախ էի Ձեզ հետ ծանո-

¹³ **Դու / Դուք** դերանվան գործածության մասին հանգամանորեն տե՛ս **Формановская Н.**, Речевой этикет и культура общения, Научно-популярное изд., М., 2005, էջ 98-110:

¹⁴ Պաշտոնական, մասնավորապես դիվանագիտական վարվեցողության կանոնների և խոսքային էթիկետի մասին մանրամասն տե՛ս **Չալոմյան Ն.**, Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Եր., 2003: **Նույնի՝** Դիվանագիտական վարվեցողության կանոնները, Եր., 2009:

թանալու համար», «Հաճելի էր, հուսամ՝ դեռ կհանդիպենք» և նման արտահայտություններ:

Բ. Ողջույն և հրաժեշտ: Սրանք հարգանքի դրսևորումներ են ծանոթների, երբեմն նաև անծանոթի հանդեպ: Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում ողջույնի առավել տարածված կաղապարներն են՝ «Բարև՝ Ձեզ/ձեզ», «Հարգանք(ներ)ս», հազվադեպ՝ «Ջերմագին ողջույններս»: Խոսքն ուղեկցվում է ձեռքսեղմումով: Կանանց դեպքում ձեռքսեղմումը պարտադիր չէ. կնոջը ձեռք պետք է մեկնել այն դեպքում, երբ նա առաջինն է ձեռքը պարզում: Եթե բազմամարդ միջավայրում եք, ապա նախընտրելի է պարզապես բարձրաձայն ողջունել: Միշտ պետք է հիշել հետևյալը. **բարևե՛ք՝ խոսակցի աչքերին նայելով և ժպտադեմ,** նաև, ամենից կարևորը, **բարևե՛ք բարձր, հստակ լսելի ձայնով:**

Ինչ վերաբերում է հրաժեշտին, ապա խոսքային կառույցները պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում գրեթե նույնն են՝ «Ցտեսություն», «Առայժմ», «Հաջողություն», «Մինչ նոր հանդիպում», «Շնորհակալություն հաճելի օրվա համար», «Լա՛վ մնա(ցեք)», «Բարի ճանապարհ / գիշեր»: Բազմամարդ իրավիճակներում նույնպես հրաժեշտ տալը պարտադիր է: Ընդհանրապես վարվեցողական կանոնների խախտում է անձայն և աննկատ հեռանալը: Դա կարող է ընկալվել որպես արհամարհանք կամ անհարգալից վերաբերմունք:

Գ. Շնորհակալությունը արձագանք է որևէ բարի գործի, մատուցված ծառայության, ուշադիր կամ նրբանկատ վերաբերմունքի համար: Պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում հիմնականում գործածվում են «Թո՛ւյլ տվեք շնորհակալություն հայտնել...», «Ուզում եմ շնորհակալություն հայտնել...», «Ընդունե՛ք մեր երախտագիտությունը...», «Խորին երախտագիտությամբ...» և այլ կաղապարներ:

Ոչ պաշտոնական իրավիճակում թերևս ամենից տարածված են «Շնորհակալություն / շնորհակալ եմ / շատ շնորհակալ եմ», «(Շատ) Ապրես» արտահայտությունները: Շատ կարևոր է նաև պատասխանական խոսքը. ըստ խոսքային էթիկետի՝ **ցանկալի չէ գործածել** «Չարժե/չարժի» բառը: **Ճիշտ են՝** «Խնդրեմ», «Նորե՛ն համեցեք», «Մեծ հաճույքով», «Դժվար չէ(ր)», «Հոգ / խնդիր չէ» են:

Ընդհանրապես, բոլոր տեսակի շփումներում դրական գործի կամ խոսքի հանդեպ շնորհակալական վերաբերմունքը անհրաժեշտ է. չասված կամ ուշացած շնորհակալական խոսքը կարող է ընկալվել որպես անկարևոր, անհարգալից կամ արհամարհական վերաբերմունք:

Դ. Ներողություն: Էթիկետի կանոնների մեջ առաջնային նշանակություն ունի ներողություն խնդրելը: Միշտ չէ, որ «Ներողություն / կներեք» բառերը գործածվում են անպայման վատ արարքի կամ խոսքի համար ներողություն խնդրելու նպատակով: Որոշ դեպքերում այդ բառերի գործածությունը ուղղակի բխում է խոսքային նորմերից: Ասենք՝ անհրաժեշտ է ներողություն խնդրել, եթե, օրինակ, փողոցում որևէ անցորդից ինչ-որ բան եք հարցնում, կամ՝ որևէ մեկի աշխատասենյակ մտնելիս նախ պետք է հարցնել. «Ներողություն / ներեցե՛ք, կարելի՞ է / թույլ կտա՞ք»: Չի կարելի միանգամից դիմել բուն հարցով:

Արարքի կամ խոսքի համար ներողություն խնդրելիս խոսողի ձայնը պետք է լինի բարձր, բառերը պետք է արտաբերվեն հանդարտ և հստակ, խոսելիս պետք է նայել խոսակցի աչքերին: Եթե սխալը թույլ է տրվել այլ անձանց ներկայությամբ, ապա, ըստ վարվեցողության կանոնների, հենց նրանց ներկայությամբ էլ պետք է ներողություն խնդրել: Ընդ որում, ներողություն պետք է խնդրել բոլոր դեպքերում՝ անկախ խոսակցի տարիքից, սեռից, սոցիալական դիրքից:

Կարևոր է նաև պատասխանը: Եթե հասկանում և ընդունում եք գրուցակցի ներողությունը, ապա կարելի է մեղմել իրավիճակը, թուլացնել խոսակցի հոգեբանական լարվածությունը հետևյալ արտահայտություններով՝ «Եկեք մոռանանք....», «Ես էլ եմ այդպես սխալվել....» ևն:

Ե. Անհամաձայնություն: Միշտ չէ, որ համամիտ ենք լինում գրուցակցի կարծիքին, և հաճախ ուզում ենք հայտնել մեր անհամաձայնությունը: Սա խոսքային մի իրավիճակ է, որում շատ զգույշ պետք է լինել՝ գրուցակցին չվիրավորելու համար: Մեր խոսքային կառույցներն այդ հնարավորությունն իհարկե ընձեռում են, միայն թե պետք է ճիշտ օգտվել դրանցից:

Այսպես. պաշտոնական և կիսապաշտոնական իրավիճակներում հարգալից փոխհարաբերությունների դեպքում չի կարելի խոսքը միանգամից սկսել «Սխալ եք / սխալվում եք....», «Ո՛չ, ճիշտ չեք....», «Դուք չգիտեք....», «Դուք կարծեք թե չեք հասկացել....» և նման կտրուկ պատասխաններով նույնիսկ այն

դեպքում, երբ գրուցակցի տեսակետը (խոսքը) իրոք սխալ է կամ անհիմն: Պետք է հաշվի առնել միջավայրային և իրադրական բոլոր գործոնները՝ գրուցակցի դիրքը, գրույցի ընթացքում հատկապես երրորդ անձի ներկայությունը, մտերմության աստիճանը և ըստ այդմ գործածել խոսքային այնպիսի կառույցներ, որոնք հաստատապես չեն վիրավորի գրուցակցին և կնպաստեն երկխոսության հանդարտ շարունակությանը:

Պաշտոնական-գործնական գրույցի կամ քննարկման ընթացքում անհամաձայնությունը կարելի է հայտնել մեղմասությամբ, ինչպես՝ «Ձեր կարծիքը (տեսակետը), իհարկե, լսեցի, սակայն եթե չեմ սխալվում....», «Ձեր թույլտվությամբ / եթե թույլ կտաք, մի բան հավելեմ....», «Ես լսեցի Ձեզ, սակայն որոշակի առարկություն ունեմ. թույլ կտա՞ք / կարելի՞ է....», «Ներողություն, բայց կարծես ինչ-որ բան այն / պարզ չէ....» ևն:

Ոչ պաշտոնական իրավիճակում կարելի է օգտվել առավել սեղմ կառույցներից, ինչպես՝ «Կներես / ների՛ր, բայց համաձայն չեմ....», «Այնքան էլ ճիշտ չես....», «Մի բան այն չես ասում....», «Ինչքան հասկացա, դու.... բայց....» ևն: Նույնիսկ ամենաջերմ հարաբերությունների դեպքում վիրավորական են «Դու ի՞նչ գիտես, որ....», «Դու ի՞նչ ես հասկանում որ....», «Խելքդ չի հասնում՝ մի՛ խոսիր...», «Անհեթեթություն / հիմարություն / ապուշություն....» և նման արտահայտությունները:

Ձ. Հաճոյախոսությունը էական դերակատարություն ունի բոլոր հարաբերություններում: Այն դրական վերաբերմունքի դրսևորման և անհատին ոգևորելու լավագույն միջոցներից է. չէ՞ որ մի բարի խոսքը կարող է բարձրացնել խոսակցի ինքնագնահատականը, փոխել տրամադրությունը, նպաստել հարաբերությունների դրական զարգացմանը:

Կարելի է հաճելի խոսք ասել խոսակցի արտաքինի, ոճի, մտածողության, աշխատանքի, ընդունելության, հյուրասիրության և այլ որակների մասին: Եվ պետք չէ մտածել, թե դա կարող է ընկալվել որպես շողոքորթություն: Չափավոր և տեղին հնչած հաճոյախոսությունը միշտ էլ փոխադարձաբար հաճելի է: Հաճոյախոսելիս ժպտացե՛ք, խոսե՛ք աշխույժ, նայե՛ք խոսակցին: Իմիջիայլոց և անհասցե նետվող հաճոյախոսությունը մի՛ բարձրաձայնեք: Շատ կարևոր է **պատասխանական խոսքը**: Հարկ է **հրաժարվել** մեզանում շատ տարածված անճաշակ ձևակերպումներից («Ճաշակդ է բարձրացել», «Ես նույնն եմ, ուղղակի դու ես նոր տեսնում», «Ա՞ղդ է պակաս, թե՞ մաղդ» ևն): Խոսքային

Էթիկետը սահմանում է հետևյալ պատասխանները. «Շնորհակալ եմ հաճելի խոսքերի համար», «Հաճելի է լսել», «Նույնը կասեի քո (Ձեր) մասին» ևն:

Է. Հեռախոսագրույց: Դժվար է պատկերացնել ժամանակակից մարդու կյանքն առանց հեռախոսի: Սակայն միշտ պետք է հիշել, որ հեռախոսը ոչ թե ժամանցի, այլ տեղեկություն ստանալու միջոց է: Կան հեռախոսագրույցի էթիկայի մի շարք կանոններ, որոնք հաճախ են խախտվում մեզանում: Խոսքը հատկապես վերաբերում է պաշտոնական և կիսապաշտոնական միջավայրերին, քանի որ ոչ պաշտոնական իրավիճակները ենթադրում են առավել թեթև, ազատ հարաբերություններ: Այսպես՝

1. Անկախ զբաղեցրած դիրքից՝ էթիկայի կանոնները պահանջում են գործնական բնույթի հարցերով տուն չզանգահարել: Խիստ անհրաժեշտության դեպքում **զանգահարել մինչև երեկոյան ժամը 21:00-ը:**

2. Եթե հեռախոսագրույցը գործնական բնույթ ունի և հրատապ քննարկում կամ իրազեկում չի ենթադրում, ապա մի՛ զանգահարեք աշխատանքից հետո. այդ մասին կարելի է խոսել աշխատանքային հաջորդ օրը: Խոսքը հավասարապես վերաբերում է ն՝ դեկավարին, ն՝ ենթակային:

3. Չանգահարելիս ընդունված է պահել 3-4 զանգ. պատասխան չստանալու դեպքում անջատե՛ք հեռախոսը և նորից զանգահարե՛ք մոտ 30 րոպե հետո: Կրկին պատասխան չստանալու դեպքում այլևս մի՛ զանգահարեք. սպասե՛ք տվյալ մարդու զանգին: Այսպիսի դեպքերում, անշուշտ, հետադարձ զանգը (հետզանգը) անհրաժեշտ է:

4. Գործնական հեռախոսագրույցը **պետք է կարճ լինի:** Քննարկման ենթակա հարցերը պետք է լուծվեն գործնական հանդիպումների միջոցով (ընթացքում):

5. Խորհուրդ չի տրվում խոսքը սկսել «Ո՞վ է», «Ո՞վ է խոսում», «Ո՞ւմ հետ եմ խոսում» և նման արտահայտություններով: Չանգահարողն ինքը **պետք է ներկայանա՝** նշելով անունը: Պայմանավորված զանգահարելու նպատակով, զրույցի բովանդակությամբ՝ պետք է նշել նաև ազգանունը, պաշտոնը:

6. Եթե խոսակիցն անծանոթ է, մի՛ դիմեք նրան **դու-ով**, կամ՝ **ընկեր / ընկեր ջան, տիկին / տիկին (ջան), աղջիկ / աղջիկ ջան, երիտասարդ** և նման դիմելաձևերով: Նախընտրելի է ուղղակի զրույցը սկսել չեզոք՝ հարգանքի հոգնակիով՝ **Դուք-ով:**

7. Որևէ մեկին (ծանոթ կամ անծանոթ) զանգահարելիս «Հարմա՛ր է խոսել», «Թույլ կտա՛ք մի բան հարցնել» և նման արտահայտություններով անպայման ճշտե՛ք, թե որքանով է հարմար խոսակցին, որ այդ պահին խոսի Ձեզ հետ:

8. Եթե խոսակիցը շատախոս է, և կամ գրույցն է անկարևոր, ապա նրան ընդհատե՛ք նրբանկատորեն: «Ների՛ր, փոքր-ինչ ուշ կխոսենք», «Հիմա դուրս եմ գալիս, հետո կխոսենք» և այսպիսի արտահայտություններով կարելի է կարճել գրույցը՝ չվիրավորելով խոսակցին: Մյուս կողմից էլ բնավ ցանկալի չէ, որ խոսակիցը փորձի ձգձգել գրույցը «Մի րոպե, մի բան էլ ասեմ», «Կներես, բայց սա էլ ասեմ» և նման արտահայտություններով: Այսպիսի պահվածքը անբարեկրթություն է:

9. Երբեք մի՛ ընդհատեք գրուցակցին, եթե, իհարկե, դրա համար հիմնավոր պատճառ(ներ) չկա(ն): Եվ հիշե՛ք, որ ցանկացած չմտածված բառ կամ արտահայտություն կարող է բացասաբար ազդել Ձեր գործի և հարաբերությունների վրա:

10. Գործնական աշխատանքի կամ հանդիպման ժամանակ նախընտրելի է օգտվել հեռախոսի «անձայն» հրահանգից (ռեժիմից) կամ նախապես անջատել: Պատասխանելու դեպքում ներողություն խնդրեք գրուցակցից և խոսե՛ք շատ կարճ՝ գործածելով «Կներես / ների՛ր, հիմա հարմար չէ խոսել», «Քիչ ուշ կզանգեմ», «Քիչ հետո՛ զանգիր» խոսքերը:

Էթիկետի այս ընդհանուր կանոնները առավելաբար վերաբերում են հաղորդակցական չեզոք հարաբերություններին: Հաղորդակցման համար կան նաև այլ հանգամանքներ ու գործոններ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է մյուսից տարբեր խոսքային մշակույթ: Բոլոր տեսակի հարաբերությունները պետք է կազմակերպել այնպես, որ իրականանա խոսքային վարվեցողության հիմնական նպատակը՝ քաղաքակիրթ հաղորդակցումը:

Գրականություն

1. Ավետիսյան Յու. և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016:
2. Խաչատրյան Տ., Հաղորդակցման և աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ, Եր., 2012:
3. Չալրմյան Ն., Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ, Եր., 2003:
4. Չալրմյան Ն., Դիվանագիտական վարվեցողության կանոնները, Եր., 2009:
5. Гойцман О., Гончарова Л., Лапшина О. и др., Русский язык и культура речи, М., 2009.

6. **Крысин Л.**, Речевое общение и социальные роли говорящих//Социально-лингвистические исследования, М., 1976.
7. «Стилистический энциклопедический словарь русского языка», под ред. М. Кожинной, М., 2003.
8. **Стернин И.**, Русский речевой этикет, Воронеж, 1996.
9. **Формановская Н.**, Речевой этикет и культура общения, М., 2005.
10. **Фролова О.**, Японский речевой этикет (лингвистический аспект), Новосибирск, 1997 (էլ. հասցէ՝ <http://www.philology.ru/linguistics4/frolova-97.htm>).

Վարժություններ և առաջադրանքներ

1. Կազմե՛ք երկխոսություն «Ծանոթություն և համագործակցության առաջարկ» կամ «Այց աշխատանքի ընդունման գործակալություն. հարցազրույց» թեմաներով:
2. Ներկայացրե՛ք խոսքային իրավիճակներ ուսանողի ուշացման պատճառաբանությունների վերաբերյալ:
3. Ինչպե՛ս կդիմեք անձանոթին (կին/տղամարդ) որևէ հարցով՝ հաշվի առնելով, որ դիմացինը՝
 - ա) Ձեզանից տարիքով մեծ է, բ) Ձեզանից տարիքով փոքր է, գ) տարեկից է:
4. Բնութագրե՛ք խոսքային կառույցների և վարվեցողության կանոնների առանձնահատկությունները տարբեր փոխադրամիջոցներում (հասարակական տրանսպորտում, ինքնաթիռում ևն):
5. Ինչպե՛ս եք արձագանքում, երբ տրանսպորտային միջոցներից մեկում հեռախոսագանգ եք ստանում՝
 - ա) դեկավարից, բ) ենթակայից, գ) ընտանիքի անդամներից, դ) ընկերոջից, ե) զինծառայողից:
6. Ինչպե՛ս կվարվեք, եթե՝
 - ա) գիտական զեկուցման հեղինակը թույլ է տվել բովանդակային անճշտություն,
 - բ) Դուք եք վրիպել զեկուցում կարդալիս:
7. Ինչպե՛ս կարտահայտեք Ձեր անհամաձայնությունը, եթե զեկուցողը՝
 - ա) Ձեր դասախոսն է, բ) համակուրսեցին է, գ) բարձրկուրսեցի է:
8. Ինչպե՛ս կարձագանքեք, երբ Ձեզ նկատողություն է անում Ձեզանից տարիքով փոքրը / մեծը տարբեր իրադրություններում:

9. Թյուրիմացության համար հեռախոսագանգով ինչպե՞ս ներողություն կխնդրեք՝

ա) ղեկավարից, **բ)** ենթակայից, **գ)** ազգականից, **դ)** ընկերոջից / գործընկերոջից:

10. Ինչպե՞ս կհամոզեք Ձեր ընկերոջը / ընկերուհուն, որ Ձեզ հետ որևէ միջոցառման մասնակցի:

11. Հեռախոսագանգով շնորհավորե՛ք Ձեր ընտանիքի անդամներին / ընկերոջը / ընկերուհուն / ուսուցչին / ղեկավարին՝

ա) ծննդյան օրվա առթիվ, **բ)** Նոր տարվա առթիվ, **գ)** Սուրբ Զատիկի առթիվ, **դ)** այլ տոների առթիվ:

12. Ընտրե՛ք այն տարբերակը, որը չի հակասում խոսքային էթիկետի կանոններին:

Ա.

ա) Ձեր տեղեկատվությունը միանշանակ սխալ է:

բ) Ձե՞ք կարծում, որ տեղեկատվությունը, որին Դուք տիրապետում եք, ճշգրտումների կարիք ունի:

գ) Ես ճիշտ չեմ համարում Ձեր հաղորդած տեղեկատվության հրապարակումը, որովհետև չեմ ընդունում բերված փաստերի ու փաստարկների հավաստիությունը:

դ) Ես համոզված եմ, որ Դուք ապատեղեկատվություն եք տարածում: Լավ կլինի՝ լռեք:

Բ.

ա) Փորձե՛ք խելացի մտքեր արտահայտել. գուցե ստացվի:

բ) Դա քո խելքի բանը չէ. անցի՛ր առաջ:

գ) Ձեր արտահայտած մտքերին համաձայն չեմ, թեև կարծում եմ՝ դրանք իրավունք ունեն գոյություն ունենալու:

դ) Քո կարծիքը քե՛զ պահիր. մենք դրա կարիքը չունենք:

Գ.

ա) Հարգելի՛ գործընկերներ, ձեզ եմ ներկայացնում մեր նոր աշխատակցին:

բ) Սա մեր նոր աշխատակիցն է. ինքը համ էլ իմ ամենալավ ընկերն է:

գ) Ահա մեր նոր աշխատակիցը. այսօրվանից նա կդառնա մեր կոլեկտիվի անդամը:

Զգուշացնեմ, որ ծանոթ-ընկեր-բարեկամ հարաբերությունները հաշվի չենք առնում և աշխատում ենք, ինչպես հարկն է:

դ) Գուգո՛ւ, նե՛րս արի, ծանոթացի՛ր մեր կուլեկտիվի հետ:

Դ.

ա) Քիթո մի՛ խոթիր այնտեղ, որտեղ դրա կարիքը չկա:

բ) Մի՛ խառնվիր խոսակցությանը. դա քեզ չի վերաբերում:

գ) Ձեր միջամտությունը տեղին չէ. խնդիրը մասնագիտական լուրջ մոտեցում է պահանջում:

դ) Ապացուցողական բազա-մազա չգիտեմ. քո կարծիքը մեզ չի հետաքրքրում:

Ե.

ա) Մի կոպեկի խելք չունես, բայց ամեն ինչի մասին կարծիք ես հայտնում:

բ) Դու բան չես հասկանում. ձայնդ կտրի՛ր ու վե՛ր ընկիր տեղդ:

գ) Կարծում եմ՝ դեռ բավարար փաստեր չունես այդ հարցի մասին սեփական կարծիք հայտնելու համար:

դ) Պահ-պահ-պահ, կարծիք է ուզում հայտնել. մի սրա՛ն նայեք:

13. Օգտվելով համացանցից՝ բերե՛ք օրինակներ՝ համեմատելով մեզ և այլ ժողովուրդների բնորոշ բանավոր հաղորդակցման առանձնահատկությունները (ընդհանրություններ և տարբերություններ):

Հիշե՛ք, որ՝

1. Ժպիտը կարևոր է ողջույնի ժամանակ:
2. Առաջինը ներս մտնողն է բարևում:
3. Տարիքով փոքրը առաջինն է ողջունում մեծին:
4. Առաջինը տղամարդն է բարևում կնոջը:
5. Ձեռքսեղման համար մեկնում եք աջ ձեռքը:
6. Ձեռքսեղման համար առաջինը կինն է մեկնում ձեռքը:
7. Ձեռքերը զրպաններում չի կարելի ողջունել / զրուցել:
8. Բարևելիս և խոսելիս չի կարելի ծամել:
9. Փողոցում, հասարակական վայրերում, ուսումնական հաստատություններում, բուժական հիմնարկներում բարձրաձայն խոսել, զրուցել չի կարելի:
10. Մեղանից օգտվելուց հետո հարկ է շնորհակալություն հայտնել համեղ ուտելիքի համար:
11. Ապրանք գնելիս կամ վերադարձնելիս անհրաժեշտ է շնորհակալություն հայտնել սպասարկման համար և ներողություն խնդրել, եթե անհարմարություն եք պատճառել:
12. Եթե դիմացինդ հեռախոսով է խոսում, նրան որևէ հարցով մի՛ դիմիր, մի՛ խանգարիր, մի՛ խառնվիր խոսակցությանը:

ՄԱՍ 4

ԽՈՍՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

4.1. Ճշտություն (44): **4.2.** Հարստություն և բազմազանություն (149): **4.3.** Ճշգրտություն և հստակություն (154): **4.4.** Սեղմություն (158): **4.5.** Տրամաբանականություն (161): **4.6.** Արտահայտչականություն (175):

Բոլոր ժամանակներում էլ խոսքը գորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Գեղեցիկ, արտահայտիչ խոսքը հաղթանակներ է ապահովել ռազմի դաշտում, հերոսացման է մղել հայրենիքի զինվորին, պայմանավորել է հաջողությունը անձնային հարաբերություններում և գործի մեջ:

Հին աշխարհում խոսքարվեստը առանձնացվել է որպես արվեստի ամենաազդեցիկ ճյուղերից մեկը: Պատմությանը հայտնի են հռետորական խոսքի ականավոր տեսաբանների ու ճարտասանների անուններ՝ **Դեմոսթենես**՝ հռետոր և քաղաքական գործիչ (IV դ., մ.թ.ա.), **Արիստոտել**՝ հռետորական արվեստի տեսաբան (IV դ., մ.թ.ա.), **Մարկոս Անտոնիոս**՝ Հին Հռոմի քաղաքական հռետոր (I դ., մ.թ.ա.), **Կրոմվել**՝ անգլիական բուրժուական հեղափոխության շրջանի քաղաքական գործիչ (XVII դ.), **Մարատ** և **Ռոբեսպիեր**՝ դատական ու քաղաքական հռետորներ (XVIII դ.), **Լոմոնոսով**՝ հռետորական արվեստի տեսաբան, փիլիսոփա (XVII դ.), **Անատոլի Կոնի**՝ դատական հռետոր (XIX-XX դդ.) և ուրիշներ:

Սոկրատեսը (V դ., մ. թ. ա.), ասում են, մարդու մասին կարծիք չէր հայտնում, քանի դեռ նրան չէր լսել: Մեծ փիլիսոփային է վերագրվում հայտնի արտահայտությունը՝ «Խոսի՛ր, որ ճանաչեմ քեզ»: **Լև Տոլստոյի** կարծիքով՝ գեղեցիկ, նպատակասլաց, արտահայտիչ խոսելը բարձր մշակույթի արտահայտություն է, մտավոր զարգացածության նշան, վարվեցողություն է, կիրթ լինելու ցուցիչ:

Հնում իմաստուն համարվելու համար երեք պայման կար, որոնցից մեկը **գեղեցիկ** և **անվրեպ խոսելն** էր (մյուս երկուսը՝ ճիշտ վճիռ կայացնելը, անհրաժեշտ գործ կատարելը (Դեմոկրիտ)):

Խոսքի արժանիքների մասին ժամանակակից ուսմունքը մշակվել է մասնագետ-բանասերների կողմից: Առանձնացվել են խոսքի մշակույթի հետևյալ հիմնական որակները կամ այլ կերպ՝ խոսքի արժանիքները՝ **ճշտություն, հարստություն և բազմազանություն, ճշգրտություն և հստակություն, սեղմություն, տրամաբանականություն, արտահայտչականություն, մաքրություն, տեղինություն, չափավորություն** են: Ստորև կանդրադառնանք դրանցից առավել կարևորներին:

4.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ

4.1.1. Բովանդակության ճշտություն (44): **4.1.2. Լեզվական նորմի պահպանում:** *Լեզվական նորմ հասկացությունը:* *Նորմավորման չափանիշները (44):* **4.1.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ արտասանական, բառային, քերականական (45):**

Ճշտությունը խոսքի հաղորդակցական գլխավոր հատկանիշն է, քանի որ դրանով է պայմանավորվում փոխընկալումը: «Ճիշտ խոսել կարողանալը դեռ առաքինություն չէ, բայց ճիշտ խոսել չկարողանալը ամոթ է» (Ցիցերոն): **Խոսքի ճշտությունն** ունի երկու դրսևորում՝ **բովանդակության ճշտություն և լեզվական նորմի պահպանում:**

4.1.1. Բովանդակության ճշտություն: Մա լայն հասկացություն է. նախ՝ ենթադրում է տեղեկույթի ճշտություն՝ ճշգրիտ փաստեր, փաստարկներ, իրողությունների նկարագրություն, տարեթվեր, տեղանուններ են, և **երկրորդ՝** դրանցից բխող դատողությունների, եզրակացությունների, **ընդհանրացումների ճշտություն:** Երկու դեպքում էլ ամեն մի շեղում կամ անճշտություն էապես փոխում է խոսքի ազդեցության ուժը: Ճիշտ դատողությունները պետք է բխեն իրերի ու երևույթների բնույթից, ներկայացվող փաստերի իրական բովանդակությունից:

4.1.2. Լեզվական նորմի պահպանում: Խոսքի ճշտության հիմնական պայմանը **լեզվական նորմերի** պահպանումն է լեզվի բոլոր մակարդակներում՝ արտասանությունից մինչև շարահյուսական կառույցներ:

Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության համընդունված կանոններն են: Լեզվի ձևավորման և պատմական զարգացման ընթացքում ստեղծվում ու մշակվում են օրինաչափություններ, որոնք ընդունելի և ընդհանուր են դառնում (համապարտադիր են) լեզվակիրառողների համար: Լեզվի նորմավորումը կամ կանոնարկումը ունի իր չափանիշները՝ լեզվական միջոցի գործածականությունը և տարածվածությունը, համապատասխանությունը լեզվի զարգացման օրինաչափություններին, լեզվական ավանդույթը ևն¹⁵:

4.1.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ հնչյունական (արտասանական), բառային, քերականական: Լեզվական նորմը մշակված և ամրակայված լեզվական կանոնն է լեզվի բոլոր մակարդակներում: Այս մոտեցմամբ էլ առանձնացվում են լեզվի հիմնական նորմերը՝ **հնչյունական (արտասանական), բառային, քերականական:** Առանձնացվում են նաև ենթանորմեր, ինչպես օրինակ՝ ուղղագրության նորմեր կամ կանոններ, բառակազմական նորմեր, նախադասության կազմության օրենքներ ու օրինաչափություններ ևն:

Ա. ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ (ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ) ՆՈՐՄԵՐ

Ա.1. Ուղղախոսություն (45): Ա.2. Տառադարձություն (47): Ա.3. Հնչյունափոխություն (48): Ա.4. Շեշտ (50): Վարժություններ և առաջադրանքներ (52):

Ա.1. Ուղղախոսություն: Խոսքի ճշտության առաջին պայմանը ուղղագրական և ուղղախոսական նորմերի պահպանումն է: Ուղղախոսությունը տվյալ լեզվի՝ հանրության կողմից ընդունված արտասանական նորմերի, այսինքն՝ ճիշտ խոսելու կանոնների ամբողջությունն է: Դա վերաբերում է ոչ միայն բառերի ճիշտ արտասանությանը, այլև նախադասությունների հնչերանգին, շեշտադրությանը, առանձին հնչյունների կամ հնչաշարային ճիշտ արտաբերմանը ևն: Գրական հայերենով հաղորդակցվելիս արտասանական անճշտություններից խուսափելու համար պետք է հիշել հետևյալը.

- 1) **Ա, ի, ու** ձայնավորները հայերենում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են՝ **աղաթթու, կիսահաղորդիչ, մակաբույժ, քառանիստ** ևն:
- 2) Բառակազմում **ե**-ն արտասանվում է յե՝ **[յե]րևալ, [յե]նթախումբ, [յե]րկնականար, [յե]թեր, բառամիջում՝ ե՝ բ[ե]կյալ, ժայթք[ե]լ, շ[ե]ղում, պատկ[ե]ր:** Եթե

¹⁵ Տե՛ս Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014, էջ 20-25:

բաղադրյալ բառերի բաղադրիչների կցույթում **ե**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ե**-ն արտասանվում է յե՝ **կենսա[յե]րկրաքիմիական, օդա[յե]րկրաբանություն, կիսա[յե]զրափակիչ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ե**-ն արտասանվում է է՝ **մակ[ե]րիկամ, արև[ե]լք**:

Բառասկզբում **ո**-ն արտասանվում է վօ՝ **[վօ]ղնաշար, [վօ]սպնյակ, [վօ]լորտ**, իսկ բառամիջում արտասանվում է օ՝ **հ[օ]սանք, կիս[օ]րդ**: Եթե բաղադրյալ բառերի՝ **ո**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ո**-ն արտասանվում է վօ՝ **ենթա[վօ]րովայնային, մշակութա[վօ]ճ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ո**-ն արտասանվում է օ՝ **բազմ[օ]տանի, կենս[օ]լորտ, չար[օ]րակ**:

Մահմանված կանոնը, սակայն, ժամանակակից հայերենի ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում: **Ան**- ժխտական նախածանց ունեցող բառերի մի որոշ մասում գործում է արտասանական զուգահեռ տարբերակ. **է**-ի փոխարեն արտասանվում է յե, իսկ **օ**-ի փոխարեն՝ **վօ**, ինչպես՝ **ան[է]-ռանդ//ան[յե]ռանդ, ան[օ]ղնաշարավոր//ան[վօ]ղնաշարավոր (բայց՝ ան[է]զր, ան[է]րույթ, ան[է]զական նն): -երկու** և **-երեք** բաղադրիչներով թվականներում **ե**-ն հնչվում է նաև որպես յե՝ **քսան[յե]րկու, հիսուն[յե]րկու** (սրանք հանձնարարելի չեն), փոխ.՝ **քսան[է]րկու, հիսուն[է]րեք** նն: Արտասանական այս տեղաշարժերը մեր լեզվի արդի փուլի համար պետք է ընդունել որպես հայերենի ուղղախոսության մեջ ձևավորվող արտասանական զուգահեռ տարբերակներ՝ **ան[յե]րևակայելի//ան[է]րևակայելի, ան[վօ]խակալ//ան[օ]խակալ, վաթսուն[է]րեք//վաթսուն[յե]րեք**:

Էական փոփոխություն է տեղի ունեցել **կ** և **չ** քերականական մասնիկներին հաջորդող **ե**-ի և **ո**-ի արտասանության մեջ: Գրական լեզվի կանոնով սահմանված արտասանությունը՝ **ե > է՝ կ[է]րկատվեն, չ[է]զրագծեն, ո > օ՝ կ[օ]սկրանան, չ[օ]րոնեն**, այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների՝ **յե** և **վօ** արտասանությանը: Ըստ որում՝ այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ **[յե]րկատվեն-կ[յե]րկատվեն, [յե]զրագծեն-չ[յե]զրագծեն, [վօ]սկրանան-կ[վօ]ոսկրանան, [վօ]րոնեն - չ[վօ]րոնեն**: Ամեն դեպքում ունենք արտասանական զուգաձև, որը միտում է դառնալու գրական լեզվի արտասանական կանոն:

3) Ը ձայնավորը չի գրվում, բայց թույլ արտասանվում է **զբ, զգ, շտ, սկ, սպ, ստ** և նման հնչյունակապակցություններից առաջ, ինչպես՝ **[ը]զբաղվել, [ը]զգուշանալ, [ը]սպոր, [ը]սպունգ, [ը]սկսել, [ը]ստեղծել, [ը]ստանձնել** նն:

Ճիշտ չէ որոշ քանակական թվականների՝ ավելորդ **ը**-ով արտասանությունը, այսպես՝ ոչ թե **հինգ[ը], վեց[ը], յոթ[ը], ութ[ը]**, կամ՝ **վաթսուն[ը]մեկ, քառասուն[ը]չորս**, այլ՝ **հինգ, վեց, յոթ, ութ**, կամ՝ **վաթսունմեկ, քառասունչորս** են:

4) Եթե բառի մեջ **և**-ին նախորդում է բաղաձայն, ապա **և**-ը արտասանվում է **ել՝ բ[ել]եկնախեժ, ար[ել]մուտք, մակեր[ել]ույթ** են:

5) Գրական հայերենին բնորոշ չէ բաղաձայն հնչյունների փափուկ արտասանությունը՝ քմայնացումը, որը ռուսերենի ազդեցությամբ է մուտք գործել մեր բանավոր խոսք: Մի շարք բառերում **դ, տ, թ** գրային նշաններն արտասանվում են **ձ, ծ, ց** հնչյունների քմայնացված տարբերակներով, ինչպես՝ **[ծյ]եխնիկա, գալակ[ծյ]իկա, [ձ]ինամիկա, ակա[ձ]եմիա**, փոխանակ գրային ճիշտ արտասանության՝ **տեխնիկա, գալակտիկա, դինամիկա, ակադեմիա**:

6) Կրկնակ բաղաձայններն արտասանվում են կա՛մ որոշ տևականությամբ (**ուղղաձիգ, տոննա, բջջանյութ, տարբալույծ, ուղղակտուց**), կա՛մ գաղտնավանկի հնչմամբ (**դ[ը]դմիկ, խ[ը]խունջ, ծնունդ[ը]դ, հույս[ը]ս**): Ճիշտ չէ կրկնակ բաղաձայնների միջև **ը** արտասանելը, երբ այն գրական լեզվի կանոնով բացակայում է, կամ առկա է արմատի ձայնավորի կամ երկհնչյունի սղում: Ոչ թե՝ **բ[ը]ջ[ը]ջային (բջիջ), պ[ը]տ[ը]տահողմ (պտույտ), զ[ը]ն[ը]նել (զնին)**, այլ՝ **բ[ը]ջջային, զ[ը]ննել, պ[ը]տտահողմ**:

Ա.2. Տառադարձություն: Տառադարձություն է կոչվում տեքստի արտահայտումը հնչյունական գրության սկզբունքով: Մեկ այլ նշանակությամբ՝ տառադարձությունը գրային արտահայտության այն եղանակն է, որը գործածվում է սովորական ուղղագրական համակարգում օտար բառերի համար: Ճիշտ տառադարձման համար պետք է իմանալ որոշակի սկզբունքներ:

1) Օտար **ր**-ն (ռուսերենի **р**-ն) բառասկզբում և բառամիջի արմատական բաղադրիչում տառադարձվում է **ռ՝ [ռ]ադիո, [ռ]ուբիդիոմ, Նովոռոսիյսկ**, բառամիջում՝ **ր՝ պ[ր]ոֆեսոր, ինե[ր]ցիա, Սանկտ Պետե[ր]բուրգ, լ, ն** ձայնորդներից առաջ՝ **ռ՝ Կալիֆո[ռ]նիա, Բե[ռ]նարդ, Կա[ռ]լեն**, սակայն երբեմն խախտվում է այս կանոնը՝ **Նիդե[ր]լանդներ, ինտե[ր]նացիոնալ, Կա[ր]լ**:

2) Ռուսերենից փոխառված բառերում **о(ո)**-ն արտասանվում է **օ՝ Դ[օ]ստ[օ]նսկի, Մ[օ]սկվա, Ռ[օ]ստոմ**, կամ՝ **ռեակտ[օ]ր, պրոցես[օ]ր, վեկտ[օ]ր, պրոֆես[օ]ր, դոկտ[օ]ր, ռեկտ[օ]ր, կատալիզատ[օ]ր, տրանսպ[օ]րտ, Փարաջան[օ]վ**: Միսալ է՝ **Դ[ա]ստ[ա]նսկի, Մ[ա]սկվա, Ռ[ա]ստոմ, ռեակտ[ը]ր, պրոցես[ը]ր, վեկտ[ը]ր, պր[ա]ֆես[ը]ր** կամ՝ **պրոֆես[ը]ր**,

դոկտ[ը]ր, ռեկտ[ը]ր, կատալիզատ[ը]ր, տրանսպ[ը]րտ, Փարաջան[ը]վ (չպետք է շփոթել **ա** հոդակապի հետ, որը հանդես է գալիս առանձին օտար և հայերեն բաղադրիչների միացման դերում՝ **էլեկտր/ա-**՝ **էլեկտրալոյծ**, **էլեկտրակայծային**, **էլեկտրամակարդիչ**, **էլեկտրահաղորդիչ**, **ելր/ա-**՝ **Եվրատեսիլ**, **Եվրախորհուրդ**, **Եվրամիություն**: Հայերենում **Белорус** բառի ճիշտ տառադարձումն է ոչ թե **Բել[օ]ռուս**, այլ **Բել[ա]ռուս**:

3) Կրկնակ բաղաձայնները սովորաբար հայերենում արտասանվում են իբրև մենաբաղաձայն և այդպես էլ գրվում են, ինչպես՝ **атрестат** – **ստեստատ**, **ассистент** – **աիստենտ**, **иммунитет** – **իմունիտետ**, **ассоциация** – **սսոցիացիա**, **Новороссийск** – **Նովոռոսիյսկ**, **Тольятти** – **Տոլյատի**, **congressman** – **կոնգրեսմեն**, **alligator** – **ալիգատոր**, **ammonium** – **ամոնիում**, **classicism** – **կլասիցիզմ**, **communist** – **կոմունիստ**, **collective** – **կոլեկտիվ**: Կրկնակ բաղաձայնների՝ հայերենում երկար կամ ուժգին արտասանության դեպքում որոշ բառեր գրվում են կրկնակ բաղաձայնով՝ **վիլլա**, **Աննա**, **կիլովատտ**, կրկնակ **օօ-ն՝ ոռ՝ կոռպերատիվ**, **կոորդինատ**, կրկնակ **րր-ն (ռուս.՝ рр)** ձայնավորներից առաջ՝ **ր՝ բարիկադ**, **տեռոր**, մնացած դեպքերում՝ **ո՝ Մառ**, **Պյոռուս**:

4) Վերջին շրջանում օտար բառերի և հատուկ անունների տառադարձությունը ավելի մոտեցվում է փոխատու աղբյուրի արտասանական առանձնահատկություններին: Տառադարձության սկզբունքները միասնականացնելու նպատակով հանձնարարվում է ղեկավարվել հետևյալ կանոններով. 1. Անգլերեն **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն տառադարձել բառասկզբում **փ, թ, ք**, մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. Վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձել մեկ բաղաձայնով, ինչպես՝ **[Թ]աֆտ (Taft)**, **[Թ]եյլոր (Taylor)**, **[թ]իմ (team)**, **[թ]ենիս (tennis)**, **[Ք]արտեր (Carter)**, **[Ք]ենեդի (Kennedy)**, **[թ]եստ (test)**, բայց ավանդաբար՝ **Նյու Յորք[ք]**, **Մարկ [Տ]վեն**, **[կ]ոնգրես** են: 2. Անգլերենի **w(h)**-ն տառադարձել **ու (wa-ն՝ ուո)**, բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու **ու (wu, wo, woo)**. այս դեպքում գրել և արտասանել **վու**, օր.՝ **[Ու]այտ (White)**, **[Ու]այդ (Wilde)**, **[Ու]ոլտոն (Walton)**, **Դ[ու]այտ (Dwight)**, բայց ավանդաբար՝ **[Վ]աշինգտոն (Washington)**, **[Դ]արվին (Darwin)**, **[վ]ատտ (Watt)**, **[Վ]իլյամ (William)** են:

Ա.3. Հնչյունափոխություն: Լեզվական նորմերից շեղումները կապվում են նաև հնչյունափոխական առանձին իրողությունների հետ:

Բառի աճման ժամանակ (բառաբարդում, ածանցում) **ույ** երկհնչյունը փոխվում է **ու-ի**, արտասանվում է **ու՝ համբույր** (ոչ թե՝ **համբուր**) - **համբուրել**,

լույս - լուսարձակում, լուսաբեկ, գույն - գունազգայուն, գունանյութ, թույն - թունաստունկ, թունագեղձ, բույժ - ցրտաբուժություն, սովաբուժություն, ողջույն - ողջունել: Ունենք նաև ընկուզկոտրիչ/ընկուզկոտրիչ, հնչութային/հնչութային, մշակութային/մշակութային, սովորութային/սովորութային (հանձնարարելի են առաջին տարբերակները, թեև հաճախ ավելի բարեհունչ են երկրորդները՝ **հաստութային, հաստութավորել, կշռութավոր, ձևութային** են):

Ճիշտ են համարվում **ի + ա > ե** հնչյունափոխությամբ առաջացած հետևյալ ձևերը՝ **ընտանի + ական > ընտանեկան, հարսանի(ք) + ական > հարսանեկան, պատանի + ական > պատանեկան:**

Առանձին բառերի բառակազմական և ձևակազմական որոշ հիմքերի տարբերակներից նախընտրելի են դրանց անհնչյունափոխ ձևերը, ինչպես՝ **Աղասիի (Աղասու), Աղասիով (Աղասով), Դավիթաշեն (Դավթաշեն), Դավիթի (Դավթի), Սարգսի (Սարգսի), երեսունական (երեսնական), Էրեբունիի (Էրեբունու), Էրեբունիով (Էրեբունով), հիսունամյա (հիսնամյա)** են: Այս դեպքում չի աղավաղվում բառի պատկերը, և խոսքը հնչում է ավելի հստակ ու հասկանալի:

Մի շարք բառերի անճիշտ արտասանությունը կապվում է փոխազդեցական հնչյունափոխության հետ: Դա բառի մեջ հնչյունների՝ միմյանց վրա ազդելու հետևանքով տեղի ունեցող հնչյունափոխությունն է: Հնչյունափոխության այդ տիպին են պատկանում հետևյալները.

- **առնմանություն.** հնչյունը, ազդելով մեկ այլ հնչյունի վրա, ինչ-ինչ հատկանիշներով նմանեցնում է իրեն՝ **ընդթոնունակ - ըմբոնունակ, ճանապարհ - ճամփա, զբողել - սքողել, խառնածնության - խառնածնությամբ, արյուն - արյամբ.**

- **տարնմանություն.** մի հնչյունը, ազդելով նույն կամ նման մեկ այլ հնչյունի վրա, ինչ-ինչ հատկանիշներով հեռացնում է իրենից՝ **բանբակ - բաճբակ, տունչ - շունչ, արձագանգ - արձագանք, բաշքառ - բաշքառ, սաշտուռ - սառ - սուռ, բրբռ.՝ շիճուկ - սիճուկ, երեք - իրեք.**

- **հավելում.** բառակազմում կամ հնչյունների միջև ավելանում է ևս մեկը՝ նպաստելով դրանց կապակցմանը՝ **աճար - հաճար, երկպառակություն - պառակտել, ազանել - հազանել, որթ - հորթ, խսկց.՝ կանաչ - կանանչ, ավելորդ - ավելնորդ, ծանր - ծանդր, թոնիր - թունդիր.**

● **համաբանություն.** հաճախ իրար հետ գործածվող և գուգորդվող որոշ բառեր ազդում են միմյանց վրա, և մեկը աստիճանաբար սկսում է հնչյունական կազմով նմանվել մյուսին՝ **բարձր//ցած – ցածր**, խսկց.՝ **հոկտեմբեր//սեկտեմբեր**, **տարեկան//օրեկան**, **յոթանասուն//ութանասուն**.

● **կորուստ** կամ **անկում.** բառի մեջ սղվում է որևէ հնչյուն՝ **հայթհայթել – հայթայթել**, **հեղհեղատ – հեղեղատ**, **թմբբել – թմբել**, **խոռհ/ել – խոհ/ական**, խսկց.՝ **սկեսուր – կեսուր**, **սկեսրայր – կեսրար**, **ջրաղաց – ջաղաց**, **թամբբ – թամբ**.

● **ամփոփում.** միանման հնչյունախմբերի համառոտումն է՝ **կեղծածամ – կեղծամ**, **աշխարհահայացք – աշխարհայացք**, **զբոսաշրջիկություն – զբոսաշրջություն**, **հասարակակարգ – հասարակարգ**, **ապաստանարան – ապաստարան**.

● **դրափոխություն.** բառի մեջ հնչյունը փոխում է իր դիրքը՝ **արմուկն – արմուկ**, **խստոր – սխտոր**, **կապերտ – կարպետ**, խսկց.՝ **բանալին – բալանի**, **կճմթել – ճմկթել**, **բաշխել – բախշել**, **համբույր – համբուր**, **անաղի – անալի – ալանի**:

Հնչյունափոխական այս երևույթների ազդեցությամբ երբեմն արտասանություն են մուտք գործում սխալ ձևեր՝ **ամսեկան** (<ամսական), **անձեռնոցիկ** (<անձեռոցիկ), **անձիք** (<անձինք), **ալանի** (<անալի), **գտընվել** (<գտնըվել), **ձեռնըտու**//**ձեռնատու** (<ձեռընտու): Գրական նորմի տեսակետից դրանք մերժելի ձևեր են:

Ա.4. Շեշտը որևէ հնչյունի առանձնացված և ուժեղ արտասանությունն է, որը արտահայտվում է ձայնի տևողությամբ ու բարձրությամբ. լինում է **բառային** և **տրամաբանական**: Հայերենի **բառային** շեշտը **կայուն – շարժական** է. սովորաբար դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, իսկ բառի աճման կամ փոփոխության դեպքում տեղափոխվում է վերջին վանկ, ինչպես՝ **մա՛նր – մանրե՛**, **ավի՛շ – ավշահանգո՛ւյց**, **արա՛գ – արագացո՛ւմ**, **պատի՛ճ – պատիճավո՛ր** ևն:

ա) Մի շարք բազմավանկ բառեր կրում են երկու շեշտ, որոնցից մեկը գլխավոր է (ավելի ուժեղ է), մյուսը՝ երկրորդական, ինչպես՝ **վե՛րակենդանացո՛ւմ**, **ե՛նթավարսանդայի՛ն**, **ո՛ւլտրամանուշակագո՛ւյն**, **գե՛րմակաբուծո՞ւյթն**, **հա՛մագոյակցո՞ւյթն**, **ոա՛ դիռհիդրոէրկրաբանո՞ւյթն**, **վե՛րալիցքավորո՛ւմ** (առաջինը՝ թույլ, երկրորդը՝ ուժեղ) ևն:

բ) Եթե բազմավանկ բառի վերջին ձայնավորը գրվող կամ չգրվող **ը–ն** է, ապա շեշտն ընկնում է նախորդ վանկի ձայնավորի վրա՝ **ա՛ստղ**, **բա՛րձր**, **բո՛ւրզը**,

ծնո՛ւնդդ նն: Եթե **ը**-ն բառի միակ ձայնավորն է, ապա գրվում է և շեշտվում՝ **չը՛ իսկ, շըը՛ իսկ, բայց՝ չըիսկո՛ց, շըիսկա՛ լ** նն:

զ) Որոշ բառերում շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը՝ **գրե՛ թե, իհա՛րկե, մի՛ միայն, նա՛ մանավանդ, մի՛ գուցե, մի՛ թե, ո՛րերորդ, ո՛րևէ, որպե՛սզի** նն:

դ) Երկակի արտասանություն ունեն մի քանի այլ բառեր՝ **գո՛նե – գոնե՛, գու՛ցե – գուցե, նա՛ն – նան՛, մա՛նավանդ – մանավա՛նդ, նո՛ւյնիսկ – նույնի՛սկ, նո՛ւյնպես – նույնպե՛ս, նո՛ւյնպիսի – նույնպիսի՛** նն: Երկակի արտասանություն է վերագրվում նաև **-երորդ** մասնիկով կազմված թվականներին՝ **հի՛նգերորդ – հինգերո՛րդ, տա՛սներորդ – տասներո՛րդ, երեսուներե՛քերորդ – երեսուներեքերո՛րդ, քա՛սներորդ – քսաներո՛րդ** նն: Սովորական են դրանց առաջին տարբերակները:

ե) Եթե բառը բարդ է, և բաղադրիչները կազմում են հարադրություն, ապա շեշտը հաճախ դրվում է առաջին բաղադրիչի վրա՝ **ասե՛ս թե, դո՛ւրս գալ, ի՛նչ-որ, խո՛սք տալ, հե՛նց որ, միա՛յն թե, մի՛տք անել, նե՛րս մտնել, ո՛ւր որ է**: Այլ դեպքերում շեշտը դրվում է հարադրության վերջին բաղադրիչի վրա՝ **ա-սել-խոսե՛լ, ի դե՛պ** նն:

զ) Օտար հատուկ անունների ուղիղ ձևերում պահպանվում է բնագրի շեշտադրությունը, իսկ թեքված կամ ածանցված ձևերում գործում է հայերենի ընդհանուր կանոնը՝ **Լու՛նոն՝ սով – լումոնոսովյա՛ն, Մե՛նդելե՛ն - Մե՛նդելենի՛, Մե՛չենով - Մեչենովի՛ն, Մի՛չո՛ւրին - Միչուրինո՛վ, Ֆրա՛նսիա – Ֆրանսիայի՛ց**:

Վերջին շրջանում այդ բառերի թեք ձևերում հաճախ պահպանվում է բնագրի շեշտադրությունը **Մե՛նդելե՛նի, Մի՛չո՛ւրինով, Ֆրա՛նսիայից** նն: Դրանք կարելի է համարել արտասանական զուգաձևեր՝ նախապատվությունը տալով հայերենի արտասանական կանոնով տարբերակներին:

Ժամանակակից հայերենում տրամաբանական շեշտն ունի ճարտասանական–իմաստային նշանակություն. դրվելով որևէ բառի վրա՝ այն դարձնում է մտքի կենտրոն և իմաստային երանգ է հաղորդում ամբողջ նախադասությանը, ինչպես՝ «Գիտնականը **հիմնավորե՛ց** իր տեսակետը»: «**Գիտնակա՛նը** հիմնավորեց իր տեսակետը»: «Գիտնականը իր **տեսակե՛տը** հիմնավորեց»: «Գիտնականը հիմնավորեց **ի՛ր** տեսակետը»:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրեք այն բառերն ու բառաձևերը, որոնք ունեն արտասանական զուգաձևեր:

ա) Տիեզերք, աներևույթ, որևիցե, գետեզր, արջաորս, անողնաշար, աներկբա, երկվորյակ, եղբորորդի, չորոնել, նրբերշիկ, տասներեք, գանգոսկր, կորոշեն, արագոտն, անոտ, կիսաեփ, վաթսուներկու, պարզորոշ, նրբերանգ, միջագային, ընդ որում, միոտանի, հնաոճ, իսկույն ևեթ, բռնկվել, արտերկիր, եռոտանի, կերկատվեն:

բ) Անեկամտաբեր, ստորերկրյա, ամենաորակյալ, կողողեն, անենթակա, արձան, իննսուներեքերորդ, կենթադրվեն, բարձրորակ, մակարդակ, հաշմանդամ, առաջնակարգ, չեզրափակեցին, անեզր, չարորակ, արևառ, մեծերախ, կերկբայեր, փողոսկր, չենթարկվեց, կերևան, ուրևե, հայորդի, չոզևորել, վերելք, անոխակալ, զարկերակ:

2. Ճի՛շտ արտասանեք հետևյալ բառերը:

ա) Ձեռնպահ, ձեռնբաց, դյուրահալ, ձեռնհաս, ձեռնտու, դոնբաց, հիսունվեց, տասնինը, վաթսուներեք, բջջային, գտնվել, միջանկյալ, ռելիեֆ, միջատ, բռնկվել, դոնփակ, ընկճվել:

բ) Թատերական, արհամարհել, թագուհի, մատյան, ատյան, Իրաք, Դոստոևսկի, Դիանա, դիետա, դինամիկա, տեխնիկական, ակադեմիա, ատեստատ, տերմինալ, կինեմատիկա:

3. Գրե՛ք ճիշտ ձևերը:

ա) Ամսեկան, օրեկան, նախագա(ն), հաշվապա(ն), հույրասիրել, գույնավոր, բարեհամբյուր, բախշական, դիֆերենցյալ, տարեկետում, հոգեբարձու, ներեղություն, որևհետև//որտև, որպեսի, եկրորդ, առաջի, վերջի, ութանասուն, ընձեռնել, հինգը, բալանի, ալանի (ճաշ), ի շնորհիվ, հանձին ձեզ, բարյացկամ, սննկանալ, ոտնկայս, տաս, ըստ արժանավոյն:

բ) Այսինքս, անձիք, հանձինս քեզ, ոչ մեկ, պարապունք, իրավմամբ, ջղայն, պատկանելիություն, անրադառնալ, դաստիարակել, ուրեմս, առնվազը, մանրամասը, առայժմս, ընտանեական, ավելնորդ, անձեռնոցիկ, մանրունք, բարձրունք, ճանանչել, վիճվել, տուժվել, բռնվել (կառչել), ֆիդային, պատճե, սուկյակ, ադուսյակ, հիցուն//հիթսուն, վացուն:

4. Տառադարձե՛ք տրված բառերը՝ բացատրելով օրինաչափությունները:

- ա) Ирак, радио, ринг, рентген, рельеф, реактор, профессор, ректор, Иран.
 բ) Калифорния, Карлен, Бернард, Берн, Карл, Шарл, Нидерланды, Берлин.
 գ) Достоевский, Москва, Воронеж, Параджанов, Лермонтов.
 դ) Вилла, ватт, масса, пассивный, тонна, гамма, грамм.
 ե) Taylor, Carter, Taft, Catherine, Peter, Sting.
 զ) Wilde, Whitney, Dwight, Wallace, Washington, Darwin, William, Walter.
 է) Kennedy, tennis, dollar, stress, dress-code:

5. Վերականգնե՛ք բառահիմքերի անհնչյունափոխ սկզբնաձևերը՝ նշելով հնչյունափոխությունը:

Օր.՝ սենեկապետ-սենյակ (յա > ե):

ա) Մենեկապետ, հուսահատ, սերնդակից, հոգյակ, ամայություն, ձնծաղիկ, կրկնուսույց, հուզիչ, մամռապատ, վրիպակ, ուղղահայաց, լրացում, փլվածք, սննդակարգ, սնահավատ, կատվախոտ, գիշակեր, խուսափել, գունանյութ, ընդդեմ, անվանական, ջրագրկում, թոքաբշտային, սնուցաբջիջ, շոգեմշակում:

բ) Նրբակեղև, ուրվագծային, վայրկենական, սառցանավ, միջօրեական, կիզակետ, կղզյակ, փղոսկր, առօրեական, ջրատարրալուծում, ջրակյաց, տնտեսել, դեղնավուն, տաղտկալի, ըմպան, թրծված, խուզարկու, բնակորույս, խցանահան, կոճկել, քառակուսի, կապուտակ, առվակ, սառուցյալ, դրժել, երեքշաբթի:

6. Որոշե՛ք, թե տրված բառերում ինչպիսի հնչյունափոխություն է կատարվել:

Օր.՝ սարսուռ (առնմանում՝ ո>ր):

Սարսուռ, ծակծկել, բոբիկ, արմունկ, դուռ, սխտոր, ճամփա, թափթփել, աշխարհայացք, հապա, հիշատակ, հասարակարգ, անբարբառ, նուռ, անձամբ, այլուր, կրունկ, սքողել, արձագանք, հարբել, հեղեղ, ճարտասան, օրրան, կակիճ, գցել, անձնվեր, գդալ, խաշել:

7. Շեշտադրե՛ք տրված բառերն ու բառաձևերը. նշե՛ք շեղումներն ընդհանուր օրինաչափությունից:

ա) Ցույց տալ, կալիում, քիմիա, Գալիլեո Գալիլեյ, հանդուգն, քսանհինգերորդ, ինֆորմատիկա, դրամարկդ, գոնե, ծանր, Մեծ Բրիտանիա, որևէ, ապացուցելու է, ֆիզիկայից, նորելիում, գրեթե, ման գալ, օպերայի, մի սպասիր, ընկերս, այսինքն, ենթախմբային, վերակառուցել, նույնպես, իհարկե, քանիերորդ, պատմել են, միթե, Դանիայում, ոչ մի, քիմիա, պայուսակդ, միգուցե:

բ) Իսպանիայից, վերաբաշխում, բուրբը, գնալ-գալ, որերորդ, մի բեր, թեն, փոքր-ինչ, չենք մասնակցում, նույնքան, անհնազանդորեն, ի հեճուկս, գիշանգո, որտեղ որ է, ոչ ոք, ինչևէ, մակարդում, կիրառվում է, խելքներդ, տեխնոլոգիա, Վաշինգտոն, մանավանդ, տրամաբանորեն, համընդհանուր, հենց որ, ասել-խոսել, ի ծնե, գուցե, կարծես թե, գամփո, չի խոսի, միմիայն, ամենքը:

8. Տրված նախադասություններում փոխե՛ք տրամաբանական շեշտը: Բացատրե՛ք, թե ինչ փոփոխություններ եք կատարում դրա համար:

ա) Կենդանի օրգանիզմների գոյությունը ամբողջովին կախված է միջավայրի պայմաններից:

բ) Այս շրջաններում վաղը սպասվում է օդի ջերմաստիճանի անկում:

գ) Քիմիկոսները մանրէական բջիջների ոչնչացման նոր միջոց են հայտնաբերել:

դ) Երկիր մոլորակի մթնոլորտը ազոտի անսպառ շտեմարան է:

Բ. ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ

Բ.1. Հայոց լեզվի բառապաշարը (54): **Բ.1.1.** Բնիկ հայերեն բառեր (55): **Բ.1.2.** Ստացվածքային բառեր (56): **Բ.1.3.** Փոխառություններ և օտարաբանություններ (56): **Բ.1.4.** Նորակազմություններ (59): **Բ.2.** Տերմիններ (61): **Բ.3.** Բառի կազմության սխալ ընկալում (64): **Բ.4.** Ստուգաբանություն (65): **Բ.5.** Հայավական բարդություններ և համառոտագրություններ (66): **Բ.6.** Իմաստափոխություն (68): **Բ.7.** Հոմանիշների շփոթություն (70): **Բ.8.** Հարանունների շփոթություն (71): **Բ.9.** Բառային զուգակցում (համապատասխանություն) (73): **Բ.10.** Ավելորդաբանություն և կրկնաբանություն (75): **Վարժություններ և առաջադրանքներ (77):**

Բ.1. Հայոց լեզվի բառապաշարը: Բառապաշարը լեզվի պարունակած բառերի ամբողջությունն է. այն լեզվի ամենից արագ փոփոխվող բաժիններից է և արտացոլում է ժողովրդի հասարակական ու տնտեսական–քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Լեզվի պատմական զարգացման ընթացքում շատ բառեր հնանում են, մյուս կողմից՝ բառապաշար են մուտք գործում նոր բառեր ու բառիմաստներ: Հայերենը հարուստ բառապաշար ունի. բառերի թիվն անցնում է 300 000–ից:

Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Յուրաքանչյուր անհատ միջին հաշվով գիտի 20–25 հազար բառ և գործածում է դրանցից 3–4 հազարը: Մոտ 2000 բառ բոլորի բառապաշարում համընկնում է: Մնացածը տարբեր է լինում թե՛ քանակով, թե՛ կազմով՝ կախված մարդու մտավոր զարգացման մակարդակից, կրթությունից, զբաղմունքից, հետաքրքրություններից, միջավայրից ու շփումներից: Գեղարվեստական գրականության մեջ հեղինակները իրենց ստեղծագործություններում գործածել են իրենց մայրենի լեզվի բառերի 10–12 տոկոսը: Օր.՝ Շեքսպիրի ստեղծագործությունների բառապաշարն ընդգրկում է 15000 բառային միավոր, Ա. Իսահակյանի չափածոյի բառապաշարը՝ 5000 ն: Մեկ մարդու իմացած և գործածած բառերի ամբողջությունը տվյալ անհատի բառապաշարն է:

Հայոց լեզվի բառապաշարը դասակարգվում է ըստ մի քանի սկզբունքների՝ **1. ըստ ծագման** կամ **առաջացման աղբյուրների** (ծագումնաբանական դասակարգում)՝ բնիկ հայերեն բառեր, ստացվածքային բառեր և փոխառյալ բառեր, **2. ըստ բառային կազմի շերտերի** (շերտաբանական դասակարգում)՝ ընդհանուր բառեր, գրաբարյան բառեր, միջին հայերեն բառեր, բարբառային բառեր, նոր հայերեն բառեր, **3. ըստ գործածության և ընդգրկված ոլորտների**՝ համագործածական և ոչ համագործածական բառեր, **4. ըստ կենսունակության** կամ **գործածականության**՝ գործուն և չգործուն (ոչ գործուն) բառաշերտ, **5. ըստ ոճական–արտահայտչական գործածության ու դերի**՝ միջոճային կամ չեզոք, ժողովրդախոսակցական և գրական–գրքային¹⁶:

Հայոց լեզուն, սերելով հնդեվրոպական հիմք լեզվից, ժառանգորդաբար վերցրել է այդ լեզվի բառապաշարի մի մասը, ինչպես նաև կատարել է փոխառություններ այլ լեզուներից: Ըստ Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի¹⁷ տվյալների՝ հայերենն ունի մոտավորապես 11000 բառարմատ: Ծագումնաբանական տեսակետից բառապաշարը բաժանվում է մի քանի խմբերի՝ **1. բնիկ հայերեն բառեր, 2. ստացվածքային բառեր, 3. փոխառություններ:**

Բ.1.1. Բնիկ հայերեն բառերը հնդեվրոպական հիմք լեզվից սերված արմատներից կազմված բառերն են, որոնք ձևավորում են հայոց լեզվի բառապաշարի հիմնական շերտը և աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ: Հնդեվրոպական արմատների թիվը հասնում է մոտ 1000-ի: Դրանք

¹⁶ Տե՛ս **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Եր., 1993, էջ 125–228:

¹⁷ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ. հ. I-IV, Եր., 1971-1979:

մարդուն անմիջականորեն առնչվող իրողություններին վերաբերող բառեր են՝ **աչք, առասպել, արծաթ, ականջ, աղվես, այգի, ասել, դաղձ, սրունք, մարդ, գյուտ, առու, լույս, արև, ձյուն, հավ, իր, դուստր, հայր, արտ, կամուրջ, մեկ, հինգ, ես, դու, դուռ, գոլ, գնալ, խոսել, ասել** ևն: Առանձին խումբ են կազմում **բնաձայնական բառերը**, որոնք բնության ձայների նմանողությամբ առաջացած բառեր են (գրը՛նգ, չը՛խկ, խշշալ, շշուկ, ֆշշոց, տզզալ, կչկչալ, ծլվլալ, մլավլել ևն) և երբեմն իրենց նմաններն ունեն այլ լեզուներում:

Բ.1.2. Ստացվածքային բառեր: Սրանք այն բառերն են, որոնք մասնագիտական գրականության մեջ արժանահավատ ստուգաբանության չեն ենթարկվել, կամ որոնց ծագման վերաբերյալ կան էական տարակարծություններ: Ինչպես ենթադրվում է, ստացվածքային բառերը հայերենին անցել են հիմնականում Փոքր Ասիայում ապրող այն ժողովուրդների լեզուներից, որոնք ձուլվել են հայերին և հայացել: Այդ բառերն անվանում են կենդանիներ, բույսեր, գործիքներ, ընտանիք և ընտանեկան հարաբերություններ ևն, ինչպես՝ **ագահ, աթոռ, աղջիկ, աներ, առավոտ, բանջար, բարդի, գարի, թև, ծաղիկ, հաց, հունձ, ճայ, նժույգ, պարան, պատանի, սեղան, սոխակ, ուղեղ, փայտ, քամի** ևն:

Բ.1.3. Փոխառություններ և օտարաբանություններ: Փոխառությունները մի ժողովրդի լեզվից գրավոր կամ բանավոր ճանապարհով մեկ այլ ժողովրդի լեզվին անցած բառերն են: Հայերենը փոխառություններ է կատարում իր զարգացման բոլոր փուլերում: Ըստ այդմ՝ առանձնացնում են **ա) հնագույն ու հին և բ) նոր ու նորագույն փոխառություններ**: Հին հայերենը փոխառություններ է կատարել **իրանական լեզուներից**՝ ազգ, աշխարհ, ապակի, բարձ, բրինձ, գազար, գունդ, գույն, դաշտ, դրախտ, դրամ, երակ, հազար, ճրագ, պանիր, վագր, վարդ, փող, **հատուկ անուններ**՝ Անահիտ, Արշակ, Արտավազդ, Վահագն, Վարդան ևն, **ասորերենից**՝ արեղա, առնետ, դար, հեթանոս, շաբաթ, տեղ, տղա, ցամաք ևն, **հատուկ անուններ**՝ Աբգար, Եղիշե, Շուշան, Սարգիս ևն, **հունարենից**՝ ադամանդ, ամբիոն, բյուրեղ, դափնի, էթեր, կանոն, կրկես, մետաղ, նեկտար, ստամոքս, տիտղոս ևն, **հատուկ անուններ**՝ Անդրեաս, Հեղինե, Պետրոս ևն, **արաբերենից**՝ ազապ, թաս, լոբի, կողպեք, հաշիշ, մզկիթ, սնդուկ ևն:

Նոր և նորագույն փոխառություններ հայերենը կատարում է **ռուսերենից և եվրոպական լեզուներից**. դրանք բացակայում են հայերենի նախորդ փուլերում և գործածվում են նոր հայերենում՝ **ալերգիա, աերոբուս, բակալավր,**

բրենդ, գոլֆ, դելտա, դելֆինարիում, եվրո, էքստրիմ, իմունիտետ, իմպլանտացիա, լոբբիզմ, կոալիցիա, մագիստրոս ևն:

Փոխառությունները լինում են **անմիջական** և **միջնորդավորված**: Անմիջական են այն փոխառությունները, որոնք փոխառու լեզվից ուղղակիորեն անցնում են փոխառու լեզվին: **Միջնորդավորված** փոխառությունները մեկ այլ լեզվի միջոցով են փոխանցվում փոխառու լեզվին՝ երբեմն կրելով վերջինիս արտասանական ազդեցությունը: Հայերենը այդպիսի փոխառություններ է կատարել հատկապես ռուսերենի միջնորդությամբ՝ **եվրոպական լեզուներից, ինչպես՝ այլոմ, բանկ, գեներալ, գրամ, դոլար, դոկտոր, էլեկտրոն, էներգիա, կադր, կաուչուկ, մեխանիկա, միլիարդ, պոեմ, ռադիո, տեխնիկա, օրգան, ֆակուլտետ, կուրս, պրակտիկա** ևն:

Փոխառությունները լինում են **անհրաժեշտ** և **անհարկի**: Առաջինները փոխառվում են բառապաշարի համալրման իրական պահանջով, երկրորդները իրենց համարժեքները ունեն փոխառու լեզվում: Դրանց մի մասը ինչ-ինչ առավելությունների շնորհիվ (կարճություն, բարեհնչունություն ևն) կարող է որոշ ժամանակահատված գուգահեռ գործածվել, մրցել փոխառու լեզվի համարժեքների հետ, ինչպես՝ **ամնեզիա** - անհիշություն, **ակցենտ** - առոգանություն, **գենդերային** - սեռային, **կոմա** - մահաթմբիք, **մանիակ** - մտազար ևն: Մրանք կոչվում են **մրցորդ փոխառություններ**. Եթե հաղթում են, անցնում են հիմնական բառագանձ:

Վերջին տարիներին շատ բառերի հայերեն համարժեքները ավելի գործածական են դարձել, ինչպես՝ **վնասվածքաբան** - տրավմատոլոգ, **զբոսաշրջություն** - տուրիզմ, **երկանդամ** - բինոմ, **սրտաբանություն** - կարդիոլոգիա, **պատվաստանյութ** - վակցինա, **խորաչափ** - ֆուտշտոկ, **համույթ** - անսամբլ, **լրագրող** - ժուռնալիստ, **նվագավար** - դիրիժոր, **սննդակարգ** - դիետա ևն:

Փոխառյալ բազմաթիվ բառերի համար հայերենում փոխարինիչ համարժեքներ ստեղծված են, սակայն դրանք առայժմ տարածված չեն և չունեն գործածական ակտիվություն, օրինակ՝ **արժենիշ** (կրեդիտ), **բկաբորբ** (անգինա), **գեղարարություն** (դիզայն), **ընտրասերում** (սելեկցիա), **թաղքագրիչ** (ֆլումաստեր), **լրամաս** (աքսեսուար), **հանրօղանավ** (աերոբուս), **հպատակագրություն** (գրինբարտ), **մեղմիչ** (ամորտիզատոր), **ջղագարություն** (հիստերիա), **ցնցաբուծում** (շոկային թերապիա) ևն:

Օտար բառերի՝ հայերեն համարժեքներով փոխարինումը սովորաբար չի վերաբերում այդ բառերի տերմինային գործածությանը: Օր.՝ քիմիայում **ռեժիմ** և

ռեակցիա տերմինները գործածվում են անթարգմանաբար: **Մոդուլ** բառը հայերեն երկու թարգմանությունների կողքին (1. Բացարձակ մեծություն..., 2. Գործակից...) իմաստի նեղացմամբ շարունակում է պահպանվել թվերի տեսության, ճարտարապետության, մեքենաշինության մեջ՝ որպես տերմին (3. Ելակետային ընդհանուր միավոր ծառայող չափ կամ թիվ): Կամ՝ **ֆունկցիա** բառը տերմինային գործածություն ունի մաթեմատիկայում, կենսաբանության մեջ ևն, մինչդեռ այլ կիրառություններում սովորաբար գործածվում են հայերեն համարժեքները (1. Գործառույթ, 2. Դեր, նշանակություն, 3. Գործունեության՝ պարտականությունների ոլորտ ևն):

Անհարկի փոխառությունները, որոնք իրենց համարժեքներն ունեն փոխառու լեզվում և գործածվում են առանց հաղորդակցական անհրաժեշտության, կոչվում են **օտարաբանություններ**: Դրանք երբեմն կարող են կիրառվել ռճական նպատակներով՝ խոսքին զանազան արտահայտչական երանգներ տալու համար, սակայն այդ գործածությունը հանձնարարելի չէ գրական լեզվում: Օտարաբանություններ են, օրինակ՝ **ալտերնատիվ** (այլընտրանքային), **գրանտ** (դրամաշնորհ), **ինտերնետ** (համացանց), **միտինգ** (հանրահավաք), **պրոցես** (գործընթաց/ընթացք), **պրոբլեմ** (խնդիր/հիմնախնդիր), **ռեզիոն** (տարածաշրջան) ևն:

Օտար բառի գործածությունը պետք է նպատակային լինի, այսինքն՝ անհրաժեշտությամբ պայմանավորված: Եթե օտար բառը հայերեն համարժեքի համեմատությամբ ոչինչ չի հավելում, չունի նրբիմաստներ, տերմինային նշանակության ինչ-ինչ առավելություններ, ապա այդ բառի գործածությունը ավելորդ է, անտեղի: Մինչև վերջերս փոխառություն համարվող մի շարք բառեր այսօր արդեն դիտվում են որպես օտարաբանություններ, քանի որ ունեն իրենց հայերեն համարժեքները, օր.՝ **ամպլիտուդ** - լայնույթ, **անոմալիա** - շեղում, **բիոմետրիա** - կենսաչափություն, **դիագնոզ** - ախտորոշում, **ժելատին** - դոնդող, **իզոլյատոր** - մեկուսիչ, **իմպուլս** - ազդակ, **հիդրոֆիլ** - ջրալույծ, **ֆունկցիոնալային** - սնկասպան, **պսիխոանալիզ** - հոգեվերլուծություն ևն:

Հայերենը առավելապես փոխառու լեզու է, սակայն շատ բառեր էլ այլ ժողովուրդների հետ ունեցած կապերի ու հարաբերությունների ընթացքում հայերենից կամ հայերենի միջնորդությամբ են փոխանցվել ուրիշ լեզուների՝ **ադյուս**, **ավել**, **գերան**, **գերանդի**, **եղան**, **խաչ**, **կիր**, **մածուն**, **մանգաղ**, **յուղ**, **նուշ**, **պղինձ**, **տաճար**, **տաշտ**, **տափան**, **տավար** ևն: Դրանց մի մասը, լեզվից լեզու փոխանցվելով, փոփոխությունների է ենթարկվել և այլ «կերպարանք» ստա-

ցել: **Կաճ** (թաղիք) բառը, օրինակ, ոչ միայն հայերենից անցել է մի քանի այլ լեզուների, այլև փոփոխված **քեչա** ձևով կրկին վերադարձվել է նրան¹⁸:

Լեզվի բառապաշարի հիմնական շերտը կազմող ընդհանուր գործածական (համագործածական) բառերի կողքին առանձին խումբ են կազմում համեմատաբար քիչ կիրառվող բառերը՝ **նորաբանություններ, հնաբանություններ, բարբառային-խոսակցական** բառեր են:

Ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը հարստանում է նոր բառերով ու բառիմաստներով՝ **նորաբանություններով**: Նորաբանությունները և՛ նոր ստեղծված բառերն են՝ **նորակազմությունները**, և՛ արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստները՝ **իմաստային նորաբանությունները**:

Դժվար է հստակ սահման գծել ընդհանուր գործածական և նոր բառերի միջև: Նոր ստեղծված բառերը, եթե շատ են գործածվում, անցնում են ընդհանուր գործածական բառերի շարքը, օր.՝ **ախտորոշում, ատենախոս, գործընթաց, ժողովրդագրություն, հականեխիչ, հայեցակարգ, մարզահամալիր, նստաշրջան, շարժասանդուղք, պարբերացում, ստուգայց** են: Այսօր դժվար է պնդել, որ սրանք նորաբանություններ են: Ընդունված է դրանք կոչել **նոր բառեր**¹⁹: Պայմանականորեն նորաբանություններ կարելի է համարել վերջին մեկ-մեկուկես տասնամյակում ստեղծված և գործածության մեջ մտած բառերը:

Բ.1.4. Նորակազմություններ: Դրանց երբեմն անվանում են նաև **բառային նորաբանություններ**: Սակայն այս բնորոշումով սովորաբար նկատի են ունենում նաև փոխառյալ նորաբանությունները, մինչդեռ բուն նորակազմությունները իրենց արտաքին հնչյունական կազմով նոր բառերն են: Նորակազմությունների առաջացման աղբյուրները բազմազան են: Դրանք նախ և առաջ բառակազմական գործող կաղապարներն են՝ **բառաբարդում, ածանցում, հապավում**, ինչպես նաև **բառապատճենում**:

Բառաբարդում ասելով՝ հասկանում ենք արմատների կցումով կազմվող նոր բարդությունները, ինչպես՝ **այլընտրանքային, անկարգել** (պարաշյուտ), **աղիքուղի, բազմաշաքար, գործառնություն** (օպերացիա), **դիպաշար, դոնդողանյութ, թոչնախտ, հրթիռարձակ, մերսասրահ, պատկերամուտ** (սկաներ), **տեսաձայնագրառում, տուֆափշրաքար, օգտատեր** են:

¹⁸ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերենի արմատական բառարան, հ. Բ, Եր., 1973, էջ 497:

¹⁹ Տե՛ս **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:

Նոր բառերի ստեղծման մեջ առավել ակտիվ դեր ունի **ածանցումը**, հիմնականում կիրառվում են գործուն ածանցները՝ **-ային** (անասնաճարակային, ավազաշիթային, հակախոցային), **ան-** (անդիրտ, անջրասույզ, անփոփոխակային), **-ելի** (քառակուսելի, խորանարդելի), **-անք** (արգելանք, արտազատանք, հյուծանք), **համ(ա)-** (համաբերվածք, համաձուլույթ), **-ական** (ցրտառական, ջերմութական), **-իչ** (մետաղոքիչ, ջրամեկուսիչ), **-ույթ** (տեղեկույթ, խտույթ, հալույթ), **-ություն** (անհիշություն, միաբնեռայնություն, մթնագարություն), **-ում** (ածխերևակում, դոնդողագոյացում, օճառացում) են:

Ածանցումով շատ բառեր են կազմվում նաև **փոխառյալ** բառահիմքերից, օր.՝ **ագրար**+ային, **գենդեր**+ային, **դիֆերենց**+ելի, **գոմբի**+ացն+ել, **էպօքսիդ**+ային, **լիցենզ**+ավոր+ում, **միցել**+ային, **ստենդ**+ավոր+ել, **դիզայներ**+ական, **քլոր**+ացում են:

Բառաբարդման մի տեսակ է նաև **հասպավումը**, որը վերջին տարիներին քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում լայն գործածություն ունեցավ, ինչպես՝ **Հայինայբանկ**, **ՀայՌուսգազարդ**, **ԵԱՏՄ**, **ԱՊՊԱ**, **ԵԱՀԽ**, **ՀԱՊԿ** են:

Լեզվի բառապաշարը հարստանում է նաև **բառապատճենման** միջոցով. լեզվական միավորը ստեղծվում է այլ լեզվի համապատասխան միավորի կազմության կաղապարով, նրա ընդօրինակմամբ: Բառապատճենումները ոչ միայն առանձին **բառեր** են (թթվածին - кислород, ռնգեղջյուր - носорог, շուկայագիտություն - marketing, ջրալույծ - hidrofil, ջրամերժ - hidrofob, սնկագիտություն - микология), այլև **բառակապակցություններ** (անոթային բույսեր - сосудистые растения, բջջային հեռախոս - сотовый телефон, ջերմային ճառագայթում - тепловое излучение), **դարձվածքներ** (փողերի լվացում - отмывание денег, բանալի բառեր - key words, լողացող կուրս - плавающий курс), **հասպավումներ** (Եվրադատարան - Евросуд, Եվրամիություն - Евросоюз) են:

Իմաստային նորաբանությունները արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստներն են: Օր.՝ **թափանցիկ** բառն ունի բառարանային 13 իմաստ, որոնց վերջին շրջանում ավելացել է նոր իմաստ՝ «վերահսկելի, արդար» (Ամեն ինչ արվում է ընտրությունները **թափանցիկ** դարձնելու համար): **Անձկացում** բառը իմաստի մասնավորման հետևանքով բժշկական տերմինահամակարգում ձեռք է բերել «զարկերակային պատերի նեղացում» իմաստը («Ախտորոշվել է մանր զարկերակների **անձկացում**»): Իմաստային նորաբանություններ են նաև՝ **դիմակ** - դիմահարդարման մեջ՝ մաշկի խնամքի համար

պատրաստված քուրք (բույսերից պատրաստված թարմացնող **դիմակ**), **լծակ** - ներգործելու, ազդելու միջոց (հարցի լուծման համար կարևոր **լծակներ** գործադրել) ևն:

Իրենց ծագմամբ նորաբանությունները լինում են **հանրական** և **անհատական** (կամ հեղինակային): Առաջինները ձևավորվում են նոր առարկաների, երևույթների, հասկացությունների երևան գալու հետևանքով՝ **բնապահպան, դյուրակիր, զտաքաշ, կանխարգելում, համացանց, նավթահումք, սրտավիրաբույժ, վարակասպան** ևն: Երկրորդները ստեղծվում են անհատական, ոճական նկատառումներով, ինչպես՝ **անտառերեն, թավշել, բուրավետիչ, ծառամազլցում, նախամայրամուտ, նյարդահար, ռադիոշնչաչափություն** ևն:

Անհատական նորակազմություններից շատերը ստեղծվում են ուղղակի նյութի անմիջական թելադրանքով և ընդհանուր գործածական դառնալու նախադրյալներ չունեն: Այդպիսի լեզվական միավորները կոչվում են **դիպլաժային**: Օր.՝ **ամենաբերձ, անմարդապաշտ, մնացողիկ, երակաշարժիչ**, կամ՝ **անտառահեն, քրեաթերթիկ, հարցատարափ, տոկոսախնեղ, եթերադուլ** ևն: Անհատական նորակազմությունների գործածությունը արդարացվում է, եթե դրանք ունեն արտահայտչականություն: Դրանց մի մասը ընդունվելու դեպքում անցնում է բառարան և ստանում ընդհանուր գործածության իրավունք, ինչպես՝ **կենսակոիլ, կենսադաշտ, կենսաքայքայում, գեղալոդ, համակարգչահեն, հիմնառանցք, հիմնանյութ, հիմնակորիզ, առաջնախաղ, աղմկամեկուսիչ, արագացույց** ևն:

Նոր բառեր ստեղծելու համար լեզվական ճաշակ ու զգացողություն է պետք: Հաճախ նոր ստեղծված հանրական նորակազմությունները չեն գոհացնում հասարակության լեզվական պահանջները և դուրս են մնում գործածությունից:

Բ.2. Տերմիններ: Տերմինը (լատ. **terminus**՝ սահման, եզր) բառ կամ բառակապակցություն է, որը ճշտորեն արտահայտում է գիտության, տեխնիկայի, արվեստի, հասարակական կյանքի որևէ բնագավառի որոշակի հասկացություն: Ունի հետևյալ բնութագրական գծերը. **1.** հասկացության անուն է. **2.** իմաստը ճշգրտորեն սահմանելի է. **3.** բովանդակային պլանը միշտ ձգտում է մենիմաստության. տերմինների մեծ մասը մենիմաստ է, մինչդեռ ընդհանուր գործածական բառերից շատերը բազմիմաստ են. **4.** հիմնականում գոյականական արտահայտություն ունի. **5.** գերծ է հուզագրացական երանգավորումներ

րից, իբրև կանոն՝ չի ունենում իր հումանշային տարբերակը, սովորաբար չի գործածվում ոճական-արտահայտչական նշանակությամբ:

Տերմինային արժեքով կիրառվում են բառապաշարի՝ հասկացություն արտահայտող միավորները (նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը), առավելապես՝ **գոյականները**. ածականներն ու բայերը ավելի սակավ են գործածվում, դերանուններին ու մակբայներին տերմինային կիրառությունները հիմնականում բնորոշ չեն: Թերիմաստ կամ սպասարկու բառերը՝ կապերը, շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները, զուրկ լինելով նյութական իմաստից, տերմին չեն կարող դառնալ: Բայական տերմինները գոյականացման միտում ունեն՝ բևեռել - **բևեռացում**, լսել - **լսում**, մերժել - **մերժում**, փոշոտել - **փոշոտում** են: Հայերենում սովորական է միևնույն բայահիմքից տարբեր իմաստներ արտահայտող տերմինների կազմությունը՝ **խոսել**, **խոսք**, **խոսույթ**, **խոսողություն** են, **մշակել**, **մշակություն**, **մշակույթ**, **մշակաբույս**, **մշակում** են: Ածականները տերմինային արժեքով հանդես են գալիս հիմնականում գոյականական բառակապակցության կազմում կամ էլ, ինքնուրույնաբար գործածվելով, վերածվում են գոյականների (ինչպես՝ **ածական**, **վանական**, **բանակային**, **կուրսային** են):

Բառերը, դառնալով որևէ գիտության **տերմինային համակարգի** միավոր, ձեռք են բերում տերմինային իմաստ, որն արտահայտում է գիտության կամ որևէ այլ բնագավառի բնորոշ կոնկրետ հասկացություն և իբրև այդպիսին՝ տրվում է գիտական ճշգրիտ սահմանման: Տերմինները ձևավորվում և գործածվում են ըստ գիտության ու հասարակական կյանքի տարբեր բնագավառների՝ մշակույթ, քաղաքականություն, սպորտ, զանազան մասնագիտություններ: Պետք է նշել, սակայն, որ տերմինների միջև խիստ անջրպետներ չկան: Այսպես՝ կան տերմիններ, որոնք գործածվում են ամենատարբեր ոլորտներում կամ տերմինաշերտերում. օր.՝ **արմատ** բառը տերմինային զանազան իմաստներով գործածվում է մաթեմատիկայում, լեզվաբանության մեջ, կենսաբանության որոշակի ճյուղերում, **սեռ** տերմինը՝ մարդաբանության, լեզվաբանության, գրականագիտության մեջ, **եթեր**-ը՝ ֆիզիկայում, քիմիայում, հեռուստատեսության բնագավառում, **դաշտ**-ը՝ ֆիզիկայում, աշխարհագրության, լեզվաբանության մեջ, **նյութ**-ը՝ քիմիայում, իրավաբանության մեջ, լրագրության ասպարեզում և այլուր: Մա գիտական լեզվում բավական տարածված իրողություն է, որը կոչվում է **տերմինային համանունություն**:

Ասվեց, որ տերմիններին բնորոշ չէ հոմանշությունը, և տերմինային հոմանշության մասին խոսելիս այն հստակորեն պետք է առանձնացնել ընդհանուր բառագիտական հոմանշությունից: Այսպես՝ չկանոնարկված խոսքում **ատոմ - մասնիկ - մոլեկուլ** բառերը իրենց հիմնական իմաստով հոմանիշներ են: Մինչդեռ տերմինային համակարգում այդ բառերը առանձին տերմիններ են՝ տարբեր ձևակերպումներով. **ատոմ** (նաև՝ հյուլե) բառի համար տրվում է հետևյալ բացատրությունը՝ «քիմիական տարրի փոքրագույն մասնիկը, որ բաղկացած է միջուկից և էլեկտրոնից», **մոլեկուլ** բառի համար՝ «նյութի ամենափոքր մասնիկ, որ օժտված է տվյալ նյութի բոլոր հիմնական հատկություններով», **մասնիկ** բառի համար՝ «որևէ նյութի բաղադրիչ մաս կազմող առանձին՝ տեսանելի կամ անտեսանելի փոքրագույն հատիկ (կավի, փոշու մասնիկ)», իսկ լեզվաբանության մեջ սահմանվում է իբրև «բառին, բառահիմքին, բառարմատին կցվող երկրորդական ձևույթ»:

Տերմինների մեջ երբեմն հանդիպում են միևնույն հասկացությունն արտահայտող նույնիմաստ (նույնանիշ) բառեր, որոնք կոչվում են **բազմանուններ** (օր.՝ գունագար - լւնամաշկ, կապար - արճիճ, բաղդատական - համեմատական, խնդրառություն - կառավարում - հոլովառություն, բորսա - բիրժա, մրջնաթթու - մեթանաթթու ևն): Ժամանակի ընթացքում տվյալ տերմինահամակարգում սովորաբար կայունանում է բազմանուններից որևէ մեկը:

Տերմինները լեզվի բառապաշարի առանձին շերտ են, սակայն սովորական են դրանց և բառապաշարի այլ շերտերի փոխադարձ ներթափանցումները. համագործածական բառը կարող է գործածվել նաև տերմինային արժեքով (օր.՝ **ջուր** - քիմիական, **ականջ** - կազմախոսական, **թուփ** - բուսաբանական ևն): Հնարավոր է նաև հակառակ երևույթը, այսինքն՝ տերմինները կարող են ներթափանցել համագործածական բառաշերտ, օր.՝ **բջիջ**, **թթվածին**, **կարճատեսություն**, **մոլորակ**, **ռադիո**, **ջերմաչափ** ևն:

Տերմինների առաջացման ուղիները տարբեր են: Հայերենում կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Բառակազմական միջոցներ. հայերենի տերմինաբանության հարստացման հիմնական աղբյուրն է: Բառակազմական գործող կաղապարներով հայերենում ստեղծվել են հազարավոր տերմիններ: Բերենք մեկ-երկու օրինակ՝ **մակաբույժ**, **ավշային**, **արագացուցիչ**, **սահանք**, **խաչասերում**, **իջվածք**, **հոտոտելիք**, **երկնուլորտ**, **նյարդաթել**, **ժամագոտի** ևն:

2. Բառիմաստի փոփոխություն. տեղի է ունենում բառիմաստի նեղացում, և համագործածական բառը վերածվում է **տերմինի**, օր.՝ **անկում, լարվածություն, խտություն, ծավալ, հզորություն, ճնշում, գիծ, գումար, կետ, հանում, հարթություն, շոշափող, սեղան** (մաթեմատիկա), **աղ, արծաթ, թթու, ջուր, մետաղ** (քիմիա), **ավիշ, բաժակ, ընտանիք, կաթնասուն, կարգ, շարք, պսակ, տեսակ** (կենսաբանություն) ևն: Տեղի է ունենում նաև հակառակ գործընթացը. իրենց հերթին տերմինները կարող են վերածվել համագործածական բառերի, ինչպես՝ **ճառագայթ, ճյուղ, արմատ, սիրտ, բջջային, խճանկար, հեռատեսություն, նյարդային, ռումանտիկ, վայրէջք** ևն:

3. Փոխառություններ. հայերենի տերմինաբանության հարստացան հիմնական աղբյուրներից մեկն է: Հայերենը այլ լեզուներից փոխառել է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող հազարավոր տերմիններ՝ **ակլալի, կիրենոնետիկա, էլիպս, իզոթերմ, իներցիա, ինտեգրալ, հեմոգլոբին, մոդուլ, վոլտ, քվանտ, ֆոտոսինթեզ** ևն:

4. Գրաբարից և միջին հայերենից փոխանցված բառեր, որոնք տերմինացման են ենթարկվում նույն իմաստներով կամ, որ ավելի հաճախադեպ է, իմաստափոխությամբ, ինչպես՝ **քարտեզ** նշանակել է մագաղաթի կամ թղթի կտոր, նամակ, հրովարտակ, գիրք, մատյան, **արբանյակ**՝ ժիր սպասավոր, պատանյակ, համբակ, ծառա, պաշտոնյա, **օղաչու**՝ օղախաղաց, օղագնաց ևն:

5. Բարբառային բառեր. դրանց տերմինացումը կենսունակ միջոց չէ և հիմնականում հանդիպում է որոշակի ոլորտներում՝ գյուղատնտեսություն, բժշկագիտություն, արհեստագործություն ևն՝ **գետաբերուկ, խառնուկ, այգեբաց, այգեփոր, ականջմտուկ, էտոց, դողերոցք, աշնանացան, սդոց, գերանդի, մանգաղ, բահ, կարմրուկ, կուժկոտրուկ, խոզուկ** ևն²⁰:

Բ.3. Բառի կազմության սխալ ընկալում: Բառի սխալ գործածության պատճառ կարող է դառնալ բառի կազմության չիմացությունը՝ բառապատկերի անճիշտ ընկալումը: Այսպես՝ **սնանկանալ** բառը կազմվել է **սնանկ** ածականից (ստուգաբանորեն՝ **սին** - փուչ, դատարկ, **անկ** - ընկած) + **ան** + **ալ** բայակազմական կաղապարով և նշանակում է **սնանկ դառնալ**՝ նյութական միջոցներից զրկված լինել ևն: Բայակազմությունը այս դեպքում չի ուղեկցվում հնչունափոխությամբ, հետևաբար՝ ոչ թե **սննկանալ**, այլ **սնանկանալ**: **Պատճեն** բառի **ն** վերջնահնչյունը թյուրիմացաբար ընկալվում է իբրև որոշիչ հոդ, և

²⁰ Տերմինների և տերմինաբանության մասին տե՛ս **Աղայան Է.**, Տերմինագիտություն, Եր., 1978: **Սուփաայան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:

բառը ստանում է **պատճե** սխալ ձևը: Նմանապես՝ **ճրագալույց**-ը դառնում է **ճրագալույս** (կապվելով **լույս** բառի հետ), **տարկետում**-ը՝ **տարկետում** (կապվելով **տարի** բառի հետ), **սրդողած**-ը՝ **սրտողողած** (կապվելով **սիրտ** բառի հետ), **հոգաբարձու**-ն՝ **հոգեբարձու** (կապվելով **հոգի** բառի հետ) են:

Այսօրինակ սխալի պատճառներից մեկն էլ մի բառի ձևի անհարկի նմանեցումն է (համաբանությունը) մեկ այլ բառի: **Տարեկան** բառում, ինչպես գիտենք, առկա է **ի+ա>ե** հնչյունափոխությունը՝ **տարի+ական**. դրա նմանողությամբ շատերը սխալ են կազմում և գործածում **օր** և **ամիս** բառերի՝ **-ական** ածանցով բաղադրված ձևերը՝ **օրեկան**, **ամսեկան**. Ճիշտ ձևերն են՝ **ամսական** (ամիս+ական), **օրական** (= օր+ական):

Բ.4. Ստուգաբանություն: Ուսումնասիրում է բառի «կյանքը», այն է, թե բառը սկզբնապես ինչ կառուցվածք և իմաստ է ունեցել, հետագայում կառուցվածքային ինչպիսի զարգացումներ է ունեցել, բառակազմական և կամ իմաստային ինչ փոփոխություններ է կրել ևն: Բառի ստուգաբանական վերլուծությունը, բնականաբար, ավելի խոր գիտելիքներ է պահանջում: Շատ բառեր այսօրվա ընկալմամբ պարզ կազմություն ունեն, մինչդեռ ստուգաբանորեն բաղադրյալ են: Օր.՝ **անդունդ** < ան+դունդ (հատակ), **արահետ** < այր (տղամարդ) + հետ(ք), **արձագանգ** (արձագանք) < արձ (անձանոթ է) + գանգ (գանգյուն՝ ձայն, հնչյուն), **այժմ** < այս + ժամ, **արմատ** < արմ(ն) + ատ, **դունչ** < ընդ + ունչ, **ընկեր** < ընդ (հետ, միասին) + կեր (ուտել), **ընտիր** < ըն(դ) + դիր (դնել), **թեկուզ** < եթե + կ + ուզե, **լուցկի** < լույց (վառի՛ր) + կի, **հրդեհ** < հր (հուր) + դեհ (կիզում, այրում), **չակերտ** < չ (չա) + կերտ, **սակայն** < սակ (պայման, սահմանված չափ, կարգ) + այն ևն:

Ստուգաբանությունը «բացահայտում է բառերի (ավելի ճիշտ՝ բառարմատների) նախնական ծագումը, որոշում, թե որ բառերն են, որ հնդեվրոպական հիմք լեզվից են սերում, որ բառերն են, որ այլ լեզուներից են փոխառվել, և որ բառերն են, որ դեռևս ճշտորեն չեն ստուգաբանվել»²¹: Այսպես, օր.՝ ստուգաբանությունը պարզում է, որ **հավասարագոր** բառը կազմված է **havsar**՝ նման, հավասար, և **zor**՝ ուժ, գորություն իրանական փոխառյալ բաղադրիչներից, **երիտասարդ** բառը բաղադրված է պիլ. **rētak** (պատանի) և **sard** (տարի) բառերից, **տերևակաղամբ** < ասոր. **teref** (տերև) և պրս. **kalam** (կաղամբ) բառերից, **ստամոքս** < հուն.՝ բերան < լատ. **stomachus** (ստամոքս), **կուլք** < ասոր. **kulba** (շուն), **ցամաք** < բր. **smq** (չորացնել): **Մարդ** (հնիս. **mrtg** ձևից) բառը բնիկ

²¹ Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 30:

հայերեն բառ է. ստուգաբանորեն կապվում է **մեռնել** (նշանակում է «մահկանացու») բառի հետ, առյուծ՝ հնի. **reug** «մոնչալ» արմատից, **անկյուն**՝ հնի. **ang** «ծովել, կորանալ» + **-յուն** մասնիկը, **աղ**-ը նույնպես բնիկ հայերեն բառ է, գալիս է հնի. **sald** ձևից²²:

Բ.5. Հապավական բարդություններ և համառոտագրություններ: 1. Հապավում կամ **հապավական բարդություն** կոչվում է բառակապակցության կամ սովորական բարդության բաղադրիչների հապավված, կրճատված ձևերի միացումով կազմված բարդությունը²³: Հապավումները հայերենում, ինչպես ուրիշ լեզուներում, առաջացել են համառոտագրությունների հիմքի վրա և սկզբնապես եղել են դրանց մի տեսակը: Հապավական բարդությունների կազմի մեջ մտնող հապավված բաղադրիչները կոչվում են **հապավույթներ**²⁴:

Ըստ իրենց հապավույթների բնույթի՝ հապավումները լինում են **տառային** (ԵՊՀ, ՈՒՄ, ԻԿ, ԹԱԲ, բուհ, ԱԺ ևն), **վանկային** (ուսմասվար, ֆիննախ, տնտեսվար ևն) և **խառը** (ագրոէկոհամակարգ, տուրգործակալ, Ձորահէկ, քիմմաքրում ևն):

1. Վանկի արժեք չունեցող տառային հապավումները կարդացվում են տառ առ տառ: Օր.՝ **ԴՆԹ [դընըթը]** (դեգօքսիտիբոնուկլեինաթթու), **ՄՄՌ [մըմըռը]** (միջազգային մագնիսական ռեզոնանս), **ՌՆԹ [ռընըթը]** (ռիբոնուկլեինաթթու), **ՕԳԳ [օգըգը]** (օգտակար գործողության գործակից), **ՄՄՀ [մըմըհը]** (միավորների միջազգային համակարգ): Արևմտահայերենից վերցված տառային հապավումները հաճախ կարդացվում են տառերի անվանումներով: Օր.՝ **ՀՅԴ [հոհիդա]**, **ՀՄԸՄ [հոմենըթմեն]**:

Օտար լեզուներից վերցված տառային հապավումները (հայագիր փոխառյալ հապավումներ), եթե կարդացվում են տառերի անվանումներով, հնչադարձվում են և գրվում յուրահատուկ ձևով՝ որպես վանկային հապավումներ և մասամբ մեծատառով, օր.՝ **Սիէնէն, ԲիԲիՍի, ԷյԲիՍի**, իսկ եթե կարդացվում են որպես սովորական բառ, ապա գրադարձվում են և գրվում սովորական տառային հապավումների ձևով, օր.՝ **ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ, ԳՈՒԱՄ** ևն: Հանդիպում են նաև հայագիր փոխառյալ վանկային հապավումներ՝ **«ԱրմենՏել», «Մեծգոսբանկ», «Ռոսնեֆտ»** ևն:

²² Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. I-IV, Եր., 1971-1979:

²³ Տե՛ս **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Բառագիտություն, Եր., 2007, էջ 74-76:

²⁴ Հապավումների մասին մանրամասն տե՛ս **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 295-301:

Ուղիղ ձևով (առանց հոլովական վերջավորության) գործածվում են միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին-առանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող **ը-ով**)²⁵, օր.՝ **ՀՀ** Ազգային ժողով, **ԱԺ** նախագահ, **ՀՀ ԿԳ** նախարար, **ՊՆ** հայտարարությունը: Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տառային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օր.՝ **ՀՀ ԿԲ**-ն հանդես է եկել նախաձեռնությամբ, այդ գործով զբաղվեց **ՊԱԿ-ը**, **ՄԱԿ-ի** Անվտանգության խորհուրդ, ելնելով **ԹԱԲ-ից**՝ կունենանք...., հոսանքի ուժի կախումը **ԷԼՇՈՒ-ից**, **ԱՄՆ-ն** ավարտեց գորավարժությունները, **ԱՄՆ-ում** Հայաստանի դեսպան:

Գրավոր խոսքում երբեմն չի պահպանվում ընդունված սկզբունքը. բաղադրիչ տառերն առանձին-առանձին (բաղաձայնները՝ **ը-ով**) հնչող հապավումը գործածվում է ոչ թե ուղիղ, այլ թեք ձևով (**ՉԺՀ-ի** կառավարությունը, **ՀԲԸՄ-ի** մասնաճյուղ, **ՔԴՄ-ի** հայտարարությունը, **ԱՄՆ-ի** Կոնգրեսը), կամ միննույն հապավումը, ըստ արտասանության, գրվում է մեկ ուղիղ, մեկ թեք ձևով, ինչպես՝ **ԱԺ** խոսնակ, **ԱԺ-ի** կանոնակարգը, **ԿԲ** գործունեությունը, **ԿԲ-ի** աշխատակիցներ, **ԱՄՆ** դուլար, **ԱՄՆ-ի** շահերը:

2. Համառոտագրություններ: Խնայողության նպատակով երբեմն հարկ է լինում հաճախ հանդիպող և ծանոթ բառերը, հատկապես անձնանունները գրել ոչ թե լրիվ, այլ համառոտ ձևով՝ կրճատելով դրանց որոշ մասը: Բառերի կրճատ գրությունը կոչվում է համառոտագրություն: Համառոտագրության մի քանի եղանակներ կան:

1. Գրվում է բառի սկզբնատառը, և կողքին կետ է դրվում, օր.՝ **Վ. Թալին** (Վերին Թալին), **մ.թ.ա.** (մեր թվարկությունից առաջ), **գ.ա.մ.** (զանգվածի ատոմական միավոր), **Ք. ա.** (Քրիստոսից առաջ), **ս. թ.** (սույն թվականի):

Ավելի հասկանալի լինելու համար երբեմն գրվում են բառի առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով: Օր.՝ **Հովհ. Թումանյան** (Հովհաննես Թումանյան), **օր.** (օրինակ), **հազ.** (հազար), **գնդ.** (գնդապետ):

2. Գրվում են բառի միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը, օր.՝ **հմմտ.** (համեմատի՛ր), **մսնգ.** (մասնագիտական), **աշխգ.** (աշխարհագրական), **փխք.**

²⁵ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջ 311-312:

(փոխաբերական), **բժշկ.** (բժշկագիտական), **երկրբ.** (երկրաբանական), **հմկրգչ.** (համակարգչային): Եթե բառի վերջին բաղաձայնը գրվում է, ապա կետ չի դրվում, օր.՝ **պրն** (պարոն), **մլն** (միլիոն), **մլրդ** (միլիարդ), **հվ** (հարավ), **հս** (հյուսիս), **ևն** (և այլն):

3. Գրվում են բառի առաջին և վերջին տառերը կամ սկիզբն ու վերջը՝ միության գծիկով միացած, օր.՝ **պ-ն** (պարոն), **դ-ր** (դոկտոր), **լ-թ** (լուծույթ), **մ-ր** (մայր), **փ/գ-տ** (փոխգնդապետ) ևն:

4. Չափ ու կշռի միավորների բաղադրյալ անվանումների համառոտագրությունները գրվում են երկու կամ երեք տառով (բաղադրիչների սկզբնատառերով), միասին և առանց կետի՝ նմանվելով փոքրատառով գրվող տառային հապավումներին: Օր.՝ **վ** (վոլտ), **մվ** (միլիվոլտ), **կՋ** (կիլոջոուլ), **ր** (րոպե), **լ** (լիտր), **գ** (գրամ), **մ³** (մետր խորանարդ), **մմ³** (միլիմետր քառակուսի), **կգ** (կիլոգրամ), **սմ** (սանտիմետր), **ՄԲ**²⁶ (մեգաբայթ), **դցմ** (դեցիմետր), **դԲ** (դեցիբել), **հա** (հեկտար): Մրանք հապավում չեն, քանի որ նոր բառ չեն դարձել և կարգավում են լրիվ ձևով:

5. Բառակապակցությունը կամ բարդությունը համառոտագրելիս երբեմն գրվում են բաղադրիչների սկզբնատառերը՝ թեք գծով և առանց կետերի, օր. **ս/թ** (սույն թվի), **մ/վ** (մետր/վայրկյան), **գ/Ֆ** (գեղարվեստական ֆիլմ), **կվտ/ժ** (կիլովատտ/ժամ), **զ/ծ** (զինծառայող):

Եթե համառոտագրվող բառը հոգնակի թվով է, ապա համառոտագրությունը կրկնվում է (առանց բացատի), օր.՝ **պրոֆ.պրոֆ.** (պրոֆեսորներ), **ընկ.ընկ.** (ընկերներ): Մեկ տառով համառոտագրությունները կրկնվելիս գրվում են միասին՝ մեկ ընդհանուր կետով, օր.՝ **թթ.** (թվականներ), **դդ.** (դարեր), **հհ.** (հատորներ), **պպ.** (պարոններ): Համառոտագրությունները փոքրատառով են գրվում, եթե հասարակ անուններ են (օր.՝ մ. թ. ա.), և մեծատառով են գրվում, եթե հատուկ անուններ են (օր.՝ Ա. Ս. Պուշկին, Ք. ա., Ք. հ.):

Բ.6. Իմաստափոխություն: Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերի իմաստները հաճախ ենթարկվում են փոփոխությունների: Դրանք սովորաբար լինում են երեք կարգի.

1. Բառիմաստի ընդլայնում. սա իմաստափոխական այն երևույթն է, երբ բառը, պահպանելով իր նախկին իմաստը, ձեռք է բերում նոր՝ լրացական

²⁶ Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների...մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48(922):

իմաստ(ներ): Օր.՝ **թև** բառը սկզբնապես նշանակել է միայն «թռչունների, միջատների, ինչպես նաև որոշ կաթնասունների թռչելու գործարան» կամ «մարդու բազուկ, ձեռք», ապա ստացել է նաև «շինության կողմնային մաս կամ մասնաշենք» իմաստը, այնուհետև՝ «եզերք, փի» իմաստները (զետի թև, ճանապարհի թև) ևն: **Շուն** բառը նախապես ունեցել է «շնագզիների ընտանիքին պատկանող ընտանի կենդանի» իմաստը, ապա համաստեղություն անվանող բառակապակցության կազմում դարձել է աստղագիտական տերմին (Մեծ Շուն, Փոքր Շուն), հետագայում ձեռք է բերել նաև փոխաբերական իմաստներ՝ «1. անհամակրելի, հարգանք ու վստահություն չառաջացնող մարդ, 2. խորամանկ՝ վարպետ՝ հնարամիտ մարդ («Հիմա ու՛մ կարող ես խաբել. բռնորն էլ շուն են»), 3. անարգ՝ չարագործ մարդ (դժոխքի շուն, արյունախում շուն) ևն»: **Ըմբռնել** բառը սկզբնապես նշանակել է «ամուր բռնել, կաշկանդել, ձերբակալել», հետագայում ձեռք է բերել «հասկանալ՝ մտքով յուրացնել, գիտակցել, ընկալել» իմաստները: **Բյուր** հնում նշանակել է «տասը հազար», այսօր գործածվում է «խիստ շատ, անչափ, անհամար» իմաստներով: Այդպես իրենց իմաստներն ընդլայնել են բազմաթիվ բառեր՝ **աթոռ, ամբիոն, աշխարհ, արջ, բանավոր, դաշտ, զամբյուղ, լսել, հոսք, ճյուղ, նկարել, սեղան, չար** ևն: Բառիմաստի ընդլայնում է նաև հատուկ անվան՝ հասարակ անվան վերածվելը: Օր.՝ **հուղա** նշանակում է **մատնիչ, դավաճան** (Քրիստոսի աշակերտ ու մատնիչ Հուդայի անունից): Նմանապես՝ **կայսր** - արքա, թագավոր, **հերց** - պարբերական տատանումների հաճախականության միավոր, **նյուտոն** - ուժի միավոր, **պասկալ** - ճնշման միավոր, **ջոուլ** - աշխատանքի, էներգիայի և ջերմության քանակի միավոր, **վատտ** - էլեկտրական հոսանքի հզորությունը չափելու միավոր, **օհմ** - էլեկտրական դիմադրության չափման միավոր, **կուլոն** - էլեկտրականության քանակի լիցքի միավոր, **տեսլա** - մագնիսական ինդուկցիայի միավոր ևն:

2. Բառիմաստի նեղացում. բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերում ավելի նեղ՝ մասնավորված իմաստ(ներ)՝ պահելով կամ կորցնելով իր նախնական իմաստը: **Հավ** բառը հնում նշանակել է առհասարակ «Թռչուն՝ թռչող կենդանի» (հոգնակիին՝ **հավք**). կորցնելով նախկին իմաստը՝ ժամանակակից հայերենում նշանակում է ոչ միայն հայտնի ընտանի թռչունը, այլև միայն այդ ընտանի թռչունի էզը: **Վերարկու** բառը սկզբնապես նշանակել է առհասարակ արտահագուստ՝ 1. Ծածկոց, ծածկույթ, 2. Անկողնու ծածկույթ, 3. Վերմակ, 4. Գլխի քող, 5. Կարպետ, օթոց, 6. Անասունների մորթի ևն: Արդի հայերենում գործածվում է «Զգեստի վրայից հագնելու երկար հագուստ» նշանակությամբ:

Համբակ նշանակել է՝ 1. Երեխա, նորածին մանուկ, 2. զավակ, որդի, 3. աշակերտ են, իսկ հետագայում՝ թերուս: Բմաստի նեղացում են ունեցել թռչուն (սկզբնապես՝ նա, որ թռչում է, ընդունակ է թռչելու, արագալաց), **կաղ** (հնում՝ որևիցե անդամով պակասավոր, խեղ, օր.՝ լեզվով կաղ), **հեղինակ** (առաջնորդ, գլխավոր, վարիչ, պետ, իշխան), **հոլով** (թավալում, գլորում, շրջան), **կարդալ** (ձայնել, գոչել, աղաղակել, հրավիրել, կանչել, հորջորջել) և բազմաթիվ այլ բառեր: Բառիմաստի նեղացում կարելի է համարել նաև հասարակ անվան վերածվելը հատուկ անվան՝ **Ագատ**, **Արշալույս**, **Համբարձում**, **Հասմիկ**, **Մանուկ**, **Վրեժ** են:

3. Բառիմաստի շրջում և վերաիմաստավորում. բառը, պահպանելով կամ կորցնելով նախնական իմաստը, ձեռք է բերում նախկին իմաստին հակառակ իմաստ կամ իմաստային այլևայլ նրբերանգներ: Օր.՝ **իմաստակ** սկզբնապես նշանակել է «Իմաստուն կամ իմաստասեր անձ, գրագետ, ճարտասան» են, այժմ՝ «Թերուս, տգետ, բայց իրեն իբրև գիտուն ներկայացնող մարդ: **Պարապել**՝ պարապ լինել > այժմ՝ «Մի գործով զբաղվել, մի բան սովորել»: **Ապրել** նշանակել է ազատվել, փրկվել, այժմ՝ «Կյանք վարել, կենցաղավարել»: **Խնդրել** նշանակել է «Որոնել, փնտրել, ջանալ» են, այժմ՝ «Աղերսել, հայցել, աղաչել»: **Նահատակ**՝ կռվի մեջ առաջամարտիկ > վեհ գաղափարի համար կյանքը զոհած մարդ, զոհ: **Աշխատել**՝ հոգնել, նեղություն կրել > գործ անել, զբաղվել: **Միբուն**՝ սեր ունեցող, սեր կրող > գեղեցիկ, դուրեկան են:

Բ.7. Հոմանիշների շփոթություն: Հայտնի է, որ հոմանիշները հնչյունական կազմով տարբեր, բայց իմաստով նույն կամ մոտ բառերն են: Իրականում, սակայն, բացարձակապես նույնիմաստ բառեր դժվար է գտնել լեզվում. նույնանիշ համարվող բառերն անգամ իրարից զանազանվում են իմաստային նրբերանգներով, ունեն կապակցական կամ արտահայտչական որոշակի տարբերություններ: Հոմանիշներից մեկը կամ մյուսը գործածելը ոճական խնդիր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի է երանգավորում խոսքը, դառնում որոշակի վերաբերմունքի արտահայտման միջոց: Հոմանիշ բառերը, սակայն, միշտ չէ, որ կարող են միմյանց փոխարինել խոսքի նույն կառուցում, ուստի և խոսքային միջավայրում երբեմն դրսևորում են **կապակցական անհամատեղելիություն:**

Իրար չփոխարինող հոմանիշների շփոթությունը պարզապես **բառագործածության սխալ** է, որ ստեղծում է անճիշտ խոսք: Օր.՝ «Գիտաժողովը **տեղափոխվել** է մեկ ամսով»: Այստեղ խոսքը ժամկետի տեղափոխման մասին է,

որն արտահայտվում է **հետաձգել** բառով: Ճիշտ ձևակերպումը հետևյալն է՝ «Գիտաժողովը **հետաձգվել** է մեկ ամսով»: Կամ՝ «Թեև թթվածինն անհրաժեշտ է բոլոր կենդանի օրգանիզմներին, այնուամենայնիվ, նրա ազատ ռադիկալները կարող են **նպաստել** (<**պատճառ դառնալ**) քաղցկեղի առաջացմանը»: «Ցամաքային (բարձրագույն) բույսերի ենթաթագավորությունը **կիսվում է** (<**բաժանվում է**) տիպերի՝ մամռանմաններ, լերդամամուռներ, սերմնավոր բույսեր են»: «Խնձորը կարող ենք անվերջ կիսել, սակայն իրականում դա **չի կարելի** (<**հնարավոր չէ**)»:

Բաղադրիչների տարբեր համակցություններով ստացված բառակազմական հոմանիշները (**լեզվային/լեզվական, տեղափոխել/փոխատեղել**) երբեմն ունենում են կապակցական յուրահատկություններ, տարբերվում են այս կամ այն բառի հետ գործածվելու սահմանափակումով: Այսպես՝ **-ական** և **-ային** ածանցներն ունեն ընդհանուր-վերաբերական իմաստ՝ մի բանին վերաբերող, մի բանին հատուկ, և նույն գոյական հիմքի վրա դրվելով՝ կազմում են զուգահեռ բառեր: Սակայն դրանք դրսևորում են նաև իմաստային մասնակի տարբերություններ. **-ային**-ով կազմությունները ցույց են տալիս բառահիմք գոյականի բնույթից, էությունից բխող հատկանիշ, **-ական**-ով կազմությունները՝ այդ գոյականին առհասարակ հատուկ հատկանիշ կամ իրողություն: Օր.՝ **ցեղական** բառը նշանակում է ազնվացեղ, ընտիր ցեղի պատկանող՝ **ցեղական նժույգ, ցեղական կով**, իսկ **ցեղային** նշանակում է ցեղին հատուկ՝ **ցեղային հակամարտություն, ցեղային միություն**: Այլ օրինակներ՝ **տեղական** սովորություններ - **տեղային** անզգայացում, **քանակական** գերակշռություն - քանակային ցուցանիշ, **որակական** տեղաշարժեր - **որակային** տարբերություններ ևն:

Բառի իմաստային նրբերանգների և կապակցական-կիրառական հնարավորությունների անտեսումը գրական լեզվի կանոններից շեղվելու պատճառ կարող է դառնալ:

Բ.8. Հարանունների շփոթություն: Հիշենք, որ հարանունները արտաքին հնչյունական կազմով մոտ բառերն են: Կան հարանուններ, որոնք ձևով տարբերվում են աննշան չափով, սակայն արտահայտում են նույն իմաստը: Դրանք նույն բառի տարբերակներ են և հավասարապես գործածելի են մեկը մյուսի փոխարեն, ինչպես՝ **մեքենաբար - մեքենայաբար, աստղային - աստեղային, թունալի - թունալից, անձնանվեր - անձնվեր, զննական - զննողական**: Մրանք մի տեսակ միջին դիրք են գրավում հոմանիշների և հարանունների միջև:

Հարանունների միջև դրսևորվող իմաստային տարբեր կարգի հարաբերությունների հիման վրա տարբերակում են **բուն** և **ձևային** հարանուններ:

Բուն հարանունները նույն իմաստը չեն արտահայտում, բայց իմաստային ընդհանրություններ ունեն՝ **ծծմբական – ծծմբային (թթու), զգայություն – զգայունություն, վաղորդայն – վաղորդյան, հրաձիգ – հրձիգ, բիթ – բայթ, միաժամանակ – միառժամանակ, մտածություն – մտածողություն, քննել – զննել** ևն:

Ձևային հարանունները իմաստային որևէ կապ կամ առնչություն չունեն և ձևով իրար նման են պատահականորեն, ուստի դրանց՝ մեկը մյուսի փոխարեն գործածությունը սխալ է և անթույլատրելի, ինչպես՝ **վարկ** (հեղինակություն) - **վարզ** (ձիու համաչափ վազք) - **վարք** (կենսագրություն, պահվածք), կամ՝ **հարթ** - **հարդ, գիրք** - **գիրգ** - **գիրկ, ձաղկել** - **ծաղկել, ընտրել** - **ընթրել, շտապ** - **շտաբ** ևն:

Հարանունների ամենաբնորոշ հատկանիշը դրանց շփոթելիությունն է, որն առավել հավանական է նույնարմատ հարանունների դեպքում: Օր.՝ «Միևնույն քիմիական տարրի ատոմները **բացառապես (<բացարձակապես>** նույնն են», «Գերմոլեկուլային քիմիայի ուսումնասիրության առարկան **բացարձակապես (<բացառապես>** ոչ վալենտային փոխազդեցությունների արդյունքում ստացված բարդ համակարգերն են», «Ըստ սահմանման՝ ծանրության ուժը մոլորակի ձգողականության և **կենտրոնախույզ (<կենտրոնախույս>** ուժերի գումարն է», «Առաջին կիսամյակի քննական բոլոր պարտքերը **լուծվել են (<լուծարվել են>**»: Հարանունները հաճախ շփոթվում են՝ առիթ տալով ուղղագրական սխալների, ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց գրությանը՝ **ամենօրյա** - **ամանօրյա, վարք** - **վարկ, օրավար** - **օրավուր, խոխոջուն** – **խոխոջուն**: Հարանուն արմատների շփոթությունը կարող է նաև սխալ բառակազմության տեղիք տալ: Օր.՝ **վարկաբեկել** բառը սխալմամբ դառնում է **վարքաբեկել, անհարկի-ն՝ անհարգի** ևն: Երբեմն **այլասերում (дегенерация)** բառի փոխարեն սխալմամբ գործածում են **այլասեռում** բառը. առաջինի արմատն է **սեր** (ցեղ, տոհմ). **այլասերում** նշանակում է՝ «1. Գոյության անբարենպաստ պայմանների հետևանքով կենդանական և բուսական օրգանիզմների հատկությունների՝ սերնդեսերունդ վատանալը, 2. Բարքերի փչացում՝ անկում» ևն, օր.՝ «Ինքնափոշոտվող բույսերը 10-15 տարուց հետո ենթարկվում են այլասերման», մինչդեռ երկրորդ՝ **այլասեռում** բառի արմատը **սեռ**-ն է, հետևաբար այն նշանակում է «սեռի փոփոխություն, սեռափոխում» և չի կարող փոխարինել առաջինին:

Բ.9. Բառային զուգակցում (համապատասխանություն). բառերի իմաստային, բառապաշարային և քերականական անհամատեղելիություն: Բառի տեղին և ճիշտ գործածության առաջին պայմանը բառի ստույգ իմաստի իմացությունն է: Բառը ճիշտ գործածելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել այլ բառերի հետ նրա կապակցվելու, համապատասխանելու հնարավորությունները: Դրանց անտեսումը խոսքի սխալ կառուցման պատճառ կարող է դառնալ:

Բառընտրություն կատարելիս պետք է նկատի ունենալ բառերի խոսքաշարային առնչությունները, իմաստային և ձևային յուրահատկությունները. դրանց անտեսումը հանգեցնում է բառերի կապակցական անճշտությունների, հետևաբար նաև՝ ոչ ճիշտ ընկալումների: Օր.՝ առօրյայում **կշիռ** բառը, ըստ սովորության, գործածում ենք **զանգված**-ի փոխարեն. ասում ենք՝ «Մարմնի **կշիռը** 3 կիլոգրամ է», չնայած կիլոգրամը ոչ թե կշռի, այլ զանգվածի չափման միավոր է, հետևաբար ճիշտ է՝ «Մարմնի **զանգվածը** 3 կիլոգրամ է» ձևակերպումը: Ընդգծված բառերը ֆիզիկայում միանգամայն տարբեր հասկացություններ են, ուստի իմաստով մոտ կամ նույնիմաստ նմանատիպ բառերը, հանդես գալով իրենց առաջնային նշանակությամբ, առանձին դեպքերում չեն կարող իրար փոխարինել. այսպես՝ «Մեկ կիլոգրամ **զանգված** ունեցող մարմնի **կշիռը** Լուսնի վրա կկազմի Երկրի վրա ունեցած **կշռի** 1/6 մասը, քանի որ Լուսնի ձգողական դաշտը 6 անգամ փոքր է Երկրի ձգողական դաշտից, մինչդեռ **զանգվածը** անփոփոխ կլինի՝ 1 կգ»:

Բառագործածությունն ունի տարիներով հաստատված ավանդույթներ, մեր մտածողության մեջ ամրակայված սկզբունքներ: Ժամանակի ընթացքում, օրինակ, **ընդհանուր** բառի հետ կայուն կապակցություն է ստեղծել **հայտարար** բառը՝ **ընդհանուր հայտարար**, **բազմություն** բառի հետ՝ **թիվ** բառը՝ **թվերի բազմություն**, **սիրտ** բառի հետ՝ **արատ** բառը՝ **սրտի արատ**, կամ՝ **կարճ միացում**, **արմատ հանել**, **քառակուսի հավասարում կազմել**, **աստիճան բարձրացնել**, **հատման կետ**, **զրոյի ձգտել** ևն:

Կան տերմինային նշանակությամբ հաճախակի գործածվող բառեր, որոնք տերմինային նոր իմաստներ են ձեռք բերում, նվաճում իմաստային-գործառական նոր ոլորտներ՝ հանդես գալով որպես իմաստային նորաբանություններ, օր.՝ աշխատանքային **սեղան**, սպառողական **զամբյուղ**, համակարգչային **պատռուհան/ստեղնաշար/մկնիկ**, հակամարտության **կիզակետ**, տնտեսական դաշտ, վարկային **ռիսկ**, ֆինանսական համակարգի **թափանցիկություն**, **հարթ** դինամիկա ևն:

Սակայն կան բառեր էլ, որոնք, գործածվելով այլ բառերի փոխարեն, փորձում են նվաճել նոր իմաստներ, որոնք անհարիր են այդ բառերի բուն նշանակությանը և կապակցական հնարավորություններին: Բառերի անհամատեղելիությունը կարող է առնչվել անձ և ոչ անձ տարբերությանը: Երբեմն անձի հետ առնչվող բառը գործածվում է ոչ անձի համար և ստեղծում է իմաստային անճշտություն: Օր.՝ «Արդեն ժամանակն է, որ գնամ **վաստակավոր** հանգրստի»: **Վաստակավոր** լինում են անձերը, իսկ հանգիստը կարող է լինել **վաստակած**: Կամ՝ «Որակյալ լամինատը **երկարակյաց է** (**«ամուր է**) և տասնյակ տարիներ կարող է **դիմակայել** (**<դիմանալ**) խոնավությանը»: Իմաստային անճշտություն է առաջացնում նաև հակառակ կարգի շփոթությունը, երբ անձի համար գործածվում է նրան չառնչվող բառը: Օր.՝ «Շիրակացին **ճիշտ** էր, երբ դեռևս 7-րդ դարում, **խելացի** փաստարկներ բերելով, պնդում էր, որ Լուսինը սեփական լույսից գուրկ պինդ մարմին է». **ճշմարիտ** կամ **ճիշտ** լինում են ոչ թե անձինք, այլ նրանց գաղափարները, խոսքերը, իսկ անձը կարող է լինել **իրավացի**, և հակառակը՝ **խելացի** կարող է լինել մարդը և ոչ թե փաստարկը:

Յուրաքանչյուր բառ իր այս կամ այն իմաստով համատեղելի է որոշակի բառերի կամ բառիմաստների հետ, և այդ հանգամանքի անտեսումը առաջ է բերում խոսքի անճշտություն: «Կոպեռնիկոսը **մերժեց** (**< հերքեց, ժխտեց**) դարեր շարունակ ընդունված այն տեսությունը, թե Երկիրը տիեզերքի կենտրոնն է, իսկ Արեգակը պտտվում է նրա շուրջը»: Այսպես՝ **մերժել** կարելի է որևէ առաջարկ, հրավեր, խնդրանք, իսկ տեսությունը **հերքվում է** կամ **ժխտվում**: Կամ՝ «Ապացուցված է, որ ֆտալատները կարող են **խթանել**(**<առաջացնել**) էնդոկրին համակարգի խանգարումներ և հանգեցնել մի շարք վտանգավոր հիվանդությունների» են:

Խոսքի անճշտության պատճառ կարող է դառնալ նաև բառերի կամ բառաձևերի **քերականական անհամատեղելիությունը**: Օր.՝ հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր** և **ամբողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ **բոլոր** դերանունը պահանջում է հոգնակի թվով որոշյալ, **ամբողջ**-ը՝ որոշյալ առումով եզակի թվով լրացյալ՝ **բոլոր** հաճախորդները, **բոլոր** տարածքները, **ամբողջ** ունեցվածքը, **ամբողջ** նյութը: Միայն է՝ **ամբողջ** տարածքները, **ամբողջ** ունեցվածքները: Կամ **յուրաքանչյուր**, **ամեն մի** դերանունների հետ սովորաբար քերականորեն անհամատեղելի են որոշյալ առումով լրացյալները՝ **ամեն մի եռանկյունը**, **յուրաքանչյուր բանական մարդը** ևն:

Բ.10. Ավելորդաբանություն և կրկնաբանություն: Երբեմն խոսքում գործածվում են բառեր ու արտահայտություններ, որոնք, իմաստային ու ոճական որևէ դեր չունենալով, ծանրաբեռնում են խոսքը, առիթ տալիս իմաստային անճշտությունների, դառնում խոսքի ավելորդ, մակաբույծ տարրեր (**ավելորդաբանություն**): Օր.՝ «Բազմանալիս ամեռբայի կորիզը հավասարաչափ կիսվում է **երկու մասի**». ավելորդ է **երկու մասի** կապակցությունը, քանի որ **կիսվել**-ը արդեն իսկ այդ իմաստն արտահայտում է: Ճիշտ է՝ «Բազմանալիս ամեռբայի կորիզը հավասարաչափ կիսվում է»: Կամ՝ «Տիեզերագիտական գաղափարներից մեկը «Հաբլի հորիզոն» հասկացությունն է, որն **իր մեջ** ներառում է բոլոր տեսանելի գալակտիկաներն ու մատերիան». այստեղ ավելորդ է **իր մեջ** կապակցությունը, քանի որ **ներառել**-ը արդեն իսկ նշանակում է պարունակել: Այլ օրինակներ՝ **հետ** վերադարձնել (<վերադարձնել), **իրենից ներկայացնում** է ջերմոցային գազ (<ջերմոցային գազ է), այդպիսի **ձևով** (<այդպես), բնագրերի **տեքստում** (<բնագրերում), **ապագա** կատարելիք (<կատարելիք), **ավելի** նախընտրելի է (<նախընտրելի է), **զգալիորեն** վատթարացան (<վատթարացան//զգալիորեն վատացան) ևն:

Ավելորդաբանության մի տարատեսակ է **քերականական ավելորդաբանությունը**, որը հաճախ շփոթվում է քերականական **ավելադրության** հետ (վերջինս ոճական հնարք է): Ավելորդաբանություն է, երբ համապատասխան քերականական մասնիկը չի պահանջվում, սակայն դրվում է: Օր.՝ **հինգ, վեց, յոթ, ութ** թվականների՝ **ը**-ով գործածությունը, երբ դրանք փոխանուն չեն՝ «Կարբոնաթթուն **վեցը** (<վեց) ատոմ ածխածին է պարունակում», բայց՝ «**Վեցը** մեծ է **հինգից**»: Կամ՝ ստացական հոդի և դերանվան համատեղ գործածությունը՝ «**իմ** համակարգի**չս(ը), քո** ծրագիր**դ(ը)**»:

Հաճախ նախադասության մեջ որևէ հասկացություն անհարկի կրկնվում է նույն կամ տարբեր ձևավորումով (բացահայտ կամ թաքնված **կրկնաբանություն**): Օր.՝ «Թփից պոկվելուց հետո անգամ այդ յուրօրինակ հատապտուղների **գունավորման ներկանյութը** չի գունազրկվում». **գունավորում** և **ներկանյութ** մասնակի հոմանիշներից մեկն այստեղ ավելորդ է: Ճիշտ է՝ «Թփից պոկվելուց հետո անգամ այդ յուրօրինակ հատապտուղների ներկանյութը չի գունազրկվում», կամ ավելի ճիշտ՝ «Թփից պոկվելուց հետո անգամ այդ յուրօրինակ հատապտուղները չեն գունազրկվում»:

Նախադասության մեջ երբեմն հանդիպում են նույն կամ նույնիմաստ բառերի կից անհարկի կիրառություններ: Օր.՝ «Կան պնդումներ, որ Պյութագորասի՝

ուղղանկյուն եռանկյունների **մասին** հայտնի թեորեմի **մասին** գիտեին դեռևս նրանից շատ առաջ»: Դրանցից մեկը հեշտությամբ կարող է փոխարինվել հոմանշային տարբերակով, այսպես՝ «Կան պնդումներ, որ Պյութագորասի՝ ուղղանկյուն եռանկյունների **վերաբերյալ** հայտնի թեորեմի մասին գիտեին դեռևս նրանից շատ առաջ»: Կամ՝ **համապատասխան համարժեք** (<=**համարժեք**), **համատեղ համագործակցություն** (<=**համագործակցություն**), **ճառագայթակտիվ ճառագայթում** (<=**ակտիվ ճառագայթում**), **հարցի հիմնական էությունը** (<=**հարցի էությունը**), **առանցքային հիմնախնդիրներ** (<=**հիմնախնդիրներ**):

Կրկնաբանության առաջացման պատճառ կարող է դառնալ լավ չհասկացված օտարաբանությունը: Օր.՝ «Մարդու ատամնաշարի՝ բնականոն դիրքից **շեղման անոմալիաները** հիմնականում վերաբերում են մշտական ատամներին»: **Անոմալիա**-ի հայերեն համարժեքն է **շեղում**-ը, որն արդեն առկա է նախադասության մեջ: Օտար բառը անտեղի է գործածված, ճիշտ կլինի՝ «Ատամնաշարի՝ բնականոն դիրքից **շեղումները** հիմնականում վերաբերում են մշտական ատամներին»:

Կրկնաբանության հետ չպետք է շփոթել **կրկնաբերությունը (կրկնությունը)**, որը խոսքում ոճական-արտահայտչական արժեք ունի:

Ավելորդաբանությունների և կրկնաբանությունների զգալի մասը հայերեն է մուտք գործել այլ լեզուների, մասնավորապես ռուսերենի ազդեցությամբ՝ ձևավորելով օտարաբանությունների կամ ավելորդությունների մի շարք, որը հարիք չէ հայ մարդու լեզվամտածողությանը և արդի հայերենի կանոնին ու ոգուն: Հայերենն ունի դրանց համապատասխան ձևերը, հարկ է միայն դրանք իմանալ և գործածել, ինչպես՝ **вопрос состоит в том** - հարցը կայանում է նրանում <=**հարցն այն է, вопрос в том** - հարցը նրանումն է <=**հարցն այն է, еще раз** - կրկին անգամ <=**կրկին//մեկ անգամ** ևս, **повторять снова** - նորից կրկնել <=**կրկնել, является ответственным** - պատասխանատու է հանդիսանում <=**պատասխանատու է նն**: Օր.՝ «Ալոեն **իր մեջ** պարունակում է հսկայական քանակությամբ վիտամիններ, հանքանյութեր և ամինաթթուներ», «Հարցը **կայանում է նրանում (այն է)**, որ եթե մեքենան շարժվի հաստատուն արագությամբ, արագացումը հավասար կլինի գրոյի», «Բոլոր ածխաջրածինների խորը օքսիդացումից ածխաթթու գազի **հետ միասին** նաև ջուր է անջատվում»:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Օգտվելով ստուգաբանական բառարաններից՝ որոշե՛ք տրված բառերի ծագումը:

Օր.՝ մատիտ - իտալ. matita (կապարե գրիչ) բառից:

ա) Մատիտ, անկյուն, լոգարիթմ, հոկտեմբեր, հիդրոլիզ, աշակերտ, կոտանգենս, ամառ, ռեակտոր, բուրգ, ծիածան, լավաշ, անձրև, կոսեկանս, տասը, կարկին, դեղձ:

բ) Մայր, ռեակցիա, դրախտ, կոսիմոս, դպրոց, կանոն, պեստիցիդ, անուն, աշխարհ, քնել, հաց, գիր, աթոռ, երագ, կրկես, բառ, սիրտ, սեղան, թիվ, դար, էլակ:

2. Հ. Աճառյանի «Անձնանունների բառարան»-ից դո՛ւրս գրեք տասը հասուն կանոն՝ նշելով դրանց ծագումն ու ստուգաբանությունը:

Օր.՝ Յակոբ (Հակոբ) - եբր. անունի հուն. ձևից: Նշանակում է խաբող: Այլ լեզուներում ունենք Яков, Jacob, Jacques ևն ձևերով:

3. Առանձին սյունակներում գրե՛ք օտարաբանությունները և փոխառությունները:

ա) Ալերգիա, ռադիոֆիզիկա, հիերոգլիֆ, ասրիբուտ, հորիզոն, գլոբալ, ռադիո, դեկանատ, ռեֆլեքս, ինտերնետ, թեորեմ, սենսոր, ռեզյումե, սիստեմ, ժայռի, պրոֆեսիոնալիզմ, ռադիացիա, դիրիժոր, բիոսֆերա, տաքսի, դետերմինանտ, դիագնոզ, սմարթֆոն:

բ) Ակադեմիա, ինստիտուտ, ռադիոակտիվ, ռեյտինգ, վեկտոր, դոզատոր, դիսկրիմինացիա, ֆունկցիոնալ, պրոցես, ռեզոնանս, իդենտիֆիկացիա, ակտերնատիվ, օպտիկա, ֆաքս, ֆակուլտետ, ռելիեֆ, տուրիզմ, իմիջ, էքստրեմիզմ, դոպինգ, արգումենտ, ռեժիմ, լոգունգ:

4. Տրված բառերից որո՞նք ունեն հայերեն համարժեքներ:

ա) Ագրարային, բակալավր, ադապտացիա, ադրենալին, աերոֆոբիա, ցիկլոն, աժիտաժ, մագիստրոս, ավոկադո, դոմինանտ, անատոմիա, անտիսեպտիկ, բլոկադա, էվիվալենտ, էթիկա, ալբոմ, գրանտ, լավա, դեկլարացիա, լակմոս, կոնֆլիկտ, տաբու, ռեպրեսիա:

բ) Անթրոպոլոգիա, արստրակտ, լոկալ, ագրեսիա, ադմինիստրատոր, ինֆեկցիա, արոնենտ, ալպինիզմ, կոմպրոմիս, դիետա, ֆոտոն, գլոբալիզացիա, կա-

տալիզատոր, կոմպլեքս, ֆունկցիոնալ, ալտերնատիվ, դիագնոզ, ամնիստիա, անկետա, դիսկրիմինացիա, էգոիստ:

5. Տրված բառերի հայերեն համարժեքներից որո՞նք են դարձել գործածական: Որո՞նք են ըստ ձեզ անհաջող թարգմանություններ:

ա) Իգորթերմ - նույնաջերմ, պրիզմա - հատվածակողմ, կոնգրուենտ - համընկնելի, բոյկոտ - նենգադուլ, իզոտոն(ֆունկցիա) - նույնընթաց, աքսեսուար - հավելյալ/լրամաս/լրագարդ, դեպրեսիա - ընկճախտ, ֆոտոն - լուսոն, դետալ - մանրակ, ամպլիտուդ - լայնույթ, ստերեոտիպ - կարծրատիպ, մոնոտոն (ֆունկցիա) - միընթաց:

բ) Թենիսի ռակետ - ցանցաթի, հակեր - ցանցահեն, ժյուրի - մրցատյան// հանձնախումբ, ֆայլ - նիշք, ինտերյեր - ներսատարածք//ներսույթ, սկաներ - պատկերամուտ//ծրիչ, շամպուն - փրփրօճառ, պլաստմասսա - կարծրախեժ, ինվարիանտ - փոփոխակ, ռեկորդ - հաղթանիշ//մրցանիշ, սպեկտր - տարբապատկեր, վիտամին - կենսահյութ//կենսանյութ:

6. Առանձին սյունակներով գրե՛ք նորակազմությունները և իմաստային նորաբանությունները: Իմաստային նորաբանություններից մի քանիսով կազմե՛ք նախադասություններ:

Օր.՝ մկնիկ - 1. փոքրիկ մուկ, 2. այժմ նաև համակարգչային տերմին:

Սուզանավ, պատուհան, նախագահ, շնիկ, նախարար, օրակարգ, սովեր, անվադահուկ, օդանավ, փաթեթ, ուղղաթիռ, գազաթնաժողով, ճեղքվածք, հրթիռակոծում, ճեմարան, աշխատակազմ, թափանցիկ, այցեքարտ, դոնոր, այլմոլորակային, աստղաթափ, ավիաուղի, հրդեհավտանգ, աշխարհաքաղաքացի, գամբյուղ, ոստիկան, խցիկ, ավագանի, կիզակետ:

7. Գտե՛ք և ընդգծե՛ք նորակազմությունները:

1. Ուսումնասիրվել են երկկողմանի գրաֆների առավելագույն անկախ բազմության, թվային բազմության ամենաերկար աճող ենթահաջորդականության խնդիրները:

2. Շրջակա միջավայրը տեխնածին և կենցաղային արտանետումներով աղտոտվելուց պաշտպանվելու ֆիզիկական մեթոդների դերի բացահայտումը կարևորվում է:

3. Փորձարկվել են նաև ֆիզիկակազմակերպական կրթատիրույթին միտված տասնմեկ ընտրովի դասընթացներ:

4. Այդ վայրերում դա կատարվում է հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով:

5. Կատարվել են լուսաչափական հետազոտություններ:

6. Իրականացվել են լյարդապաշտպան և հակալեղաքարային ակտիվությամբ օժտված դեղաբույսերի լուծամզվածքների հանքային կազմի հետազոտություններ:

**8. Հետևյալ տերմինները դասակարգե՛ք ըստ ոլորտների և անվանե՛ք դրանք:
Օր.՝ թթու... (քիմիա):**

Նյարդաթել, զգայարան, խաչասերում, ծորան, ախտորոշում, ստատիկա, հանդուրժողականություն, իջվածք, բջջանյութ, սպիտակուց, նյարդաբորբ, թթու, իմպուլս, կատալիզատոր, հոտոտելիք, ածանցյալ, հեմոգլոբին, սոց-հարցում, վարկանիշ, քվանտային թիվ, ալկալի, մոդուլ, կոնֆլիկտաբանություն, կարբոնատ, ջրոլորտ, ռելիեֆ, ամեոբա, սպեկտր, հետաճուկ, ինտեգրացիա, նյութափոխանակություն, վարսանդ, հալոգեն, ավշային հանգույց, մակաբույծ, իներցիա, վիրուս, կլիմայական գոտի, մակուղեղ, արագացում, սպոր, հիերոգլիֆ, հասարակական կարծիք, էլիպս, պարամետր, գեղձ, ամորֆ նյութեր, վեկտոր:

9. Ո՞ր գիտաճյուղերին են հատուկ հետևյալ տերմինները: Լրացրե՛ք շարքերը:

ա) Բյուրեղ, բեկում....

բ) Կավահող, գետաբերան....

գ) Անհայտ, քառակուսի....

դ) Գիսաստղ, գալակտիկա....

ե) Ձևույթ, ստորոգելի....

զ) Անապատացում, հերկ....

է) Ջրածին, ռեակցիա....

ը) Հապալասենի, սպոր....

թ) Թրաֆիքինգ, վարկանիշ....

10. Ընդգծե՛ք այն բառերը, որոնք իբրև գիտական տերմիններ գործածվում են մեկից ավելի գիտաճյուղերում: Մի քանիսով կազմե՛ք նախադասություններ:

Լեզու, պատվաստում, կոնֆլիկտ, նոտա, ոճ, վիրուս, եթեր, արմատ, կուրս, հիմք, նիստ, իներտ, դաշտ, թթվածին, սիրտ, խոռոչ, բջիջ, ուղղահայաց, արտադրյալ, ֆունկցիա, ժամանակ, արագություն, խթանիչ, բևեռ, կոտորակ, սահման, դաշտ, հոսք:

11. Գրե՛ք տրված բառերի հայերեն համարժեքները՝ առանձնացնելով բառապատճենումները, կիսապատճենումները և իմաստային պատճենումները:

Средства массовой информации, страны третьего мира, Евросоюз, противогаз, гидроэлектростанция, микрофон, биосфера, атмосфера, прямой эфир, электросеть, Евровидение, экосистема, businessman, internet, mouse (համակարգչային տերմին), printer, hard disk, user, password, high school, crossword.

12. Գրե՛ք տերմիններ՝

ա) վերջին բաղադրիչ դարձնելով հետևյալ արմատները՝

գիծ, ցույց, ջուր, նյութ, տառ, չափ, մետր, ոլորտ, օքսիդ.

բ) առաջին բաղադրիչ դարձնելով հետևյալ արմատները՝

տոն(ն), սիրտ, մոնո, աղ, ուղիղ, հարթ, կոր, տարր, հիդր(ո):

13. Գտե՛ք համակարգչային ոլորտում գործածվող հետևյալ օտարալեզու բառակապակցությունների համարժեքները և գնահատե՛ք դրանք:

Computer - based system, Computer dependent language, Computer oriented language, Computer center, Computer family, Computer generation, Computer graphics, Computer independent language, Computer language, Computer mail, Computer memory, Computer name, Computer network, Computer program, Computer run, Computer science, Computer system, Computer technology, Computer virus, Computer word²⁷.

Համակարգչային վիրուս, համակարգչային հիշողություն, համակարգչային ցանց, համակարգչից անկախ լեզու, համակարգչային լեզու, համակարգչային տեխնոլոգիա, կոմպյուտերագիտություն, ավտոմատիզացված համակարգ, համակարգիչների սերունդ, համակարգչային ծրագրի ակտիվացում, հաշվողական համակարգ, հաշվողական կենտրոն, էլեկտրոնային փոստ, համակարգչային գրաֆիկա, համակարգիչների ընտանիք, դեպի համակարգիչը կողմնորոշված լեզու, մեքենական բառ, համակարգչային ծրագրեր, համակարգիչը ցանցում միարժեք որոշող եզակի անուն:

14. Տրված բառակապակցությունները թարգմանե՛ք հայերեն²⁸: Դրանցից որո՞նք են դարձել գործածական:

Data compression, Data channel, Data bank, Data-base language, Data corruption, Data block, Data base, Data acquisition, Data bit, Data compaction, Data collection,

²⁷ <https://brusov.am/website/documentation/files/f3650934>.

²⁸ Տե՛ս նույն տեղը:

Data addressed memory, Data address, Data adaptor unit, Data definition language, Data byte, Data communication, Data-base management, Data consistency, Data area, Data access, Code transformation, Code base, Code character, Code compare, Code block, Code extension, Coded image, Code audit, Coded data, Code chain, Code independent, Code error, Code alphabet, Code conversion, Code generation, Coded representation, Code line, Code statement, Code converter, Code rule, Code area.

15. Օգտվելով բառարաններից՝ հետևյալ հապավումները գրե՛ք ամբողջական բառակապակցություններով:

Գիտարշավ, ԵԱՀԿ, զինգրքույկ, դասղեկ, ՍՊԸ, ԵՄ, ԱՄԷ, բուժօգնություն, կրթօջախ, մանկխորհուրդ, ԱԹՄ, պետկրկես, ֆիննախ, ԱՊՀ, Էլփոստ, ՈԻՀԱ, Տաթևհեկ, ԱԳՆ, ԱԱԽ, ֆիզֆակ, ԿԸՀ, ՀԱԲ, ՉԹՕ, քաղցանց, տնտեսվար, ԿԳՄՄՆ, ՈԻԳԸ, պետօնում, ԱԱՀ, Հայրուսգազարդ, ՕԳԳ, ՁԻԱՀ, զինկոմ, Երհեկ, ԵԱՍՄ, ՄՕԿ, արհկոմ, ԱՍԱԼԱ, ջեկ, մուլտֆիլմ, ԲՈԿ, ԴԱՀԿԾ, ՁԼՄ, տեխնոնում, ՀԲԸՄ:

16. Տրված բառերն ու բառակապակցությունները գրե՛ք հապավումներով կամ համառոտագրություններով:

ա) Երևանի պետական համալսարան, Ազգային ժողով, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն, Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն, զինվորական կոմիսար, ուսումնական բաժնի վարիչ, հարավային, վիճակագրական վարչություն, մեզահերց, ամպեր, մետր/վայրկյան, կիլովատտ/ժամ:

բ) Միլիմետր, պարոն, հազվադեպ, տիկին, արևմտահայերեն, վայրկյան, կիլոգրամ, ավտոգազալցաճնշակայան, դոկտոր, փոխաբերություն/փոխաբերական, համեմատել/համեմատություն, միլիարդ, մեգավոլտ, մեր թվարկությունից առաջ, բաղաձայն, 90-ական թվականներին, Քրիստոսից առաջ, Ճանապարհային ոստիկանություն, հյուսիս, սույն թվականին:

17. Օգտվելով բառարաններից՝ բացատրե՛ք հետևյալ բառերում տեղի ունեցած իմաստափոխությունը (բառիմաստի նեղացում, ընդլայնում, վերաիմաստավորում):

Օր.՝ ապրել նշանակում էր ազատվել, փրկվել, հիմա՝ լինել, գոյություն ունենալ (վերաիմաստավորում):

ա) Աթոռ, ախոյան, առաջ, արքանյակ, բանավոր, գնացք, գոեհիկ, գրեթե, դե-գերել, թոշակ, խաղալ, խնդրել, կառավարել, Հուդա, կարդալ, սեղան, համ-բույր, հավ, հրապույր, հոլով, նետել, պաշտոն, քաջ, բուրգ, դրամ, ազատ:

բ) Գիծ, հավասար, պատ, հասարակ, վկա, թթու, խորհուրդ, ոստիկան, երե-խա, հանդես, մայր, հոսք, աստիճան, կետ, հարուստ, Կորյուն, արմատ, հսկել, պար, թուղթ, ծախել, բևեռել, բացատ, ճնշում, տաղանդ, մկնիկ, սրբել, նիստ, պարապ:

18. Ի՞նչ հատուկ անուններից են առաջացել հետևյալ հասարակ անունները (օգտվել Գ. Գալստյանի «Դիցաբանական անունների և դարձվածքների համառոտ բառարան»-ից, օտար բառերի բացատրական բառարաններից, համացանցից):

Օր.՝ օվկիանոս բառն առաջացել է հունական դիցաբանության Օվկիանոս աստվածության անունից:

Քառս, նագան, նարկոտիկ, մորֆի, տիտան, ատլաս, ամպեր, հիպնոս, ջոուլ, գիլիոտին, կայսր, հուլիս, օգոստոս, ալգորիթմ, բրաունինգ, վատման, կոնյակ, հելիում, ժավել, շամպայն, կիկլոպ, նարգիզ, խուլիգան, դափնի, կելվին, խրո-նիկական, եթեր, զեփյոռ:

19. Տրված բառերը խմբավորելով՝ կազմել հոմանշային գույգեր:

Սողուն, հարգալից, եղեն, թեպետ, արևածագ, կարճահասակ, խարդախ, մտրուկ, և, սիրալիր, նստվածք, կածան, կոտրվածք, նախճիր, քսուք, վրնջոց, վաղորդայն, մածուկ, տարափ, երամ, բեկվածք, ջոկ, ժլատ, գաճաճ, արճիճ, խաբեբա, զեռուն, ժուժկալ, մրուր, թեկուզ, նան, ու, ագահ, շավիղ, տարմ, ար-տադրիչ, իսկապես, ավելցուկային, հեղեղ, մեկմեկու, երամակ, ընչաքաղց, գծուծ, իրար, հավելուրդային, բազմապատկելի, զուսպ, քուռակ, կապար, նույնպես, խրխինջ, հիրավի:

20. Տրված համանուններով կազմե՛ք բառակապակցություններ:

Խավարում-խավարում, վայել-վայել, կրոն-կրոն, անլուծելի-անլուծելի, խո-րանում-խորանում, լարեր-լարեր, տիրույթ-տիրույթ, գազել-գազել, դատել-դատել-դատել, մեկնել-մեկնել-մեկնել, բացատ-բացատ, հարել-հարել, կան-գուն-կանգուն, անել-անել, աղոտ-աղոտ, պատուհան-պատուհան, այրի-այ-րի-այրի, ամպեր-ամպեր, գագ-գագ-գագ, սեռ-սեռ:

21. Բացատրե՛ք տրված հարանունների իմաստը. մի քանիսով կազմե՛ք բառակապակցություններ կամ նախադասություններ:

Միաժամանակ - միառժամանակ, բարդույթ - բարդություն, բացառապես - բացարձակապես, ըստ որի - ըստ որում, խտրություն - խտրականություն, ծրագրել - ծրագրավորել, փաստ - փաստարկ, հետևորդ - հետևորդ, հրատարակել - հրապարակել, վարք - վարկ - վարճ, ցեղական - ցեղային, տեղի տալ - տեղիք տալ, վերաբերել - վերաբերվել, փորձարարական - փորձառական, հիմնավորվել - հիմնվել, տեղական - տեղային:

22. Ընտրե՛ք ճիշտ տարբերակը:

1. Արբանյակի շարժման ուսումնասիրության միջոցով ճշտվեցին Պլուտոնի (չափսերը, չափերը) ու (քաշը, զանգվածը): 2. Երեխայի (կշիռը, քաշը) 12,5 կգ է: 3. Սեկվոյաներից ամենամեծի (տրամաչափը, տրամագիծը) մոտ 11 մ է: 4. Մեր դիրքերի ուղղությամբ հակառակորդը կրակել է տարբեր (տրամագծի, տրամաչափի) հրաձգային զինատեսակներից: 5. Արարատյան (դաշտավայրում, դաշտում) կանխատեսվում է ցրտահարություն: 6. (Հավասարակողմ, հավասարասրուն) է կոչվում այն եռանկյունը, որի գոնե երկու կողմերը հավասար են: 7. Երկրի մակերեսին մոտ ուղղահայաց ազատ ընկնող մարմնի ազատ անկման (արագությունը, արագացումը) հավասար է մոտ 9.8 մ/վ^2 : 8. Հիվանդության (կանխման, կանխարգելման) համար անհրաժեշտ է ճիշտ սնվել: 9. Իրավապահները (կանխել, կանխարգելել) են կողոպուտի փորձը: 10. (Անձի, անհատի) երկվությունը կամ գիտական անվանումով՝ անհատականություն դիսոցիատիվ խանգարումը գիտական աշխարհում բազմաթիվ վեճերի առիթ է սովել:

23. Գտե՛ք ավելորդաբանությունները, կրկնաբանությունները և ուղղե՛ք:

1. Ըստ բջջային տեսության՝ բջիջը հանդիսանում է կյանքի ամենապարզագույն միավորը: 2. Արենի քարանձավը դասվում է կլաստոկարստային քարանձավների դասին: 3. SS տեխնոլոգիաների ոլորտում ամենազարգացած երկրների ցուցակը մի քանի տարի շարունակ գլխավորում է Հարավային Կորեան: 4. Լատվիայի պետական պաշտոնյաներին կասկածում են VIP-անձանց համար անձնագրեր կեղծելու գործում: 5. Ժամանակակից կենսաբանության հիմնաքարը կազմում են մի քանի հիմնական սկզբունքներ և տեսություններ՝ բջջային տեսությունը, էվոլյուցիոն տեսությունը, գենային տեսությունը ևն: 6. Մեքենաների ավտոպահեստամասերի խանութին անհրաժեշտ է հաշվապահ: 7. Լրագրողի սպանության առթիվ հարուցված գործի դատա-

կան գործընթացը շարունակվում է: **8.** Մենք կրկին անգամ անդրադարձել ենք թեքահարթակների բացակայության խնդրին, սակայն սայլը տեղից չի շարժվում: **9.** Ֆիզիկական հանդիսանում է գիտություն անկենդան բնության մասին: **10.** Ազգային փոքրամասնությունների իրավունքները կոպտորեն խախտվում և ոտնահարվում են Թուրքիայում: **11.** Ներկայումս քիմիական հայտնի միացությունների քանակը թվով մոտ քսան միլիոն է, և դրանց քանակը յուրաքանչյուր տարի ավելանում է 250-300 հազարով: **12.** Մարզիկների աննդակարգը իր մեջ ներառում է սպիտակուցներով հարուստ մթերքներ: **13.** Էկոլոգները բազմիցս անգամ զգուշացրել են, որ Սյունիքի մարզն ունի գրունտային բարդ ռելիեֆ: **14.** Օգոնն իրենից ներկայացնում է ջերմոցային գազ, ուստի նրա մեջ պարունակվող տարրերի փոփոխությունը հանգեցնում է ջերմաստիճանի փոփոխության:

24. Գտե՛ք օտարաբանություններն ու օտարաբան կառույցները և ուղղե՛ք:

ա) Նոր մեթոդը ավելի էֆեկտիվ է սրտի իշեմիկ հիվանդության բուժման համար:

բ) Հիվանդների մոտ նկատվում են ջերմաստիճանի բարձրացում, վատ ինքնազգացողություն:

գ) Օբսեսիվ մտքերի էությունը կայանում է նրանում, որ հիվանդի մոտ պարզ գիտակցության պայմաններում առաջանում են անընդհատ կրկնվող մտքեր, հիշողություններ, վախեր ևն:

դ) Քարոլորտային շրջապտույտը դա քիմիական տարրերի ամենացայտուն արտահայտված շրջապտույտն է, որն անմիջապես դիտվում է մարդու կողմից:

ե) Խնդիրը նրանում է, որ աուտիզմի մասին քիչ է տեղեկացված մեր հանրությունը:

զ) Խոսքը գնում է շատ կարևոր հարցի՝ գիտության ֆինանսավորման մասին:

է) Սխալը կայանում է նրանում, որ ազդեցության և հակազդեցության ուժերը կիրառված են տարբեր մարմինների վրա և չեն կարող հավասարակշռվել:

ը) Ի՞նչ է իրենից ներկայացնում ցունամին. (տերմինը ճապոներեն նշանակում է «մեծ ալիք»):

Գ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Գ. 1. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Գ.1.1. Անձնանիշ և իրանիշ գոյականներ (85): **Գ.1.2.** Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ (86): **Գ.1.3.** Հավաքական գոյականներ (89): **Գ.1.4.** Հոգնակերպ գոյականներ (90): **Գ.1.5.** Անեզական գոյականներ (90): **Գ.1.6.** Որոշյալ և անորոշ առումներ (90): **Գ.1.7.** Հոլովական տարբերակային ձևեր (91): **Վարժություններ և առաջադրանքներ (96):** **Գ.1.8.** Ածականի տարբերակային ձևեր (99): **Գ.1.9.** Թվականի տարբերակային ձևեր, թվականի ուղղագրությունը (100): **Գ.1.10.** Դերանվան տարբերակային ձևեր (104): **Գ.1.11.** Դերանվանական հոդեր (108): **Վարժություններ և առաջադրանքներ (109):** **Գ.1.12.** Բայ (113): **Վարժություններ և առաջադրանքներ (117):** **Գ.1.13.** Մակբայների գործածության յուրահատկություններ (121): **Գ.1.14.** Կապերի գործածության յուրահատկություններ (122): **Գ.1.15.** Շաղկապների գործածության յուրահատկություններ (124): **Գ.1.16.** Վերաբերականների և ձայնարկությունների գործածության յուրահատկություններ (126): **Վարժություններ և առաջադրանքներ (127):**

Խոսքի քերականական ճշտությունը ենթադրում է քերականական ձևերի և շարահյուսական կառույցների նորմերի պահպանում: Դրանք թերևս ավելի բազմաբանակ են, քան մյուս մակարդակներում սահմանված նորմերը:

Ձևաբանական նորմը ձևաբանական օրենքների ու օրինաչափությունների ամբողջությունն է: Ինչպես լեզվական նորմի մյուս տեսակները, այն նույնպես ենթակա է փոփոխությունների ու զարգացման: Ձևաբանական մակարդակում նորմի փոփոխություններն առավելապես պայմանավորված են լեզվի ներկառուցվածքային փոփոխություններով՝ գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերությամբ, բարբառների ազդեցությամբ, լեզվի գործառական տարբերակների զարգացմամբ ևն: Ձևաբանական նորմի զարգացումը ի վերջո հանգում է ձևաբանական զուգաձևություններից մեկի (երբեմն նաև տարբերակների) նախընտրությանը: Ձևաբանական նորմը պահպանելու և սխալներից խուսափելու համար պետք է իմանալ հետևյալը.

Գ.1.1. Անձնանիշ և իրանիշ գոյականներ: Քերականորեն տարբերվում են ուղիղ խնդիր ձևավորելիս. անձնանիշ գոյականները լինում են տրականաձև՝ «Ուսումնասիրել են **մարդկանց**», իսկ իրանիշները՝ ուղղականաձև՝ «Ուսումնասիրել են **երևույթները**»: Հակառակը հնարավոր է, եթե իրանիշ գոյականներ-

րը գործածվեն անձի առումով, ինչպես՝ «Շատ է սիրում իր խնամած փոքրիկ **եղնիկին**», կամ անձնանիշ գոյականները՝ իրի առումով՝ «Շատ է սիրում **երեխաներ**»: Անձնանիշ և իրանիշ գոյականները քերականորեն տարբերվում են նաև ներգոյական հոլովի կազմության ժամանակ: Անձնանիշ գոյականների ներգոյական (-ում-ով) հոլովածները գործածական չեն: Դրանք փոխարինվում են սեռական–տրական հոլովածնով և **մեջ** կապով բաղադրված նույնիմաստ կապակցությամբ՝ **մարդու մեջ, բժիշկների մեջ, Արամի մեջ**:

Գ.1.2. Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ: Գիտենք, որ **եզակին** նշանակում է մեկ առարկա, իսկ **հոգնակին**՝ նույն տեսակի մեկից ավելի առարկաներ: Սովորաբար հոգնակի թիվ չեն ստանում որոշ **վերացական** (ազնվություն, կամք, վերացում, ճախր, ծաղր), **անհաշվելի** (օդ, նավթ, անագ), **հավաքական** (ամանեղեն, ուսանողություն, վառելիք, դեղորայք) առարկաներ նշանակող գոյականները, **հատուկ անունները** (Սահարա, Հակոբ, Մեծ Բրիտանիա) և մի շարք այլ գոյականներ (տիեզերք, մթնոլորտ, լուսին):

Հատուկ անունը հոգնակի թիվ ունենում է երկու առանձնահատուկ դեպքերում:

1. Միննույն անունով մեկից ավելի անձ կամ իր նշանակելիս՝ «Եկան տեր և տիկին **Արամյանները**»: «Տիգրան Մեծի կառուցած երեք **Տիգրանակերտներն** էլ հայտնի քաղաքներ են եղել»: «1898 թ.-ին **Կյուրիները** հայտնագործեցին ճառագայթակաթիլ 2 տարր ևս, առաջինն անվանեցին պոլոնիում, երկրորդը՝ ռադիում»: «Օրբելի եղբայրների թանգարանը ստեղծվել է Ծաղկաձորում՝ **Օրբելիների** ամառանոցում, և գործում է 1982 թվականից»:

2. Տվյալ անձին կամ առարկային բնորոշ հատկանիշ անվանելիս՝ «Մեր սերունդը կրկին համալրվեց նոր շրջանավարտներով, որոնց մեջ կան **արքիմեդներ**՝ Արքիմեդի ուզած լծակը ստեղծելու ունակությամբ ու կամքով»: «Մենք **վարդաններ** շատ ենք ունեցել»: «Երիտասարդությունս անցել է **մոսկվաներում**»: Այս դեպքում բառը գրվում է փոքրատառով՝ որպես **հատկանիշ** անվանող հասարակ գոյական:

Գոյականի, ինչպես նաև գոյականաբար գործածված այլ բառերի հոգնակի թիվը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ եզակիին, ավելացնելով **–եր** կամ **–ներ** վերջավորությունը: Բացառություն են **մարդ** և **կին** բառերը, որոնց հոգնակին է՝ **մարդիկ, կանայք: Տիկին, պարոն, անձ** բառերը, բացի կանոնավոր՝ **տիկիներ,**

պարոններ և **անձեր** ձևերից, կարող են հոգնակի դառնալ նաև **տիկնայք**, **պարոնայք**, **անձինք** զուգաձևերով:

Միավանկ բառերի հոգնակին, ինչպես գիտենք, սովորաբար կազմվում է **-եր**, իսկ բազմավանկներինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ **տուն-եր**, **նյարդ-եր**, **տարր-եր**, **սեղան-ներ**, **հետազոտություն-ներ**, **սիրամարգ-ներ**, **եկեղեցի-ներ**, **ջերմաստիճան-ներ**:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ՝ մեկուկեսվանկանի) վերջնաբաղադրիչով բազմավանկ գոյականների մի մասի հոգնակին կազմվում է **-եր** վերջավորությամբ՝ **կենսաքար-եր**, **մուլախոտ-եր**, **դիտակետ-եր**, **հանքանյութ-եր**, **վերնակող-եր**, **ձագարափոս-եր**, **ձեռագր-եր**, **դեղատն-եր**, **փաստաթղթ-եր**, **գաղթավայր-եր**: Դրանք այն բառերն են, որոնցում այդ վերջնաբաղադրիչը՝ որպես գոյական, պահպանում է իր բուն իմաստը, իր նախորդ բաղադրիչին համադաս է (սարուձորեր, հարցուփորձեր, թերուդեմեր) կամ նրա լրացյալն է և նրա հետ միասին ցույց է տալիս այդ բուն իմաստի տարատեսակը՝ **գիր - հեռագիր**, **ծրագիր**, **խորագիր**, **ցույց - նստացույց**, **քույր - հորաքույր**, **բուժքույր**, **այց - ստուգայց**, **համայց**, **գոր(ք) - հեծելագոր**, **կայագոր**, **թիկնագոր**, **կարգ - ենթակարգ**, **վերակարգ**, **անցք - քթանցք**, **դիտանցք**: Սա նշանակում է, որ **հեռագիր**-ը, **ծրագիր**-ը գրի տեսակներ են, **առանձնատուն**-ը, **թոնրատուն**-ը տան տեսակներ են, **ծայրակետ**-ը, **ստորակետ**-ը կետի տեսակներ են ևն: Այս բառերը մեծ մասամբ կարելի է արտահայտել բառակապակցությամբ, որի գերադաս անդամը միավանկ վերջնաբաղադրիչն է, և բառակապակցությունը հոգնակի դարձնելիս հենց այդ բաղադրիչն է ստանում **-եր** վերջավորությունը՝ **խնդրագրքեր** - **խնդիրների գրքեր**, **նստացույցեր** - **նստած ցույցեր**, **ձեռագրեր** - **ձեռքի գրեր**, **միջնակետեր** - **միջին կետեր**:

Այլ դեպքերում միավանկ վերջնաբաղադրիչով բառն ստանում է **-ներ** վերջավորությունը, ընդ որում՝ այդ վերջնաբաղադրիչը չի ենթարկվում հնչյունափոխության՝ **կենսագիր-ներ**, **վիպագիր-ներ**, **բարձրակարգ-ներ**, **հարկահաններ**, **ածխաջրածին-ներ**, **չափացույց-ներ**, **լուսանցք-ներ** ևն: Պատճառն այն է, որ այս դեպքում բաղադրյալ բառը իր միավանկ վերջնաբաղադրիչի նշանակած երևույթի տարատեսակ ցույց չի տալիս, իր գոյականական բուն իմաստով հանդես չի գալիս, այլ մի նոր, մեծ մասամբ՝ բայական, երբեմն էլ՝ փոխաբերական իմաստով, օրինակ՝ **հաշվապահ** նշանակում է ոչ թե «հաշվի պահ», այլ «հաշիվ պահող (անձ)» (նմանապես՝ **հերթապահ-ներ**, **թիկնապահ-ներ**

նն), **Ժամկետ** նշանակում է ոչ թե «Ժամանակի կետ», այլ «Ժամանակահատված», **տեսակետ** նշանակում է ոչ թե «տեսնելու կետ», այլ «կարծիք, հայացք, մոտեցում»: Այնուամենայնիվ, կան միավանկ վերջնաբաղադրիչով բառեր, որոնք շեղվում են կանոնից՝ **ծովահեններ, օդահեններ, մանրէներ, միրհավներ, ծխախոտներ, վերելքներ**, կամ ունեն երկձևություն՝ **երկրաշարժներ, լեռնանցքներ, զետնանցքներ, կայագորներ, ջրանցքներ, ջրհորներ** են:

Հոգնակի թվի կազմության տարբերակներ: Լեզվական կանոնի խախտումները հաճախ կապվում են որոշակի կազմություն ունեցող գոյականների թվակազմության հետ:

1. Գաղտնավանկով վերջացող մի շարք երկվանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն ածականների) հոգնակին կազմվում է **ներ** վերջավորությամբ՝ **ագորներ, մանրներ, տեսորներ, փոքրներ** (դրանց **ներ**-ով ձևերը՝ **ձանրներ, մանրներ** են, գրական չեն): Միայն **անգղ, արկղ, գամփռ** բառերի հոգնակին կարող է կազմվել ոչ միայն **ներ**, այլև **ներ** վերջավորությամբ՝ **անգղներ, արկղներ, գամփռներ**: Բարդ բառերի վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում նման բառերի հոգնակին ճիշտ է կազմել **ներ**-ով՝ **բառատեսուրեր, տոմսարկղեր, այտուկներ, ծովեզրեր** են: Գաղտնավանկով սկսվող երկվանկ գոյականների հոգնակին **ներ** վերջավորությամբ է կազմվում՝ **շտաբներ, սպիներ, սպաներ, ձգաններ, վկաներ** են:

2. Մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմվում է **ներ** վերջավորությամբ (գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը նոր հայերենում հոգնակի կազմելիս վերականգնում է այն՝ **ններ**)՝ **ձնկներ, ձկներ, մատներ, հարսներ, ինչպես նաև խոսակցական ձեռներ, ոտներ (ձեռքներ, ոտքներ** գրական տարբերակներին զուգահեռ): Բացառություն է նաև **ռուս** բառի հոգնակին՝ **ռուսներ** (նախկինում՝ **ըռուս/ուռուսներ**): Այս շարքի բառերը՝ որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչներ, նույնպես ստանում են **ներ** շողակներ, **սառցալեռներ, շնաձկներ, դաշտամկներ, բելառուսներ**: Ողև **ռուս** բառերի **ողներ, ռուսներ** ձևերը հնացած են. դրանց փոխարեն այժմ գործածվում են **ողեր, ռուսներ** ձևերը:

3. **Ստեղն, եղեգն, հյուսն, բնեկն** պարզ բազմավանկ բառերը, ինչպես նաև **ագն, եղն, ալկն, ոտն** երկվանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերը ստանում են **ներ** վերջավորությունը՝ **ստեղներ, եղեգներ (եղեգ-եղեգներ), հյուսներ, բնեկներ, արքայագներ, դյուցագներ, հետիոտներ** են:

4. **-եր** վերջավորությունն ստացող միավանկ ու որոշ բազմավանկ բառեր (ինչպես նաև հոգնակի թիվ չունեցող անորոշ դերբայը) –**ներ** կարող են ստանալ **ստացական հոգնակի** կազմելիս՝ **աչքներս, տուններդ, բանուգործներս, գնալներդ**: Այդպես լինում է, երբ հոդը փոխարինում է անձնական դերանունների հոգնակի սեռականի ձևերին, ինչպես՝ **մեր աչքը//աչքներս, ձեր տները//տուններդ, իրենց խոսքերը//խոսքները, նրանց շուրջը//շուրջները**՝ նշանակելով, որ տվյալ առարկան(ները) կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին («Ձեռքներդ հեռո՛ւ»: «Մտքները փոխել են»: «Մտուները փող չկա»): Հոգնակիի այսպիսի արտահայտությունը բնորոշ է խոսակցական լեզվին:

5. **Մատ** և **հարս** բառերով վերջացող բաղադրյալ բառերը ստանում են **-եր** կամ **-ներ** վերջավորությունը՝ **ցուցամատ-(ն)եր, բթամատ-(ն)եր, նորահարս-(ն)եր, ջրահարս-(ն)եր**: **Մատ**-ով բաղադրվածների համար առավել սովորական է **-ներ**-ով, իսկ **հարս**-ով բաղադրվածների դեպքում՝ **-եր**-ով կազմությունը: («Խաղողի վազի ոստ» նշանակությամբ **մատ**-ը հոգնակին սովորաբար կազմում է **-եր**-ով՝ **խաղողի մատեր**):

6. **-պետ** և **-նիշ** գոյական վերջնաբաղադրիչով բառերի համար, որպես կանոն, ճիշտ են և՛ **-եր**-ով, և՛ **-ներ**-ով կազմությունները՝ **քաղաքապետ-(ն)եր, ոստիկանապետ-(ն)եր, վարչապետ-(ն)եր, համարանիշ-(ն)եր, դրամանիշ-(ն)եր, չափանիշ-(ն)եր** ևն²⁹:

7. Կան միավանկ վերջնաբաղադրիչով համանուններ, որոնցից մեկի հոգնակին կազմվում է **-եր**, մյուսինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ կախված իմաստից, օր.՝ **թթվասեր-եր** (թթվամշակված սերուցքներ) – **թթվասեր-ներ** (թթու սիրողներ), **հուշագր-եր** (մեմորանդումներ) – **հուշագիրներ** (հուշ գրող հեղինակներ), **մատենագր-եր** (ձեռագիր մատյաններ) – **մատենագիր-ներ** (մատյան գրող հեղինակներ), **սառցահատ-եր** (սառույցի հատիկներ) – **սառցահատներ** (սառույց հատող նավեր) ևն:

Գ.1.3. Հավաքական գոյականներ: Մի շարք գոյականներ, ձևով եզակի լինելով, բովանդակությամբ հոգնակի են, այսինքն՝ ցույց են տալիս միատեսակ առարկաների բազմություն, հավաքականություն՝ **ամբոխ, ազգ, բնակչություն, զորք, երամակ, հոտ, նախիր** ևն: Դրանք կոչվում են **հավաքական գոյականներ** կամ **հավաքական անուններ**: Մյուս գոյականների նման կարող են դառնալ հոգնակի՝ **ամբոխներ, ժողովուրդներ, զորքեր, բազմություններ**: Հավա-

²⁹ Մանրամասն տե՛ս «Ուղեցույց հայոց լեզվի», Եր., 2017:

քական իմաստով է գործածվում նաև **մաս** բառը մի շարք կապակցություններում ու բաղադրություններում՝ **ներկաների մի մասը, նրանց մեծ մասը, բերքի գերակշռող մասը, մեծամասնությունը**: Եզակի թվով հավաքական գոյականները ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ՝ «Մեծ **մասը** չմասնակցեց ժողովին», «**Ժողովուրդը** հզոր ուժ է», «**Զորքը** շարժվեց առաջ»:

Գ.1.4. Հոգնակերպ գոյականներ: Ձևով լինելով հոգնակի՝ բովանդակությամբ եզակի են, այսինքն՝ ունեն հոգնակերտ վերջավորություն, սակայն նշանակում են մեկ առարկա (ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ): Դրանք մեծ մասամբ աշխարհագրական անուններ են՝ **Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արտեր (կղզի), Նիդերլանդներ, Տեղեր (գյուղ)**: Այսպիսի անունները հոգնակի թիվ չունեն: Սրանցից տարբեր են որոշ լեռնաշղթաների անուններ (Ալպեր, Կարպատներ, Անդեր, Ապենիններ, Պիրենեյներ, Հիմալայներ), որոնք թեև աշխարհագրական մեկ հասկացություն (անուն) են նշում, սակայն ունեն մերթ հոգնակիի՝ «լեռներ» իմաստը (Ալպյան լեռներ, Կարպատյան լեռներ), մերթ եզակիի՝ «լեռնաշղթա, լեռնահամակարգ» իմաստը (Ալպյան լեռնաշղթա, Կարպատյան լեռնահամակարգ): Հետևաբար դրանք վերցնում են մերթ հոգնակի թվով ստորոգյալ՝ «Ալպերը շատ բարձր են», մերթ՝ եզակի թվով՝ «Ալպերն **ունի** 1200 կմ երկարություն»:

Գ.1.5. Անեզական գոյականներ: **–անք, –ենք, –ոնք, –ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերը (Վարդանանք, Ծովինարենք, պապոնք, Բաղունք) թեև չունեն հոգնակիի վերջավորություն, բայց արտահայտում են հոգնակի թիվ և ստորոգյալի կամ բացահայտիչի (բացահայտյալի) հետ գործածվելիս պահանջում են հոգնակի թվով համաձայնություն, օր.՝ «Հրավիրված էին նաև Մեծունք»: «Արամենք՝ մեր ազգականները, ապրում են Վանաձորում»: Դրանք եզակի թիվ չունեն:

Գ.1.6. Որոշյալ և անորոշ առումներ: Գոյականի որոշյալ առումը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ անորոշին (եզակի կամ հոգնակի թվով, ուղղական կամ սեռական–տրական հոլովով) ավելացնելով **–ը** կամ **–ն** վերջամասնիկը: Բացառություն է **Աստված** (նաև **Քրիստոս**) բառը, որը եզակի ուղղականում առանց վերջամասնիկի էլ կարող է որոշյալ առումով լինել՝ «**Աստված** ձեզ պահպան», «**Քրիստոս** հարյավ ի մեռելոց»: Հոգնակիում որոշիչ հոդ չեն ստանում **մարդիկ, կանայք, տիկնայք, պարոնայք, անձինք** բառերի, **–անք, –ենք, –ոնք, –ունք** ածանցներով անձնանիշ բառերի (Վարդանանք, Սուրենենք, պապոնք) ուղղականն ու սեռական–տրականը:

Որոշյալությունն արտահայտող վերջամասնիկը կոչվում է **որոշիչ հոդ**. ը և **և** մասնիկները որոշիչ հոդեր են: Իմաստային առումով տարբերություն չունեն: Ցույց են տալիս առարկայի հայտնի, ծանոթ լինելը: Կարող են ցույց տալ նաև առարկան իր ամբողջ ծավալով, երբ հատկապես դրվում են նյութ ցույց տվող գոյականների վրա՝ «**Ջուր** թափվեց հատակին» – «**Ջուրը** թափվեց հատակին», կամ առարկան որպես տեսակի հասկացություն՝ «**Շունը** մարդու բարեկամն է»: Չայնավորով վերջացող բառերը միայն **և** հոդ են ստանում՝ Կարո**ն**, առու**ն**, այգի**ն**, Նարինե**ն**: Բաղաձայնով վերջացող բառերը **ը** հոդ են ստանում բաղաձայնով (այդ թվում՝ **ե[յէ]–ով** և **ո[վօ]–ով**) սկսվող բառերից առաջ՝ գործը կարճվեց, լուսինը երևաց, հրանոթները որոտացին:

Ը հոդը ձայնավորով (ինչպես նաև **սկ, ստ, սպ, սթ, սք, սփ, զգ, գդ, գբ** տառակապակցություններով) սկսվող բառերից առաջ կարող է փոխարինվել **և** հոդով՝ **նախագահը ընդունեց/նախագահն ընդունեց, Արամը ասաց/Արամն ասաց, գիրքը ընկավ/գիրքն ընկավ**: Բաղաձայնով վերջացող բառերը օժանդակ բայից և **էլ** (նաև **ու**) շաղկապից առաջ միայն **և** հոդ են ստանում՝ «Գործն է կարևորը»: «Այդ հարցն էլ լուծվեց»: «Խոսքն **ու** զրույցը անպակաս են»:

Որոշյալ առման դեպքում **ը** և **և** հոդերի փոխարեն կարող են գործածվել նաև **ս** և **դ** հոդերը՝ միաժամանակ արտահայտելով ստացականություն, դիմորոշություն կամ ցուցականություն՝ **ընկերս եկավ, գրությունս կարդացի, ես՝ հնագետս, դուք՝ կենսաբաններդ, վերջերս իմացա, օրերս կհանդիպեն**:

Գ.1.7. Հոլովական տարբերակային ձևեր (գուգաձևություններ):

Հոլովական գուգաձևությունները սովորաբար ունենում են գործառական–ոճական տարբեր արժեքներ: Երբեմն դրանցից մեկը լինում է առավել գրական, մյուս(ներ)ը՝ առավել խոսակցական: Երբեմն էլ դրանց տարբերությունը լինում է զուտ կապակցական: Որոշ դեպքերում տարբերակներից մեկը լինում է հնաբանություն կամ նորաբանություն:

Սովորաբար ներգոյականի **–ում** վերջավորություն չեն ստանում անձերի և կենդանիների հատուկ և հասարակ անունները (մարդ, սեր, դասախոս, Հակոբ, արջ, Չալո), ինչպես նաև **–ություն, –ում** ածանցներով վերացական գոյականները (լրություն, գերզգայունություն, սառցակալում, նվիրում, զգուշացում): Այդ բառերի ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է **սեռական–տրական** հոլովաձևի և **մեջ** կապի միջոցով՝ մարդու մեջ, սիրո մեջ, լու-

թյան մեջ, նվիրումի մեջ: **Մեջ** կապով այսպիսի կազմությունները ներգոյական հոլովածներ չեն:

1. **-ու** հոլովման պատկանող բառերից զուգահեռաբար նաև **-ի** հոլովման են ենթարկվում՝ **-ելի, -ալի, -անի** ածանցով մի քանի գոյականներ՝ **հայելիի, ընկուզենիի, բանալիի, սպեղանիի** ևն, մի քանի հատուկ անուններ՝ **Էրեբունիի, Մեղրիի, Վեդիի, Աղասիի, Բաֆֆիի, Քենեդիի, Գորկիի** ևն, մի շարք հասարակ անուններ՝ **այրիի, այրուծիի, գերիի, կանաչիի, նարդիի, նավաստիի, օղիի, քեռիի, սոնիի** ևն: (Բաֆֆի գրողի անվան համար սովորական է **-ու**-ով ձևը՝ **Բաֆֆու** «Սամվել» վեպը):

Գյումրի և **Լոռի** բառերի վերաբերյալ կա տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշումը՝ հանձնարարելի համարել դրանց **ու**-ով կազմությունները՝ **Գյումրու, Լոռու**, հետևաբար՝ **Գյումրուց, Գյումրով, Գյումրում, Լոռով, Լոռուց**: Մինչդեռ այսօր գործառնող գրական լեզվում առավել գործածական են **ի**-ով ձևերը՝ **Գյումրիի, Գյումրիից, Գյումրիով, Գյումրիում, Լոռիով, Լոռիում**. տարածված են **Լոռու** և **Լոռուց** ձևերը:

Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ, բացի **Թբիլիսի** բառից, վրացական մյուս տեղանունների համար պահպանվում են առանց **ի** վերջնահնչյունի ձևերը (**Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Սուխում, Քութայիս** ևն). սրանց սեռական-տրականի ձևերը կկազմվեն **-ի** հոլովիչով՝ **Բաթում-ի (-ից, -ով, -ում), Սուխում-ի (-ից, -ով, -ում), Քութայիս-ի (-ից, -ով, -ում)** ևն: Ճիշտ է՝ **Թբիլիսի-ի, -ից, -ով, -ում**: Կանոնը չի տարածվում **ի**-ով վերջացող այլ տեղանունների վրա՝ **Կախի, Գորի, Փոթի** ևն:

-ելի, -ալի, -անի ածանցներով ածականների, մի շարք հատուկ անունների, **թի, դի, դար** բառերի՝ **ու** հոլովմամբ ձևերը, ինչպես՝ **Շուշու, Անու, Բջնու, Արենու, Արտենու, Փարպու, Բերկրու, Մոչու, Նոր Գեղու, Նազելու, թիու, դիու, դարու, պիտանու, խղճալու, պատվելու, ածելու**, հնացած են կամ խոսակցական, ոչ գրական:

Անկողին, մարդ, ամուսին բառերի՝ **-ի** հոլովմամբ ձևերը՝ **անկող(ի)նի, մարդի, ամուս(ի)նի**, խոսակցական են, ոչ գրական: Կանոնական են՝ **անկողնու, մարդու, ամուսնու**:

2. **-վա** հոլովման պատկանող մի շարք ժամանականիշ բառեր (**օր-վա, առաջ-վա, զիշեր-վա, տար-վա, ժամ-վա** ևն) ոչ ժամանականիշ իմաստով գործածվելիս սովորաբար ենթարկվում են այլ հոլովման՝ **օրի, ժամի, ամսի, զիշե-**

րի, կեսօրի, կեսգիշերի, առավոտի, ժամանակի, տարու նն: Օր.՝ «Այս ի՛նչ օրի ես հասել»: «Հանգուցյալ պապիս տարուն հավաքվել էին մեր բոլոր հարագատները»: «**Առավոտի**՝ վերջին էջում հետաքրքիր լուր կար»: «**Ժամանակի** մեծ մասը նա անցկացնում էր տանը»: «Այս ուշ **ժամին** ի՛նչ էք անում այստեղ»: «**Ամսի 5-ին** կիրակի է»: **-վա** հոլովման պատկանող բառերի մեծ մասի բացառականը կարող է կազմվել ոչ միայն սեռական-տրականի (**ամսվան-ից, շաբաթվան-ից, գիշերվան-ից**), այլև ուղղականի ձևից (**ամս-ից, շաբաթ-ից, գիշեր-ից**):

Ժամանականիշ **վայրկյան, րոպե, դար, երեկո** բառերը ենթարկվում են **-ի** հոլովման՝ **վայրկյանի, րոպեի, դարի: Բոպե, դար, երեկո**, ինչպես նաև **այժմ** բառերի **-վա**-ով ձևերը համարվում են ոչ գրական:

3. -ան մասնիկ եզակի սեռականում սովորաբար ստանում են **-ում** վերջածանցով գոյականները՝ **շարժման, ուսման, լարման, հարցման**, գործիականում ունենում են **-բ**՝ **շարժմամբ, ուսմամբ, լարմամբ, հարցմամբ**: Գործածական են նաև դրանց **-ի** հոլովմամբ ձևերը՝ **շարժումի, ուսումի, լարումի, հարցումի**, և այդ դեպքում գործիականը կազմվում է ոչ թե **-բ**, այլ ընդհանրական **-ով** վերջավորությամբ՝ **շարժումով, ուսումով, լարումով, հարցումով**: Առաջինները գրական-գրքային կազմություններ են, երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին:

Դիմում բառը ենթարկվում է միայն **-ի** հոլովման: **- ում** ածանցով վերջացող առանձին գոյականների համար սովորական է **-ի**-ով ձևը՝ **շահում-ի, տեղում-ի, վատնում-ի, սայրում-ի, պատում-ի**: Դրանցում առարկայական իմաստը առավել ընդգծված է:

Մահ բառը սեռական-տրականում ունենում է ոչ թե **-վա**, այլ **-վան** հոլովիչը՝ **մահվան, մահվանից, մահվանով/մահվամբ**: **Մահ** բառը ենթարկվում է նաև **-ի** հոլովման՝ **մահի, մահից, մահով**՝ «Մահը մերն է, մենք՝ մահինը»: «Գլուխը մահի տալ»: Սրանք ունեն որոշ խոսակցական երանգ: **Բեռ, գառ, եզ, թոռ, ծոռ, լեռ, ծունկ, բուռ, մանուկ** բառերը, **-ան** հոլովման ձևերից բացի (բեռ-ան, գառ-ան, թոռ-ան), ունեն նաև **-ի** հոլովիչով ձևեր՝ **բեռի, գառի, եզի, թոռի, ծոռի, լեռի, ծ(ու)նկի, բռի, մանուկի**, որոնք ունեն խոսակցական երանգ: **Մանուկ** հատուկ անունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Մանուկի**:

Ամառ, ձմեռ բառերը ենթարկվում են նաև **-վա** հոլովման՝ **ամռան/ամառվա, ձմռան/ձմեռվա**: **Գարուն, աշուն** բառերի բացառականը և գործիականը, ինչ-

պես նաև **ամառ**, **ձմեռ** բառերի միայն գործիականը հիմքային զուգաձևություն ունեն. դրանք կարող են կազմվել ոչ միայն ուղղականի՝ **գարուն-ից**, **աշուն-ից**, **գարուն-ով**, **աշուն-ով**, **ամառ-ով**, **ձմեռ-ով**, այլև սեռական-տրականի ձևից՝ **գարնան-ից**, **աշնան-ից**, **ամռան-ից**, **ձմռան-ից**, **գարնան-ով**, **աշնան-ով**, **ամռան-ով**, **ձմռան-ով**: **Ամառ**, **ձմեռ** բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն **-ան՝ ամռանից**, **ձմռանից**, այլև **-վա** հոլովման ձևով՝ **ամառվան-ից**, **ձմեռվան-ից**:

Փունկի, **ծնկի** և **ծնկան** տարբերակներից գործածական են առաջին երկուսը. վերջինը աստիճանաբար դուրս է մղվում:

4. **-ոջ** հոլովման են պատկանում անձնանիշ **քույր**, **ընկեր**, **տեր**, **կին**, **աներ**, **սկեսուր**, **տալ**, **տեգր** բառերը և դրանցով կազմված այն բարդությունները, որոնցում դրանք վերջնաբաղադրիչ են՝ **քրոջ**, **ընկերոջ**, **տիրոջ**, **կնոջ**, **աներոջ**, **սկեսրոջ**, **տալոջ**, **գործընկերոջ**, **հորաքրոջ**, **սեփականատիրոջ**: **Քույր** բառը «բուժքույր» իմաստով կիրառվելիս կարող է ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **քույրի**, **քույրից**, **բուժքույրի**, **բուժքույրով**:

Սկեսուր, **տալ**, **տեգր** բառերը ենթարկվում են նաև **-ի** հոլովման՝ **սկեսուրի**, **տալի**, **տեգրի**, որոնք գնալով ավելի գործածական են դառնում: Ավելին՝ **սկեսուր**, **տալ**, **տեգր** բառերի բացառական և գործիական հոլովների **-ոջ**-ով ձևերը՝ **սկեսրոջից**, **սկեսրոջով**, **տալոջից**, **տեգրոջով**, այժմ խոսակցական են: Խոսակցական է նաև **տեգոր** ձևը: Դրանց գրական համարժեքները կազմվում են ուղղականի ձևից՝ **սկեսուր-ով**, **սկեսուր-ից**, **տալ-ով**, **տալ-ից**, **տեգր-ով**, **տեգր-ից**:

Հույսով և **հուսով** տարբերակներից առաջինը գործածվում է առանձնաբար՝ «Հույսով սպասելու եմ ձեզ», երկրորդը՝ սովորաբար **եմ-ի** հետ զուգակցված՝ «**Հուսով եմ**»: Մի քանի գոյականներ (**անկյուն**, **հրապարակ**, **խաչմերուկ**, **փողոց** ևն) ներգոյականի իմաստով գործածվում են վրա կապով զուգորդված՝ **անկյունի վրա**, **փողոցի վրա** ևն: Դա բնորոշ է խոսակցականին և գրական լեզվի կանոնով հանձնարարելի չէ:

Տեր վերջնաբաղադրիչով **տերտեր** բառը ենթարկվում է **-ի** հոլովման, **տանուտեր** բառը՝ **թե՛-ի**, **թե՛-ոջ** հոլովման, **տանտեր-ը**՝ միայն **-ոջ՝ տանտիրոջ**:

5. **-ց** հոլովման պատկանող **-անք**, **-ենք**, **-ոնք**, **-ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերն ունեն միայն հոգնակիի իմաստ՝ **Հայկենք**, **Հայկենց**, **Հայկենցից**, **Հայկենցով**:

6. ա ներքին հոլովման պատկանող **ձյուն, սյուն, անկյուն, արյուն, անուն** բառերը (**ձյան, սյան, անկյան, արյան, անվան**) կարող են ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **ձյունի, սյունի, անկյունի, արյունի, անունի**, և այդ դեպքում **արյուն, անուն** բառերի գործիականը կազմվում է ոչ թե **-ք (արյամք, անվամք)**, այլ ընդհանրական **-ով** վերջավորությամբ՝ **արյունով, անունով**: Սեռական-տրականի և գործիականի այս ձևերը (անունի, անունով) խոսակցական երանգ ունեն:

Տուն, շուն բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն հնչյունափոխված ուղղականի (տն-ից, շն-ից), այլև սեռական-տրականի ձևից (տան-ից, շան-ից): **Հարություն** անձնանունը ենթարկվում է միայն ի հոլովման՝ **Հարությունի**:

7. ո հոլովման պատկանող անձնանիշ **հայր, մայր, եղբայր** բառերը և դրանցով կազմված անձնանիշ բարդությունները (նախահայր, տիրամայր, հորեղբայր ևն) հոլովական զուգաձևություններ չունեն՝ **հոր, մոր, եղբոր, նախահոր, տիրամոր, հորեղբոր** (բայց՝ **տառամայրի, պտուտակամայրի**):

8. Այլաձև հոլովման պատկանող գոյականներից **սեր** բառը սեռական-տրականում ունի տարբերակային ձև՝ **սիրո / սիրուն** (երգը նվիրված է քո **սիրուն**), **սիրուց, սիրով**:

Կայսր, դուստր, հույս, լույս, սուգ, հուր, պատիվ, խնդիր, մամուլ, ծնունդ, գալուստ, հանգիստ, կորուստ բառերը, բացի ընդհանրական **-ի** հոլովման ձևերից (կայսրի, դուստրի, հույսի, լույսի, ս(ու)գի, հրի, պատվի, խնդրի, մամուլի, ծն(ու)նդի, գալ(ու)ստի, կոր(ու)ստի), հանգստի, սեռական-տրականում ունեն նաև մեծ մասամբ քարացած կամ հնաձև կազմություններում հանդիպող անկանոն ձևեր՝ **կայսեր, դստեր, հուստ, լուստ, սգո, հրո, պատվո, խնդրո, ծննդյան, գալստյան, հանգստյան, կորստյան**:

Աստված բառը սեռական-տրականում, բացի սովորական **-ու** հոլովման ձևից (Աստծու), ունի նաև գրաբարից փոխանցված **աստծո** զուգաձևը: **Գալուստ** անձնանունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Գալուստի**:

9. Փողոցների և հրապարակների բաղադրյալ հատուկ անունների՝ գոյականով արտահայտված լրացումը լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սեռական-տրական հոլովաձևով: Օր.՝ **Օերեթելու փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ, Մայիսի 9-ի փողոց, Հանրապետության հրապարակ, Արցախի փողոց, Տյագրիչների փողոց** ևն: Սակայն եթե

լրացումը –յան կամ –յանց ածանցով է կազմված, ապա լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովաձևով: Օր.՝ **Մոսկովյան փողոց, Աբովյան փողոց, Ալեք Մանուկյան փողոց, Մարշալ Բաղրամյան պողոտա** ևն:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Տրված գոյականներից յուրաքանչյուրով կազմե՛ք երկուական նախադասություն՝ իրանիշները գործածելով նաև անձի (կամ շնչավորի) առումով, իսկ անձնանիշները՝ նաև իրի առումով:

Օր.՝ «Եղբայրս շատ է սիրում իր **շանը**»: «Եղբայրս **շուն** է պահում»:

Առյուծ, աշակերտ, տիկնիկ, երեխա, աղվես, զինվոր, սար, վարպետ, գետ, վարդ:

2. Կազմե՛ք տրված բառերի հոգնակին: Զուգաձևություն ունեցողների համար գրե՛ք տարբերակները:

ա) Սիրամարգ, տղամարդ, սպա, վիպագիր, ստուգայց, լիագոր, ցուցամատ, մակբայ, շնաձուկ, բնագիր, հրագեն, հուշագիր, ժամկետ, դաշտամուկ, մանրէ, անձ, երկրաշարժ, բաղաձայն, խոշորացույց, չափանիշ, գործադուլ:

բ) Գանգոսկր, բժշկապետ, տիկին, նուռ, բույն, զուգահեռագիծ, գիշանգո, լեռնանցք, նշանակետ, ախտանիշ, քարհատ, ստեղն, նախամարդ, միջանցք, նամականիշ, լավատես, ուղեբեռ, արվեստագետ, հարսնաքույր, ջրահարս, թրենդ:

գ) Ճամփեզր, մթնոլորտաչափ, դեղագործ, միջակետ, մարգաձև, ծովահեն, մեղվաբույժ, տեսաբան, վերելք, հատապտուղ, գորացույց, հերթապահ, մատենագիր, պատճեն, ջրատար, ինքնաթիռ, ատամնաբույժ, սպի:

դ) Դրամարկդ, նույնանիշ, բազմավանկ, տասնապետ, ամրակար, ասուլիս, միապետ, սպա, գանձատուն, հացթուխ, մոլագար, բռնապետ, տաքդեղ, խոտակեր, բթամիտ, գայլաձուկ, օրաթերթ, տետր, անգո, վերելք, եղեգն, շտաբ:

3. Դո՛ւրս գրեք հոգնակիի կազմության սխալները և ոչ գրական ձևերը:

ա) Ուսաղիիրներ, օրագիրներ, քեռակիներ, նյարդեր, քղանցքեր, այլոց, քաղաքացիք, մանկամիտներ, թիկնապահներ, սառցահատեր, տղերք, բլոգեր, անասնակերեր, մանրէներ, մանրամասներ, մորաքույրներ, բրենդեր, թմեր, անցակետներ, մակբայեր, ձայնաշարեր:

բ) Սպորեր, երկնաքերեր, ֆիդայիներ, անձիք, էրեխեք, վերջակետեր, այլոք, բթեր, կնանիք, կայագորեր, մանրամասեր, կոշկակարներ, սառցահատներ, տեսակետեր, ականջողներ, ծխամորճներ, ջրհորներ, գյումրեցիք, բնակվարձներ, պատճեններ, մանրներ:

4. Մյունակներով առանձնացրե՛ք անեզական, անհոգնական, հոգնակերպ և հավաքական գոյականները:

ա) Մեղր, աղանդեր, հանրություն, աճ, ամպեր (չափման միավ.), Նիդերլանդներ, քիմիա, ֆուտբոլ, քրիստոնեություն, նախիր, թթվածին, Դոն Կիխոտ, հավատարմություն, նատրիումի քլորիդ, ինկվիզիցիա, ալպինիզմ, հելիում, Անդեր, դիֆուզիա, Արամենք, ձավար, կաթնամթերք:

բ) Հիմալայներ, ապագա, Ֆիլիպիններ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ամբոխ, հպարտություն, Վարդանանք, ուսանողություն, բերք, արծաթեղեն, ժանտախտ, զենետիկա, սեպտեմբեր, լեզվաբանություն, ուրան, վազք, գույթ, Կարպատներ, ոհմակ, տրամաբանություն, ֆոտոսինթեզ:

5. Առանձնացրե՛ք որոշյալ և անորոշ առումներով գոյականները:

Մյուժեն, նեյրոն, հյուլեն, պատճեն, միջօրեն, հետիոտն, քնարերգուն, ճողփյուն, սերմացուն, ստեղն, կտրոն, երգեհոն, Կանն, մարգագետին, կթղան, թերակղզին, էթան, պարեն, այրուձին, ապավեն, պեղածոն, կաթսան, ժապավեն, ապաստան, թեղին, կովան, ֆիդային, ձեղուն, ապագան, գինեձոն, կատարածուն, գետին, ծփին, կոճոն, բնեկն, դյուցազուն:

6. Ընդօժե՛ք հողերի գործածությունները, նշե՛ք հողերի տեսակները:

1. Մենք՝ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողներս, հաճախ ենք մասնակցում միջբուհական տարբեր միջոցառումների: 2. Հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն է, որը հիմնադրվել է 1921 թ: 3. Ամսույս վերջին Հայաստան էին այցելել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: 4. Խելքներդ հացի հետ եք կերել: 5. Հայերիս ամենասիրելի տոներից մեկը Վարդավառն է: 6. Եթե ուզում ես ազատ ժամանակ ունենալ, գուր ժամանակդ մի՛ կորցրու: 7. Ու ամենքս ենք հիմա կիսով մենակ, Ու ամենքս ենք հիմա կիսով տխուր (ՊՍ): 8. Օրերս դիտակների համակարգը զամմա-բոնկումից գրանցել է գերբարձր էներգիաների ֆոտոններ: 9. Դոներդ միշտ բաց լինի, Տաշտներդ միշտ հաց լինի (ՀԹ): 10. Զարմանալի ազգ ենք հայերս. միշտ դժգոհ ենք ինքներս մեզնից: 11. Միամիտ չեմ՝ հավատամ քեզ, Տառապանքս փորձ ունի (ԱԻ):

7. Գտե՛ք հողերի կիրառության սխալները և ուղղե՛ք:

1. Լուսանկարչական սարքն ստեղծել է Կալիֆոռնիայի համալսարանի ֆիզիկոսների խումբն Բահրամ Ջալալի ղեկավարությամբ: 2. Ֆիզիկական երևույթներն վաղնջական ժամանակներից իրենց վրա են բևեռել մարդկանց ուշադրությունը: 3. Այդ երևույթին վերաբերող իմ կարծիքներս հիմնավորված են, ուստի քո նկատողությունդ տեղին չէ: 4. Բնախոսությունն օրգանիզմների կենսագործունեությունն, նրանց հյուսվածքներն և ֆիզիոլոգիական ֆունկցիաները ուսումնասիրող գիտություն է: 5. Անանիա Շիրակացու աղյուսակներն համարվում են հնագույնը աշխարհում հայտնի համանման աղյուսակներից: 6. Հրդեհներն, ասեղնատերև անտառներում մեծ չափերի հասնելով, ոչնչացնում են հսկայական տարածքներ: 7. Վերջին հարյուրամյակում ոչնչացել են բույսերի որոշ տեսակները, որոնք ունեին սննդային և դեղագործական նշանակություն: 8. Ջրային էկոհամակարգերում կենդանիները ունեն ավելի երկար կենսական ցիկլ. այս վերջինս թույլ է տալիս ստանալ աղտոտման ավելի ինտեգրացված բնութագրում: 9. Հողերի բերրիության անկումն, անտառապատ տարածքների կրճատումը, ջրածածկ տարածքների վերածումն ճահիճների և նման բնույթի այլ երևույթները անապատացման հետևանքներն են: 10. Նյուտոնն հայտնագործեց տիեզերական ձգողության օրենքը, որն հնարավորություն է տվել մեծ ճշգրտությամբ հաշվարկել մոլորակների ուղեծրերը, բացատրել տեղատվության և մակընթացության ըմբռնումներն:

8. Տրված գոյականները խմբավորե՛ք ըստ հոլովումների: Նշե՛ք գուգաձևությունները և բացատրե՛ք դրանց կիրառությունները:

ա) Բույն, Մանուկ, բուռ, արյուն, հուն, տիկին, լեռ, մոտեցում, գառ, ամուսին, փորձարկում, հղի, Հարություն, մուկ, թվարկում, ձուկ, բու, մանուկ, գարուն, աշուն, գործընկեր, Արգնի, բոպե, քեռիենք, լրացում, կաղին, աստված:

բ) Խավարում, ձմեռ, ամառ, Սոչի, ծունկ, շարժում, ուսում, սենյակ, այգի, տանտեր, օր, քույր, փողոց, բեռ, գիրք, ամիս, լուսամուտ, գրիչ, Լոռի, բարդի, դիմում, Վարդանանք, առու, առավոտ, կեսօր, լեռ, անգամ:

9. Առանձնացրե՛ք ներքին և այլաձև հոլովումներին պատկանող բառերը: Նշե՛ք գուգաձևությունները: Այլաձևերի համար գրե՛ք հոլովումը:

Անուն, գրատուն, հայր, հույս, տիրամայր, կայսր, հանգիստ, ձյուն, քաջություն, աղջիկ, տեգր, հորեղբայր, անկյուն, տուն, սյուն, փորձություն, գալուստ,

դուստր, իրադրություն, սեր (զգացմունք), ծնունդ, մահ, արքայադուստր, լույս, Վան, Կարին, Կիլիկիա, պատիվ:

10. Կազմե՛ք տրված գոյականների սեռական և բացառական հոլովածները: Հոլովական գուգաձևություն ունեցողների համար նշե՛ք տարբերակային ձևերը:

ա) Լռություն, հայելի, ըոպե, գրել, դիմում, աշուն, տանտեր, սեր (զգացմունք), Բաթում, Բերկրի, կարկին, աղջիկ, սեր (կաթի), Գալուստ, միջօրե, Մայակովսկի, հույս, սուգ, արյուն, ձմեռ, կայսր, ժամ, օր, դուստր, աստված:

բ) Մյուն, Մեդրի, մահ, Արշիլ Գորկի, շաչուն, ժամանակ, բանալի, սպեղանի, Մուղնի, Բաֆֆի, Պազանինի, այրի, նավաստի, օղի, ժամանակ, բեռ, ծունկ, բուժքույր, տուն, ձյուն, հանգիստ, քույր, մուկ, հարս, ամառ, գիշեր, երգում, օձաձուկ, զարգացում, սերկելենի, այգի, հարցում:

գ) Տեգր, սկեսուր, հավատ, անուն, տարի, կնքահայր, ժամանակ, Կարո, տղամարդ, ձմեռ, քեռակին, թիմ, խավարում, դուռ, փողոց, ամիս, շուն, ծիրանի, կայսր, Արենի, տիկին, ըոպե, ցուցում, մականուն, դար, երեկո, Սոչի, Թբիլիսի, Ֆելլինի:

11. Բացելով փակագծերը՝ կազմե՛ք բառակապակցություններ:

(Տերյան) փողոց, (Չարենց) փողոց, (Դավիթ Մալյան) նրբանցք, (Արշակունյաց) պողոտա, (Մաշտոց) պողոտա, (Ալեք Մանուկյան) փողոց, (Հանրապետություն) հրապարակ, (Մոսե) նրբանցք, (Մոսկովյան) փողոց, (Մյասնիկյան) պողոտա, (Աճառյան) փողոց, (Տիգրան Մեծ) պողոտա, (Մախարով) հրապարակ, (Բայրոն) փողոց, (Գարեգին Նժդեհ) հրապարակ:

Գ.1.8. Ածականի տարբերակային ձևեր: Համեմատելի հատկություն նշանակող ածականները (որակական ածականներ) կարող են ունենալ համեմատության աստիճաններ, որոնք ցույց են տալիս տվյալ առարկայի հատկության առավել կամ պակաս լինելը այլ առարկայի նույն հատկության համեմատ, այսինքն՝ առարկայի հատկանիշի չափը: Հիշենք, որ ածականն ունի համեմատության երեք աստիճան՝ **դրական, բաղդատական, գերադրական:**

1. Դրական աստիճանը նշանակում է տվյալ առարկայի հատկանիշը ինքնին՝ առանց համեմատելու այլ առարկաների հետ:

2. Բաղդատական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի ավելի, պակաս կամ հավասար լինելը այլ առարկա(ներ)ի նույն հատկանիշի համե-

մատ: Կազմվում է՝ ածականի ուղիղ ձևին ավելացվելով **ավելի (առավել), պակաս (նվազ)** կամ **նույնքան** բառը՝ **ավելի մեծ, առավել իմաստուն, պակաս քաղցր, նվազ ծանր, նույնքան գործունյա**: Ունի երեք տարատեսակ՝ առավել-լական, նվազական և հավասարական: Բաղդատական աստիճանի նշանակությամբ գործածվում են նաև շարահյուսական մի քանի կառույցներ. «Մալրամուտը լուսաբացից գեղեցիկ է»: «Ծիրանենին երկարակյաց է, քան դեղձենին»: «Վանա լճի ջուրը Կապուտանի ջրի չափ աղի չէ»: «Երազի պես (նման) մեր մանկությունը անցավ»:

Գերադրական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի գերազանց լինելը համեմատվող մյուս բոլոր առարկաների նույն հատկանիշից: Կազմվում է՝ ածականի դրական աստիճանին ավելացվելով **ամենից** (բոլորից) բառը կամ **ամենա**– նախածանցը կամ էլ **-(ա)գույն** վերջածանցը՝ **ամենից մեծ, բոլորից խելոք, ամենաքաղցր, նվազագույն**, իսկ համեմատվող առարկան լինում է որոշյալ առումով՝ **ամենաքաղցր** (պտուղը), **նվազագույն** (աշխատավարձը), **ամենից լավ** (տունը), **մեծագույն** (նվաճումը): **Ամենից** (բոլորից) բառով կամ **ամենա**– նախածանցով գերադրական աստիճան կարելի է կազմել համեմատելի հատկություն նշանակող բոլոր որակական ածականներից, իսկ **–գույն** վերջածանցով՝ ոչ բոլորից:

–գույն նախածանցով կազմվում են նաև **բացարձակ գերադրական** ածականներ, որոնք գործածվում են անորոշ առումով գոյականի հետ և ցույց են տալիս առարկայի տվյալ հատկանիշի բարձր կամ ցածր աստիճանը՝ անկախ ուրիշ առարկաներից՝ «Սա **մեծագույն** նվաճում է»: «Ստանում եմ **նվազագույն** աշխատավարձ»:

Նույն ածականի վրա չի կարելի միաժամանակ ավելացնել **ամենա**– և **–գույն** ածանցները՝ **ամենաբարձրագույն, ամենաուժեղագույն**: (Թույլատրելի է գործածել որպես մարզական տերմին՝ **ամենաթեթևագույն**):

Գ.1.9. Թվականի տարբերակային ձևեր: Ըստ իմաստի՝ թվականները բաժանվում են չորս խմբի. 1. **Քանակական թվականներ** (կոչվում են նաև **բացարձակ**). նշանակում են թիվ կամ առարկաների որոշակի քանակ՝ **մեկ, տասը, քառասունյոթ, չորս հարյուր ութ**: Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունեն: 2. **Կոտորակային թվականներ** (համարվում են նաև քանակականների տեսակ). մատնանշում են ամբողջի մասերը՝ **մեկ վեցերորդ, մեկ հարյուրերորդական, հինգ ամբողջ վեց տասներորդական**: 3. **Դասական թվականներ**. նշանակում են առարկայի թվային կարգ՝ առաջին, երկրորդ, քսաներորդ: 4. **Բաշ-**

խական թվականներ. նշանակում են առարկաների հավասար քանակական բաշխում՝ **հինգական, երեք-երեք:**

Թվականը քերականորեն չի ձևափոխվում: Միայն գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել: Թվականներն ըստ կազմության լինում են՝ **պարզ՝ մեկ, հինգ, քսան, և բաղադրյալ՝ հինգերորդ, երեսուն, քսանհինգ, տասական, մեկ քառորդ:** Մեկ թվականն ունի նաև մի տարբերակը, որը համանուն է **մի** անորոշ դերանվանը: Թվականակերտ ածանցները վերջածանցներ են՝ **երկ-րորդ, հինգ-երորդ, ութ-սուն, հնգ-ական: -րորդ և -երորդ** ածանցները քանակական թվականներից կազմում են դասական թվականներ, ինչպես նաև **քառորդ** կոտորակային թվականը: **-րորդ**-ը գործածվում է միայն **երկրորդ, երրորդ, չորրորդ** կազմություններում: **Մեկ** քանակական թվականից նշված ածանցներով դասական թվական չի կազմվում: Դրա փոխարեն գործածվում է **առաջին** բառը:

Մեկ, երկու, երեք, չորս թվականները բաղադրյալ թվականի վերջին բաղադրիչ լինելու դեպքում ստանում են **-երորդ** ածանցը՝ **քսանմեկերորդ, երեսուներկուերորդ, իննսուներեքերորդ, հարյուրչորսերորդ:**

-սուն ածանցը միավոր նշանակող **երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը** պարզ թվականներից կազմում է տասնավոր նշանակող թվականներ՝ **քառասուն, ութսուն, իննսուն:** **Երե-սուն, հի-սուն, վաթ-սուն, յոթան-ա-սուն** կազմությունների դեպքում հիմքը համապատասխան արմատների անկանոն տարբերակներ են: **-ական** ածանցը քանակական թվականներից կազմում է բաշխական թվականներ՝ **երեքական, քսանմեկական:** Կա բաշխական թվականների կազմության մեկ այլ՝ հոմանիշ եղանակ՝ քանակական թվականի կրկնությամբ՝ **երեք-երեք, տասնհինգ-տասնհինգ:**

Ինը և տասը թվականները ունեն **ը** կամ **ն** վերջնահնչյուն, որը փոխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: **Տասը** բառը երբեմն կարող է լինել **տասս** ձևով՝ «Իննից տաս է պակաս»: Բաղադրություններում հանդես է գալիս **ն** հոդով (տասներորդ, տասնամյակ, տասնապատիկ, տասնվեց), երբեմն էլ՝ անհոդ (տասհարկանի, տաստոննանոց, տասմետրանոց): **Ինը** թվականը միշտ պահպանում է իր **ը** կամ **ն** վերջնահնչյունը՝ **տասնինը, իննսուն, իննանիշ, իննհատորյակ, իննհարկանի, իններորդ, իննից, իններ:**

Երկու թվականը գոյականաբար հոլովվում է **երկուս-** հիմքով՝ **երկուսը, երկուսի(ն), երկուսով, երկուսից, երկուսներ, երկուսս, երկուսներդ** ևն: Սակայն ուղիղ ձևը առանց հոդի գործածվելիս կարող է լինել թե՛ **ս-**ով, թե՛ առանց **ս-**ի՝ «Մատյանում քանի՞ **երկու(ս)** կա»:

Մեկից բարձր քանակական թվականի լրացյալը կարող է լինել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

1. Սովորաբար եզակի է լինում, եթե՝ **1.** չափի միավոր է կամ առնվում է իբրև այդպիսին՝ «Մեկնարկին մնացել է **15 օր**»: «Լույսը 1 վ-ում անցնում է **300000 կմ**»: «Եկել էին քսան հոգով»: «**Հինգ մասնակցից** ոչ մեկը չկա», **2.** անորոշ առումով է, և տրամաբանական շեշտը (խոսողի ուշադրությունը) թվականով արտահայտված քանակի վրա է՝ «Դահլիճում **երեք** ազատ **սեղ** է մնացել»:

2. Սովորաբար հոգնակի է լինում, եթե՝ **1.** որոշյալ առումով է՝ «Մեր երեք **գործընկերներն** էլ գործուղման մեջ են», **2.** թվարկվող առարկաները նկատի են առնվում առանձին-առանձին՝ «Հաղթեց երեք **մարզիկների**», **3.** թվական որոշիչի և դրա որոշյալի միջև մեկ այլ որոշիչ կա՝ «Մրցությանը կմասնակցեն տասնվեց **ուժեղագույն** մարզիկներ»: Բայց նաև՝ «Առգրավվել է երկու **ինքնաշեն** ատրճանակ»:

3. Թվական որոշիչ ունեցող ենթական՝ **ա.** եթե հոգնակի է, ապա ստորոգյալն էլ հոգնակի է լինում՝ «Երեք գուսաններ մրցում **էին**», **բ.** եթե եզակի է, ապա ստորոգյալը կարող է լինել թե՛ եզակի, ինչպես՝ «Երկշունչ ձկներից հայտնի է 12 ընտանիք, 9-ը՝ բրածո, 3-ը՝ ժամանակակից», թե՛ հոգնակի՝ «Երկշունչ ձկներից հայտնի **են** 12 ընտանիքներ, 9-ը՝ բրածո, 3-ը՝ ժամանակակից»: **գ.** եթե փոխանուն թվական է, ապա ստորոգյալը **մեկ-**ի դեպքում լինում է եզակի՝ «Մեկն ինձ **դուր եկավ**», մյուս ամբողջ թվերի դեպքում՝ հոգնակի՝ «Մեր ձարևադարձային կլիմայական գոտիներից **երկուսն** էլ բարենպաստ են», կոտորակի դեպքում՝ սովորաբար եզակի՝ «Մեկ **երրորդը** այրվել է»:

Եզակի ենթակայի ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, եթե ունի որոշիչ, որը ցույց տալիս գործողության փոխադարձություն կամ հոգնակիություն՝ «Իրար **բախվեցին** երկու **մեքենա**»:

Թվականի ուղղագրությունը: Քանակական թվականները՝ **մեկ-**ից մինչև **հարյուր-**ը, պարզ բառեր են կամ բաղադրյալ համադրական կազմություններ, **հարյուր մեկ-**ից սկսած՝ բաղադրյալ հարադրական կազմություններ են (բացի **հազար-**ից, **միլիոն-**ից, **միլիարդ-**ից ևն), գրվում են առանձին բաղադրիչներ-

րով՝ երկու հազար վեց հարյուր քառասունյոթ, մեկ միլիոն, երեք տրիլիոն վեց հարյուր միլիարդ չորս հարյուր քսան միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր ութսունույոթ:

Կոտորակային թվականները հարադրական կազմություններ են. բաղադրիչները գրվում են առանձին-առանձին՝ **չորս հինգերորդ, երեք հազարերորդ, մեկ ամբողջ հինգ տասներորդ**: Բացառություն են **քառորդ** բառը՝ որպես **մեկ քառորդ** (**մեկ չորրորդ**) դասական թվականի հոմանիշ, և **կես** բառը՝ որպես **մեկ երկրորդ** կոտորակային թվականի հոմանիշ (**մեկ երկրորդ/կես/1/2/0,5 = զրո ամբողջ հինգ տասներորդական**), ինչպես նաև **կես**-ով մի շարք կազմություններ՝ **մեկուկես, յոթուկես, տասուկես** են:

Կոտորակային թվականի համարիչը ամբողջ թիվ նշանակող քանակական թվական է, իսկ հայտարարը՝ դասական թվական (ընդունված է առանց **-ական** ածանցի)՝ **մեկ երկրորդ, տասնմեկ հարյուրերորդ**: Եթե հայտարարի վերջին թիվը 1-ն է, ապա կարդացվում է **-մեկերորդ** ձևով՝ **երկու տասնմեկերորդ**: Եթե հայտարար է դառնում **տասը** թվականը, ապա կարդացվում է երեք ձևով՝ **մեկ տասներորդ, մեկ տասներորդական, մեկ տասներորդական**. սովորական է և նախընտրելի առաջին տարբերակը՝ **մեկ տասներորդ, երկու տասներորդ** են:

Բաշխական թվականների կրկնավոր տարբերակները գրվում են միության գծիկով՝ **յոթ-յոթ, քսանմեկ-քսանմեկ**:

Եթե **դասական** թվականը կազմված է երկուսից ավելի բաղադրիչ ունեցող հարադրական քանակական թվականից, ապա հարադրական բարդություն է, այսինքն՝ գրվում է առանձին բաղադրիչներով՝ բացառությամբ վերջին երկու թվական բաղադրիչների՝ **երկու հարյուր տասնվեցերորդ, երեք հազար երկու հարյուր տասնմեկերորդ**: Հակիրճության համար այսպիսի դասականները սովորաբար գրվում են թվերով (վերջում կցվում է **-րդ** մասնիկը), ինչպես՝ **3211-րդ, 25875-րդ**:

Թվականները, տառերով (որպես հնչյունագիր) գրվելուց բացի, ունեն նաև իրենց **գաղափարագիր նշանները**: Դրանք կա՛մ արաբական թվանշաններ են, կա՛մ այբուբենի տառերը՝ հատուկ թվային արժեքներով:

Արաբական թվանշանները և դրանց համակցությունները նշանակում են քանակական թվականներ: Դրանցից բաշխական և դասական թվականներ կազմելիս համապատասխան արաբական թվանշանին միության գծիկով կցվում

Է **–ական, –ին** կամ **–րդ՝ 1–ական, 1–ին, 2–րդ, 78–րդ**: Կոտորակային թվականների դեպքում տառերով գրվող այդպիսի կցումներ չեն արվում՝ **1/2, 0,5**:

Դասական թվականների՝ առանց նշված մասնիկների գործածությունը թույլատրելի է համարվում միայն հետադաս կիրառության դեպքում՝ **հոդված 3** (կարդացվում է՝ **հոդված երրորդ**), **հոդված 78** (= **հոդված յոթանասուներորդ**), **կետ 1** (= **կետ առաջին**), **մաս 5** (= **մաս հինգերորդ**) ևն:

Թվարկումների ժամանակ դասական թվականների **–ին–ի** և **–րդ–ի** փոխարեն կարող է դրվել միջակետ կամ աջ փակագիծ՝ **1., 2., 3., 4.**, կամ՝ **1), 2), 3), 4)**:

Հետադաս դիրքում անթույլատրելի է համարվում «դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը, այսինքն՝ գրել ոչ թե **կետ 1–ի, գլուխ II–ով, բաժին 4–րդի, նկար 5–ը, սյունակ VI–ը** և այլն, այլ **1–ին կետի, II գլխով, 4 մասից, 4–րդ բաժնի, 5–րդ նկարը, VI սյունակը** և այլն»³⁰:

Հայերենի այբուբենի տառերը և դրանց համակցությունները սովորաբար նշանակում են քանակական թվականներ, եթե մեծատառերով են (**Ա, ԺԲ, ՌՋԿԷ**), և դասական թվականներ, եթե փոքրատառերով են (**բ, իգ, սլե**):

Հռոմեական թվանշանները (լատինական այբուբենի մեծատառերը) և դրանց համակցությունները նշանակում են դասական թվականներ՝ **I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX** (20–րդ), **XXX** (30–րդ), **XL** (40–րդ), **L** (50–րդ), **LX** (60–րդ), **XC** (90–րդ), **C** (100–րդ), **CD** (400–րդ), **D** (500–րդ), **DC** (600–րդ), **CM** (900–րդ), **M** (1000–րդ):

Ծանոթություն: Թվանշաններով գրված տվյալների միջև, երբ դրանք բազմանիշ թվերով նշում են գումարի չափ կամ չափման այլ միավոր, սովորական գրավոր խոսքում դրվում է միջակետ, կամ գրվում են բացատով՝ հեշտ ընկալելու համար, օր.՝ **3.500 կմ / 3 500 կմ** ևն: Սակայն մաթեմատիկայի և առհասարակ գիտության լեզվում ընդունված է դրանց միասին գրությունը՝ մեքենական հաշվարկներում թյուրընթերցումներից խուսափելու համար՝ **3500 կմ, 10055 հեկտար, 3678500 դրամ** ևն:

Գ.1.10. Դերանվան տարբերակային ձևեր: Դերանունը առարկա կամ հատկանիշ նշանակող խոսքի մասի (գոյականի, ածականի, թվականի կամ մակբայի) փոխարեն գործածվող բառ է: Ըստ այդմ՝ դերանուն համարվող բառերը լինում են՝ **գոյականական** (ես, մենք, սա, ինքք, միմյանց, ով, ամեն ոք, ոչ ոք, ոչինչ, ինչ ևն), **ածականական** (որ, այսպիսի, նման, ումն, մի, սույն, միննույն, այս, ոչ

³⁰ Տե՛ս «Հայոց լեզվի կանոններ (գերատեսչական նորմատիվ ակտեր)», Եր., 2004:

մի, ինչ–ինչ, ողջ են), **թվականական** (այսքան, ինչքան, որքան, այսչափ, նույնչափ, ինչչափ են), **մակբայական** (ուր, երբ, որտեղ, ինչու, ինչպես, այսպես, այսքան են):

1. **Ինքս** (ինքդ, ինքը) դերանունը **ես** (դու, նա)–ի սաստկականն է, ավելի է շեշտում մասնակցի դեմքը, այդ պատճառով էլ հաճախ կիրառվում է նրա հետ միասին՝ **ես ինքս** (դու ինքդ, նա ինքը) (առանց որևէ կետադրության), 3–րդ դեմքում՝ նաև գոյականի հետ միասին՝ «Ֆիզիկոսն **ինքը** կատարեց փորձը»: **Ինքս** սաստկականը հոլովվում է միայն 3–րդ դեմքում (ինքը), ինչպես նաև ունի հոգնակիի երեք դեմք՝ **ինքներս, ինքներդ, իրենք** (հզվ.՝ նրանք ինքները):

2. Տարահիմք գուգաձևեր կան 1–ին և 2–րդ դեմքերի բացառական, գործիական, ներգոյական հոլովներում՝ **ինձնից – ինձանից, քեզնով – քեզանով, մեզնում – մեզանում** են: Անձնական դերանունների ներգոյականի ձևերը՝ **մեզնում//մեզանում, ձեզնում//ձեզանում, քեզնում//քեզանում** են, հազվադեպ են գործածվում: Գործածական որոշ հաճախականություն ունի **մեզանում** ձևը (նշանակում է նաև **մեր միջավայրում, Հայաստանում** են), մյուսները աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից (դրանց փոխարինում են **մեջ** կապով կառույցները՝ **մեր մեջ, քո մեջ** են):

3. **Ինքը** դերանունը որպես հատկացուցիչ (**իր** խոսքը, **իր** դեմքով) կամ կապի խնդիր (**իր** համար, **իր** հետ) օգտագործվում է **իր** (սեռականի) ձևով և ոչ թե **իրեն** (տրականի). չպետք է շփոթել **իրեն** ձևի հետ, որը գործածվում է որպես ուղիղ խնդիր՝ **իրեն** չի սիրում, խնամում է **իրեն**, կամ հանգման խնդիր՝ **իրեն** կտամ, մոտեցա **իրեն**:

4. Անձնական դերանվան 2–րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է կիրառել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի կիրառությունը կոչվում է **քաղաքավարական հոգնակի**: Քաղաքավարական հոգնակիի ձևերը գրվում են մեծատառով՝ **Դուք, Ձեր, Ձեզ, Ձեզնից, Ձեզնով, Ձեզանում, Ինքներդ** են:

5. **Նա** ցուցական դերանունը համանուն է **նա** անձնական դերանվանը և մատնացույց է անում **ոչ անձ** («Մրանք գեղարվեստական գրքերն են, դրանք՝ գիտականները, իսկ **նրանք**՝ գիտահանրամատչելիները»):

6. **Ի՞նչ** դերանունը իրանիշ է և ենթարկվում է ի հոլովման՝ **ի՞նչ(ը), ինչի՞(ն), ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ, ինչե՞ր(ը)** են: Հաճախ գործածվում է նաև որպես անձնական դերանուն՝ «**ինչպիսի՞**», «**ո՞ր**» իմաստով՝ «Մա **ի՞նչ** սարք է»: «**Ի՞նչ** նշումներ պիտի արվեն»:

7. Մակբայական **երբ** դերանունը գործողության կատարման կամ եղելության ժամանակի նշանակություն ունի և ենթարկվում է **-վա** հոլովման միայն եզակի թվով՝ **երբվա՞, երբվանի՞ց**: Գործիական և ներգոյական հոլովներ չունի:

8. **Որտեղ** դերանունը արտահայտում է գործողության կատարման կամ եղելության տեղի նշանակություն: Ներգոյական հոլովաձևը չի գործածվում: **Ուր** դերանունը ցույց է տալիս գործողության ուղղություն և չի հոլովվում: Հետևաբար՝ «**Որտե՞ղ է գտնվում**»: «**Ո՞ւր է առաքվում**»: «**Որտե՞ղ հանդիպեցիք**»:

9. **Ինչո՞ւ** դերանվանը հաճախ համարժեք է **ինչի՞ համար** կապակցությունը՝ «**Ինչո՞ւ (= ինչի՞ համար)** ես բերել այդ գործիքը»: Ուստի սխալ է **ինչո՞ւ** դերանվան գործածությունը **համար** կապի հետ: Հանձնարարելի չեն նաև ռուսաբան **ինչո՞ւմն է բանը/հարցը (բանը/հարցն ինչո՞ւմն է)** կապակցությունը (որը նշանակում է «ի՞նչ է պատահել, ի՞նչ խնդիր կա, խնդիրը ո՞րն է») և դրա պատասխանը՝ **բանը/հարցը նրանում(ն) է**:

10. **Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն** ածականական դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ՝ **ամեն մարդ, ամեն մի ուսանող, յուրաքանչյուր տարր, ամենայն ցանկություն, իսկ բոլոր** դերանունը՝ որոշյալ առումով՝ **բոլոր** գրքերը:

11. **Ողջ, ամբողջ, համայն** դերանունները սովորաբար պահանջում են որոշյալ առումով լրացյալ՝ ողջ **աշխարհը, ամբողջ օրը, համայն մարդկությունը**, սակայն **մի** անորոշ դերանվան հետ զուգակցվելով՝ պահանջում են անորոշ առումով լրացյալ՝ **մի ամբողջ տիեզերք, մի ողջ ժողովուրդ**:

12. **Յուրաքանչյուրը, ամեն մեկը** դերանուններով արտահայտված ենթական դիմորոշ հոդ ստանալու դեպքում (**յուրաքանչյուրս, ամեն մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ**) ունենում է **առաջին** կամ **երկրորդ** դեմքով դրված ստորոգյալ: Օր.՝ «Յուրաքանչյուրս մի առանձին գործ **ենք անում**», «Ամեն մեկդ ձեր անելիքն **իմացեք**», «Յուրաքանչյուրս մի առանձին **գործ է անում**», «Ամեն մեկդ **պիտի իմանա** իր անելիքը»:

13. **Ումն** դերանունը եզակի թվով գոյականաբար չի գործածվում և չի հոլովվում: Ունի միայն որոշչային կիրառություն՝ **ումն** Գրիգոր, **ումն** գյուտարար:

14. **Մի քանի** դերանունը հոլովվում է միայն եզակի թվով (մի քանիսը, մի քանիսի(ն), մի քանիսից, մի քանիսով, մի քանիսում), սակայն ենթակա լինելիս գործածվում է հոգնակի ստորոգյալի հետ՝ մի քանիսը **եկան**, մի քանիսով ճանապարհ **ընկան**:

15. **Որոշ** դերանվան գոյականաբար գործածությունը և հոգնակի թվով հոլովումը (**որոշները, որոշներից** ևն) խոսակցական բնույթ ունի և բնորոշ չէ գրական լեզվին:

16. **Այլ** դերանունը գոյականաբար երբեմն, իբրև հնաբանություն, գործածվում է միայն հոգնակի ուղղականում՝ **այլք** (**այլոք** ձևը սխալ կազմություն է), և սեռական–տրականում՝ **այլոց**:

17. Ածականական անորոշ դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ (բացի **այսինչ, այնինչ** դերանուններից)՝ ինչ–որ **բան**, ինչ–ինչ **խնդիրներ**, ոմն **Մարգայան**, մի **քառյակ**, ուրիշ **հարցեր**, այլ **դեպքեր**, որոշ **պայմաններ**, որևէ **խոչընդոտ**, որևիցե **պատճառ**, բայց՝ այսինչ **մարդը**, այսինչ–այնինչ **նկատառումներ**:

18. Եթե **մի**–ի լրացյալը որոշիչ հոդով է՝ «Մի **տողը** մոռացել եմ» ուրեմն **մի**–ն տվյալ դեպքում ոչ թե դերանուն է, այլ թվական անուն: Հակառակ դեպքում կարող է ընկալվել և՛ որպես թվական, և՛ որպես դերանուն, ինչպես՝ «Մի **տող** մոռացել եմ»:

19. Ածականական **ոմն, մի, որևէ, որևիցե** դերանունները գործածվում են միայն եզակի թվով լրացյալի հետ՝ ոմն **արվեստագետ**, մի **մարդ**, որևէ **խնդիր**, որևիցե **խոչընդոտ**, իսկ **ինչ–ինչ, որոշ** դերանունները՝ միայն հոգնակի թվով լրացյալի հետ՝ ինչ–ինչ **հանգամանքներ**, որոշ **դեպքեր**:

20. **Ոչ մի** դերանունը եզակի թվով որոշյալ և ստորոգյալ է պահանջում նույնիսկ որոշյալի բազմակի լինելու դեպքում՝ «Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ **չէր շարժվում** քամուց»:

21. Հոգնակի **մեր, ձեր, իրենց** կամ **նրանց** ձևերի փոխարեն գործածված ստացական հոդից առաջ **–եր** հոգնակերտ մասնիկը կարող է փոխարինվել **–ներ** մասնիկով՝ «Ձեռքներդ հեռո՛ւ»: = «**Ձեր** ձեռքերը հեռո՛ւ»: «Աչքներս լույս» = «**Մեր** աչքը լույս»: «Մտքները փոխել են»: = «**Իրենց** մտքերը փոխել են»: «Հագներին շոր չունեին»: = «**Իրենց** հագին շոր չունեին»: «Մոտները փող չկա»: = «**Նրանց** մոտ փող չկա»: Հոգնակիի այսպիսի արտահայտությունը կոչվում է ստացական հոգնակի և բնորոշ է խոսակցական լեզվին:

22. Անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի համատեղ գործածությունը սխալ է (**իմ** գիրքս > **իմ** գիրքը կամ գիրքս, **քո** տեսակետներդ > **քո** տեսակետները կամ տեսակետներդ): Դիմորոշ հոդի և անձնական դե-

բանվան միաժամանակյա գործածությունը թույլատրելի է՝ **մենք**՝ աշակերտներս, **դուք**՝ մասնակիցներդ:

23. Ցուցական մի քանի դերանունների հոգնակին կազմվում է ն՝ **-ք**, ն՝ **-ներ** մասնիկների միջոցով՝ **այդպիսիք-այդպիսիները, ինչպիսիք-ինչպիսիները, որպիսիք-որպիսիները** ևն: Առաջինները առավել հատուկ են գրական-գրքային խոսքին և համեմատաբար քիչ են գործածվում:

Գ.1.11. Դերանվանական հոդեր: Որոշ դերանուններ կարող են փոխարինվել **ս, դ, ն(ը)** վերջամասնիկներով, որոնք կոչվում են **հոդեր** կամ **դերանվանական հոդեր**: Հոդ ստանում են գոյականները՝ **գիրքս, աղջիկդ, նյութը, գոյականական որոշ դերանուններ՝ ինքդ, ամենքս, մեկը, ամեն մեկդ, մեկնումեկս, ոչ մեկը**: Մյուս բառերը հոդ ստանում են միայն գոյականաբար գործածվելիս՝ **մեծը, գյուղականը, երկուսս, քնածը, զնալուցդ, բոլորս, այսքանդ, ո՞րս, ինչպիսի՞ն, յուրաքանչյուրս, ամբողջը, այսինչը, մոտս, վրադ, վրայովս** ևն:

Ըստ դերանվանական նշանակության՝ տարբերում են հոդի չորս տեսակ՝ **ստացական, դիմորոշ, ցուցական և որոշիչ**:

Ստացական հոդ: Փոխարինում է անձնական դերանվան սեռական հոլովին՝ **իմ, քո, նրա, իր**, և մատնացույց է անում, թե խոսքի մասնակիցներից ում է պատկանում կամ վերաբերում տվյալ առարկան: Ստացական հոդ ունեցող բառը նախադասության մեջ փաստորեն համատեղում է հատկացյալի և հատկացուցիչի դերերը: Որպես ստացական՝ գործածվում են **ս, դ** հոդերը: Առաջին դեմքի **իմ (մեր)** դերանվանը կարող է փոխարինել **ս** հոդը՝ «Գործս (= Իմ գործը) ավարտել եմ»: «Գործիս (= իմ գործի) տեղը փոխվել է»: «Գործիցս (= իմ գործից) մի՛ խոսեք»: «Գործովս (= իմ գործով) հպարտանում եմ»: «Մտքումս (= իմ մտքում) ուրիշ ծրագրեր են»: «Խոսքերիս (= իմ խոսքերին) հավատացե՛ք»: Երկրորդ դեմքի **քո (ձեր)** դերանվանը կարող է փոխարինել **դ** հոդը՝ «Խնդրանքդ (= քո խնդրանքը) կատարել եմ»:

Դիմորոշ հոդ: Փոխարինում է անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերին՝ **ես, դու**, և մատնացույց է անում, թե տվյալ առարկան խոսողն է, թե՞ խոսակիցը: Սովորաբար դրվում է անձնանիշ բառերի վրա: Ուղղական հոլովով բառի վրա դրվելիս միշտ դեմքով համաձայնում է ստորոգյալի հետ՝ կրկնելով նրա դեմքը:

Որպես դիմորոշ՝ գործածվում են **ս** և **դ** հոդերը: Անձնական դերանվան առաջին դեմքի **ես (մենք)** ձևին և դրա թեք հոլովաձևերին կարող է փոխարինել **ս**

հողը՝ մասնակցիցս = ես՝ մասնակցիցս, մասնակցիս = իմ՝ մասնակցիս կամ ինձ՝ մասնակցիս, մասնակցիցս = ինձնից՝ մասնակցիցս, մասնակցովս = ինձնով՝ մասնակցովս, ներքոստորագրյալներս = մենք՝ ներքոստորագրյալներս են:

Անձնական դերանվան երկրորդ դեմքի **դու (դուք)** ձևին և դրա թեք հոլովա՝ ձևերին կարող է փոխարինել **դ** հողը՝ ամենքդ = դուք՝ ամենքդ, ձեզանից յուրաքանչյուրը = յուրաքանչյուրդ (սխալ է՝ ձեզանից յուրաքանչյուրդ), ամենքիցդ = ձեզանից՝ ամենքիցդ ևն, օր.՝ «**Հերոսիդ** (= քեզ) գնդակ երբեք չի դիպչի»:

Երրորդ դեմքում դիմորոշ հողը նույնանում է որոշիչ **ը(ն)** հողին: Դիմորոշ հողի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է (**մենք**՝ գիտնականներս, **դուք**՝ մասնակիցներդ):

Ցուցական հոդ: Որպես ցուցական՝ գործածվում է **ս** հողը: Փոխարինում է ցուցական **այս** դերանվանը և մատնացույց է անում առարկայի՝ ժամանակի կամ տարածության մեջ խոսողին մոտ լինելը՝ «Օրերս (= այս օրերին) տեղի ունեցան կարևոր իրադարձություններ»: «Աշխարհումս (= այս աշխարհում) ախ չեմ քաշի»: «Վերջերս (= այս վերջին ժամանակներում) լրջացել ես»: Առանձին գործածություններում **ս**-ն երկիմաստություն է դրսևորում՝ «**Կյանքս** (= այս կյանքը // իմ կյանքը) հոգսաշատ է դարձել»: «**Գիշերս** (= այս գիշերը // իմ գիշերը) լի էր երազներով»:

Որոշիչ հոդ: Որպես որոշիչ հոդ՝ գործածվում է **ն(ը)**-ն: Արտահայտում է առարկայի՝ խոսողին և կամ խոսակցին ծանոթ, հայտնի լինելը, խոսքում արդեն հիշատակված լինելը: Իրեն փոխարինող որոշյալ դերանուն չունի: Բայց անորոշ առման դեպքում կարող է փոխարինվել **մի** կամ **ինչ-որ** դերանվամբ՝ *Տղան եկավ – Մի տղա եկավ: Ինչ-որ տղաներ եկան:* Որոշիչ հոդ ստանում են միայն ուղղական (ճամփորդը) և սեռական-տրական (ճամփորդներին) հոլովաձևերը:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Առանձնացրե՛ք ածականները՝ կազմելով համեմատության աստիճանները ըստ հնարավորության:

ա) Բարձր, գծուծ, հոգնած, մարմնագույն, հարբեցող, աշակերտական, ամուրի, թունդ, լեռնային, ամենը, բրոյա, պղտոր, համառորեն, մանկահասակ, երկաթյա, կույր, տխուր, մելամաղձոտ, շեշտակի, ծաղկած, վճարովի, պողպատ:

բ) Լավ, ցածր, ամենակեր, դեղին, ժլատ, նարնջագույն, պատանեկան, ջրալի, խմող, դաշտային, թավշյա, մանրամասնորեն, հարբած, վատ, սնահավատ, մեծ, կիսադեմ, մեծատուն, դժնի, հայերեն:

2. Ընդգծե՛ք այն ածականները, որոնց գերադրական աստիճանը -գույն ածանցով չի կազմվում:

Կոր, մանր, տաք, թանկ, գորեղ, բարակ, պարզ, նիհար, խիտ, մեծ, կանաչ, ծեր, վատ, նվազ, հին, ծուռ, քիչ, բարձր, վստահ, ցածր, ջինջ, նոր, ուժեղ, թույլ, խոշոր, հաճելի, լավ, վատթար, հպարտ, ազնիվ, զվարթ, խոշոր, ուրախ:

3. Կազմե՛ք նախադասություններ տրված ածականների բացարձակ և համեմատական գերադրականներով:

Ազնիվ, ուժեղ, լավ, հին, բարձր, մեծ, նվազ, վատ, ցածր, նոր, խոշոր:

4. Փոխանվանաբա՛ր կիրառեք տրված ածականները:

Մաքուր, թեթև, ճերմակ, քաղցր, բարձրահասակ, կույր, կոր, փոքր, պարզ, կապույտ:

5. Թվականները գրե՛ք բառերով:

ա) Միջին տվյալներով՝ աշխարհում 100 նորածին աղջկա հաշվով ծնվում է 104–107 տղա: Աշխարհում տղամարդկանց բաժինը 50,4% է, իսկ նոր զարգացող երկրներում՝ 50,9%:

բ) Աֆրիկա մայրցամաքում նորածինների գրեթե 1/4-ը բնածին արատներ ունի:

գ) Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով Հայաստանում 2014 թ.-ին արական սեռի ներկայացուցիչների թիվը կազմել է 1439148, իսկ իգական սեռինը՝ 1571000:

դ) Եթե 2000 տարի առաջ երկրագնդի վրա ապրում էր մոտավորապես 230 մլն մարդ, ապա այժմ աշխարհի բնակչության թիվն անցնում է 7 մլրդ-ից:

ե) Ալեքսանդրիայի հռչակավոր գրադարանը հիմնադրվել է մ.թ.ա. III դ.:

զ) ՀՀ ԿԲ թողարկած 100.000-անոց թղթադրամի դիմերեսին պատկերված է Աբգար Ե արքան և մի հատված 1-ին դարի տարածաշրջանային քարտեզից:

է) Հին դարերում երկրագնդի բնակչությունը մեկ տարվա ընթացքում աճել է մի քանի հարյուր հազարով, XVIII–XIX դարերում՝ 5-10 մլն-ով, իսկ ներկայումս՝ 80-85 մլն-ով:

ը) Մարդկության 70 %-ն ապրում է երկրագնդի տարածքի ընդամենը 7%-ի վրա:

թ) 1990-ական թթ. սկզբին Հայաստանը հայտնվեց շրջափակման մեջ:

ժ) Ենթադրվում է, որ մարդկության գոյության ամբողջ ժամանակահատվածում ծնվել է շուրջ 80 000 000 000 մարդ (73,5 մլրդ մարդ մահացել է, 6,5 մլրդ մարդ ներկայումս ապրում է):

ժա) Աշխարհի բնակչության թիվը 1830 թ.-ին կազմել է 1 մլրդ, 1960 թ.-ին՝ 3 մլրդ, 1987 թ.-ին՝ 5 մլրդ, 1999 թ.-ին՝ 6 մլրդ:

ժբ) Եթե XX դարի սկզբին աշխարհի բնակչության թիվը տարեկան ավելանում էր 10-15 մլն-ով, ապա 1982-ական թվականներին՝ 85-90 մլն-ով:

ժգ) Տարբեր դարերում հայերը գործածել են չափման տարբեր միավորներ՝ կանգուն (մոտ 46 սմ), ոտնաչափ (մոտ 30 սմ), փուլթ (մոտ 16 կգ), տաղանդ (մոտ 30 կգ), փարսախ/հրասախ (մոտ 5250 մ), գազ (մոտ 94 սմ) ևն, ընդ որում՝ տարբեր դարերում ու տարբեր գավառներում այս չափման միավորները տարբերվել են:

6. Ուղղե՛ք թվականների գրության սխալները:

ա) Դեռևս 1420-ական թթ. պորտուգալացիները իրականացրին առաջի գաղութային զավթումները աֆրիկյան ցամաքում:

բ) Երկու հազար ութը թվականին աշխարհի բնակչության ընդհանուր թվում երեխաները կազմել են 28,0%, աշխատանքային տարիքի մարդիկ՝ 64,6%, իսկ ծերերը՝ 7,4%:

գ) Նոյեմբերի տասնինից քսանմեկը կղիտվի առանց տեղումների եղանակ, հնարավոր է մառախուղ: Օդի ջերմաստիճանն օրվա I-ին կեսին կբարձրանա:

դ) Հայ մանրանկարչությունը տասներկուերորդ դարի վերջին քարոդդում և հատկապես տասներեքերորդ դարում մեծ վերելք ապրեց: 12-րդ դարի II-րդ կեսից և 13-րդ դարում բացվում են Սկևռայի, Ակների, Բարձրբերդի, Հռոմկլայի մանրանկարչական դպրոցները:

ե) Թորոս Ռոսլինը XII-րդ դարի կեսի կիլիկյան մանրանկարչության դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներից է: Պահպանվել են Թորոս Ռոսլինի յոթը ձեռագիր մատյաններ:

զ) Չեխ թենիսիստուհին դարձել է Ուիմբլդոնի կանանց մրցաշարի I-ին քառորդ եզրափակիչ դուրս եկած III-րդ մասնակիցը:

է) Մերկկիլի սերմերը կարմրաշագանակագույն են, ձվաձև, հազար սերմի կշիռը քսանչորսից-քառասունհինգ գրամ է:

ը) Լուսնային օրացույցում տարին բաժանվում է տասերկու ամիսների, որոնք բաղկացած են մեկընդմեջ քսանինը կամ եռեսուն օրից:

7. Խմբավորե՛ք դերանուններն ըստ խոսքիմասային նշանակության (գոյականական, ածականական, թվականական, մակբայական):

ա) Միմյանց, այսքան, ես, նրանք, ոմանք, մենք, յուրաքանչյուրը, նույնպես, ամեն ինչ, ողջ, իրենք, սա, ոչ մեկը, դուք, նա, իրար, ոմն, նույնպիսի, դա, ամբողջ, ոչ ոք, մեկմեկու, այսպես, ինքը, նույնքան, ամբողջ, մյուս, միևնույն, ինչու, այլ, քանիսը, այսչափ, ինչ-որ, իրենք:

բ) Մի երկու, ոչինչ, երբևէ, ամենքը, ամենայն, համայն, սույն, ինչ, այսպես, ուրևիցե, այդպես, բոլոր, որքան, այնչափ, ինչչափ, այս, ինչպես, ինչ-ինչ, նման, մի, որևէ, այստեղ, նույնպիսի, յուրաքանչյուր ոք, ուրիշ, ամեն մեկը, դու, ով, երբ, սույն, ողջ, որ, որտեղ, քանի, որերորդ, այն:

8. Ինքը դերանվան տարբեր հոլովաձևերը կիրառե՛ք նախադասությունների մեջ:

9. Ընդգծե՛ք ճիշտ տարբերակը. եթե կա գուգաձևություն, նշե՛ք:

ա) -Իմ//ինձ համար ի՞նչ էս բերել,- խորամանկ ժպիտով հարցրեց փոքրիկը:

բ) Հայազգի անվանի քիմիկոս Իվան Ապրահամյանը նշեց, որ սուպրամոլեկուլային բնագավառում մրցանակ ստանալը իր//իրեն համար մեծ պատիվ է:

գ) Աննան իր//իրեն համար խնդրի լուծման նոր տարբերակ է հորինել:

դ) Կասե՞ք, թե ձեզ//ձեր մոտից որ՞ ժամին է գնացքը շարժվում:

ե) Մեզանից//մեզնից յուրաքանչյուրը կարծում է, որ ինքը ինչ-որ բան//բաներ կարող է անել կյանքում՝ բացահայտելու համար տիեզերքի գաղտնիքները:

զ) Ես նեղացել եմ քեզանից//քեզնից:

է) Նրանց որոշ առաջարկները//առաջարկներ ինձ հետաքրքիր թվացին:

ը) Հարգելի՛ տիկին Պողոսյան, դուք//Ռուք մոռացել եք Ձեր//ձեր հեռախոսը:

թ) Քննարկմանը մասնակցում էին դասախոսներ, ուսանողներ, լրագրողներ և այլոք//այլք:

ժ) Մենք ուսումնասիրում ենք լեզուների որոշ առանձնահատկությունները//առանձնահատկություններ:

ժա) Մեզանում//մեզում ընդունված է լույն ուղտ սարքել:

ժբ) Բոլոր//ողջ ժողովուրդը դժգոհ է և բողոքում է:

ժգ) Յուրաքանչյուրս պարտավոր եմ//պարտավոր ենք հոգ տանել շրջակա միջավայրի մասին:

ժդ) Այստեղ շատ մարդ կա. որոշները//ոմանք հանգստանում են, որոշները//ոմանք՝ մասնակցում ծառատունկին:

10. Կազմե՛ք ստացական հոգնակիի ձևեր՝ բառակապակցությունների դերանունները փոխարինելով ստացական հոդերով: Օր.՝ **մեր ձեռքերը-ձեռքներս:**

Մեր տները, նրանց գրքերը, ձեր ձայները, մեր ուսերին, ձեր գնալը, նրանց ձեռքերը, մեր գնալը, ձեր խելքը, իրենց խոսքերը, մեր ուշքը, նրանց սրտերը, ձեր աչքերը, մեր ուտելը:

Գ.1.12. ԲԱՅ: Գիտենք, որ բայերը գործողություն կամ եղելություն նշանակող բառեր են: Բայն ունի իր բնորոշ ձևը՝ ուղիղ ձևում՝ **-ել** կամ **-ալ** ածանց-վերջավորությունը: Բայը կարող է ձևափոխվել ըստ դեմքի, թվի, ժամանակի, եղանակի՝ կազմելով դիմավոր ձևեր: Բայի այդպիսի ձևափոխությունը կոչվում է **խոնարհում**: Բայի բոլոր դրական ձևերն ունեն իրենց ժխտական հակարժեքները, որոնք կազմվում են համապատասխան դրական ձևերից՝ **գրեցի - չգրեցի, ասում են - չեն ասում, կբաժանեն - չեն բաժանի, գնա՛ - մի՛ գնա** ևն:

Բայի գործածության մեջ ընդունված կանոններից չէղվելու, խոսքը ճիշտ կառուցելու համար պետք է իմանալ հետևյալը.

1. Կան տարբեր իմաստ արտահայտող բայեր, որոնք միմյանցից տարբերվում են միայն խոնարհիչով՝ **աղել - աղալ, գնել - գնալ, թվել - թվալ, ծփել - ծփալ, ծխել - ծխալ** ևն: Կամ դրանք կարող են լինել բառային տարբերակներ (**ափսոսել//ափսոսալ, ուստոստել//ուստոստալ**):

2. **-չ** սուկածանցով բայերը թվով քիչ են և անկայուն, թեև շատ գործածական են: Դրանցից **դիպչել, թռչել, կորչել, կպչել, փախչել, հանգչել** բայերը գրական լեզվում պահպանել են **-չ**-ներածանցով բայի հատկանիշները: Խոսակցական լեզվում հանդիպող **դիպչեցի, դիպչեց** և նման ձևերը գրական լեզվում գրեթե

գործածությունն չունեն և չեն հանձնարարվում: Երկու բայեր՝ **սառչել**, **ուռչել**, հանդիպում են գուգաձևություններով: **Սառչել** բայի համար գործածվող տարբերակային ձևեր են՝ **սառեցի/սառչեցի**, **սառչում եմ/սառում եմ**: Գրական լեզվում հանձնարարելի են առաջինները: **Հալչել**, **փլչել**-ը ունեն նաև **-վ-** ածանցով կրկնասեռ տարբերակներ (**հալվել**, **փլվել**), որոնք կանոնական են և ավելի տարածված:

3. Սովորաբար հավելուրդային է լինում պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը՝ **խոսեցնել տալ**, **հիշեցնել տալ**: Այդ համատեղումը հնարավոր է, եթե չեզոք բայից կազմվում է ոչ միայն պատճառակերպ ներգործական բայ, այլև դրան տրվում է **պատճառական** բայի նշանակություն: Օր.՝ «Էներգահամակարգին նոր էլեկտրական հզորություններ **միացնել տալու** տեխնիկական պայմանների ապահովման կարգը ուժի մեջ է»:

4. **-եցն-** ածանց ստանում են **ե** խոնարհման պարզ, ինչպես նաև **-են-** սուկածանց ունեցող բայերը՝ **խմել** – **խմեցնել**, **հագենալ** – **հագեցնել**, **-ացն-** ածանցը ստանում են **ա** խոնարհման պարզ և **-ան-**սուկածանց ունեցող բայերը՝ **խաղալ** – **խաղացնել**, **հեռանալ** – **հեռացնել**, **-ցն-** ածանցը ստանում են **-ն-** և **-չ-** սուկածանց ունեցող բայերը՝ **հասնել** – **հասցնել**, **հագնել** – **հագցնել**, **թոչել** – **թոցնել**, **կորչել** – **կորցնել**՝ բացառությամբ մի քանի դեպքի՝ **իջնել** – **իջեցնել**, **հալչել** – **հալեցնել**, **սառչել** – **սառեցնել**, **ուռչել** – **ուռեցնել**: Միավ են պատճառական ածանցով բայերի անցյալ կատարյալի ավելորդ **-եց-**ով կեղծ գրական ձևերը՝ **խաղացրեցի**, **թոցրեցի**, **մոտեցրեցի**: Ճիշտ ձևերն են՝ **խաղացրի**, **թոցրի**, **մոտեցրի**:

Խոսակցական լեզվում **ե** խոնարհման պարզ բայերից հաճախ պատճառական են կազմում ոչ թե **-եցն-** ածանցով՝ **խոսեցնել**, **քնեցնել**, **բռնեցնել**, **զժվեցնել**, **հաչեցնել**, **երգեցնել** ևն, այլ **-ացն-** ածանցով (**խոսացնել**, **քնացնել**, **հարմարացնել**, **հաջողացնել**, **ծաղկացնել**, **վազացնել**, **հիշացնել**, **խմացնել**, **երգացնել** ևն), որոնք սխալ ձևեր են: Դրան հակառակ՝ **-ան-** սուկածանցով բայերից **-եցն-** ածանցով երբեմն կազմում են կեղծ գրական ձևեր՝ **մգանալ** > **մգեցնել** (**մգացնել**), **թարմանալ-թարմեցնել** (**թարմացնել**), **հնանալ** > **հնեցնել** (**հնացնել**), **դժվարանալ** > **դժվարեցնել** (**դժվարացնել**): Միավ ձևեր են նաև՝ **վախացնել** (**վախեցնել** < **վախենալ**), **սառացնել** (**սառեցնել** < **սառչել**), **հալացնել** (**հալեցնել** < **հալչել/հալվել**), **ուտացնել** (**կերցնել/ուտեցնել** < **ուտել**), ևն:

Կան դեպքեր, երբ **-եցն-** և **-ացն-** ածանցներով հոմանիշ բայահիմքերից կազմվում են գուգաձևեր՝ **սպիտակեցնել** (<սպիտակել) և **սպիտակացնել**

(<սպիտականալ), **նիհարեցնել** (<նիհարել) և **նիհարացնել** (<նիհարանալ), **հարթեցնել** (<հարթել) և **հարթացնել** (<հարթանալ): Երկրորդ տարբերակները հնարավոր է դիտել նաև որպես սխալ կազմություններ՝ **սպիտակել, նիհարել, հարթել** ձևերից:

Սովորաբար պատճառական բայերի պես են խոնարհվում **հարցնել, վերցնել, լցնել, եզրակացնել** բայերը (հարցրի, հարցրիր, հարցրեց, հարցրինք, հարցրիք, հարցրին), որոնք պատճառական ածանց չեն պարունակում և միայն արտաքուստ են նման պատճառական բայերին՝ **պատճառակերպ** բայեր են:

5. Մի շարք բայերի ենթակայականի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **ուսանող, ծնող, ընտրող, հարբեցող, մատուցող, ասմունքող, գրող, ուրացող**: Մի շարք դեպքերում **-ող**-ը պարզապես գոյականակերտ ածանց է՝ **լրագրող, ռադիոլսող, հեռուստադիտող, կինոսփրող** են:

Մի շարք բայերի հարակատարի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **արարած, կոտորած, հարված, հատված, խորոված, նշանած, հավելված**, կամ ածականների՝ **սոված, նեխած, ցնդած, զինված**: Մի շարք դեպքերում **-ած**-ը վերածվել է գոյականակերտ ածանցի՝ **դիպված, առեղծված, վարկած, հողված, զանգված, սոխառած, արկած, հասարակած**:

6. Բաղադրյալ ստորոգյալի կազմում իբրև ստորոգելի հանդես եկող հարակատար դերբայի հետ հանգույցը ժխտական ձևերում երբեմն սխալ է կազմվում: Հարակատարը կարող է գործածվել նաև որպես ձևաբայ՝ օժանդակ բայի հատկապես 3-րդ դեմքի հետ կազմելով, այսպես կոչված, հարակատար ժամանակ: Օր.՝ «Այդ մասին ոչինչ **չի գրված**»: Դրան համարժեք է բաղադրյալ ստորոգյալով կառույցը՝ «Այդ մասին ոչինչ **գրված չէ**», որտեղ նույն հարակատար դերբայը ստորոգելի է: Առաջինը գրական լեզվում հանձնարարելի չէ:

7. Համակատար դերբայի փոխարեն խոսակցական լեզվում հաճախ գործածվում է անորոշի բացառական հոլովածևը («Տուն **գնալիս** (<**գնալուց**) հանդիպեցի նրան»): Գրական լեզվում սա մերժելի երևույթ է:

8. Հարկադրական եղանակի բայաձևերի ժխտականում **չ** մասնիկը սովորաբար դրվում է **պիտի** (**պետք է**) եղանակիչի վրա՝ **չպիտի** երգեմ, **չպետք է** ասի, բայց կարող է դրվել նաև բայաձևի հիմնական մասի վրա՝ պիտի **չերգեմ**, պետք է **չասի**:

9. Հրամայական եղանակի ժխտականը՝ արգելական հրամայականը կազմելիս **մի՛** ժխտական մասնիկն ավելանում է բոլոր բայերի դրական հրամայա-

կանի ձևերի վրա՝ **գրի՛ր - մի՛ գրիր, կարդա՛ - մի՛ կարդա, հագի՛ր - մի՛ հագիր, խաղացե՛ք - մի՛ խաղացեք, խոսեցրե՛ք - մի՛ խոսեցրեք** ևն:

Ե խոնարհման պարզ և կրավորական բայերի հրամայականի դրական խոնարհման հոգնակիում **-(եց)եք**-ով վերջացող ձևերը՝ **գրե՛ք** կամ **գրեցե՛ք**, արգելականում ունենում են **-եք** վերջավորությունը՝ **մի՛ գրեք, մի՛ խաբվեք**: Միայլ են ավելորդ **-եց**-ով ձևերը՝ **մի՛ գրեցեք, մի՛ խաբվեցեք**:

10. Ժամանակաձևերը խոսքաշարում կարող են արտահայտել այլևայլ իմաստներ՝ երբեմն փոխարինելով միմյանց ոճական յուրահատուկ նրբերանգներով: Օր.՝ ներկա ժամանակը կարող է նշանակել՝ **1.** անցյալում կատարված-ավարտված գործողություն՝ պատմական ներկա («Այնուհետև Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը **սկսում են** «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը»), **2.** մոտ ապագայում կատարվելիք գործողություն («Երկու օրից **մեկնում եմ** գործուղման») ևն:

11. Հարադիր բայերի խոնարհման հարացույցում անվանական մասը միշտ մնում է անփոփոխ (**լաց** եղա, **լաց** կլինի, **լաց** լինող): Բաղադրյալ ժամանակաձևերի օժանդակ բայը և արգելական **մի՛** մասնիկը սովորաբար միջադասվում են հարադիր բային՝ վեր **եմ** կենում, **լաց եմ** եղել, թույլ **չենք** տա, մայր **չի** մտնի, դուրս **մի՛** արի (բացառություն է **մի՛ վեր կաց** ձևը): **Պիտի (պետք է)** եղանակիչը կարող է լինել թե՛ միջադաս, թե՛ առաջադաս՝ վեր **պիտի** կենամ, **պիտի** վեր կենամ, **լաց պետք է** լինի, **պետք է** **լաց** լինի:

Որպես կանոն՝ զուգահեռաբար խոնարհվում են զուգադրական բայերի երկու բաղադրիչներն էլ՝ **կերավ - խմեց, կտանի - կրերի, ասե՛ք - խոսե՛ք**:

Հարակատար և ենթակայական դերբայների թեք (հոլովված) ձևերը սովորաբար կազմվում են միայն երկրորդ բաղադրիչի փոփոխությամբ՝ **բերող-տանողները, բերած-տարածի, բերող-տանողից, բերած-տարածից**, իսկ անորոշ դերբայի դեպքում առաջին բաղադրիչը նույնպես կարող է թեքվել՝ **ասել(ով)-խոսելով, ասել(ու)-խոսելու, ասել(ուց)-խոսելուց, ասել(ում)-խոսելում**:

Համակատար դերբայով զուգադրական բայերից (**ասելիս-խոսելիս**) առաջինը կարող է լինել առանց **-իս-ի**, որը երկու բայի համար դառնում է ընդհանուր մասնիկ՝ **ասել-խոսելիս**:

12. Անկանոն բայեր: Բանալ, բառնալ, կենալ բայերը ներկայումս հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն գործածվում են **բացել, բարձել, մնալ** բայերը. վերջին երկուսը կանոնավոր են:

Մի շարք անկանոն և պակասավոր բայերի անցյալ կատարյալի գուգաձևերից (**ասացի//ասի, արեցի//արի, բացեցի//բացի, բերեցի//բերի, դրեցի//դրի, թողեցի//թողի, լացեցի//լացի, տվեցի//տվի**) գրական լեզվում գործածական և հանձնարարելի են առաջինները՝ անցյալի ցոյական հիմքից կազմված ձևերը: Երկրորդները ունեն ընդգծված խոսակցական երանգ: **Ասել** բայի անցյալ կատարյալի ձևերը ձգտում են խոնարհման կանոնավոր ձևերին՝ **ասեցի, ասեցիր, ասեցին** են. սրանք առայժմ ավելի բնորոշ են խոսակցական լեզվին:

Ածանցավոր և անկանոն բայերի առանձնահատկությունները դրսևորվում են հիմնականում հրամայականում, անցյալ կատարյալում և վաղակատար, հարակատար, երբեմն նաև ենթակայական դերբայների ձևերում (**տեսնել - տե՛ս, տեսա, տեսել (եմ), տեսած** են):

13. Կան բայեր, որոնք **կրկնասեռ** (երկսեռ) են: Միայն համատեքստում կարելի է որոշել՝ բայը կրավորակա՞ն է, թե՞ չեզոք, չեզո՞ք է, թե՞ ներգործական: Այդպիսի բայերից են՝ **ապրել, բացվել, սովորել, աշխատել, նայել, բաժանվել, գլորվել, հուզվել, պոկվել, ցնցվել** են: Օր.՝ «Դրամապանակը **գտնվեց**» (կրավ. սեռ): «Ես **գտնվում եմ** Երևանում» (չեզ. սեռ): Կամ՝ «Ծանր օրեր **ապրեց**» (ներգ. սեռ): «**Ապրում է** Երևանում» (չեզ. սեռ):

Վարժություններ և առաջադրանքներ

1. Առանձին սյունակներով դո՛ւրս գրեք պարզ և ածանցավոր բայերը. որոշե՛ք, թե դրանք որ խոնարհման են պատկանում:

Մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը մարդը դեռևս չէր կարողացել հաղթահարել Երկրագնդի ձգողական ուժը և հնարավորություն չէր ունեցել թափանցելու տիեզերական ազատ տարածություն, լինել երկնային մարմինների վրա, անմիջականորեն հետազոտել այդ մարմինների բաղադրության մեջ մտնող քիմիական տարրերը: Նրանց քիմիական կազմության միակ լրաբերը լույսի ճառագայթն էր:

Բայց մարդկային հանճարը ալիքային այդ նեղ լուսամուտից քամեց զարմանալիորեն շատ տեղեկություն: Տակավին 17-րդ դարի կեսին՝ 1666 թ., Իսահակ Նյուտոնը նկատեց, որ ապակյա եռանկյուն հատվածակողմով (պրիզմա) անցնող ճառագայթները պատի վրա ծիածանանման մի լուսակ (սպեկտր) են առաջացնում: Նյուտոնը կռահեց, որ լույսի ճառագայթների փունջը, որը գալիս է Արեգակից, կազմված է ալիքի տարբեր երկարություն ունեցող ճառա-

գայթներից, որոնք տարբեր չափով են բեկվում ապակյա հատվածակողմում: Փաստորեն այստեղից էլ սկսվեց ճառագայթների գունակազմական վերլուծությունը, որը երկնային մարմինների ճանաչման մի հզոր ու անփոխարինելի միջոց դարձավ (ՀԳ):

2. Առանձնացրե՛ք ածանցավոր բայերն ըստ տեսակների (սուկածանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական):

ա) Անվանել, գծվեցնել, գտնել, թռչնել, երկնչել, զանազանել, զբոսնել, իջնել, որոնել, հասցնել, հայտնել, հորինել, հիմնել, հասնել, տեսնել, օթևանել, ելնել, մթնել, մեկնել, դեղնել, խթանել, յուղոտել, հագնել, ճանաչել, զեղչել, կանչել, թռչել, շնչել, գոչել, հնչել, գրվել:

բ) Եզրապատել, կոտրատել, ընդհատել, վանկատել, փախցնել, կոչել, կորչել, շառաչել, սիրվել, թռչկոտել, մոտեցնել, կտրատել, վրդովվել, ներկոտել, բոցկլտալ, մտնել, դիպչել, ճխլտել, խաղացնել, հեռանալ, քնեցնել, արագացնել, պոկոտել, մոտենալ, փախչել:

3. Կազմե՛ք հետևյալ բայերի պատճառականը (ածանցով կամ տալ բայի հարադրությամբ):

ա) Խոնավանալ, մոտենալ, թռչել, վերանալ, իջնել, գրել, մոռանալ, մերձենալ, մորթել, հասնել, թարմանալ, փախչել, նվազել, կորչել, մզանալ, խաղալ, սպիտակել, տափակել:

բ) Մտնել, վազել, նստել, երկարել, կարճանալ, նկարել, հնանալ, սառչել, կպչել, հասկանալ, դադարել, մոլորվել, հաշտվել, պոկել, հաչել, ուտել, սատկել, տափականալ, կազմել:

4. Գտե՛ք սխալ բայաձևերը, ուղղե՛ք և բացատրե՛ք:

ա) Խոսացած, դիպչեցինք, խստացնել, հարցրեցի, մուրացող, խլացնել, հանգչեց, վիճվել, մի՛ գրեցեք, թռչի՛ր, խաչակնքվել, քծնել, սառում են, սրդողաց, խնդրվել, ասեց:

բ) Հաջողացրեցինք, բուրող, ուռչած, կպչի՛ր, տուժված, փախչել է, ուտեցնել, մոտեցրա՛, կպնելիս, կապնվել, բոնվեց (կատչեց), մի՛ կորի, ճաքճքված, զանգվել, աշխատեցնել:

5. Ընտրե՛ք ճիշտ տարբերակները:

Մգացնել - մգեցնել, խոնավեցնել - խոնավացնել, թարմեցնել - թարմացնել, քնացնել - քնեցնել, խոսացնել - խոսեցնել, կարճացնել - կարճեցնել, տափակացնել - տափակեցնել, նվազացնել - նվազեցնել, բարակեցնել - բարակացնել, կապտեցնել - կապտացնել, դեղնեցնել - դեղնացնել, բարդացնել - բարդեցնել, սովորեցնել - սովորացնել, հարթեցնել - հարթացնել, սառնեցնել - գժվեցնել - գժվացնել:

6. Տրված կապային կառույցները արտահայտե՛ք համապատասխան դերբայական ձևերով:

Խոսելու ժամանակ, գոռալու պատճառով, քայլելու ընթացքում, շատ քնելու պատճառով, գրելու ընթացքում, երկար կարդալու հետևանքով, (մի բան) հիշելու ժամանակ, (դասը) սովորելու ժամանակ, (բարձր) երգելու հետևանքով, աշխատելու ժամանակ, քայլելու պատճառով, ուտելու ժամանակ:

7. Կազմե՛ք տրված բայերի անցյալ կատարյալը, հաստատական և արգելական հրամայականները (եզ. և հոգն.):

ա) Թաքցնել, մտածել, խոսել, վերցնել, կոտրվել, մոտենալ, հյուսել, վերջացնել, սպասել, գրել, փախչել, նկարել, կարդալ, նայել, նշմարել, տեսնել, բարձրացնել, կայչել, հասցնել:

բ) Որոշել, գնալ, հեռացնել, մեծանալ, վախենալ, խաղալ, հիշել, նշել, թեթևանալ, զովանալ, կորչել, մնալ, արտագրել, թռչել, փախցնել, շրջել, իջնել, հարցնել:

8. Նշե՛ք, թե տրված նախադասություններում ինչ ժամանակ է ցույց տալիս՝

ա) անկատար ներկան.

1. Ամեն տարի հաշմանդամների թիվն աճում է:
2. Հիմա չեմ կարող գալ, գնում եմ համալսարան:
3. 1947 թ. Բյուրականի աստղադիտարանում ծնվում է աստղասփյուռների առաջացման տեսությունը:
4. Երեկ թերթ եմ կարդում ու մտածում՝ ով ենք մենք և ուր ենք գնում:
5. Արդեն տոմս եմ գնել. գիշերը թռչում եմ Բուդապեշտ:
6. Հենց հիմա բացում ես գիրքը ու դասերդ սովորում:
7. Լինում է, չի լինում մի թագավոր. թագավորն ունենում է երեք տղա:

բ) անցյալ կատարյալը.

1. Եթե չես գալիս, ես գնացի:
2. Երեկ հանդիպեցի գիտական ղեկավարիս, և կազմեցինք իմ աշխատանքային պլանը:
3. - Աննա՛, գնացինք քարտեզները բերելու, շո՛ւտ արա:
4. Արագ վեր կացաք ու դուրս գնացիք այստեղից, հասկացա՞ք:

9. Կազմե՛ք հետևյալ կանոնավոր և անկանոն բայերի անցյալ կատարյալը, հաստատական և արգելական հրամայականները (եզ. և հոգն.): Նշե՛ք գուգաձևությունները:

ա) Աղմկել, գտնել, փախչել, ծիծաղեցնել, մոտենալ, զգալ, հասցնել, իջնել, հասկացնել, կորչել, խոստանալ, հարցնել:

բ) Ասել, ուտել, անել, գալ, լինել, բացել, դնել, տալ, թողնել, տեսնել, վեր կենալ, դառնալ, վերցնել, լվանալ:

10. Տրված կրկնաձև բայերով կազմե՛ք երկուական նախադասություն՝ դրանք կիրառելով տարբեր սեռերի նշանակությամբ:

Օր. 1. «Նա օտար լեզուն հեշտությամբ սովորեց» (ներգ. սեռ): 2. «Տղան ջանասեր է և լավ է սովորում» (չեզ. սեռ):

Կարդալ, ապրել, նայել, ծաղկել, խոովել, սկսվել, բաժանվել, ցնցվել, բացվել, հավվել:

11. Փակագծերում տրված բառերը անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով՝ լրացրե՛ք համապատասխան տեղերում:

1. դեպի օվկիանոս ամեն տարի միջոցով 20-25 միլիարդ տոննա զանազան նյութեր՝ նստելով

(գետ, հատակ, տեղափոխել, ցամաք)

2. Ցանկացած կամ հավաքույթի ես այնպիսի եմ ընտրում, հետ ճանապարհը հետաքրքիր կանցնի:

(անձ, ով, արշավ, գնալ)

3. Քաղաքակիրթ երկրներում մշակույթի ու մշակութային գործունեությանն կառույցներ են գործում, սակայն մոտ այդպիսի կառույցներ դեռ չեն

(աջակցել, նախարարություն, ուրվագծել, ես)

4. նատրիումական աղը անհոտ է և անհամ, արագ խոնավությունը, ջրում՝ օպալեսցենտով լուծույթներ:

(առաջանալ, գլիկուլաթթու, ուռչել, կլանել)

5. Գիշերը, շերտերն արագ , սեղմվում են, իսկ շերտերը մնում են տաք և առաջացնում

(սառչել, ստորին, մակերևութային, ճեղքվածք)

6. Բացի, քամին ժամանակ մեխանիկական մեծ աշխատանք է կատարում, մանավանդ չոր կլիմա և աղքատ բուսածածկ

(ունենալ, հողմահարում, տարածք, դա)

7. Դոնդողանյութը ջրում` կոլոիդ լուծույթ, դառնում է դոնդող, երբ :

(առաջանալ, լուծել, սառչել, որ)

8. մեծ մասը դիմացկուն է քիմիական շատ նյութերի պայմաններում. այդ պատճառով նրանք կարող են որպես շրջակա միջավայրի ... ցուցանիշներ:

(ազդեցություն, օգտագործել, ադսորբացում, մեղու)

9. Վտանգավոր, ազոտի երկօքսիդի և այլ պարունակությունը Երևանի, Հրազդանի օդային գերազանցում է սահմանները:

(նյութ, ածխաջրածին, ավազան, թույլատրել)

10. Նատրիումի ալգինատը, փրփուրի, լայնորեն կիրառվում է ատամի մածուկներում` նրանց անհրաժեշտ

(մածուցիկություն, նպաստել, առաջացում, ապահովել)

Գ.1.13. Մակբայների գործածության յուրահատկություններ:

1. **Ամենևին, բնավ, բոլորովին, դույզն-ինչ, երբեք, էլ, այլևս** մակբայները գործածվում են միայն ժխտական բայերի հետ` **ամենևին հարկ չկա, բոլորովին հարմար չէ** ևն:

Արևմտահայերենում **այլևս** մակբայը **արդեն** իմաստով գործածվում է նաև դրական խոնարհման բայերի հետ` «Ես և իմ քոյրս այլևս Հայկազեան կը սորվինք»: Հավանաբար այդ ազդեցությամբ արևելահայերենում սկսել ենք գործածել նաև **այլևս + դրական խոնարհում** կառույցը` «Դա **այլևս** կատարված իրողություն է»: Գրական արևելահայերենում այս գործածությունը հանձնարարելի չէ:

2. Որոշ մակբայներ կարող են հոլովվել` **հեովից, մոտիկից, երեկվանից, վաղը չէ մյուս օրից, այսօրվա, ներսում** ևն:

3. Մակբայների մի մասը կարող է գործածվել ածականաբար՝ կատարելով որոշիչի դեր՝ **բավական եկամուտ, միաձայն որոշում, ցմահ բանտարկություն, շտապ օգնություն, եռակի հերոս, շտապ եզրակացություն, արագ ընթացք** ևն:

4. Մակբայների մի մասը կարող է լինել ոչ միայն բայով արտահայտված, այլև ածականով, մակբայով, իսկ չափի որոշ մակբայներ՝ նաև թվականով արտահայտված անդամի լրացում՝ **ներկայումս գործազուրկ, ներքուստ հպարտ, մասամբ հայտնի, մոտավորապես վաթսուն, գրեթե հարյուր, հազիվ երկու** ևն:

Գ.1.14. Կապերի գործածության յուրահատկություններ:

1. **Շնորհիվ, արդյունքում, պատճառով և հետևանքով** կապերն ու կապական բառերը, նշելով հիմունքի, պատճառի, հետևանքի իմաստներ, միաժամանակ վերաբերմունք են արտահայտում. առաջին երկուսը՝ դրական, վերջին երկուսը՝ չեզոք կամ բացասական: Մեկը մյուսի փոխարեն գործածվելիս առաջանում է իմաստային անճշտություն: Անճիշտ են հետևյալ նախադասությունները՝ «Քաղցրահամ ջրերի անհամաչափ բաշխվածության **արդյունքում** աշխարհի բնակչության ավելի քան 20%-ը խմելու ջրի մեծ պակաս ունի»: Ընդգծված բառի փոխարեն պետք է գործածվեր **հետևանքով** հոմանիշը: Այլ օրինակներ՝ «Հարավային կիսագնդում ուժգին քամիների **շնորհիվ** (<պատճառով) 40°-ի լայնության տակ այնպիսի ալիքավորում է առաջանում, որ նավապետները խուսափում են այդ լայնությունից»: «Բնության կարգավորիչ համակարգի **հետևանքով** (<շնորհիվ) օդում պահպանվում է թթվածնի ամենաբարենպաստ (օպտիմալ) քանակը»:

2. **Հետ, մոտ, վրա, համար, պես, նման** կապերը **ես, դու, մենք, դուք** դերանունների հետ կապակցվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովածներով՝ **ինձ նման, մեզ պես, քեզ հետ, ձեզ վրա** ևն: **Մոտ, վրա** կապերի թեք ձևերի հետ նշված դերանունները լինում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, ձեր վրայով** ևն:

3. Մի շարք կապեր և կապական բառեր՝ **առաջ, բացի, ի վեր, իբրև, ինչպես, որպես, հետո, անց**, պահանջում են տարբեր հոլովներով կապվող բառ՝ մեկ ժամ առաջ//դրան առաջ, օրեր անց//քսանից անց, փողոցն ի վեր//նրան տեսնելուց ի վեր ևն:

4. Թեք հոլովներով կապվող բառ պահանջող մի շարք կապեր և կապական բառեր(**առանց, առթիվ, չափ, նախքան, որպես, չհաշված, մասին, բացի, ժա-**

մանակ նն) գործածվում են **այս, այդ, այն** ցուցական դերանունների նաև ուղիղ ձևերի հետ՝ բացի **այդ, այն** մասին, առանց **այդ էլ, այն** ժամանակ:

5. **Հանձինս** կապը պահանջում է **հոգնակի թվով խնդիր** կամ **կապի բազմակի խնդիր՝ հանձինս** աշխատակիցների, **հանձինս** տնօրենի և փոխտնօրենի, իսկ **հանձին** կապը՝ եզակի թվով կապի խնդիր՝ **հանձին** տնօրենի:

6. **Ի թիվս** կապը պահանջում է հոգնակի թվով կապի խնդիր՝ **ի թիվս սովորողների, ի թիվս այլոց**:

7. Կապերի մեծ մասը տրոհում չի պահանջում: Հիմունքի և զիջման կապերով (**ըստ, համաձայն, նայած, չնայած, հակառակ**) ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից սովորաբար տրոհվում են միջադաս դիրքում ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բուրով՝ «Մենք, **համաձայն** պայմանավորվածության, մեկնեցինք վաղ առավոտյան»: «**Ըստ** պայմանավորվածության՝ մեկնեցինք վաղ առավոտյան»: «Խնդիրը լուծված է՝ **համաձայն** մաթեմատիկական ինդուկցիայի սկզբունքի»: Այդպես կարող են տրոհվել նաև բացառման որոշ կապերով (**առանց, բացառությամբ, բացի, փոխանակ**) ձևավորված անդամները: **Բացի** կապով ձևավորված անդամները կարելի է ստորակետով տրոհել ցանկացած դիրքում՝ «**Բացի քեզնից, ոչ ոքի չեմ ճանաչում**»: «Չեմ ճանաչում ոչ ոքի, **քեզնից բացի**»: «Ես, **քեզնից բացի, ոչ ոքի չեմ ճանաչում**»: Առաջադաս և վերջադաս դիրքերում նախընտրելի է բուրով տրոհումը: «**Բացի Մերկուրիից և Վեներայից**՝ բոլոր մոլորակների շուրջ պտտվում է առնվազն մեկ արբանյակ»: «Բոլոր մոլորակների շուրջ պտտվում է առնվազն մեկ արբանյակ՝ **բացի Մերկուրիից և Վեներայից**»:

8. **Ի դեմս** կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով (բայց միայն անձնանիշ կամ անձի առումով վերցված) գոյականների հետ՝ **ի դեմս գործընկերների/ի դեմս գործընկերոջ, բայց ոչ՝ ի դեմս հրամանագրի: (Ի թիվս, ի փառս, ի հեճուկս, ի դեմս** կապերը չունեն առանց **ս** վերջնամասնիկի ձևեր):

9. **Հետ** կապը **ծանոթանալ** բառի հետ գործածվելիս արտահայտում է փոխադարձության իմաստ: Եթե կապվող բառը իրի անուն է, ապա, պարզ է, փոխադարձության մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար այդ դեպքում գոյականը պետք է գործածել միայն տրական հոլովով՝ առանց **հետ** կապի, ինչպես՝ «Ձկների մարմնի **կառուցվածքի հետ** (<=**կառուցվածքին**) կարելի է ծանոթանալ ոսկրային ձկների դասի օրինակով»:

10. Բացի կապը պահանջում է բացառականով, իսկ **բացառությամբ** կապը՝ տրականով կապվող բառ՝ **բացի միջուկից, բացառությամբ միջուկի**: **Բացի**-ն դրվում է կապվող բառից և՛ առաջ, և՛ հետո՝ **բացի նշվածից // նշվածից բացի**:

11. Առանց կապը պահանջում է տրական հոլովով կապվող բառ՝ **առանց պատասխանի, առանց զգուշացման** կամ **զգուշացնելու** (սխալ է՝ առանց պատասխան, առանց զգուշացնել):

Գ.1.15. Շաղկապների գործածության յուրահատկություններ:

1. Նախադասության մեջ հաճախ իրար կողքի կարող են հայտնվել համադասական և ստորադասական կամ երկու ստորադասական շաղկապներ՝ «Պարզ է, **որ եթե** գլոբալ տաքացումը շարունակվի, ապա հետևանքները կլինեն ծովի մակարդակի բարձրացումը, մթնոլորտային տեղումների քանակի և բնույթի փոփոխությունը, անապատների աճը»: Նման դեպքերում շաղկապների միջև երբեմն կարելի է ստորակետ դնել՝ «Զարթնեցի **և, որովհետև** շատ շուտ էր, նորից քնեցի»:

Կրկնադիր շաղկապներով կապակցված համագոր անդամներն իրարից անջատվում են ստորակետով, բացի այն դեպքից, երբ կապված են նաև **և** կամ **ու** շաղկապով. կրկնադիր շաղկապները ստանում են շեշտ՝ «Ողնաշարավորները կարող են տեղափոխվել մեծ տարածություններ. կան **և՛** ջրային, **և՛** կիսաջրային, **և՛** ցամաքային, նույնիսկ թռչող տեսակներ»: «Թթվային տեղումները առավել ծանր հետևանքներ են թողնում **թե՛** հողային, **թե՛** ջրային և **թե՛** անտառային էկոհամակարգերի վրա»:

2. Թե, թե չէ, եթե...., ապա շաղկապները և՛ համադասական են, և՛ ստորադասական. **թե** համադասական շաղկապը գործածվում է երկրնտրական կապակցություններում՝ «Տեսողությունն օգնում է մարդուն տարբերել մարմինների ձևը, չափերը, գույնը, իմանալ՝ հեռո՞ւ, **թե՞** մոտիկ են գտնվում դրանք, շարժվո՞ւմ են, **թե՞** անշարժ են», կամ որպես միավորիչ շաղկապ՝ «Յուրաքանչյուր աստմի պրոտոն **թե** էլեկտրոն օժտված են նույն լիցքով, այդ իսկ պատճառով մարմիններն էլեկտրաչեզոք են»: «**Եթե** մարդը անգամ Երկրագնդի խորքը թափանցելու հնարավորություն չունի, **ապա** հզոր աստղադիտակները կարող են թափանցել տիեզերքի խորքը միլիարդավոր լուսատարի հեռավորության վրա»: **Թե չէ** ստորադասականը ունի **հենց** շաղկապի իմաստ՝ «Գետերի վարարումը սկսվեց **թե չէ**, հողագործական աշխատանքներն ընդհատվեցին»: **Թե չէ** համադասականը տրոհական իմաստով է գործածվում՝ «Խո-

սի՛ր, **թե չէ** հետո ուշ կլինի»: Ինչպես տեսնում ենք, կա նաև դիրքային տարբերություն:

3. Թե, որ հումանիշ շաղկապներից **որ**-ը հաստատական նշանակություն ունի, օր.՝ «Պարզվում է, **որ** կենդանիների և բույսերի շատ տեսակներ բնաջնջվել են առանց մարդու ազդեցության», **թե**-ն՝ առավելապես երկրայական, ենթադրական՝ «Չի կարելի պնդել, **թե** գիտությունը հաջողվել է վերջնականապես ճանաչել ատոմի ներքին կառուցվածքի բոլոր օրինաչափությունները»: Հարցական դերանուն պարունակող երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է **թե** շաղկապով՝ «Չեմ կարող ասել, **թե** նա ինչով է զբաղված»: Չի հանձնարարվում՝ «Ասաց, **թե** գալու է»:

4. Որ և որպեսզի շաղկապները իրար կարող են փոխարինել միայն այն դեպքում, երբ գլխավորին են կապում նպատակի պարագա երկրորդական նախադասություն՝ «Ներկայացուցիչներ են եկել, **որ** (=որպեսզի) հարցի քննարկումը նախապատրաստեն»: Այլ դեպքերում **որպեսզի**-ն չի կարող փոխարինել **որ**-ին, ինչպես՝ «Կայծակի առաջացման համար անհրաժեշտ է (ի՞նչ), **որպեսզի** (<=>**որ**) ամպի փոքր ծավալի մեջ ձևավորվի էլեկտրական պարպում սկսելու համար անհրաժեշտ լարման էլեկտրական դաշտ»: «Առաջարկություն է եղել (ինչի՞), **որպեսզի** (<=>**որ**) ատենախոսության քննարկումը հետաձգվի»:

5. Ոչ թե... այլ, ոչ միայն... այլև գուգաղիր շաղկապներն ունեն իմաստային և կիրառական տարբերություններ: Դրանց երկրորդ բաղադրիչները (այլ, այլև) երբեք չեն կարող իրար փոխարինել: Հետևաբար պետք է գրել՝ «Ֆոսֆորային թթուն **ոչ թե** եռահիմն է (ինչպես կարելի է եզրակացնել նրա քիմիական բանաձևից՝ H_3PO_3), **այլ** երկհիմն է»: Բայց ոչ երբեք՝ «Ֆոսֆորային թթուն **ոչ թե** եռահիմն է....., **այլև** երկհիմն է»: Կամ՝ «Տիեզերագնացության զարգացման շնորհիվ **ոչ միայն** հնարավոր եղավ Լուսնից ապարների նմուշներ բերել, **այլև** մարդը կարողացավ ոտք դնել Լուսնի վրա»: Բայց ոչ երբեք՝ «..... **ոչ միայն** հնարավոր եղավ Լուսնից ապարների նմուշներ բերել, **այլ** մարդը կարողացավ ոտք դնել.....»: (Հիշենք նաև, որ ճիշտ չէ **ոչ թե... այլ** շաղկապի **այլ** բաղադրիչի վրա բութ դնելը):

6. Ստորադասական շաղկապները կարող են զեղչվել: **Որ, թե, եթե, ինչ** շաղկապների զեղչման դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև բութ է դրվում՝ անկախ դրանց շարադասությունից: Օր.՝ «Էլեկտրաչափի գնդին մետաղե քանոնով դիպչելիս պարզվում է՝ գնդի լիցքը հենց քա-

նոնի միջոցով անցնում է մեր մարմնին»: «Երկրից դիտողին թվում է՝ Արեգակը և Լուսինը մոտավորապես նույն չափերն ունեն»:

7. Երբեմն **սակայն** շաղկապը վերաբերականի նշանակություն է ստանում, երբ լինում է միջադաս դիրքում, և ստորակետերով տրոհվում է որպես միջանկյալ բառ՝ «Բարձր աղմուկը նկատելի վնաս է հասցնում մարդու առողջությանը. բացարձակ լռությունը, **սակայն**, կարող է հոգեպես խիստ ճնշել մարդուն»:

Գ.1.16. Վերաբերականների և ձայնարկությունների գործածության յուրահատկություններ:

1. Հաճախ որպես վերաբերական գործածվում են նաև մի շարք այլ բառաձևեր ու կապակցություններ՝ **ասենք թե, հասկանալի է (որ), հաճելի է (որ), ցանկալի է (որ), ասում են (թե), ասվում է (որ), նշվում է (որ), հարց չկա, ոչ մի խնդիր, բայց և այնպես, չի կարող պատահել (որ), ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի** ևն:

2. Նախադասության մեկ անդամի նշանակությունը եղանակավորող վերաբերականները չեն տրոհվում՝ «Դու **կարծես** լավ չես զգում քեզ»: «**Հենց** դա էի ուզում»: Ամբողջ նախադասության իմաստը եղանակավորողները մեծ մասամբ տրոհվում են՝ իբրև միջանկյալ բառեր՝ «Դուք, **իհարկե**, պատասխան կատանաք»: «**Ի դեպ**, ես այդ մասին գիտեի»:

3. **Մի թե, չլինի՞ (թե), չէ՞ որ, ի՞նչ արած, ինչպե՞ս չէ** վերաբերականները միշտ գրվում են հարցական նշանով, իսկ **այո՛, ո՛չ, չէ՛, ա՛յ, դե՛հ** վերաբերականները՝ շեշտով:

4. Մեկնական որոշ վերաբերականներ սկզբից տրոհվում են ստորակետով, վերջից՝ բույծով՝ **մի խոսքով, ասենք, ավելի ճիշտ** (երբեմն էլ՝ **այսպես ասած**):

5. Սաստկական **այն էլ** վերաբերականը (երբեմն էլ՝ **մանավանդ, նամանավանդ, անգամ, մինչև անգամ, մինչև իսկ, նույնիսկ**) ստորակետով է տրոհվում միայն սկզբից՝ «Իհարկե եկել էր, **այն էլ** շքախմբով»:

6. Վերաբերականի արժեք ունեն նաև որոշ կարգի խոսքային բանաձևեր՝ **ողջո՛յն, բարի լո՛յս, շնորհակալություն՝ ւն, ներողություն՝ ւն**, հուզական արտահայտություններ՝ **կեցցե՛ս, Աստվա՛ծ իմ, գրո՛ղը տանի**:

7. Զգացական ձայնարկությունների ճշգրիտ նշանակությունը դրսևորվում է միայն խոսքաշարում: Օր.՝ **վա՛յ** ձայնարկությունը կարող է արտահայտել

մերթ **ցավ** («Վա՛յ, ցավում է ոտքս»), մերթ **վախ** («Վա՛յ, չբարձրանաս, հանկարծ կընկնես»), մերթ **զարմանք** («Վա՛յ, դու որտեղի՞ց հայտնվեցիր»), մերթ **դժգոհություն** («Վա՛յ, այս ի՞նչ արիր, ամեն ինչ փչացրիր»), մերթ **հանդիմանություն** («Վա՛յ քեզ, այսպե՞ս ես սովորել դասդ»), **սպառնալիք** («Վա՛յ նրան, ով կհամարձակվի ծպտուն հանել»):

8. Տևական արտասանվող ձայնարկության երկարացվող հնչյունը կարող է գրվել երկու կամ ավելի տառերով՝ **ճը՛ռռ, էհէէ՛յ**:

9. Ձայնարկությունը սովորաբար ստորակետերով անջատվում է նախադասությունից՝ «**է՛յ**, փոքրի՛կ, արի՛ այստեղ»: «**Ա՛**, հասկացա...»: Եթե ձայնարկությունը կոչականին է վերաբերում, ապա նրանից չի տրոհվում և նրա հետ միասին ստանում է մեկ ընդհանուր առոգանության նշան՝ «**Ա՛յ սիրելիս**, այս ի՞նչ ես անում»:

10. Ձայնարկությունը կարող է ունենալ լրացումներ՝ դառնալով յուրատեսակ միջանկյալ բառակապակցության գերադաս անդամը՝ «**Վուշ-վո՛ւշ**, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ, **Վո՛ւշ** քու սերին, քու յարին...»:

11. Նմանաձայնություններից ածանցներով կարող են կազմվել բայեր, գոյականներ, ածականներ՝ **տը՛զզ** – տզզալ, տզզոց, տզզան, **զը՛նզ** – զրնզալ, զրնզոց, զրնզան, զրնզուն:

12. Ձայնարկությունները ավելի շատ գործածվում են խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ, վերաբերականները՝ գիտական գրականության մեջ:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Գտե՛ք մակբայները, որոշե՛ք տեսակները:

1. Ինքնաբոցավառումը քիմիական ռեակցիայի արագության կտրուկ մեծացման երևույթն է:

2. Շիրային շարժումների միջոցով ցամաքային սալերը տեղ-տեղ տրոհվում են՝ մասնակիորեն հեռանալով իրարից:

3. Եթե էքզոթերմային ռեակցիան դանդաղ է ընթանում, անջատված ջերմությունն աստիճանաբար ցրվում է շրջապատող տարածության մեջ:

4. Քնած հրաբուխները վաղուց արդեն չեն գործում, բայց լիովին պահպանել են գործող հրաբխին բնորոշ ձևն ու կառուցվածքը:

5. Անհրաժեշտ է բույսը մինչև սերմնաշաքիլը մաս առ մաս ծածկել հողով՝ կողքերից ամուր սեղմելով, այնուհետև ցողել հեղուկացիրով և ծածկել ապակիով:
6. Երբ լուսային ճառագայթն ընկնում է երկու միջավայրերի բաժանման սահմանին, նրա էներգիան կարող է մասամբ անդրադառնալ, մասամբ կլանվել:
7. Եթե Երկրագունդն ի սկզբանե հրահեղուկ լիներ, ապա տարբերակումը (դիֆերենցիացիա) բավականին արագ կընթանար:
8. Արկտիկական ու անտարկտիկական գոտիները հիմնականում սառցածածկ են, և այստեղ կենսական գործընթացները շատ դանդաղ են ընթանում կամ կատարելապես բացակայում են:
9. Անկենսածին ճանապարհով օրգանական նյութի ստեղծումն այժմ էլ է տեղի ունենում, և այն համեմատաբար ուժգին է ընթացել մոլորակի զարգացման առաջին փուլում:
10. Նատրիումը բույսերի կողմից սակավ է օգտագործվում, բայց կենդանի օրգանիզմներին չափազանց անհրաժեշտ է:
11. Հանգիստ վիճակում գորտի լեզվի ազատ մասն ուղղված է ներս, իսկ որսին բռնելիս այն արագ կարող է դուրս նետվել բերանից:
2. **Տրված բառերով կազմե՛ք նախադասություններ՝ դրանք գործածելով մեկ որպես մակբայ, մեկ որպես ածական:**
Օր.՝ Պետք է դանդաղ բարձրանալ աստիճաններով (մակբայ):
Դանդաղ խոսքը երբեմն հոգնեցնում է (ածական):

Ակամա, բավական, հապճեպ, հեռու, միահամուռ, շտապ, վաղ, շատ, ցմահ, ուշ:

3. **Կազմե՛ք բառակապակցություններ՝ մոտ, վրա, նման կապերի թեք հոլովածներով և առաջին ու երկրորդ դեմքի անձնական դերանուններով:**
4. **Գտե՛ք կապային սխալ կառույցները և գրե՛ք ճիշտ ձևերը:**

Փոխարեն վերլուծելու, առանց ապացույց, ըստ իս, դրանով հանդերձ, ըստ այդմ, իմ հետ, ի հեճուկս, ըստ ինձ, քո հանդեպ, ձեր նման, ի թիվս այլոց, քո մտոյից, ի դեմս ձեզ, ըստ որում, ի շնորհիվ, մեզ վրա, բացի նրանից, ինչու համար, հանձինս քեզ, ի ուրախություն, նրան՝ որպես ուսուցիչ, քեզ նմանները,

ի օգուտ, իրեն համար, ի շարս, հօգուտ մեզ, ի սկզբանե, բացառությամբ նրանից:

5. Ընդօժե՛ք կապերն ու շաղկապները, նշե՛ք տեսակները:

ա) Տարբեր երկրներից բերված ներկերի կիրառությունը Հայկական բարձրավանդակում հայտնի է հնագույն ժամանակներից, որի վկայությունը պեղածո բազմազան ու բազմաթիվ նյութերն են: Սակայն Հայաստանը հայտնի է եղել սեփական ներկատու տարբեր նյութերով և հռչակված էր որպես բարձրորակ ներկերի արտադրության երկիր: Դրա մասին վկայություններ կան Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պրոկոպիոս Կեսարացու երկերում: Ամենանշանավորը որդան կարմիրն էր, որն իր արտակարգ որակի շնորհիվ մեծ հռչակ էր վայելում և արտահանվում էր: Հայաստանում լայնորեն օգտագործվել են հանքային ներկանյութերը, որոնց մեջ գերակշռում էին ներկատու հողերի տեսակները (օխրաները): Հանքային ներկանյութերից լայն կիրառություն է ունեցել նաև կապույտ գույն ներկող լաջվարդ անունով հայտնի հանքաքարը (ляпис-лазурь): Սակայն ամենագործածականը բուսական ներկանյութերն էին, որոնք խիստ մեծաթիվ էին և բազմազան: Դրանց մեջ ամենաարժեքավոր բույսը, որն արտահանվել է, տորոնն է (*Rubia Tinctorum*):

բ) Գորգագործության մեջ սիրված գույներից մեկը կապույտն էր, որը, բացի վերը հիշատակված լաջվարդից, ստացվում էր նաև լեղակաբույսից (*Indigofera*): Դեղին գույն տվող ներկաբույսերից ամենատարածվածն ու հայտնին դեղնածաղիկն էր, սակայն գործածվում էին նաև այլ բույսեր: Կանաչակապտավուն երանգ ստանալու նպատակով օգտագործում էին դժնիկը կամ լվի ծաղիկը (*Rhamnus Catarctiea*):

Այլ գույներ ստանալու համար գործածվում էին տարբեր բույսեր: Բաց դեղին կամ կաթնագույն ստանում էին հարդի կամ թթենու տերևների միջոցով: Մրձագույնի համար մինչ օրս օգտագործվում է ընկույզի կանաչ կեղևը: Բսկ սև գույն ստանալու համար գործածում էին տոխիպ (*Origanum Vulgare*) կոչված բազմամյա խոտաբույսը:

6. Տրված կապերով ու կապական բառերով կազմե՛ք բառակապակցություններ:

Շնորհիվ, հանուն, վրա, տակ, մոտ, ձեռքից, բացի, հանդերձ, համաձայն, ըստ, փոխարեն, հետ, առանց, առթիվ, երեւից, դեպի, չնայած, պատճառով, պես, հանձին, ի դեմս, հակառակ:

7. Յուրաքանչյուր բառով կազմե՛ք երկուական նախադասություն, որոնցում այդ բառերն ունենան խոսքիմասային տարարժեքություն. նշե՛ք դրանց խոսքիմասային պատկանելությունը:

Օրինակ՝ Եթե ուզում է, թող գնա (վերաբ.):

Գիրքդ **թո՛ղ** այստեղ, ուզում եմ կարդալ (բայ, հրամ.եղ.):

ա) Չնայած, մինչև, հետ, հեռու, նման, նախքան, հետո, էլ, առաջ, ժամանակ, համար, մոտ, երեսից:

բ) Թվում է, մի, ասենք, անգամ, կարծես, երևում է, ճիշտ է, եկեք, ով գիտի, միևնույնն է, տեսնես:

գ) Հակառակ, հայերեն, երիտասարդ, փոխանակ, հատված, կից, ձեռքից, զինվորական, ազգային, սակայն:

Գ.2. ՇԱՐԱՀԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.2.1. Համաձայնություն (130): **Գ.2.2.** Խնդրատություն (134): **Գ.2.3.** Առդրություն (135): **Գ.2.4.** Շարադատություն (135): **Գ.2.5.** Նախադասության տարբերակային ձևեր կամ տեսակներ (138): **Գ.2.6.** Համանիշ շարահյուսական կառույցներ (140): **Գ.2.6.1.** Դրական և ժխտական նախադասություններ (140): **Գ.2.6.2.** Նախադասության անդամների համանիշ ձևեր (140): **Գ.2.6.3.** Շաղկապական և անշաղկապ բարդ նախադասություններ (141): **Գ.2.6.4.** Ներգործական և կրավորական կառույցներ (141): **Գ.2.6.5.** Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն (142): **Գ.2.6.6.** Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք (142): **Վարժություններ և առաջադրանքներ (143):**

Գ.2.1. Համաձայնություն: Կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական ձևը: Այդպես են կապակցվում.

ա) Ենթական և ստորոգյալը. համաձայնում են **թվով**, նաև **դեմքով**: Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական է՝ «Քիմիական տարր հասկացությունն առաջինը ձևակերպել է Ռ. Բոյլը 1661 թ.», «Միացյալ Նահանգները ներխուժել է Իրաք»:

Եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանվամբ արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ հոգնակի՝ «Գիտաժողովում քննարկվելու են երկու հարց», և՛ եզակի թվով՝ «Գիտաժողովում քննարկվելու է երկու հարց»:

Ստորոգյալը հոգնակի թվով է դրվում, եթե ենթական՝ • **հոգնակի է՝ «Երկնաքարերը** օդում վառվում են, և գետին են հասնում միայն ծանր, չվառվող նյութերը», • բազմակի է՝ «1960 թ. թե՛ Վ. Համբարձումյանը, թե՛ Գ. Սահակյանը տեսականորեն հիմնավորեցին նյութի ավելի մեծ խտություն ունեցող աստղերի գոյությունը»:

Բազմակի ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի թվով, եթե՝

- Ենթականներն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն՝ «Քննարկման ավարտից հետո **հարց** ու **պատասխան** չինչեց»:

- Ենթականներն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ՝ «Կամայական երկու բնական թվերի **ամեն մի** գումար և արտադրյալ միշտ բնական թիվ է»: «Ներկայումս **ոչ մի** քաղաք, բնակավայր չի կարող գոյատևել առանց մաքրող կայանների աշխատանքի»:

- Նույն դեմքով ենթակաները կապված են **«կամ», «կա՛մ ..., կա՛մ», «ոչ թե ..., այլ»** շաղկապներից որևէ մեկով՝ «Կա՛մ գրասաշրջությունը, կա՛մ սերվիսային գործունեությունը **բավարարում է** մարդկանց պահանջները՝ ինքնազարգացման հնարավորություն տալով»: «Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման՝ **ոչ թե** հիվանդությունների բացակայությունը, **այլ** ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցությունն է **ապահովում** մարդու առողջությունը»:

- Ենթականներից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին՝ «Ե՛վ օգոնի քիմիական **քայքայումն** է վերնուլորտային ամպերի առաջացման հետևանք, և՛ օգոնային խոռոչի չափերի **մեծացումը**»: «Թե՛ **զինվորն** է պատասխան տալու կատարվածի համար, թե՛ **հրամանատարը**»:

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով՝ «Դրանք քննարկման ենթակա **ծրագրեր** են», բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝ • ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է՝ «**Դուք**, պարո՛ն պրոֆեսոր, նաև հմուտ **վիրաբույժ** եք»:

●Ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է՝ «Երիտասարդները մեր երկրի **ապագան** են»: ●Ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով՝ «Քո ցույց տված բոլոր ծառերը **կաղնի** էին»:

Դիմային համաձայնությունը արտահայտվում է բայի դիմային վերջավորություններով կամ հողերով: 1-ին կամ 2-րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հող (**ս** կամ **դ**) ունեցող ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ դեմքով («**Մենք**) Մտավորականներ**ս**, չենք կարող չմասնակցել այդ շարժմանը»: «**Ի՛նքդ** փորձիր կողմնորոշվել»: Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3-րդ դեմքով՝ «Կյանքի ծագման առաջին փուլը համարվում է ածխաջրածինների սինթեզը»:

Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ՝ «**Ես**, դու, նա կմեկնենք»), դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ («**Դու** և նա իրար նման **եք**»), նաև վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով («Մասշելի էներգիայի աղբյուրը և որակը այս կամ այն չափով **որոշում են** օրգանիզմների տեսակային կազմը և քանակությունը»):

բ) Բուն բացահայտիչը և բացահայտյալը համաձայնում են թվով, հոլովով, դեմքով, հաճախ նաև առումով՝ «**Մեզ**՝ Երկիր մոլորակի **բնակիչներին**, շատ է հետաքրքրում գլոբալ տաքացման խնդիրը»: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հողերով: Օր.՝ «**Ձեզ**՝ ջրամբարները աղտոտողների**դ**, մի՞ թե չի անհանգստացնում մեր երկրի ապագան»: «**Ես**՝ երկրի անվտանգության երաշխավոր**ս**, իրավունք չունեմ չհարգելու այդ երկիրը, նրա արժեքները»:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

● թվով՝ «Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին**՝ մեր երկրի **ապագային**», «Զրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից**՝ մեր նախնիների **տարածքներից**»:

● հոլովով՝ «Ռընե Դեկարտը մեծ հաջողություններ է ունեցել գիտության տարբեր **ոլորտներում**՝ **փիլիսոփայություն, բնագիտություն, մաթեմատիկա** են», «Վարդագգիների ընտանիքը բաղկացած է 2000-4000 տեսակի բազմազան **բույսերից՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր**»:

• դեմքով՝ «Արցախի ազատագրության համար **պայքարողները**՝ մեր նոր կյանքի **կերտողն ու ապավենը**, բոլոր ժամանակներում պիտի գնահատված լինեք»:

• առումով՝ «Անհրաժեշտ միներալային **սննդանյութերը՝ ազոտ, նատրիում, մագնեզիում, ֆոսֆոր, կալիում, ծծումբ** և այլն, բույսը հողից վերցնում է ջրի մեջ լուծված վիճակում»: «Ըստ գիտական մի վարկածի՝ երկնային **մարմինները՝ աստղեր, գալակտիկաներ**, առաջանում են տիեզերական դիֆուզ (ցրված) նյութի խտացման ճանապարհով»:

Մասնական բացահայտիչը (բացահայտյալին է միանում **որպես** կամ **իբրև** կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը. «Օդը՝ **որպես** կյանքի **միջավայր**, օրգանիզմների զարգացմանը տալիս է որոշակի ուղղվածություն») բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում. օր.՝ «**Պյութագորասին՝ որպես մաթեմատիկոսի և փիլիսոփայի**, բարձր են գնահատել բոլոր ժամանակներում»: Մասնական բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս. «**Որպես քիմիական հումք՝** չհագեցած **ածխաջրածինները** ստացվում են ջրային գոլորշիներով մշակման միջոցով»: Այս դեպքում բույթը դրվում է բացահայտիչի վրա:

Որպես կամ **իբրև** կապով ձևավորված անդամը, եթե լրացնում է ստորոգյալին, չի տրոհվում՝ «Մի շարք գիշատիչներ **որպես սնունդ** օգտագործում են գոհի պոպուլյացիայի բոլոր տարիքային խմբերը»: «**Որպես արծիվ** խոյացավ թշնամու վրա»:

Մասնավորող պարագայական բացահայտիչը (պարագայական անդամի լրացում է և ճշգրտում է բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը) և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով՝ «Եթե Համաշխարհային **օվկիանոսում՝** միջմայրցամաքային ջրային **տարածքում**, աղի ամբողջ պաշարը նստվածքի ձևով սփռվեր, ապա հատակին կգոյանար 57 մ հաստությամբ աղի շերտ»: «Լուսնի խավարում կղիտվի մոտ մեկ **շաբաթից՝** վեց **օրից**»: Բայց կարող են և չհամաձայնել՝ «Ինչպես գտնվում է Հայաստանի հյուսիսարևելյան **մասում՝** Ադստև գետի **ափին**»:

Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող է լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի ևն, այսինքն՝ բացահայտիչը նույնպես իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ՝ «Հերթական գիտաժողովը կկայանա հաջորդ **շարքաթ**՝ հինգշաբթի **օրը**՝ աշխատանքից **հետո**՝ ժամը **վեցին**»:

զ) Հարաբերյալն ու հարաբերական բառը, որոնք կապակցում են գերադաս և ստորադաս նախադասություններ, սովորաբար համաձայնում են թվով՝ «Խոսեցի նրանց հետ, **ովքեր** ներկա էին»:

դ) Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հետևյալ դեպքերում. • գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի, օր.՝ «Արեգակնային համակարգի ու Երկրագնդի ծագման հարցերով զբաղվել են անվանի **գիտնականներ** Ա. Լեբեդինսկին, Ե. Շացմանը, Վ. Համբարձումյանը և այլք», • մի շարք դերանուն որոշիչներ որոշյալից պահանջում են միայն եզակի կամ միայն հոգնակի թիվ, օր.՝ «**Այս ու այն** տեսությունից...», «**Բոլոր** ենթատեսակները...», «**Որոշ** վարկածներ...», «**Ինչ-ինչ** նկատառումներ...»:

Գ.2.2. Խնդրառություն (հոլովառություն, կառավարում): Կապակցվող անդամներից մեկը պայմանավորում է մյուսի քերականական ձևը: Այդպես են կապակցվում՝ • **խնդիրն ու լրացյալ բայը**՝ «**Ստեղծեցին** նպաստավոր **պայմաններ**», • **անվանական պարագան ու ստորոգյալը**՝ «Փոթորիկն **անցել է** Ավստրալիայի **տարածքով**», • **հատկացուցիչն ու հատկացյալը**՝ «Միջավայրը **բնության** մի **մասն է**», • **կապն ու կապի խնդիրը**՝ «**Առանց ջրի** կյանքը հնարավոր չէ»:

Առանձին բայերի համար արդի հայերենում առաջ են եկել խնդրառական գուգաձևեր՝ **կարոտել** հայրենիքին//հայրենիքը, **դավանել** սկզբունք//սկզբունքի, **ձեռնարկել** գործ//գործի, **կրակել** մեկի վրա//մեկին, մեկից//մեկին **հինգ է պակաս**, **կառչել** բազրիքից//բազրիքին, **կախել** պատին//պատից, **սիրել** երկրին//երկիրը ևն:

Մի շարք բայեր (ծանոթանալ, մտերմանալ, բարեկամանալ, ընկերանալ, թշնամանալ, հաշտվել, գժտվել, վիճել, կովել, խորհրդակցել) կամ դրանց հիմքով կազմված բաղադրյալ ստորոգյալներ (ծանոթ ենք, ընկեր են, համամիտ եմ ևն) հանգման խնդիր են պահանջում **հետ** կապով կամ էլ միայն փոխադարձ դերանունով (իրար, միմյանց, մեկմեկու), եթե առկա է փոխադարձության հարաբերություն անձերի (կամ անձնավորված իրերի) միջև: Օր.՝

«Աստղադիտարանի տնօրենը ծանոթացավ նոր **աշխատակիցների հետ**»: «Մենք **իրար** թշնամի չենք»: Եթե հարաբերությունը փոխադարձ չէ (երբ խնդիրը անձ չէ), ապա հանգման խնդիրը լինում է առանց **հետ** կապի («Ծանոթ եմ քո **կարծիքին**»):

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման և անջատման խնդիրները («Տրամադրված եմ **աշխատելու**»: «Հրաժարվում է **քննարկելուց**») կարող են դրվել նաև ուղղական-հայցական հոլովով («Տրամադրված եմ **աշխատել**»: «Հրաժարվում է **քննարկել**»): Հանձնարարելի են սեռական-տրականով ձևերը:

Գ.2.3. Առդրություն: Կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը. անդամները կապակցվում են սուսկ իմաստով:

Այդպես են կապակցվում.

- **Որոշիչն ու որոշյալը՝ մարդածին գործոն, ցածրադիր հարթավայր** (այլ մոտեցմամբ՝ գոյական որոշիչ-որոշյալի կապը համարվում է խնդրատություն՝ «Ներս մտավ **ձեռնափայտով** մի **մարդ**»):

- **Մակբայական** (ածականական, դերբայական) **պարագան ու ստորոգյալը՝** «Խնդիրը **դժվար//շուտ/կազմակերպված** լուծվեց»:

- **Համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները՝** «**Նյուտոնը, Ջոուլը, Ֆարադեյը** անգլիացի ֆիզիկոսներ են»:

Կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում**: Այսպես՝ **խումբ-խումբ, գույգ-գույգ, բազմաթիվ, մեծաքանակ** ածականները, **բոլոր, ինչ-ինչ** դերանունները պահանջում են հոգնակի թիվ ունեցող որոշյալ՝ **բոլոր մարդիկ, բազմաթիվ տեսակներ**:

Յուրաքանչյուր, ամբողջ, որևէ, որևիցե, ամեն, ամեն մի, մի դերանունները, **ցանկացած** ածականը պահանջում են եզակի թիվ ունեցող որոշյալ՝ **ամբողջ աշխարհը, որևէ մեկը, յուրաքանչյուր մասնակից, ցանկացած գործ, մի մարդ**:

Գ.2.4. Շարադասություն: Նախադասության մեջ բառերի դասավորության կարգն է: Նախադասության որոշ անդամների դասավորությունը կայուն է, անշրջելի: Այդպիսին է բացահայտյալի և բուն բացահայտիչի շարադասությունը («**Մենք՝ փորձագետներս**, համաձայն չենք»), ինչպես նաև կապերի մեծ

մասի և կապվող բառի շարադասությունը («**Փոխանակ** գնայիր»: «Խոսի՛ր իմ **փոխարեն**»): Որոշ անդամների (որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի) շարադասությունը թեև որոշակի է, բայց շրջելի է և ի տարբերություն սովորական շարադասության՝ կոչվում է **շրջուն**:

Որոշ անդամների շարադասությունը ազատ է, այսինքն՝ հավասարապես թույլատրելի է ցանկացած հերթականությամբ, օր.՝ ստորոգյալի և ժամանակի պարագայի շարադասությունը՝ «Կմեկնենք երեկոյան»://«Երեկոյան կմեկնենք»:

Շրջուն և ազատ շարադասության դեպքում կարևոր դեր է ստանձնում տրամաբանական շեշտը:

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: Ուղիղ շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին՝ «**Մթնոլորտը** երկրագնդի օդային թաղանթն է»: Այսպիսի կառույցներում ենթակայի և ստորոգյալի հակառակ շարադասությունը շրջուն է և կարող է հանդիպել բանաստեղծական խոսքում կամ միայն տրամաբանական շեշտի ազդեցությամբ՝ «Երկրագնդի օդային թաղանթն է **մթնոլորտը**»: Երբ հանգույցը մի դեպքում առկա է, մի այլ դեպքում՝ զեղչված, ապա ենթական կարող է լինել հետադաս՝ «Այդ ժամանակ երկինքը մթնում է, և **տեսանելի դառնում**՝ շիկացած գազի թույլ **լուսարձակումը**՝ արևապսակը»:

Ենթական պարտադիր հետադաս է լինում մեջբերվող խոսքի նկատմամբ միջադաս կամ վերջադաս հեղինակային խոսքում՝ «Եթե երրորդ համաշխարհային պատերազմն ընթանա ատոմային ռումբերով, ապա չորրորդը քարերով և ձողերով կլինի», - գրում է **Էյնշտեյնը**»:

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս: Երբ հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա իր որոշյալից տրոհվում է բուրքով, իսկ նախադասության այլ անդամներից՝ ստորակետով՝ «Անտարկտիդայի հյուսիսային հատվածում մայրցամաքից անջատվել է սառցաբեկորը՝ **հսկա ու ահռելի**»: «Այդ հսկա քաղաքը՝ **մարդաշատ և աղվկոտ**, ապրելու տեղ չէ»:

Եթե բազմակի որոշիչներից մեկը արտահայտված է որակական ածականով, իսկ մյուսը՝ հարաբերական, ապա վերջինս նախորդում է առաջինին՝ «Երկրի **քարե պինդ** թաղանթում սեյսմիկ պլիքների արագությունը նվազում է»: Այս-

պիսի տարաբնույթ բազմակի որոշիչները միմյանցից չեն տրոհվում և չեն կապակցվում **և, ու, կամ, թե** շաղկապներով:

Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է՝ գոյական որոշիչ + դերբայ որոշիչ + ածականական դերանուն որոշիչ + հարաբերական ածական որոշիչ + թվական (կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ + որակական ածական որոշիչ + որոշյալ: Օր.՝ «Կարմիր գրքում» **տեղ գտած անտառային ո՞ր երեք զիշատիչ** գազանների մասին էր երեկվա դասը»:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել, երբ առկա է որոշիչ-որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**աննդային շղթա, կենսական տարրեր, շիթային շարժում, ելից մատյան, խոսքի մաս** ևն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով («Երկրի խորքում առաջացող **գորեղ շիթային շարժումները** այս ու այն կողմ են հրում մայրցամաքները»: «Մեզ ներկայացրե՛ք **նոր ելից մատյանը**»):

Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս՝ «Հայրենիքին ծառայելը **պարտականությունն** է յուրաքանչյուր **քաղաքացու**»:

Եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային հնարավոր շփոթը կանխելու համար հատկացուցիչի վրա բուրժ է դրվում՝ «Միջուկի լիցքի մեծությունը քիմիական մի տարրից մյուսն աճում է **Մենդելեևի**՝ տարրերի պարբերական համակարգին համապատասխան»: «Բիոտիկ գործոնները կենդանի **օրգանիզմների**՝ միմյանց վրա ազդեցության բոլոր հնարավոր ձևերն են»:

Երբ միևնույն լրացյալն ունենում է թե՛ որոշիչ(ներ), թե՛ հատկացուցիչ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշիչ(ներ)ին՝ «**Օվկիանոսի մակերևութային** շերտում դեպի մերձբևեռային շրջանները գնացող ջուրը **ջերմության վիթխարի** պաշար է տանում»:

Բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ սովորաբար լինում է հետադաս: Եթե դրանց տեղերը փոխենք, ապա կփոխվեն նաև պաշտոնները՝ «Ատոմը՝ նյութի պարզագույն մասնիկը»: > «Նյութի պարզագույն մասնիկը՝ ատոմը»:

Բազմակի բացահայտյալը կարող է ունենալ մեկ բառով արտահայտված բացահայտիչ, որը նրա ամփոփումն է որոշյալ կամ ժխտական դերանունով, և

որի հետ էլ թվով համաձայնում է ստորոգյալը: Օր.՝ «Սողանքները, երկրաշարժերը, հրաբուխները, ջրհեղեղները՝ **այս ամենը** խախտում է մեր մոլորակի բնականոն ընթացքը»: Եվ հակառակը՝ մեկ բառով արտահայտված բացահայտյալը կարող է ունենալ բազմակի անդամներով արտահայտված բացահայտիչ, որի հետ էլ թվով համաձայնում է ստորոգյալը՝ «**Ոչ ոք**՝ ո՛չ հին դարերի իմաստասերները, ո՛չ ժամանակակից գիտնականները՝ իրենց ստեղծած գերհզոր սարքերով, **չեն կարող** կանխագուշակել տիեզերքի վաղվա օրը»:

Շարադասության թույլատրելի կարգից շեղումները կոչվում են **շարադասության խախտումներ**: Երբեմն շարադասության խախտումները լինում են ոչ այնքան նկատելի, սակայն խաթարում են խոսքի տրամաբանվածությունը: Այսպես՝ գուգադրական շաղկապի մասերը համադաս նախադասություններ կապակցելիս պետք է լինեն դրանց այն մասերի սկզբում, որոնք հակադրվում են միմյանց: Օր.՝ «Առանձին օրգանիզմներ հարմարվում են **ոչ միայն** ֆիզիկական միջավայրին, **այլև** հարմարեցնում են երկրաքիմիական միջավայրը իրենց կենսաբանական կարիքներին». այստեղ շաղկապի **ոչ միայն** մասը պետք է լինի **հարմարվում են** ստորոգյալից առաջ՝ «Առանձին օրգանիզմներ **ոչ միայն** հարմարվում են ֆիզիկական միջավայրին, **այլև** հարմարեցնում են երկրաքիմիական միջավայրը իրենց կենսաբանական կարիքներին»:

Չհիմնավորված շրջումը հաճախ ուղղակի պատճառ է դառնում լեզվական սխալ կառույցի՝ սխալ շարադասության, որն էլ իր հերթին հաճախ հանգեցնում է արտառոց ու անհեթեթ մտքերի. օր.՝ միշտ էլ կարելի է ընտրել նախադասության անդամների այնպիսի դասավորություն, որը բոլորի կողմից կընկալվի որպես սովորական, ճիշտ, ոճականորեն չեզոք:

Գ.2.5. Նախադասության տարբերակային ձևեր կամ տեսակներ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր ոճական արժեքը: Այսպես՝ **պարզ** նախադասություններն առավել հասուն կ են ժողովրդական խոսքին. պարզ, հստակ, ճշգրիտ ձևակերպումների համար դրանք անփոխարինելի դեր ունեն: Երբ անհրաժեշտություն կա խոսքը դարձնելու բազմաբովանդակ և տարողունակ, **բարդ** կառույցների նշանակությունն անփոխարինելի է:

Քարդ ստորադասական նախադասությունները լավագույն միջոց են դատողություններ, եզրահանգումներ, երևույթների պատճառահետևանքային կապերն ու փոխադասականավորվածությունը արտահայտելու, խոսակցին համոզելու համար: Օր.՝ «Քանի որ 20-րդ դարի երկրորդ կեսում կենսոլորտի վրա մարդու անբարենպաստ ազդեցության հետևանքներն ուժեղացան, ուստի և

բնապահպանական ծավալուն միջոցառումների անհրաժեշտություն առաջացավ»: **Բարդ համադասականները** խոսքին հաղորդում են որոշ հանդիսավորություն, միօրինակություն, ներդաշնակություն, ավելի մատչելի են, հարմար միջոց են միտքը ծավալելու համար: Օր.՝ «Բացվում է գարունը, և խոտաբույսերը, ծառերն ու ծաղիկները սկսում են աճել. նրանց լույս է պետք»: Միայն կամ գերազանցապես բարդ նախադասություններով կազմված խոսքը վերամբարձ է, երբեմն՝ ծանրաշունչ, դժվարընկալելի, թեև թվում է ավելի լուրջ ու ազդեցիկ: Եվ ընդհակառակն, միայն պարզ նախադասություններով կազմվածները լինում են դյուրըմբռնելի, հստակ, բայց հանդիսավորությունից զուրկ, հաճախ էլ՝ պարզունակ: Լավագույնը դրանց ներդաշնակ համատեղումն է:

Երկկազմ նախադասություններն ապահովում են մտքի ճշգրտությունը, հստակությունը, տեղ չեն թողնում այլասացության: Հաճախ են գործածվում գիտական և պաշտոնական ոճերում: Մինչդեռ միակազմ նախադասություններն այս տեսակետից «կաղում են»: Բայց դրանք էլ ունեն իրենց առավելությունը. հնարավորություն են ստեղծում հստակ, համառոտ, հակիրճ խոսքի: Հաճախակի կիրառություն ունեն խոսակցական ոճում և ՉԼՄ-ների լեզվում:

Նախադասության **հաղորդակցական–հնչերանգային** տեսակներից (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական) որևէ մեկի ընտրությունը կախված է խոսքային իրադրությունից: Հաղորդակցման միևնույն նպատակն ունենալով՝ խոսողն ընտրում է դրանցից որևէ մեկը՝ հաշվի առնելով խոսակիցների առկայությունը և կազմը, իր և խոսակիցների հարաբերությունը և շատ այլ հանգամանքներ: Օր.՝ 1. «Ցանկալի կլինե՞ր իմանալ մերժման պատճառները»: 2. «Շա՛տ կցանկանայինք խոչընդոտող պատճառների մասին տեղեկանալ»: 3. «Չէի՞ք ասի՛ ինչ հիմնական պատճառներից դրդված եք մերժել մեր առաջարկները»: 4. «Հիմնավորե՛ք մերժումը»:

Նախադասությունների հնչերանգային տեսակները տարբերվում են նաև ստորոգյալի արտահայտությամբ՝ բայի եղանակով և ժամանակով: Լրացուցիչ դեր ունի նաև վերաբերականների, ձայնարկությունների առկայությունը՝ «**Անշուշտ**, սա առաջին փորձն է»: «**Թերևս** լավ ստացվի»: «Կարո՞ղ եմ **արդյոք** խոսել գրքի քննարկման մասին»:

Նախադասության հնչերանգային բոլոր տեսակները կարող են լինել նաև **միակազմ**, օր.՝ պատմողական՝ «Մաս 3. Երկրագնդի բազմոլորտային կառուցվածքը», հարցական՝ «Ո՞ր եղանակով վճռել խնդիրը», բացականչական՝

«Որքա՛ն շատ են ճշմարտության թշնամիները», հրամայական՝ «Քառակուսային եռանդամը վերլուծել արտադրիչների»:

Երբեմն միևնույն նախադասության մեջ համատեղվում են տարբեր բնույթի նախադասությունների տարրեր՝ «Օնվեցիր՝ ծնի՛ր. կարգն է բնության»: «Ի՛նչ գեղեցկություն. երբևէ տեսե՛լ էս այսպիսի բան»:

Գ.2.6. Համանիշ շարահյուսական կառույցներ:

Գ.2.6.1. Դրական և ժխտական նախադասություններ: Ժխտումը հաճախ հնչում է կտրուկ և կոշտ. համապատասխան դրական բնույթի նախադասությունը մեղմացնում է խոսքի այդ երանգը, օր.՝ «Դատողությունը ճիշտ չէ»: - «Դատողությունը սխալ է». երկրորդը առավել ժխտողական երանգ ունի: «Նա խելացի է» և «Նա հիմարներից չէ» զուգահեռ կառույցներից երկրորդը արտահայտում է հավելական իմաստ. ակնարկում է խոսքի առարկայի՝ խելացի լինելուց բացի նաև այլ հատկանիշներ (ճարպկություն, խորամանկություն ևն) ունենալու հանգամանքը:

Կան ժխտումով կազմվող ձևեր, որոնց տրվող և՛ դրական, և՛ բացասական պատասխանները հանգում են միևնույն պատասխանին՝ օր.՝ «Դեմ չե՞ք, որ խնդիրը այդ ճանապարհով լուծվի» (Ո՛չ (= Դեմ չեմ): Այո՛ (= Դեմ չեմ)):

Ավելի հաճախ ժխտումը արտահայտվում է հարցով («Բա սա գո՞րծ է»: = «Գործ չէ»): Հաստատումը կարող է արտահայտվել ժխտական նախադասությամբ՝ ճարտասանական հարցով («Այդ մասին ո՞վ չգիտի»: = «Այդ մասին բոլորը գիտեն»):

Դրական համանիշներ ունեն նաև պատմողական նախադասությունները («Լավ է զգում իրեն»: = «Վատ չի զգում իրեն»): Խոսքին բազմազանություն է հաղորդում նաև կրկնակի ժխտումը. «Այդ գործը չկատարելը չի խրախուսվում»: = «Այդ գործը կատարելը խրախուսվում է»:

Գ.2.6.2. Նախադասության անդամների համանիշ ձևեր: Նախադասության նույն անդամի արտահայտությունը՝

• **նույն խոսքի մասի տարբեր ձևերով՝** «Կախված է պատի՛ն»//«Կախված է պատի՛ց», «Տասի՛ց հինգ է պակաս»//«Տասի՛ն հինգ է պակաս»,

• **հոլովով և կապային կառույցով.** առանց կապի՝ միայն հոլովներով ձևերը ավելի համառոտ են և սեղմ. կապային կառույցները, որպես կանոն, առավել հստակ են դարձնում ասելիքը՝ հավելելով փոքր-ինչ խոսակցական նրբե-

բանգներ. «Ուշադրություն մի՛ դարձրեք այդ **հանգամանքին**»//«Ուշադրություն մի՛ դարձրեք այդ **հանգամանքի վրա**», «Մեր **սնից մինչև համալսարան** հինգ բուպեի ճանապարհ է»//«Մեր **սնից համալսարան** հինգ բուպեի ճանապարհ է»,

• **տարբեր կապերով**, կապի բառային հատկանիշներով (գնահատողականություն, գործածականություն, ծագումնաբանական որակներ են) պայմանավորված՝ խոսքը ձեռք է բերում համապատասխան երանգներ՝ «Հարցի **վերաբերյալ** կարծիք»//«Հարցի **մասին** կարծիք», «**Այն** մասին, որ...»//«**Առ այն, ...**», «Հանդիպման **առիթով** (առթիվ)»//«Հանդիպման **կապակցությամբ**» են:

Գ.2.6.3. Շաղկապական և անշաղկապ բարդ նախադասություններ: Առաջինները խոսքին տալիս են ճշգրտություն, ավելի որոշակի են դարձնում խոսքային միավորների հարաբերությունը: Երբ նպատակ կա ընդգծելու դատողությունների պատճառահետևանքային կապը, անելու ընդհանրացումներ և եզրակացություններ, շաղկապները պարտադիր գործածվում են: Այդ իսկ պատճառով դրանք հաճախակի են հանդիպում գիտական և պաշտոնական ոճերում: Օր.՝ «Իրական թվերի բազմության վրա գույզ աստիճանի արմատ բացասական թվից գոյություն չունի, **քանի որ** և՛ բացասական, և՛ դրական թվերի արտադրյալը դրական թիվ է»: «**Եթե** հարցնենք, **թե** քանի էկոհամակարգ կա երկրագնդի վրա, **սպա** այդ հարցին հնարավոր չի լինի պատասխանել, քանի որ էկոհամակարգերը հստակ սահմաններ չունեն»:

Երկրորդները ձևավորում են արագ խոսք, հատուկ են ժողովրդական մտածողությանը, ուղեկցվում են հատուկ հնչերանգով, որը նրանց տալիս է հուզականություն, արություն, ստեղծվում է լարվածություն: Օր.՝ «Գիտությունը կառուցվում է փաստերից, տունը՝ աղյուսներից. փաստերի կուտակումը գիտություն չէ, աղյուսների կույտը տուն չէ»: Անշաղկապ կառույցները ազդեցիկ են խոսքի եզրափակիչ մասում. «Ավարտին պատշաճում են անշաղկապ արտահայտությունները, որպեսզի դա վերջաբան լինի, այլ ոչ թե ճառ» (Արիստոտել):

Գ.2.6.4. Ներգործական և կրավորական կառույցներ: Առաջինները սովորական՝ չեզոք կառույցներ են և որքան էլ շատ գործածվեն, միևնույնն է, խոսքը միօրինակ չեն կարող դարձնել: Երկրորդները ոճականորեն ակտիվ են. որոշ վերամբարձություն են հաղորդում խոսքին, հանդիսավորություն են ստեղծում, ուստի առօրյա խոսքում հաճախակի կիրառություն չունեն: Ներգործական կառույցը երբեմն կարող է ընդմիջվել կրավորականով, եթե խոսողը

նպատակ ունի չշեշտելու տրամաբանական ենթակայի դերը, կամ երբ անհրաժեշտություն կա խոսքի առարկայի նկատմամբ դրսևորելու չեզոք վերաբերմունք: Օր.՝ գործողություն կատարողին չանվանելու կամ դրա անորոշությունը՝ անհայտ լինելը շեշտելու նպատակով խոսքի հեղինակը իր միտքը արտահայտում է հետևյալ կառույցով. «Նրա հետ խոսելուց հետո հասկացա, որ **խաբվել եմ**»։ Խաբվածությունը բացահայտվում է զրույցից հետո, բայց ո՞վ է խաբողը. **նա՞**-ն, թե՞ ուրիշ մեկը. երկրորդ նախադասության կառուցվածքը հարցի պատասխանը հստակ չի տալիս: Կամ՝ «Ճշգրիտ տվյալներ չեն ներկայացվել», «Հարցը քննարկվեց», «Հակառակ պնդումն ապացուցվում է» ևն:

Գ.2.6.5. Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն: Առաջինները նպաստում են խոսքի հակիրճությանը, համատեղում են զուգընթաց գործողությունների նկարագրություններ, խոսքը դառնում է ավելի տարողունակ: Օր.՝ «Հեռանալով արևից՝ արևային քամու խտությունը թուլանում է, և գալիս է պահ, երբ այն, այլևս ի վիճակի չլինելով դիմադրել միջաստղային նյութի ճնշմանը, կանգ է առնում»:

Դերբայական դարձվածների հաճախակի գործածությունը կամ կուտակումը հատուկ չէ հայերենին և առաջ է բերում խոսքի միօրինակություն, արհեստականություն, անհստակություն. օր.՝ «Հարմարվելով էկոլոգիական գործոնների փոփոխումներին, ինքն էլ իր հերթին ներգործելով շրջակա միջավայրի վրա, հարուցելով օրգանիզմների որոշակի հարմարվողական ռեակցիա և բնական ընտրության միջոցով մշակելով զանազան ֆիզիոլոգիական հարմարանքներ՝ յուրաքանչյուր կենդանի էակ զարգացում է ապրում»: Նման դեպքերում նպատակահարմար է դերբայական դարձվածները կամ դրանց մի մասը փոխարինել երկրորդական նախադասություններով: Այդ երկուսի պատճառաբանված համատեղ գործածությունը ակնհայտորեն հարստացնում է խոսքը, այն դարձնում է բազմազան ու հետաքրքիր:

Գ.2.6.6. Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք: Ընդունված է ասել, որ շարահյուսական այս կառույցների արտահայտչականությունը պայմանավորված է նրանով, որ առաջինները խոսքին հաղորդում են ճշգրտություն և հավաստիություն, երկրորդները՝ պատմողական երանգներ՝ երկրորդաբար պահպանելով առաջիններին հատուկ գծերը:

Բառացիորեն բերված ուրիշի ուղղակի խոսքը, որը կոչվում է **ուղղակի մեջբերում**, խոսքաշարում կատարում է որոշակի դեր, որը ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Հաճախակի մեջբերումները թուլացնում են հեղինակային

խոսքի ուժը. խոսողի կարծիքը մի տեսակ կորչում է մեջբերումների հորձանքում, հստակ չեն տարանջատվում հեղինակի և մեջբերվող խոսքերը: Բացի այդ՝ մեջբերումներով առատ խոսքը հնչում է միօրինակ ու անհետաքրքիր: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ընտրողաբար վերաբերվել դրանց՝ օգտվելով միայն շատ վառ, տպավորիչ, հետաքրքիր ու իմաստավից մեջբերումներից:

Ուղղակի մեջբերումը կատարվում է առանց փոփոխության. չպետք է փոխել բառերը, քերականական ձևերը, նույնիսկ կետադրությունը: Բանավոր խոսքում ցանկալի է մեջբերման հեղինակի անունը նշել սկզբից: Դրանով խոսքը դառնում է ավելի հետաքրքիր, գրավիչ, մանավանդ եթե հեղինակը հայտնի անձնավորություն է: Խոսքին աշխուժություն ու կենդանություն է հաղորդում նաև անուղղակի խոսքով մեջբերումը (**անուղղակի մեջբերում**):

Առավել արդյունավետ ձև է, երբ մեջբերվող խոսքի երկու տեսակները գործածվում են միաժամանակ: Դա բազմազանություն է հաղորդում խոսքին. ինչպես՝ «Անվանի գիտնական Վ. Համբարձումյանը, խոսքն ուղղելով հաջորդ սերունդներին, իր կտակում գրում է, որ յուրաքանչյուրի պարտքն է ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինել հայերենից՝ անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Նա խորապես համոզված է, որ այդ տոկոսը ոչինչ չի նշանակում. «Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Գիտցե՛ք, որ իմ կյանքի ամենամեծ երջանակությունը եղել է և կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը»:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Գտե՛ք ենթակա-ստորոգյալները, բացահայտիչ-բացահայտյալները. բացատրե՛ք դրանց համաձայնությունն ու կետադրությունը:

ա) Արենիի քարանձավում իրականացվում են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են մ.թ.ա. 4200-3500 թվականներին վերագրվող բազմաթիվ գտածոներ՝ բուսական մնացորդներ, ամանեղեն, խաղողի, ծիրանի կորիզներ, եղեգից պատրաստված գործվածքներ, կանանց գանգեր և այլն: **բ)** 1883 թ. Բնդունեզիայում Կրակատաու հրաբխի ժայթքման հետևանքով կղզին պայթել է, և նրա մեծ մասը վերածվել է քարաբեկորների ու փոշու: **գ)** Բուն մեսրոպյան բոլորածն երկաթագրի հնագույն նմուշը Շիրակում գտնվող Տեկորի տաճարի վիմագիր արձանագրությունն է, որը փորա-

գրվել է հայոց կաթողիկոսներից մեկի՝ Հովհան Մանդակունու աթոռակալության ժամանակ: **դ)** Մնկերը՝ որպես ստորակարգ կորիզավոր օրգանիզմներ, իրենց կենսաբանական հատկանիշներով ավելի մոտ են գտնվում կենդանական և ոչ թե բուսական աշխարհին: **ե)** Գիտաժողովի մասնակիցների մի մասը օտարերկրացի հայագետներ էին, որոնց մեծ մասն առաջին անգամ էր եկել Հայաստան: **զ)** Եթերային յուղերն օրգանական միացությունների տարբեր դասերի պատկանող նյութերի՝ ածխաջրածինների, սպիրտների, ալդեհիդների, կետոնների, եթերների, ֆենոլների խառնուրդներ են: **է)** Վաղը՝ ժամը 14.30-ին, ԵՊՀ-ում՝ մաթեմատիկայի ֆակուլտետում, տեղի կունենա ՌԻԳԸ գիտաժողովի առաջին նիստը: **ը)** Մեզ հասած հայերեն ամենահին ամբողջական ձեռագիրը՝ Վեհամոր Ավետարանը, 7-րդ դարի է. ավելի վաղ շրջանից ունենք միայն պատառիկներ: **թ)** ՀՀ-ում կա տասը մարզ (չհաշված Երևանը)՝ Արարատ, Արագածոտն, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր և Տավուշ: **ժ)** Գիտնականների զգալի մասը կարծում է, որ կյանքի ի հայտ գալուց անմիջապես հետո սկսվել է դրա տարանջատումը երեք հիմնական թագավորության՝ կենդանական, բուսական և սնկերի: **ժա)** Յուրի Հովհաննիսյանը՝ հայ մեծանուն ֆիզիկոսը, նոր գերծանր տարրերի արհեստական սինթեզի բնագավառում կատարված երկու տասնյակից ավել հայտնագործությունների հեղինակ է:

2. Գտե՛ք համաձայնության սխալները:

1. Արամն ընկերների հետ դուրս եկան զբոսնելու: **2.** Բույսերի մի մասը բնորոշվում են մարմնի մասնատվածությամբ: **3.** Ատենախոսության գիտական դեկավարը հայտնեց, որ ոչ մի որոշումներ չի կայացվի առանց գիտխորհրդի քննարկման: **4.** Ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ ունեն իրենց առանձնահատկությունները: **5.** Մեր խմբի ուսանողներից յուրաքանչյուրը՝ Աննան, Հրայրը, Լիլիթը, Կարենը և մյուսները, զբաղվում են սպորտով: **6.** Ֆոտոսինթեզի լուսային փուլի ավարտման համար պահանջվում է ջրի մոլեկուլային թթվածնի, ատոմային ջրածնի առաջացում ևն: **7.** Նորաբաց սրճարանում աշխատելու համար պահանջվում է գանձապահ և մատուցողներ: **8.** Նյութերի մեծ մասը բաղկացած են մոլեկուլներից: **9.** Հավասարակողմ կամ կանոնավոր եռանկյան բոլոր երեք կողմը հավասար է: **10.** Մաշկի վրա բուժիչ ազդեցություն ունի սոճու յուղը, կեչու ձյութը, ծծումբը, սելենը:

3. Ընտրե՛ք ճիշտ հոլովով դրված տարբերակը: Եթե կան գուգաձևություններ, նշե՛ք:

ա) A, E, D վիտամիններով հարուստ սնունդը խթանում է երեխայի աճը// աճին և զարգացումը//զարգացմանը:

բ) Մենք մտադիր ենք դիմել//դիմելու օգնության, եթե հարցը չկարողանանք լուծել:

գ) Դուք խոչընդոտում եք մեր աշխատանքին//աշխատանքը:

դ) Ես ստիպված եմ Ձեզ նկատողություն անել//անելու:

ե) Նոր մեթոդների կիրառումը խթանում է ինքնուրույն մտածողությունը// մտածողությանը:

զ) Կարոտում եմ հարազատներիս, մեր բակին//բակը, իմ քաղաքը//քաղաքին:

է) Երկար վիճաբանությունից հետո բոլորը, բացի վարպետ Արամը//Արամից, համաձայնության եկան:

ը) Արդեն 2-ին//2-ից 20 է պակաս, բայց նա դեռ չի վերադարձել:

թ) Շնորհակալ ենք ձեզ//ձեզնից, որ այս դժվարին պահին մեր կողքին եք:

ժ) Սպորտն իր հարյուրավոր տեսակներով դասվում է մարդկային գործունեության ամենակատիվ և ամենագրավիչ բնագավառների թվում//թվին:

4. Գտե՛ք շարադասական սխալները և ուղղե՛ք:

ա) Սովորաբար ամիններով ու պովիամիդներով է իրականացվում էպօքսիդային խեժերի պնդացումը, որոնք պարունակում են առաջնային և երկրորդային ամինախմբեր:

բ) Պեկինում Չինաստանի նախագահի գլխավորությամբ կայացել է Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի պաշտոնական բացումը, որը հիմնադրվել է չինական իշխանությունների նախաձեռնությամբ:

գ) Բաց դեղին կամ կաթնագույն ստանում էին հարդի կամ թթենու տերևներից, որն օգտագործում էին ազնվատոհմիկ կանանց հագուստը ներկելու համար:

դ) Հարգարժան նիստի մասնակիցներ, խնդրում ենք նախապես գրանցվել:

ե) Մեծությամբ երկրորդ Սլովակիայի Կոշիցե քաղաքում տեղադրվել է հայկական խաչքար՝ ի հիշատակ 1915 թ. ցեղասպանության հայոց զոհերի:

զ) Բագրատաշենի անցակետում իրավապահներն առգրավել են կոնյակի կեղծ խմբաքանակ:

է) Մենք ունենք շատ հզոր տնտեսությունից հասկացող մասնագետներ:

ը) Միջազգային փորձագետների հետ քննարկվեցին մի շարք մեզ հետաքրքրող նախագծեր:

թ) Կենդանի օրգանիզմներով բնակեցված Երկիր մոլորակի թաղանթների ամբողջությունը կոչվում է կենսոլորտ (բիոսֆերա):

ժ) Լիցքավորված դրական իոնները՝ կատիոնները, շարժվում են դեպի բացասական էլեկտրոդը:

5. Դրական կառույցները փոխարինե՛ք համարժեք ժխտական կառույցներով և համեմատե՛ք:

Օր.՝ Գալի՞ս էս համալսարան: -Չե՞ս գալիս համալսարան:

ա) Որ խնդրեմ, կբացատրե՞ք այս թեորեմը:

բ) Կարծո՞ւմ եք արդյոք, որ դրանով նպաստում ենք շրջակա միջավայրի պահպանությանը:

գ) Մրցույթի մասնակիցները սխալ էին հասկացել առաջադրանքը:

դ) Համարում եք, որ դա կարևո՞ր է:

ե) Մենք պետք է հաշվի առնենք կողմերի ներկայացրած բոլոր փաստերը:

զ) Վեճը կանխելու համար դեկանը պետք է ընդառաջեր ուսանողներին:

է) Առաջադրանքը ճիշտ կատարելու համար անշուշտ կարելի է հիմք ընդունել Պյութագորասի թեորեմը:

6. Բարդ ստորադասական նախադասությունները վերածե՛ք դերբայական դարձվածներով պարզ նախադասությունների:

ա) Բջջանյութը բաց մոխրագույն թելավոր զանգված է, որը վատ է լուծվում ջրում:

բ) Տիգրանակերտը եղել է քաղաքաշինական առաջադեմ տեխնիկայով ստեղծված մի բնակավայր, որը հիմնադրվել է մ.թ.ա. 1-ին դարում և հարատևել է մինչև 14-րդ դարը:

գ) Երկրագնդի կյանքում նյութերի տարբերակումը հանգեցնում է նրան, որ միջուկում ի վերջո կուտակվում են ամենաձանր քիմիական տարրերը:

դ) Երբ միջավայրը աղտոտվում է, փոխվում է որոշ միջատների, հատկապես գատիկների գույնը:

ե) Նատրիումի ալգինատի հիմնական հատկությունն այն է, որ առաջացնում է մածուցիկ ջրային լուծույթներ:

զ) Չնայած էկոլոգները պայքարում են մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի դեմ, սակայն զանգվածային արտանետումներում միայն ավտոտրանսպորտի բաժինը կազմում է մոտ 65 %:

է) Աշխարհագրական միջավայրի սահմաններում քիմիական տարրերից ամենից շատ ցրվում է երկաթը, քանի որ մետաղների մեջ ամենագործածականն է:

ը) Այն կենդանիները, որոնք ապրում են ավելի խոնավ պայմաններում, ունեն մարմնի ավելի մուգ գունավորում:

թ) Երբ աստղի ջրածնային պաշարը սպառվում է, այն վերածվում է հելիումի:

ժ) Եթե ատոմները երկաթից ծանր միջուկներ ունեն, ապա դրանց սինթեզի ժամանակ վիրթիսարի էներգիա է պահանջվում:

ժա) Էնզիմը սպիտակուցային յուրահատուկ նյութ է, որն առաջանում է կենդանիների կամ բույսերի հյուսվածքներում և խթանում է քիմիական ռեակցիան:

7. Տրված նախադասություններից որո՞նք են փոխակերպվում ներգործականի:

ա) Պահպանվել են նաև Շիրակացու «Տիեզերագիտություն», «Կենդանակերպի համաստեղությունների մասին», «Ամպերի և մթնոլորտային նշանների մասին», «Արեգակի ընթացքի (շարժման) մասին» երկերը և այլ գրքեր:

բ) Մշակույթի և գիտության մի շարք գործիչներ նախագահի կողմից պարգևատրվել են մեդալներով:

գ) Մեր հնէաբանների կողմից ուսումնասիրվել են պեղումների արդյունքում հայտնաբերված բրածոները:

դ) Նորոգման աշխատանքներ կատարելու համար պահանջվում են հմուտ մասնագետներ:

ե) Այդ տեսակետը հիմնավորվում է հոգեբանամանկավարժական մի շարք գիտավորձերով:

զ) Նատրիումի ալգինատը լայնորեն կիրառվում է ատամի մածուկներում՝ ապահովելով դրանց մածուցիկությունը:

է) Խնդիրների նոր ժողովածուն կազմվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դասախոսների կողմից:

ը) Հակառակ պնդումն ապացուցվում է նույն դատողություններով:

թ) Բնության հավասարակշռությունը խախտվում է որոշակի էկոլոգիական գործոններից (մարդու գործունեություն, անտառահատում, արտադրություն ևն):

ժ) Կենդանիներն ու բույսերը ամեն օր, ամեն ժամ ահեղ քննության են ենթարկվում կյանքի, գոյության փոփոխվող պայմաններից:

8. Մեջբերվող ուղղակի խոսքը վերածն՝ ք անուղղակիի և անուղղակի խոսքը՝ ուղղակի խոսքի:

ա) 1. «Քանի դեռ մաթեմատիկական օրենքը արտացոլում է իրականությունը, այն ճշգրիտ չէ,- գրում է Ալբերտ Էյնշտեյնը,- երբ մաթեմատիկական օրենքը ճշգրիտ է, այն չի արտացոլում իրականությունը»:

2. «Եթե սկզբունքային հարցերի մասին ենք խոսում,- մտածեց նա,- ուրեմն, հարգելի՛նէ՛րս, դրությունը այնքան էլ հուսահատական չէ»:

3. - Տվե՛ք ինձ հենման կետ,- ասել է Արքիմեդը,- և ես կտեղաշարժեմ Երկրագունդը:

4. - Տիեզերքը հնարավոր չէ կարդալ, քանի դեռ մենք չենք սովորել լեզուն և չենք ծանոթացել սիմվոլներին, որոնցով դրանք գրված են,- ասել է Գալիլեո Գալիլեյը:

5. Վարպետի վշտալլուկ դեմքը խոժոռվեց, և նա անորոշ մոթմոթաց.

- Տե՛ր Աստված, այդպես էլ գիտեի. սիրտս, ավա՛ղ, չէր խաբում:

6. –Ոչինչ չեն ուզում Ձեզնից. գնացե՛ք, ապրե՛ք երջանիկ,- ասաց նա իր ընդդիմախոսին, ապա վշտացած ավելացրեց.- եթե Դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից առավել թանկ բանը՝ ազատությունը:

բ) 1. Չ. Չապլինը Էյնշտեյնին ուղարկած նամակում գրում է, որ ինքը հիացած է նրանով. նրա հարաբերականության տեսությունը ոչ ոք չի հասկանում, բայց և այնպես նա մեծ մարդ դարձավ:

2. 1925 թ. այցելելով Հայաստան՝ Ֆ. Նանսենը գրել է, թե այս աշխարհում կա՞ արդյոք ևս մի ժողովուրդ, որը ցուցաբերած լինի այսպիսի ամուր և կենսահաստատ ուժ բախտի դաժան փորձությունների մեջ:

3. Գիտնականները հաստատում են, որ շաքարն ուղեղի վրա ազդում է թմրանյութի պես՝ փոխելով ուղեղի քիմիան և առաջացնելով կախվածություն:

4. Էդիսոնը գրում է, որ ինքը հսկայական քանակությամբ ձեռքբերումներ ունի, քանի որ հիմա գիտի մի քանի հազար բան, որոնք չի կարելի անել:

5. Դավիդ Հիլբերտը ասել է, որ մաթեմատիկական կամայականորեն սահմանված կանոններով խաղ չէ. այն ավելի շուտ ներքին կոնցեպտուալ համակարգ է:

6. Կանտը նշում է, որ Արեգակնային համակարգն առաջացել է միզամածությունից, որտեղ ձգողական ուժի շնորհիվ կենտրոնական մարմինը՝ Արեգակը, սկսել է պտտվել:

4.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

4.2.1. Բովանդակության հարստություն և տեղեկատվականություն (149):

4.2.2. Հնչյունական (ձայնական) հարստություն (150): 4.2.3. Բառային կազմի հարստություն: Բառապաշար. բառի բազմիմաստություն: Նորաբանություններ, հնաբանություններ (150): 4.2.4. Բառային զուգակցում: Դարձվածքներ (152): 4.2.5. Խոսքի քերականական հարստություն (153):

4.2.1. Բովանդակության հարստություն և տեղեկատվականություն: Խոսքի հարստության կարևոր պայմաններից մեկը բովանդակության հարստությունն է կամ պարզապես **բովանդակայնությունը**: Սա նշանակում է, որ ասելիքը նախ և առաջ պետք է պարունակի **տոր և կարևոր միտք**: Նորը հեշտ չի ծնվում և մանավանդ հաճախ չի ծնվում: Հայտնի պատմություն կա. Էյնշտեյնին հարցնում են, թե ինչու գրի չի առնում իր հանճարեղ մտքերը, մեծ գիտնականը պատասխանում է. «Դրանք այնքան շատ չեն, որ մոռանամ»:

Բովանդակությամբ հարուստ խոսքը հագեցած է լինում **տեղեկատվությամբ**: Հիմնական պայմանն այն է, որ լուրը, տեղեկույթը լսարանին հետաքրքրեն, նորություն լինեն լսողի կամ ընթերցողի համար: Բայց կարելի է նաև հայտնի իրողությունը, փաստը նոր տեսանկյունով կամ մի նոր հայացքով դիտարկել և կամ դրան ինքնատիպ ու յուրօրինակ մեկնաբանություն տալ:

4.2.2. Հնչյունական (ձայնական) հարստություն: Խոսքի հնչյունական հարստությունը պայմանավորված է լեզվի հնչյունական համակարգի օբյեկտիվ հատկանիշներով, հնչյունական կառուցվածքին բնորոշ առանձնահատկություններով: Տվյալ լեզվի բարեհնչությունը մեծ չափով պայմանավորված է ձայնավոր և բաղաձայն հնչյունների զուգորդության ներդաշնակությամբ և ձայնավորների հարստությամբ: Հայերենն իր հնչյունական համակարգի օբյեկտիվ բնույթով բարեհունչ լեզու է, սակայն բաղաձայնը բաղաձայնին և ձայնավորը ձայնավորին հանդիպադրվելիս բանավոր խոսքում որոշակի դժվարություններ են առաջանում: Օր.՝ դժվար է սահուն արտասանել հետևյալ բառերն ու բառակապակցությունները ընդգծված հնչյունների կից արտասանության պատճառով՝ «մարդ**ու ու** այլ օրգանիզմների **ուսու**մնասիրությունը», «վարժ **շարժ**ումներ», «հա**շվիչի ցուցիչ**», «գի**նու ու** օղ**ու** արտադրությունը» են: Խոսքի ներդաշնակության կարևոր պայման է նաև երկար բառերի հաճախադեպ գործածությունից խուսափելը. կարճ բառերը խոսքին հաղորդում են շարժման, ընթացքի տպավորություն, ավելի դյուրին է լինում խոսակցին լսելն ու ընկալելը:

Խոսքի հնչյունական կառուցման մեջ էական դեր են կատարում նաև սուբյեկտիվ գործոնները՝ հեղինակի անհատական հատկանիշները, նպատակադրումը, խոսքի գործառման ոլորտները, իրադրությունը, խոսքի նյութը կամ թեման են:

4.2.3. Բառային կազմի հարստություն: Բառապաշար: Հարուստ բառապաշարն ու բառերի տեղին գործածությունը գեղեցիկ և հարուստ խոսքի կարևոր պայմաններ են: Դրանք վկայում են լեզվական լուրջ կարողությունների և լեզվաիմացության մասին, հարստացնում են խոսքը, այն դարձնում բազմազան:

Լեզվի բառապաշարի հարստության առաջին ցուցանիշներից է բազմիմաստ բառերի առատությունը՝ **բազմիմաստությունը**, որն ավելի հաճախ հանդես է գալիս բառի փոխաբերական իմաստների դրսևորմամբ: Օր.՝ **արծաթե** բառը հիմնական իմաստով նշանակում է «ազնիվ մետաղից՝ արծաթից պատրաստված»՝ **արծաթե զարդ, արծաթե անոթ**, իսկ փոխաբերաբար՝ «հստակ, մաքուր,

արծաթագույն»՝ **արծաթե լիճ, արծաթե վարսեր:** Կամ՝ **ճառագայթ** բառն ունի «1. լուսատու աղբյուրից բխող լույսի շերտ, 2. որևէ կարգի մասնիկների կամ էլեկտրամագնիսական տատանումների հոսանք» ուղղակի իմաստները՝ **արևի ճառագայթ, ռենտգենյան ճառագայթ, կատոդային ճառագայթ,** իսկ փոխաբերաբար նշանակում է որևէ բանի անսպասելի հանդես գալը, նշույլ՝ **հույսի ճառագայթ, փրկության ճառագայթ** են:

Խոսքի հարստության կարևոր աղբյուր են բառապաշարի ձևաիմաստային խմբերը՝ **հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ,** ինչպես նաև՝ հատուկ բառապաշարի մեջ մտնող բառախմբերը՝ **նորաբանությունները, հնաբանությունները** և այլն: Դրանցից յուրաքանչյուրը, ըստ իր գործառական-ռճական հատկանիշների, որոշակի երանգ է հաղորդում խոսքին:

Հայերենն աչքի է ընկնում բառակազմական միջոցների հարստությամբ, որն ապահովում է բառապաշարի ընդհանուր հարստությունը: Նոր բառերի կազմությունը պայմանավորված է նյութով: Եթե խոսքը նոր երևույթի կամ իրողության մասին է, ապա անհրաժեշտաբար կիրառվում են **նորաբանություններ:** Օրինակ՝ **սպրանքանիշ** (բրենդ), **բնապահպան** (էկոլոգ), **գործառույթ** (ֆունկցիա), **դասիչ** (ինդեքս), **դրամաշնորհ** (գրանտ), **լայնույթ** (ամպլիտուդ), **կայք** (սայթ), **կարծրախտ** (սկլերոզ), **համակարգիչ** (կոմպյուտեր), **վարակաբան** (ինֆեկցիոնիստ), **ցանցահեն** (հաքեր), **փայլաթիթեղ** (ֆոլգա), **ցողացիք** (պուլվերիզատոր), **փորձագետ** (էքսպերտ) են:

Նորաբանությունների (հատկապես դիպվածային նորակազմությունների) գործածությունը պայմանավորված է հեղինակի անհատականությամբ: Խոսքը անհատական նորակազմությունների մասին է: Խոսքին անսովոր թարմություն են հաղորդում հատկապես հաջող «ընտրված» **դիպվածային** բառերը (օր.՝ **հայատարագ, գեներալակազմ, քայլակից, հողատու, իրիկնազգեստ, վազբակոշիկ, օտարազգեստ, խոսադուլ**) են: Ինչպես՝ «Համակարգչագարությունը դարձել է ժամանակակից երիտասարդությանը սպառնացող ամենալուրջ հիվանդություններից մեկը», «Բնապահպաններն ահազանգում են, որ Խոսրովի արգելոցում **անտառահենները** ապօրինի ծառահատում են կատարել»:

Հնաբանությունները (պատմաբառեր և հնաբառեր) պատկանում են բառապաշարի ոչ գործուն բառաշերտին: Դրանք ոչ թե ընդհանրապես չգործածվող, այլ սահմանափակ կիրառություն ունեցող բառեր են և մեծ չափով պայմանավորում են խոսքի հարստությունն ու արտահայտչականությունը: Հնաբանու-

թյունները ստեղծում են պատմական միջավայր, տիպականացնում են կերպարի խոսքը՝ գորացնելով տեքստի գեղարվեստականությունը, խոսքին հաղորդում են հանդիսավորություն, վեհություն, հնավանդ ոգի (**նոքա, ձեռամբ, աստ հանգչի, ի լրումն, բոլորեքյան, դարձ ի շրջանս յուր, քանզի** ևն), որոշ դեպքերում նաև դրսևորում են վերաբերմունք՝ հեզնանք, արհամարհանք, ծաղր ևն:

4.2.4. Բառային զուգակցում: Դարձվածքներ: Խոսքը ճիշտ կառուցելու անհրաժեշտ նախապայման է նաև բառային զուգակցումը (համապատասխանությունը). բառերի համապատասխանության մտածված խախտումները խոսքին կարող են հաղորդել արտահայտչականություն, դինամիզմ. խոսքը դառնում է անսովոր և առավել ազդեցիկ: Օր.՝ «Ես նորապսակներին **դատապարտում եմ** հավերժական երջանկության», «Նրա կարիերան ավարտված է նա **շարունակում է անվերադարձ մեռնել**»:

Խոսքին առանձնահատուկ գրավչություն և բազմազանություն են հաղորդում **դարձվածքները**: Տարբեր ծագում ունեցող դարձվածքները խոսքը ոճավորում են տարբեր առումներով: Ժողովրդական դարձվածքների գերակշռող մասը խոսքին հաղորդում է ժողովրդային երանգ: Դրանք գործածվում են առօրյա բանավոր խոսքում, գեղարվեստական գրականության մեջ և մամուլում՝ ոճավորման նպատակով. «1492 թ. Կոլումբոսը երկար նավարկությունից հետո **ոտք դրեց** նոր, դեռևս անհայտ մայրցամաքի մի կղզի»: «Շատ մի՛ խոսիր, որ **կրակը չընկնես**»: «Երիտասարդ գիտնականի վերջին աշխատությունը **ձեռքից ձեռք էր անցնում**»:

Գրական-գրքային ծագում ունեցող դարձվածքները խոսքին տալիս են հանդիսավորություն, որոշ վերամբարձություն: Օր.՝ «ՄԻԱՎ-ի (մարդու իմունային անբավարարություն) բուժման նոր դեղամիջոցը մեծ **աղմուկ բարձրացրեց** գիտական աշխարհում»: «Ամազոն գետի դելտայում ներկայումս բնակվում են հնդկացիական յանոմամի ցեղի **վերջին մոհիկանները**՝ շուրջ 500 մարդ»: «Հայտնի բան է, որ ցանկացած մարդու համար **խավարի թագավորությունից** դուրս գալու լավագույն միջոցը **գիտության գրանիտը կրծելն է**»:

Դարձվածները հաճախ գործածվում են որպես պատրաստի համեմատություններ, օր՝ **նապաստակի սիրտ ունենալ, կարմիր թելի պես անցնել, շան օրը գցել, աչքի լույսի պես պահել** ևն:

Խոսքին յուրօրինակ թարմություն են հաղորդում դարձվածքների հեղինակային փոփոխությունները, օր.՝ «Իգուր ես այդքան ջանասիրաբար **ձեռքերդ լվանում**. առանց քեզ մեր գործը գլուխ չի գա», «Գործսում **աղվեսի** բաժին դարձավ», «Հին օրերի **տխուր** երգը երգել», «Նա սիրում է կրակի հետ **ժամանակ առ ժամանակ** խաղալ», «**Փոս փորելիս** զգո՛ւյշ եղիր. հնարավոր է՝ պատահմամբ դո՛ւ ընկնես այնտեղ», «Ձուկ են որսում **իրենց պղտորած** ջրում», «Եկա, տեսա, **մնացի**» են:

4.2.5. Խոսքի քերականական հարստություն: Խոսքի **քերականական հարստություն** ասելով՝ հասկանում ենք կիրառվող քերականական ձևերի և կառուցվածքների բազմազանությունը: Առանձին դեպքերում քերականական տարբերակային կամ գուգահեռ ձևերի կուտակումը խանգարում է խոսքի ընկալմանը. այսպես՝ գոյականի հոլովման համակարգում սեռական կամ գործիական հոլովաձևերի (**կազմման, հաշվառման, կոչմամբ, անկմամբ**) համատեղ գործածությունը ստեղծում են անբարեհունչ խոսք, խիստ արհեստական կառույցներ, կամ բայի նույն ժամանակաձևով երկար շարադրանքը ստեղծում է միօրինակություն, մինչդեռ ժամանակաձևերի փոփոխությունը ակտիվացնում է խոսքը, ստեղծում է աշխուժություն:

Խոսքին խոսակցական նրբերանգներ է հաղորդում **դիմափոխությունը**, օր.՝ եզակի երկրորդ դեմքի բայաձևի գործածությունը առաջին դեմքի փոխարեն. «Ասում **ես**, չի լինում, չես ասում, էլի չի լինում, ինչ **անես՝ չգիտես**», երկրորդ դեմքը՝ երրորդ դեմքի նշանակությամբ. խոսողը դիմում է բացակա անձին, ինչպես՝ «Զարմանալի մարդ է Արշակը... Այնքան **զբաղված ես**, որ **չե՞ս կարող** մի քանի րոպե մեզ տրամադրել» են: Հոգնակի առաջին դեմքը՝ երկրորդ դեմքի նշանակությամբ. ունի մտերմական, փաղաքշական իմաստ. «Այսօր ինչպե՞ս **ենք մեզ** զգում» (հարցնում է բժիշկը հիվանդին)³¹:

Խոսքի հարստության կարևոր պայմաններից մեկը **շարահյուսական կառույցների բազմազանությունն է**: Նախադասության հնչերանգային տեսակների՝ մեկը մյուսի փոխարեն գործածությունը, նախադասությունների տարբերակային ձևերը (պարզ և բարդ նախադասություններ՝ իրենց տարաստեակներով), համանիշ շարահյուսական կառույցները (բարդ ստորադասական նախադասություն և դերբայական դարձվածով պարզ նախադասություն, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք են) յուրահատուկ բազմազանություն են հաղորդում խոսքին:

³¹ Տե՛ս նաև **Մկրտչյան Ռ.**, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992, էջ 238:

4.3. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

4.3.1. *Խոսքի առարկայի իմացություն (154):* **4.3.2.** *Բառընտրություն և բառագործածություն. հոմանիշների ընտրություն (154):* **4.3.3.** *Ժամանակավրիպություն (155):* **4.3.4.** *Բարբառայնություններ և ժարգոնային բառեր (156):* **4.3.5.** *Տրամաբանականություն (157):* **4.3.6.** *Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն (157):* **4.3.7.** *Շարահյուսական կառույցների հստակություն (158):*

4.3.1. Խոսքի առարկայի իմացություն: Խոսքը ճշգրիտ է, երբ տարընթերցումների տեղիք չի տալիս, միանշանակ է ու հստակ: **Ճշգրտությունը արտահայտման լիակատար համապատասխանությունն է հաղորդվող մտքին:**

Խոսքի նշված երկու հատկանիշները սերտորեն կապված են միմյանց. ճշգրտությունը խոսքին հաղորդում է հստակություն, և խոսքը ճշգրիտ է, երբ խոսողը կամ գրողը միտքը հաղորդում է հստակ ու հասկանալի: Խոսքի ճշգրտության հիմնական հատկանիշներ են համարվում **առարկայի իմացությունը, բառընտրությունը և բառագործածությունը, տրամաբանականությունը:**

Խոսքի հեղինակը պետք է խորությամբ ուսումնասիրի երևույթը, ճանաչի այն իր բոլոր կողմերով, որպեսզի համապատասխան լեզվամիջոցներով ճշգրտորեն սահմանի կամ ձևակերպի այն:

Ընդունված է առանձնացնել ոչ ճշգրիտ խոսքի երկու տեսակ՝ **առարկայական և հասկացական:** Առաջինը վերաբերում է հենց խոսքի առարկայի չիմացությանը. խոսողը լավ չի պատկերացնում այն առարկան, որի մասին խոսում է:

Երկրորդի՝ **հասկացական անճշգրտության** պատճառը բառի անհաջող կամ սխալ ընտրությունն է, որը աղավաղում է խոսքի բովանդակությունը, խեղաթյուրում է միտքը: Այս դեպքում ճշգրտությունը մասամբ նույնանում է խոսքի ճշտության հետ:

4.3.2. Բառընտրություն և բառագործածություն. հոմանիշների ընտրություն: Անհրաժեշտ բառի ընտրությունը ստեղծագործական դժվարին աշխատանք է և պահանջում է համապատասխան գիտելիքներ: Խոսողը (կամ գրողը) ոչ միայն պետք է լավ իմանա խոսքի առարկան, այլև պետք է տիրապետի նաև բառերի նրբիմաստներին, ունենա անհրաժեշտ լեզվագագացողություն: Այս ոլորտում խոսքի ճշգրտությունը ապահովում են բառապաշարի տարբեր շերտերին ու խմբերին պատկանող բառերի (հոմանիշներ, բազմիմաստ բա-

ներ, տերմիններ, օտար և բարբառային բառեր, ժարգոնային արտահայտություններ են) ճիշտ ընտրությունը և գործածությունը³²:

Հումանիշների ընտրությունը խոսքի ճշգրիտ ձևակերպման կարևոր պայման է: Այսպես՝ **կապակցություն** բառի գործիական հոլովով ձևը նշանակում է **առիթով** և գործածության մեջ էլ փոխարինում է այդ բառին: Կարելի է ասել՝ **պարզևատրել ինչ-որ իրադարձության առիթով, ինչ-որ բանի կապակցությամբ** («Նա պարզևատրվեց նոր գյուտի արտոնագրման **կապակցությամբ**»), բայց եթե անձը (կազմակերպությունը, խումբը) պարզևատրվում է իր կատարած աշխատանքի համար, ապա այստեղ **կապակցությամբ** կամ **առթիվ (առիթով)** բառերը բոլորովին անտեղի են: Պարզևատրել ոչ թե մասնագիտական պատշաճ պատրաստվածություն դրսևորելու կապակցությամբ (կամ՝ առիթով//առթիվ), այլ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն դրսևորելու **համար**:

(Չի) կարելի և հնարավոր (չէ) արտահայտությունները իմաստային տարբերություններ ունեն. առաջինն արտահայտում է **մերժելի է, արգելված է** իմաստը, երկրորդը՝ **անհնար լինելու**: Առաջինը հաճախ գործածվում է այնտեղ, որտեղ պետք է լիներ երկրորդը, և հակառակը, ինչպես՝ «Բենգոլով **չի կարելի** գունազրկել կալիումի պերմանգանատի ջրային լուծույթն ու բրոմաջուրը»: Ճիշտ ընկալվելու համար խոսքի հեղինակը **չի կարելի**-ի փոխարեն պիտի գործածեր **անհնար է** կամ **հնարավոր չէ** արտահայտությունը: Այլ դեպքերում այդ արտահայտությունների շփոթությունը կարող է տարբերությունների տեղիք տալ: Օր.՝ «**Չի կարելի** այդ ճանապարհով հասնել հաջողության» նախադասությամբ հեղինակը մերժում է անընդունելի ձևերով հաջողության հասնելու գաղափարը: Բայց եթե նկատի է առնվում այդ գործողությունը կատարելու անհնարինությունը, ապա նախադասությունը պետք է ձևակերպվեր այսպես՝ «**Անհնար է** այդ ճանապարհով հասնել հաջողության»:

4.3.3. Ժամանակավրիպություն: Միսալ բառընտրությունը կարող է հետևանք լինել նաև **ժամանակավրիպության**. դա որևէ դարաշրջանի վերաբերյալ երևույթների կամ փաստերի, ինչպես նաև լեզվական իրողությունների տեղափոխումն է այլ դարաշրջան: Օր.՝ «Մամվել» պատմավեպում, որտեղ նկարագրվում են 4-րդ դարի դեպքերը, Բաֆֆին մի տեղ խոսում է Մասիսի լանջին բացված փոսի մասին, որը, սակայն, իրականում առաջացել է շատ ավելի ուշ՝ 19-րդ դարի առաջին կեսերին, երբ երկրաշարժի պատճառով սարալան-

³² Տե՛ս **Եզեկյան Լ.**, Խոսքի ճշգրտություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2013, № 2:

ջը փլվել ու տակնուվրա է արել Ակոռի գյուղը: Կամ՝ սխալ կլինի մինչև 17-րդ դարը տեղի ունեցող որևէ իրադարձություն նկարագրելիս հիշատակել պատահաբաղի մասին, քանի որ սպասքի այդ առարկան գործածել են՝ սկսած Լյուդովիկոս 14-րդի (1638-1715 թթ.) գահակալության շրջանից միայն: Կամ՝ ժամանակավրիպություն է 10-րդ դարին վերաբերող երկերում քաղաքավարական **Դուք** -ի գործածությունը, քանի որ այդ ձևը հայերենում գործածության մեջ է մտել 19-րդ դարի կեսերից: Կամ էլ ժամանակավրիպություն է, եթե խոսվում է իբրև թե կես դար առաջ՝ 20-րդ դարի 50-ականներին, հայերենում այնպիսի բառերի գործածության մասին, ինչպիսիք են՝ **համացանց, բջջային (հեռախոս), այլընտրանք, ՀՀ նախագահ, վարչապետ, նախարար, Ազգային ժողով, ԵՏՄ, ԵՄ** ևն: Քերականորեն ճիշտ է, սակայն բովանդակության և լեզվագործածության տեսակետից ճշգրիտ չէ հետևյալ նախադասությունը. «ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակը **1961 թ.** մարտին պաշտոնական այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն»: Կամ՝ «Ազգային ժողովի՝ **1953 թ.** ապրիլի 17-ի որոշմամբ կազմավորվեց ՀՀ մշակույթի նախարարությունը»:

Ժամանակավրիպությունը՝ որպես խոսքի թերություն, առավելապես հանդիպում է հեռավոր անցյալին վերաբերող երկերում, ֆիլմերում, հոդվածներում:

4.3.4. Բարբառայնություններ և ժարգոնային բառեր: Գրական լեզվի նորմերի տեսանկյունից գրական գրավոր կամ բանավոր խոսքում բարբառային և առավել ևս ժարգոնային բառերի գործածությունը անընդունելի է: Սակայն խիստ հազվադեպ, երբ խոսքը ճշգրիտ կառուցելու անհրաժեշտություն կա, շրջանառության մեջ են դրվում **բարբառային** այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնց իմաստային համարժեքը գրական լեզվում չկա, կամ գրական համարժեքը ամբողջ խորությամբ չի արտահայտում հասկացությունը, ինչպես՝ **փոշմանել, թարս, յուլա գնալ** ևն: Օր.՝ «**Հավես** չունեմ այդ գործով զբաղվելու» նախադասության մեջ դժվար է գտնել ընդգծված բառի գրական համարժեքը:

Ժարգոնային-ծածկալեզվային բառերը պատկանում են ցածր ոճին և մտնում են խոսակցական բառապաշարի մեջ: Գրական լեզվի զարգացման տեսակետից դիտվում են որպես բացասական երևույթ և մերժելի են: Խոսքում (գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում և այլուր) կարող են գործածվել ոճական-արտահայտչական նպատակներով, ինչպես՝ **խոսքի, խիպիշ, կուրաժիտ ըլնել, խոխամա, ռազբորկա, քցել, դգել, ավտարիտետ** ևն:

4.3.5. Տրամաբանականություն: Խոսքի առարկայի չիմացությունը, անճիշտ բառընտրությունը և բառագործածությունը հաճախ կարող են պատճառ դառնալ ոչ միայն անհասկանալիության ու անճշգրտության, այլև անտրամաբանականության և թյուրընկալման: Իսկ եթե խախտվում է մտքի տրամաբանական ընթացքը, խոսքը ճշգրիտ լինել չի կարող: Օր.՝ «Հարաբերականության տեսությունը ֆիզիկական երևույթների հասկանալիություններն ուսումնասիրող տեսություն է կամ **ուղղակի** ուսմունք տարածության, ժամանակի և տիեզերական ձգողության մասին» նախադասությունից եզրակացնում ենք, որ հարաբերականության տեսությունը առանց ձգձգումների, առանց վերապահումների ստեղծված ուսմունք է: Սակայն նյութի ընդհանուր բովանդակությունը բոլորովին այլ իմաստ է թելադրում. **ուղղակի** բառը տվյալ դեպքում վերաբերականի արժեք ունի, ուստի նախադասության ճշգրիտ տարբերակը կլինի այսպես՝ «...տեսություն է կամ **պարզապես** ուսմունք՝ տարածության, ժամանակի և տիեզերական ձգողության մասին»:

Խոսքի ճշգրտությունը ապահովելու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել շեշտադրությանը և տրամաբանական դադարին: Հնչերանգը ընդգծում է գլխավոր ասելիքը. դա կատարվում է ուժգնության շեշտի միջոցով («Ժամանակի ամենահզոր էլեկտրոնային արագացուցիչը **Ա. Ալիխանյանի՝** նախաձեռնությամբ ստեղծվեց») կամ էլ տևական շեշտով («Տիեզերքում ամբողջական զանգվածի թիվը իրականում մեր պատկերացրածից **շատ** ավելի մեծ է»): Հիշենք, որ խոսքը ճշգրտվում է բանավոր խոսքում տրամաբանական դադարով, գրավորում՝ կետադրությամբ:

4.3.6. Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն: Խոսքի ճշգրտությունը խաթարելու տեսակետից առավել վտանգավոր են բառակազմական տարբերակները. դրանք, ժամանակի ընթացքում իմաստային տարբերություններ ձեռք բերելով, երբեմն դառնում են ինքնուրույն բառեր և թյուրիմացաբար գործածվում են մեկը մյուսի փոխարեն (օր.՝ **արջորս - արջ որսացող** և **արջաորս - արջի որս**): Սրանց հետ չպետք է շփոթել բառային սխալ կազմությունները՝ **տարեկետում, սննկանալ, անձեռնամխելի, ձեռնատու, ներեղություն** ևն:

Ուշադիր պետք է լինել հատկապես դերանունների գործածության դեպքում: Չտարբերակված իմաստ արտահայտելու հատկանիշը դժվարացնում է դերանունների գործածությունը, եթե խոսքային կառույցում հստակ չէ, թե ում կամ ինչի մասին է խոսքը: Օր.՝ «Եթե սակավաթիվ բեզոարյան այծերի պահպանությամբ նաև բնակիչները չզբաղվեն, ապա նրանք կոչնչացվեն». հստակ

չէ՝ ում է վերաբերում ընդգծված դերանունը՝ **բեզոարյան այծերի՞ն**, թե՞ **բնակիչներին**:

4.3.7. Շարահյուսական կառույցների հստակություն: Խոսքի ճշգրտությունը և հստակությունը մեծ չափով պայմանավորված են շարահյուսական կառույցների ճիշտ ընտրությամբ, բառակապակցություններում բառերի ճիշտ դասավորությամբ: Անհատական հիմնական պատճառներից մեկը բառերի ոչ համապատասխան դասավորությունն է: Օր.՝ «Անօրգանական քիմիան օգտագործում է նաև ֆիզիկայի ու բյուրեղագիտության տեսական հիմունքները և **դրանց** փորձարարական եղանակները» նախադասության մեջ ընդգծված դերանունը քերականորեն վերաբերում է **հիմունքները** բառին, մինչդեռ հեղինակը նկատի է ունեցել **ֆիզիկան ու բյուրեղագիտությունը**, և ստացվել է ոչ ճշգրիտ խոսք՝ **հիմունքների փորձարարական եղանակները**:

4.4. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

4.4.1. «Սեղմ» բառապաշար (158): **4.4.2.** Դարձվածքներ, ասույթներ, թևավոր խոսքեր (159): **4.4.3.** Հապավումներ և համառոտագրություններ (160): **4.4.4.** Քերականական կարճ ձևեր և կառույցներ (160):

4.4.1. «Սեղմ» բառապաշար: Սեղմության առաջին պայմանը **բառաշատությունից խուսափելն է**: Այս առումով դիպուկ է ֆրանսիացի գիտնական, փիլիսոփա և գրող **Բ. Պասկալի** արտահայտությունը իր նամակներից մեկում. «Ես գրում եմ երկար, որովհետև կարճ գրելու ժամանակ չունեմ»: Երբ խոսքը սեղմ է, ավելի արագ է ընկալվում և առավել ազդեցիկ է: Դրան հասնելու համար մի քանի ճանապարհ կա:

• **Զգործածել բառ կամ արտահայտություն, որը որևէ լրացական իմաստ չի հավելում ասվածին, պարզապես ավելորդ է:** Օր.՝ «Ձուրը կարող է մասնակցություն ունենալ (<=**մասնակցել**>) տարբեր քիմիական ռեակցիաների՝ միացման, քայքայման, փոխանակման նն»: Երբեմն անհրաժեշտ է լինում զուգահեռ կատարել նաև քերականական մասնակի փոփոխություններ, մանավանդ օտարաբան կառույցներում, ինչպես՝ «Ճարպերը (լիպիդներ) **իրենցից ներկայացնում են** էներգիայի աղբյուրներ, որոնք հյուսվածքները պահպանում են մեխանիկական վնասվածքներից <=> «...էներգիայի **աղբյուրներ են**», «Գտնվում են կապի մեջ» <=> «**Կապի մեջ են**», «Զինվորներից երեքը **վիրավորում են ստացել**» <=> «...երեքը **վիրավորվել են**», «Մաթեմատիկական մոդել-

ները **հիմք են հանդիսանում** տիեզերքի յուրահատուկ կմախքի համար» <=> «...տիեզերքի յուրահատուկ կմախքի **հիմքն են**» են:

● **Խուսափել բառերի ու արտահայտությունների անհարկի կրկնություններից:** Օր.՝ «Տղամարդու և կնոջ ձայնի **դիսպագոնն ու ձայնածավալը** պայմանավորված են նրանց կոկորդի անատոմիական տարբերությամբ»:

● **Նույնիմաստ բառերի կուտակումը փոխարինել ճիշտ ընտրված մեկ բառով:** Օր.՝ «Հարցի վերաբերյալ կա **կարծիքների** և **տեսակետների** բազմազանություն, տարատեսակություն» <=> «Հարցի վերաբերյալ կան տարակարծություններ»:

● **Կրկնվող բառը գործածել փոխանվանաբար,** ինչպես՝ «Նշված հատկանիշները բնութագրում էին..., իսկ մյուս **հատկանիշները** (**=մյուսները**)... », «Ի տարբերություն **առաջին մոդելի**՝ (**=առաջինի**)՝ երկրորդ մոդելում էական թերություններ չհայտնաբերվեցին... »:

● **Կապային կառույցները փոխարինել հոլովաձևերով.** «Երեք **ամսվա ընթացքում** աշխատանքն ավարտեց »<= «Երեք **ամսում** աշխատանքն ավարտեց», «**ըստ** հեղինակի **կարծիքի**» <= «հեղինակի **կարծիքով**», «առնչվում է **դրա հետ**»<= «առնչվում է **դրան**»:

4.4.2. Դարձվածքներ, ասույթներ, թևավոր խոսքեր: Խոսքի հակիրճությունը ապահովում են նաև տեղին գործածված **դարձվածքը, ասույթը, թևավոր խոսքը** են: Լավ ձևակերպված խրատական մեկ խոսքը կարող է փոխարինել մի ամբողջ բառաշատ խրատաբանության: Օր.՝ «Երբեմն ժամն աշխատում է վատերի համար, իսկ ժամանակը՝ միշտ էլ և բացառաբար՝ արժանավորի՝», «Ինչ որ ընտրողներն են, այն էլ ընտրյալները», «Մեր անձի վրա տարած հաղթանակը՝ ահա՛ հիմքը մեր այլ կարգի հաղթանակների» (Գ. Նժդեհ):

Ասույթների, թևավոր խոսքերի այլ օրինակներ՝ «Ով առաջ է շարժվում գիտությունների գծով, բայց հետ է մնում բարոյականության մեջ, նա ավելի շատ հետ է գնում, քան առաջ» (Արիստոտել), «Բավական չէ առողջ միտք ունենալ, կարևորը դրանից հմտորեն օգտվելն է» (Դեկարտ), «Նա, ով հարց է տալիս, հիմար է հինգ րոպե, ով չի հարցնում՝ հիմար է ամբողջ կյանքում» (չինական ասացվածք), «Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ դրանց լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումը» (Դիստերվեգ), «Ավելի լավ է ոչինչ չասել, քան ասել ոչինչ» (Ա. Կոնի), «Զի կարելի հարց տալ մի բանի մասին, ինչն ինքնին պարզ է» (Արիստոտել), «Մարդկային հիշողությունը սար-

սափելի պարզն է» (Ս. Ցվայգ), «Էլ ինչ արահետ, որ տաճար չի տանում» (Ժող.)
 ևն³³:

4.4.3. Հապավումներ և համառոտագրություններ: Խոսքին սեղմություն են հաղորդում **հապավումներն ու համառոտագրությունները:** Դրանք ստեղծվում են հայերենի ուղղագրության և ուղղախոսության կանոններին համապատասխան: Գործածվում են առավելապես գրավոր խոսքում: Հապավումների և համառոտագրությունների առաջացումը թելադրվել է հենց խոսքի սեղմությամբ: Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին հոդված գրողը, օրինակ, կարող է ըստ հարմարության գործածել ոչ միայն հապավումը՝ **ԱՄՆ**, այլև **Միացյալ Նահանգներ** կապակցությունը, իսկ խոսքային իրադրությամբ պայմանավորված՝ նաև **Նահանգներ** հակիրճ տարբերակը: Ըստ որում, առաջին անգամ գործածելիս խորհուրդ է տրվում հապավումը բացել, մանավանդ եթե այն հանրահայտ չէ:

Գրագրության առանձին ձևերում (հաշվետվություն, տեղեկագիր, օրենսգիրք, արձանագրություն ևն), գիտական ենթառճերում և այլուր **համառոտագրությունները** պարզապես անփոխարինելի գործառույթ ունեն: Համառոտագրությունները հասկանալի պետք է լինեն ընթերցողին, երկիմաստություն չպետք է ստեղծեն:

4.4.4. Քերականական կարճ ձևեր և կառույցներ: Խոսքի սեղմության նշաններից է նաև **քերականական զուգաձևերից** կարճերին նախապատվություն տալը (**ամառվանից** <=**ամռանից**, **գրեցե՛ք** <=**գրե՛ք**, **ինձանից** <=**ինձնից** ևն), կապային կառույցների փոխարեն դերբայական ձևերի գործածությունը (որոշում **կայացնելու ժամանակ** <=**...կայացնելիս**, **աշխատանք կատարելու ընթացքում** <=**...աշխատելիս** ևն), շարահյուսական սեղմ, հակիրճ կառույցների գործածությունը՝ միակազմ նախադասություններ («Ես առաջարկում եմ այդ մասին հարցում անցկացնել և արդյունքների մասին տեղեկացնել» <=**«Հարցում անցկացնել, արդյունքների մասին տեղեկացնել»**), բառ-նախադասություններ (<=**Դուք վստահ եք, որ այդ հարցին կարող եք լուծում տալ:** <=**Համոզված եմ, որ կարող եմ լուծում տալ այդ հարցին»** <=**«Այո՛»**):

Խոսքին սեղմություն է հաղորդում նաև **փոխանունությունը**՝ լավ նմուշները = **լավերը**, ԱՄՆ պաշտպանության նախարարությունը = **Պենտագոնը**, Երևանի բնակչությունը = **Երևանը** ևն:

³³ Տե՛ս նաև **Միրզոյան Վ.**, Ճարտասանություն, Եր., 2004: **Միրբայեյան Ա., Մարդույան Մ.**, Մտքի հրավառություն, Եր., 2002:

Խոսքը սեղմ և հակիրճ է դառնում, երբ հարուստ է լինում հավաստի փաստերով, թվերով, տեղեկություններով, օրինակներով: Խոսքի սեղմությունը, սակայն, չպետք է կառուցվի ի հաշիվ խոսքի պարզության. հակիրճությունը լավ է, երբ գուցակցվում է պարզության հետ:

4.5. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

4.5.1. Տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովում (161): **4.5.2. Տրամաբանության օրենքների պահպանում (162):** **4.5.3. Տրամաբանական սխալներ (164): Վարժություններ և առաջադրանքներ (166):**

Խոսքի տրամաբանականությունը հիմնվում է մարդու կենսափորձի և մտածական կարողությունների, ինչպես նաև այն ունակության վրա, որով նա կարողանում է ճիշտ կողմնորոշվել երևույթների պատճառահետևանքային կապերում և բացատրել դրանք: Խոսքի տրամաբանականությունը ապահովող կարևորագույն գործոններ են՝ տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովումը, տրամաբանության օրենքների իմացությունը և դրանց գործնական իրացումը, բառընտրության և բառագործածության հստակություններին տիրապետելը: Դրանցից մեկի կամ մյուսի բացակայությունը հաճախ ծնում է տրամաբանական սխալներ:

4.5.1. Տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովում: Խոսքը պետք է ունենա կոտ կառուցվածք. խոսքի բաղադրիչ տարրերից յուրաքանչյուրը պետք է տրամաբանորեն բխի նախորդից, պայմանավորված լինի նախորդով: Հարակից հարցերը, որոնք այս կամ այն կերպ քննարկվում են խոսքում, պիտի ծառայեն հիմնական գաղափարի հաստատմանը, սերտ միասնության մեջ լինեն դրա հետ: Հակառակ դեպքում՝ խախտվում է մտքի բնական ընթացքը, խոսքը դառնում է անհետևողական ու ձգձգված:

Խոսքի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապը ապահովելու համար անհրաժեշտ է հետևել տեքստի կառուցման մի քանի կարևոր սկզբունքների.

ա) Պահպանել տեքստի կառուցվածքային բաղադրիչների հերթագայության ընդունված կարգը՝ ներածական մաս (մուտք), հիմնական (միջին) մաս և եզրափակիչ մաս: **Ներածական մասում** պետք է ներկայացվեն այն հիմնական

հարցադրումները, որոնց մասին խոսվելու է: Գլխավոր մտքերը պիտի հնչեն կա՛մ հիմնական մասի սկզբում, կա՛մ էլ վերջում, քանի որ **միջին մասում** ավածը սովորաբար մնում է աննկատ՝ միախառնվելով ընդհանուր դիտարկումներին: **Եզրափակիչ մասում** տրվում են տրամաբանական ընդհանրացումներն ու եզրակացությունները. դա էլույթի ամենատպալուրիչ հատվածն է, ուստի այդ մասում նպատակահարմար է վերստին անդրադառնալ գլխավոր մտքերին:

Խոսքի ճիշտ կառուցման տրամաբանությունը թելադրում է տեքստի մասնատում պարբերությունների: Մասնատումը պետք է լինի պատճառաբանված ու նպատակային. անհաջող մասնատումը էապես դժվարացնում է նյութի ընկալումը: Խորհուրդ է տրվում գործածել համեմատաբար ոչ ծավալուն պարբերություններ:

բ) Ապահովել տեքստի բովանդակային ամբողջականությունը: Բաղադրիչ նախադասությունները պիտի պահպանեն իմաստային կապը, որը իրականացվում է նախորդ նախադասության բառերի կրկնություններով, մակբայների, դերանունների գործածությամբ (**այստեղ, հետո, այդ ժամանակ, վերջապես** են), կապերով (**բացի, նման** են), միջարկություններով (**ինչպես արդեն ասվել է, վերն ասվածի համաձայն** են), նախադասության մեջ բառերի դասավորությամբ, դադարներով, հնչերանգային ելևէջումներով են: Օր.՝ ստորև բերվածը քերականորեն ճիշտ նախադասություն է, որում, սակայն, մտքի տրամաբանական ընթացքը խաթարված է շաղկապի սխալ կիրառության պատճառով. «Վաղը Երևանում սպասվում է 14-16 աստիճան տաքություն, **իսկ** Արմավիրում նույնպես մոտ 14-16 աստիճան տաքություն է»:

4.5.2. Տրամաբանության օրենքների պահպանում: Տրամաբանական խոսք կառուցելու համար պետք է պահպանել նաև **տրամաբանության օրենքները:** Դրանք չորսն են:

1. Նույնության օրենք: Մի դատողության կամ վերլուծության շրջանակներում **խոսքի առարկան պետք է մնա նույնը:** Խոսելու ընթացքում մի հասկացությունը չպետք է փոխարինել մեկ ուրիշով, մի դատողությունը՝ մյուսով: Եթե մի առարկայից չպատճառաբանված անցում է կատարվում այլ առարկայի, մի թեմայից մեկ այլ թեմայի, ապա շեղվում է մտքի տրամաբանական ուղին, թերի է մնում քննարկման առարկան: Անօրյա հաղորդակցման ժամանակ զրույցը երբեմն չի ստացվում այն պարզ պատճառով, որ կողմերը խոսում են

տարբեր բաներից: Այդպիսի դեպքերում հաճախ են հնչում «Խոսքդ մի՛ փոխիր», «Խոսքդ կտուրը մի՛ գցիր» արտահայտությունները:

2. Հակասության օրենք: Նույն իրողության վերաբերյալ երկու **հակադիր** դատողություններ չեն կարող միաժամանակ ճշմարիտ լինել: «Քլորն ակտիվորեն փոխազդում է **բոլոր տարրերի** հետ: Չի փոխազդում միայն «ազնիվ» գազերի՝ թթվածնի, ածխածնի ու ազոտի հետ»: Ստեղծվել է տրամաբանական հակասություն. ասվում է, որ փոխազդում է բոլորի տարրերի հետ, ապա ավելացվում է, որ մի քանիսի հետ ինչ-ինչ պատճառներով չի փոխազդում:

Հակասության օրենքը գործում է նույնության օրենքի առկայության դեպքում, քանի որ խոսքը պետք է վերաբերի միևնույն առարկային, նույն ժամանակին և հարաբերությանը: Օրենքի մեկ այլ՝ մասնավոր դրսևորում է հետևյալը. «PARKER ֆիրմայի բոլոր գրիչները լավն են». այս դատողության **հակադարձ** դատողությունը («Բոլոր լավ գրիչները PARKER ֆիրմայի են») ճիշտ չէ: Ի դեպ, այս դեպքում **հակադարձ** կամ **հակադիր** բառի փոխարեն **հակառակ** բառի գործածությունը սխալ է, քանի որ բերված դատողության հակառակ դատողություններից մեկը, օրինակ, հետևյալն է. «PARKER ֆիրմայի ոչ մի գրիչ լավ չէ»:

3. Երրորդի բացառման օրենք: Եթե նույն առարկայի մասին կան երկու **հակասող** դատողություններ, ապա դրանցից մեկը ճիշտ է, մյուսը՝ կեղծ: «**Բոլոր** եռանկյունիները հավասարակողմ են» և «**Ոչ բոլոր** եռանկյունիներն են հավասարակողմ». այս դատողություններից մեկը՝ երկրորդը, ճիշտ է, քանի որ փորձով ապացուցված է, որ այն համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը: **Երկու հակադիր** դատողություններ կարող են միաժամանակ սխալ լինել: Օր.՝ «Բոլոր եռանկյունիները հավասարակողմ են» // «Ոչ մի եռանկյունի հավասարակողմ չէ»:

4. Բավարար հիմքի առկայության օրենք: Դատողությունը պետք է ունենա բավարար հիմնավորվածություն, փաստարկում: Այն համարվում է ճշմարիտ, եթե նրա ճշմարտացիությունը ապացուցված է: Հիմնավորում(ներ)ը պետք է լինի (լինեն) ավարտուն և ամբողջական:

Բավարար հիմքի առկայությունը ենթադրում է լեզվական ու արտալեզվական ամենատարբեր միջոցների կիրառություն՝ փաստեր ու փաստարկներ, հղումներ հեղինակավոր աղբյուրներին, վավերագրեր, թվային տվյալներ, սեփական փորձից կամ հայտնի մարդկանց կենսափորձից բերված օրինակներ, լսարանի տրամադրության, նրա խղճի ու զգացմունքների վրա ներազդելու

միջոցներ, հեղինակությունների վկայակոչում են: Օր.՝ «Եթե եռանկյան բոլոր անկյունները հավասար են, ապա եռանկյունը հավասարկողմ է: Հավասարակողմ եռանկյան յուրաքանչյուր անկյուն 60 աստիճան է, քանի որ եռանկյան բոլոր անկյունների գումարը 180 աստիճան է»:

4.5.3. Տրամաբանական սխալներ: Որպեսզի հեշտությամբ կարողանանք հետևել սեփական խոսքի տրամաբանականությանը, պետք է իմանանք, թե հատկապես ինչ պատճառներով և որ դեպքերում են առաջանում սխալները: Դրանք առավելապես հանդիպում են **բառագործածության մեջ** և **շարահյուսական կառույցներում**³⁴:

ա) Տարբնույթ հասկացությունների համադրություն կամ հասկացությունների շփոթ: Համեմատվող կամ հակադրվող երևույթները տարբեր բնույթի են՝ տարասեռ: Օր.՝ «Բնական ջրերում լուծված աղի **քանակը** տարբեր է անապատային աղի **լճերից**». **քանակը** հասկացությունը հանդիպադրվում է անապատային աղի **լճերին** և ոչ թե նրանցում եղած աղի **քանակին**: Կամ՝ «Տորֆամուտի կլանած ջրի **կշիռը** 20-30 անգամ *գերազանցում է չոր նյութին* (<=>չոր նյութի **կշռին**)»:

Մի հասկացությունը թյուրիմացաբար գործածվում է մյուսի փոխարեն, օր.՝ «Անհամբեր սպասում եմ իմ ծննդյան օրվա **մոտենալուն**» (ոչ թե **մոտենալուն**, այլ **օրվան**), «Կարևոր խնդիրներից է չոր եղանակային պայմաններում **բույսերի** վերգետնյա կանաչ զանգվածի մթերման **հարցը**» (ոչ թե **հարցը**, այլ մթերումը):

Հասկացությունների շփոթը հաճախ առաջանում է **բառը բաց թողնելու** կամ **խոսքը ոչ լիարժեք ձևակերպելու հետևանքով**: Օր.՝ «Կարճալիք **ճառագայթների** պատճառով Արևի ուղիղ լույսը մոլորակի մակերեսի մոտ դեղին երանգ է ստանում». ոչ թե ճառագայթների պատճառով, այլ ճառագայթների **կլանման** պատճառով:

բ) Բառիմաստի չիմացություն կամ սխալ բառագործածություն: Օր.՝ «Երկրագնդի 930 ակտիվ **հրաբուխները** հաճախ մարդկային գոհերի և մեծ ավերածությունների առիթ (**պատճառ**) են **դառնում**», «Իրականացան նրանց ծրագրերը. **ասել է թե՛ նրանց բոլոր հույսերն ի դերն ելան**». այս մտքերի հեղինակները ակնհայտորեն չգիտեն ընդգծված բառերի իմաստները և դրանք գործածել են հակառակ նշանակությամբ կամ պարզապես այլ բառերի փոխարեն:

³⁴ Հմմտ.՝ **Голуб И.**, Русский язык и культура речи, М., 2007, էջ 332-347:

զ) Միմյանց «ներառող» հասկացությունների համատեղ գործածություն: Օր.՝ «Հասարակական և բնական գիտությունները, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը ձգտում են գիտական մեթոդներով լուսաբանել աշխարհը ղեկավարող կանոնները»։ **բնական գիտությունները** բառակապակցությունն արդեն իսկ ներառում է բնագիտության զանազան ճյուղերը: Մեկ այլ օրինակ՝ «Գորտերը սնվում են փափկամարմիններով, հողվածոտանիներով և այլ տարատեսակ որդերով»: Նախադասությունը այնպես է ձևակերպված, որ թվում է, թե փափկամարմիններն ու հողվածոտանիները նույնպես որդերի տեսակներ են, որը ոչ միայն տրամաբանական չէ, այլև սխալ է: Պետք է լինեն՝ «Գորտերը սնվում են փափկամարմիններով, հողվածոտանիներով և տարատեսակ որդերով»:

դ) Տարասեռ դասակարգում: Դասակարգվող, համեմատվող կամ հակադրվող երևույթները նույն բնույթի չեն: Օր.՝ «Տունդրայում ձմռանը միջին ջերմաստիճանը տատանվում է -20-ից մինչև -50 °C-ի սահմաններում, իսկ ամռանը հողի ընդամենը 0,5 - 1,5 մետրանոց շերտ է հալվում» դատողության առաջին մասը ենթադրել է տալիս, որ երկրորդ մասում նույնպես խոսքը պիտի վերաբերեր ջերմաստիճանին և ոչ թե հողային շերտին: Այլ օրինակ՝ «Հայ մարդուն հավասարապես հոգեհարազատ են հույն Սոֆոկլեսը և իտալացի Դանթեն, ռուս Տուրգենևը և գերմանացի Հայնեն, **Սերվանտեսը և Շեքսպիրը**»։ քերականորեն ճիշտ ձևակերպված այս նախադասության մեջ տրամաբանական անճշտություն կա. թվարկվող առաջին չորս հեղինակները բնութագրվում են որոշակի հատկանիշով (ազգությամբ), մյուս երկուսը՝ ոչ: Մինչդեռ խոսքի տրամաբանությունը կառուցված է գաղափարական հենց այդ հենքի վրա, այն է՝ համաշխարհային գրականության բոլոր մեծերն էլ, անկախ ազգությունից, իրենց արվեստի ուժով հոգեհարազատ են հայ մարդուն:

ե) Միսալ շարադասություն: Օր.՝ «20-րդ դարի երկրորդ կեսին սնկերը և ջրիմուռների որոշ տեսակներ դասվեցին առանձին կարգերի մեջ, **որոնք** չունեին անոթային և արմատային համակարգեր»։ **որոնք**-ը լրացնում է սնկերին ու ջրիմուռներին. մտքի տրամաբանական ընթացքը խաթարվում է: Ճիշտ է՝ «20-րդ դարի երկրորդ կեսին առանձին կարգերի մեջ դասվեցին սնկերը և ջրիմուռների որոշ տեսակներ, **որոնք** չունեին անոթային և արմատային համակարգեր»: «Արագ կատարվող ՄԻԱՎ-ի թեստերը հնարավորություն են տալիս ներկայացնելու արդյունքները այցելության հենց առաջին օրը»: Պետք է լինի՝ «ՄԻԱՎ-ի արագ կատարվող թեստերը հնարավորություն են տալիս...»:

Անտրամաբանականությունը երբեմն գործածում են որպես ոճական հնարանք՝ սրամիտ ու բովանդակից խոսք ստեղծելու համար: Ինչպես՝ «Ունեմ երկու ընկեր. **մեկը** մասնագիտությամբ **մաթեմատիկոս է, մյուսը՝ երգվյալ ամուրի»**, «Ունի **ավտոմեքենա, առանձնատուն** և քաղաքական կայուն **հայացքներ**»:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Գտե՛ք խոսքի հնչյունական ներդաշնակության խախտումները:

1. Ջրաչափի ցուցմունքները արձանագրող տեղամասային տեսչական ներկայացուցիչը ցուցիչի կեղծ չափումներ էր կատարել և հավելագրումներ թույլ տվել: **2.** Փախստականների՝ անձը հաստատող փաստաթղթերը փոխանցվեցին փաստահավաք առաքելություն անցկացնող միջազգային փաստաբանական խմբի ղեկավարին: **3.** Ջրացատկի մրցության նախապես չգրանցված մասնակիցների մրցելույթները չեղարկվեցին, և եզրափակչին մասնակցելու իրավունքը տրվեց հրավիրյալ մարզիկներին: **4.** Ժխտվում է թորիումի ու ուրանի առկայությունը ՀՀ-ում, ու անպատասխան են մնում այդ փաստին վերաբերող հարցերը: **5.** Վարկային ընկերությունը առաջարկում է սպառողական վարկեր տասնչորսուկես տոկոս տոկոսադրույքի չափով: **6.** Դպրոցականները մեծ հետաքրքրությամբ էին դիտում ցուցահանդեսում ցուցադրված ցանցաթևավորների ցուցանմուշները: **7.** Փափուկ զոդանյութերով զոդելիս գերակշռում է ադգեզիան (մակերևութային կաշունությունը), կոշտ զոդանյութերով զոդելիս՝ առկա է նաև հալում և դիֆուզիա:

2. Տրված բառերով ու բառակապակցություններով կազմե՛ք նախադասություններ՝ դրանք օգտագործելով ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Թեթև, երես, ծանր հրետանի, ընդհանուր հայտարար, վերջակետ դնել, անալի, տափակ, արբանյակ, կծել, աստղ, հազար անգամ, անողնաշար, թթու, շարքից դուրս գալ, որսալ, դաս տալ:

3. Առանձնացրե՛ք նորակազմությունները և բառակազմորեն վերլուծե՛ք:

ա) Շրջակա միջավայրը տեխնածին և կենցաղային արտանետումներով աղտոտվելուց պաշտպանվելու ֆիզիկական մեթոդների դերի բացահայտումը կարևորվում է:

բ) Ուսումնասիրվել են երկկողմանի գրաֆների մաքսիմալ անկախ բազմության, թվային բազմության ամենաերկար աճող ենթահաջորդականության խնդիրները:

գ) Փորձարկվել են նաև ֆիզիկաէկոլոգիական կրթատիրություն միտված տասնմեկ ընտրովի ինտեգրատիվ դասընթացներ:

դ) Այդ վայրերում դա կատարվում է հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով:

ե) Կատալոգի բոլոր կետային աղբյուրներից հայտնաբերվել է 55 նոր գերլուսատու ենթակարմիր գալակտիկա, և ստեղծվել է ԵԿ գալակտիկաների ամենամեծ ընտրանքը:

զ) Կատարվել են լուսաչափական հետազոտություններ:

է) Իրականացվել են հակառադիկալային, լյարդապաշտպան և հակալեղաքարային ակտիվությամբ օժտված դեղաբույսերի լուծամզվածքների ֆիտոքիմիական և հանքային կազմի հետազոտություններ:

ը) Գործածական կարո՞ղ են դառնալ արդյոք մաթեմատիկական տերմիններին իբրև համարժեք առաջարկվող հետևյալ նորակազմությունները՝ մոդուլ - հենաթիվ, աքսիոմա - հենասույթ, ռացիոնալ - քանորդահեն, գրաֆիկ - զծարկ, ինտեգրալ - բոլորակ, բազա - հենք:

թ) Խաչատուր Էրզրումցու, Սուքիաս Աղամայանի, Սահակ Պրոնյանի՝ գրաբարով գրված աշխատություններում հանդիպում են խոտորանկյուն (obliquanculus), խառնագիծ (mixtilinea), ծոցակից/համածոց (cosinus), շոշափակից/շոշափողակից (cotangens), առաջաքայլում (progressio) տերմինները³⁵:

ժ) Նպատակահարմա՞ր էք համարում հետևյալ տերմինների թարգմանությունը. Էլեկտրոլիզը՝ էլեկտրատարրալուծում, հիդրոլիզը՝ ջրատարրալուծում, ինդիկատորը՝ հայտանյութ, ռեագենտը՝ ազդանյութ, էկզոթերմիան՝ ջերմանջատիչ, էնդոթերմիան՝ ջերմակլանիչ, դելոկալիզացիան՝ ապատեղայնացում, ստերեոքիմիան՝ տարածաքիմիա, վալենտականությունը՝ արժեքականություն ևն³⁶:

4. Օգտվելով դարձվածաբանական բառարաններից՝ բացատրե՛ք տրված դարձվածքների, թևավոր խոսքերի ծագումը և իմաստը:

Ռուբիկոնն անցնել, դամոկլյան սուր, քավության նոխազ, ընդհանուր հայտարարի գալ, դանայան տակառ, կլոր սեղան, արգելված պտուղ, ավզյան ախոռ, տրոյական ձի, Ադամի (Եվայի) հագուստով, կոկորդիլոսի արցունքներ թա-

³⁵ Տե՛ս [http://Iraber.asj-oa.am/4530/1/1986-3\(70\):](http://Iraber.asj-oa.am/4530/1/1986-3(70):)

³⁶ Տե՛ս <http://chemistry.asj-oa.am/58/1/19-972:>

փել, ջայլամի քաղաքականություն, Դիոգենեսի տակառ, վերջին մոհիկան, գառան մորթով գայլ, սպիտակ ագռավ:

5. Փոփոխե՛ք տեքստը՝ գործածելով խոսքի հարստության ու բազմազանության տարբեր միջոցներ:

Արևադարձային անտառի բնակիչներից մեկը թութակն է, որն իր գույների ու բնավորության շնորհիվ դարձել է մարդկանց սիրելի թռչուններից մեկը և տարածվել աշխարհով մեկ: Միջնադարյան մի մագաղաթում գրված է, որ դեռևս 13-րդ դարում հայերն իրենց տներում պահում էին թութակների այնպիսի տեսակներ, որոնց բնօրրանը գտնվում է Խաղաղ օվկիանոսի կղզիներում: 1262 թ. Կիլիկիայում Թորոս Ռոսլինի ձևավորած մի մատյանի՝ Ավետարանի էջերը դիտելիս տեսնում ենք նկարներ, որոնցում պատկերված են կակադուներ: Այս թութակները մյուս ցեղակիցներից տարբերվում են նրանով, որ ունեն խրձաձև կատարներ, որոնք հիանալի տեսք են տալիս նրանց: Բացի դրանից՝ դրանք բնավորությամբ մարդամոտ են, համբերատար, աշխույժ ու ուրախ և շուտ են ընտելանում մարդկանց՝ դառնալով նրանց հանապազօրյա զբաղմունքի առարկաները: Ահա թե ինչու Կիլիկիայի բարձր դասի մարդիկ կցանկանային ունենալ այս թութակներից, իսկ պալատական նկարիչ Ռոսլինը, տեսնելով և մանրամասն ուսումնասիրելով, կարող էր ճշգրիտ պատկերել այդ թռչուններին, որոնք բնակվում էին դեռևս չբացահայտված մի երկրում՝ Ավստրալիայում:

6. Փակագծում տրված բառերից ընտրե՛ք համապատասխան տարբերակը՝ հիմնավորելով ընտրությունը:

1. Գարնանն ու աշնանը օրգանիզմի (դիմադրությունը, դիմադրողականությունը) ընկնում է, այդ պատճառով պետք է վիտամիններ օգտագործել: 2. Ցեղասպանությունից մագապործ բազմաթիվ հայեր (ապաստան, ապաստարան) գտան Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների երկրներում: 3. Վերջին ամիսներին աշխատանքից (ազատ են արձակվել, ազատվել են) մի քանի տասնյակ պաշտոնյաներ: 4. Ուսանողներից մի քանիսը (զեկուցումներ, զեկույցներ) են կարդացել ՈՒԳԸ-ում. դրանք շուտով (լույս կտեսնեն, կտպագրվեն) ՈՒԳԸ-ի պաշտոնական կայքում: 5. Ակնհայտ է, որ հոգեբանական պատերազմ է մղվում հանրության դեմ՝ յուրաքանչյուրիս անվստահության (զգացում, զգացմունք) ներշնչելու համար: 6. Ներկայացվածը այդօրինակ հանդիպումների անհրաժեշտությունն ու օգտակարությունը հիմնավորող լրացուցիչ (փաստ, փաստարկ) է: 7. Տրանսպորտի խնդիրը կարգավորե-

լու համար անհրաժեշտ են քաղաքակիրթ լուծումներ, որոնցից մեկը վճարման (միասնական, միացյալ) համակարգի ներդրումն է: **8.** Համատիրության ներկայացուցիչը հրահանգ է ստացել բնակիչներից ժամանակին (հավաքել, հավաքագրել) սպասարկման վարձերը: **9.** Այդ կարևորագույն խնդրի վերաբերյալ տարակարծությունները (ծագել, ստեղծվել) էին սխալ տեղեկատվության (շնորհիվ, պատճառով): **10.** Խնդրում եմ լուրջուն (պահպանել, պաշտպանել) դահլիճում:

7. Գտե՛ք և ուղղե՛ք խոսքի ճշգրտությունն ու հստակությունը խախտող իրողությունները:

1. Ժամանակակից ծրագրավորման լեզուների կառուցվածքը և հատկանիշները հաճախ հակամետ են համակարգված դատողություններին սովոր մտածողությանը: **2.** Խզումը մաթեմատիկոս-ծրագրավորողի ստացած բարձր մաթեմատիկական լիցքի և ամենօրյա ծրագրավորման սովորական աշխատանքի մեջ որոշ մասնագետների մոտ ստեղծում է արժեզրկման զգացում: **3.** Լեզվի տեսչության օտարալեզու ցուցանակները արգելելու որոշումը սպասված էր հանրության շրջանում: **4.** Տուժած կողմի համար բռնազանձվեցին ավտոմեքենան և սեփական տունը: **5.** Բնակիչների բողոք-դիմումին ուղղակի պետք է ժամանակին պատասխանել և ընթացք տալ: **6.** Ես երախտապարտ եմ Ձեզանից այդպիսի աջակցության համար: **7.** Քաղաքականությունը պետք է այնպես վարել, որպեսզի ռազմական հարցերը որոշիչ դեր չկատարեն: **8.** ՀՀ-ում կառավարության ներդրումներ անելու օտարերկրյա գործարարներին ուղղված կոչը ընթացիկ տարում դրական արդյունք կտա: **9.** ԵՊՀ-ն խթանում է այն ծրագրերին, որոնք նպատակ ունեն խրախուսելու ուսանողների քննադատական միտքը: **10.** Մերունդները երախտիքով կհիշեն Ֆ. Նանսենի անունը, որը հայերիս նկատմամբ մեծ գործ է արել: **11.** Եթե նյութը, ջրի հետ խառնվելով, մանրանում է ընդհուպ մինչև մոլեկուլներ կամ իոններ, ապա առաջացնում է անհամասեռ լուծույթ: **12.** Երկրի որևէ կոնկրետ վայրից լրիվ արեգակնային խավարում շատ հազվագյուտ է դիտվում:

8. Խմբագրե՛ք տրված տեքստը՝ ուղղելով խոսքի անճշտությունները:

ա) Ծրագրավորումը դա այն մասնագիտությունն է, որը վաղուց արդեն դարձել է ամենապահանջված և տարածված մասնագիտություններից մեկն աշխարհում: Սակայն և՛ դասավանդման, և՛ առօրյա պրակտիկայում հաճախ, ցավոք, գերիշխում են մակերեսային, դեղատոմսային մոտեցում ծրագրավորման ուսումնառության և կիրառման հանդեպ:

Այն լեզվով, որը ուսանողին սովորեցնում են արտահայտել իր մտքերը, խորը ազդեցություն է գործում նրա մտածողության հմտությունների և ստեղծագործական ընդունակությունների վրա: Ներկայումս կիրառվող ծրագրավորման լեզուների կառուցվածքը և հատկությունը հաճախ չի ենթարկվում համոզիչ ու տրամաբանական բացատրության, չի համապատասխանում համակարգված դատողություններին սովոր մտածողությանը: Արդյունքում ծրագրավորման լեզուներում տիրող անկանոնություններն անմիջականորեն ազդում են ուսանողների մոտ ձևավորվող ծրագրավորման ոճի վրա:

բ) Վերջին տարիներին մեծ ուշադրության առարկա է դարձել մարդկանց շահագործման խնդիրը՝ թրաֆիքինգը, որը բազմաթիվ երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվում է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատության ոտնահարման կոպիտ խախտում: Հայաստանը ևս գուրկ չի մնացել այդ երևույթից: Թրաֆիքինգի զարգացմանը օգնում է նաև օրենքի պահանջների կատարման հանդեպ պատրաստականության պակասը: Այն իրենից ներկայացնում է բարդ երևույթ, որը հաճախ կապված է սոցիալական, տնտեսական և այլ գործոններով: Ինչ վերաբերվում է թրաֆիքինգի իրականացման ուղիներին, ապա դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը հանդիսանում է ինչպես դրա ծագման, այնպես էլ տարանցիկ երկիր:

գ) Ջրիմուռները դրանք հնագույն բուսական օրգանիզմներ են, որոնք դեռևս միլիոնավոր տարիներ առաջ բնակեցրել են երկիր մոլորակը: Ջրիմուռների մեծ մասը ապրել և դեռևս շարունակում են կենսագործել հիմնականում ջրային միջավայրում: Ջրային միջավայրում բնակության նախասիրությամբ էլ սրանք ստացել են իրենց անվանումները:

Ջրիմուռները համեմատաբար պարզ բուսական օրգանիզմներ են և տեղադրվում են ստորակարգ բույսերի ենթաթագավորության մեջ: Ընդհանուր առմամբ հայտնի է մոտ 30.000 տեսակ ջրիմուռներ: Ջրիմուռները՝ որպես ավտոտրոֆ ֆոտոսինթեզող, իրենց մեջ պարունակում են քլորոֆիլ, որը նրանց մոտ գտնվում է հատուկ կազմավորումներում՝ քրոմատոֆորներում: Բացի դա, իրենց մեջ կարող են պարունակել նաև այլ գունանյութեր:

9. Կատարելով անհրաժեշտ փոփոխությունները՝ նախադասությունները դարձրե՛ք սեղմ:

1. Պետք է ասել, որ մենք քայլեր ենք ձեռնարկում մեր սոցիալական վիճակը կարգավորելու և բարելավելու ուղղությամբ: **2.** Մեր կազմակերպությունն

արդեն մի քանի ամիս է, ինչ զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար Տաթևի համալիրը մատչելի դարձնելու խնդրով: **3.** Ներկայումս վնասակար նյութերի արտանետումների հիմնական աղբյուր են հանդիսանում էներգետիկայի և լեռնամետալուրգիական ոլորտները: **4.** Այսպիսով, կարող ենք փաստել, որ նոր հայտնաբերված գտածոները նոր լույս կսփռեն Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթի առեղծվածների վրա: **5.** Այդ ամենը, իհարկե, միանշանակ խոսում է այն մասին, որ Թուրքիան դեռ պատրաստ չէ երկխոսության: **6.** Գիտնականները պարզել են, որ անձրևորդերի հյուսվածքների մեջ ծանր մետաղների պարունակությունը կարող է ծառայել որպես հողի աղտոտվածության ստույգ ցուցանիշ: **7.** Համարվում է, որ ինդիկատորային օրգանիզմը դառնում է մոնիթոր, եթե այն կարող է ծառայել բնակության միջավայրի կամ էկոհամակարգի վիճակի որակական բնութագրման, ինչպես նաև քանակական գնահատման համար: **8.** Կան դեպքեր, երբ միջավայրի աղտոտվածության ազդեցության տակ փոխվում է գույնը միջատների մոտ, օրինակ՝ գատիկների գույնը. այն մզանում է լուսավորվածության վատթարացման հետևանքով, որը տեղի է ունենում մթնոլորտի աղտոտվածության պատճառով:

10. Պարբերությունները դասավորե՛ք տրամաբանական հաջորդականությամբ:

1. ա) Եթե հավատանք առասպելներին, ապա մարմնի ծավալի՝ կշռին կապված լինելու հանգամանքը Արքիմեդը հայտնաբերել է բաղնիքում՝ սեփական փորձով համոզվելով, որ լոգարանում ջուրը բարձրանում է իր սուզման չափին համապատասխան. այստեղից էլ ծնվել է հայտնի արտահայտությունը՝ է՛վրիկա, է՛վրիկա. կամ տիեզերական ձգողականության օրենքի մասին միտքը Նյուտոնի գլխում հասունացել է այն պահին, երբ նա տեսել է, թե ինչպես է խնձորը ծառից ընկել գետնին:

բ) Սակայն գոյություն ունեն մեծ թվով պատմություններ, որոնք գիտական հայտնագործությունները ներկայացնում են որպես պատահականության արդյունք, ճակատագրի նախախնամություն:

գ) Այսպիսով, իրական դեպքերն ու մարդիկ հաճախ տարանջատված չեն հորինվածքի և իրական պատմության սահմանագծով: Արքիմեդի և Նյուտոնի մասին լեգենդները թերևս ամենահայտնիներն են. դրանք քրեստոմատիկական են:

դ) Պատահաբար արված գյուտերը՝ որպես օրինաչափություն, պարուրված են առասպելներով: Պատահականությունը հանճարեղ գյուտի նույնքան իրավահավասար մասնակիցն է, որքան գիտական երկարատև համառ հետազոտությունը:

2. ա) Այն հունարեն *ἀξίωμα* (*axioma*) բառից է, որ նշանակում է արժեքավոր գաղափար, կամ այն, ինչ համարվում է ակնհայտ: Ժամանակակից տրամաբանության մեջ աքսիոման պարզապես մտահանգման ելակետն է:

բ) Աքսիոման կամ պոստուլատը հիմնավորման ելակետն է: Ինչպես դասականորեն ընդունված է, աքսիոման ակնհայտ նախադրյալ է, որը պետք է ընդունվի առանց վիճարկման. այն անհերքելի ճշմարտություն է:

գ) Տրամաբանական աքսիոմաները պնդումներ են, որոնք ենթադրվում է որ ճիշտ են այն տրամաբանության տիրույթով, որը նրանք սահմանում են:

դ) Մաթեմատիկայում աքսիոմա տերմինը օգտագործվում է երկու կապակցված, բայց տարբերակվող իմաստներով. տրամաբանական աքսիոմաներ և ոչ տրամաբանական աքսիոմաներ:

ե) Մինչդեռ ոչ տրամաբանական աքսիոմաները իրականում սահմանում են մասնակի մաթեմատիկական տիրույթի, ինչպիսին, օրինակ, թվաբանությունն է, հատկությունները ($I = a + b = b + a$): Աքսիոմա, պոստուլատ և ենթադրություն իմաստները փոխադարձ փոխարինելի են:

11. Ուղղե՛ք խոսքի տրամաբանականության խախտումները և բացատրե՛ք՝ ինչով են պայմանավորված դրանք:

1. Բազմազավակ ընտանիքը տեղափոխվեց նոր բնակարան. նրանց անդրանիկ զավակը ծնվել էր չորս ամիս առաջ: 2. Սուր շնչառական վարակներով ստացիոնար դիմելիությունը կազմել է 948 դեպք, որից 796-ը՝ 2-18 տարեկան հիվանդներ են: 3. Այս տարվա գարնանային անձրևները հորդառատ էին և չհասցրին հողը խոնավացնել: 4. Վերակենդանացման բաժանմունքում գտնվող բոլոր հիվանդները առողջացման դրական տեղաշարժով տեղափոխվել են հիվանդասենյակներ՝ բացի մի քանի ծանր հիվանդներից: 5. Միջազգային փորձագետները ներկայացրին մեզ հետաքրքրող մի քանի նախագծեր, որոնք քաջ տեղյակ էին քննարկվող խնդրի մանրամասներին: 6. Երիտասարդը լուրջ հանցանք էր գործել և այժմ անկեղծորեն մեղանչում էր՝ հույս ունենալով ներում ստանալ: 7. Ֆինանսական միջոցների բացակայության առկայությունը ստիպում է այլ ելք գտնել ստեղծված իրավիճակից: 8. Արձակագրի՝

վերջին շրջանում գրած վիպակների լեզուն և ոճը զգալիորեն տարբերվում են նրա նախորդ ստեղծագործություններից: **9.** Ներկայումս փորձեր են արվում վերականգնելու որդան կարմիրի ստացման եղանակը, որով հին Հայաստանում ներկում էին արքայական և իշխանական հանդերձները:

12. Տրամաբանականության խախտումը գործածելով իբրև ոճական հնարանք՝ բերե՛ք սրամիտ և դիպուկ խոսքի օրինակներ:

13. Խոսքի արժանիքների ի՞նչ դրսևորումներ կան տրված տեքստում (բազմազանություն, սեղմություն, ճշգրտություն ու տրամաբանականություն). սեղմ շարադրե՛ք հիմնական բովանդակությունը:

1. Բնության մեջ ամեն ինչ փոփոխվում է: Կյանքն անընդհատ զարգանում է, քանի որ գոյության ահեղ կռվում միշտ հաղթում է ամենաուժեղը, ամենահարմարվածը, ամենակատարելագործվածը: Կյանքի այդ փոփոխությունների և զարգացումների մեջ իր սերնդի գոյությունն ապահովում է միայն այն տեսակը, որն ամենից լավ է հարմարված կյանքի փոփոխվող պայմաններին:

Կյանքի՝ միլիոնավոր տարիների զարգացման ընթացքում շատ տեղաշարժեր են տեղի ունեցել. բազմապիսի կենդանիներ և բույսեր են ապրել երկրագնդի վրա և աստիճանաբար ոչնչացել՝ իրենց տեղը զիջելով նոր, ավելի կատարելագործված տեսակներին:

Բրածո կենդանիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նրանց կործանման հիմնական պատճառները եղել են մարմնի հսկայական չափերը, դանդաղաշարժությունը և օրգանիզմի պարզունակ կառուցվածքը: Նույնը վերաբերում է նաև բրածո հսկա բույսերին:

2. Փոփոխության էվոլյուցիան ընթացել է այնպիսի ուղղությամբ, որ բույսերի ու կենդանիների չափերը փոքրացել են, կրճատվել է նրանց կյանքի տևողությունը, միաժամանակ նրանք ավելի են կատարելագործվել՝ բնության փոփոխվող պայմաններին ավելի լավ հարմարվելու, գոյության կռվում հաղթող դուրս գալու համար:

Մակայն կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչների ոչնչացման մի ուրիշ գորեղ պատճառ էլ կա: Դա քաղաքակրթության զարգացումն է, մարդու ամենօրյա գործունեությունը: Եթե գոյության կռվում առանձին անհատների կամ տեսակների ոչնչանալը միանգամայն օրինաչափ երևույթ է, որը նպաստում է օրգանիզմների է՛լ ավելի կատարելագործմանը և զարգացմանը, բնության ընդհանուր առաջընթացին, ապա մարդու գործունեության

հետևանքով անհատների և տեսակների ոչնչացումը, բնաջնջումը մեծ վնասներ է հասցնում բնության ընդհանուր համակարգին, խախտում նրա հավասարակշռությունը, որն ի վերջո հանգեցնում է բնության էկոհամակարգի աստիճանաբար վատթարացման:

14. Խոսքի թերությունների ի՞նչ դրսևորումներ կան շարադրանքում:

1. Այս վերջին տարիներից ավելի շատ տեղեկություններ են ստացվում այն մասին, որ բույսերն անտարբեր չեն ձայնային տատանումներին: Շատ հետազոտողներ գտնում են, որ երաժշտության տակ բավական ուժեղանում է բույսերի աճը: Բույսն իր աճման առաջին իսկ վայրկյանից գտնվում է տարբեր բնույթի ձայների ներքո: Նրա աճն ուղեկցվում է մշտապես թռչունների դալայի, առվակների խոխոջունի, քամիների սուլոցի, կենդանիների արձակած և բնության այլ ձայներով: Խնդիրը կայանում է նրանում, որ երաժշտությունը, արագացնելով ցիտոպլազմայի շարժումը, դրանով իսկ օգնում է բույսի արագ աճմանը, բազմացմանը, ավելացմանը:

2. Շատ ավելի աննշան, մեզ համար միանգամայն անընկալելի շատ երևույթներ կան (երկրի մագնիսական դաշտի ազդեցություն, լուսապարբերականություն, միկրոտարբեր, տիեզերական մի շարք երևույթների, հատկապես աստղերի ազդեցություն), որոնք ոչ միայն ազդում են բույսերի աճման ու զարգացման վրա, այլ երբեմն վճռական նշանակություն ունեն նրանց համար: Պատահական չէ, որ ամերիկյան տիեզերանավում բույսերի աճման ու զարգացման որոշ խանգարումները բացատրվում են նաև անհրաժեշտ ձայնային ազդանշանների բացակայությունով: Ի դեպ, տիեզերական այդ լռությունը խիստ անտանելի է տիեզերագնացների համար ևս, որի դեմ նրանք պայքարում են երկրից ստացված ձայնային ազդանշանների օգնությամբ (ռադիո, հեռուստատեսություն, ձայներիզների և տեսաերիզների օգտագործում): Բույսերի աճման և զարգացման վրա երաժշտության գործած ազդեցության կապակցությամբ առաջին գիտական ուսումնասիրությունները հանդես են եկել դեռևս 1917 թ., որոնց հեղինակն է համարվում հնդիկ պրոֆեսոր Դ. Բոսը:

4.6. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ - ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

4.6.1. Առձայնույթ և բաղաձայնույթ (175): **4.6.2.** Հոմանշություն (176): **4.6.3.** Աստիճանավորում (177): **4.6.4.** Հականշություն և հակադրություն (178): **4.6.5.** Համանունություն և հարանունություն (179): **4.6.6.** Բառախաղ (180): **4.6.7.** Շրջասույթ (181): **4.6.8.** Ավելադրություն և կրկնաբերություն (182): **4.6.9.** Բազմաշաղկապություն և անշաղկապություն (182): **4.6.10.** Ձեռչում (183): **4.6.11.** Ճարտասանական հարց և ճարտասանական բացականչություն (183): **4.6.12.** Մեղմասություն (184): **4.6.13.** Չափազանցություն և նվազաբերություն (185): **4.6.14.** Նրբաբանություն (օբսիմորոն) (186): **4.6.15.** Շրջադասություն (186): **4.6.16.** Հեզնանք (187): **4.6.17.** Պարադոքս (հարասություն) (187): **4.6.18.** Համեմատություն (188): **4.6.19.** Փոխաբերություն (189): **4.6.20.** Մակդիր (191): **4.6.21.** Անձնավորում (191): **4.6.22.** Փոխանունություն և համըմբոնում (192): **Վարժություններ և առաջադրանքներ (194):**

Արտահայտիչ, պատկերավոր խոսքը անհամեմատ ազդեցիկ է. արտահայտչականությունը խոսքի առարկան լսարանի համար ավելի հետաքրքիր է դարձնում, իսկ հաղորդվող միտքը՝ ավելի ընկալելի: Խոսքի արտահայտչականությունն ապահովում են պատկերավորման-արտահայտչական միջոցները, որոնք դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակների միավորներով՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն:

4.6.1. Առձայնույթ և բաղաձայնույթ: Մրանք նույն հնչյունի կամ նման հնչյունների կրկնությունն են խոսքի որոշակի հատվածում: Բաղաձայնների կրկնությունը կոչվում է **բաղաձայնույթ**, իսկ ձայնավորներինը՝ **առձայնույթ**: Նման հնչյուն ասելով՝ նկատի է առնվում հնչյունական հատկանիշներով իրար մոտ հնչյունների, նույն շարքի կամ հարևան շարքերի (**փ, ք, թ, ց, չ**, կամ՝ **բ, գ, դ, ձ, ջ** նն) բաղաձայնների կրկնությունը:

Հնչյունական այս հնարքները առավել բնորոշ են չափածո խոսքին. ավելի տարածված է բաղաձայնույթը: **Առձայնույթը** հայերենում ընդհանրապես դժվար ճանաչելի է. խոսքաշարում ձայնավոր հնչյունների զուգորդական բարձր հաճախականությունը առձայնույթի տպավորություն է ստեղծում նույնիսկ սովորական խոսքում: Առձայնույթի բնորոշ օրինակ կարելի է համարել Ներսես Շնորհալու հետևյալ տողերը. «Առաւոտ լուսոյ, Արեգակն արդար, Առ իս լո՛յս ծագեա...»:

Բաղաձայնությո՞րը առաջ է բերում զգայական որոշակի տպավորություն: Առնչվելով բառընտրության և խոսքի բովանդակության ինչ-ինչ կողմերին՝ ոչ միայն ստեղծում է բազմաձայնություն, այլև նպաստում է ձայնապատկերի կառուցմանը: Հնչյունական այս հնարքը հայ գրականության և բանահյուսության մեջ հայտնի է վաղնջական ժամանակներից: Բաղաձայնությի օրինակ է Հ. Շիրազի «Մոսին» բանաստեղծության հետևյալ հատվածը, որտեղ **ս, շ, ժ** հնչյունների առատությունը կապվում է սոսափի, շրշունի և հուշերի հետ. «Մոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին, Մոսին՝ իմ սեգ հարսի պես՝ լուսնի ոսկե կուժն ուսին, Ու ես շորորն եմ հիշում իմ շուշանի ապրեշում, Որ հուշ դարձել մշուշում ու ինձ դրժել, չի հիշում»:

4.6.2. Հոմանշություն: Իմաստով համարժեք կամ հարաբերակից լեզվական միջոցների (հոմանիշների) ամբողջությունն է: Խոսքի արտահայտչական և պատկերային որակները բարձրացնելու լեզվական հիմնական միջոցներից է³⁷:

1. Հոմանիշների գործածությունը խոսքին հաղորդում է բազմազանություն. նույն բառը շարադրանքում չկրկնելու և խոսքի միօրինակությունից խուսափելու համար հաճախ դիմում ենք ոչ միայն փոխարինող բառերի (օր.՝ դերանունների, փոխանունների) օգնությանը, այլև գործածում ենք բառի հոմանշային տարբերակ(ներ)ը՝ ախտահանել//ախտազերծել//վարակազերծել, ճաճանչ//շող//ճառագայթ//ցուլք, ծիր//շրջագիծ, քանիցս//երիցս//բազմիցս, առթիվ//առիթով//կապակցությամբ, վստահաբար//վստահորեն, իրավ//իրավամբ//հիրավի որովհետև//քանի որ նն: Օր.՝ «Օոցը օվկիանոսի կամ ծովի այն մասն (=հատվածն) է, որը մխրձված (=խրված) է ցամաքի մեջ»: «Հեմոգլոբինի կարևորագույն (=հիմնական) ֆունկցիան հյուսվածքները թթվածնով հագեցնելն (= հարստացնելն) է»:

2. Հոմանշային անհրաժեշտ տարբերակի ընտրությունը խոսքը դարձնում է ճշգրիտ ու համոզիչ: Տարբերակը ընտրելիս հեղինակը առանձնահատուկ կարևորություն է տալիս դրա բովանդակային և արտահայտչական նրբերանգներին: Օր.՝ կերտել, արարել, ստեղծել, հորինել, հնարել, ծնել, երկնել հոմանշային շարքից հետևյալ նախադասության մեջ ամենահարմարը **կերտել** բառի գործածությունն է. «Մարդը բանական արարած է, և ինքն է **կերտում** իր կյանքը». այս նախադասության մեջ **արարել**-ը վերամբարձ է, **ստեղ-**

³⁷ Բառապաշարի իմաստային խմբերի արտահայտչականությունը հմնտ. **Богданова Л.,** Стилистика русского языка и культура речи, М., 2011:

ծել-ը՝ պարզունակ, **հորինել-ը** և **հնարել-ը**՝ իմաստային առումներով անճիշտ, **ծնել-ը** և **երկնել-ը**՝ **կյանք**-ի հետ անկապակցելի:

3. Տարբեր կողմերից բնութագրելով երևույթը՝ խոսողը հոմանիշների միջոցով դրսևորում է իր անհատական վերաբերմունքը: Նույն երևույթը տարբեր մարդիկ կամ հասարակական տարբեր խմբեր տարբեր կերպ կարող են ընկալել և գնահատել: Օր.՝ «Այն, ինչ կատարվում է Իրաքում քրդերի նկատմամբ, սովորական **տեղահանություն** չէ կամ **հալածանք**, այլ պարզապես **եղեռն** է»: բերված նախադասության մեջ ընդգծված բառերը անհատական վերաբերմունքի արտահայտություններ են՝ կառուցված հոմանշային տարբերակների իմաստային նրբերանգների հիմքի վրա:

4. Հոմանիշ բառերի նրբիմաստային տարբերությունների ընդգծումով հոմանշային եզրերը հակադրական նշանակություն են արտահայտում. Օր.՝ «Ես նա եմ նաև, Որ տարբերում է ... **մահացումը՝ մեռնելուց, ...ճիշտը՝ ճշմարտից ու ճշգրիտից**» (ՊՍ): Իմաստային ընդհանրություններ ունեցող բառերի իմաստային հակադրությամբ խտանում է բովանդակությունը՝ «Օովափնյա զեփյուռը ցածր արագության տեղական **քամի** է, իսկ **սամումը՝** ուժեղ, մոայլ քամի»:

5. Հոմանիշների գործածությամբ հաճախ բացատրվում են անհասկանալի կամ քիչ ծանոթ բառը կամ արտահայտությունը (օտարաբանություններ, փոխառություններ, տերմիններ, նոր բառեր են): Այս դեպքում հոմանիշի գործածությունը արտահայտչական դեր չի կատարում և ունի հաղորդակցական արժեք: Օր.՝ «Էկոլոգիայի ուսումնասիրության առարկան օրգանիզմների և միջավայրի **աբիոտիկ (անկենդան)** բաղադրիչների միջև գործող փոխհարաբերություններն են»: «**Ճարպերը (լիպիդները)** գտնվում են բույսերի ու կենդանիների հյուսվածքներում»:

4.6.3. Աստիճանավորում: Իմաստով մոտ բառերը հաճախ զուգադրվում են՝ խոսքի բովանդակությունը ուժեղացնելու կամ թուլացնելու համար: Հոմանշային շարքի յուրաքանչյուր հաջորդ միավորը հավելական իմաստով աստիճանաբար գորացնում է (կամ նվազեցնում) արտահայտված իմաստը. այդ երևույթը համարվում է **աստիճանավորում** (գրադացիա): Ըստ այդմ՝ աստիճանավորումը լինում է երկու տեսակ. **ա) բարձրացող աստիճանավորում**, երբ յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն (բառ, բառակապակցություն, դարձվածք են) ավելի հազեցած է իմաստով, ավելի ուժգին և արտահայտիչ է, քան նախորդը, օր.՝ «**Ջարդեցին** իրար, **Ջընջեցին** իրար, **Կորան**, զընացին

Գետնին հավասար» (ՀԹ): «Որպես փոթորիկ, իջե՛ք ավերիչ Եվ **խորտակեցե՛ք** աշխարհն այս զազիր, **Փռչի՛ դարձրեք** այստեղ ամեն ինչ» (ՎՏ): «Կառուցում էր ոչ թե մի մարդ, մի ընտանիք, մի գյուղ կամ մի քաղաք. ամբողջ հայ ժողովուրդն էր կառուցում՝ **օր ու գիշեր, շաբաթներ ու ամիսներ, տարիներ ու տասնամյակներ**» (ԳԷ). **բ) իջնող աստիճանավորում**, երբ յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն ավելի թույլ է, քան նախորդը. յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն տանում է մեծից փոքրը, բարձրից ցածրը, ուժեղից թույլը ևն, օր.՝ «Թող **չաղմկեն, լռեն, հանդարտվեն, քաշվեն** իրենց տները»: Երբեմն աստիճանավորման այդ երկու դրսևորումները գործածվում են համատեղ՝ առավել բազմազան և հետաքրքիր դարձնելով խոսքը. օր.՝ «**5000** տարվա, **500** տարվա և **50** տարվա Պատմություն ունի այդ **ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը**, Որ չի ավարտվել ու չի ավարտվում... » (ՊՄ):

4.6.4. Հականշտություն և հակադրություն: Հականիշ բառերի ոճական կիրառությունը կամ առհասարակ հականշտությունը (լեզվական միավորների իմաստային հակադրականությունը) իմացական-ճանաչողական գործընթաց է կամ դրա արգասիք, քանի որ պայմանավորված է իրականության մեր ընկալումներով:

1. Հականիշների գործածությունը բնորոշ է ժողովրդական խոսքին. շատ առածների ու ասացվածքների լեզվական հիմքն է և սուր ու դիպուկ է դարձնում խոսքը, ինչպես՝ «Ինչ ցանես, էն կհնձես», «Ինքը կուշտ է, աչքն է քաղցած», «*Գիտունի* հետ քար քաշիր, *անգետի* հետ փլավ մի՛ կեր», «*Կարճ* խոսիր, *երկար* լսիր» ևն:

2. Հականիշները գործածվում են նաև երևույթը իր հնարավոր բոլոր երեսներով, նաև հակասական կողմերով ներկայացնելու համար: Օր.՝ «Թող ինձ **չար** կոչեն հենց միայն **բարի** լինելու համար», «Այդ օրը փողոց էին դուրս եկել բռլորը՝ **ահել թե ջահել, կին թե տղամարդ**»: Համադասական շաղկապների կիրառությամբ հաճախ մեղմվում է հականիշների բնորոշ ընդգծված հակադրության երանգը, ինչպես՝ «Երբ **գայլ** ու **գառնուկ** սիրով կ'արածին...» (ՌՄ), «Մտավորականությունը իր երկրի **տերն** է ու նաև **ծառան**», «Մարգադաշտում **բարենպաստ** եղանակ էր, բայց ֆուտբոլային **անբարենպաստ** տրամադրություն»:

3. Ոճական հատուկ հնարք է բառի գործածությունը իր հակառակ նշանակությամբ. ստեղծում է հեզնական վերաբերմունք, օր.՝ «Դատելով գործարարության ասպարեզում ունեցած Ձեր **հաջողություններից**՝ վտանգի տակ է Ձեր

ամբողջ ունեցվածքը», «Արագընթաց **բարեփոխումների** միջոցով ունենք էական **ձեռքբերում**՝ արտագաղթի 8% աճ»:

4. Հականիշներին ենք դիմում երբեմն անվանելու համար այնպիսի հասկացություն կամ երևույթ, որը որոշակի անվանում չունի, ոչ այս է, ոչ այն, միջին օղակ է. օր.՝ «Գրում է ոչ լավ, ոչ վատ», «Կյանքի ու մահվան մեջտեղում», «Ոչ կուշտ եմ, ոչ սոված»:

5. Հականիշների համատեղ գործածությամբ ստեղծվում է հակադրությունը կամ **հակադրությոը** (հուն.՝ antithesis – հակադրում), որը իմաստով հակադիր արտահայտությունների կամ բառերի (հականիշների) գուգորդումն է խոսքի նույն հատվածում: Հակադրությոը ձևավորվում է **հականիշների բոլոր տեսակներով**:

ա) Լեզվական հականիշներով հակադրություն. ընդգծում է հիմնական գաղափարը: Այս հնարքը հաճախ է գործածվում գեղարվեստական գրականության մեջ, ԶԼՄ-ների լեզվում, բանավիճային խոսքում: Դրանով հաճախ կազմում են նաև վերնագրեր՝ «Ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը», «Պատերազմ և խաղաղություն»:

բ) Խոսքային կամ համատեքստային հականիշներով (բառային անսովոր գուգորդումներ՝ փոխաբերության հիմքով) հակադրություն. արտառոց ու տպավորիչ է դարձնում խոսքը, ուշադրություն գրավում, օր.՝ «Եթե մարդը ընկնելուց հետո ոտքի է կանգնում, դա **ֆիզիկա չէ. բնավորություն է**», «**Ռատողություններ անողները** շատ են, իսկ **կշռադատողները՝ քիչ**», «Մեր պատմությունը հետայսու աղետալի սխալների **կրկնությունը** չպետք է լինի, այլ **սրբագրությունը**» են:

գ) Շարահյուսական հակադրություն. դրական խոնարհմամբ կառույցը գործածվում է (սովորաբար հատուկ հնչերանգով) ժխտական նշանակությամբ: Ստեղծվում է հեզնանք կամ բացասական վերաբերմունք՝ «Շա՛տ իմաստուն է»: = «Տգետ է», «Կապացուցես այդ վարկածը, ինչպե՛ս չէ» = «Չես ապացուցի»: «Շատ կուզեի հավատալ Ձեզ»: = «Չեմ հավատում Ձեզ»:

4.6.5. Համանունություն և հարանունություն: Համանունությունը տարիմաստ լեզվական միավորների ձևային **նույնությունն է**: Արտահայտչականությունը ձևավորվում է հիմնականում համանունների համատեղ գործածությամբ: Հաճախ գործածվող հնարք է հրապարակային խոսքում, գովազդներում, գեղարվեստական գրականության մեջ, մասնավորապես չափածոյում, որտեղ մաս-

նակցում է հանգակերտմանը, խոսքի ռիթմին և բարեհնչությանը («Կյանքից հարբած **անցավոր**, Ահա դարձյալ **անցավ օր**, Դու վագում ես դեպի մահ – Մահը բռնում **հանցավոր**» (ՀԹ)):

Հարանունությունը ձևով **նման** արտահայտությունների կամ բառերի (հարանունների) զուգորդումն է խոսքի նույն հատվածում՝ առանց իմաստային խաղի կամ իմաստի սաստկացման: Հարանունները ոճական-արտահայտչական որոշակի արժեք ունեն գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ չափածոյում, առօրյա-խոսակցական ոճում, հրապարակային խոսքում: Նպաստում են խոսքի բարեհնչությանը, ներդաշնակությանը, պահպանում են ներքին հանգը և ռիթմը՝ «Որպես թաքուն թախիժ, Տերևներիդ **խորքում** Ես կփայլեմ տխուր Ու կմտնեմ **խոր քուն**» (ՌԴ), «Գովերգում եմ և այն լուսե **գաղափարը**, Որ չի դառնում նեղ **կաղապար**» (ՊՍ), «Գնում ես... Քեզ հետ տարած **մեզը** բեր քո թևերին, Իմ կորած աշուններից **մեկը** բեր քո թևերին» (ՀՍ) :

Հարանունության արտահայտչականությունը գորանում է, երբ ուղեկցվում է նաև հականշությամբ. «**Ահել** ու **ջահել** իրարով անցան», «Չկա **չարիք** առանց **բարիքի**»:

4.6.6. Բառախաղ: Կառուցվում է իմաստով տարբեր բառերի կամ բառակապակցությունների արտաքին հնչյունական նույնության կամ նմանության (համանունության կամ հարանունության) հիման վրա կամ նույն բառի տարբեր իմաստների (բազմիմաստության) օգտագործումով: Արտաքուստ նույնացվում են տարբեր գաղափարներ՝ իմաստային յուրահատուկ անցումներով սրամիտ խոսք ստեղծելու նպատակով: Նրա կարևոր հատկանիշը բառերի իմաստային խաղ՝ **սրամտություն** ստեղծելն է: Օր.՝ «Առաջ՝ **հաց**, հետո՝ **հարց**», «Երկու **ահը** մի **մահ** է», «Արտը՝ **խախուտ**, մահանան՝ **կարկուտ**»: Ավելի հաճախ բառախաղերը ստեղծվում են քերականական կամ բառաքերականական համանունության հիմքի վրա, երբ համանունության եզրերը քերականական ձևեր են՝ «Ա՛խ, մեր սերը **անցավ**, Բայց ոչ **անցավ անցավ**»:

Բառախաղը համանունների, հարանունների և բազմիմաստ բառերի սովորական գործածություններից տարբերվում է նրանով, որ այս դեպքում ստեղծվում է բառերի իմաստների խաղ, սրամտություն: Հաճախ է գործածվում առօրյա խոսքում, գեղարվեստական գրականության մեջ, ԶԼՄ-ների լեզվում:

4.6.7. Շրջասույթ: Հաճախ առարկան կամ երևույթը անվանելու փոխարեն ուղղակիորեն կամ փոխաբերաբար բնութագրվում է նկարագրական բառակապակցությամբ կամ դարձվածքով, թեևավոր խոսքով: Օր.՝ Շուտով **գիշերային լուսատուն** թաքնվեց ամպերի ետևում, և անթափանց խավար տիրեց», «Բարձրահասակ ֆուտբոլիստ է, և **երկրորդ հարկում** կարողանում է հաջողությամբ դրսևորել իրեն», «Հեռվից մերթ ընդ մերթ լսվում էր **ջունգլիների արքայի** ահեղ մոնյունը»:

Լինում են նաև բառ-շրջասույթներ՝ հիմնված փոխանունության, երբեմն էլ փոխաբերության վրա: Օր.՝ **ծուռթաթ** (արջ), **հողեղեն** (մարդ), **փետրավոր** (թռչուն), **երկաթախաղ** (ծանրամարտ), **հանգստարան** (գերեզմանոց), **միհոգավոր** (գրուցակիցներին հայտնի անհամակրելի անձ), **պատմահայր** (Հերոդոտոս, Մովսես Խորենացի), **Արևելք** (Ասիա), **Արևմուտք** (Եվրոպա և Ամերիկա):

Շրջասույթի արտահայտչականության աղբյուրն այն է, որ այլաբանորեն կամ իմաստային այլևայլ դրսևորումներով (ներքին համեմատություն, փոխանունություն ևն) բացահայտում է անվանվող առարկայի, երևույթի ներքին բովանդակությունը, էությունը: Շրջասույթների ձևավորման համար հաճախ աղբյուր են դառնում հայտնի անձանց՝ պետական գործիչների, գրողների, դերասանների, գիտնականների, մարզիկների անունները, ինչպես՝ **փոքրիկ կորսիկացի** (Նապոլեոն), **ամենայն հայոց բանաստեղծ** (Հ. Թումանյան), **ծիծառի արքա** (Չ. Չապլին), **հայ երգի վարպետ** (Կոմիտաս), **ֆուտբոլի արքա** (Պելե) ևն, հաճախ նաև տեղանունները՝ **Բուրգերի երկիր** (Եգիպտոս), **Օագոդ արևի երկիր** (Ճապոնիա), **Սև աշխարհամաս** (Աֆրիկա), **Երաժշտության մայրաքաղաք** (Վիեննա) ևն:

Շրջասույթները խոսքին հաղորդում են արտահայտչական մի քանի հիմնական հատկանիշներ.

ա) Խոսքը դարձնում են բազմազան ու հարուստ, հնարավորություն են տալիս խուսափելու կրկնություններից, մի տեսակ փոխարինող դեր են կատարում: Օր.՝ **Կոմիտաս**-ի փոխարեն՝ Սևակը գործածում է նաև **հայ երգի Մեսրոպ Մաշտոց**, **այր իմաստուն**, **սահման**-ի փոխարեն՝ **շիման գիծ** ևն:

բ) Գնահատում են առարկան, երևույթը՝ «հայ երգի վարպետ» (Կոմիտաս), «ազատության մեծ երգիչ» (Մ. Նալբանդյան), Տրոյայի երգիչ (Հոմերոս), «անտառի գեղեցկուհի» (սկյուռ), «սև ոսկի» (նավթ), «ճերմակ մահ» (աղ), «համար առաջին ուրբարկու» (Լ. Մեսսի) ևն:

զ) **Հաղորդակցվող կողմերի միջև կատարում են կարգավորող դեր.** հնարավորություն են տալիս խուսափելու զանազան անհարկի արտահայտություններից ու գնահատականներից՝ «Հայտնվեցինք շատ **հետաքրքիր իրավիճակում**» (անհարմար կացության մեջ գտնվելը), «Չկարողացա մի քանի **քաղցր խոսքով** չհիշել նրա անցավորներին» (անպատվել, հայիռել) ևն:

դ) **Խոսքը դառնում է երգիծական (հեգնական):** Այդ դերով սովորաբար հանդես են գալիս հանրահայտ շրջասույթները՝ փոխառված նշանակությամբ. «Այդ օրվանից նա ինքն իրեն հռչակել է **ամենայն հայոց քաղաքագետ**», «Նա մեր սովերային տնտեսության **առաջին ջութակն է**»:

4.6.8. Ավելադրություն (հավելարհություն) և կրկնաբերություն: Հիշենք, որ ավելադրությունը խոսքային նույն հատվածում համարժեք կամ լրացուցիչ լեզվատարրերի գործածությունն է՝ արտահայտչական նպատակներով: Ավելադրության առկայությունը ապացուցելի է, եթե հնարավոր է վերականգնել առանց դրա տարբերակը: Օր.՝ «Ես **գիտեի, գիտեի**, որ այդպես է լինելու». բառի ավելադրական կրկնությունը խստացնում է իմաստը, շեշտում է հուզականությունը: Օր.՝ «**ընդհուպ** մինչև ձմեռ», «**աչքով**ս եմ տեսել», «Լոս Անջելես **քաղաքի** արվարձաններում» ևն:

Ավելադրությունը բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը և հաճախ է հանդիպում խոսակցական լեզվում: Գրական լեզվում պետք է խուսափել դրանց գործածությունից, մանավանդ երբ ուզում եք, որ Ձեր խոսքը լինի հարուստ, անմիօրինակ, հակիրճ և ազդեցիկ:

Կրկնաբերությունը բառի, դարձվածքի կամ բառակապակցության, երբեմն էլ նախադասության կրկնությունն է շեշտողական կամ հուզական նշանակությամբ. հարուստ ու բազմազան է դարձնում խոսքը: «**Երգը** բնության մասին էր... **Երգը** կանաչ վարոցներով հոտաղների մասին էր և բանջարի ելած նախշուն գոգնոցներով աղջիկների... **Երգը** բնության ու սիրո մասին էր... (ՄԳ):

4.6.9. Բազմաշաղկապություն և անշաղկապություն: Բազմաշաղկապությունը սովորաբար բնորոշվում է որպես խոսքի որոշակի հատվածում միավորիչ շաղկապների (շաղկապական բառերի) առատություն կամ միևնույն շաղկապի (շաղկապական բառի) բազմակի կրկնություն: Բազմաշաղկապությունը, սակայն, շաղկապների անսովոր առատությունը կամ շաղկապների սուսկական կուտակումը չէ: Շաղկապների կրկնությունը կամ կուտակումը ռճական դարձույթ է դառնում այն դեպքում, երբ խոսքը դարձնում է հանդիսավոր ու վեհ, գործողությունները՝ հանդարտ ու դանդաղընթաց, ստեղծում է որոշակի

ոյթում ու երաժշտականությունն են: Օր.՝ «Չլինի, **որ** երկնեմ ես, **և** չծնեմ, / Ողբամ՝ **և** չարտասվեմ, խորհեմ՝ **և** չհառաչեմ, / Ամպեմ, **և** չանձրևեմ, ընթանամ՝ **և** չհասնեմ, / Ես ձայն տամ, **և** դու չլսես, պաղատեմ՝ **և** անտես մնամ» (ԳՆ):

Բազմաշաղկապությունը չպետք է շփոթել կրկնադիր շաղկապի գործածության հետ (**թե՛**..., **թե՛**..., **և՛**..., **և՛**..., **կա՛մ**..., **կա՛մ**...), ինչպես՝ «Ո՛չ տրտունջ, **ո՛չ** մրմունջ սգավոր, Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ» (ՎՏ):

Անշաղկապությունը խոսքում շաղկապի կամ շաղկապների միտումնավոր բացթողումն է՝ խոսքին արագություն, տեմպ, անընդհատ շարժման տպավորություն հաղորդելու համար. խոսքը դառնում է ավելի սեղմ ու հատու: Առավել բնորոշ է ժողովրդական խոսքին և բանավոր հաղորդակցմանը: Ձեռչվում են առավելապես համադասական շաղկապները: Մտքով հիմնականում հնարավոր է վերականգնել բաց թողնված շաղկապը: Օր.՝ «Հողն արյունի էր ծարավ, (իսկ) Ինքը ծարավ էր հողի...» (ԴՎ), «Խենթի պես, նրանց դիակների վրայով քշեց իր ձին, Սյրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց, Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի» (ԵՉ):

4.6.10. Ձեղչում: Հաճախ խոսքաշարից որևէ խոսքային միավոր (բառ, բառակապակցություն, դարձվածք են) բաց է թողնվում՝ կրկնություններից խուսափելու կամ հուզական խոսքի երանգ ստեղծելու նպատակով: Ոճական նպատակներով կատարված զեղչումը (ճարտասանական զեղչում) չպետք է շփոթել քերականական զեղչման հետ, որի դեպքում զեղչվում են շաղկապը, հանգույցը, ստորոգյալը են, օր.՝ «Որոշ փորձագետներ կարծում են՝ (**որ**) հրաբխային գործունեությունը Վենեթայի վրա շարունակվում է», «Մենք դրսում էինք սպասում, նրանք՝ (**սպասում էին**) տանը»:

Ճարտասանական զեղչման դեպքում հնարավոր չէ ճշգրիտ վերականգնել զեղչված բառը, արտահայտությունը: Խոսքը դառնում է սեղմ, կտրուկ, հուզական. ինչպես՝ «Ես ձեր անհայրենիք հերն անիծեմ, ես ձեր վնասարար, ես ձեր անսիրտ, անհոգի, վայրենի...» (ՀՄ):

Ձեղչման տեսակ է նաև դարձվածքի կամ արտահայտության մի մասի բացթողումը, որը հաճախ է հանդիպում ժողովրդական խոսքում, ինչպես՝ «Վերև՝ աստված, ներքևը՝ դու», «Խելոքին՝ մեկ, անխելքին՝ հազար ու մեկ», «Ամռան փուշը՝ ձմռան նուշը»:

4.6.11. Ճարտասանական հարց և ճարտասանական բացականչություն: Ճարտասանական հարցը պատասխան չպահանջող կամ արդեն իսկ պատաս-

խան պարունակող հարցն է, որը սովորաբար չի ուղղվում որոշակի խոսակցի, օր.՝ «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում» (ԽԱ): «Ի՞նչ իմանաս Ըստեղծողի գաղտնիքները անմեկին» (ՀԹ): «Մի՞թե երկրագունդը չի պտտվում արևի շուրջը...»:

Ճարտասանական բացականչությունը, ինչպես հայտնի է, նախադասությունը կամ խոսքի հատվածը բացականչական հնչերանգով արտասանելն է հուզական կամ շեշտողական նպատակով: Օր.՝ «Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին... Ի՛նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին...» (ՀԹ): «Շա՛տ հին է տիեզերքը...»: «Իմ պատանության թեժ մրրիկներից ի՛նչ է մնացել»:

Ճարտասանական բացականչությունը նույն ճարտասանական հարցը չէ՝ բացականչական հնչերանգով, ինչպես երբեմն ներկայացվում է. այն շատ այլ տարատեսակներ ունի, ինչպես՝ «Այնքա՛ն եմ կարոտել քեզ...», «Հրա՛ջք...» կամ՝ «Հաղթում է ուժեղը և ոչ թե արդարը: Վա՛յ թույլերին» (Գ. Նժդեհ), «Երանի՛ նրան, ում համար կյանքում Ծիածանը լոկ... յոթ գույն ունի (ԳԷ):

4.6.12. Մեղմասություն. տհաճ, կոպիտ բառերի ու արտահայտությունների փոխարինումն է վայելուչ համարվող հոմանիշներով կամ կտրուկ խոսքի փոխարինումը ավելի բարեկիրթ՝ մեղմացված համանշալի տարբերակով: Ըստ այդմ՝ գործածվում է երկու որոշակի նպատակով.

ա) Հաղորդակցումը բարեկիրթ մակարդակում պահելու համար. խոսքի առարկայի իրական բնութագիրը կամ անվանումը հնչեցվում է պարկեշտ կամ ոչ կոպիտ: Օր.՝ «Նա անշնորհքի մեկն է» ասելու փոխարեն՝ ասվում է՝ «Նա բարեկիրթ մարդկանցից չէ», «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք կպատժվեք» ասելու փոխարեն՝ «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք խնդիրներ կունենաք»: Կամ՝ «խիստ պահպանողական» (հետամնաց), «ոչ այնքան երջանիկ» (դժբախտ), «Չեմ կարծում, որ դուք այդ հարցում ճիշտ եք» (սխալվում եք), «տեխնիկական սպասարկման անձնակազմ» (սպասավոր/ուհի, հավաքարար/ուհի) են:

Նման մեղմասությունները նվազեցնում են անցանկալի ելքի, վատ տեղեկության տպավորությունը, մեղմում են լսարանի վրա հնարավոր ծանր ազդեցությունը:

բ) Երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով: Սա ավելի հաճախ հանդիպում է այնպիսի իրողություններ ներկայացնելիս, որոնց մասին սովորա-

բար լռում ենք կամ հրապարակավ շատ չենք խոսում: Մեղմասությամբ ակնարկ է արվում. լսարանին վերապահվում է կռահել, հասկանալ խոսքի ամբողջ բովանդակությունը, ինչպես՝ «դիմել ծայրահեղ քայլերի» (պատժել, ոչնչացնել), «բարձրագույն պատիժ սահմանել» (դատապարտել մահվան), «անկանխատեսելի հետևանքներ» (ընդհարում, մահ), «սահմանադրական կարգի հաստատում» (պատերազմ, պատերազմական գործողություններ), «էթնիկական գտում» (այն անձանց տեղահանում կամ ոչնչացում, որոնք չեն պատկանում տվյալ տարածքում գերիշխող ազգին), «խաղաղապահ գործերի տեղակայում» (ռազմական միջամտություն), «առճակատում» (պատերազմ) են:

Մեղմասությունների գործածությունը մեծ չափով պայմանավորված է **սոցիալական միջավայրով**: Այն, ինչ ընդունելի է սոցիալական մի միջավայրում և համարվում է բարեկիրթ, այլ միջավայրում կարող է միանգամայն անընդունելի լինել:

Մեր օրերում, երբ խոսքային հաղորդակցումը գործնական կարևոր նշանակություն է ձեռք բերում, մեղմասության ձևերին տիրապետելը նախապայման կարող է դառնալ հաղորդակցման արդյունավետությունը ապահովելու համար:

4.6.13. Չափազանցություն և նվազաբանություն: Չափազանցության դեպքում հատկանիշը կամ երևույթը ներկայացվում է սովորականից առավել չափով, օր.՝ «Վառվում էր վիթխարի մի մայրամուտ շեռու հորիզոնից մինչև անտառ» (ՆԶ): Չափազանցումը նպատակ ունի տպավորությունը ուժեղացնելու միջոցով հաղորդակցվող կողմին համոզելու:

Տարածված ոճական ձև է ներբողականներում, շնորհավորանքներում, բաժակաձառներում, հանրահավաքային և դատավարական խոսքում և այլուր: Առտնին խոսքում չափազանցությունը հաճախ է կիրառվում՝ մտքին և հույզին ուժգնություն հաղորդելու նպատակով («միլիոն անգամ ասել եմ», «մեռաբացատրելով», «հազար տարի իրար չենք տեսել», «հարյուր ժամ է՝ սպասում եմ» են):

Նվազաբանությամբ հատկանիշը կամ երևույթը ներկայացվում է սովորականից փոքր, թույլ չափով: Օր.՝ «Եվ ձեռքերը կրծքին ծալած՝ նա կուչ եկավ, դարձավ մի բուռ, հնազանդ, ճնշված, խեղճ, խելոք, լսող, անլեզու և ճորտ», «Էստեղ՝ էս գյուղի տեղը, հարյուր տարի առաջ որ արել են, մի էսքան տեղ է

եղել, **մի ձվի չափ»** (ՀՄ), «Ժամանակը իր վախճանին կհասնի, Եվ **արևը մի բուռ** մոխիր կդառնա...» (ԱԻ): Խոսակցական լեզվում հաճախ հանդիպող ոճական ձև է՝ «Մի **բուռ** ժողովուրդ ենք», «Մի **կտոր** հաց չունի ուտելու», «**Շունչ քաշելու** ժամանակ չունեմ»:

Չափազանցությունն ու նվազաբանությունը հաճախ համընկնում են մակդիրին կամ փոխաբերությանը:

4.6.14. Նրբաբանություն (օքսիմորոն. բառացի՝ սրամիտ անմտություն): Առաջանում է երկու միմյանց ժխտող ու հակադիր հասկացություններ կապակցելու միջոցով: Տրամաբանորեն անհամադրելի իմաստային միավորների համադրությամբ ցույց են տրվում երևույթի, առարկայի, իրավիճակի անսովորությունը, բարդությունը, հակասականությունը: Հանդես է գալիս **բառային մակարդակում՝** ի տարբերություն պարադոքսի (հարասության), որ **շարահյուսական կառուցվածքի** վրա հիմնված բանադարձում է: Նրբաբանության դեպքում լրացումը բառական իմաստով հակադրվում է իր լրացյալին՝ ստեղծելով իմաստալից գաղափար, օր.՝ **պարտված հաղթանակ, անհամեստ համեստություն, բարդ պարզություն, խավար արշալույս, անխիղճ գույթ, անօգուտ օգնություն, համր աղմուկ, հաջողակ ձախտորություն, անվերջության ավարտ, քաղցր դառնություն** ևն:

Առաջին հայացքից՝ ստեղծվում է անտրամաբանական խոսք, սակայն համապատասխան միջավայրում այն հնչում է միանգամայն բնական ու արտահայտիչ, չսպասված թարմությամբ, օր.՝ «Ինչ տենդով պատմեմ Մեր **անանցյալ անցյալը**» (ԵԶ), «Սոցիալիզմը ապահովում է **արդար անարդարություն**, իսկ կապիտալիզմը՝ **անարդար արդարություն**»: Հաճախ են հանդիպում որպես գրական երկերի, կինոնկարների վերնագրեր, լրագրային նյութերի վերնագրեր՝ «**Դժբախտ երջանկություն**», «**Կույր ականատեսը**», «**Հարազատ թշնամիներ**» ևն:

Նրբաբանությամբ ստեղծվում է նաև նուրբ հեզնանք՝ «**Երիտասարդը** արդեն վաղուց **երիտասարդ չէ**», կամ սուր ծաղր՝ «Նա մեզ բոլորիս կտանջի իր **անգիտակից գիտակցությամբ**» ևն:

4.6.15. Շրջադասություն (շրջուն շարադասություն կամ շրջում): Նախադասության մեջ բառերի այնպիսի դասավորություն է, որ հակասում է ընդունված կարգին՝ սովորական շարադասությանը: Հայերենում նախադասության անդամների դասավորության ընդունված կարգը հետևյալն է. լրացումների

մի մասը (որոշիչ, հատկացուցիչ, որոշ պարագաներ) նախորդում է լրացյալին, ինչպես՝ «արագ ընթացք», «միացության զանգված», «հանկարծ հայտնվել» են, ենթական մեծ մասամբ նախորդում է ստորոգյալին՝ «լավան շարժվում է», «ես գնացի» են: Երջուն շարադասությամբ սրանք կլինեն այսպես՝ «ընթացք արագ», «զանգված միացության», «հայտնվել հանկարծ», «շարժվում է լավան», «գնացի ես» են:

Երջադասությունը խոսքին հաղորդում է՝ **ա) քանաստեղծականություն, հուզականություն** («Մի փոքրիկ ամպ՝ **թափանցիկ ու անձև**, լողում էր երկնքում» (ԱԲ)), **բ) հնության երանգ**. գրաբարում որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ և նախադասության մի շարք այլ անդամների դասավորության կարգը այսօրվա շրջուն շարադասությունն է՝ «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», «Գիրք ճանապարհի», «Երկիր կորուսյա՞լ, թե՞ ապագայի», **գ) հանդիսավորություն**. այդ նշանակությամբ հաճախ հանդիպում է պաշտոնական գրագրության մեջ, դիվանագիտական փաստաթղթերում, ինչպես՝ «Արձանագրություն ... նիստի», «Կարծիք ... ատենախոսության մասին», «Որոշում ... հարցի վերաբերյալ» են:

4.6.16. Հեզմանք: Դրական իմաստ կամ իմաստային երանգ ունեցող բառը կամ արտահայտությունը գործածվում է բացասական կամ ժխտական նշանակությամբ. երբեմն առարկային, իսկ սովորաբար մարդկանց վերագրվում են այնպիսի դրական հատկանիշներ, որոնցից նա զուրկ է: Բանավոր խոսքում այդ վերագրումն ուղեկցվում է հեզմական հնչերանգով, իսկ գրավոր խոսքում հեզմանք արտահայտող բառը, արտահայտությունը հաճախ առնվում են չակերտների մեջ, որպեսզի ուղղակի նշանակությամբ չըմբռնվեն, օր.՝ «Ի՛նչ **«հայրենասեր»** մարդ է. Արցախի տեղը չգիտի», «Շատ **«շրջահայաց»** է. ամբողջ կյանքում միայն անհաջողություններ է ունեցել»:

Ոճական այս հնարքը հիմնականում ստեղծվում է՝ ուղղակիորեն անհրաժեշտ բառը իր հականիշով փոխարինելով: Հականիշների հեզմական, ծաղրական գործածությունները կարող են ընդհանրական արժեք ձեռք բերել և նույնիսկ դարձվածքների վերածվել: Օր.՝ **խելքի պտտուկ՝ «անխելք», արկադյան սոխակ՝ «էշ, ավանակ», նագար՝ «վախկոտ», Բաքոսի տաճար՝ «գինետուն», քարի պտուղ՝ «չար, անարժան, անպետք մարդ»:**

4.6.17. Պարադոքս (հարասություն): Առաջին հայացքից ընկալվում է որպես տարօրինակ ու անսովոր բովանդակությամբ արտահայտություն: Խոսքի տրամաբանական հիմքը կարծես խախտված է, սակայն թվացյալ այդ անհե-

թեթության ներքո հաճախ թաքնված են խորիմաստ մտքեր, իմաստային նուրբ երանգներ, տարողունակ դատողություններ, ինչպես՝ «Ես միայն մի բան գիտեմ՝ այն, որ ոչինչ չգիտեմ» (Սոկրատես), «Սիրուց բացի՝ էլ ոչինչ չէր կարող այսքան ասելություն կուտակել» (Բ. Շոու): Կամ միտքը կարող է արտաքննապես ճիշտ թվալ, բայց ներքնապես, բովանդակային առումով՝ պարունակել հակասություն, ինչպես՝ «Պատերազմը պետք է լինի, որ խաղաղությունը լինի» (ԴԴ), «Թանկից էժանը չկա», «Որտեղ՝ երաշխիք, այնտեղ՝ փորձանք», «Ես սիրում եմ մեծ արհամարհողներին, որովհետև նրանք ամենամեծ հարգողներն են» (Ֆ. Նիցշե), «Ես չեմ սիրում այն մարդկանց, ովքեր չեն ծիծաղում. նրանք լուրջ մարդիկ չեն» (Վ. Մոցարտ):

Պարադոքսի հիմքով հաճախ ստեղծվում են **պարադոքսային խնդիրներ**: Օր.՝ Երեխային կուլ տված կոկորդիլուրը երեխայի հորն ասում է. «Կվերադարձնեմ երեխային, եթե դու կարողանաս ճիշտ կռահել՝ ես կվերադարձնե՞մ նրան, թե՞ ոչ»: Ի՞նչ պիտի պատասխանի հայրը իր երեխային վերադարձնելու համար: (Պատ.՝ «Չես վերադարձնի»):

Հայտնի են նաև մի շարք **մաթեմատիկական** պարադոքսներ: Օր.՝ ըստ **Գալիլեյի պարադոքսի**՝ չնայած ոչ բոլոր բնական թվերն են ինչ-որ թվերի լրիվ քառակուսի, բնական թվերը լրիվ քառակուսիներից շատ չեն: Կամ՝ ըստ **Հիլբերտի «Գրանդ հոթել» պարադոքսի**՝ եթե անվերջ քանակությամբ սենյակներով հյուրանոցը լրիվ զբաղված է, միևնույնն է, նրա մեջ կարելի է տեղավորել էլի մարդկանց, նույնիսկ՝ անվերջ քանակությամբ մարդկանց:

4.6.18. Համեմատություն: Երկու կամ ավելի առարկաների կամ երևույթների գուգադրումն է՝ ցույց տալու համար դրանց նմանությունը կամ տարբերությունը, մեկի կամ մյուսի առավելությունները կամ պակասությունները:

Համեմատությունը կազմող երկու կողմերից կամ եզրերից (համեմատելի և համեմատյալ) բացի՝ կա նաև համեմատության հիմք. դա այն հատկանիշն է, որի հիման վրա կատարվում է համեմատությունը: Համեմատության հիմքը խոսքում հաճախ բացակայում է, չի արտահայտվում, այսպես՝ «Ամպրոպի պես թափվեցին գլխին»: = «Ամպրոպի պես **անակնկալ (հուժկու)** թափվեցին գլխին»:

Համեմատությունները սովորաբար ձևավորվում են **ասես, ասես թե, զերդ, իբրև, ինչպես, կարծես, կարծես թե, հանգույն, հանց, նման, ոնց որ, որպես, պես, քան, այնքան, որքան, ինչքան, ոչ նման, տարբեր, ի տարբերություն, հա-**

կառակ և նման բառերով: Օր.՝ « Հիմա, երբ մենք սովորել ենք թռչել օդում, **ինչպես** թռչունները, լողալ ջրում **իբրև** ձկներ, մեզ մնում է միայն մի բան սովորել՝ երկրի վրա մարդու **նման** ապրել»:

Համեմատություն կարող է ստեղծվել նաև առանց վերը նշված բառային միջոցների (**թաքնված** համեմատություն), ինչպես՝ «Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ: Դուք արվեստ եք և հոգի» (ԵՉ), «Գիտությունը օվկիանոս է. այն հավասարապես բաց է մարդկանց և ֆրեզատների համար» (ԲԼ):

Համեմատությունները լինում են **հաստատական** և **ժխտական**. համեմատությունը ժխտական է, եթե ժխտվում է համեմատության եզրերի ընդհանրությունը, համեմատելիի մեջ ժխտվում է համեմատայլի հատկանիշը, օր.՝ «...Արիստոզոմ աղային ներկայացավ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա» (ՀՊ):

Կան նաև **ծավալուն** համեմատություններ, երբ համեմատելին ու համեմատյալն արտահայտվում են առանձին ամբողջական նախադասություններով. «Իմացությունը ծովի նման միշտ թաքտում ու ձողփում է մակերևույթին և դրանով ավելի շատ ուշադրություն է հրավիրում իր վրա, քան մարգարիտ որոնողը, որը գանձեր որոնելու համար սուզվում է մինչև անհայտ խորքերի հատակը»:

Համեմատությունը գործածվում է բոլոր ոճերում. գիտական գրականության մեջ ավելի հավաստի ու համոզիչ է դարձնում դատողությունը, գեղարվեստական խոսքին հաղորդում է պատկերավորություն, ՁԼՄ-ների լեզվին՝ ամենատարբեր արտահայտչական նրբերանգներ՝ հստակություն, հավաստիություն ևն:

4.6.19. Փոխաբերություն: Մի բառի (բառակապակցության) գործածությունն է մեկ այլ բառի իմաստով և նրա փոխարեն՝ հիմնված դրանց արտահայտած առարկաների (հատկանիշների, գործողությունների) նմանության կամ համեմատելի լինելու վրա: Ժողովրդական խոսքը հարուստ է փոխաբերություններով՝ դարձվածքներ (ձեռքից գնալ, աչքի տակ առնել), կենդանիների և դրանց մարմնի մասերի անվանումների փոխաբերական գործածություն (ճանկ – ձեռք, աղվես – խորամանկ) ևն:

Տարբերում են մի կողմից՝ **պարզ** և **ծավալուն**, մյուս կողմից՝ **անհատական (խոսքային)** և **ընդհանրական (համալեզվական)** փոխաբերություններ:

Պարզ փոխաբերությունը կազմված է լինում մեկ բառից («Անապատի **դեղին** լռություն», «հիշողության մեջ **փորագրած** սկզբունքներ», «**բաբախող** աստղեր»), **ծավալունը**՝ մի քանի բառերից, բառակապակցություններից, նախադասություններից («Փղոսկրե անիվներով հեռանում է բախտն օրեցօր» (ՌԴ), «Արշալույսի եղյամն է սունկի գլուխն **արծաթել**»: «Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր»:

Անհատականները ստեղծագործող հեղինակների, մեծ մասամբ գրողների կողմից կերտված փոխաբերություններն են, որոնք ինքնատիպ մտածողության արգասիք են, ինչպես՝ «Մահը փակեց տան դուռը», «Ալիքներեն ծեծված մենավոր ապառաժ մը» (Նապոլեոնի մասին է) (ՌՄ):

Ընդհանրական են այն փոխաբերությունները, որոնք լայն տարածում ունեն, ծանոթ են այդ լեզվով խոսող հանրությանը կամ նրա մեծ հատվածներին: Օր.՝ **ծանր լռություն, բարի աչքով նայել, ընթերցողի սեղանին դնել** ևն:

Փոխաբերությունը խոսքում կատարում է մի քանի կարևոր գործառույթ.

ա) ստեղծում է պատկերավորություն. գեղարվեստականացնում է խոսքը, այսինքն՝ կատարում է գեղագիտական գործառույթ. օր.՝ «Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան Եվ արնոտ միգուլ ճարճատում են դեռ» (ԵԶ), «Իսկ երբ սայթաքես, մուճակիդ փոշին մեծ մարդ է դառնում և քեզ հարվածում» (ԱԻ):

բ) հնարավորություն է տալիս միտքը հաղորդելու այլաբանորեն՝ ենթատեքստով՝ քողարկելով հիմնական ասելիքը. օր.՝ «Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քո վրա» (ԱԻ), «Փոքր մարդը ո՛չ կարող է ընկնել, ո՛չ էլ վնասվածք ստանալ»:

գ) գործածվում է բացատրելու համար երևույթներ կամ իրողություններ, որոնք անմիջական, ուղղակի ընկալմամբ մնում են անհասկանալի. օր.՝ «Այն ժամանակ Արցախում բոլորս նույն վիճակի մեջ էինք. **մենք կիսում էինք մեր մահը և հացը**»: «Ճգնաժամից պաշտպանվելու համար տնտեսությունը պետք է պահեստային ռեսուրսներ ունենա. **դրանք անվտանգության բարձիկներ** են մեզ համար»:

դ) կատարում է գնահատողական դեր. գնահատողականությունը ձևավորվում է նմանության, համաբանության, համեմատության հիմքի վրա. առավել տարածում ունեն բացասական բնույթի գնահատողական փոխաբերություն-

ները՝ **աղվես, կոճղ, գիշատիչ, խոտակեր, ջայլամ** են: Օր.՝ «Նրան դժվար է ըմբռնել ու հասկանալ կամ կռահել նրա քայլերը. նա իսկական **դև** է»:

4.6.20. Մակդիր: Բառ կամ բառակապակցություն է, որ արտահայտչորեն և փոխաբերորեն բնորոշում է առարկան (անձը, իրը, երևույթը), հատկանիշը կամ գործողությունը: Պետք է կարողանալ տարբերել իրարից սովորական որոշիչը (ինչպես նաև ձևի պարագան) և մակդիրը. առաջինը ցույց է տալիս առարկայի (գործողության, հատկանիշի) ուղղակի (ներհատուկ, նրա էությունից բխող) հատկանիշը, երկրորդը փոխաբերորեն և հուզականորեն է բնութագրում առարկան, հանդես է գալիս այլաբերական գործածությամբ, ինչպես՝ **հետաքրքիր** հուշեր - **ոսկեշղթա** հուշեր, **մանր** ավազ - **թավշե** ավազ, **հորդ** անձրև- **արծաթ** անձրև, **խոր** քնած - **հավերժորեն** քնած, **մուգ** կարմիր - **արնավառ** կարմիր են:

Մակդիր կարող են դառնալ նյութական իմաստ ունեցող բոլոր խոսքի մասերը՝ **ածական՝** *սպերասան* փոթորիկ, *անվախճան* ճշմարտություն, *անզեն* աչք, **գոյական՝** *լույսի պար, հրաշք աղջիկ, մակբայ՝ քաղցրորեն* մկրտվում է լուսնական, *հավերժորեն* խմում են, **դերբայ՝** *աղոթող* անտառներ, *ծաղկած* փշալարեր:

Մակդիրը կարող է արտահայտվել նաև **բառակապակցությամբ**, ինչպես՝ **հորից հոգնած** ուսեր, **վրեժից սառած** արյուն, **մեր Մեսրոպ Մաշտոց** աստվածը, **հաղթանակների ծարավից գինով** արծիվներ են:

Մակդիրը խոսքին հաղորդում է անսովոր թարմություն, գեղարվեստականություն: Այդ իսկ պատճառով առավելապես գործածվում է գեղարվեստական խոսքում:

4.6.21. Անձնավորում: Փոխաբերության տեսակ է. առարկաներին և երևույթներին վերագրվում են մարդկային կամ շնչավոր էակների հատկանիշներ, օր.՝ «Երկներ երկին, երկներ երկիր, Երկներ եւ ծովն ծիրանի...» (Գողթան երգերից), «Անպտուղ և սիսալներով լի են այն գիտելիքները, որոնց չի ծնել փորձը», «Տգիտությունը տգիտություն չէր լինի, եթե իրեն բարձր չդասեր գիտությունից», «Արյուն կը ծորե չափազանց հասուն Փոշոտ մորենին» (ԴՎ):

Անձնավորումը արտահայտվում է ոչ միայն բայ-ստորոգյալով («Միրո սարսուռից հովերն **արթնացան**» (ՀՄ)), այլև քերականական ամենաբազմազան միջոցներով, օր.՝ ստորոգելիով («Գիշերն է **լուռ**, լիճը՝ **սրտում**» (ՌՄ)), որոշիչով (**ծերուկ** եղրևանի, **լեզու առած** ծառեր, **շնչող** անտառ), հատկացյալով (ըմ-

բոստանքներն **համբույրի**), բացահայտիչով («Մենք՝ **մեռելներս**, ձեզի հետ ենք» (Ս)), խնդիրներով («Աքասիաներ... մաքուր **շունչ մը** կը հևան», «**Տրամություն** մը կը ցանե բիլ եղրևանին» (ՄՄ)), պարագաներով («Կարապները... **հուսահատորեն** գաղթեցին» (Ս)), կոչականով («**Լուրջա՛ն երկինք**, խոսի՛ր դու ինձ հետ....» (ԱԲ)) ևն:

Հատկապես որոշիչով արտահայտված անձնավորումը նույնանում է մակդիրի հետ, ինչպես՝ **լեզու առած** քարեր, **հեզանազ** ուռենի, **որբուկ** երագներ, **սարսափահար** հորիզոններ, **բազկատարած** ծառ ևն:

Հաճախակի կիրառություն ունի գեղարվեստական չափածոյում («Հետո հարբեց Շավարշը. **գայլը** արյունով է **հարբում**» (ԵՉ)): Անհարկի անձնավորումը խոսքի թերություն է, օր.՝ «Նյարդային ինքնավար համակարգը **հսկողության տակ է պահում** արյան շրջանառության, շնչառության, մարսողության, նյութափոխանակության օրգանները»:

4.6.22. Փոխանունություն և համըմբոնում: Փոխանունությունը ձևավորվում է ստորադասական բառակապակցություններում. կապակցության անդամներից մեկը՝ լրացումը, փոխարինում է մյուսին՝ լրացյալին, որը զեղչվում է, ինչպես՝ «**Մներով, սներով** կպատեմ, Իմ սիրտը, իմ սերը շորորուն....» (ԿՏ): Փոխանունությունը հիմնված է առարկաների, երևույթների և հատկանիշների զանազան կապերի ու հարաբերությունների և ոչ թե դրանց ներքին կամ արտաքին նմանությունների վրա, ինչպես՝

1. պարունակողը պարունակյալի փոխարեն՝ «Մի **գավաթ** (օր.՝ սուրճ) ըմպեցի»: «**Դահլիճը** ուշադրությամբ լսում էր բանախոսին», 2. գործողությունը՝ արդյունքի կամ հակառակը՝ արդյունքը՝ գործողության փոխարեն՝ «**Հրամանը** իր գործը կատարեց», 3. հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն՝ «Կարդում եմ **Չարենց**»: «Հաճախ եմ լսում **Կոմիտաս**», 4. տեղանունը՝ կառավարող մարմնի, կազմակերպության, հաստատության և այլնի փոխարեն՝ **Մոսկվա** – Ռուսաստանի Դաշնություն, **Մայիտակ տուն** – ԱՄՆ նախագահի նստավայր, **Downing Street (Դաունինգ Սթրիթ)** – Անգլիայի արտաքին գործերի նախարարություն, **Ելիսեյան պալատ** – Ֆրանսիայի նախագահի նստավայր, 5. նյութը նրանից պատրաստված առարկայի փոխարեն՝ «Հայ մարզիկները երկու **սուկի** ստացան, երեք **արծաթ**» ևն:

Փոխանունության հիմնական գործառույթները.

1. Մեծապես նպաստում է խոսքի սեղմությանը. խոսքը դառնում է ավելի արագ, շարժուն («Միրում էր այդ պանդոկում տաք սուրճ ըմպել. մի **գավաթ** խմեց և վեր կացավ», «**Կրեմլը** հանդես եկավ հայտարարությամբ»):

2. Շեշտադրում է կատարում հաղորդվող նյութի հիմնական հատկանիշների վրա («Դիոգենեսին հարցրին, թե զազաններից որոնք են ամենից վտանգավորները, և նա ասաց՝ վայրենիներից՝ օձը, ընտանիներից՝ **շողորորթը** (=շողորթ մարդ)»):

3. Ստեղծում է հաղորդվող երևույթի որոշ «իմաստային անորոշություն», որը լարում է լսարանի ուշադրությունը, խթանում է ընկալումը: Օր.՝ «Նյութը կարող է գտնվել ագրեգատային երեք վիճակում՝ պինդ, հեղուկ և գազային. **առաջինում** պահպանվում են և՛ ծավալը, և՛ ձևը, **երկրորդում**՝ ծավալը (ձևը փոխվում է՝ կախված պարունակող անոթից), **երրորդում** ձևը և ծավալը փոխվում են՝ «հարմարվելով» նյութը պարունակող անոթին»: «**Գյուղը** կծկվել էր, վախից կուչ եկել»:

Համըմբռնումը ընդհանրություն և բովանդակային նույնություն ունի փոխանունության հետ. երկու դեպքում էլ արտահայտչամիջոցի կառուցման հիմքում մի բառի գործածությունն է մեկ այլ բառի փոխարեն: Բայց համըմբռնումը առաջանում է երևույթների, առարկաների միայն **քանակական** հարաբերությունների հիմքի վրա. այս դեպքում գործածվում է **մասը ամբողջի, մասնավորը՝ ընդհանուրի, եզակին՝ հոգնակիի** փոխարեն կամ հակառակը՝ ի տարբերություն փոխանունության, որում այդ հարաբերությունները խիստ բազմազան են: Բացի այդ, համըմբռնման դեպքում լրացյալի զեղչում կարող է չլինել: Օրինակ՝ «Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց **մարդուն** (= մարդկանց)...)» (ԱԻ), «Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, Ոչ մի **ստվեր** (=մարդ) կախաղանին թող մոտ չգա» (ԵՉ):

Փոխանունությունը հաճախ է գործածվում խոսակցականում, ՁԼՄ-ների լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, մասամբ պաշտոնական խոսքում:

Գրականություն

1. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
2. Աղայան Է., Տերմինագիտություն, Եր., 1978:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ. հ. I-IV, Եր., 1971-1979:

4. **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Բառագիտություն, Եր., 2007:
5. **Ավետիսյան Յու.**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014:
6. **Գևորգյան Գ., Վարդանյան Գ.**, Գործառական լեզու, Եր., 2019:
7. **Եզեկյան Լ.**, Խոսքի ճշգրտություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2013, № 2:
8. ՀՀ կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների...մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48(922):
9. **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990:
10. **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Եր., 1993:
11. **Միրզոյան Վ.**, Ճարտասանություն, Եր., 2004:
12. **Միքայելյան Ա., Մարդումյան Մ.**, Մտքի հրավառություն, Եր., 2002:
13. **Միքայելյան Հ.**, Մաթեմատիկական կրթության լեզուն և խոսքը, Եր., 2019:
14. **Սկրտչյան Ռ.**, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992:
15. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:
16. «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988:
17. **Богданова Л.**, Стилистика русского языка и культура речи, М., 2011.
18. **Голуб И.**, Русский язык и культура речи, М., 2007.

Վարժություններ և առաջադրանքներ

1. Բացատրե՛ք՝ ինչ տրամադրություն են ստեղծում բաղաձայնայնության կիրառությունները տրված հատվածներում:

ա) Շուշանն շողեր հովտին, շողշողեր դեմ արեգականն. Այն հիւսիսային հովեն հով հարեալ գոհար շուշանին: Շուշանն շաղով լցեալ, շող-շաղով և շար մարգարտով (ԳՆ):

բ) Ծափ կը գարնե, ծիծաղեն ծըլեր է ծիրն իր այտին... (ՄՄ):

գ) Մթնում է. մոտ է մայրամուտը. Մահվան մշուշ է մովում մաղում. Մեռնում է մովը մթնշաղում. Մթնում է: - Մոտ է մայրամուտը (ԵԶ):

2. Տրված բառերի համար գրե՛ք տարբեր (չեզոք, դրական, բացասական) վերաբերմունք արտահայտող հոմանիշներ: Մի քանիսով կազմե՛ք նախադասություններ:

Հպարտ, խոսել, ուտել, նիհար, հասարակ, գայթակղել, համառ, մանր, կարծր, հարթ, բարձրահասակ, փափուկ:

3. Բացատրե՛ք հոմանիշների նրբիմաստային տարբերությունները:

ա) Ես նա եմ նաև, Որ տարբերում է պաչը համբույրից, Ինչպես սիրողին՝ սիրահարվածից, Եվ մահացումը՝ մեռնելուց: Իրոք. ի՞նչ է իմ գործը, Եթե ոչ ջոկել

Ոչ թե կեղծիքը ճշմարտությունից, Այլև տարբերել սուտը կեղծիքից, ճիշտը՝ ճշմարտից և ճշգրիտից, Գուրը՝ խղճալուց... (ՊՄ):

բ) Իրիկուն էր, **հրակարմիր** մի իրիկուն: Արևը՝ **բորբ**, մայր էր մտնում արևմուտքում: Դաշտի վրա փովել էր մուժ **արյունամած**... Արևը՝ **թեժ**, մայր էր մտնում արևմուտքում: Հորիզոնում վառել էր մի **կարմիր** քուրա Ու **արնավառ** փայլ էր փռում դաշտի վրա (ԵՉ):

գ) Աշուն էր, պայծառ աշուն... Օդը **մաքուր** էր, արցունքի պես **ջինջ**: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան **պարզ** էին երևում, որ հեռվից կարելի էր համրել նրանց **մաքուր** լանջերի բոլոր ձորակները (ԱԲ):

4. Հետևյալ առած-ասացվածքներում գտե՛ք հականիշները, բացատրե՛ք կիրառության նպատակը:

- Փորձած թանը անփորձ մածունից լավ է:
- Մի գիժ քարը գցեց ծովը, հազար խելոք չեն կարողանում հանել:
- Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է:
- Խելոքի հետ քար քաշիր, անխելքի հետ փլավ մի կեր:
- Ներսը՝ սատանա, դուրսը՝ քահանա:
- Խոսքը՝ մեծին, ջուրը՝ փոքրին:
- Իր աչքի գերանը չի տեսնում, ուրիշի աչքի չոփն է տեսնում:

5. Գտե՛ք լեզվական և խոսքային հականիշները: Ոճական ի՞նչ նպատակներով են դրանք կիրառվել (հակադրություն, հակադրությո՞ւյթ, հեզնանք են):

ա) Այնպես ես գալիս, այնպես գնում, Բերածդ ի՞նչ է, տարածդ՝ ի՞նչ: Ո՛վ դու ավերող և ավերիչ, Կյա՛նք իմ, դու՛ ձրի ներկայացում, Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝ Բայց ինչքան թանկ ես նստում վրաս (ՀՄ):

բ) Հորս ձեռքին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար: Տեսանք երեք շեն. երկուսը դատարկ, մնումն էլ իսկի մարդ չկար: ...Երեք պառավ. երկուսը մեռած, մնի բերանումն էլ շունչ չկար (ՀԹ):

գ) ...Անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր...(ՀՊ):

6. Բացատրե՛ք տրված հարանունների իմաստները. մի քանիսով կազմե՛ք նախադասություններ:

ա) Ազգային-ազգայնական, հուզում-հուզմունք, ազատել-ազատագրել, տնօրենություն-տնօրինություն, երախտիք-երախտագիտություն, մեղանչել-մեղազալ, զեկուցում-զեկույց, պատրաստակամություն-պատրաստականություն:

բ) Զգացում-զգացմունք, հրավեր-հրավերք, պաշտոնական-պաշտոնեական, ցուցում-ցուցմունք, ավանդույթ-ավանդություն, պահպանել-պաշտպանել, փորձառություն-փորձություն:

7. Ի՞նչ միջոցներով են կազմված բառախաղերը:

ա) Ի՞նչ ես տանջում, կամ թույլ եղիր, կամ արի, Կամ հեռացի՛ր, ընդմիջոզնա, կամ արի՛, Թե չէ այդպես դու նման ես չփլված, Բայց ուր որ է գլխի թափվող կամարի (ՊՄ):

բ) Կարծես թե ես եմ լալիս այս երգում, Կարծես թե քեզ եմ կարոտով երգում (ՎՏ):

գ) Գիտեմ, գիտեմ, գուշակ էլ ես, կախարդ էլ ես. Չե՞ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես (ՊՄ):

դ) Էնքան շատ են ցավերն, ավերն իմ սրտում, Էնքան տրտում՝ կորած լավերն իմ սրտում...Չեմ էլ հիշում չար ու խավար ես ժամին՝ Ե՛րբ են փայլել ուրախ օրերն իմ սրտում (ՀԹ):

ե) • Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:

- Ապրել կա դանակ է, ապրել կա դմակ է:
- Բերնեբերան, հազար բերան, ասեղը կդառնա գերան:
- Գիծը զնաց հարսանքատուն, ասաց՝ էստեղ լավ է, քանց մեր տուն:
- Արտը խախուտ, մահանա կարկուտ:
- Ամառվա փուշը, ձմեռվա նուշը: Գող՝ սիրտը դող: Ահը շատ է, քան մահը:

8. Գտե՛ք շրջասույթները և բացատրե՛ք:

ա) Բազմել է ցարերի գահին
Նստել է, քշում է բռի,
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն,

Վարգում է, ոստնում է, անցնում,
 Խրոմե սապոգներ հագին
 Տիրան է, Ներոն է, բռի
 Եվ գահը արել է ֆայտոն:
 Սփռում է արյուն ու արցունք (ԵՉ):

բ) Սերում են նրանք և այն ծերուկից,
 Որ նախընտրում էր քնել տակառում:
 Սերում են նրանք և այն պատանուց,
 Որ սիրահարվեց իր իսկ պատկերին (ՊՄ):

գ) Իսկ մենք՝ ես ու դու, արվեստ ենք խաղում,
 Եվ... մի այնպիսի համոզվածությամբ,
 Որ Սերվանտեսի հերոսն էլ չունի (ՊՄ):

9. Ո՞ւմ կամ ինչի՞ մասին են հետևյալ շրջասույթները (օգտվե՛ք Պ. Բեդիրյանի «Հայերեն շրջասությունների բառարան»ից)։

ա) Միջուկային ֆիզիկայի հայր, ծագող արևի երկիր, ծիծաղի արքա, Բուրգերի երկիր, Սև աշխարհամաս, Տրոյայի երգիչ, սև ոսկի, բալզակյան տարիքի կին, Սերվանտեսի հերոս, ոսկե նեկտար, մառախլապատ Ալբիոն, Հիպոկրատի աշակերտ, հայկական խնձոր, կյանքի գարուն, երկաթե լեղի//տիկին:

բ) Սպիտակ ոսկի, ազնիվ մետաղների թագուհի, տրոյական ձի, սավաննայի արքա, աշխարհի տանիք, Արամազդի գոտի, արկաղյան սոխակ, Բաքոսի տաճար, գրքերի գիրք, երեք կրոնների քաղաք, Հիպոկրատի աշակերտ, ներքին դատավոր, քարե ջունգլիներ, ֆուտբոլի արքա:

10. Գեղարվեստական գրականությունից բերե՛ք անշաղկապության և բազմաշաղկապության մեկական օրինակ:

11. Կետադրե՛ք տրված դարձույթները՝ բացատրելով ճարտասանական հարցերի ու բացականչությունների ոճական արժեքը:

ա) Գիտեք որ Արեգակնային համակարգի բոլոր մոլորակները կարող են տեղավորվել Յուպիտեր մոլորակի մեջ:

բ) Ձեզ տեղեկացրել են որ 1865 թ. փետրվար ամիսը միակ ամիսն է մարդկության պատմության մեջ երբ լիալուսին չի եղել:

գ) Պատկերացնում եք մարդը կյանքի ընթացքում շուրջ 40 տոննա սննդամթերք է օգտագործում:

դ) Կարող եք երևակայել որ 1 գրամ ոսկին հնարավոր է 3,5 կմ ձգել:

ե) Բայց ինչպես փրկենք մեր մոլորակը որքան ջանքեր են պահանջվում:

զ) Պատկերացնում եք որ մեղվաբույնը միակ տեղն է աշխարհում որին կայծակը երբեք չի խփում մեղվաբույնը վանում է հոսանքը:

է) Տեղյակ եք որ մարդու աչքի մկանները օրվա ընթացքում շարժվում են 10000-15000 անգամ:

ը) Օգոնային շերտի քայքայում կլիմայի համամոլորակային փոփոխություն թթվային տեղումներ ահա ինչ աղետներ են սպասվում Երկիր մոլորակին: Մարդիկ չլինի հանձնվել եք ուզում:

թ) Միթե պարզ չէ որ եթե մարդը սովորեր բնությունից օգտագործել բոլոր թափոնները ապա էկոլոգիական աղետի վտանգ չէր լինի:

ժ) Ով չգիտի որ Երկիր մոլորակի վրա օրգանական նյութերի ստեղծման միակ աղբյուրը կանաչ բույսերն են որոնք սինթեզում են մեծ քանակությամբ օրգանական նյութեր:

12. Շարունակե՛ք հետևյալ նախադասությունները՝ ամբողջացնելով ճարտասանական հարցերը (ըստ մասնագիտական ոլորտի):

1. Մի՞ թե դուք իսկապես կարծում եք//ենթադրում եք....
2. Մենք կարո՞ղ ենք արդյոք ենթադրել//կասկածել, որ....
3. Մի՞ թե կարելի է արդյոք պնդել, որ.....
4. Չգիտեի՞ք, որ....
5. Ինչպե՞ս բացատրել, որ....
6. Ի՞նչ կշահեք, եթե....
7. Չե՞ որ հայտնի փաստ է.... :

13. Մեղմասություններով փոխարինե՛ք հետևյալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:

Դուք սխալ եք, քո գործը չէ, նա ստում է, մի կոպեկի խելք չունի, թաղումը տեղի կունենա վաղը, պառավ, անդաստիարակ//անտաշ մարդ, դու բան չես հասկանում, հաշմանդամ, զզվեցնել (մեկին), ձանձրալի է, էշի ականջում քնած, դու տգետ ես, վե՛ր ընկիր տեղդ, սենյակդ խոզանոց է, թքած ունենալ մեկի կարծիքի վրա, ձայնդ կտրի՛ր:

14. Գտե՛ք չափազանցություններն ու նվազաբանությունները:

- ա) Օ, աշխարհը վաղո՛ւց է դարձել Համոն,
Մի փոքրի՛կ, փոքրի՛կ փողոց... Մի Կարո,
Ու ապրում են ողջ աշխարհում- Մի Պողոս (ԵՉ):
- բ)...Էնպես զարկեց ջաղացքարին՝ Ծանր զարկով հսկայական.
Քարը եղավ հազար կտոր, Փռչին ելավ Սասնա դաշտից,
Կտորները երկինք թռան, Բռնեց երեսն արեգական:
Ու գնում են մինչև Էսոր: Երեք գիշեր ու երեք օր
Եկավ, զարկեց բոլոր ուժով, Փռչին կանգնեց ամպի նման (ՀԹ):
- գ) Տիեզերքն այս անսահման, Կախված է սոսկ մի մազից
Յուր ծանրությամբ ահագին, Եվ այդ մազն է իմ հոգին (ՀԹ):

15. Բերե՛ք չափազանցության և նվազաբանության օրինակներ, որոնք հաճախ եք օգտագործում առօրյա խոսքում:

Օր.՝ մի գրամ խելք չունի; 1000 անգամ ասացի:

16. Գտե՛ք նրբաբանությունները (օքսիմորոն). բացատրե՛ք, թե լեզվական ինչ միջոցներով են դրանք կազմվել:

ա) Մեր ռիսերիմ բարեկամները շարունակում են ոչնչացնել իրենց երկրում գտնվող հայկական եկեղեցիները, հուշարձանները՝ աղավաղելով պատմությունը:

բ) Պերճախոս լռություն են պահպանում նաև հարևան երկրի իրավապաշտպանները. նրանց ձեռնտու չէ պաշտպանել մի մարդու, որն ամբողջ կյանքում պայքարել է հանուն ժողովրդավարության:

գ) «Մեդիամաքս» գործակալությունը նոր շարք է սկսել՝ «Անձանոթ ծանոթ քաղաքներ» խորագրով. ներկայացվում են Հայաստանի այն բնակավայրերը, որոնց մասին մենք իրականում այնքան էլ շատ բան չգիտենք:

դ) Մրսած մի տոթ կա օդում,
Լուռ մի որոտ կա օդում (ՀՄ):

ե) Թերևս ականա ես հետևեցի
Չայլամի հիմար իմաստությանը (ՊՄ):

զ) Քո ժպիտն է անժպիտ
Ուղիներին փարոսում (ԿՏ):

է) Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ (ՀՄ):

ը) Ի՛նչ հզոր է աղաղակող լռությունը լեռների:

17. Բացատրե՛ք պարադոքսի (հարասության) իմաստային նրբերանգները:

ա) Ազատության օրենքներն անհարիր են օրենքների ազատությանը:

բ) Եթե խաղաղություն ես ուզում, պատրա՛ստ եղիր պատերազմին:

գ) Ատելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լավություն մի՛շտ արա (ԱԻ):

դ) Կանանց ուժը նրանց թուլությունն է:

ե) Շարժման սկիզբը անշարժությունն է:

զ) Դանդա՛ղ շտապիր:

է) «Երբեք մի՛ հետևեք ուրիշի խորհուրդներին», - ասում է Սոկրատեսն իր աշակերտներին: Հետո հասկանում է, որ ինքն էլ է խորհուրդ տալիս և ավելացնում է. «Երբեք մի՛ հետևեք ուրիշի խորհուրդներին, ինչպես նաև այս խորհրդին»: Բայց միևնույնն է, խորհրդին չհետևելու խորհուրդը նույնպես խորհուրդ է:

18. Պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոցներ են գործածված հետևյալ հատվածներում:

ա) Աշնան մի պայծառ առավոտ էր, Արարատյան դաշտի հրաշագեղ աշունը: Փռռոտ ցանքերի միջից փայլում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նուռն ու խնձորներն ասես հրեղեն գնդակներ լինեին, հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում: Վերևում՝ բաց կապույտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքևում ցողաթուրմ արահետներով հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հազար ու մեկ բերքերով: Աշնան քաղցր ու մեղմ արևը իր տարածուն ծիրանին էր փռել (ԱԻ):

բ) Մի գիշերում դու ձայնով նվաճեցիր Վիեննան. . .
Ու խենթացած ծափ տվեց Փարիզն ինչպես ձեռքերով,
Այնպես էլ բաց ու խուփ թարթիչներով զարմացած (ՊՄ):

գ) Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՛ն քնար.-
Մի պիրկ պարան ու երկնուղեջ փայտեր երկու (ԵՉ):

դ) Արևը ծորում է դեղին, Արևը ծորում է դեղին,
 և մեղրի թելերը հողին և եթե նայում ես շյուղին,
 փռել են կարպետը նախշուն, թեքվել է կարոտիս վրա
 ներկել են հանդերի ուղին: քերծել է լռությունը հին...(ՆԱ):

19. Գտե՛ք պատկերավորման միջոցները (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, ճարտասանական հարց, զեղչում են). նշե՛ք այն տերմինները, որոնք առաջացել են բառերի փոխաբերական գործածությամբ:

1. Քիմիան շոշափում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ատոմների և մոլեկուլների փոխազդեցությունը քիմիական կապերի մեջ, նոր քիմիական միացություններ առաջացնելիս:
2. Կարելի՞ է արդյոք պնդել, որ ռացիոնալ թվերը լցնում են թվային ուղիղը:
3. Ք.ա. III-II դդ. պարզ թվերի աղյուսակ կազմելու մի սրամիտ եղանակ գտավ Էրատոսթենեսը:
4. Կարլ Գաուսը (1777–1855) անդրադարձել է մաթեմատիկային՝ որպես «գիտությունների թագուհու»:
5. Մարմինը պետք է միշտ շարժման մեջ լինի, միտքը՝ հանգստության, իսկ հոգին՝ զուլալ, ինչպես լեռնային գետը:
6. Իմացությունը ծովի նման միշտ թաքտում ու ճողփում է մակերևույթին և դրանով ավելի շատ ուշադրություն է հրավիրում իր վրա, քան մարգարիտ որոնողը, որը գանձեր որոնելու համար սուզվում է մինչև անհայտ խորքերի հատակը:
7. Դուք գիտեի՞ք, որ հրաբխի՝ անհամբերությամբ ներքև շտապող լավան շարժվում է մինչև 25 կմ/ժ արագությամբ:
8. Տգիտությունը մերկ դաշտ է, որը կարելի է վարել ու ցանել. կեղծ գիտնականությունը սիզախոտով պատված դաշտ է, որը քաղհանել գրեթե անհնար է:
9. Պատմիչը սևով սպիտակին գրեց նախարարական տոհմերի պատմությունը:
10. Եթե Արեգակը համեմատենք ֆուտբոլի գնդակի հետ, ապա Յուպիտերը կլինի գոլֆի գնդակի, իսկ Երկիրը՝ ոլոռի հատիկի չափ:

ՄԱՍ 5

ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

5.1. Գիտական ոճ (204): 5.2. Պաշտոնական ոճ (218): 5.3. Խոսակցական ոճ (227): 5.4. Գեղարվեստական ոճ (235): 5.5. Լրագրային-հրապարակախոսական ոճ (244):

Մարդիկ հաղորդակցվելիս կիրառում են տարբեր բառեր, արտահայտություններ, նախադասությունների տարբեր ձևեր, արտահայտչական տարբեր միջոցներ, այսինքն՝ գործածելով նույն լեզուն՝ ամեն մեկն իր խոսքը կառուցում է լեզվական յուրահատուկ միջոցներով:

Լեզվական այդպիսի յուրահատկությունների դրսևորումը կախված է մի քանի հանգամանքներից.

- գործունեության այն ոլորտից, որում կատարվում է հաղորդակցումը. ըստ այդմ՝ տարբերակում են **գործառական** ոճեր (գիտական, պաշտոնական, գեղարվեստական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական).
- խոսքային իրադրությունից, որի համաձայն՝ տարբերակում են **իրադրական** ոճեր (չեզոք-անտարբեր, հանդիսավոր, ուսուցողական-խրատական, ասմունքային, մտերմական-փաղաքշական, մանկաբան, կարգադրական, հեզնական-ծաղրական, կատակաբան, գռեհիկ-հայհոյական ևն).
- հաղորդակցվողներին բնութագրող անհատական գործոններից. ըստ դրանց՝ տարբերակում են **անհատական** ոճեր (խրթին, բարձր կամ վսեմ, միջին կամ խառն, պարզ կամ հասարակ, պարզունակ):

Առավել տարածված և ընդունելի է ոճերի **գործառական** (ֆունկցիոնալ) դասակարգումը: Դասակարգելիս հաշվի են առնվում երկու հիմնական գործոններ՝

ա) արտալեզվական. հասարակական կյանքի և գործունեության այն ոլորտները, որոնք առանձնանում են հատկանիշների որոշակի ամբողջությամբ՝

գիտություն, պարբերական մամուլ, պաշտոնական և հրապարակային գործունեություն, առօրյա հաղորդակցում, **բ) լեզվական**. այդ ոլորտներում գործառնվող լեզվի առանձնահատկությունները, որոնք մեծ չափով պայմանավորված են առաջին (արտալեզվական) գործոնով:

Ընդունված է առանձնացնել գործառական (ֆունկցիոնալ) ոճերի հինգ տեսակ՝ **պաշտոնական** կամ **վարչագործարարական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային-հրապարակախոսական (ՁԼՄ-ների լեզուն)**³⁸:

Դրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի նպատակ և բնորոշ հատկանիշներ: Գեղարվեստական ոճը, օրինակ, իրականացնում է **գեղագիտական** գործառույթ, ուստի այդ ոճին հատուկ է պատկերավորման և արտահայտչական միջոցների բազմազանությունը: Գիտական ոճը առավելապես **ճանաչողական** դեր է կատարում, համոզում է և ապացուցում, ուստի այն ճշգրիտ է և տրամաբանված: Լրագրային-հրապարակախոսական ոճը համատեղում է հաղորդող և ներգործող լեզվատարրեր, քանի որ կոչված է **ներագդելու** լսարանի վրա (իրականացնում է կազմակերպական, քարոզչական, դաստիարակչական և այլ գործառույթներ): Առօրյա-խոսակցական ոճի հիմնական նպատակը պարզ, հասկանալի, սեղմ լեզվով **հաղորդակցում ապահովելն** է: Պաշտոնական ոճը **տեղեկացնում է, համոզում, կազմակերպում**, այդ իսկ պատճառով այս ոճում հաճախ են գործածվում տեղեկատվական և գնահատողական լեզվատարրեր. պաշտոնական ոճի հատկանիշների հիմքում ընկած են ճշգրտությունը, տրամաբանականությունը, երևույթների միջև եղած պատճառահետևանքային կապերը: Դրանցից յուրաքանչյուրն ունի խոսքային հաղորդակցության իր օրենքները, որոնք ընդունված է կոչել **ոճական նորմեր**: Այն, ինչ ընդունելի է մեկի համար, կարող է միանգամայն անընդունելի լինել կամ բնորոշ չլինել մյուսի դեպքում: Օր.՝ պատկերավորությունը և հուզականությունը գեղարվեստական ոճի բնորոշ գծերն են, մինչդեռ նույն հատկանիշները բնավ հատուկ չեն գիտական կամ պաշտոնական խոսքին: Ավելին՝ ավելորդ հուզականությունը, ենթատեքստը, փոխաբերական զանազան առումները խաթարում են դրանց միանշանակությունը, ճշգրտությունը նն: Եվ հա-

³⁸ Առանձին դեպքերում մեր շարադրանքի մեջ **ոճ**-ի փոխարեն **խոսք** կամ **լեզու** տերմինի գործածությունը նպատակ ունի ընդգծելու լեզվի գործառական տարբերակների ոչ միայն լեզվաոճական, արտահայտչական կողմը, այլև դրանց կառուցվածքային ու ձևային բոլոր յուրահատկությունները միասին վերցրած:

կառակը, կաղապարը պաշտոնական, մասամբ նաև գիտական խոսքի հատկանիշ է, բայց այն մերժելի է գեղարվեստական տեքստի համար:

Լեզվի գործառական տեսակներից են նաև **հրապարակային խոսքը** և **գովազդի լեզուն**, որոնք, ընդհանրություններ ունենալով ՁԼՄ-ների լեզվի հետ, միաժամանակ առանձնանում են մի շարք բնորոշ հատկանիշներով:

5.1. ԳԻՏԱԿԱՆ ՈՃ³⁹

5.1.1. Ընդհանուր հատկանիշներ (205): 5.1.2. Ենթառձեր և ժանրեր (209): 5.1.3. Գիտական աշխատանքների կառուցվածքը և ձևավորումը (211): Վարժություններ և առաջադրանքներ (214):

Լեզվի ճշգրտության, դիպուկության, խորության և այլ առանձնահատկությունները բացառիկ դեր են կատարում գիտական աշխարհում: Այսօրվա երիտասարդ գիտական աշխատողը ոչ միայն պետք է լարված հետևի գիտական գաղափարների զարգացմանն ու տարածմանը, այլև պարտավոր է ապահովել համապատասխան լեզվական մակարդակ, այլ կերպ գիտական աշխատանքը ցանկացած արդյունքը չի տա: Ուրեմն գիտությունը կարելի է դիտել այս տեսակետից, որպես լեզվի զարգացման հետ կապված մարդկային գործունեության ամենակենսունակ ուղղություններից մեկը: Երբ խոսում ենք զարգացած գիտությանը համապատասխան լեզվական մակարդակի մասին, այդ նշանակում է, որ մենք՝ գիտության մշակներս, պետք է ստեղծենք հայոց գիտական լեզուն և հասցնենք կատարելության: Հենց այդ գիտական լեզուն էլ մեծապես նպաստելու է համաժողովրդական լեզվի զարգացմանը:

Վիկտոր Համբարձումյան

Ժամանակակից աշխարհում մարդկային գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը գիտությունն է: Այս կարևորագույն ոլորտի սպասարկմանն է ծառայում գրական լեզվի գործառական տարբերակներից մեկը՝ **գիտական ոճը** կամ գիտական խոսքը:

³⁹ «Գիտական ոճ» բաժնի տեսական նյութը կրճատումներով և որոշ փոփոխություններով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Թեյլան Լ.**: Տե՛ս **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 292-314:

Գիտական ոճը թերևս ամենից ավելի է առանձնանում տարբերակային ձևերի առատությամբ, քանի որ այդպիսին է իր արտացոլման առարկան: Գիտությունը նախ բաժանում են երեք խոշոր բնագավառների՝ բնական, հասարակական (հումանիտար) և տեխնիկական. սրանք էլ ունեն իրենց ոլորտները, ճյուղերը, ենթաճյուղերը⁴⁰:

Բնական է, որ գիտության լեզուն նույնպես միատարր լինել չի կարող. լեզվական որակի ու կազմի առումով էապես տարբեր պիտի լինեն, ասենք, մաթեմատիկական, կենսաբանական, լեզվաբանական, պատմագիտական աշխատությունները:

Գիտական ոճը գործառական մյուս ոճերի հետ ունի և՛ ընդհանուր, և՛ տարբերակիչ գծեր: Այն առավել չափով մոտ է պաշտոնական, մասամբ հրապարակախոսական ոճերին և հակադրվում է գեղարվեստական ու խոսակցական ոճերին:

5.1.1. Ընդհանուր հատկանիշներ: Ամենակարևոր հատկանիշներից մեկը գիտական ոճի **ընդհանրական ու վերացական** բնույթն է՝ պայմանավորված գիտական մտածողության յուրահատկությամբ: Եթե արվեստի մեջ ընդհանուրը հանդես է գալիս եզակիի, կոնկրետի տեսքով, ապա գիտության մեջ եզակին դրսևորվում է ընդհանուր ձևով: Որպես օրինակ բերենք **գայլ** գոյականի երկու կիրառությունները՝ գիտական և գեղարվեստական բնագրերում:

«...Տունդրային գայլը ավելի բաց գույնի է, ձմռանը գրեթե սպիտակ, անտառայինը՝ մուգ, անապատայինը՝ գորշ շիկակարմիր» (ՀՄՀ):

«Գայլն աչքերը կտրեց նրա գունատ աչքերից, գլուխը թեքեց և աչքերով ձնափոշի արավ. նա միամտացնում էր այդ երեխային, որ ցատկի, բայց երեխան գիտեր, որ իրեն միամտացնում են, և գայլին ընդառաջ էր գնում դանդաղ ու մահակի պես պինդ. գայլը մոռացավ, որ ինքը գայլ է, կլանչոցով էտ թռավ» (ՀՄ):

Գիտական բնագրում **գայլ** բառը նշանակում է կենդանու այդ տեսակը, գեղարվեստական ռճում նկարագրված է այդ տեսակի մի կոնկրետ առանձնյակ: Սակայն սա չի նշանակում, թե գիտությունը չի անդրադառնում մասնավոր կամ կոնկրետ իրողությունների. ընդհանրականության աստիճանը պայմանավորված է գիտական երկի ժանրով, նրա կոնկրետ նպատակադրմամբ:

⁴⁰ Գիտությունը նույնպես հանդես է գալիս որպես ուսումնասիրության առարկա հատուկ գիտության գիտաբանության համար:

Գիտական ոճին բնորոշ են նաև հետևյալ հատկանիշները.

- ձևակերպումների ճշգրտությունը և սեղմությունը,
- խոսքի ընթացքի խիստ տրամաբանվածությունը,
- տրամաբանական դատողությունների, փաստարկման և ապացուցման եղանակների հաճախակի կիրառումը,
- խոսքի հուզարտահայտչական և պատկերավորման միջոցների խիստ սահմանափակ գործածությունը,
- ոչ կանոնական լեզվական միավորների բացառումը,
- հակումը դեպի գրքային երանգ ունեցող լեզվական միավորները,
- մասնագիտական բառերի և կադապարային արտահայտությունների հաճախակի կիրառությունը,
- շարահյուսական բարդ կառույցների հաճախակի գործածությունը⁴¹:

Գիտական խոսքի բառապաշարի ամենաբնորոշ տարրերը **տերմիններն** են, որոնք բնութագրվում են իմաստի **ընդհանրականությամբ** և **միանշանակությամբ**. սրանցով են հիմնականում ապահովվում գիտական ոճի ճշգրտությունն ու հստակությունը, ընդհանրականությունն ու վերացականությունը: Տերմինները սովորաբար կազմում են գիտական ոճի բառապաշարի 15-20%-ը: Տերմինային արժեքով կարող են կիրառվել միայն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը. **կապերը, շաղկապները, վերաբերականներն** ու **ձայնարկությունները** տերմին չեն դառնում: Նյութական իմաստ ունեցող բառերից տերմինային կիրառությամբ հիմնականում հանդես է գալիս գոյականը, առավել սակավ գործածվում են ածականներն ու բայերը. դերանուններին ու մակբայներին ևս տերմինային կիրառությունները բնորոշ չեն:

Համագործածական բառաշերտի միավորը գիտական խոսքում կարող է գործածվել տերմինային արժեքով (օր.՝ **ջուր** – քիմիական, **սիրտ** – կազմախոսական, **թուփ** – բուսաբանական ևն): Իբրև գիտության տերմինային համակարգի միավոր՝ բառը ձեռք է բերում տերմինային իմաստ, որը, ի տարբերություն բառի ոչ տերմինային իմաստի, արտահայտում է գիտության կամ որևէ այլ բնագավառի բնորոշ կոնկրետ հասկացություն և որպես այդպիսին՝ տրվում է գիտական ճշգրիտ սահմանման: Հնարավոր է նաև հակառակ երևույթը, այ-

⁴¹ Տե՛ս **Ջաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն, Եր., 2018, էջ 11:

սինքն՝ մասնագիտական տերմինները կարող են ներթափանցել համագործածական բառաշերտ օր.՝ **մոլեկուլ, թթվածին** ևն: Որպես գիտական տերմինաբանության մեջ գործող ընդհանուր օրինաչափություն ընդունված է «մեկ տերմինին՝ մեկ իմաստ տվյալ տերմինահամակարգում» սկզբունքը⁴²:

Հայտնի է, որ գիտական խոսքը գուրկ է պատկերավորման-արտահայտչական միջոցներից կամ հուզական որոշակի գունավորումից: Երբեմն դրանց առկայությունը պայմանավորված է նրանով, թե գիտական ոճի որ ենթատճին կամ ժանրին է վերաբերում տվյալ բնագիրը: Բնական է, որ հումանիտար (առավելապես գրականագիտական, պատմագիտական, արվեստագիտական և այլ) բնագրերում, ինչպես նաև գիտահանրամատչելի երկերում սակավադեպ չեն պատկերավոր մտածողություն դրսևորող լեզվական միջոցները:

Գիտական ոճի բնագրերում ընդհանրապես սովորական են **բառերի փոխաբերական գործածության** դեպքերը (ընդհանրական-ավարտուն փոխաբերությունները): «Գիտության համարյա բոլոր բնագավառներում փոխաբերական իմաստով գործածվում են մի քանի բառեր, որոնք հանդես են գալիս տարբեր լրացումների հետ: Դրանցից են՝ **սաղթյուր** (վարակի, ջերմության, լույսի, զգացմունքների, երջանկության, հակասությունների, ճառագայթման, շարժման, ձայնի, հաղորդման... ևն), **օջախ** (բորբոքային, ճառագայթման, մշակութային... ևն), մթնոլորտ (հոգեբանական, շիկացած, գրական, հեղձուցիչ... ևն), **բանալի** (գաղտնիքների բացահայտման, հարցի լուծման, ուսումնասիրության ևն), **շտեմարան** (քարի, ձկան, վարժությունների ևն), **գոտի** (սևահողային, խաղողագործական, արևադարձային... ևն)»:

Մեր լեզվի բառակազմական ճկունությունն ու գիտական մշակման հարուստ ավանդույթը հնարավորություն են տալիս հայերենով հաջողությամբ արտահայտելու գիտության անընդհատ նորացող հասկացությունները:

Գիտական խոսքի ընդհանրականությունն ու վերացականությունը ամենից հաճախ դրսևորվում են ներկա ժամանակի երրորդ դեմքի ձևերով. ներկա ժամանակն այս դեպքում հանդես է գալիս ոչ թե իր բուն նշանակությամբ, այլ որպես **ընդհանրական ներկա** («Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը», «Ձկներն ապրում են վտառներով»), կամ էլ հաճախ որպես պատմական ներկա («Հայտնի ֆիզիկոս Հերցը դեռևս մանկուց արտասովոր հակումներ է

⁴² Հմմտ. **Ադայան Է.**, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 44-46:

դրսևորում մաթեմատիկայի, ինչպես նաև լեզուների նկատմամբ», «Կարմիր գրքի վերջին հրատարակությունը լույս է տեսնում 1978-1980 թթ.»):

Բայի (նաև դերանվան) **երկրորդ դեմքը** գիտական խոսքում ամենից սակավադեպն է. սրա համեմատ հաճախ է գործածվում **առաջին դեմքը**, որը սովորաբար նշում է երկի հեղինակին և առավելապես արտահայտվում է հոգնակի թվով (հեղինակային **մենք**): Օր.՝ «Մույն աշխատության մեջ **մենք** անդրադառնում ենք...», «**Հուսով ենք**, որ այս գիրքն իր նպաստը կբերի...» ևն:

Հոգնակի թվի առաջին դեմքի բայով (սովորաբար ըղձական եղանակի ապառնի ժամանակով) ձևավորվում են նաև ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններ (դարձյալ առավելապես գիտաուսումնական ենթառոճում): Օր.՝ «**Լուծենք** հավասարումը», «Մի պահ **վերանանք** բառերի կոնկրետ իմաստներից» ևն:

Բայի **եղանակային ձևերից** գիտական ոճում գրեթե բացառվում է հրամայական եղանակը (բացի ուսումնական գործնական առաջադրանքների ձևակերպումներից՝ «**Առանձնացրե՛ք** ածանցավոր բառերը», «**Լուծե՛ք** տրված հավասարումը» ևն). սրանք ավելի հաճախ արտահայտվում են անորոշ դերբայով («**Առանձնացնել ... , լուծել...** »):

Գիտական մտածողության համարժեք արտահայտման պահանջով գիտական ոճում շատ են կիրառվում նաև ոչ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը՝ կապերը (**համար, պատճառով, մասին, կապակցությամբ, համաձայն, ըստ** ևն), շաղկապները (**եթե..., ապա, չնայած (որ), որովհետև, քանի որ, ուստի, այնպես որ, թեև**), վերաբերականները (**անշուշտ, իհարկե, երբեք, անտարակույս, թերևս, երևի** ևն):

Շարահյուսական կառույցներից գիտական ոճին առավել բնորոշ են **գոյականական բառակապակցությունները**՝ տերմինային արժեքով (բացարձակ թիվ, ուղեծրի շեղում, օպտիկական առանցք, ճառագայթաակտիվ փոշի, նոսր լուծույթ):

Պարզ նախադասությունները գերազանցապես երկկազմ են: Գիտական ոճում, առավել քան գործառական մյուս ոճերում, շատ են գործածվում **բարդ նախադասությունները**՝ գերազանցապես ստորադասական տիպի: Դրանց բաղադրիչների շարահյուսական հարաբերություններից ամենատարածվածը **պատճառահետևանքային կապն** է՝ դրսևորված պատճառի, պայմանի, հիմունքի պարագա կամ հետևանքի երկրորդական նախադասություններով:

Մա պայմանավորված է գիտական մտածողության առանձնահատկությամբ, տրամաբանական կաղապարների լեզվական ճշգրիտ արտացոլման պահանջով: Մակայն գիտական ոճին խորթ չեն նաև **դերբայական դարձվածներով** կառույցները, որոնք, բարդ նախադասությունների հետ զուգորդվելով, որոշակիորեն մեղմում են գիտական խոսքին պարտադրված միօրինակությունը:

Գիտական խոսքին բնորոշ է շարահյուսական մի յուրահատկություն ևս. գիտական երկի հեղինակը հաճախ խուսափում է առաջին պլան մղել իր կամ տվյալ հարցով զբաղված այլ գիտնականների անձը: Այս նպատակն իրագործելուն առավել չափով նպաստում են **կրավորական կառուցվածքի** նախադասությունները (օր.՝ «Ուսումնասիրվել են մետաղների հատկությունները», «Կիրառվել են քննության նորագույն մեթոդներ»), ինչպես նաև **ընդհանրական միակազմ** նախադասությունները (օր.՝ «Առանձնացնում են լեզվի զարգացման հետևյալ փուլերը», «Թեորեմը ապացուցում են երկու եղանակով»): Շատ են հանդիպում նաև **պետք է (կարելի է, անհրաժեշտ է, ցանկալի է...) + անորոշ դերբայ** կառուցվածքի միակազմ նախադասությունները: Նախադասության հնչերանգային տեսակներից բացարձակ գերակշռություն ունի **պատմողական տիպը**, որ բխում է գիտական խոսքի առաքելությունից:

Գիտական ոճում սակավադեպ չեն **ներդրյալ միավորները՝** բառեր, բառակապակցություններ կամ նախադասություններ, որոնք լրացուցիչ տեղեկատվություն հաղորդելու գործառույթ ունեն և սովորաբար առնվում են փակագծերի մեջ: Օր.՝ «Ռեգիոմոնտանն իր աշխատությունում **կոսինուսն** անվանել է **լրացման սինուս** (լատ.՝ sinus complementi), իսկ նրա հետևորդները 17-րդ դարում այդ անվանումը կրճատեցին ու դարձրին **co-sinus** (հղմունդ Հունթեր), իսկ ավելի ուշ՝ **cos** (Ռիլիամ Օտրեդ)»: «Գալակտիկայի աստղերի մեծ մասը գտնվում է սկավառակի հարթությունում (հատկապես՝ ջերմ հսկա աստղերը, աստղասփյուռները և բաց աստղակույտերը), և երկնքում այդ հարթությունը երևում է մեզ Ծիր Կաթինի ձևով (Հարդագոդի ճանապարհ)»:

5.1.2. Ենթառճեր և ժանրեր: Նախ՝ գիտական խոսքը, ինչպես և խոսքն ընդհանրապես, ունի դրսևորման երկու ձև՝ **բանավոր** և **գրավոր**:

Գիտական խոսքի ենթառճերը հիմնականում տարբերվում են նրանով, թե հանրության որ խմբին է հասցեագրվում տվյալ գիտական շարադրանքը և ինչ նպատակ է հետապնդում: Ըստ այսմ՝ տարբերում են **մասնագիտական, գիտաուսումնական, գիտահանրամատչելի** ենթառճեր:

Մասնագիտական ենթառճով գրված երկերը (մենագրություն, ատենախոսություն, հոդված, թեզ, զեկուցում են) նախատեսված են գիտության տվյալ ոլորտի գիտական ու տեխնիկական մշակումներով զբաղվող նեղ մասնագետներին. դրանք կարող են մատչելի չլինել մասնագիտական պատրաստություն չունեցողների համար: **Գիտասուտումնական** ենթառճով գրվածները նախատեսված են գիտության տվյալ ոլորտի ապագա մասնագետների համար. սա դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսուցողական բնույթի այլևայլ աշխատանքներին հատուկ լեզվական որակն է: **Գիտահանրամատչելի** երկերը (հոդված, տեղեկագիր, ուղեցույց, դասախոսություն են) գիտելիքի պարզեցված շարադրանք են՝ հասցեագրված գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ հատուկ մասնագիտական պատրաստություն չունեցողներին:

Գիտական ոճի ենթառճերի՝ վերևում նկարագրված լեզվական որակների տարբերությունները առավել ակներև ներկայացնելու համար բերենք մի քանի նմուշներ մասնագիտական և հանրամատչելի բնագրերից:

1. Մասնագիտական բնագրեր

ա) ֆիզիկայից

Եթե մարմինն օժտված է որևէ կարգի առանցքային համաչափությամբ, ապա իներցիայի կենտրոնը կգտնվի այդ առանցքի վրա: Նրա հետ կհամընկնի նաև իներցիայի գլխավոր առանցքներից մեկը, իսկ մյուս երկուսը կլինեն նրանց ուղղահայաց: Ըստ որում, եթե առանցքային համաչափության կարգը երկուսից մեծ է, ապա մարմինը սիմետրիկ հոլ է (Լ. Լանդաու, Ե. Լիֆշից):

բ) կենդանաբանությունից

Սողունների և թռչունների կազմության մեջ ընդհանուր շատ բան կա՝ չոր մաշկ, նմանություն թեփուկների և փետուրների զարգացման մեջ, մեկ հողելուստով գանգի հողավորում ողնաշարի հետ, ինտերտարալ հողավորում, զարկերակային արյուն կրող աորտայի աջ աղեղ, կոնքային երիկամ, սաղմային թաղանթներ են: Թռչունների շատ օրգաններ նման չեն սողունների համապատասխան օրգաններին, բայց նրանք զարգացել են վերջիններիս բարդացման հետևանքով (Ե. Լուկին):

գ) մաթեմատիկայից

Այն հարթությունը, որը գնդային մակերևույթի հետ ունի միայն մեկ ընդհանուր կետ, կոչվում է շոշափող հարթություն: Շոշափող հարթությունը կարելի

է դիտել որպէս հատող հարթության սահմանային դիրք, երբ գնդի կենտրոնից ունեցած նրա հեռավորությունը ձգտում է շատավելին:

2. Հանրամատչելի բնագրեր

ա) ֆիզիկայից

Տիեզերքը կազմող մատերիան գոյություն ունի ոչ միայն որպէս նյութ: Լույսը կամ ռադիոալիքները նյութական չեն, բայց մատերիական են: Եթե դրանք **ոչինչ** լինէին, մի թե պետք կլինէր ինչ-որ բան ծախսել դրանց ստեղծման համար: Ինչո՞ւ էլեկտրականները պետք է ածուխ կլանեն, իսկ հնադարյան լապտերները՝ ձէթ: Խորասուզվելով էլեմենտար մասնիկների աշխարհը՝ տեսնում ես, որ այնտեղ ուղղակի հրաշքներ են տեղի ունենում. նյութի հատիկներն ամբողջությամբ, առանց մնացորդի վերածվում են ճառագայթման: Իհարկէ, այդպիսի դեպքերը զարմանալի են թվում, սակայն դրանց մեջ զարմանահրաշ ի՞նչ կա (Դ. Դանին):

բ) բուսաբանությունից

Ծառերին տերևներն անհրաժեշտ են՝ կենդանի մնալու համար. տերևները ծառի սննդի գործարաններն են: Նրանք պարունակում են քլորոֆիլ կոչվող կանաչ մածուցիկ նյութ: Քլորոֆիլն օգտագործում է ջուր, արևի լույս և օդի մեջ եղած ածխաթթու գազ՝ բուսահյութ պատրաստելու համար, որն անցնում է ծառի բոլոր մասերին: Տերևների մեջ սնունդ ստեղծելու այդ եղանակը կոչվում է ֆոտոսինթեզ, որի ընթացքում բույսերը օդից վերցնում են ածխաթթու գազ և արտագատում թթվածին:

գ) քիմիայից

Մանրէասպան օճառների խմբին պատկանող օճառները օգտագործվում են ոչ միայն կանխարգելիչ նպատակներով, այլև մաշկային վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար: Այս օճառներն ավելի լայն կիրառություն ստացան, երբ դրանց բաղադրության մեջ քայքայող *ֆենոլը* փոխարինվեց *քլորացված ֆենոլով*: Օճառները դարձան համեմատաբար քիչ քայքայող և ավելի լավ մանրէասպան հատկություններով օժտված: Ի դեպ պետք է նշել, որ օճառում մանրէասպան նյութի քանակությունը չպետք է գերազանցի 2 %-ը:

5.1.3. Գիտական աշխատանքների կառուցվածքը և ձևավորումը: Գիտական յուրաքանչյուր շարադրանք պետք է ունենա որոշակի՝ այդ կարգի աշխա-

տանքների համար ընդունված կառուցվածք և ձևավորված լինի գիտական աշխատանքների համար մշակված հատուկ կանոններով:

Գիտահետազոտական աշխատանքը, անկախ դրա ծավալից, պետք է բաղկացած լինի կառուցվածքային երեք մասերից՝ **ներածություն, հիմնական բովանդակություն, եզրակացություն(ներ)**: Համեմատաբար մեծ ծավալ ունեցող աշխատանքներում (դիպլոմային աշխատանք, մագիստրոսական թեզ են) այդ բաժանումները ունենում են առանձին վերնագրեր, կարող են ունենալ **ենթաբաժիններ**:

Ներածության մեջ պետք է ներկայացվեն հետազոտության մեջ քննարկվող հարցերն ընդհանուր գծերով, դրանց քննության կարևորության, նպատակի, ակնկալվող արդյունքների, ուսումնասիրության մեթոդի մասին տեղեկությունները:

Բովանդակության մեջ արդեն պետք է ներկայացվեն հետազոտողի կատարած աշխատանքի (լաբորատոր փորձերի, այլ կարգի փորձարարական աշխատանքների, եթե այդպիսիք արված են) արդյունքները, դրանք հիմնավորվեն, կատարվեն եզրահանգումներ, փաստարկումներ, հաստատվեն հեղինակի նախապես առաջադրած կանխադրույթները, անդրադարձ կատարվի հակադիր կամ հաստատող կարծիքներին, կատարվեն ընդհանրացումներ:

Եզրակացությունը փաստորեն ամփոփում է հիմնական բովանդակության շարադրանքը՝ առանձին կետերով ներկայացնելով ստացված եզրահանգումներն ու կոնկրետ արդյունքները:

Աշխատանքի վերջում դրվում է օգտագործված գրականության (անհրաժեշտ դեպքերում նաև սկզբնաղբյուրների, համառոտագրությունների) ցանկը: Որոշ կարգի աշխատանքներ ըստ անհրաժեշտության կարող են ունենալ նաև հավելվածներ:

Կուրսային, ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ռեֆերատները, ատենախոսությունները կազմվում են հետևյալ կառուցվածքով. **Անվանաթերթ** (էջ I), որի վրա առանձին տողերով վերևից նշվում են նախ՝ բուհի և ամբիոնի անվանումները, ապա՝ գլխատառերով՝ աշխատանքի տեսակը (ասենք՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ), այնուհետև առանձին տողով նշվում են հեղինակի անուն-ազգանունը (կուրսայինի կամ ռեֆերատի դեպքում՝ նաև կուրսը և խումբը), ղեկավարի անվան սկզբնատառն ու ազգանունը, գիտական աստիճանն ու կոչումը:

Բովանդակություն: Այս վերնագրի տակ անվանաթերթին հաջորդող էջում (2-րդ) հերթական համարակալումով և էջերի նշումով տրվում են աշխատանքի մասերը՝ **Ներածություն**, հիմնական մասի **վերնագրերը**, **Եզրակացություն**, **Օգտագործված գրականության ցանկ**, **Հավելված(ներ)** (եթե կան):

Ներածությունը սկսվում է աշխատանքի 3-րդ էջից: **Հիմնական** մասը հաջորդում է **ներածությանը**՝ նոր էջից: Եթե այս մասը բաժանված է առանձին գլուխների, դրանք նույնպես սկսվում են նոր էջից: Հիմնական մասին հաջորդում է **Եզրակացությունը** (նոր էջից), իսկ վերջում՝ **Օգտագործված գրականության ցանկը**, որտեղ առանձին տողերով նշվում են (համարակալումով) այն աշխատանքները, որոնցից օգտվել է հետազոտության հեղինակը և հիշատակել իր աշխատանքում: Այս շարքում պետք է նշել հեղինակը, ստեղծագործության անվանումը, հրատարակության տեղն ու տարեթիվը:

Հղումների և ծանոթագրությունների կարգը: Գիտական աշխատանքի հեղինակը հաճախ քաղվածքներ ու մեջբերումներ է անում այլոց ուսումնասիրություններից: Դրանք բերվում են կա՛մ բառացի, կա՛մ պատմողաբար՝ վերաշարադրումով: Բառացի մեջբերվող խոսքը առնվում է չակերտների մեջ, իսկ անուղղակի մեջբերվող խոսքը տրվում է առանց չակերտների: Չակերտներով մեջբերվող խոսքն սկսվում է մեծատառով (բացի այն դեպքերից, երբ մեջբերվող խոսքը ներկայացվում է որպես հեղինակային խոսքի շարունակություն), վերջում՝ փակվող չակերտի վրա (անուղղակի խոսքի դեպքում՝ վերջին բառի վրա) դրվում է մեջբերման թվահամարը և նույն թվահամարով էջի ներքևում՝ վերջին տողից հետո, գրվում է **հղումը**: Հղումի մեջ նշվում են մեջբերվող խոսքի հեղինակի անվան սկզբնատառը, ազգանունը (ընդգծված), աշխատության վերնագիրը, հրատարակության տեղը, տարեթիվը, համապատասխան էջը (օր.՝ 1. **Գաբրիելյան Ն. Կ.**, Քիմիական տարրերը տիեզերքում և մեր շուրջը, Երևան, 1990, էջ 39): Նույն էջում նույն աղբյուրից այլ հղում տալու դեպքում երկրորդ անգամ հղումը չի կրկնվում, այլ նշվում է՝ **Նույն տեղում** (անուղղակի հղումի դեպքում՝ **Տե՛ս նույն տեղը**): Եթե նույն աղբյուրին հղում է տրվում այլ էջերում, ապա՝ հեղինակի ազգանունը, և գրքի վերնագրի փոխարեն՝ **նշվ. աշխ.** և էջը:

Ընդունված է նաև հղումների այլ կարգ. շարադրանքի մեջ՝ մեջբերված խոսքից անմիջապես հետո, փակագծերում նշվում են աշխատության համարը, որը գրականության ցանկում տվյալ աշխատանքի թվահամարն է, և էջը (օր.՝

35, 124): (Այս ձևը առավել ընդունելի է ծավալուն աշխատանքների համար՝ մենագրություն, մագիստրոսական թեզ, ատենախոսություն ևն):

Այլ աշխատություններից մեջբերումները նշող հղումներից բացի՝ հեղինակը կարող է տեքստից դուրս՝ տողատակում, լրացուցիչ որևէ տեղեկություն, բացատրություն կամ մեկնաբանություն անել շարադրանքի որևէ բառի, դարձվածի, դրույթի վերաբերյալ: Մրանք **ծանոթագրություններ** են, որոնք տեքստում կարող են համարակալվել կամ նշվել աստղանիշով:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Որո՞նք են գիտական ոճի առանձնահատկությունները:

Միօրինակություն, արտահայտչականություն, ճշգրտություն, ապացուցականություն, ընդհանրականություն, կաղապարայնություն, վերացականություն, տրամաբանական հետևողականություն, գրական լեզվի նորմերի խախտում, հուզականություն:

2. Թվարկե՛ք գիտական ոճի ենթառձեռքը: Ի՞նչ տարբերություններ կան դրանց միջև:

3. Ո՞ր բառերի հետ տերմինային բառակապակցություններ կկազմեն *թիվ, սինթեզ, շեղում, ֆունկցիա, ճառագայթում, պրոզրեսիա* տերմինները:

Ջերմամիջուկային, անկյունային, տարրական, բնական, երկրաչափական, մթնոլորտային, գոգավոր, էլեկտրական, դիֆերենցելի, միջուկային, դոպլերյան, ռենտգենյան, թվաբանական, դրական, կենտ, ռացիոնալ, քիմիական, ասիմետրիկ:

4. Տրված նախամասնիկներով կազմե՛ք տերմիններ:

Քվազի-, ձայնա-, մակրո-, ինքնա-, առանցքա-, գեր-, ջերմա-:

5. Գրե՛ք բառագույգեր՝ առաջին հատվածում տրված բառերի համարժեքները գտնելով երկրորդ հատվածում:

- Սիմետրիա, իդեալական, ֆակտոր, իզոբար, արկալիական, իդեոգրամ, մեզոսֆերա, իդեա, ստանդարտ, էտալոն, իզոբարային, լոկատոր, ինվարիանտ, զոնայական, զոդիակ, կրիոգենային, կոմուլյատիվ, կոմուլյացիա, կոսմոգոնիա, կոսմոլոգիա, կոռոզիա, կորպուսկուլյային, կոնտուրիկ, կոնտրացիա, մակաձային, վիբրացիոն, կոլիմատոր, անալոգային, կոմպետենցիա:

• Կարճացում, տիեզերաբանություն, գործոն, անփոփոխակ, գաղափարագիր, հավասարաճնշում, մասնիկային, համաչափություն, մենագունավորիչ, գաղափար, կուտակչական, թրթռական, չափանիշ, սառնածնային, հիմնային, միջնուլորտ, հավասարաճնշագիծ, չափանմուշ, տեղորոշիչ, անփոփոխակ, նմանակային, կուտակում, տիեզերածնություն, հաղորդաշղթա, մակածային, իրողություն, քայքայում, գոտիական, կենդանաշրջան:

6. Տրված տեքստում նշե՛ք գիտական ոճի բառապաշարային և քերականական առանձնահատկությունները:

Գենը ժառանգականության տարրական միավորն է, որը ԴՆԹ-ի՝ դեզօքսիռիբոնուկլեինաթթվի, իսկ որոշ վիրուսներում՝ ՌՆԹ-ի՝ ռիբոնուկլեինաթթվի մոլեկուլի մի հատվածն է. պայմանավորում է որևէ հատկանիշի առաջացումն ու զարգացումը կամ մասնակցում է օրգանիզմի մի քանի հատկանիշների ձևավորմանը: Գեների ամբողջությունը ծնողները փոխանցում են իրենց սերնդին:

Հատկանիշները սերունդներին փոխանցվում են քրոմոսոմներ կոչվող գոյացությունների միջոցով: Դրանք գտնվում են բջիջների կորիզների ներսում: Բջջի կորիզում պարունակվող քրոմոսոմներից յուրաքանչյուրն ունի իր գույգը. գույգերից մեկը մայրական քրոմոսոմն է, մյուսը՝ հայրականը: Բույսերի և կենդանիների բոլոր տեսակները միմյանցից տարբերվում են քրոմոսոմների թվով: Օրինակ՝ մարդկանց քրոմոսոմները 46-ն են և գոյացնում են 23 գույգ:

Քրոմոսոմը բաղկացած է գեներից, որոնցում պարփակված է ժառանգական հատկանիշների մասին տեղեկությունը: Ժառանգական հատկանիշները որոշվում են մեկ գույգ առաջացնող 2 գենի գործունեությամբ: Մովորաբար ժառանգած գեներից մեկը մյուս գենի նկատմամբ գերիշխող է, և հատկանիշի զարգացման վրա գերակշռող ազդեցություն է ունենում հենց նա: Արական և իգական օրգանիզմների տարբերությունը պայմանավորված է նրանց սեռական քրոմոսոմներով: XX քրոմոսոմ ունեցող օրգանիզմը կլինի իգական սեռի, XY ունեցողը՝ արական:

7. Տրված տեքստում գտե՛ք գիտահանրամատչելի ենթաոճին բնորոշ տարրերը: Ինչո՞վ է գիտահանրամատչելի ենթաոճը տարբերվում մասնագիտականից:

Բնությունը մարդուն պարզել է զգայարանների մի խումբ, որով նա կարողանում է ճանաչել աշխարհը, տեսնել իրեն շրջապատող միջավայրը, վայելել

բնության տված բարիքները: Եվ այն, ինչ նյութական է, կազմված է քիմիական տարրերից:

Քիմիական տարրերը Երկրագնդի վրա համեմատաբար ցածր ջերմաստիճաններում կազմում են մոլեկուլներ ու շատ բարդ միացություններ, մինչդեռ տիեզերքում՝ աստղերում, շատ բարձր ջերմաստիճանների պայմաններում կարող են ատոմական վիճակում գտնվել: Ավելին՝ նույնիսկ ատոմները կարող են կորցնել Երկրագնդի վրա մեզ հայտնի կառուցվածքը և վերածվել տարրական մասնիկների:

Երկրագնդի վրա հայտնաբերված են 107 քիմիական տարրեր, որոնց մեծ մասը՝ մոտ 90-ը, կազմում են մեզ շրջապատող բնության բաղադրիչները: Վերջին տասնամյակներում գիտաշխատանոց-լաբորատորիաներում հաջողվել է ստանալ նոր տարրեր, որոնք անկայուն են և սինթեզվելուց հետո արագ փոխարկվում են այլ տարրերի:

Երկրագունդը տիեզերքում մեզ հայտնի երկնային մարմիններից այն յուրահատուկն է, որի վրա այդքան շատ քիմիական տարրեր կան, որոնք զանազան գույնով և ձևով ներկայացնում են այնքան բազմազան անօրգանական ու օրգանական աշխարհը:

8. Գիտահանրամատչելի և գիտաուսումնական ի՞նչ գրքեր, ամսագրեր, հեռուստահաղորդումներ գիտեք: Բանավոր ներկայացրե՛ք որևէ գիտահանրամատչելի նյութ:

9. Տրված տեքստի համար գրե՛ք 7 բանալի բառ:

Էլեկտրական երևույթներին առաջինը ուշադրություն է դարձրել Հին Հունաստանի յոթ իմաստուններից Թալես Միլեթացու (Ք.ա. 7-րդ դար) դեռատի դուստրը: Փորձելով մաքրել իր սաթե իլիկը մանր թելիկներից և փոշուց՝ նա նկատել է, որ դրանք դարձյալ կպչում են իլիկին: Հույները սաթի այլ խորհրդավոր հատկանիշներ էլ են հայտնաբերել: Շփելով սաթը մթության մեջ՝ տեսել են, թե ինչպես է ամբողջ կտորն արձակում կապտավուն կայծեր, որոնք ուղեկցվում են ճայթյուններով:

Սաթի խորհրդավոր հատկությունները գիտական լուրջ ուսումնասիրության առարկա են դարձել Թալեսից երկու հազար տարի անց: Անգլիացի բժիշկ և ֆիզիկոս Ուիլյամ Ջիլբերտն է «Էլեկտրականություն» բառը ներմուծել գիտության մեջ: Նրան հաջողվել է մագնիսական և էլեկտրական երևույթներն առանձնացնել իրարից: Միայն մեկուկես դար անց անգլիացի մի ուրիշ գիտնա-

կանի՝ Ջենն Մաքսվելին (19-րդ դար), հաջողվեց կրկին միավորել էլեկտրականությունն ու մագնիսականությունը, բայց արդեն՝ նոր հիմքի վրա:

10. Ըստ հետևյալ բանալի բառերի՝ կազմե՛ք գիտական տեքստ:

ա) Ինֆորմացիայի կողմնորոշում, պայմանանշան, աղյուսակ, հիշողության ծավալ, բիրթ, բայթ, ծավալ:

բ) Էլեկտրական լիցք, հաղորդիչ, էլեկտրական դաշտ, էլեկտրացույց, էլեկտրաչափ, պոնձե ձող, մեկուսիչ:

գ) Վալենտականություն, ատոմ, միացություն, լիցք, իոնային կապ, օքսիդացում, էլեկտրոն:

դ) Նյարդային հյուսվածք, օրգան, սիրտ-անոթային համակարգ, մաշկ, արյունատար անոթ, քթըմպան, կարմիր ոսկրածուծ:

ե) Ցուցչային ֆունկցիա, գրաֆիկ, արժեքների բազմություն, կիսաառանցք, արբսցիաների առանցք, որոշման տիրույթ, ուղիղ:

զ) Քարտեզ, քանակական մեթոդ, հարաբերակցային վերլուծություն, ինդեքս, դինամիկ շարք, քարտեզաչափություն, Էլակետային տվյալներ, ցուցանիշ:

11. Տրված հաստատումների վերաբերյալ կատարե՛ք հղումներ:

ա) Գեղանկարիչ, քանդակագործ, բանաստեղծ, գյուտարար, ֆիզիկոս, մաթեմատիկոս, բուսաբան, քիմիկոս, աստղագետ, փիլիսոփա, աշխարհագրագետ, լեզվաբան Լեոնարդո դա Վինչիի՝ 2010 թվականին Երևանում հրատարակված «Առակներ, հեքիաթներ, լեգենդներ» գրքի 46-րդ էջում կարդում ենք հետինակի՝ իր ընթերցողներին ուղղված հետևյալ խորհուրդը. «Քննադատելիս քննադատի՛ր կարծիքը, այլ ոչ թե նրա հեղինակին»:

բ) Ալեքսանդր Իվանովը 2018 թվականին Մոսկվայում ռուսերեն լույս տեսած «Քիմիան մատչելի է» („Химия-просто“) գրքի 6-րդ էջում գրում է, որ քիմիայի համար մաթեմատիկական պարզապես գերազանց գործիք է, որի օգնությամբ հնարավոր է ստեղծել ինչ-որ նոր բան, փոխել կենցաղը, տեխնոլոգիաները, կյանքը:

գ) Կ. Գրիգորյանի, Ա. Եսայանի, Հ. Ժամհարյանի, Ա. Խոյեցյանի, Հ. Մովսեսյանի, Գ. Փիրումյանի՝ 2009 թվականին Երևանում լույս տեսած «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմնահարցեր» ուսումնական ձեռնարկի 134-րդ էջում գրված է. «Շրջակա միջավայրի մոնիթորինգի կենտրոնի տվյալների

համաձայն՝ վտանգավոր ածխաջրածինների, ազոտի երկօքսիդի և այլ նյութերի պարունակությունը Երևանի, Հրազդանի և մյուս քաղաքների օդային ավազաններում գերազանցում է թույլատրված սահմանները»: Նույն գրքի 133-134-րդ էջերում գրված է, որ Ալավերդու մետալուրգիական կոմբինատը յուրաքանչյուր տարի մթնոլորտ է արտանետում 15.5 հազ. տոննա փոշի և ծծմբի երկօքսիդ:

դ) Համլետ Միքայելյանը 2019 թվականին Երևանում լույս տեսած իր «Մաթեմատիկական կրթության լեզուն և խոսքը» վերնագրով գրքի 36-րդ էջում գրում է. «Ինչպես և յուրաքանչյուր լեզու, մաթեմատիկական ունի իր այբուբենը: Այն կազմվում է բնական լեզվի այբուբենից, որոշ հատուկ նշաններից, որոնց մեջ մտնում են լատինական այբուբենի տառերը, կետադրական նշանները, փակագծերը և այլն»:

12. Ներկայացրե՛ք, թե ինչ կառուցվածք ունեն՝

ա) ռեֆերատը,

բ) կուրսային աշխատանքը,

գ) գիտական հոդվածը:

5.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ԿԱՐՉԱԿԱՆ) ՈՃ

Պաշտոնական ոճն ունի շրջանառման բազմազան ոլորտներ՝ պետաիրավական համակարգ, օրենսդրական գործունեություն, դիվանագիտական հարաբերություններ, տնտեսավարում, գործարարություն, բանկային գործ են: Այս ոճով են շարադրվում նշված ոլորտներում գործառնող գրագրության բոլոր ձևերը՝ սկսած պետական օրենսդրական ակտերից մինչև գործնական նամակներ, հաշվապահական տեղեկագրեր և այլ տիպի փաստաթղթեր: Ոլորտների այսպիսի տարատեսակությունը ենթադրում է գրագրության տարաբնույթ ձևերի գործածություն և խոսքի բազմազանություն: Նշված գործոնները պաշտոնական ոճի համակարգում ձևավորում են ենթահամակարգեր՝ խոսքի ենթատեսակներ կամ ենթառճեր՝ **իրավաբանական, դիվանագիտական, գրասենյակային, հաշվապահական** են:

Պաշտոնական-գործարարական լեզուն իր հիմքով գիտական բնույթ ունի (սահմանադրություն, տարբեր օրենքներ, որոշումներ, համաձայնագրեր, ակտեր են) և այդ առումով սերտ կապեր է դրսևորում գիտական լեզվի հետ: Մա-

կայն, ի տարբերություն գիտական լեզվի, այն մշտապես առնչվում է առօրյա կյանքին, քանի որ պաշտոնական տեղեկատվությունը վերաբերում է հասարակության բոլոր անդամներին, և տեղեկության իմացությունը պարտադիր է յուրաքանչյուրի համար:

Պաշտոնական (վարչական) ոճին բնորոշ են հետևյալ հիմնական հատկանիշները.

- վարչաբանությունների և կադապարային արտահայտությունների հաճախակի գործածությունը,
- խոսակցական երանգ ունեցող ձևերից խուսափելը և գրքային ձևերին նախապատվություն տալը,
- ոչ կանոնական լեզվական միավորների գրեթե բացառումը,
- խոսքի ընդունված և կանոնակարգված շարադասությունը,
- դերբայական դարձվածների հաճախակի գործածությունը,
- գրաբարյան և աշխարհաբարյան նախդրավոր կապակցությունների գործածությունը՝ **ի գիտություն, ըստ պատկանելվույն, ընդ որում, ցպահանջ, առ այն** ևն,
- որոշ կարգի հարադրական բայերի գործածությունը՝ **ի կատար ածել, բերման ենթարկել, մասնակցություն ունենալ** և այլն,
- խոսողի անձնական վերաբերմունքն արտահայտող լեզվական միավորների, արտահայտչական ու պատկերավորման միջոցների գրեթե բացակայությունը,
- գուսպ ու միօրինակ խոսքը,
- բառերի միանշանակ և առավելապես ուղիղ իմաստով գործածությունը:

Պաշտոնական գրագրությունների լեզվական նյութը գրական լեզուն է՝ իր բառապաշարով ու քերականությամբ: Խստորեն **կանոնակարգված է**. ստեղծվում են պատրաստի լեզվական կառույցներ, կրկնվող բառաձևեր, որոնք կողմերը պայմանականորեն ընդունում են որպես նյութի շարադրման մշակված բանաձևեր՝ կադապարներ, ինչպես՝ **ուժը կորցրած ճանաչել, ի գիտություն ընդունել, հայցը բավարարել մասնակիորեն, արգելանքի տակ պահել** ևն: Լեզվական այսօրինակ կադապարների կրկնությունը գրագրության լեզվին

հաղորդում է որոշ **միօրինակություն**: Խոսքը դառնում է կադապարված, որոշ չափով արհեստական:

Պաշտոնական խոսքն ունի առավելապես հաղորդակցական կազմակերպական նպատակ: Դրանով պայմանավորված՝ շարադրանքի անհրաժեշտ որակներ են սահմանվում **տեղեկությունի ամբողջական և ավարտուն բնույթը, հակիրճությունը, սեղմությունը**: Փաստաթուղթը կազմողի հիմնական խնդիրն է առավելագույնս **սեղմ** և **հստակ** արտահայտել իրավական ուժ ունեցող տեղեկությունները:

Պաշտոնական խոսքն ուղղվում է հանրությանը կամ որոշակի մասնագիտական լսարանի (անձի կամ կազմակերպության): Հետևաբար շարադրվում է հնարավորինս **մատչելի, հասկանալի լեզվով, դիպուկ և պարզ**: Պարզ, բայց ոչ պարզունակ: Քանի որ հակառակ դեպքում շարադրանքը կգրկվի պաշտոնական խոսքին հատուկ մյուս կարևոր հատկանիշներից՝ **պաշտոնականություն, հանդիսավորություն, որոշ վերամբարձություն** ևն, որոնք կոչված են լսարանի վրա որոշակի ազդեցություն ապահովելու:

Պաշտոնական խոսքը, լինի դա վճիռ, ծավալուն հաշվետվություն թե սեղմ հրահանգ, հաշվապահական վավերաթուղթ թե հավատարմագիր, **պետք է ձևակերպված լինի ճշգրիտ**: Դա վերաբերում է տեքստի թե՛ բովանդակային մասին, թե՛ լեզվին: Ասելիքը պետք է լինի հստակ, որ այլ կարծիքների կամ տարբերությունների տեղիք չտա: Այդ իմաստով պաշտոնական ոճը մոտ է գիտականին:

Պաշտոնական խոսքում հուզական սուբյեկտիվ (կամային) վերաբերմունքը գրեթե բացառվում է. անհատի տրամադրությունը, հույզը այստեղ դեր չունեն: Նյութի շարադրանքը պետք է լինի խիստ առարկայական (օբյեկտիվ), պետք է ունենա տեղեկատվական և գուտ գործնական բնույթ: Երբեմն փաստաթղթերի առանձին տեսակներում կարող է արտահայտվել խնդրանք կամ շնորհակալություն, պահանջ, հորդոր կամ հրաման:

Պաշտոնական խոսքում **բառի ճիշտ ընտրությունը և տեղին գործածությունը** խոսքի կառուցման կարևորագույն պայմաններն են: Բառն այստեղ գործածվում է **ուղղակի** նշանակությամբ: Բազմիմաստ բառերը խոսքաշարում պետք է կիրառվեն և ընկալվեն իրենց մեկ՝ հիմնականում առաջնային նշանակությամբ: Դա ապահովում է փաստաթղթի գործնական, ինչպես նաև իրավական արժեքը:

Պաշտոնական ոճի կարևոր հատկանիշն է **տերմինների** լայն գործածությունը. տերմինները էական դեր են կատարում այս ոճին բնորոշ ճշգրտությունն ու միօրինակությունն ապահովելու գործում:

Բառի **փոխաբերական** իմաստով գործածությունը **հատուկ** չէ պաշտոնական լեզվին. դա կարող է վնասել տեղեկույթի հստակությանը, խանգարել ճիշտ ընկալմանը: Այսուհանդերձ, մտքի տպավորիչ ձևակերպման համար փաստաթղթերի առանձին տեսակներում գործածվում են **լեզվական փոխաբերություններ**, որոնք հանուրին հասկանալի և ըստ էության իրենց փոխաբերականությունը կորցրած կայուն կապակցություններ են և գործածվում են առավելապես անվանողական՝ գուտ տերմինային նշանակությամբ. օր.՝ **արտաքին հարաբերություններ**, **բանկային օր**, **սառը պատերազմ**, **սպառողական զամբյուղ**, **դիվանագիտական խողովակներ**, **դրամավարկային քաղաքականության գործիքներ**, **ֆինանսական հոսք**, **վարկերի ծանր բեռ** ևն:

Պաշտոնական գրագրության բառապաշարը բնութագրվում է **բարդ բառերի** հաճախակի գործածությամբ: Առավել գործածական են համադրական բարդություններն ու բայական հարադրությունները՝ **արտոնագիր**, **կանոնադրային**, **ներկայացուցչություն**, **անվավեր համարել**, **հանդես բերել**, **հետ կանչել** ևն:

Հասպավական բարդությունները հնարավորություն են տալիս խուսափելու կրկնություններից և տնտեսելու ինչպես ժամանակը, այնպես էլ տեղը: Գրագրության ձևերի մեծ մասում չի բացառվում **հնաբանությունների** գործածությունը՝ խոսքին հանդիսավորություն և պաշտոնականություն հաղորդելու համար, ինչպես՝ «**Ի լրումն** հրամանագրի հինգերորդ կետի...», «Մինչև **սույն** պայմանագիրը կնքելը...», «...այսուհետև՝ «Գնորդ»՝ **ի դեմս** Ս. Հակոբյանի», «Թղթակցությունները կհամարվեն **վավեր** (=ստույգ, վավերական)... »:

Պաշտոնական ոճին նկատելի թարմություն են հաղորդում իմաստային նորաբանությունները՝ ֆինանսական **հոսք**, բյուջեի **ճեղքվածք**, **դոնոր** երկրներ, **թիրախային** մարտավարություն ևն:

Պաշտոնական գրագրության ձևաբանական նյութը գրական լեզվի կանոնական ձևերն են՝ հոլովման, խոնարհման, հոգնակիակազմության, հոդառության կանոնարկված տարբերակները:

Փաստաթղթերի առանձին տեսակներ ունեն իրենց **հատուկ ժամանակաձևերը**: Հրահանգներում գործածական է **անկատար ներկան**, քանի որ ցույց է տալիս ընթացքի մեջ եղող և հաստատապես կատարվող գործողություն, ունի

կտրական բնույթ, սահմանում է նորմեր, ինչպես՝ «Վարման կարգը **սահմանվում է** հատուկ հրահանգով»: Հաշվետվություններում գերիշխում են **վաղակատարով** կազմությունները, որոնք ցույց են տալիս անցյալ անորոշ մի ժամանակում կամ ժամանակակետից առաջ ավարտված գործողություն: Որոշումներում և հրամաններում իշխող կառույցներ են **անորոշ դերբայով** կազմությունները, քանի որ արտահայտում են մեղմ հրաման, առավել պաշտոնական են հնչում, քան բուն հրամայականով ձևերը, ինչպես՝ «...«Խորհուրդը որոշում է. 1. Հաստատել...: 2. Հանձնարարել...: 3. Պատասխանատվությունը դնել...»:

Կապային կառույցների գուգաձևերից գրքային բնույթ ունեցողները, հասկանալի է, բնորոշ են պաշտոնական լեզվին՝ դրա հետ մեկտեղ **«դրանով հանդերձ, իբրև պատասխան» ի պատասխան**, հովանավորության տակ **«հովանավորության ներքո, պաշտոնի բերումով» ի պաշտոնե** են:

Պաշտոնական խոսքում գործածական են **գողվածով** (շաղկապով կամ հարաբերական բառով) կապակցությունները՝ «...այնքան, որքան...», «եթե..., ապա...», «քանի որ..., ուստի...», «...այն..., ինչ...» են. գերակշռում են **բարդ ստորադասական նախադասությունները**՝ հատկապես պատճառի, հետևանքի, հիմունքի և նպատակի պարագա երկրորդականներով:

Գործնական գրագրություններում հաճախ հանդիպող շարահյուսական կառույցներ են թվարկման հնչերանգով իրար հետ կապված և պարբերությամբ արտահայտվող **անդեմ նախադասությունները**, որոնք գրագրության առանձին ձևերում (օր.՝ որոշումներում, հրամանագրերում) երբեմն հասնում են մի քանի տասնյակի: Բայական անդեմ նախադասությունները խոսքը դարձնում են միօրինակ, բայց ստեղծում են ուրիշ: **Լրիվ նախադասությունների** գործածությունը պաշտոնական գրագրության մեջ պարտադիր պայման է: Ճիշտ է, թերի նախադասությունները հնարավորություն են տալիս խուսափելու երկարաբանություններից (մանավանդ երկխոսություններում), սակայն պաշտոնական փաստաթղթերում կրկնվող նախադասության մեջ այս կամ այն բառի բացակայությունը կարող է այլընթերցումների առիթ տալ:

Պաշտոնական գրագրության մեջ մտքի դատողական գործունեությունը դրսևորվում է **պատմողական նախադասություններով**: Պաշտոնական տեքստը չի հանդուրժում **բացականչական նախադասություններ**: **Հարցական կառույցները**, հատկապես անուղղակի հարցում արտահայտողները, փոքր-ինչ գործուն են նամակի մեջ: **Հրամայական նախադասության** հնչերանգից է

կախված այն հանգամանքը, թե հրամանը կտրական պահա՞նջ է արտահայտում, ցանկություն՞ն, թե՞ խնդրանք: Գործնական գրագրության մեջ սովորաբար հրամայականի ձևերը (դրական և արգելական) փոխարինվում են մեղմ հրաման արտահայտող այլ քերականական ձևերով՝ անորոշ դերբայով կամ անորոշ դերբայ ունեցող կազմություններով՝ **տեղյակ պահել, ընթացք տալ, ստուգել, կազմակերպել, ուժը կորցրած ճանաչել** ևն:

Խոսքի պաշտոնականությունն ընդգծում են նաև **կրավորական կառույցները**, որոնք խիստ տարածված են փաստաթղթերի լեզվում, ինչպես «Մենք քննարկել ենք առաջարկը»/«Առաջարկը քննարկվել է մեր կողմից»: **Դերբայական դարձված(ներ)ով** նախադասությունները խոսքին տալիս են որոշ միօրինակություն, բայց հարմար միջոց են զուգահեռ կատարվող գործողություններ մատնանշելու համար: Պաշտոնական ոճում դերբայական դարձվածների կուտակումը անխուսափելի է:

Կան **շարահյուսական հատուկ կառույցներ**, որոնք հաճախակի գործածություն ունեն պաշտոնական գրագրության լեզվում: Այդպիսիք են, օրինակ, անորոշ դերբայի գործիական հոլովով դերբայական կապակցությունները (**նշելով, որ...**, **ուշադրության առնելով, որ...**, **համոզված լինելով, որ...**, **գիտակցելով, որ...**, **հաստատելով, որ...**), կամ միակազմ գլխավոր նախադասությամբ բարդ ստորադասական նախադասությունները («Շարկ է նշել, որ...», «Պետք է ավելացնել, որ...», «Անհրաժեշտ է, որ...») ևն:

Պաշտոնական կամ գործնական գրագրության մեջ պահպանվում է նախադասությունը բաղադրող անդամների ընդունված դասավորությունը՝ **շարահասությունը**. շարահասության դերը մեծանում է, քանի որ այստեղ՝ գրավոր խոսքում, պակասում է այնպիսի կարևոր լեզվական միջոց, ինչպիսին հնչերանգն է: Բացի դրանից՝ գրողը գրկված է վերաբերմունքային բառեր ընտրելու հնարավորությունից:

Պաշտոնական ոճն ունի շրջանառման բազմազան ոլորտներ՝ դիվանագիտական հարաբերություններ, տնտեսավարում, գործարարություն, պետաիրավական համակարգ, օրենսդրական գործունեություն, բանկային գործ ևն: Ոլորտների այս տարատեսակությունը ենթադրում է գրագրության տարաբնույթ ձևերի գործածություն և խոսքի բազմազանություն: Նշված գործոնները պաշտոնական ոճի համակարգում ձևավորում են ենթահամակարգեր՝ խոս-

քի ենթատեսակներ կամ ենթառճեր՝ **իրավաբանական, դիվանագիտական, գրասենյակային, հաշվապահական** են:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Ատանձնացրե՛ք պաշտոնական ոճին բնորոշ հատկանիշները:

Կադապարայնություն, բազմազանություն, երկխոսական բնույթ, բարդ բառերի և հապավումների կիրառություն, ճշգրտություն, պատկերավորություն, սեղմություն, քերականական հնաբանությունների գործածություն, գեղչումներ, կրավորական կառույցների գործածում, միօրինակություն, հուզականություն, բառի փոխաբերական իմաստով գործածություն, կրկնություններ:

2. Որո՞նք են պաշտոնական ոճի ենթառճերը:

3. Ո՞ր ենթառճերով են բերված հատվածները: Ընդգծե՛ք պաշտոնական ոճին բնորոշ կայուն բառակապակցությունները:

ա) Մովորաբար միջնորդական առաքելություն ստանձնող երկիրը կամ երկրները հանդես են գալիս կամավորության սկզբունքով: Նրանք քաջ գիտակցում են, որ իրենց միջնորդությունը գործելու է այն իրավիճակում, երբ հակամարտող կողմերի միջև առկա է բռնություն կիրառելու իրական սպառնալիք, երբ կողմերի միջև ուղղակի շփումներն անհնար են, երբ կողմերից մեկը բռնություն է կիրառում, և երրորդ կողմին ձեռնադրելու է դառնում բարենպաստ հարաբերությունների զարգացումը կողմերի միջև:

Ինչպես հայտնի է, Արցախի հարցի կարգավորման նպատակով հակամարտող կողմերին օգնելու առաջարկությամբ որպես միջնորդներ հանդես եկան մի շարք երկրներ՝ Իտալիան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, իսկ ավելի ուշ՝ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի համանախագահությամբ:

բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը չի համապատասխանում սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի

պահանջներին, ապա այն դատարանի կողմից չի քննվում, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ բողոքի հիմնավորվածությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերոնշյալ իրավանորմերը ենթարկել լեզվաբանական մեկնաբանման՝ հայցը ապահովելու և հայցադիմումը վերադարձնելու իրավակարգավորումների համակարգային վերլուծության միջոցով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ «միջնորդություն» է համարվում այնպիսի դատավարական փաստաթուղթը, որը պարունակում է հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին:

գ) ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի
նիստի 30.09.2011 № 2

Նախագահ՝ Վ. Մ.

Քարտուղար՝ Ն. Ս.

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ.

1. ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրության հարցը:

2. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Սահակյանը, Կ. Առաքելյանը, Վ. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ. մ. գ. դ., պրոֆ. Ա. Ա. -ին ընտրել ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

2. ԼՍԵՑԻՆ. Դեկանի տեղակալ Վ. Գ. -ին - Ամփոփելով լուծարքների արդյունքները՝ Վ. Գ. -ն նշեց, որ անբավարար ստացած ուսանողների քանակը բավականաչափ մեծ է համալսարանի այլ ֆակուլտետների հետ համեմատած:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել կուրսղեկներին՝ կիսամյակի ընթացքում առավել ինտենսիվ աշխատել ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ:

Նախագահ՝ Վ. Մ.

Քարտուղար՝ Ն. Ս.

4. Ըստ նախորդ վարժության տեքստերի՝ բնութագրե՛ք պաշտոնական ոճին բնորոշ ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

5. Տրված շարքերից ընտրելով մեկական բառ՝ կազմե՛ք պաշտոնական ոճին բնորոշ բառակապակցություններ:

- Դրամավարկային, ցմահ, ֆինանսական, վարչական, սպառողական, վերաբննիչ, բաժնետիրական, իրավական, աշխատանքային, քրեական, անցանկալի, ծանրացնող, դիվանագիտական, կառուցվածքային, պատգամավորական:

- Անձեռնմխելիություն, խողովակ, ազատագրելում, տույժ, զամբյուղ, ընկերություն, դաշտ, ստորաբաժանում, հոսք, անձ, պատասխանատվություն, դատարան, հանգամանք, քաղաքականություն, շուկա:

6. Տրված գեղարվեստական տեքստում գտե՛ք պաշտոնական ոճին բնորոշ տարրերը, բացատրե՛ք, թե ինչ միջոցներով է արտահայտվել երգիծանքը:

Միլիցիան դուրս եկավ կենտրոնից, գնաց, փնտրեց ու գտավ Գետամեջ գյուղը: Գետամեջ գյուղում հետախուզությամբ գտավ Ռևազ Մովսիսյանի տունը, գոմը, գոմի դուռը: Ռևազի (կարծեցյալ կորստատեր Ռևազ Մովսիսյանը կտրականապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում, թե իրենք երբևէ ունեցել են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությամբ պարզվեց, որ երկու օր առաջ (ա/թ. օգոստոսի 27-ին, երեկոյան ժամը հինգի մոտերքը, ոչ շուտ չորսն անց երեսունից, ոչ ուշ հինգն անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռևազ Մովսիսյանի չորս ոչխարները, երկուսը՝ չորս տարեկան, մեկը՝ երեք, մեկը՝ երկու. երկուսը՝ սպիտակ, երկուսը՝ սև, տեղական տեսակին պատկանող. մեկը՝ մեկ տարեկանը՝ խրտոտ, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ, հաշվի առնելով կորստատիրուհի Թագուհի հորենական ազգանվամբ Կարապետյանի կարծիքը, վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից) (ՀՄ):

7. Պաշտոնական գրությունների ի՞նչ ձևեր գիտեք. թվե՛ք մի քանիսը: Գրե՛ք՝

ա) դիմում,

բ) երաշխավորագիր,

գ) տեղեկանք:

5.3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ

Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման միջոց է, որով էլ պայմանավորված են նրա ոճական առանձնահատկությունները: Հակադրվում է պաշտոնական, գրքային խոսքին իր անմիջականությամբ և ոչ պաշտոնական բնույթով: Ձևավորվում է խոսելու պահին. ունի կիրառության լայն ոլորտ: Խոսակցական ոճին հատուկ են հանպատրաստից ձևավորումը, լեզվական միջոցների խնայողությունը, պատկերավորությունը, սեղմությունն ու հակիրճությունը. **ինքնարուխ է, արագ է փոփոխվում**: Հաճախակի են բառային կրկնությունները: Շարահյուսական կառույցները պարզ են: Խոսքն **ամբողջական չէ**. հաճախ մնում է **անավարտ**⁴³:

Առօրյա-խոսակցական ոճին բնորոշ հատկանիշներ են.

- թեմատիկ բազմազանությունը և ոճական տարասեռությունը,
- խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցների գործածությունը,
- խոսքի հուզականությունն ու անմիջականությունը,
- ոչ կանոնական լեզվական միավորների, այդ թվում՝ խոսակցական ու բարբառային
- բառերի ու բառաձևերի գործածությունը,
- երկխոսությունների առատությունը,
- շարադասության խախտումների, զեղչումների առատությունը,
- շարահյուսական պարզ կառույցների հաճախակիությունը,
- կենցաղային բառերի ու արտահայտությունների առատությունը,
- գրքային երանգ ունեցող լեզվական միավորների գրեթե բացակայությունը:

Բանավոր հաղորդակցման ժամանակ կարևոր դեր է խաղում **հնչերանգը**, որը հիմնականում արտահայտվում է տրամաբանական շեշտի միջոցով: Հուզականությունը, զգացմունքների բազմազանությունը հաճախ դրսևորվում են միայն հնչերանգով:

⁴³ St' u «Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка», Саратов, 1992, ст. 312:

Խոսակցական լեզվում հաղորդակցական մեծ դեր ունեն **շարժումները** (ժեստերը), որոնք կենդանի խոսքում ընդգծում են այս կամ այն իմաստը՝ ուշադրությունը հրավիրելով դրա վրա, կամ ուժեղացնում են խոսքի զգացական կողմը, լրացնում և ամբողջացնում ասվածի իմաստը:

Անկաշկանդ խոսքի արագ տեմպում որոշ հնչյուններ կարող են իրենց որակը փոխել, թուլանալ կամ բոլորովին սղվել, որոշ հնչյուններ (նույնիսկ վանկեր)՝ չարտասանվել: Խոսակցական ոճում ձայնավորները մի շարք դեպքերում կորցնում են իրենց հնչյունական հատկանիշները՝ ենթարկվելով զանազան փոփոխությունների, ինչպես՝ **իմիջիայլոց - իմիջայլոց, դաստիարակել - դաստ[ի]րակել, ձայն - ձ[ե]ն, աշխույժ - աշխուժ, խորհ[ը]րդակցել - խորդակցել, ձեռ[ը]նպահ - ձեռն[ը]պահ, պարսովել - պարտ[ը]վել**, փոխառյալ բառերում ռուսերենի նմանողությամբ՝ **պենիցիլին - պ[ի]նիցիլին, ինտելիգենտ - ինտ[ի]լիգենտ, տրանսպորտ - տրանսպ[ը]րտ, Մոսկվա - Մ[ա]սկվա** և այլն:

Խոսակցական լեզվին բնորոշ է **հ-ի** անկումը՝ **խորուրդ, հայոյել, օրնել, հաշվապա**: Մի շարք դեպքերում կարող են չհնչել **բ-ն** (եկրորդ, գրի՝ (գրի՝ բ-ի փոխարեն)) և **ն-ն** (**առաջի, վերջի, ընդհակառակ**): Բ-ի փոխարեն երբեմն արտասանվում է **ռ**՝ **Գե[ռ]մանիա, վե[ռ]նագիր, ե[ռ]եսուն**: Տարածված է բառի մեջ նոր, ավելորդ հնչյունի կամ հնչյունակապակցության հավելումը, որից բառիմաստը չի փոխվում՝ **կանա[ն]չ, ավել[ն]որդ, ութ[անա]սուն, ֆիդայի[ն], բարձ[ը]ունք, սան[ը]ր**:

Հաճախ կրճատվում են բառերը, հատկապես հատուկ անունները: Օր.՝ **հաջողություն-հաջող, Հովհաննես-Հովիկ / Հովո, Անահիտ - Անո / Անիկ, Խաչատուր - Խաչիկ / Խաչո / Խչո, Սարգիս / Սարք** ևն:

Առօրյա խոսքի արտասանական նորմերը, ի տարբերություն գրական լեզվի նորմերի, ավելի հաճախ են փոփոխվում և գրական լեզվում ընդունելի չեն:

Խոսակցական բառապաշարն աչքի է ընկնում բարբառային տարբերակների, օտարաբանությունների, դիպվածային բառերի, դարձվածքների առատությամբ: Դրանք հիմնականում ունեն հոմանշային տարբերակներ գրական լեզվում, օր.՝ **վռազ (շտապ), գոռով (բոնի), հանաք (կատակ), հալ (վիճակ), վախտ (ժամանակ)** և այլն:

Գործածական են հարադրավոր բայերը՝ **աչքով անել, դաս առնել, մեջ ընկնել, խելքի բերել**, կրկնավորները՝ **կես-կես, ինչ-ինչ, քիչ-միչ, մանր-մունր**,

գուգադրական բայերը՝ **եփել-թափել, չափել-ձնել, տանել-բերել, ծել-ծաղկել,** պատճառական հարադիր բայերը՝ **ավլել տալ, երգել տալ, բերել տալ:**

Խոսակցական ոճի բառապաշարում հաճախակի գործածություն ունեն **դարձվածքները՝ բերանը ջուր առնել, դանակը ոսկորին հասնել, բարբառային բառերը՝ կուչ գալ, դարուփոս, ջան, ժարգոնային բառերը՝ լրվել - մնալ, խփնվել - իրեն կորցնել, ֆազերը գցել - խիստ բարկանալ, հոգնած - ձեռքից գնացած, ոչ պիտանի, հասարակաբանությունները՝ զահլա, ախամախ, թիթի-գույթուն, օտարաբանությունները՝ զիբիլ, խաբար, արադ, դաստա, ռուչկա, պրոցես, կորպուս** են: Երբեմն աղավաղվում է օտար բառի արտաքին տեսքը՝ հնչյունական կազմը՝ **պեչենի, ցելաֆոն, մառոժնի, կուխնի:** Կենցաղային առարկաների հայերեն անվանումների փոխարեն հաճախ գործածվում են դրանց օտարալեզու տարբերակները՝ **զանավեսկա** (վարագույր), **վեդրո** (դուլ), **դուշ** (ցնցուղ), **մեբել** (կահույք): Վերջին շրջանում ակտիվացել է անգլերենից անցած բառերի գործածությունը՝ **օբեյ** (լավ), **բայ** (ցուեսություն), **օֆիս** (գրասենյակ), **շեյփինգ** (մարզանք):

Նորաբանությունները դժվարությամբ են մուտք գործում խոսակցական լեզունախապաստվությունը տրվում է օտարաբանություններին՝ **դեֆեկտ** (=արատ), **ռեկլամ** (գովազդ), **սայթ** (կայքէջ): Խոսելու պահին հաճախ ծնվում են դիպվածային բառեր՝ **սովորելացավ, տոկոսախնդ, սրճամուլ, կյանքակեր:**

Երբեմն հաղորդակցման ժամանակ գործածվում են ավելորդաբանություններ, որոնք ծանրաբեռնում են խոսքը, օր.՝ **նորից հետ վերադառնալ, վերև բարձրանալ, կրկին անգամ, քո ասածներդ, բազմիցս անգամ, հետ նահանջել** են:

Բանավոր խոսքում շատ են կիրառվում նաև բառեր և արտահայտություններ, որոնք գործածվում են ժամանակ շահելու, խոսքի ընթացքում առաջացած դադարը լցնելու նպատակով՝ **դե, բան, այ քեզ բան, ուրեմն, հետո, դե ինչ ասեմ, խոսքի, օրինակի համար, ասենք թե** են:

Խոսակցական լեզուն համանշային տարբերակներից «նախընտրում է» խոսակցական քերականական ձևերն ու կազմությունները: Լեզվի միօրինակացման միտումը դրսևորվում է առաջին հերթին խոսակցական լեզվում: Ձևաբանական տարբերակներ առաջանում են հենց այդ միտումի ազդեցությամբ. լեզվում գործող անկանոն շատ ձևեր կամ կաղապարներ դուրս են մղվում:

Հաճախ են կիրառվում ցուցական ու հարցական դերանունները, վերաբերականներն ու ձայնարկությունները: Մտացականությունն արտահայտելու համար **իմ, քո** սեռական հոլովածների հետ շատ դեպքերում գործածվում են նույն իմաստն արտահայտող **ս, դ** հոդերը՝ **իմ ընկերս, քո երգդ**:

Հաճախակի են նաև ածականի և թվականի փոխանվանական կիրառությունները, օր.՝ «**Հինգը** գնացին, **չորսը** մնացին», «**Մեկից** վատն ես, **տասից՝ լավը**», «**Մեծերին** լսել է պետք»: Բնորոշ է ածականի գերադրական աստիճանի՝ **ամենա-** և **-գույն** մասնիկների համատեղ գործածությունը՝ **ամենալավագույն, ամենահնագույն**:

Գոյականի ի հոլովումը, շատ դեպքերում զուգահեռաբար գործածվելով մյուս հոլովումների փոխարեն, աստիճանաբար լայն տարածում է ստանում՝ **ծագման - ծագումի, սկեսրոջ - սկեսուրի, անկյան - անկյունի**: Հաճախ են գործածվում հոլովական ձևերի անհնչյունափոխ տարբերակներ՝ **բջիջի, հովիտի, թռչունի, պտուղի, նարինջի**: **Տատ, պապ, տղա, երեխա, ոչ ոք** բառերը սովորաբար **-ու** հոլովմամբ են հոլովվում՝ **տատու, պապու, տղու, երեխու, ոչ ոքու**: Գործիական հոլովում **-բ**-ի փոխարեն հիմնականում կիրառվում է **-ով** վերջավորությունը՝ **լայնությամբ - լայնությունով, ուսմամբ - ուսումով, հարթությամբ - հարթությունով, առաջացմամբ - առաջացումով** ևն:

Տարածված են նաև հին հայերենից պահպանված **-ք** հոգնակերտի կիրառություններ՝ **քաղաքացիք, տղեք, երեխեք, աղջկեք**: Խոսակցականին հատուկ են հավաքական **-ենք** մասնիկով ձևերը (**Լուսիկենք, Հակոբենք, մամայենք**), **-ք** մասնիկի անկումով կազմված **-ներ**-ով հոգնակիները (**ոտներ, ձեռներ**): Գրական տարբերակներին զուգահեռ՝ խոսակցականում կիրառվում են նաև հոգնակի թվի հետևյալ ձևերը՝ **թմեր, աշխատավարձներ, հորաքույրներ**: Գործածական են նաև ստացական հոգնակի ձևերը՝ **աչքներս, ձեռքներս, ասելներս, գնալներդ**:

Բայական զուգաձևերից տարածված են կա՛մ խոսակցական կազմությունները (**ասեցի/ասի, բերի, սվի, դրի, թողի** ևն), կա՛մ պարզապես բարբառներից խոսակցականին անցած սխալ կազմությունները (**փախնել, թոնել, հելնել, վազացնել, ուտացնել, խոսալ, էթալ, գրի (գրեցի** իմաստով) ևն): Ամենից հաճախ գործածվում է բայի ներկա ժամանակը, երբեմն՝ այլ ժամանակների նշանակությամբ, օր.՝ «Եկող տարի **վերադառնում եմ**» (ապառնիի իմաստով), «**Գնում եմ** տուն. ի՛նչ տեսնեմ...» անցյալ ժամանակի իմաստով): Եզակի երրորդ դեմքում է օժանդակ բայի փոխարեն սովորական է **ա**-ի գործածությունը

(**ասում ա, գրում ա**): Ջուգաձների առատությամբ աչքի են ընկնում հրամայականի ձևերը՝ **գրի՛ր-գրի՛, խոսի՛ր-խոսա՛, բարձրացի՛ր-բարձրացի՛, հագցրո՛ւ-հագցրա՛** են:

Առօրյա-խոսակցական լեզվում գերակշռում են շարահյուսական պարզ միավորները, հատկապես՝ թերի և միակզմ նախադասությունները, օր.՝ «**Բացատրեց. հասկացա**», «**Ցրտեց**», «**Լուսացավ**»: Դրանք խոսքը դարձնում են ավելի սեղմ և դիպուկ:

Բաղադրյալ ստորոգյալի **չէ** հանգույցի փոխարեն գործածվում է **չի**-ն՝ «**տանը չի**», «**պետք չի**», «**քնած չի**»: Հաճախակի գործածություն ունեն եղանակավորող բառերով, ձայնարկություններով արտահայտված **բառ-նախադասությունները**՝ «**Հա՛**»: «**Չէ՛**»: «**Ո՛չ**»: «**Գուցե**»: «**Իհարկե**»:

Նախադասության անդամների շարադասության ընդունված կարգը հաճախ չի պահպանվում, և խոսողի համար առավել կարևոր բառը դրվում է նախադասության սկզբում՝ անկախ նախադասության մեջ նրա ունեցած պաշտոնից: Խոսքի սահուն ընթացքը հաճախ ընդմիջվում է միջանկյալ նախադասություններով, օր.՝ «Վաղը, ես ուրախ եմ, պիտի գնաս գյուղ՝ ձերոնց մոտ», «Մենք մեկնում ենք, էդ մասին քեզ էլի եմ ասել, հոկտեմբերին Միացյալ Նահանգներ»:

Բնորոշ են անշաղկապ նախադասությունները, որոնցում մեծ դեր է կատարում հնչերանգը՝ «(Եթե) **Գաս՝ կգնանք**»: «**Ասեց՝ (որ) բերելու է**»:

Նկատելի են ենթակայի և ստորոգյալի համաձայնության որոշ շեղումներ՝ «**Քո ասածները ինձ ոգևորեց**», «**Մեծ ջանքեր պահանջվեց**», «**Նրա կեցվածքն ու պահվածքը անլուրջ թվաց**»: Երբեմն ենթական և ստորոգյալը համաձայնում են ոչ թե քերականորեն, այլ ենթակայի արտահայտած իմաստով (բակառություն)՝ «**Մի մասը հետ գնացին**», «**Ժողովուրդը հրապարակում հավաքվեցին**»:

Խնդրառության առանձին դեպքերում զգալի է օտար լեզուների անմիջական ազդեցությունը՝ **ծանոթանալ տեսարժան վայրերի հետ, նվազել դաշնամուրի վրա**: Որոշ կապերի հետ անձնական դերանունների տրական հոլովի (ինձ, մեզ, քեզ, ձեզ) փոխարեն խոսակցականում համատարած գործածություն ունեն սեռական հոլովաձևերը՝ **իմ մոտ, քո համար, մեր հետ, ձեր նման** են: Ներգոյական հոլովաձևերին որոշ դեպքերում փոխարինում են **սեռական հոլով+վրա** կառույցները՝ **հրապարակի վրա, խաչմերուկի վրա, փողոցի վրա, անկյունի վրա**:

Շարահյուսական բնորոշ հատկանիշներից մեկը *խոնարհված բայ + քղձական եղանակի* բայաձև (անորոշ դերբայի փոխարեն) կառույցների հաճախակի կիրառությունն է՝ **ուզում եմ ասեմ, վախենում եմ հանդիպեմ**:

Խոսակցական ոճն ունի ընդգծված **հուզարտահայտչական երանգ**. դրանով խոսողն ուզում է ներագդել խոսակցի վրա: Ունի որոշակի պատկերավորման համակարգ: Լայն կիրառություն ունեն՝ **փոխաբերությունը** («Ի՞նչ ես դատարկ-դատարկ խոսում»), **համեմատությունը** (շան պես չարչարվել, ամպի չափ սիրել), մակդիրը (**անհամ** խոսք, **չուսվող** մարդ), **փոխանունությունը** («Թումանյան շատ եմ սիրում»), **չափազանցությունը** («Գիշեր-ցերեկ աշխատում էր, քիթ սրբելու ժամանակ չուներ») նն:

Խոսակցական լեզուն լի է թերի, անավարտ, լիովին չձևավորված, երբեմն նույնիսկ մի նախադասությունը մյուսի մեջ թափանցած կառույցներով: Խոսողը հաճախ ինքն է «ընդհատում» իրեն, լրացնում ասելիքը զանազան պարզաբանող բառերով, ավելադրություններով, և այս բոլորի հետևանքով նախադասությունների սահմանները հաճախ դառնում են անհստակ, անորոշ: Ձեռչունների մեծ քանակը պայմանավորված է արտալեզվական գործոններով, իրադրությամբ: Քերականական զեղչումներից խոսակցականին հատուկ է հարակատար դերբայի զեղչումը, օր.՝ **բրդից գործած գուլպա > բրդից գուլպա, կաշվից կարված ձեռնոց > կաշվից ձեռնոց, հավով եփած հարիսա > հավով հարիսա** նն:

Խոսակցական լեզուն հիմնականում **երկխոսական բնույթի** է: Շատ դեպքերում երկխոսության ընթացքում նախադասության կառույցը անմիջականորեն պայմանավորվում է խոսակցի միջամտությամբ, նրա պատասխանով կամ նույնիսկ շարժումով: Նախադասությունները հաճախ կարող են արտահայտվել մեկ անդամով: Օր.՝ «Ա.- Ի՞նչ էր պատահել՝ չէիր եկել: Բ.- Հիվանդ էի»: «Ա.- Որտեղի՞ց էսպես հոգնած: Բ.- Գործից»:

Կրկնությունների միջոցով շեշտվում, ընդգծվում է նախադասության որևէ անդամ կամ հատված, օր.՝ «Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, մի՛ ամաչիր»: Կրկնությունը համապատասխան հնչերանգի դեպքում խոսքին հետաքրքիր յուրահատկություն է հաղորդում, դառնում է հույզերի, ապրումների, տրամադրության, մասնավորապես զայրույթի, հուսահատության դրսևորման միջոց: Օր.՝ «Էդ գնալն էր, որ գնաց», «Ատելով ատում էր»:

Այսպիսով՝ խոսակցական լեզուն ունի իրեն հատուկ նորմավորված որոշակի համակարգ: Ի տարբերություն գրական լեզվի նորմի՝ խոսակցական լեզվի նորմը գիտակցաբար չի հաստատվում և չի հսկվում. չափանիշ է համարվում այն, ինչ հանդիպում է լեզվին տիրապետող շատ մարդկանց խոսքում:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Ո՞ր բառերն ու բառակապակցություններն են բնութագրում խոսակցական ոճը. ընդգծե՛ք:

Մշակվածություն, հնչերանգի կարևորություն, դերբայական դարձվածքների հաճախակի գործածություն, միօրինակություն, անկայունություն, միակազմ և թերի նախադասությունների բացակայություն, հարադրությունների գործածություն, ճշգրտություն, ինքնաբուխ բնույթ, տերմինների կիրառություն, շարժումների հաղորդակցական դեր, պատկերավորման միջոցների սահմանափակ գործածություն, երկխոսական բնույթ, խոսքի ավարտունություն, զեղչում, արտասանական նորմերի պահպանում, օտարաբանությունների առատություն, շարադասության խախտումներ:

2. Գտե՛ք խոսակցական լեզվին բնորոշ տարրերը: Փորձե՛ք դրանք փոխարինել գրական ձևերով՝ տեքստը շարադրելով գրական լեզվի նորմերին համապատասխան:

ա) Աբովյան փողոցի ինտերնետ ակումբներից մեկում երկու օր առաջ աշխատանքի եմ ընդունվել որպես համակարգող: Բարևում եմ գործընկերներին, նստում կոմպի դիմաց: Շուտով շեֆի սենյակից մի աղջիկ է դուրս գալիս՝ հայացքն ուղղելով ինձ...

- Մի բոպե եկե՛ք սենյակ, հա՞:

Խառնված թողնում եմ կոմպը, հայելու դիմաց մի փոքր կարգի եմ բերում զգգված մազերս, մտնում շեֆի սենյակ:

- Արտակ ախպե՞ր, ո՞նց ես,- սուրճը ֆոթացնելով բարբաջում է երեսունին մոտ կոկիկ հագնված երիտասարդը:

- Մերսի, լավ...

- Ճիշտ ա, կարճ ժամկետ ա, որ աշխատում ես, բայց գոհ եմ,- շարունակում է շեֆը, սուրճի հետ վայելում է «Մոցարտ» կոնֆետը:

Ստամոքսս կծկվում է: «Կիյուրասիրի երևի», - անցնում է մտքովս:

-Մի հատ նուրբ վիճակ ա ստեղծվել, գոհ եմ քեզանից, բայց էսօր ազատել եմ աշխատանքից...

Միրոս խելահեղ արագություն է հավաքում.

-Պատճառ կա՞, - խուլ կծմծում եմ:

-Ախպե՛րս, մեր հարազատներից մեկը խնդրել ա, որ իրա քրոջ տղուն աշխատանքի տեղավորեմ, չեմ կարա մերժեմ, կարգին ախպեր ա, քո տեղն եմ նշանակել,- ֆրոթ, կարծես ինձ է կլլում:

-Լավ, ոնց կասեք, ցտեսություն...

Բացում եմ դուռը, հետևիցս բացականչում է.

-Կանգնի՛, ա՛յ ախպեր,- դրամապանակից ճռճռան հինգհազարանոց է հանում,- աշխատածդ փողը վերցրա՛, նոր գնա՛:

Վերցնում եմ, դուրս գալիս... (ՄՊ) :

3. Տրված բառերից յուրաքանչյուրով կազմե՛ք երկուական նախադասություն՝ խոսակցական բառը հնարավորության դեպքում փոխարինելով գրական համարժեքով. բացատրե՛ք արտահայտչական տարբերությունները:

Ալարել, հավես, չոքել, գոռով, իրիկուն, ծկել, թիթիզ, հանաք, զավզակ, շշկռել, մեջ ընկնել, ձեռ առնել, ցանցառ, նամուս, վռազել:

4. Գտե՛ք դարձվածքները և բարբառային տարրերը:

Ու հիմա, հիմա տարոնցի Խաչոն, Մաշտոցի հայրենակից Խաչոն ավելի շուտ Մամփրեի իմացած հայոց գրին է հավատում, քան իր որդու, քան իր թոռների:

- Օդորմի քու անուշ մոր, Մամփրե, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն, ու ի՞նչ բնույթ ունեն: Մեկ-երկու նմուշ պատկերե, Մամփրե:

Մամփրեն, որ գլուխկախ լսում էր Խաչոյին (փառք ասածո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խենթություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ ճամփից հավաքած թերթերից ընտրի գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց, գտավ մի կտոր ճիպոտ և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին:

- Էս ի՞նչ է, Խաչո:

Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անդարդ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց՝

- Գիծ է: Հիմա էս էլ գծեմ ու իմ պապի պապն էլ գա ու գծե:

- Համբերե՛, - Խաչոն ձեռնափայտով քշեց Ավեին: - Նստի՛ր քու տեղն ու մեր արևն մի՛ ծրարե:

- Հաշվենք, թե առու է, Խաչո: Առվակ: - Մամփրեն գիծը խորացրեց: - Առվակ է ու ոչ թե դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու գուլալ: - Եվ գուգահեռ գծեց: - Ու էս ջուխտակ գուլալ առվակներն սարից կիջվա-

րեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պատիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է: - Մամփրեն ճիպոտով զուգահեռ առվակները միացրեց: -Միացա՞ն... թե միացան, թե առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կլցվեն ամեափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն ճոթ տա... Էս է: Ուրեմն ճոթ կտա, քչիկ մի կերթա ու... ո՞ր պետք է էրթա, Խաչո՛, սար է, չէ՛, ուրեմն կդառնա ու էսպե՛ս կիջվորե: Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա (ՄԳ):

5.4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ⁴⁴

Գեղարվեստական լեզուն կամ ոճը գրական լեզվի մի տարբերակն է, որը ստեղծվում, զարգանում և անվերջ հարստանում է գրողների ստեղծագործությունների միջոցով: Այն ամենատարողունակն է և՛ բառապաշարի հարստությամբ, և՛ քերականական զուգաձևություններով, և՛ լեզվի ու պատկերավորման միջոցների գործածության բազմազանությամբ: Հատկանշական է, որ եթե գրական լեզվի նորմերի պահպանումը գործառական մյուս ոճերի դեպքում պարտադիր է, ապա գեղարվեստական լեզուն հաճախ է շեղվում ընդունված նորմերից:

Գեղարվեստական ոճին բնորոշ են.

- թեմատիկ բազմազանությունը և ոճական տարասեռությունը,
- արտահայտչական և պատկերավորման միջոցների լայն գործածությունը,
- հուզականությունը,
- ոչ կանոնական, հատկապես խոսակցական լեզվական միավորների գործածությունը,
- բանաստեղծական բառերի ու արտահայտությունների, անհատական փոխաբերությունների, դիպվածային բառերի հաճախակիությունը,
- տաղաչափական հնարքների կիրառումը չափածո խոսքում:

Գեղարվեստական լեզվի հարստությունն ու ինքնատիպությունը դրսևորվում են լեզվական բոլոր մակարդակներում: Որոշակի հնչյունական կազմ ունե-

⁴⁴ «Գեղարվեստական ոճ» բաժնի տեսական նյութը կրճատումներով և որոշ փոփոխություններով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Տեր-Մինասյան Ա.**: Տե՛ս **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 349-370:

ցող բառերի միջոցով բանաստեղծության զգացմունքային կողմը ուժգնացնելու հնարանքը (բաղաձայնույթ կամ առձայնույթ) գեղարվեստական գրականության մեջ համեմատաբար քիչ է հանդիպում, օր.՝ «Աշնան մշուշում շշուկ ու շրշուն...» (ՎՏ), «Հոգվույս դափ ու թմբուկի Կ'իջնե ծիծաղն այս գիշեր. **Ծնծղաներու պես ցնծուն Ծափ կը զարնեն իմ հուշեր»** (ՄՄ),

Գեղարվեստական լեզուն գրական լեզվի մի տարբերակն է, սակայն, ի տարբերություն գործառական մյուս ոճերի, չկա բառապաշարի մի շերտ, որի գործածությունը այս ոճում բացառվի:

Համագործածական բառերը, որոնք ոճական առումով համեմատաբար չեզոք են, ենթարկվելով վարպետ արվեստագետի գրչին, գեղարվեստական ստեղծագործության տարբեր դրվագներում դրսևորում են իրենց ոճական արժեքը: Դրանց նոր իմաստ ու նրբերանգ հաղորդելու միջոցով գեղարվեստական խոսք կոելու արվեստը բնորոշ է բոլոր առաջնակարգ գրողներին, ինչպես օրինակ՝ «Երբ կու **ծաղկի** միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց **պտուղ կու տայ**» (Ֆր.):

Գեղարվեստական լեզվի կարևոր արժանիքներից է բառի **փոխաբերական** գործածությունը, որով խոսքը դառնում է առավել խորիմաստ և պատկերավոր: Հատկապես այս հնարանքի շնորհիվ են ստեղծվում գեղարվեստական լեզվի յուրօրինակությունն ապահովող պատկերավորման և արտահայտչական միջոցները:

Գրականության լեզուն ավելի ազատ է ու անկաշկանդ. գրողը միշտ էլ ձգտում է պահպանել լեզվի կենսունակությունը՝ գրական խոսքը հնարավորինս մոտեցնելով առօրյա-խոսակցական լեզվին: Գրական լեզվի զարգացման համար բառապաշարային ու քերականական ձևերի հարուստ գանձարան են բարբառները: **Ժողովրդախոսակցական, բարբառային**, նույնիսկ **ժարգոնային** բառերն ու արտահայտությունները գրողների կողմից երբեմն մտցվում են ստեղծագործություն՝ հերոսների խոսքային բնութագիրը տալու նպատակով⁴⁵: Հեղինակները կերպարների խոսքը առավել համոզիչ ու բնական դարձնելու նպատակով որոշ ներմուծումներ են կատարում բառապաշարի տարբեր, այդ թվում՝ բարբառային և խոսակցական շերտերից, որոնց կիրառությունը մեծ հմտություն է պահանջում: Օր.՝ «Մեր Անդրին **անցկացած** շաբաթը մի նամակ էր ուղարկել **Վարշավու կողմերից**... Լավ չի գրում. ասում է՝ **էս** է մի ամիս է Ծմակի մեջ, գիշեր-ցերեկ **թովերը** տրաքում են: Մինչև անգամ **չոլ** դուրս գալն էլ **ս** երկյուղայի» (ԱԲ):

⁴⁵ Տե՛ս **Շահվերդյան Թ.**, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 133:

Պատմական թեմաներով գրված ստեղծագործություններում դարաշրջանի շունչն ու կոլորիտը վերարտադրելու համար, իրոք, նպատակային է երբեմն գործածել նաև **հնաբանություններ**: Ընդ որում, հնաբանություններից պատմաբաները՝ ժամանակի ընթացքում գործածությունից դուրս եկած իրերի, առարկաների, պաշտոնների և այլ անվանումները (ատրուշան, նիզակ, քուրմ, սեպուհ), պատմականությանը նպաստում են ճանաչողական առումով, որովհետև դրանք ոչ թե գեղարվեստական պատկեր են կերտում, այլ մասնակցում են պատմական միջավայրի նկարագրությանը: Ոճականորեն առավել ակտիվ են **հնաբաները**, որոնց գործածության շնորհիվ կերպարների խոսքը ինչ-ոչ չափով համահունչ է դառնում տվյալ պատմական ժամանակահատվածի լեզվին: Օր.՝ «**Եվ արդ աշխարհակալ իմ հարևան, Ի հատուցումս** ընծաներիդ առատության, Առ այս աքքատական **ակնակոռ** գոտին» (ԼԶ):

Գեղարվեստական երկերի հեղինակների կողմից **նորակազմությունների** ստեղծումը **բացառապես անհատական** երևույթ է՝ միտված խոսքի նրբերանգային կողմերն ընդլայնելուն: Այդ բառերի գլխավոր առանձնահատկությունը բառիմաստային տարողունակությունն է, գրողի ասելիքը առավել հակիրճ, բայց խորիմաստ արտահայտելը: «Նոր բառի ստեղծման ժամանակ գրողի նպատակը ոչ թե գրական լեզուն հարստացնելն է, այլ զգացմունքը, միտքը անհրաժեշտ նրբերանգներով, ոճական պատշաճ որակով արտահայտելը»⁴⁶: Այս բնագավառում ստեղծված նորակազմությունների գերակշիռ մասը մնում է տվյալ ստեղծագործության էջերում՝ որպես **դիպլոմատիկ** նորաբանություն (ավարայրվել, հավերժավրեժ, պատժանք, ամենահայր, սիրադուլ, վասականալ ևն), և միայն փոքր թվով բառեր, ժամանակի ընթացքում ուրիշների կողմից ևս գործածվելով, անցնում են գրական լեզվին:

Ոճական արժեք ունեցող քերականական իրողությունների մեծ մասը պայմանավորված է ձևաբանական զուգաձևությունների և շարահյուսական կառույցների հոմանշային տարբեր կիրառություններով:

Գրողները, հատկապես քնարերգուները առավել հաճախակի են դիմում **քերականական զուգաձևություններին**՝ տողերի հանգավորման ու բարեհնչունության համար: Թումանյանի տողերում բազմիցս հանդիպում ենք ձևաբանական զուգաձևություն ունեցող բառերի ժողովրդախոսակցական ձևերի՝ **տղերք** (տղաներ), **մարդին** (մարդուն), **գլխովը** (գլխով) ևն. «Սիրո՛ւն տիկնայք,

⁴⁶ Մեյրանյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 174:

ջահե՛լ **տղերք**, Լա՛վ ուշ դրեք իմ խաղին», «Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման, Լավ արարքը, լավ **մարդին**»: «**Գլխովը** շատ ամպեր կանցնեն...»:

Բանաստեղծական խոսքին անկրկնելի նրբերանգներ են հաղորդում գոյականական մակդիրները՝ **հրաշք** աղջիկ, **մանկության** երկինք, **արծաթ** անձրև, **քար** լռություն և այլն. օր.՝ «Մըռնչալով ելավ տեղից, էն առյուծի **առյուծ** որդին» (ՀԹ): Գոյականը ոճավորման ինքնատիպ հումք է դառնում, երբ հոգնակի չունեցող բառը գործածվում է հոգնակի թվով: «Եթե ուզեն՝ **արեգակնե՛ր** կըշպրտեն երկինքն ի վեր, Եթե ուզեն՝ վա՛ր կբերեն **երկինքներից արեգակներ...**» (ԵԶ):

Գեղարվեստական խոսքի ոճավորման լայն հնարավորություններ ունեն հատկապես որակական **ածականները**՝ իրենց համեմատության աստիճաններով ու շարահյուսական բազմաբնույթ կիրառություններով. «Իմ **սո՛ւրք** Հայրենիք, Դու սրտիս մեջ ես...» (ՀՇ), «Իմ **կույր** հավատի աչքերն էլ տեսան Գազանի մեջ մարդ...» (ՀՇ):

Ածականները հաջողությամբ կազմում են խոսքային հոմանիշներ և հականիշներ: Օր.՝ «Ների՛ր ինձ, դու իմ **անզի՛ն**, Իմ **խելո՛ք** և իմ **համա՛ռ**, **Հարկադիր** այս ծիծաղի, Ու **թաքուն** լացի համար» (ՀՄ). (**անզին**, **խելոք**, **համառ** – խոսքային հոմանիշներ, **հարկադիր** – **թաքուն** – խոսքային հականիշներ):

Ածականի ոճական արժեքը մեծ է նաև փոխանվանական կիրառություններում՝ «Դարեր գալիս, **չարեր** գալիս, Տենչում էին ալեկոծ, Իմ Սևանա ծովը խմել...» (ՀՇ):

Թվականները որոշ չափով ոճական արժեք են ստանում դարձվածքներում («Հասկացողին՝ **մեկ**, չհասկացողին՝ **հազար ու մեկ**», «**յոթ** սարից այն կողմ»), ժողովրդական ստեղծագործություններում և դրանց մշակումներում, որտեղ հաջողությամբ մասնակցում են չափազանցություն պարունակող դրվագների կառուցմանը: Օր.՝ «...Ու ցած իջավ Թուր-Կայծակին: Անցավ **քառսուն** գոմշի կաշին, Անցավ **քառսուն** քարերը ցած, Միջից կըտրեց ժանտ հըրեշին, **Օխտը** գազ էլ դենը գրնաց» (ՀԹ):

Դերանունն ու **մակբայը** ևս ոճական որոշակի լիցքեր կարող են հաղորդել խոսքին՝ նրանց ընձեռած հնարավորություններից հմտորեն օգտվելու դեպքում. օր.՝ «**Դու** Հասարակ մի դերանուն, **Դու**՝ երկու տառ...» (ՊՄ), «**Ես** եմ, **դու** ես, **ես** ու **դու**, Գիշերում այս դյութական, Մենք մենակ ենք՝ **ես** ու **դու**, **Ես** էլ **դու** եմ, **ես** չկամ...» (ՎՏ): «Արևդ **հայերեն** է ծագում, Ծառերդ **հայերեն** են ծաղկում,

Հայերեն են պայթում բառերդ: ...Չորերդ շնչում են **հայերեն**, Չոհերդ ննջում են **հայերեն**, **Հայերեն** են տանջում ցավերդ» (ՀՄ):

Քայր ևս ոճական մեծ արժեք է ձեռք բերում, երբ գործածվում է փոխաբերաբար՝ նպաստելով պատկերավորման տարբեր միջոցների (փոխաբերություն, համեմատություն, անձնավորում, չափազանցություն ևն) ձևավորմանը: Այսպես՝ «Գարուն էր: Չեկած ամառ՝ **Փուլ եկավ** երկնակամար: **Չյուն մաղեց** մեր բաց գլխին, **Չյուն մաղեց** կրակի պես» (ՊՄ): Խոսքին ուշագրավ ձևավորում են հաղորդում անորոշ դերբայով արտահայտված անդեմ նախադասությունները՝ «**Ապրե՛լ, ապրե՛լ**, այնպե՛ս ապրել, Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը...» (ՊՄ):

Գեղարվեստական ստեղծագործությունների ոճավորման գործում կարող են էական դեր կատարել նախադասությունների ու բառակապակցությունների շրջուն շարադասությունը, միակազմ նախադասությունների, ճարտասանական դարձույթների, ընդհատված խոսքի և այլ լեզվական միջոցների գործածությունները: Անդեմ նախադասությունների տպավորիչ օրինակներով հարուստ է Տերյանի քնարերգությունը, ինչպես՝ «Եվ այն **վալսը**՝ «Անդարձ ժամանակ», **Մառուղին** ամայի պուրակում, Ե՛վ **գիշեր**, և՛ **համբույր**, և՛ **լուսնյակ**, Տաղտկալի, ձանձրալի **պատմություն**», «**Մոռանա՛լ, մոռանա՛լ** ամեն ինչ, Ամենին **մոռանալ**. **Չսիրել, չխորհել, չափստա՛լ – Հեռանա՛լ...** »:

Շարահյուսական ոճավորման նրբերանգները հատկապես տեսանելի են ոչ պատմողական բնույթի՝ **հարցական, հրամայական, բացականչական** նախադասություններով կառույցներում: Ահա մի քանի օրինակ՝ «Ո՞վ էս դու, որ անգոր եմ քո դեմ» (ԿՏ), «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» (ԿՏ), «Հե՛յ ջջան, հայրենի՛ք, ինչքա՛ն սիրուն ես...» (ԱԲ): Կարող են մեկ բարդ նախադասության մեջ միավորված լինել նշված հնչերանգային առանձնահատկություններով տարբեր նախադասություններ, ինչպես՝ «Հեյ-հե՛յ, լսեցե՛ք, ձա՛յն տվեք իրար, Ամե՛նքդ եք արթուն, մարդ քնած չկա՞» (ԱԲ):

Յուրաքանչյուր արվեստագետ ունի իր գրելաոճը, իր խոսքային կառույցները: Մեծ բանաստեղծների խոսքարվեստի յուրօրինակություններն այնքան ակնհայտ են, որ կարդալով կամ լսելով տակավին անձանոթ որևէ բանաստեղծություն՝ սովորաբար գուշակում ենք, թե ով է հեղինակը: Իհարկե, բանաստեղծական ոճը շատ հաճախ պայմանավորված է լեզվի զարգացման սովյալ փուլի յուրահատկություններով, տարբեր ստեղծագործությունների թեմատիկ, աշխարհայացքային և այլ հատկանիշներով: Սակայն նույնիսկ

այս հատկանիշների ընդհանրությունների դեպքում որոշակիորեն ուրվագծվում են հանճարեղ բանաստեղծների խոսքարվեստի նրբերանգները: Այսպես, Շիրազի «Հայոց հրաշքը» և Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն...» պոեմները տպագրվել են ոչ միայն հայոց լեզվի զարգացման նույն փուլում, այլև նույն՝ 1962 թ., երբ նշվում էր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Երկու պոեմներում էլ կան հատվածներ, որտեղ հեղինակների աշխարհայացքային ըմբռնումները բացարձակապես նույնն են, ավելին՝ նույն համեմատություններով ու փոխաբերություններով են բնութագրվում և՛ Մաշտոցը, և՛ հայոց գրերն ու նրանց դերը:

Ամեն տառդ հայ ազգապահ մի զինվոր է անմեռական,

Ամեն բառդ՝ հայոց մի գունդ, այբուբենդ՝ բանակն Հայկյան... (ՀՇ):

Քանզի քեզնով հայ մնացինք, քանզի քեզնով ենք ազգանում,

Քեզնով զինված էին հաղթում անթագակիր դարերն հայոց... (ՀՇ):

Եվ մենք՝ նրանով միշտ զինավառված...

...Անվերջ կրելով զարկեր ու հարված...

...Հաղթեցինք դաժան ժամանակներին... (ՊՍ):

Ըստ էության գործ ունենք գրեթե նույն մտքերի բանաստեղծական ձևակերպման երկու տարբերակների հետ: Սակայն թեմայից բխող ընդհանրությունները չեն խանգարում զանազանելու երկու մեծ բանաստեղծների խոսքարվեստի նրբերանգները: Նրանց մոտ տարբեր են և՛ բառընտրությունն ու բառաշինությունը, և՛ տաղաչափական կառույցները, և՛ հատկապես բանաստեղծական պատկերի շարահյուսական ոճավորման նրբերանգները:

Գրողների ոճի ինքնատիպությունը տեսանելի է հատկապես բնապատկերներ կերտելիս: Այստեղ առավել հստակ է երևում, թե տվյալ արվեստագետը որ արտահայտչամիջոցների գուգորդությամբ է նախնորում հասնել իր գեղագիտական նպատակադրումներին: Հայաստանի գետերի՝ Դեբեդի և Բասուտա գետի նկարագրությունները հրաշալիորեն տրված են Թումանյանի և Բակունցի ստեղծագործություններում: Օր.՝ «Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը: Ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփոներ և կրծում քարե շղթաները» (ԱԲ): «Գալարվում է գիժ Դեբեդը մոլի, Խելագար թռչում քարերի գլխով, Փրփուր է թքում անգուսպ երախով Ու գոռում գիժ-գիժ՝ վա՛ 2-վի՛ 2, վա՛ 2-վի՛ 2» (ՀԹ):

Չափածո երկերի համեմատությամբ էապես տարբեր են արձակի (հատկապես ծավալուն ժանրերի) ոճական առանձնահատկությունները. դրանք ավելի բազմազան են, որովհետև հերոսների կերպավորման գործում կարևոր դեր ունի նաև նրանցից յուրաքանչյուրի խոսքի ոճական անհատականացումը:

Գեղարվեստական գրականության լեզուն գրական լեզվի տարբերակներից մեկն է, որի առանձնահատկությունների ամբողջությունը կոչվում է գեղարվեստական ոճ: Մակայն յուրաքանչյուր գրող ունի նաև ի՛ր անհատական ոճը, որն իր հերթին նպաստում է գեղարվեստական գրականության լեզվի հարստացմանն ու զարգացմանը:

Վարժություններ ու առաջադրանքներ

1. Նշե՛ք գեղարվեստական ոճի առանձնահատկությունները: Ինչո՞վ է այն տարբերվում

- ա) գիտական ոճից,
- բ) պաշտոնական ոճից,
- գ) խոսակցական ոճից:

2. Տրված տեքստում գտե՛ք գեղարվեստական ոճին բնորոշ լեզվական տարրերը, ընդգծե՛ք պատկերավորման միջոցները:

ա) Իմ ներսում ես ո՛չ ծով ունեմ, ո՛չ օվկիանոս, անձիբ տարածությունների համար փակ եմ, երկնքում ու տիեզերքում լինելու ո՛չ հավես ունեմ, ո՛չ հավակնոտություն: Ես սիրում եմ, հողին կանգնած, երկնքին նայել, սիրում եմ աստղերը դիտել մեր ամառանոցի կտուրից: Թող բոլորը մնան իրենց տեղում. երկինքը՝ երկինք, հողը՝ հող: Ես հոգուս մեջ ո՛չ ծով եմ պահում, ո՛չ օվկիանոս: Վաղուց հերիք է, իմ ներսի լայնարձակ ազատությունից հոգնել եմ, հոգնել եմ սրճարաններից, ակումբներից, մեղրածոր թխվածքներից, աղի ձողիկներից ու ջերքիներից, անիմաստ տվայտանքներից ու ճիգով ծիծաղելուց, թեթևամտությունից հոգնել եմ, հերիք եղավ: Ինձ դեմքս պատռող եզրեր են պետք, իրար մոտ գտնվող ավեր, ինձ ճեղք է պետք, կացնի դիպուկ հարված, սելավ է պետք, ավերակներ, գարնան ցեխ, ճիւղ, դեպի բախումը սլացող ձյունախառն քարեր, նեղ բացվածք, որի մոտ կարող եմ գալ, կարող եմ առանձնանալ, մի քանի ժամ նստել, ուղղակի նայել, երկար նայել ու տեսնել երկու ավերը բաժանող եռքի դիմակահանդեսը (ԱՊ):

բ) Ես իմ ներսում ո՛չ ծով ունեմ, ո՛չ օվկիանոս, բայց գտել եմ իմ գալու տեղը, իմ սևեռումը, որ ծլծլացող առու է, գետնի վրա դոնդոդող խաղողի շիրա, ժամանակին եղել է, հիմա կա, հունը բետոնով ու երկաթներով փոխել են, նեղացած հոսում է քաղաքի ընդերքում, թավալ է գալիս, խաշվում, լուռ գզլում: Ես գտել եմ նրան, օրվա վերջում գալիս եմ Խանջանի մոտերքում դեռ պահպանված երակին ընդառաջ, մեքենաս կայանում եմ բազալտապատ քարե պատնեշի դիմաց, իջնում եմ, կանգնում պատնեշի շուրթին ու ցած նայում: Գետառը հոսում է կցկցված գալարներով, այնքան է նեղացել, որ բռունս հանգիստ կտեղավորվի, վտիտ աղջկա վտիտ թևի բարակություն է: Գալիս է դանդաղ. ասես մեկը դավադրաբար բռնել է ոտքը, քաշում է մագերից, լեզվի մեջ կեռեր է մխել, չի թողնում՝ ապրի: Էս ո՛չ Եփրատն է, ո՛չ Տիգրիսը, ո՛չ Սենն է, ո՛չ Թեմզան, ո՛չ Դանուբն է, ո՛չ էլ Պոն... (ԱՊ):

3. Համեմատե՛ք տրված գիտական և գեղարվեստական տեքստերը, նշե՛ք հիմնական տարբերությունները:

1. **ա)** Արարատը հանգած հրաբխային մեկուսացած լեռնազանգված է Արարատյան դաշտի հարավում: Ունի երկու գագաթ՝ Միս (3925 մ) և Մասիս (5165 մ): Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթն է, իսկ հարաբերական բարձրությամբ՝ ստորոտից մինչև գագաթ 4300 մ, աշխարհի ամենաբարձր լեռն է: Լեռան հիմքի մակերեսը գրավում է 1200 կմ² տարածք, պարագիծը 130 կմ է: Գագաթների միջև հեռավորությունը կազմում է 11500 մ: Մասիսը գտնվում է Հայկական լեռնաշխարհի ակտիվ երկրաշարժային շրջանում, ուստի և զերծ չի մնացել բնական աղետներից:

բ) Մքանչելիք է Արարատյան դաշտը: Մասիսը ուղղակի դիմացներս էր, այնպե՛ս պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչև գագաթը մեկ-մեկ կարելի էր դիտել: Մի հսկա սպիտակաբաշ առյուծի էր նման նա՝ նստած հետի ոտքերի վրա, ալևոր գլուխը անդունդի մեջ, հանգիստ է, անվրդով: Աշնան քաղցր ու մեղմ արևը Մասիսի վերից վար և Արարատյան երկրի լայնքին ու երկայնքին իր տարածուն ծիրանին է փռել (ԱԲ):

2. **ա)** Հայտնի են արագիլների 20 տեսակներ, Հայաստանում՝ 2 տեսակ՝ սև և սպիտակ: Արագիլների ձայնալարերը հետզարգացած են, հաղորդակցվում են կափկափյուններով: Մարմնի կեցվածքը ուղղահայաց է, երկարությունը հասնում է 100–115 սմ-ի, թևերի բացվածքը՝ 155–165 սմ-ի, կենդանի զանգվածը՝ 4 կգ-ի:

Բույն հյուսում են ճյուղերից, խոտաբույսերից ու լաթերից՝ գյուղական տների տանիքներին, ծառերի, աշտարակների, ժայռերի վրա, նույնիսկ էլեկտրապուլների ծայրերին: Դնում են երեքից յոթ ձու, ունենում երեքից հինգ ձագ: Արագիլները սնվում են միջատներով, ձկներով, երկկենցաղներով, սողուններով, մկներով, բույսերով:

բ) Մեր պարտեզի բարձր բարդու վրա, ուր ծառը երեք մեծ ճյուղերի էր բաժանվում, երկու արագիլ իրենց բույնն էին հյուսել, մի ամուր և մեծ բույն. այնպես որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ:

Ամեն գարուն՝ ձնծաղիկների երևալուն պես, գալիս էին արագիլները՝ այր ու կին. հսկա թևերը գյուղի վրա ծափ տալով և ուրախ-ուրախ լա՛կ-լա՛կ անելով՝ գալիս հանգչում էին իրենց վաղեմի բույնի վրա: Մի քիչ հանգստանալուց հետո սկսում էին աշխատել. թռչում էին, շյուղ, տաշեղ, փետուր գտնում-բերում ու բույնը կարկատում:

Մենք հետևում էինք արագիլների ամեն մի շարժմանը. մեկ տեսնում էինք, թե ինչպես էին ծնողները փոխնիփոխ դաշտ գնում, սնունդ ճարում ու բերում-կերակրում ձագերին, մեկ էլ տեսնում էինք, թե ինչպես հայրն ու մայրը, ձագերին թևերի վրա առած, թռչել էին սովորեցնում նրանց ճիշտ այնպես, ինչպես մեր մեծերը լողալ էին սովորեցնում մեզ գետի խորին տեղերում (ԱԻ):

4. Տեքստը վերաշարադրե՛ք գիտական ոճով:

Գարունը բացվել է, ծաղկել է արդեն տիեզերքի ամենահրաշալի ծաղիկներից մեկը՝ հնգաթերթ մանուշակը: Ասում են, որ ամռան սկզբին էլ է ծաղկում: Այստեղ մանուշակի տարբեր գույներ են աճում: Ալպիական այս չքնաղ ծաղկի ցողունը, այո՛, կաքավի ոտքի պես կարմիր է, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Շուրջբոլորս հոգեհմա բույր ունեցող մանուշակներ են՝ հերթադիր ամբողջական տերևներով: Անտառները, թփուտները, մարգագետինները, նույնիսկ չոր, քարքարոտ վայրերը զարդարված են մանուշակների բազմաթույր բույլերով: Սքանչելի է ժայռերի ճեղքերում միայնակ աճող դեղնաթույր մանուշակը՝ սրտանման մուգ կանաչավուն տերևներով: Մյուսնյաց աշխարհի այդ նրբագեղ հրաշալիքի գեղեցկությունը չեն խամրեցնում ո՛չ ալպյան գոտու խճաքարերը, ո՛չ խոնավ լանջերի տամկությունը:

5.5. ԼՐԱԳՐԱՅԻՆ - ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՄԱԿԱՆ ՈՃ

5.5.1. Ձանգվածային լրատվամիջոցների լեզուն (245): 5.5.2. Գովազդի լեզուն (250): Վարժություններ և առաջադրանքներ (253):

Լրագրային-հրապարակախոսական ոճը գրական-գրքային ոճ է, որ հիմնականում ձևավորվում է հասարակական հարաբերությունների ոլորտում և սպասարկում է քաղաքական, տնտեսական, գաղափարական, մշակութային և այլ բնագավառներին, մասնավորապես պարբերական մամուլին, հրապարակային, բանավիճային ելույթներին ևն: Ցանկացած ոլորտի ցանկացած խնդիր կարող է դառնալ այդ ոճով ձևավորված խոսքի նյութ՝ բերելով իր հետ համապատասխան բառեր ու արտահայտություններ: Հրապարակախոսությանն առավել բնորոշ են հասարակական-քաղաքական, սոցիալական թեմաները, առօրյա լրատվությունը, մշակույթի, գիտության հանրամատչելի և հրատապ խնդիրները, մարզական նորությունները ևն: Ինչպես գործառական մյուս ոճերը, լրագրային-հրապարակախոսական ոճը ևս ունի իր ընդհանուր հատկանիշները.

- հաղորդող և ներգործող լեզվատարրերի գուգահեռ գործածությունը,
- փաստարկման և ապացուցման եղանակների կիրառությունը,
- խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցների գործածությունը,
- գնահատողական լեզվական միավորների կիրառումը,
- խոսքի հուզականությունը,
- ճարտասանական հնարքների գործածությունը,
- թեմատիկ և ժանրային բազմազանությունը և դրանով պայմանավորված ոճական տարասեռությունը,
- հատուկ բառապաշարի սակավությունը,
- հանդիսավոր խոսքի հաճախակի կիրառությունը,
- նվազագույն լեզվական միջոցներով առավելագույն տեղեկություն հաղորդելը:

Հրապարակախոսական ոճի կիրառության ոլորտների բազմազանությամբ է պայմանավորված այդ ոճի տարբերակների կամ ենթաոճերի բազմազանությունը:

5.5.1. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ⁴⁷

Զանգվածային լրատվամիջոցների նպատակն է որոշակի տեղեկատվությամբ ներագդել մարդկանց մտքի և զգացմունքների վրա, նրանց գործողություններին ցանկալի ընթացք տալ, հասարակական վերաբերմունք մշակել համազգային կարևորություն ունեցող խնդիրների նկատմամբ: Նկատի ունենալով զանգվածային լրատվամիջոցների բավականին մեծ դերը հասարակության վրա՝ մամուլը կոչում են նաև չորրորդ իշխանություն (առաջինը՝ օրենսդիր իշխանությունն է, երկրորդը՝ գործադիր, երրորդը՝ դատական համակարգը):

ԶԼՄ-ների հիմնական գործառույթներն են **հաղորդումը, քարոզչությունը, ներգործումը**, որոնցով էլ պայմանավորված են ԶԼՄ-ների ընդհանուր հատկանիշներն ու լեզվատճական յուրահատկությունները: Դրանք են՝

1. **Թեմայի հրատապությունը.** լուրը պետք է հաղորդել անմիջապես, որպեսզի ուշագրավ լինի:
2. **Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածությունը.** գուճակցվում են լեզվի տեղեկատվական և հուզարտահայտչական միջոցները:
3. **Դրսևորման գրավոր և բանավոր կերպերը.** դրանք ընկած են ԶԼՄ-ների ենթառճերի առանձնացման հիմքում: Ըստ այդմ՝ տարբերում են երկու ենթառճեր՝ պարբերական մամուլի և ռադիոհեռուստատեսության:
4. **Հիմնականում մենախոսական բնույթը և չեզոքությունը.** առանձին դեպքերում (հարցազրույց, բանավեճ) առկա է երկխոսություն կամ բազմախոսություն:
5. **Լեզվական միջոցների տնտեսումը.** առավելագույն տեղեկույթի հաղորդում լեզվական ամենաքիչ միջոցներով:
6. **Մատչելիությունը.** գրել որքան հնարավոր է պարզ լեզվով (բայց ոչ պարզունակ. դա վնասում է խոսքի ճշգրտությանը):
7. **Գնահատողական լեզվատարրերի առկայությունը.** դա պայմանավորված է հասարակական շարժառիթներով:

⁴⁷ «Զանգվածային լրատվամիջոցների լեզուն» բաժնի տեսական նյութը կրճատումներով և որոշ փոփոխություններով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Ներսիսյան Ն.**: Տե՛ս **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 371-393:

8. Գրական և խոսակցական իրողությունների համատեղ գործածությունը. խոսակցական լեզվի ազդեցությունը զգալի է ռադիոհեռուստալեզվում և գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերում:

9. Գործառական մյուս ոճերին բնորոշ լեզվատարբերի կիրառությունը:

ԶԼՄ-ների բառապաշարը ընդհանուր առմամբ գրական-գրքային է: Ըստ գործածության հաճախականության՝ առանձնացվում են **1. լրատու** կամ **լրատվական** բառեր (**ա**) տեղ, ժամանակ, կոչում, պաշտոն նշանակող բառեր, անձանուններ, թվականներ. պատասխանում են **որտե՞ղ, ե՞րբ, ո՞վ, ի՞նչ** հարցերին, ոճականորեն չեզոք են և չունեն գնահատողական երանգ, **բ**) եղելություն, գործողություն, շարժում ցույց տվող «շարքային» բառեր, ասացական բայեր՝ **հայտնել, տեղեկացնել** (ևն), **2. գնահատողական** (դրական՝ **ոգեշնչել, համերաշխություն, վսեմ,** և բացասական՝ **խեղկատակություն, զավթիչ, անհեռատես** ևն) **վերաբերմունք** արտահայտող բառեր, **3. գաղափարակիր** բառեր (հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող՝ **կուսակցություն, երկրպագահ, խորհրդարան** ևն), **4. մասնագիտական** բառեր (բուն՝ տերմինային նշանակությամբ կամ փոխաբերական իմաստով), **5. կայուն կապակցություններ, կաղապարներ, դարձվածքներ, 6. համագործածական** բառեր:

ԶԼՄ-ների լեզվում **դարձվածքների** կիրառությունը պայմանավորված է ժանրով, նյութի բովանդակությամբ, ինչպես նաև լրագրողի վերաբերմունքով: Դարձվածքները խոսքին հաղորդում են անմիջականություն ու մտերմիկ երանգ, ասելիքը դարձնում պատկերավոր և սեղմ՝ հարկ եղած դեպքում ընդգծելով նաև լրագրողի վերաբերմունքը: Դարձվածքով արտահայտված վերնագիրը ուժեղացնում է ազդեցությունն ընթերցողի վրա, օր.՝ «Միրտը պատգամավորներից **չի կտրվում**», «Եվրոպան **լվանում է ձեռքերը**»: Լրատվամիջոցներով ոչ միայն տարածվում են լեզվում եղած դարձվածքները, այլև դրանց վերագրվում են նոր իմաստներ, կամ ստեղծվում են նորերը: Վերլուծական-հրապարակախոսական ժանրերում և վերնագրերում շատ են հանդիպում դարձվածքների փոփոխված տարբերակներ, ինչպես՝ «Արջը երկրորդ երգը չսովորեց», «Ասա՛ ով է ընկերդ, ասեմ՝ ինչ վտանգներ են քեզ սպառնում»:

Վերջին շրջանում հատկապես ռադիոհեռուստատեսային հաղորդումներում և լրագրային որոշ ժանրերում նկատելի է **հասարակաբանությունների, բարբառային և ժարգոնային** բառերի ոճական կիրառությունը՝ պայմանավորված խոսքին անմիջականություն հաղորդելու նկատառումով. օր.՝ «Մենակ է բիզ-

նեն ու չունի ընկեր. արդեն համարյա լրիվ **տակ տված յուր է գնում**», «Հանրահավաքի բազմամարդությունն այնքան են **խոթում** հանրության աչքը, որ արդեն մարդկանց **գահլան գնում է**»: Որքան էլ հեշտ է դրանցով ոճավորել խոսքը, այդուհանդերձ լրագրողը նշված բառաշերտերից պետք է օգտվի զգուշությամբ, դրանք ծառայեցնի ոճական նպատակների (կերպարի տիպականացում, միջավայրի ստեղծում) և չխաթարի նյութի բովանդակությունը:

ՋԼՄ-ներում լայն կիրառություն ունեն **փոխառությունները**, հատկապես փոխառյալ նորաբանությունները. այս կարգի բառերը կիրառելիս լրագրողը պետք է հաշվի առնի լսարանը՝ ընտրելով առավել հարմար տարբերակը: Նույն ձևով պետք է վարվել նաև այն դեպքում, երբ հայերենը իր բառակազմական միջոցներով է ստեղծում նոր բառ՝ օտար բառի փոխարեն, օր.՝ **ստատուս** (կարգավիճակ), **լոգունգ** (կարգախոս), **մենթալիտետ** (մտածելակերպ, հոգեկերտվածք) ևն:

ՋԼՄ-ների լեզուն հեղեղված է **օտարաբանությունների** բոլոր տեսակներով (արտասանական, բառային, իմաստային և քերականական): Ի տարբերություն բառային օտարաբանությունների (**մեդիա**, **մոբիլիզացիա**, **էքստրադիցիա**, **սայթ**, **չաթ**, **ինֆորմացիա**, **ռեֆերենդում**, **միտինգ**, **բանդա**)՝ քերականական օտարաբանությունները անհարիր են մեր ազգային լեզվամտածողությանը, խարխլում են լեզվի քերականական կառուցվածքը, ինչպես՝ «Գնդապետն իր մոտ է», «Տոնախմբությունը կենտրոնական **հրապարակի վրա է կայանում**»:

Հնաբանությունները ՋԼՄ-ների տարբեր ենթառճերում ու ժանրերում գործածության տարբեր հաճախականություն ունեն, ոճական գունավորումը նույնպես տարբեր է: Եթե լրագրողի ասելիքը վերաբերում է անցյալին, ապա սրանք ստեղծում են բնականության պատրանք, օր.՝ **քանզի**, **վասն**, **լուստ**, **հուստ**, **թագավորաց**, **ցայսօր** ևն: Տեղեկատվական ժանրերում առավել տարածված են գրաբարյան նախդիրներով կապակցությունները (ի, առ, ց), որոնք խոսքին հաղորդում են հանդիսավորություն, ընդգծում են պաշտոնականությունը:

Նորաբանությունները բուն հրապարակախոսական ժանրերի անբաժան ուղեկիցներն են (**աշխատակարգ**, **վեհաժողով**, **ցանցահեն**, **կայք**, **խոսնակ**, **առանձնագրույց**, **ճեպագրույց** ևն), իսկ հեղինակային (դիպվածային) նորաբանություններով հարուստ են հատկապես այն ժանրերը, որոնցում լրագրողն ազատ է իր վերաբերմունքն արտահայտելիս, ինչպես՝ «Առաջիկայում սպա-

սենք **առնետավազքի**», «Հայրենակիցները **վայրենակիցների** վերածվելու հա-
կում ունեն»: Անհատական նորաբանությունները կարևոր դեր ունեն խոսքի
սեղմության, լեզվի մեջ գործող խնայողության սկզբունքի դրսևորման առու-
մով. հատկանիշներ, որոնք շատ կարևոր են հրապարակախոսության մեջ՝
**գրանտակեր, օֆշորահարված, գովազդախեղդ, բարեփողիչ, մտաբորիկ,
չընտրություն, հանքահեն** են:

Լրագրային խոսքում խնայողության և սեղմության միջոց են նաև հապա-
վումները, որոնք լրատվական որոշ ժանրերում ամենաշատ գործածվող բա-
ռերից են:

ԶԼՄ-ներում հաճախադեպ է նաև իմաստային նորաբանությունների գործա-
ծությունը, օր.՝ հարկային **արձակուրդ**, ճանապարհային **քարտեզ**, փաստա-
թղթերի **փաթեթ**, արժեթղթերի **շուկա**, ճանապարհային **քարտեզ**, փողերի
վլացում, բանկային **խողովակ**, **թափանցիկ** ընտրություն են:

ԶԼՄ-ների լեզվում ընդհանուր առմամբ պահպանվում են գրական լեզվի քե-
րականական օրինաչափությունները: Խոսքի ճշտությունն ապահովվելու
նպատակով քերականական նորմերի պահպանումը տեղեկատվական ժան-
րերում պարտադիր է, մյուս ժանրերում ընտրությունը պայմանավորված է
լրագրողի անհատականությամբ:

Ձևաբանական իրողություններից ոճական գործածության հաճախականու-
թյամբ աչքի են ընկնում խոսակցական տարբերակները, օրինակ՝ «Ի՛նչ փա-
ռավոր **տղերք** կային մեր կողքին», «Տիրոջ հոգեբանություն **պտի** ունենաք,
տենց պտի մեծանաք, դաստիարակվեք»: Տեղեկատվական ժանրերում հա-
ճախ են գործածվում գրական-գրաբարյան քերականական զուգաձևերը՝
ստեղծելով հանդիսավոր ոճ, օր.՝ «**Հրապարակավ** ելույթ ունեցողները հերքե-
ցին այդ լուրերը», «Քաղաքական դաշտը վերածվել է **«հաճախորդաց»** տան»:

ԶԼՄ-ների լեզվի շարահյուսական կառուցվածքը հիմնականում նորմատիվ է,
շարադասությունը՝ կանոնական. առանձին ժանրերում, սակայն, ոճական
նկատառումներով կարող է խախտվել գրական նորմը: Նյութի լեզվական
ձևավորումը կատարվում է առաջին հերթին **երկկազմ պատմողական** նա-
խադասություններով, որոնք տեղեկատվական ժանրերի լեզվական հիմքն են:
Ընդհանուր առմամբ, լրատվության մեջ (լուրի գրառում) գերակշռում են
պարզ նախադասությունները, որոնք եղելությունը, դեպքը արձանագրելու
հիմնական միջոցներ են:

Դերբայական դարձվածով կառույցները, հատկապես՝ անորոշ դերբայի գործիական հոլովով կազմվածները, խոսքը դարձնում են սեղմ, տարողունակ, ինչպես՝ «Մեկնաբանելով կատարվածը...», «Վստահեցնելով, որ հարցի լուծումը չեն ուշացնի...», «Այս ամենը համադրելով՝ կարող ենք արձանագրել...» են:

Ջեղված անդամներով նախադասությունները հաճախ են գործածվում որպես վերնագիր, օր.՝ «Աշխատատեղեր՝ ազատամարտիկներին, ռազմամարտական կրթություն՝ երիտասարդներին», «Հանրահավաքից՝ ոստիկանություն» են: Նշված կառույցները գրավում են ընթերցողի ուշադրությունը:

Հաճախադեպ են **բուն հարցական** և **ճարտասանական** հարցական նախադասություններով վերնագրերը, որոնք լարվածություն են ստեղծում, մեծացնում հետաքրքրությունը, ինչպես՝ «Մարզպետի նկարը մոնտաժված է», «Անհատի պաշտամունք ՌԴ-ում», «Նրա օրինակը կտարածվի՞ մյուսների վրա» են:

Անենթակա նախադասություններով շեշտվում է գործողության իմաստը. «Պարտադրում են ժողովրդին», «Ձերբակալվածներին ինչ-որ տեղ տարան»: Դրանք խոսքին հաղորդում են դինամիզմ. գործածական են նաև տեղեկատվական նյութերում, ինչպես՝ «Կինից հաղորդում են», «Դամասկոսից փոխանցում են» են: Հատկապես արդյունավետ է սրանց կիրառությունը վերնագրերում, օր.՝ «Որտե՞ղ են լվանում փողերը», «Նրան ձերբակալել են օդանավակայանում»:

Անդեմ նախադասությունները խոսքին հաղորդում են սեղմություն և հուզականություն. դարձյալ հաճախ են հանդիպում վերնագրերում, օր.՝ «Զանգվածների ոգևորությունը», «Ո՞ւմ հավատալ», «Ինչպե՞ս պարտվել «Եվրատեսիլ»-ում», «Ո՞ր հեծանիվն ընտրել»: Երկարաշունչ վերնագրերը կարող են ձանձրացնել ընթերցողին:

Պահպանելով նյութի հավաստիությունը, հրատապ լինելը՝ լրագրողը կարող է օգտվել գեղարվեստական ամենատարբեր հնարաններից: Առավել գործածական են **մակդիրը**, **փոխաբերությունը**, **համեմատությունը**, **փոխանունությունը**, **շրջասույթը**, որոնց միջոցով երևույթը, իրողությունը ներկայացվում են նոր ու անսովոր նրբերանգներով:

5.5.2. ԳՈՎԱԶԳԻ ԼԵԶՈՒՆ⁴⁸

Գովազդը հայտարարության յուրօրինակ տեսակ է, որը կատարում է երկու գործառույթ՝ **տեղեկատվական** և **ներգործման**: Դրանք փոխկապակցված են: Գովազդատուն շահագրգռված է ներգործման խնդրով, իսկ գովազդատուն՝ տեղեկատվությամբ:

Գովազդային տեքստ գրելը մեծ արվեստ է: Այն ունի իր պահանջները. քիչ բառերի միջոցով առավելագույն տեղեկույթ հաղորդել, կարողանալ հրապուրել սպառողին, վստահություն ներշնչել գովազդվող ապրանքի կամ ծառայության հանդեպ:

Գովազդները լինում են՝ ա) **տեսողական** (տպագիր գովազդ, լուսագովազդ, ֆոտոգովազդ ևն), բ) **լսողական** (ռադիոգովազդ), գ) **տեսալսողական** (հեռուստագովազդ, կինոգովազդ): Դրանց տարածման ուղիները բազմազան են՝ զանգվածային լրատվական միջոցներ՝ ռադիո, հեռուստատեսություն, պարբերական մամուլ, էլեկտրոնային լրատվամիջոցներ, կայքէջեր, պաստառային գովազդներ՝ տեղեկատվական վահանակներ, խոշորածավալ պաստառներ, որոնք ամրացված են սյուների վրա կամ կախովի են, պլանշետային (պատկերներ, որոնք հաջորդաբար փոխվում են էլեկտրաշարժիչի օգնությամբ), խանութների ցուցատախտակներ, լուսատախտակներ, վազող տողեր, առձեռն տրվող գովազդ (թերթեր, թռուցիկներ, հուշանվերներ, խանութներում տրվող զանազան ապրանքներ) ևն:

Գովազդային տեքստերը հաջողված են համարվում, եթե ունեն հստակ կառուցվածք: Սովորաբար տեքստը բաժանվում է երեք մասի՝ **առաջին** մաս, **հիմնական** մաս և **եզրափակիչ** մաս: Առաջին մասը գովազդային ուղերձի կարգախոսն է. այն ապահովում է գովազդի ներգործուն ուժը՝ ձևակերպելով ապրանքի անվանումը: Օր.՝ «Colgate» **ատամի մածուկ**, «Ariel» **լվացքի փոշի**, «Գուդֆին» **բուքմեքերական ցանց** ևն: Հիմնական մասը ամբողջական տեղեկատվություն է ապրանքի կամ ծառայության մասին. այստեղ ածականների և բայերի միջոցով նկարագրվում է ապրանքը. օր.՝ **ատամի մածուկի գովազդում՝ «Ատամների գերազանց** մաքրում: **Սպիտակեցնում է** ատամները...»: Գովազդի արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է հիմնական մասի բովանդակությամբ: Եզրափակիչ մասը (որտեղ կարող են տրվել հեռա-

⁴⁸ «Գովազդի լեզուն» բաժնի տեսական նյութը որոշ կրճատումներով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Ադիլխանյան Ա.**: Տե՛ս **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 394-403:

խոսի համար(ներ)ը և հասցեն) կարգախոսի և հիմնական մասի օգնությամբ ձևավորում է դրական վերաբերմունք ու պոտենցիալ սպառողին մղում համապատասխան «վերաբերմունքի»:

Գովազդային տեքստերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ: Լեզվական կամ խոսքային ուղերձները կարող են ուղեկցվել արտալեզվական միջոցներով՝ շարժումներ, գունային երանգներ, գրազարդումներ, նկարներ, երաժշտություն ևն:

Բանավոր խոսքում կարևորվում է հնչերանգի, շեշտի, առոգանության դերը: **Դադարը** առավել կարևոր դեր է կատարում հեռուստագովազդում. այն հեռուստադիտողին հնարավորություն է տալիս ուշադրություն դարձնելու այս կամ այն լեզվատարրի վրա, օր.՝ «Քե՛զ համար, ա՛յս ամառ: Միայն հիսո՛ւն օր, միայն ա՛յս ամառ»: Չայնի ռիթմը, ելևէջումը, խոսքի արագությունը և նման այլ միջոցներ տեղին և նպատակային գործածվելիս մեծ չափով մեծացնում են գովազդի ազդեցությունը:

Գովազդային տեքստերի **բառապաշարը** ներառում է թե՛ գրական, թե՛ խոսակցական ու ժարգոնային բառեր: Գրական բառապաշարով կազմված տեքստերը լայնորեն տարածված են և հաջողություն են բերում գովազատուներին: Նպատակահարմար չէ գովազդային տեքստերից խոսակցական բառերի իսպառ բացառումը, քանի որ դրանց միջոցով կարելի է անմիջաբար ազդել մարդու տրամադրվածության վրա և գովազդը դարձնել ավելի ընկալելի: Հարկ է խուսափել ժարգոնային բառերով տեքստեր մատուցելուց. դրանք շատ արագ յուրացվում են հատկապես դեռահասների կողմից և խաթարում են նրանց լեզվամտածողությունը: Բարեբախտաբար, վերջին տասնամյակում ժարգոնային բառերով կազմված տեքստերը էապես նվազել են:

Գովազդներում հաճախ գործածվում են նաև **դիպվածային նորաբանություններ**, ինչպես՝ «Մի՛ հապաղիր, **սնկկերսի՛ր**», **տերմիններ**, որոնց կիրառությունը հիմնականում պայմանավորված է գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումները հասարակությանը ներկայացնելու հանգամանքով՝ **դիզայն, պլանշետ, արքեսուար, սմարթֆոն, մալուխ, ինտերիեր, ֆաստ կրեդիտ** ևն:

Գովազդային տեքստերի բառապաշարում առանձնակի տեղ են գրավում **օտար բառերը**. դրանք հիմնականում ապրանքանիշի կամ ծառայությունների անվանումներ են: Անշուշտ, օտար բառերի չարաշահումը դժվարացնում է գովազդային տեքստերի ընկալումը, սակայն դրանց տեղին գործածությունը

ձևավորում է գնահատողական վերաբերմունք, որը շատ անհրաժեշտ է գովազդատուին, օր.՝ **բրենդային բուտիկ, իդեալական** մաքրություն, **օրիգինալ** պայուսակներ են:

Գովազդային տեքստերում ամենից հաճախ գործածվում են **գոյականները**, որովհետև գովազդը պահանջում է մեծաքանակ ապրանքների ու ծառայությունների անվանումներ: Գոյականների գործածության շնորհիվ կարելի է համապատասխան եզրակացություն անել ներմուծվող կամ արտադրվող ապրանքների տեսականու, մատուցվող ծառայությունների մասին:

Ածականն անմիջապես բնութագրում է առարկան, երևույթը՝ նպաստելով տեքստի սեղմությանն ու հակիրճությանը, օր.՝ «**աննախադեպ, շմեցուցիչ** զեղչեր», «**հարմարավետ** համարներ», «**շքեղ** լողավազաններ», «**անկրկնելի** արդյունք» են:

Դերանունների միջոցով մի տեսակ անմիջական կապ է հաստատվում գովազդատուի և ունկնդրի կամ ակնդրի միջև. «**Դու** կապ ունես», «**Միացե՛ք իրար** սուպեր գնով»:

Մեծ է նաև **բայերի** դերը: Կան հանգուցային բայեր, որոնք առաջարկում, խրախուսում կամ բնութագրում են որևէ ապրանք կամ ծառայություն: Այդ բայերից են՝ **հիշել, խոսել, հոգալ, վայելել, հրավիրել, դիմել, զանգահարել, առաջարկել, գնել**: Օր.՝ «**Խաղացե՛ք ու շահե՛ք**», «**Շտապե՛ք, միացե՛ք** բազմաալիքային հեռախոսահամարին»:

Գովազդային տեքստերում հաճախ են գործածվում նաև **թվականներ**, որոնք մատնանշում են առարկաների թիվը, քանակը, կարգը, որևէ իրադարձության ժամանակը կամ վայրը: Օր.՝ «...Դեկտեմբերի **17-ից 40%** զեղչ», «Ստացե՛ք տարեկան մինչև **12,5%** տոկոսադրույքով կայուն եկամուտ»:

Գովազդային տեքստերը կառուցվում են հիմնականում **անվանական անդեմ** նախադասություններով՝ «**Արարատ: Զգացմունք բացահայտող պահեր**», «**Միգ: Արագ միջոց ցավի դեմ**». դրանք խոսքին հաղորդում են սեղմություն և արագություն:

Տեքստին հուզականություն հաղորդելու նպատակով գովազդներում գործածվում են ոճական-արտահայտչական միջոցներ, որոնք անմիջականորեն ազդում են մարդու ոչ միայն մտքի, այլև զգայական աշխարհի վրա: Ամենագործածականը **բառային կրկնությունն** է: Այն ապահովում է գովազդի ազդեցությունը մարդու ենթագիտակցության վրա: Օր.՝ «**Միայն** թարմ, **միայն** էկոլո-

զիսպես մաքուր չրեղեն», «**Ոսկե** ժառանգություն **ոսկե** ակնթարթների համար»:

Մեծ է նաև **մակդիրի** դերը (**ոսկեշող** խաղող, **արևաբույր** կոնյակ, **խելահեղ** շահում նն). իր բնութագրական որակներով և պատկերավորությամբ այն հրապուրում է սպառողին: **Շարադասությունը** ևս գովազդներում մեծ նշանակություն ունի: Շարադասական խախտումները անմիտ ու անհեթեթ են դարձնում գովազդը, ինչպես՝ «Աշխարհահռչակ ֆրանսիական մագերի ներկեր», «Աննախադեպ ամանորյա զեղչեր», «Ամբողջ տղամարդկանց տեսականին 70% զեղչ»:

Քանի որ գովազդները նախատեսված են հասարակության լայն խավերի համար, ուստի գովազդային տեքստերում անթույլատրելի են լեզվական սխալները. դրանք ազդում են մարդկանց ոչ միայն ենթագիտակցության, այլև հոգեբանության վրա: Բոլոր դեպքերում գովազդի հաջողության գրավականը տեքստի հաջողված բովանդակությունն ու մատուցման եղանակն են:

Վարժություններ և առաջադրանքներ

1. ԶԼՄ-ներին, մասնավորապես մամուլին բնորոշ ո՞ր հատկանիշները կանանձնացնեն՝

- ա)** դիպվածային, ժարգոնային, բարբառային, օտար բառերի գործածություն,
- բ)** գիտաբառերի գործածություն,
- գ)** կաղապարային արտահայտությունների կիրառություն,
- դ)** լրատվության և մեկնաբանության սահմանազատում,
- ե)** ռեպրտաժներում սեփական մեկնաբանությունների և դատողությունների ներառում,
- զ)** նյութի ճշգրտություն և բազմակողմանիություն,
- է)** պիտակավորումից և վիրավորական արտահայտություններից զերծ մնալու վարքականոնի պահպանում,
- ը)** քաղաքական անկախ դիրքորոշում:

2. Փոփոխությունների ենթարկելով տրված դարձվածքներն ու թևավոր խոսքերը՝ գործածե՛ք իբրև վերնագրեր:

Եկա, տեսա, հաղթեցի; գրոյի հավասարեցնել, սատանի ձին նստել, շունը տիրոջը չճանաչել, երկու քարի արանքում, յուրոտ պատատ, Սիզիփոսի աշխատանք, պղտոր ջրում ձուկ որսալ, դուդուկի տակ պարել, հողմադացների դեմ կռվել, քարից հաց քամել, փակագծերը բացել, ջրի գին:

3. Տեքստերում գտե՛ք ՁԼՄ-ների լեզվին հատուկ բառապաշարային իրողությունները:

ա) Կառավարությունը 2016 թ.-ը հայտարարել է հավասար հնարավորությունների տարի:

Այս տարի նախատեսվում է հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել ևս 20 միջնակարգ դպրոցներում: Ներկայումս հանրապետությունում գործում է ներառական կրթություն ապահովող շուրջ 150 դպրոց: Մինչև 2022 թ.-ը ծրագրվում է ստեղծել համընդհանուր ներառական կրթության համակարգ: ՀԿ-ների ներկայացուցիչները կարծում են, որ արդեն ժամանակն է շեշտը դնելու հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական կրթության վրա: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հաշմանդամը միայն անվասայլակով մարդը չէ: Հաշմանդամը կարող է ունենալ ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր կամ հոգեկան խնդիրներ, ուստի և հավասարապես պետք է բավարարվեն նաև կողմնորոշվելու խնդիր ունեցող մարդկանց կարիքները: Սոցիալական պատրոնաժի խնդիրը ևս բավականին կարևոր է: Հասարակությունը դեռևս այք է փակում այս խնդրի լուծման վրա, այնինչ անհրաժեշտ է, որ երեխաները, ծնողներից բացի, նաև այլ խնամակալ-ուղեկցողներ ունենան հասարակության մեջ:

բ) Արվեստագետները ևս միացել են հին շենքերը քանդելու դեմ բողոքին. «Մեր հստակ պահանջն է՝ դադարեցնել պատմամշակութային հուշարձանների շարունակական ոչնչացումն ու որդեգրել դրանց պահպանման, խնամքի և մշակութային ժառանգության վերականգնման պետական քաղաքականություն», - ասվում է «Քաղաքացիական պահանջագրի» մեջ: Որոշ արվեստագետներ նույնպես միացել են այդ պահանջագրին և կոչ են անում դադարեցնել Երևան քաղաքում հին շենքերը քանդելու գործընթացը:

Լրագրողների հետ հանդիպած արվեստագետները ներկայացրին իրենց տեսակետները:

«Մարդիկ կենտրոնը սարքել են շենքերի կույտ, որտեղ ոչ ոք չի էլ բնակվում: Աբովյանի վրա գտնվող հրշեջների շենքի ճարտարապետը Երևանի առաջին ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանն է եղել, ու հիմա որոշել են քանդել այդ շենքը: Երևանը խուլ գյուղից եկած աղջկա է հիշեցնում, որը 3 կգ շաքար է դեմքին ծեփել և իրեն թվում է՝ դա է գեղեցկությունը: Ո՛չ, գեղեցկությունը պարզության մեջ է», - ասաց երգիչ-երգահան Լիլիթ Պիպոյանը:

«Երևանը կենդանի օրգանիզմ է, որը կարոտում է, հիասթափվում, սիրում ու նեղանում: Երևանը, ինչպես Ֆորշն է ասում, տուն ու շենք չէ, Երևանը մենք ենք: Այսօր մեր քաղաքը թիկունքի կարիք ունի, և եթե չկարողանանք հենց այսօր պաշտպանել քաղաքը, մեր՝ այստեղ մնալն էլ ի՞նչ արժեք ունի: Քաղաքի դիմանկարը հիմա աղավաղված է, և ոչ թե քաղաքաշինությամբ են հիմա զբաղված, այլ շենքաշինությամբ», - ասաց դերասան Միքայել Պողոսյանը:

գ) ԱՄՆ-ում գտնվող այս վայրը միակն է, որտեղ ձկներն անցնում են ճանապարհը: Ամեն տարի սաղմոններն արգելափակում են Վաշինգտոն նահանգի երթևեկությունը: Վաշինգտոնում գտնվող Սքոքոմիշ-Վելլի Ռոուդը երկկողմանի փողոց է, որտեղով անցնում են մեքենաները: Բայց նոյեմբերին ճանապարհը լցվում է ձկներով, որոնք դուրս են գալիս մոտակա Սքոքոմիշ գետից և հատում ճանապարհը: Սա դարձել է ամենամյա միջոցառման պես մի բան, որն անվանում են «Մաղմոնի վագր»:

Վարորդների համար նույնիսկ ճանապարհային նշան կա. «Զգուշացե՛ք. դանդաղ և ուշադի՛ր վարեք, ձուկն անցնում է ճանապարհը»: «Սա հազվագյուտ երևույթ է, այն տեղի է ունենում գրեթե ամեն տարի նույն վայրում», - ասում է Վաշինգտոնի՝ ձկների և վայրի բնության դեպարտամենտի վերլուծաբան Ահարոն Դուֆալուն:

Վերլուծաբանի խոսքով՝ ձկները ճանապարհին են հայտնվում մոտակա ձկնաբուծարանից, որտեղ նրանց բուծում են և բաց թողնում գետերը: Սակայն ձկներից շատերը շեղվում են բուն ճանապարհից. որոշ սաղմոններ վերադառնում են գետը, բայց մեծ մասը սատկում է դաշտերում՝ դառնալով պարարտանյութ կամ սնունդ:

Հատկանշական է, որ Հուդի ջրանցքով «ճանապարհորդող» սաղմոնի մի տեսակը նշվում է որպես «վերացման վտանգի տակ» գտնվող ձկնատեսակ:

4. Ոճական և իմաստային ի՞նչ երանգ են խոսքին հաղորդում մամուլում գործածվող ժարգոնային, խոսակցական բառերը: Քննարկե՛ք բերված օրինակները:

ա) Հանրապետական թեկնածուն «քլնգում» է Հ. Քլինթոնին:

բ) Քաղաքական որոշ անառողջ ուժեր գողական սխողկաների միջոցով են փորձում հարցեր լուծել և զբաղված են մուտիլովկաներով և ռազբոռկաներով:

գ) Որոշ այսպես կոչված «գործարար» պաշտոնավորներ կարողացան գործ «կպցնել» արտասահմանյան ընկերությունների հետ:

դ) Երկրի այսօրվա տնտեսական վատթար իրավիճակի անմիջական պատասխանատու որոշ պաշտոնյաներ կարողացան ճիշտ ժամանակին «թոնել» հանրապետությունից:

ե) «Ազգընտիր» որոշ պատգամավորներ հավես չունեն հանրաքվեի արդյունքների մասին խոսելու:

զ) Կառավարությունն ու ՀԷՑ-ը «քցում» են ժողովրդին. սպառողներն ահագանգում են:

է) Սոցիալապես անապահով խավը մի կերպ յուր է գնում չնչին նպաստներով:

ը) Կոպիտ ասած՝ Վ. Ժիրինովսկու և նմանների հակաթուրքական հայտարարությունները մեզ կուտ են տալիս և, անկեղծ ասած, դժվար է լինելու այդ կտից հրաժարվելը:

թ) Ֆեյքերի ինստիտուտը կատարյալ է. մարդն իրական է, բայց իր փոխարեն գրում, մեկնաբանում ու սպառում են:

ժ) Հաքերները կոտրել են մի քանի կայքեր:

ժա) ՀՀ կառավարությունը գնում է «վա բանկ». տնտեսական հետևանքները երկրի համար անկանխատեսելի են:

5. Գտե՛ք դիպվածային բառերը: Ի՞նչ նպատակով են դրանք ստեղծվել:

ա) Այսօր համացանցում կարելի է գտնել բազմաթիվ նոր կայքեր, որտեղ դժբախտակից ընկերները միմյանց օգնում են տարբեր հարցերում:

բ) Մեր ազգի մեծ մասը համալսարանացավ է ընկել. բոլորն ուզում են, որ իրենց երեխան բարձրագույն կրթություն ստանա:

գ) Ինչպե՞ս են Հայաստանում աստղ կամ աստղուհի դառնում. մեկնաբանում է Վահրամ Սահակյանը:

դ) Պաթոսահայ է կոչվում ողբահայի և մուննաթահայի քնարերգական սիմբիոզը:

ե) Ֆեյսբուքահայերի ու ֆեյսբուքահայուհիների մեջ քիչ չեն լատինատառ կամ կիրիլիցայով գրողները, որոնք միշտ «хнарт ен вор хай ен»:

զ) . . . Գլխի ընկա, որ «Նաիրի» բառը ոչ թե գոյական է, այլ, եթե միայն կարելի է քերականության մեջ այսպես ասել, մագութիհամոյական (ԵՉ):

է) Ոմանց լեզվաբուժարան է պետք ուղարկել:

ը) Մեր պաշտոնական ոճը հայերեն չէ, բյուրոկրատերեն է:

6. Վերականգնե՛ք փոփոխված դարձվածքների սկզբնաձևերը. ինքներդ բերե՛ք նման օրինակներ.

ոտքը թոշակի չափ մեկնել -

ռուսական մուրճի և արևմտյան սալի արանքում -

արաբների ձեռքով Սիրիայից շագանակներ հանել -

խելքը սև խավիարի հետ ուտել -

վարկաբեկված դեմքը փրկել -

երկու տնտեսվարողների արանքում -

ոտքը սեփական կուսակցության վերմակի չափով մեկնել -

7. Գրե՛ք հողված հետևյալ թեմաներից մեկով.

ա) «Երիտասարդությունը և հասարակությունը. իրավունքներ ու պարտականություններ»,

բ) «Նոր տեխնոլոգիաների դերը կրթության ոլորտում»,

գ) «Արտերկրում կրթություն ստանալու շարժառիթները»,

դ) «Ինչո՞ւ ընտրել մաթեմատիկա (ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա ևն) մասնագիտությունը»:

8. Օգտվելով համացանցից՝ շարունակե՛ք և ավարտե՛ք հայերի կողմից կատարված հայտնագործությունների մասին հողվածները. վերնագրե՛ք դրանք:

1. Հայագգի Մայքլ Տեր-Պետրոսյանը (1925-1996 թթ.)՝ ամերիկահայ ֆիզիկոս, պոզիտրոնային ճառագայթային տոմոգրաֆիայի հայտնագործողներից մեկը.....

2. Ռեյմոնդ Վահան Դամադյան. գյուտարար, ով հայտնագործել է մագնիսական ռեզոնանսային պատկերի ախտորոշման սարքը....
3. Բանկոմատի գյուտարար Լյուտեր Ջորջ Միմիջյանը, ով ունի ավելի քան 200 գյուտի հավաստագիր
4. Գերհամակարգչի առաջատար մասնագետ Բորիս Արտաշեսի Բաբայանը՝ եվրոպական գիտնականներից առաջինը, ով ստացել է Intel Fellow կոչումը....
5. Մեքենաների ապակիների մաքրման խոզանակների և այլ գյուտերի հեղինակ Արտաշես Հայկանյանը, որը ստեղծել է առաջին պլաստիկ կոնտեյները....
6. Արտեմ Միկոյանը՝ ՄԻԳ ինքնաթիռների ստեղծողը,
7. Հովսեփ Աղամյանը՝ սև ու սպիտակ և գունավոր հեռուստացույցների, ինչպես նաև առաջին տեսանվագարկչի հեղինակը....
8. Քրիստոֆեր Տեր-Սերոբյանը, ով ստեղծել է ամերիկյան դոլարի կանաչ գույնը, որը...

9. Նշված հատկանիշներից որո՞նք են բնորոշ համացանցային լեզվին.

բարդ ստորադասական նախադասություններ, հապավումներ, գրաբարյան քարացած ձևեր, համառոտագրություններ, ժարգոնային բառեր, նորաբանություններ, հնաբանություններ, միակազմ նախադասություններ, ճարտասանական հարց, օտարաբանություններ, բանաստեղծական բառապաշար:

10. Որո՞նք են, ըստ ձեզ, համացանցում հայերենը լատինատառ (կամ որևէ այլ լեզվի այբուբենով) գրելու պատճառները՝

- ա) ծուլանում են փոխել լեզուն,
- բ) լատինատառն ավելի հարմար է և արագ,
- գ) լատինատառ գրելիս տառասխալները չեն երևում,
- դ) հայատառ գրելու տեխնիկական հնարավորություն չկա,
- ե) այլ պատասխան:

11. Եթե ընտրել եք նախորդ վարժության 2-րդ տարբերակը, հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

12. Գովազդի ի՞նչ տեսակներ գիտեք: Ո՞ր տեսակն է ավելի շատ ներգործում ձեզ վրա և ինչո՞ւ:

13. Պատասխանե՛ք հետևյալ հարցերին՝ հիմնավորելով պատասխանները:

ա) Երբևէ նկատե՞լ եք գովազդում եղած արտասանական, բառագործածության, քերականական և այլ սխալներ:

բ) Ո՞ր գովազդն է ավելի դուր գալիս. երբ գրակա՞ն է լեզուն, թե՞ երբ կան խոսակցական, ժարգոնային բառեր, արտահայտություններ:

գ) Ուշադրություն դարձնո՞ւմ եք արդյոք գովազդողի ձայնին, հնչերանգին, խոսքի տեմպին, բարբառային կամ ոչ գրական արտասանությանը:

դ) Ո՞ր գովազդն է մեծ տպավորություն թողել Ձեզ վրա:

ե) Ի՞նչ նշանակություն ունեն գովազդողի անձը և անձնային հատկանիշները:

14. Գրե՛ք կամ բանավոր ներկայացրե՛ք փոքրիկ (լսողական, տեսողական, տեսալսողական) գովազդ (օրինակ՝ վաճառում եք որևէ իր, առաջարկում եք Ձեր ծառայությունները որևէ ոլորտում ևն):

15. Բերե՛ք գովազդային տեքստերի օրինակներ, որոնցում, ըստ Ձեզ, կան լեզվական տարաբնույթ սխալներ. ուղղե՛ք դրանք և բացատրե՛ք:

Գրականություն

1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Եր., 2001:
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2017:
3. Գևորգյան Գ., Վարդանյան Գ., Գործառական հայերեն, Եր., 2019:
4. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Ոճագիտություն, տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն, Եր., 2018:
5. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984:
6. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, Եր., 2010:
7. Քաղաքացիական իրավական պայմանագրեր (օրենսդրական պարզաբանումներ), խմբ.՝ Վլ. Նազարյան, Եր., 1999:
8. «Разговорная речь в системе функциональных стилей современного русского литературного языка», Саратов, 1992.

ՄԱՍ 6

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ ԵՎ ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍՏ⁴⁹

6.1. Հրապարակային խոսք (260): 6.2. Բանավեճի արվեստ (267):

6.1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Հրապարակային խոսքին մեծ կարևորություն է տրվել դեռևս հնուց. նրա արվեստին տիրապետում էին Հին աշխարհի տարբեր երկրներում: Եվ, այնուամենայնիվ, պերճախոսության հայրենիքը Հին Հունաստանն է:

Հայ իրականության մեջ հնում հրապարակային խոսքը զարգանում էր առավելապես հոգևոր և որոշ չափով՝ ռազմական ոլորտներում (հիշենք Վարդան Մամիկոնյանի նշանավոր խոսքը՝ ուղղված զորականներին), իսկ հետագա դարերում՝ հիմնականում հոգևոր ոլորտում: Հրապարակային խոսքը միշտ էլ կիրառվել է, քանի որ միշտ էլ կարիք է լինում դիմելու մարդկանց՝ նրանց որևէ բան հաղորդելու, քարոզելու, համոզելու, ոգեշնչելու և շատ ու շատ այլ նպատակներով:

Ուսումնասիրողներն առանձնացրել են հրապարակային խոսքի տարբեր տեսակներ՝ մեծ մասամբ հիմք ունենալով նրա դրսևորման բնագավառները: Դասակարգումներն այս առումով շատ բազմազան են: Այսպես՝ ռուս ուսումնասիրողներից շատերը կիրառում են հետևյալ դասակարգումը, որի համար ընդհանուր առմամբ հաշվի են առնում իրադրությունը, թեման և նպատակը⁵⁰:

⁴⁹ «Հրապարակային խոսք և բանավեճի արվեստ» բաժնի տեսական նյութը որոշ կրճատումներով ներկայացվում է ըստ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի համապատասխան բաժնի, հեղինակ՝ **Սարգսյան Ա.**: Տե՛ս **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 441-468:

⁵⁰ Տե՛ս **Кохтев Н.**, Основы ораторской речи, М., 1992:

ԵԼՈՒՑՑԻ ՄԵՈՒՑ	ԵԼՈՒՑՑԻ ՏԵՄԱԿ
Ակադեմիական	<i>դպրոցական և բուհական դասախոսություններ գիտական զեկուցումներ գիտական տեսություններ գիտական հաղորդումներ գիտահանրամատչելի դասախոսություններ</i>
Դատական	<i>դատախազական (մեղադրական) փաստաբանական (պաշտպանական)</i>
Սոցիալ-քաղաքական	<i>զեկուցում (համագումարում, նստաշրջանում, ժողովում ևն) խորհրդարանական հանրահավաքային ռազմահայրենասիրական դիվանագիտական քարոզական քաղաքական տեսություն</i>
Սոցիալ-կենցաղային	<i>հորեյանական ողջույնի բաժակաճառ (կենաց) ընդունելության դամբանական</i>
Հոգևոր (եկեղեցա- աստվածաբանական)	<i>խոսք (քարոզ) պաշտոնական եկեղեցական</i>

Հրապարակային խոսքի ամբողջականությունը պայմանավորվում է թեմայի միասնականությամբ, ամբողջական հատվածների ճիշտ դասավորությամբ և ցանկալի իմաստի հստակ ձևակերպմամբ: Խոսքը պետք է լեզվական ու ոճական առումներով ճիշտ կառուցվի, ինչպես նաև ուղեկցվի համապատասխան պահվածքով, ունենա հուզական համապատասխան երանգավորում ևն: Հաջող ելույթ ունենալու համար կարևոր են նաև ուրիշ գործոններ՝ խոսողի ձայնը, արտասանական հատկանիշները, արտաքինը ևն:

Կարևոր է ելույթի տեքստի պատրաստումը: Արդյոք անհրաժեշտ է նախօրոք լիովին նախապատրաստել ելույթի տեքստը. այս հարցի վերաբերյալ տեսակետները տարբեր են: Մասնագետների մի մասի կարծիքով՝ նախապես պետք չէ ոչինչ գրի առնել. հարկավոր է միայն ուսումնասիրել անհրաժեշտ նյութերը՝ օգտվելով տարբեր աղբյուրներից: Մյուս մասն առաջարկում է ելույթին նախապատրաստվել, սակայն ելույթը լիովին գրի չառնել, այլ համառոտ ձևակերպումներով գրառումներ անել և դրանցից օգտվելով՝ ելույթ ունենալ: Ուրիշներն էլ ճիշտ են համարում ելույթը լիովին գրելը, մանրա-

կրկիտ մշակելը և դրանից չշեղվելը: Դրանից բացի՝ հարց է ծագում, թե արդյոք ելույթն ընթերցե՞լն է ճիշտ, թե՞ նախօրոք սովորելն ու բանավոր խոսելը:

Իհարկե, բանավոր խոսելն ավելի լավ տպավորություն է ստեղծում, սակայն նախապատրաստվելու և ելույթ ունենալու պարտադրանք չի կարող լինել: Նախ՝ կարևոր է հռետորի անհատական մոտեցումը, և բացի այդ՝ ելույթին առնչվող տարբեր հանգամանքներ թելադրում են իրենց պայմանները:

- Նպատակահարմար է հնարավորության դեպքում հանգամանորեն նախապատրաստվել ելույթին:
- Նախապատրաստվելիս պետք է օգտվել հնարավոր բոլոր աղբյուրներից՝ հանրագիտարաններ, տեղեկատուներ, համացանցային կայքեր ևն: Կարելի է գտնել նաև համապատասխանող առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, առակներ, հումորային զրույցներ ևն ու, պայմանավորված ասելիքի բնույթով, ելույթի մեջ ըստ անհրաժեշտության գործածել:
- Եթե ելույթը գրի առնելը պարտադիր չէ (նախօրոք թարգմանելու կամ այլ պատճառով), ապա նախապատրաստվել պետք է ըստ անհատական ընտրության՝ համակարգված գրառումներ կատարելով, տեքստն ամբողջությամբ գրելով ևն: Եթե պարտադիր չէ ելույթն ընթերցելը, պետք է ձգտել հնարավորության դեպքում բանավոր ելույթ ունենալու:
- Քանի որ հնարավոր են դեպքեր, երբ հանպատրաստից ելույթ ունենալու անհրաժեշտություն կառաջանա, ապա պետք է ընդհանրապես միշտ էլ հետաքրքրվել հասարակական կյանքում կատարվող իրադարձություններով, արվեստի պատմությամբ, գիտության նվաճումներով, մի խոսքով՝ ձգտել լինելու բազմակողմանիորեն զարգացած, այսինքն՝ խոսել հանպատրաստից, բայց ոչ անպատրաստ:

Հրապարակային խոսքը, ինչպես ամեն մի գրավոր կամ բանավոր տեքստ, ունի իմաստակառուցվածքային մասեր: Սովորաբար առանձնացնում են հրապարակային խոսքի երեք մաս՝ սկզբնամաս, հիմնամաս, ավարտամաս: Հայ ճարտասանության մեջ տիրապետողը և առավել ընդունելին ավանդաբար պահպանված վեցմասյա դասակարգումն է՝ **առաջաբան, առաջարկություն, պատմություն, ցուցում, հորդոր և վերջաբան**⁵¹: Սակայն ելույթի ինչ մասեր էլ

⁵¹ Տե՛ս Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2006, էջ 85-86:

առանձնացվեն, ամենակարևորն այն է, որ ելույթին բնորոշ լինեն նյութի միասնականությունը, ասելիքի մասերի լեզվատրամաբանական փոխկապակցվածությունը, ինքնատիպությունը, թարմությունը:

Խոսքում կարող են գործածվել ինչ-ինչ օրինակներ կյանքից, տարբեր գրույցներ, անսպասելի ձևակերպումներ են, այսուհանդերձ խոսքը չպետք է խճողված լինի զանազան պատմություններով, ասույթներով նն: Գնահատելի է պարզ, բայց ոչ պարզունակ խոսքը: Ամեն ինչ պետք է լինի տեղին, չափավոր ու տրամաբանված:

Հրապարակային խոսքի **առաջաբանը** կարևոր դեր ունի և կատարում է երկու հիմնական գործառույթ՝ հոգեբանական (կապ ստեղծել լսարանի հետ) և բացատրական (հիմքեր ստեղծել՝ հետագայում ասվածը լավ ըմբռնել տալու համար): Առաջաբանը պետք է լինի սեղմ, հետաքրքրող և տրամադրող: Նրա միջոցով ունկնդիրները պետք է պատկերացում կազմեն ելույթի ընդհանուր ուղղվածության մասին:

Առաջարկության մեջ պետք է ուրվագծվեն խոսքի հետագա զարգացումները: Դրանով պարզ են դառնում խոսողի մտադրություններն ու նպատակները, առաջ քաշած խնդիրները, նկարագրվում է ելույթի նպատակային ուղղվածությունը, թվարկվում կամ կարճ նկարագրվում են այն խնդիրները, որոնց մասին պետք է խոսվի պատմության մեջ: Հասկացական առումով կարևորվում է այն, որ նշվում է թեմայի առանձնահատկությունը, բնորոշվում հրատապությունը և հասարակական հնչեղությունը:

Պատմությունը ելույթի հիմնական մասն է: Հենց այստեղ են ներկայացվում խնդրի բուն էությունը, բովանդակային փաստական տեղեկությունները: Փաստական կամ տեսական նյութով հագեցվածության աստիճանը պայմանավորված է խոսքի բնույթով, թեմայով, լսարանի առանձնահատկություններով: Պատմությունը պետք է շարադրել տրամաբանական հաջորդականությամբ, հստակ և առանց ձգձգելու:

Փաստարկումը (ցուցումը) հաջորդում է պատմությանը: Փաստարկման միջոցով խոսողը հիմնավորում է ասվածը: Փաստարկումն առաջին հերթին պետք է հիմնվի տրամաբանության օրենքների վրա, սակայն հնարավոր է, որ ելույթ ունեցողը դիտավորյալ դիմի այլ միջոցների (հոգեբանական ազդեցության, բառախաղերի են), եթե չկան տրամաբանական բավարար հիմքեր:

Հորդորը հաջորդում է փաստարկմանը: Հորդորի միջոցով խոսողը նախապատրաստում է ավարտը՝ մեկ անգամ էլ շատ սեղմ ներկայացնելով ասվածի բուն էությունը և հուզական նոր լիցք հաղորդելով:

Վերջաբանով ամփոփվում է ասվածը: Վերջաբանները տարբեր են լինում՝ պայմանավորված խոսքի բնույթով, նյութով, խոսողի նպատակադրմամբ ևն, սակայն շատ կարևոր է տպավորիչ ավարտը, որի շնորհիվ խոսքը երկար է հիշվում:

Խոսքն ընդհանրապես և հրապարակային խոսքը մասնավորապես պետք է լինի **հստակ, հասկանալի, արտահայտիչ**: Դրա համար հռետորը պետք է թե՛ լեզվական գիտելիքներ ունենա, թե՛ ընդհանրապես զարգացածության բարձր աստիճան: Լեզվական առումով կարևոր են ուղղախոսական նորմերի պահպանումը, ճիշտ բառընտրությունը, քերականական միջոցների ճիշտ կիրառությունը, ոճական համապատասխանությունը: Սրանցից բացի՝ կարևոր են շարժումները, հագուստը, սանրվածքը ևն:

Պետք է հաշվի առնել **տպավորության կարևորությունը**: Խոսքը մեծ ուժով է ներազդում, երբ թարմ է ու ինքնատիպ: Ծամճմված, ստանդարտ արտահայտություններ պարունակող խոսքը հետաքրքրություն չի առաջացնի և տպավորություն չի գործի. արդեն գիտեցածը գրավիչ չէ:

Խոսողի **ձայնը, խոսքի տեմպը, ռիթմը, տոնը, դադարները** ևս շատ կարևոր են: Ճարտասանի բնատուր հնարավորությունները, արտասանական հատկանիշները պետք է համապատասխանեն ասվածի բովանդակությանը: Եթե հռետորը տարբեր պատճառներով ստիպված է մինևույն լսարանի առջև մի քանի անգամ ելույթ ունենալ կամ էլ տարբեր լսարանների առջև նույն թեմայով ելույթ ունենալ, ապա նրա գործը խիստ դժվարանում է: Անհրաժեշտ է գտնել նորանոր ձևեր ու միջոցներ, բովանդակային հավելումներ, որպեսզի խոսքը ձանձրալի չդառնա:

Խոսքը պետք է լինի **պարզ ու բնական**. ոճական տարբեր միջոցները, դարձվածային միավորները, թևավոր խոսքերը, տարբեր աղբյուրներից մեջբերումները ևն պետք է կիրառվեն տեղին և չափավոր: Ելույթի ծավալը այնքան էլ էական չէ. իհարկե, այն ընդհանուր առմամբ պետք է համապատասխանի իրադրությանը, ընդունված նորմերին ևն, սակայն առավել կարևորը ասելիքի ամբողջական լինելն է:

Վարժություններ ու առաջադրանքներ

1. Ի՞նչ կառուցվածք ունի հրապարակային խոսքը: Որո՞նք են հրապարակային խոսքի հիմնական հատկանիշները:

2. Գտե՛ք հրապարակախոսական ոճին բնորոշ առանձնահատկությունները: Որոշե՛ք հրապարակային էլոյթների տեսակները:

ա) Այն, ինչ ուզում ենք մենք հիմա անել, այդ հավատի վերականգնումն է, այսինքն՝ ավելի շատ բարոյահոգեբանական նշանակություն ունի հայ ժողովրդի համար ընդհանրապես, Ղարաբաղի համար՝ մասնավորապես: Մանավանդ որ դարաբաղցին կարծում է, թե իրեն իսպառ մոռացանք, և թե՛ Ղարաբաղում, թե՛ Հայաստանում այն տպավորությունն է իշխում, որ մենք, ժողովրդական կոպիտ արտահայտություն պիտի գործածեմ, «էջը կերանք, պոչին խոռվեցինք»: Մինչդեռ դեռևս մայիսի կեսերին ձեր բոլորի, մեր բոլորի ուժերով ռազմական խնդիրներն արդեն լուծել էինք, ռազմական խնդիր չէր մնացել: Սակայն (վաղուց սպասվում էր) թշնամին համախմբվեց, ինչպես մենք էինք համախմբված, և արմատական փոփոխությունների դիմելով՝ վճռական գրոհի անցավ, որպեսզի ի չիք դարձնի մեր նվաճումները: Եթե մենք նման բան թույլ տանք, դավաճանություն կատարած կլինենք մեր ոչ միայն զոհված, այլև վիրավոր ընկերների նկատմամբ, որոնք այս պահին գամված են անկողիններին և չեն կարողանում կռվել: Ավելի լավ չէ՞ր լինի՝ են գլխից մարտի չելնեինք, զուր արյուն չթափվեր:

.....Հասել է ուժեղի, ոգով ուժեղի ժամանակը: Ով ամուր եղավ, նա էլ հաղթելու է: Մեզնից, միմիայն մեզնից է կախված, թե ի վերջո ինչպես է լուծվելու Ղարաբաղի հարցը:

....Նորից պիտի ընդգծեմ՝ գումարտակը, որ ուզում ենք կազմավորել, «մահապարտների» ենք կոչել, բայց ճի՛շտ հասկացեք, դա ամենևին չի նշանակում, որ մենք գնում ենք մեռնելու: Ես սկզբունքորեն դեմ եմ «Մահ կամ ազատություն» կարգախոսին, ուզում եմ, որ թե՛ կենդանի մնանք և թե՛ ազատության տիրանանք: Ուստի անցնենք գործի, կոնկրետ խոսենք գումարտակի կազմավորման մասին, մանավանդ որ ճառերից արդեն հոգնել ենք ...⁵²:

բ) Մենք այն ժողովուրդն ենք, որ մայրաքաղաքներ շատ է տեսել: Եվ սրա մեջ է, եթե կուզեք, մեր ժողովրդի դարավոր ողբերգության արտահայտությունները:

⁵² Սարգսյան Վ., Ոգու փրկություն, Եր., 2000, էջ 232-233:

րից մեկը, որովհետև երջանիկ են այն ժողովուրդները, որոնք իրենց պատմության ընթացքում մեկ-երկու մայրաքաղաք են ունենում: Դա նշանակում է, որ տվյալ ազգը ունեցել է պատմական զարգացման քիչ թե շատ կայուն վիճակ: Իսկ մենք մայրաքաղաքներ շատ ենք ունեցել, ունեցել ենք ստիպված, ունեցել ենք, որովհետև նախկին մայրաքաղաքը ավերել են, հիմնահատակ արել: Ու մեզ մնացել է փլատակներով հպարտանալու զգացմունք միայն, որ հպարտության վսեմ զգացմունքի վերջին տեսակն է և ոչ առաջինը:

Թվում է, թե սխալված չեմ լինի, թվում է, թե բոլորիդ անունից խոսած կլինեմ, եթե ասեմ, որ այս հանդիսավոր պահին՝ Էրեբունի-Երևան թանգարանի պաշտոնական բացման պահին, մեզ պիտի համակի նախ և առաջ հետևյալ զգացումը:

Թող այսուհետև մեր ժողովրդի կյանքը ընթանա այնպես, որ մենք այլևս չունենանք նոր մայրաքաղաք, որ Երևանը լինի և մնա մեր վերջին մայրաքաղաքը՝ սրբազան Արարատի հայացքի ներքո, Արարատյան աշխարհի կենտրոնում՝ Թեյշեբաինիի, Արմավիրի, Արտաշատի, Վաղարշապատի, Դվինի՝ մեր նախկին մայրաքաղաքների հարևանությամբ⁵³:

զ) - Իմ պաշտպանյալը խարդախություն չի կատարել և մտադրություն չի ունեցել որևէ մեկին խաբելու: Դատախազը չկարողացավ հիմնավորել նրա մեղքը: Իրականությունը խեղաթյուրված է: Մեր կողմից ձեռք բերված ու դատարանում հիմնավորված փաստերը ապացուցում են, որ իմ պաշտպանյալի արարքում առկա չեն խարդախության հանցակազմի հատկանիշներ: Գործով առկա չեն օբյեկտիվ ու սուբյեկտիվ ապացույցներ, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման: Ելնելով քրեական դատավարության օրենսգրքի 266-րդ հոդվածից՝ միջնորդում եմ իմ պաշտպանյալին քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետով և 2-րդ դրվագով առաջադրված մեղադրանքներում ճանաչել անմեղ և կայացնել արդարացման դատավճիռ (հատված փաստաբանի ելույթից):

դ) Մեծարգո՝ պ-ն նախարար, ՀՀ պատվիրակության մեծարգո՝ անդամներ, մեծարգո՝ պ-ն դեսպան, Բեռլինի և Հալլեի հայոց համայնքների մեծարգո՝ նախագահներ, մեծապատիվ հյուրեր, Մարտին-Լյութերի անվան համալսարանի հայագիտության ամբիոնի և «Մեսրոպ» հայագիտական հետազոտական կենտրոնի անունից ուրախ եմ ձեզ ողջունելու ցուցահանդեսի բացման կա-

⁵³ Հատված Պարույր Սևակի խոսքից՝ նվիրված Երևանի 2750-ամյակին:

պակցությամբ: Մեր ցուցահանդեսը գերմանական ներդրումն է աշխարհով մեկ տեղի ունեցող այն հանդիսությունների, որոնք սկսվել են դեռևս 2011 թ.-ի դեկտեմբերին: Այսօր գերմանական և հայկական կառավարությունների հովանավորությամբ ու աջակցությամբ հոբելյանական առաջին ցուցահանդեսը բացելու պատիվն է վիճակվել ինձ: Ցուցանմուշների մեծ մասը մենք բերել ենք Բեռլինից, մի մասն էլ ստացել ենք Սյունիսենի Բավարական պետական գրադարանից (13-րդ դ. կիլիկյան մի հին ձեռագիր), Հալլեի Համալսարանական-երկրամասային գրադարանին կից Գերմանական արևելագիտական ընկերության գրադարանից: Այստեղ նաև առաջին անգամ ցուցադրվելու են Տրանսիլվանիայի հայկական տպարանների հնատիպ գրքերը: ՀՀ մշակույթի նախարարության աշխատակիցների անձնուրաց ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ նաև ճիշտ ժամանակին Հայաստանից առաքել ցուցանմուշները՝ 1512-ին Վենետիկում հրատարակված հնագույն հայկական գիրքը և երեք հնատիպ գորգ⁵⁴:

3. Պատրաստե՛ք հրապարակային ելույթներ հետևյալ թեմաներով.

- ա) «Կոչ ուսանողությանը»,
- բ) «Բացման խոսք՝.....»,
- գ) «Երևանը 2800 տարեկան է»:

6.2. ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ

Բանավեճի արվեստը՝ **երիստիկան**, ձևավորվել և իր ծաղկման գագաթնակետին է հասել Հին Հունաստանում, թեև այս կամ այն չափով ուսումնասիրվել է նաև Հին աշխարհի տարբեր երկրներում: Արիստոտելը տարբերակում էր բանավեճի երեք տեսակ՝ **դիալեկտիկական** (ճշմարտությանը հասնելու համար), **սոփեստական** (թվացյալ իմաստնությունը ցույց տալու համար) և **երիստիկական** (հաղթանակի հասնելու համար): Մեր ժամանակներում էլ բանավեճի արվեստը չի կորցրել իր արդիականությունը. բանավեճը լայնորեն կիրառվում է առօրյա խոսքից մինչև դիվանագիտական տարբեր հանդիպումներում:

⁵⁴ Բացման խոսք՝ 2012 թ. ապրիլի 15-ին Հալլեի արվեստի ֆորումում մեկնարկած «Գրչության և պատկերների թովչանք. հայ գրատպության 500-ամյակ» խորագրով ցուցահանդեսում:

Երիաստիկան ուսումնասիրելու համար կարևոր և օգտակար է ուսումնասիրել տրամաբանության հատկապես այն բաժինները, որոնք վերաբերում են մտահանգումներին ու փաստարկմանը:

Ընդունված է բանավեճը դասակարգել հետևյալ հիմունքներով՝ **ըստ արտահայտման ձևի, ըստ դրսևորման կերպի, ըստ ձևավորման եղանակի, ըստ մասնակից կողմերի քանակի, ըստ անցկացման ձևի:**

Ըստ արտահայտման ձևի՝ բանավեճը լինում է **բանավոր** և **գրավոր**: **Բանավոր** բանավեճի դեպքում, ի թիվս մի շարք գործոնների, կարևոր դեր են կատարում նաև հոգեբանական և այլ գործոններ՝ արագ կողմնորոշման ունակությունը, արտասանությունը ևն: Կարևորվում է նաև բանավիճողների՝ ոչ միայն հաղթելու, այլև լավ տպավորություն թողնելու, լսարանի հետ հոգեբանական կապ ստեղծելու հանգամանքը: **Գրավոր** բանավեճերը հատկապես ծավալվում են գիտական, հասարակական, քաղաքական կարևոր հարցերի վերաբերյալ: Բանավիճողները կարող են հանդես գալ հողվածներով, գրքույկներով ևն: Այս դեպքում արդեն բանավեճը հանպատրաստից չի կարող լինել, և բանավիճողները հնարավորություն ունեն հանգամանորեն պատրաստվելու:

Ըստ դրսևորման կերպի՝ բանավեճը լինում է **բացահայտ** և **ծածուկ**: Բացահայտ բանավեճերը ծավալվում են հրապարակայնորեն՝ հենց ունկնդիրների առջև, եթե բանավեճը բանավոր է, կամ մամուլում, տպագիր տարբեր աշխատություններում, եթե բանավեճը գրավոր է: Ծածուկ բանավեճը սովորաբար դրսևորվում է գաղտնի գրախոսությունների միջոցով: Հնարավոր է նաև մեկ այլ կերպ, երբ բանավիճողը կոնկրետ չի նշում իր հակառակորդին, սակայն գործին տեղյակ մարդկանց պարզ է լինում, թե ում նկատի ունի:

Ըստ ձևավորման եղանակի՝ բանավեճը լինում է **պաշտոնական** և **պարտադրված**: Պաշտոնական բանավեճերը որևէ կանոնադրությամբ կամ այլ ձևով նախատեսված բանավեճերն են: Օր.՝ ուսումնական հաստատություններում ավարտական աշխատանքների, գիտական ատենախոսությունների պաշտպանությունները պաշտոնապես սահմանված գիտական բանավեճեր են, որոնցում բացահայտ բանավեճի միջոցով պարզաբանվում են գիտական հարցեր: Իսկ պարտադրված բանավեճերը պաշտոնապես նախատեսված չեն. դրանք թելադրվում են անհրաժեշտությամբ և կարող են ծագել տարբեր իրավիճակներում ու տարբեր խնդիրների վերաբերյալ:

Ըստ մասնակից կողմերի քանակի՝ առանձնացվում են **երկխոսական** և **բազմախոսական** բանավեճեր: Երկխոսական բանավեճին մասնակցում են երկուսը, իսկ բազմախոսական բանավեճին՝ երեք և ավելի անձինք:

Ըստ անցկացման ձևի՝ բանավեճերը լինում են կազմակերպված և հանպատրաստից: Կազմակերպված բանավեճերը նախօրոք ծրագրվում և նախապատրաստվում են, իսկ հանպատրաստից բանավեճերը կազմակերպվում ու ընթանում են ըստ իրադրության:

Բանավեճի հիմնական բաղադրիչներն են **հերքումը**, **ապացույցը**, **եզրահանգումը** (հետևությունը): Հերքման և ապացուցման համար անհրաժեշտ են փաստեր և փաստարկներ: Ապացուցումն ու հերքումը կատարվում են տարբեր ձևերով և ունեն տարբեր տեսակներ:

Ապացուցումը հնարավոր է իրականացնել ուղղակիորեն՝ ելնելով հիմքերի ճշմարտությունից, և անուղղակիորեն՝ հակասող ենթադրության միջոցով կամ բաժանարար ապացուցմամբ, որի ընթացքում ձևակերպվում են բոլոր հնարավոր թեզիսները, հերթով ժխտվում, և միակ հնարավորը մնում է ապացուցելին:

Հերքումը հնարավոր է իրականացնել փաստերի միջոցով, հակաթեզիսի ճշմարտության ապացուցմամբ կամ էլ թեզիսից հետևանքներ բխեցնելով և ցույց տալով դրանց անհնարիությունը:

Հերքմանը և ապացույցին հետևում է **եզրահանգումը**: Եզրահանգման միջոցով խոսողն ընդհանրացնում է ասածը, համադրում բերած փաստարկները և ներկայացնում իր տեսակետի վերջնական հիմնավորումը:

Մակայն պետք է հիշել, որ բանավեճի ժամանակ շատերը կարևորում են տպավորություն գործելը, իրենց գիտելիքները ցույց տալը, համոզելը ևն, այսինքն՝ իրենց նպատակին, այլ ոչ թե ճշմարտությանը հասնելը: Ուստի երբեմն բանավիճողները ապացուցումն ու հերքումը չեն կատարում տրամաբանության սահմաններում:

Տրամաբանության մեջ տարբերակում են **պարալոգիզմն** ու **սոփեստությունը**: Պարալոգիզմի դեպքում սխալ թույլ տվողը չի գիտակցում կամ չգիտի, որ սխալվում է, իսկ սոփեստության դեպքում սխալ թույլ տվողը գիտակցաբար է դա անում՝ ցանկանալով մոլորեցնել հակառակորդին կամ ունկնդիրներին: Տարբերակվում է նաև սրամտությունը, որի դեպքում սխալ պարունակող կշռադատությունը կատարվում է ոչ թե մոլորեցնելու, այլ ուրիշ նպատակներով:

րով (զվարճացնելու նն). ինչպես՝ «Արքելայոս թագավորը, երբ որ ասող-խոսող վարսավիրը, սրբիչով արդեն փաթաթելով նրան, հարցրել է. «Քեզ ինչպե՞ս խուզեմ, արքա՛», սրամտորեն պատասխանել է. «Լուռ»⁵⁵:

Բանավեճը ճիշտ վարելու և անհրաժեշտ արդյունքի հասնելու համար պետք է առաջնորդվել որոշակի սկզբունքներով:

1. Առաջին հերթին ճիշտ է հենվել տրամաբանության օրենքների վրա, չխախտել նույնության, հակասության, երրորդի բացառման, բավարար հիմունքի օրենքները նն, փաստարկումն էլ կատարել տրամաբանական հիմունքներով:

2. Անհրաժեշտ է բանավեճը վարել բարեկիրթ, զուսպ, առանց վիրավորանքների՝ հարգելով թե՛ հակառակորդին, թե՛ ունկնդիրներին (գրավոր բանավեճի դեպքում՝ ընթերցողներին):

3. Բանավեճ վարելու համար անհրաժեշտ է բանավեճին առնչվող նյութերի խոր և համակողմանի իմացություն: Նույնիսկ տրամաբանության օրենքներից շեղվելու և այլ միջոցներով բանավեճում հաղթելու համար անհրաժեշտ են գիտելիքներ, վերլուծական մտածողություն, ճարտասանական շնորհ:

4. Անհրաժեշտ է նաև լավ տիրապետել խոսքարվեստին: Նույնիսկ տրամաբանորեն հիմնավորված, բայց վատ ձևակերպված ու ասված խոսքը դժվար թե բանավեճում հաղթանակ ապահովի: Հակառակորդը կարող է իսկույն կառչել դիմացինի վրիպումներից և տարբեր եղանակներով օգտագործել դրանք՝ պարզապես մատնանշել դիմացինի չիմացությունը, սխալ ձևակերպումը ծառայեցնել հոգուտ իրեն, օգտվել ձևակերպման երկիմաստությունից նն:

5. Բանավեճերում հաճախ է կիրառվում հարցին հարցով պատասխանելը, ինչպես՝ «Իսկ Դո՞ւք ինչ եք կարծում», «Իսկ Դուք այդ դեպքում ի՞նչ կանեիք» նն: Կարևոր հարցերի վերաբերյալ բանավեճի դեպքում հմուտ բանավիճողը չպետք է ենթարկվի այսպիսի ճնշման և առաջին իսկ հարցին պատասխանելու փոխարեն պահանջի շարունակել բուն նյութի վերաբերյալ քննարկումը և չշեղվել:

6. Բանավեճի (նաև ելույթի), մասնավորապես բանավոր և ունկնդիրների ներկայությամբ ընթացող բանավեճի դեպքում շատ են կարևորվում հոգեբանական գործոնները: Ընդ որում, կարևոր է ոչ միայն հակառակորդ կողմին

⁵⁵ Պլուտարքոս, Երկեր (ռուս. թարգմ. Ն. Հարյան), Եր., 1988, էջ 534:

հոգեբանորեն ճնշելը, այլև լսարանին գրավելը, դեպի իրեն դրականորեն տրամադրելը: Իրենց տեսակետները ներկայացնելիս այս նպատակով հաճախ կիրառում են բայի առաջին դեմքի հոգնակի թվով ստորոգյալներ, ինչպես՝ «բոլորս էլ գիտենք», «ցանկանում ենք», «ձգտում ենք» ևն: Մրանով խոսողը տպավորություն է ստեղծում, որ լսողներն իր համախոհներն են, իրենց նպատակները ընդհանուր առմամբ նույնն են, ինքը հանդես է գալիս նաև նրանց անունից ևն:

7. Բանավեճի ընթացքում երբեմն կիրառվում է հեզնանքը: Տեղին և դիմացինի ֆիզիկական հատկանիշներին չուղղված հեզնանքը բանավեճի ժամանակ կարող է արդյունավետ միջոց դառնալ, քանի որ հեզնանքին կա՛մ պետք է համարժեք հեզնանքով պատասխանել, կա՛մ էլ չափազանց լուրջ՝ միանգամից վերջ դնելով հեզնական տոնին: Պետք է նաև հիշել, որ հեզնանքը սրում, բորբոքում է վեճը, և բանավեճի հետագա ընթացքը կարող է դժվարանալ:

8. Բանավիճելիս շատ կարևոր է նաև խոսողի պահվածքը: Հավասարակշռված, հանդարտ պահվածքը վստահություն է ներշնչում, ունկնդիրներին տրամադրում դեպի նման պահվածքով մարդը: Այդ պատճառով էլ բանավիճողները հաճախ ձգտում են հունից հանել հակառակորդին՝ իրենք մնալով հանգիստ: Սա նաև մեկ այլ նպատակ ունի. զայրացած մարդը մեծ մասամբ արդեն չի կարողանում սթափ մտածել, սկսում է հուզականորեն մոտենալ քննարկվող հարցին և կարող է պարտվել բանավեճում:

9. Տարածված է բանավեճի ժամանակ հեղինակությունների վկայակոչումը՝ որպես փաստարկում, ինչպես՝ «այս նշանավոր գիտնականն ասել է», «այդ բնագավառի նշանավոր ուսումնասիրող այսինչ գիտնականը այս կարծիքին է» ևն: Հակառակորդը, հակադրվելով ասվածին, ակամա հակադրվում է նաև հեղինակավոր մի գիտնականի և ստիպված է հերքել նաև նրա կարծիքը կամ գոնե ցույց տալ այն վրիպումը, որը, իր կարծիքով, առկա է նրանում: Դա, ինչ խոսք, չափազանց դժվար է ոչ միայն ապացուցման առումով, այլև հոգեբանորեն:

10. Բանավիճելիս խոսողը երբեմն ստեղծում է կեղծ հակառակորդներ, նրանց վերագրում ինչ-որ կարծիք, այնուհետև հերքում նրանց կարծիքը, իսկ իրենը, հակադրելով դրանց, համարում միակ ճիշտն ու ընդունելին: Նման դեպքերում գործածվում են այսպիսի արտահայտություններ՝ «Շատերն ասում են, որ այսպես է, բայց մենք...», «Ուրիշներն այդպես կվարվեն, բայց մենք...», «Ոմանք միայն խոսում են, բայց մենք» ևն:

Բանավեճի ընթացքում գործածվում է նաև մի միջոց, որով **խոսողը ցանկանում է իր տեսակետները ներկայացնել որպես բոլորին հայտնի անատարկելի իրողություններ**: Այդ նպատակով հաճախ գործածվում են այսպիսի արտահայտություններ՝ «Բոլորն էլ գիտեն...», «Վաղուց հայտնի է...», «Ո՞ւմ հայտնի չէ...», «Մի՞ թե որևէ մեկը կասկածում է...» ևն: Ունկնդիրները (կամ ընթերցողները) նման դեպքերում սովորաբար ավելի հակված են լինում ընդունելու, որ ասվածը հայտնի ճշմարտություն է, քան թե խոստովանելու, որ իրենք չգիտեն այդ մասին:

11. Բանավիճելիս երբեմն փորձում են հաղթանակի հասնել ոչ թե հակառակորդի առաջ քաշած դրույթը հերքելով, այլ փորձելով ապացուցել դրա անարդյունավետ, անօգտակար լինելը: Օր.՝ «Իսկ դա ի՞նչ օգուտ կբերի», «Ի՞նչ կշահենք դա անելով» ևն:

12. Հարմար պատասխան չունենալու դեպքում կիրառվում է նաև հետաձգման հնարը, այսինքն՝ կողմերից մեկը չի խոսում որևէ հարցի վերաբերյալ՝ իբր սովյալ դեպքում հարմար չհամարելով կամ ցույց տալով, թե այդ պահին դրան անդրադառնալու ժամանակ չկա, կամ էլ խնայում է հակառակորդին: Նման դեպքերում գործածվում են այսպիսի արտահայտություններ՝ «Այդ մասին ավելի լավ է՝ չխոսենք...», «Այնքան ասելիք կա, որ չեմ հասցնի նույնիսկ թվել հիմնական խնդիրները...», «Եկեք դրան չանդրադառնանք...» ևն:

13. Բանավիճելիս երբեմն կիրառվում է կեղծ սիրաշահման հնարը: Այդ դեպքում կողմերից մեկը մյուսին վերագրում է դրական այնպիսի հատկանիշներ, որոնք ունենալով՝ նա չի կարող հակադրվել իրեն: Նման դեպքերում գործածվում են մոտավորապես այսպիսի ձևակերպումներ՝ «Ձեզ նման կրթված մարդը չի կարող չիմանալ...», «Եթե Ձեզ նման փորձառու մարդն էլ է դժվարանում, ապա մյուսները...», «Դուք, որ խելացի մարդ եք, չեք կարող չհամաձայնել...» ևն:

14. Բանավեճի ժամանակ լարվածությունը թուլացնելու նպատակով երբեմն էլ հնարավոր է կատակել: Սա չպետք է շփոթել հեզմանքի կիրառման հետ: Հակառակորդին ուղղված հեզմանքը թեժացնում է բանավեճը, իսկ կատակը ուղղված չի լինում դիմացինին, նույնիսկ անուղղակի հեզմանք կամ ակնարկ էլ չի պարունակում, այլ, ընդհակառակը, ասվում է իրադրությունը լիցքաթափելու նպատակով: Միաժամանակ դա լսողներին կարող է դրականորեն տրամադրել դեպի կատակողը: Կարելի է նաև մի կատակով կամ բառախաղով վերջ դնել խոսակցությանը:

Այսպիսով՝ բանավեճերը բազմազան են թե՛ իրենց տեսակներով, թե՛ վարելու միջոցներով ու եղանակներով: Յուրաքանչյուր ոք, ով բանավիճելիս անհրաժեշտ լուծումներ է փնտրում, պետք է ոչ միայն լավ զինված լինի գիտելիքներով, այլև լավ իմանա հակառակորդի կիրառած մեթոդները:

Գրականություն

1. Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2006:
2. Պլուտարքոս, Երկեր (ռուս. թարգմ. Ն. Հարյան), Եր., 1988:
3. Кожев Н., Основы ораторской речи, М., 1992:

Վարժություններ և առաջադրանքներ

1. Որո՞նք են բանավոր և գրավոր բանավեճի առանձնահատկությունները:
2. Բանավեճի ի՞նչ տեսակներ են տարբերակվում ըստ նպատակի:
3. Որո՞նք են բանավեճի հիմնական բաղադրիչները:
4. Հրապարակային բանավեճի կարևոր սկզբունքներից են՝ հարգանք, ազնվություն և արդյունավետություն, այսինքն՝ չկան հաղթողներ և պարտավորներ: Ի՞նչ են արձանագրում այս սկզբունքները. սեղմ ձևակերպե՛ք ձեր կարծիքը:
5. Կազմակերպե՛ք բանավեճ՝ ընտրելով առաջարկված թեմաներից մեկը.
 - ա) «Մարդը և բնությունը. բարեկամ, թե՞ թշնամի»,
 - բ) «Լատինատա՞ռ, թե՞ հայատառ համացանց»,
 - գ) «Արդյոք ճի՞շտ է երեխային համացանցից զրկելը»,
 - դ) «Նոր տեխնոլոգիաների կիրառումը նպաստո՞ւմ է արդյոք կրթական մակարդակի (գիտելիքի ու դաստիարակության) բարձրացմանը»,
 - ե) «12-ամյա կրթական համակարգը ապահովո՞ւմ է արդյոք բարձրորակ կրթություն Հայաստանում»,
 - զ) «Համակարգչային խաղերի բացասական ազդեցությունը պատանիների վրա»,

է) «Քի՛ միա, թե՛ տարրաբանություն. թարգմանե՛լ էզրույթները, թե՛ ոչ»⁵⁶:

Ծանոթություն.- Բանավեճի տևողությունը 40 րոպե է: Ուսանողներից կազմել երկու թիմ՝ յուրաքանչյուրում ընդգրկելով երեքական հոգի: Թիմում մեկը հիմնական բանախոսն է, երկուսը աջակիցներն են: Առաջարկվող թեմային նախապատրաստվելիս հավաքել փաստեր, խոսք կազմել՝ ըստ փաստերի, կազմել հարցեր: Փաստարկները և հակափաստարկները ներկայացնել պատշաճ հայերենով:

Յուրաքանչյուր բանախոսի հատկացնել 5-ական րոպե՝ փաստարկը և հակափաստարկը ներկայացնելու համար, աջակիցներին 3-ական րոպե՝ իրենց փաստարկները բերելու կամ հարցեր տալու համար: Ուսանողների երրորդ խումբը պետք է կատարի «դատավորի» դերը, այսինքն՝ որոշի, թե որ թիմի փաստարկներն են ավելի ծանրակշիռ: Բանավեճը վարողը պետք է հետևի ժամանակացույցին՝ բանավիճող կողմերին հատկացնի հավասար ժամանակ՝ իրենց կարծիքն արտահայտելու, հարցեր տալու համար և բացառի վիրավորական արտահայտությունները:

Բանավիճողը կարող է օգտագործել լեզվական տարբեր հնարներ. քննարկե՛ք, թե բանավիճելիս ինչ ազդեցություն կարող են թողնել հետևյալ ձևակերպումները.

Բոլորս էլ գիտենք, որ....

Վաղուց հայտնի է, որ....

Մեղադրանք են ներկայացնում, որ...

Մի՛ թե որևէ մեկը կասկածում է, որ....

Ո՞ւմ հայտնի չէ, որ....

Ձեզ նման կրթված մարդը չի կարող չիմանալ, որ.....

Կարո՞ղ է արդյոք երկընտրանք լինել.... :

⁵⁶ Տե՛ս http://ysu.am/files/15S_Khasapetyan, [http://lraber.asj-oa.am/4768/1/1983-3\(83\)](http://lraber.asj-oa.am/4768/1/1983-3(83)), [http://lraber.asj-oa.am/4530/1/1986-3\(70\)](http://lraber.asj-oa.am/4530/1/1986-3(70)):

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

Լեզվական որոշակի կանոնների, լեզվամիջոցների գործառական հնարավորությունների իմացությունը պարտադիր պայման է պաշտոնական գրագրությունն ըստ հարկի կազմակերպելու համար:

Գրագրությունը պետական-պաշտոնական գործունեության անբաժան մասն է: Դա հաղորդակցման ավանդական և աշխարհում ընդունված ժամանակակից ձևերից կարևորագույնն է: Գրագրության գործընթացին գործնականում մասնակցում են կառավարման ոլորտի բոլոր աշխատակիցները, որոնցից պահանջվում է տեքստաբանական գրագիտություն: Փաստաթուղթ կազմողը պետք է տիրապետի տեքստի ձևավորման մշակույթին, նյութը տնօրինի և մատուցի այնպես, որ այն հասցեատիրոջ համար լինի առավելագույնս մատչելի:

Գրագրությունների ձևերը որքան էլ բազմազան են, այսուհանդերձ ունեն ձևավորման ու շարադրանքի ընդհանուր և յուրահատուկ համակարգ⁵⁷: Ստորև ներկայացնում ենք գրագրության առավել տարածված որոշ տեսակների ձևանմուշներ՝ համառոտ բնութագրություններով:

1.1. Ինքնակենսագրություն

Այս փաստաթուղթը պահանջվում է հիմնականում աշխատանքի ընդունվելիս կամ մի աշխատանքից մեկ այլ աշխատանքի տեղափոխվելիս: Ճիշտ կազմած ինքնակենսագրությունը կարող է դառնալ Ձեր հաջողության այցեքարտը: Գրագետ ինքնակենսագրություն կազմելու համար ճշգրիտ պետք է նշել՝ **ա**) անուն-ազգանուն-հայրանունը, **բ**) ծննդյան օրը, ամիսը, տարին, կրթությունը՝ սկսած դպրոցից, **գ**) մասնագիտական գործունեությունը, **դ**) համակարգչային ծրագրերի իմացությունը, օտար լեզուների իմացության աստիճանը (գերազանց, լավ, բավարար, անբավարար), **ե**) աշխատանքային փորձը և ձեռքբերումները տվյալ ոլորտում, **զ**) ընտանեկան կարգավիճակը, **է**) պարգևները, մրցանակները (եթե կան), **ը**) բնակության հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային հասցեն: Սրանցից բացի՝ ներկայումս ընդունված է նշել նաև ակնկալվող աշխատանքի տեսակը և աշխատավարձի մոտավոր չափը:

Ինքնակենսագրությունը ավարտվում է ստորագրությամբ, նշվում է ամսաթիվը: Նախընտրելի է գրության ձայնակողմյան հավասար ձևաչափը:

⁵⁷ Հայերենում գրագրության ձևերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Եր., 2001: Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2017:

Կրթությունը (բացի դպրոցից), աշխատանքային փորձը նշվում են հակադարձ ժամանակագրական կարգով:


Ցանկալի է ինքնակենսագրականում «բաց տեղեր» չթողնել նշված տվյալների առնչությամբ: Եթե որևէ պատճառով ինչ-որ ժամանակ ընդհատվել է աշխատանքային ստաժը, նշե՛ք պատճառը. դա ավելի վստահություն կներշնչի: Եթե աշխատանքային գրքույկում աշխատանքային տարիները արձանագրված չեն, դրանք նույնպես պիտի արտացոլվեն ինքնակենսագրության մեջ: Հարկ եղած դեպքում ինքնակենսագրությանը կից կարելի է ներկայացնել նաև երաշխավոր անձանց գրություն(ներ)ը:

Նշված տվյալները ցանկալի է ներկայացնել տպագիր մեկ էջում:

Ստորև ներկայացվում է ինքնակենսագրության նախընտրելի ձևանմուշ:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Անուն-ազգանուն-հայրանուն
2. Ծննդյան ամսաթիվ, ամիս, տարի
3. Քաղաքացիություն
4. Հասցե
5. Հեռախոսահամար(ներ)
6. Ընտանեկան դրություն
7. Կրթություն



Ուսումնական հաստատության անվանումը	Ուսումնառության տարեթիվը	Մասնագիտությունը

Սեմինարներ, վերապատրաստում

Ուսումնական հաստատության անվանումը	Ժամանակահատված	Առարկա

8. Աշխատանքային գործունեություն

Ամիս, Տարի	Կազմակերպություն
	Պաշտոն

9. Լեզուների իմացություն

	Գերազանց	Լավ	Բավարար
Հայերեն			
.....			

10. Համակարգչային գիտելիքներ _____

11. Այլ (հրատարակություններ, պարգևներ) _____

1.2. Երաշխավորագիր - բնութագիր

Փաստաթղթի մի ձև է, որը անհրաժեշտաբար գործարկվում է տարբեր ոլորտներում (բանկային գործարքներ, աշխատանքի ընդունում, կրթական համակարգ են):

Կարող է վճռորոշ նշանակություն ունենալ նշված ոլորտներում անձի ինտեգրման գործում: Ուստի ճիշտ և նպատակային երաշխավորագիր-բնութագիր կազմելու համար պետք է տիրապետել դրա կազմության որոշ հիմնությունների: Դրանում մանրամասն և հստակ նկարագրվում են՝ ա) դիմորդի բնավորությունը, բ) միջավայրում նրա ներգրավվածության աստիճանը, գ) ընտանեկան կարգավիճակը և վերաբերմունքը ընտանիքի անդամների նկատմամբ, դ) միջավայրի վերաբերմունքը դիմորդի նկատմամբ, ե) առաջնորդին բնորոշ հմտությունները, զ) կոլեկտիվում աշխատելու ունակությունները, է) նոր իրավիճակներում հարմարվելու կարողությունները: Բնութագիրը առավել հավաստի դարձնելու համար կարելի է բերել բնութագրական մեկ օրինակ:

Փաստաթղթի վերջում նշվում են երաշխավորող անձի, կազմակերպության (գրասենյակի են) հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը՝ երաշխավորագրի վերաբերյալ ծագած հարցերին պատասխանելու համար:

Նշվածը ցանկալի է ներկայացնել տպագիր 1-2 էջի շրջանակում:

Երաշխավորագիր-բնութագիրը ավարտվում է ստորագրությամբ, նշվում է ամսաթիվը: Նախընտրելի է գրության ձևակերպման հավասար ձևաչափը:

Երաշխավորագիր-բնութագիրը ներկայացվում է պաշտոնական բլանկի վրա, իսկ դրա բացակայության դեպքում՝ սովորական (A4) էջի վրա: Այն դիմորդին պետք է հանձնել երաշխավորող անձի ստորագրությամբ և կնքած (եթե կնիք կա):

<p>ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ-ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Դիմորդի անունը _____</p> <p>Երաշխավորագիր տրամադրող անձ _____</p> <p style="text-align: center;">(անուն-ազգանուն)</p> <p>Աշխատավայր _____</p> <p>Պաշտոն _____</p> <p>1. Որքա՞ն ժամանակ եք ճանաչում դիմորդին _____</p> <p>2. Ի՞նչ կապեր և առնչություններ ունեք դիմորդի՝ _____</p> <p style="text-align: right;">_____ -ի հետ</p> <p style="text-align: center;">(անուն-ազգանուն)</p> <hr/> <p>Երաշխավորողի ստորագրություն _____</p> <p>Հարցերի դեպքում կարող եք դիմել _____</p> <p>Հեռ.՝ էլ. փոստ՝ _____</p> <p>« _____ » _____ թ.</p>
--

1.3. Դիմում

Պաշտոնական փաստաթուղթ է, որում գրավոր ներկայացվում է որևէ խնդրանք, բողոք, և դրա վերաբերյալ ակնկալվում է պատասխան՝ օրինական լուծում, օժանդակում են: Այն կիրառվում է հասարակական գործունեության բոլոր ոլորտներում: Ունի

կառուցվածքային որոշակի կադապար, որը, ըստ ներկայացման ոլորտի, կարող է ինչ-ինչ փոփոխություններ կրել: Այսուհանդերձ, այդ տարբերությունները մասնակի են և հստակորեն համապատասխանում են դիմումի ընդունված ավանդական ձևաչափին:

Դիմումը կազմված է հետևյալ բաղադրատարրերից՝ ա) **հասցեատեր**՝ անձը, որին ուղղված է դիմումը, բ) **դիմումատու**՝ հայց ներկայացնող անձը, գ) **փաստաթղթի անվանումը**, դ) **հայցի** (խնդրանքի, բողոքի) **ձևակերպումը**, ե) **դիմումատուի ստորագրությունը**, զ) **ամսաթիվը**:

Նշված բաղադրատարրերից յուրաքանչյուրն ունի գրության որոշակի օրինաչափություններ:

● **Հասցեատեր.** նախ գրվում է տվյալ անձի պաշտոնը և կազմակերպության (հիմնարկի, ընկերության ևն) անվանումը, ապա՝ հասցեատիրոջ անվան, հայրանվան առաջին տառերը և ազգանունը՝ դրված տրական հոլովով: Այս տվյալները լրացվում են թղթի (A4 ձևաչափ) վերևամասի աջ կողմում՝ կենտրոնական հատվածից մոտ 6 նիշ հեռավորությամբ:

● **Դիմումատու.** նախ գրվում է տվյալ անձի անուն-հայրանուն-ազգանունը՝ դրված բացառական հոլովով: Պայմանավորված դիմումի բովանդակությամբ և ներկայացվող ատյանի պահանջով՝ հաճախ անհրաժեշտաբար պետք է նշվեն նաև դիմումատուի աշխատանքի կամ սովորելու վայրը, հասցեն և հեռախոսահամար(ներ)ը: Այս տվյալները նույնպես լրացվում են թղթի (A4 ձևաչափ) վերևամասի աջ կողմում որպես անմիջական շարունակություն հասցեատիրոջն ուղղված խոսքի:

● **Փաստաթղթի անվանումը.** գրվում է մեծատառերով (մեկ տառաչափ բացատով) և թավ՝

Դ Ի Մ Ո Ի Մ: Այն պետք է գտնվի թղթի կենտրոնում՝ դիմումատուի տվյալներից մոտ 3 սող ներքև:

● **Հայցը (բողոք, խնդրանք).** սկսվում է «Խնդրում ենք Ձեզ...» արտահայտությամբ, ապա հնարավորինս սեղմ, ամփոփ ներկայացվում է խնդիրը: Հայցը կարող է ներկայացվել հակառակ հերթականությամբ՝ նախ՝ խնդիրը, ապա՝ բողոքը կամ հայցը: Եթե դիմումի հետ ներկայացվում են ինչ-ինչ փաստաթղթեր, ապա հայցը պետք է ավարտել «Կից ներկայացվում են...» նախադասությամբ: Հայցը գրվում է չեզոք ոճով, գերծ երկիմաստությունից, հուզական բառերից ու արտահայտություններից: Շարադրվում է թղթի լայնակի հատվածով:

● **Դիմումատուի ստորագրություն.** դրվում է վերը նշված տեքստից հետո դիմումատուի տվյալներին զուգահեռ հավասարությամբ: Գրվում է՝ Դիմող, ապա՝ ստորագրությունը և դիմումատուի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը (դրանք անպայման պետք է գրվեն մեկ տառաչափ բացատով):

• **Ամսաթիվը.** նշվում են օրը, ամիսը, տարեթիվը: Կարելի է գրել նաև հակառակ հերթականությամբ:

	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար պարոն _____-ին քաղաքացի _____-ից հասցե _____ հեռ. _____
Դ Ի Մ Ո Ւ Մ	
Խնդրում եմ Ձեզ _____	
Կից ներկայացվում են վերոնշյալ փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը՝ _____ հատ:	
Դիմող (ստորագրություն) անուն-ազգանուն	
« _____ » _____ թ.	

1.4. Հրաման

Կարգադրական բնույթի փաստաթղթերից ամենից տարածվածն է: Ունի տարատեսակներ՝ անձնակազմի վերաբերյալ, հիմնական գործունեությանը վերաբերող, նախաձեռնողական են: Հրամանի համար սահմանված պարտադիր պահանջներ (ռեկվիզիտներ) են փաստաթղթի անվանումը (մեծատառերով, ցրիվ շարվածքով՝ ՀՐԱՄԱՆ), արձակման թվականը, գրանցման համարը, ստեղծման ու հրատարակման տեղը, վերնագիրը, որը խիստ հակիրճ արտահայտում է հրամանի բովանդակությունը (ինչի՞ մասին է), հրամանի տեքստը, որ կազմվում է երկու մասից՝ նախապատրաստական և կարգադրական, կամ միայն մեկ ամբողջական կարգադրական մասից, հրաման տվողի պաշտոնը, անվան առաջին տառը, ազգանունն ու ստորագրությունը: Մնացած տվյալները (համաձայնեցում են) զետեղվում են ըստ փաստաթղթի համար սահմանված ընդհանուր պարտադիր պահանջների:

Եթե հրամանում հանձնարարականներ են տրվում որոշակի կատարողների, ապա կարգադրական մասում յուրաքանչյուր դեպքում նշվում են կատարողը, կատարելիք գործողությունը, կատարման ժամկետը: Այս պահանջներն էլ պայմանավորում են հրամանի լեզվառձական հատկանիշները: Նախապատրաստական մասում հաճախ գործածվող լեզվակաղապարներ են՝ **նկատի ունենալով....,բարելավելու նպատակով, պայմանավորված-ով, հաշվի առնելով....** են: Տեքստը շարադրվում է հրամայական հնչերանգով՝ անորոշ դերբայով բաղադրված բայական անդեմ նախադասություններով: Միօրինակությունը, հակիրճությունը, հորդոր, հրաման, կարգադրություն արտահայտող բառերի հաճախակի գործածությունը, պաշտոն, կոչում, ժամանակ նշանակող բառերի առատությունը, պարբերաբար կրկնվող լեզվական կառույցները գրագրության այս ձևի առանձնահատկություններն են:

Ահա հիմնական գործունեությանը վերաբերող հրամանի երկու նմուշ՝ առաջինը՝ պարտադիր պահանջների (ռեկվիզիտների) կենտրոնական, երկրորդը՝ եզրային դասավորությամբ.



«-----»

«ԵՐԵՎԱՆ-ՋՈՒՐ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

2.02.2014 № 522

Երևան

Աշխատողին այլ աշխատանքի փոխադրելու մասին

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, հիմք ընդունելով----- (պաշտոնը)-----յանի՝ 19.01.2014թ. դիմումը և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. -----յանին //./2014 թվականից փոխադրել----- պաշտոնին՝ ամսական ----- (-----հազար) դրամ աշխատավարձով:
2. -----յանին, պաշտոնային դրույքաչափից բացի, սահմանված դեպքերում պարգևատրումները վճարել համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի:
3. -----յանի հետ աշխատանքային հարաբերությունները սահմանել անորոշ ժամկետով:
4. -----յանի աշխատանքային ռեժիմը սահմանել՝ համաձայն ներքին կարգապահական կանոնների:
5. ՄՌ պատասխանատու -----յանին՝ Ապահովել սույն հրամանին -----յանի՝ ստորագրությամբ ծանուցումը:

Գլխավոր տնօրեն՝

(ստորագրություն) անուն-ազգանուն

1.5. Կարգադրություն

Միանգամյա կատարման իրավական ակտ է: Տրվում է կազմակերպության կողմից և վերաբերում է կա՛մ որոշակի անձանց (կազմակերպության որևէ աշխատակցի), կա՛մ կազմակերպության այս կամ այն ստորաբաժանմանը (ստորաբաժանումների): Օր.՝ կարգադրություն ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման վարչությանը՝ որոշակի դրամ փոխանցելու կամ դուրս գրելու վերաբերյալ: Կամ՝ կարգադրություն ՀՀ կենտրոնական բանկի Էմիսիոն գործառնությունների և դրամական պահուստների վարչությանը՝ ՀՀ նախագահին նվիրելու նպատակով հուշադրամ դուրս

գրելու մասին: Կարգադրությունն ուժը կորցնում է համապատասխան հանձնարարականի կատարումից հետո:

Ի տարբերություն հրամանների, որոնք կարող են լինել անհատական «օր.» որոշակի բանկի նկատմամբ տուգանք կիրառելու մասին ՀՀ ԿԲ նախագահի հրամանը՝ իբրև միանգամյա կատարման իրավական ակտ» և նորմատիվ «ՀՀ ԿԲ ներքին աշխատանքային կարգապահական կանոնները հաստատելու մասին հրամանը՝ որպես ենթաօրենսդրական նորմատիվ ակտ»՝ կարգադրությունները չեն ունենում նորմատիվ բնույթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ



ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ТВИ/Н/02/34

29. 12. 2001

01-10/42

Երևան ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը՝
Կ Ա Բ Գ Ա Դ Բ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման և էմիսիոն գործառնությունների և դրամական պահուստների վարչություններին:

Ներկայացուցչական ծախսերի հաշվին դուրս գրել մեկ հատ «Նոյը իջնում է Արարատից» ոսկե հուշադրամ՝ Լևոն Հախվերդյանին 75-ամյակի առթիվ նվիրելու համար:

2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից:

Նախագահ՝

(ստորագրություն) անուն-ազգանուն

1.6. Որոշում

Բնույթով կազմակերպական-կարգադրական փաստաթուղթ է: Որպես կանոն, ձևակերպվում է տվյալ կազմակերպության (կառուցվածքային ստորաբաժանման) ընդհանուր բլանկի վրա՝ տվյալների և՛ երկայնական, և՛ եզրային դասավորությամբ: Փաստաթղթի այս տեսակը պարունակում է հետևյալ տվյալները.

- **Կազմակերպության (բաժանմունքի) անվանումը.** գրվում է մեծատառերով և ցրիվ շարվածքով:

- **Փաստաթղթի տեսակի անվանումը.** գրվում է մեծատառերով և ցրիվ շարվածքով՝ Ո Բ Ո Շ Ո Ւ Մ կամ՝ Ա Բ Ձ Ա Ն Ա Գ Բ Ա Յ Ի Ն Ո Բ Ո Շ Ո Ւ Մ:

- **Փաստաթղթի տեսակի կոդը.** արձանագրային որոշումներում չի նշվում:

- **Ձևակերպման թվականը.** համապատասխան նիստի թվականն է, որը արաբական թվանշաններով գետեղվում է ոչ թե կողին անմիջապես կից, այլ +3 կամ +5 կետ հեռավորությամբ՝ նույն հարթության վրա կամ՝ կողից 2 տող ներքև աջ հավասարումով:

Ավելորդ է թվականի ևս մեկ անգամ նշումը փաստաթղթի կենտրոնում տառաթվային եղանակով:

● **Գրանցման համարը.** գետեղվում է՝ ա) ընդհանուր բլանկի աջ անկյունում կողը նշանակող թվերի հավասարությամբ (երկայնական ձևաչափ, որոշում), կամ՝ թվականի հավասարությամբ (երկայնական ձևաչափ, արձանագրային որոշում), բ) ընդհանուր բլանկի ձախ անկյունում թվականին կից, +5 կամ +3 հեռավորությամբ (եզրային ձևաչափ, արձանագրային որոշում // որոշում):

● **Վերնագիրը.** հակիրճ արտահայտում է որոշման բովանդակությունը, ձևակերպվում է մասին կապով:

● **Տեքստը.** կազմվում է 2 մասից: Ներածական մասում նշվում են փաստաթուղթը կազմելու պատճառները, հիմքերը, նպատակները, եզրափակող մասում՝ որոշումները (եզրահանգումներ, որոշումներ, հանձնարարականներ):

Տեքստի երկրորդ՝ եզրափակող մասը, սկսվում է ՈՐՈՇՈՒՄ Է բառով (առաջին մասից 3 տող ներքև), որը գրվում է մեծատառերով և ցրիվ շարվածքով: Տեքստի շարունակությունը և որոշման մնացած տվյալները (ստորագրություն, համաձայնեցում ևն) գետեղվում են ըստ հրամանի համար սահմանված պարտադիր պահանջների:

Տեքստի վերջում պարտադիր նշում է կատարվում որոշումը ուժի մեջ մտնելու ժամկետ(ներ)ի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՍԱԿԻ ԽՈՐՀՈՒԲԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈՂ 050.0038 16.03.20 № 38

**«Ա բանկ» բաց բաժնետիրական ընկերության
«Միսիան» մասնաճյուղը գրանցելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գրանցման և լիցենզավորման հանձնաժողովի եզրակացությունը (2010 թվականի մարտի 1-ի թիվ 9 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Գրանցել «Ա բանկ» բաց բաժնետիրական ընկերության «Միսիան» մասնաճյուղը:
2. Մասնաճյուղին թույլատրել իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.
 - ա) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,
 - բ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,
 - գ) իրականացնել....

Սույն որոշումը ուժի մեջ է ընդունման պահից:

Նախագահ՝ (ստորագրություն) անուն-ազգանուն

1.7. Արձանագրություն

Կազմվում է տվյալ կազմակերպության ընդհանուր բլանկի վրա կամ ձևակերպվում է մաքուր թղթի վրա (ձևաչափ՝ A4), որտեղ կանխավ նշվում են ընդհանուր բլանկի համար նախատեսած պարտադիր պահանջները: Արձանագրության տիպային օրինակը ներառում է հետևյալ տվյալները՝ կազմակերպության (բաժանմունքի) անվանումը, փաստաթղթի տեսակի՝ անվանումը, կազմելու թվականը, գրանցման համարը, հրապարակման տեղը, վերնագիրը, տեքստը, ստորագրությունները:

- **Փաստաթղթի տեսակի անվանումը (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)**. զետեղվում է կազմակերպության անվանումից 2 ազատ տող ներքև՝ ընդհանուր բլանկի՝ տվյալների երկայնական դասավորությամբ էջի կենտրոնական մասում, անկյունային դասավորությամբ էջի ձախ սահմանագծից:
- **Թվականը**. համապատասխան նիստի թվականն է և ոչ թե փաստաթղթի ձևակերպման և վավերացման թվականը:
- **Գրանցման համարը**. հերթական նիստի համարն է:
- **Տեղը** (բնակավայրը), որտեղ կազմվել կամ հրապարակվել է արձանագրությունը:
- **Վերնագիրը**. հակիրճ արտահայտում է նիստի բովանդակությունը և ձևակերպվում է սեռական հոլովաձևով:
- **Արձանագրության տեքստը**. ունենում է 2 բաժին՝ ներածական մաս և հիմնական մաս:

Առաջինը, որ խիստ ձևայնացված է, պարունակում է նիստի մասնակիցների մասին հակիրճ տեղեկություններ՝ մասնակիցների **կազմը** և **օրակարգը**: Կազմում նախ արձանագրվում են նախագահի և քարտուղարի անունները, ապա՝ մասնակիցներին, հրավիրվածներին: Եթե վերջիններիս թիվն անցնում է 15-ը, ցուցակը ներկայացվում է կից հավելվածով:

Օրակարգում ներկայացվում են քննարկվելիք հարցերը (ինչի՞ մասին), ինչպես նաև զեկուցողի մասին տեղեկություններ՝ պաշտոնը, ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը (ի դեպ, վերջին փաստի հաղորդման համար երբեմն կիրառվող հերթականությունը՝ անուն-ազգանուն-հայրանուն, հայերենում ձևափոխությունների ժամանակ դժվարություններ է ստեղծում՝ **Արամյան Հակոբ Վազգենիից** ()): Ուստի հայերենում նախընտրելի է հակառակ հերթականությունը՝ անուն-հայրանուն-ազգանուն՝ **Հակոբ Վազգենի Արամյանից**):

Տեքստի երկրորդ՝ հիմնական մասը, ձևակերպվում է ըստ օրակարգի հարցերի և ունենում է առանձին բաժիններ՝ համապատասխան վերնագրերով, որոնք գրվում են մեծատառերով՝ **ԼՍԵՑԻՆ, ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ, ՈՐՈՇԵՑԻՆ**: Դրանցից հետո դրվում է

միջակետ: Բաժիններից յուրաքանչյուրն ունի իր բովանդակությունը և ձևավորման յուրահատկությունները:

ԼՄԵՑԻՆ բառից հետո՝ 2 ազատ տող ներքև՝ անմիջապես սահմանագծից, արձանագրվում են զեկուցողի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, ապա՝ գծիկ, հետո՝ զեկուցման համառոտ բովանդակությունը՝ ինչի՞ մասին է: (Ձեկուցման տեքստը կարող է կցվել. այդ մասին կատարվում է նշում՝ «Ձեկուցման տեքստը կցվում է»):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ բառից հետո արձանագրվում են ելույթ ունեցողի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը (ուղղական հոլովաձևով), ապա՝ գծիկ, հետո անուղղակի խոսքով արձանագրվում է ելույթի համառոտ բովանդակությունը (անհրաժեշտության դեպքում նշվում է արտահայտվողների կոչումը, աստիճանը, պաշտոնը):

Ձեկուցողին կամ արտահայտվողին ուղղված հարցերը և դրանց պատասխանները գրվում են հաջորդականությամբ: Հարց սովորի անունը կարելի է և չնշել: Այսպես՝

Հարց՝ Ի՞նչ ժամկետներ եք նախատեսում իրավիճակը շտկելու համար:

Պատ.՝ Ժամկետները կճշտվեն գործը սկսելուց հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ բառին հաջորդում է (երկու ազատ տող ներքևից) քննարկված հարցի վերաբերյալ համատեղ ընդունված վճիռը: Ձևակերպվում է խիստ հակիրճ և հստակ, պատասխանում է որոշակի հարցերի՝ ի՞նչ պետք է անել, ո՞ւմ հանձնարարել, ի՞նչ ժամկետներում ևն:

Անհրաժեշտության դեպքում նշվում են քվեարկության արդյունքները: Արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահը և քարտուղարը:

• Արձանագրության առանձին տեսակներ ենթակա են վավերացման կազմակերպության առաջին ղեկավարի կողմից: Դա կատարվում է գրիֆով՝ կնիք-մակագրությամբ, որը զետեղվում է փաստաթղթի վերին աջ անկյունում: Բաղկացած է Հաստատում եմ բառից, ղեկավար անձի պաշտոնի կրճատ անվանումից, ստորագրությունից և դրա վերծանումից (անուն-ազգանուն-հայրանուն), հաստատման տարեթվից:

Եթե վավերացումը կատարվում է վերադասի կողմից, վերջինիս պաշտոնը գրվում է ամբողջությամբ, որը ներառում է նաև տվյալ կազմակերպության ամբողջական անվանումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК

РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CENTRAL BANK OF THE

REPUBLIC OF ARMENIA

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրամավարկային քաղաքականության

հանձնաժողովի նիստի

08.11.2012 № 1

Նախագահ՝ անուն-ազգանուն

Քարտուղար՝ անուն-ազգանուն

Ներկա էին՝ Ա. Ծ. Խաչատրյանը, Հ. Մ. Մկրտչյանը, Վ. Հ. Բագրատյանը, Հ. Մ. Սահակյանը, Հ. Կ. Մալխասյանը, Մ. Մ. Ավազյանը, Ա. Ա. Հակոբյանը:

Հրավիրվածներ՝ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Մ. Ս. Ղարիբյան, ՀՀ ԿԲ ֆինանսական գործառնությունների դեպարտամենտի տնօրեն Ա. Մ. Վարդանյան

ՕՐԱԿԱՐԳ.

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի մասին

Զեկուցող՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտի տնօրեն Ա. Ծ. Խաչատրյան

2. Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում «2013 թվականի հիմնահարցի» լուծման մասին

Զեկուցող՝ ՀՀ ԿԲ տեղեկատվական կենտրոնի մասնագետ Մ. Մ. Ավազյան

1. ԼՄԵՑԻՆ.

Ա. Ծ. Խաչատրյանին – Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի մասին: Զեկուցման տեքստը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Վ. Մկրտչյան - _____

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով կատարված առաջարկություններն ու դիտողությունները՝ հանձնարարել ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտին լրամշակել և մինչև օրվա վերջ ՀՀ ԿԲ խորհրդի հաստատմանը ներկայացնել ՀՀ 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի վերջնական տարբերակը:

2. ԼՄԵՑԻՆ.

Մ. Մ. Ավազյանին - Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում «2013 թվականի հիմնահարցի» լուծման մասին _____

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ա. Ա. Հակոբյան - _____

Ա. Դ. Ավետիսյան - _____

ՈՐՈՇԵՑԻՆ.

2.1. Ընդունել ներկայացված որոշման նախագիծը՝ երկրորդ կետում ավելացնելով հետևյալ ենթակետը՝ «ՀՀ բանկերին՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել տեղեկանք ծրագրի ավարտի վերաբերյալ»:

2.2. Հանձնարարել ՀՀ ԿԲ ֆինանսական գործառնությունների դեպարտամենտին....


Նախագահ՝ (ստորագրություն) անուն-ազգանուն

Քարտուղար (ստորագրություն) անուն-ազգանուն

1.8. Պայմանագիր

Կազմակերպական բնույթի քաղաքացիական իրավական փաստաթուղթ է: «Պայմանագրի հիմնական առաքելությունը օրենքի շրջանակներում մարդկանց վարքագծի, նրանց հնարավոր և պարտադիր գործելակերպի կարգավորումն է պայմանագրային պարտականությունները խախտելու հետևանքները ցույց տալու միջոցով»⁵⁸:

Ընդունված են պայմանագրերի ինչպես որոշակի տեսակներ (առուծախի, աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու ևն), այնպես էլ տարբեր պայմանագրերի տարբեր պարունակող խառը պայմանագրեր: Այս տարատեսակությամբ պայմանավորված՝ պայմանագրի համար սահմանված պարտադիր պահանջները (տվյալների կազմը, կառուցվածքը, ձևավորումը ևն) ենթակա են մասնակի փոփոխությունների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ		ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ТБИ/НЈ/02/34
CENTRAL BANK OF REPUBLIC OF ARMENIA		
_____ 2014 թ. № ____		
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ		
<p>ՀՀ կենտրոնական բանկը, այսուհետև՝ «Գործատու», ի դեմս կենտրոնական բանկի նախագահ _____-յանի, ով գործում է ՀՀ կենտրոնական բանկի կանոնադրությամբ՝ մի կողմից, և քաղաքացի _____, այսուհետև՝ «Աշխատող»՝ մյուս կողմից, փոխադարձ ընդունելի պայմաններով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.</p> <p>1. «Աշխատողը» ընդունվում է աշխատանքի՝ բանկի _____ պարտականությունները կատարելու համար՝ ենթարկվելով հիմնարկության ներքին աշխատանքային կանոնակարգին՝ ամսական _____ դրամ աշխատավարձով:</p> <p>2. «Գործատուի» և «Աշխատողի» միջև պայմանագիրը կնքվում է _____ ժամկետով՝ _____ 2014 թ. մինչև _____ 2014 թ.:</p> <p>3. «Աշխատողը» պարտավորվում է՝</p> <p>ա) կատարել իր պաշտոնական պարտականությունները՝ մասնագիտական գիտելիքներին և որակավորմանը համապատասխան,</p> <p>բ) ժամանակին և ճիշտ կատարել ղեկավարության հանձնարարությունները:</p> <p>«Գործատուն» պարտավորվում է՝</p> <p>ա) «Աշխատողին» հատկացնել աշխատանք՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան,</p> <p>բ) ապահովել «Աշխատողին» աշխատանքային անհրաժեշտ պայմաններով՝ սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու համար, այդ թվում՝ հատ-</p>		

⁵⁸ Քաղաքացիական իրավական պայմանագրեր (օրենսդրական պարզաբանումներ), խմբ.՝ Նազարյան Վլ., Եր., 1999, էջ 3:

կացնել նրան տեխնիկական և նյութական անհրաժեշտ միջոցներ:

4. Պայմանագրի ժամկետը լրանալիս պայմանագիրն ընդհատվում է: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

5. Պայմանագիրը համարվում է օրինական միայն երկու կողմերի ստորագրության առկայության դեպքում:

Կողմերի հասցեները

«Գործատու» «Աշխատող»

Երևան, Վ. Սարգսյան 6 _____

Նախագահ՝ (ստորագրություն) անուն-ազգանուն

Աշխատող _____

_____ 2014 թ. _____ 2014 թ.

1.9. Տեղեկանք

Սույն տեղեկանքը ներկայացնող Անահիտ Դավթյանը 2013 թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 24-ը աշխատանքային պրակտիկա է անցել ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկների և բանկային տեխնոլոգիաների զարգացման վարչությունում:

Տրվում է «Ա բանկ» ներկայացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

CENTRAL BANK OF ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК

THE REPUBLIC ARMENIA РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

PERSONAL MANAGEMANT END УПРАВЛЕНИЕ ПЕРСОНАЛОМ

EXTERNAL RELATION DEPARTMENT ВНЕШНИХ СВЯЗЕЙ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Սույն տեղեկանքը ներկայացնող Անահիտ Դավթյանը 2020 թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 24-ը աշխատանքային պրակտիկա է անցել ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկների և բանկային տեխնոլոգիաների զարգացման վարչությունում:

Տրվում է «Ա բանկ» ներկայացնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ⁵⁹

Կետադրությունը հատուկ գրանշանների համակարգ է, որով գրավոր խոսքում նշվում են լեզվական որոշ միավորների (նախադասությունների, նախադասության անդամների, բառերի ու դրանց բաղադրիչների) սահմաններն ու փոխհարաբերությունը, բառերի կամ տառերի զեղչումը, ինչպես նաև բանավոր խոսքի հնչերանգի որոշ տարրեր:

Մովորաբար առանձնացվում է կետադրական նշանների երեք խումբ՝ **տրոհության, բացահայտության և առձանության:**

1. ՏՐՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տրոհության նշանները գրավոր շարադրանքում նախադասությունները և դրանց շարահյուսական բաղադրիչները սահմանագատող (միացնող), դրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև բանավոր խոսքի համապատասխան դադարներն արտահայտող կետադրական նշաններ են: Դրանք են **վերջակետը, միջակետը, ստորակետը, բուրջը:** Տրոհության առանձին նշաններ հանդես են գալիս համակցված՝ **ստորակետ-գիծ, միջակետ-գիծ, վերջակետ-գիծ, եռակետ-գիծ:**

ՎԵՐՋԱԿԵՏ դրվում է.

1. Ավարտված **նախադասության** վերջում: Հաջորդող նախադասությունը սկսվում է մեծատառով: **Օր.**՝ *Բնական գիտությունները գիտական մեթոդներով լուսաբանում են աշխարհը ղեկավարող կանոնները: Բնագիտությունը բաժանվում է հինգ ճյուղի՝ աստղագիտություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և երկրաբանություն:*

2. Շարադրանքից պարբերությամբ չանջատված **վերնագրից, ենթավերնագրից** հետո, ինչպես նաև **ծանոթություն, վարժություն, խնդիր, առաջադրանք, հոդված** և նման բառերից կամ դրանց թվահամարից հետո: **Օր.**՝

Առաջադրանք 1: Կառուցի՛ր $y = x$ և $y=1$ ֆունկցիաների գրաֆիկները: Որոշի՛ր գրաֆիկների հատման կետերի արսցիսները:

Հոդված 27: Անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ պահելու պայմանները պետք է ապահովեն դրանց կենսաբանական, անհատական և տեսա-

⁵⁹ Տե՛ս նաև **Ավետիսյան Յու.**, Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ, Եր., 2019 (Էլ. հասցե՝ http://publishing.yeu.am/files/Ardi_hayereni_ketadrutyun.pdf):

կային առանձնահատկությունները, առողջությունը և կյանքի անվտանգությունը, ինչպես նաև բացառեն պահելու վայրից կենդանիների փախուստը:

Ինֆորմատիկա: Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք:

3. Թվարկում արտահայտող այն ինքնուրույն նախադասություններից հետո, որոնցից առաջինն արտահայտում է ընդհանրական միտք, իսկ մյուսները նրա մասնավոր դրսևորումներն են: Ընդհանրական միտք արտահայտող նախադասությունից հետո կարող է դրվել նաև **միջակետ: Օր.**՝

Ակվապոնիկան սիմբիոզային միջավայրում ավանդական ջրային տնտեսության և հիդրոպոնիկայի համադրման պրակտիկան է: (.)

1. Միմբիոզային միջավայրում (արհեստական ավազաններում) բուծում են ձկներ, խխունջներ, ջրային այլ կենդանիներ:

2. Հիդրոպոնիկան բույսերի աճեցումն է ջրային եղանակով:

Եթե բաղադրիչ նախադասությունները պակաս ինքնուրույն են և առավել սերտ կապի մեջ են իրար հետ, ապա կարող են տրոհվել **միջակետով:**

4. Մատենագիտական ցանկում, տողատակում մատենագիտական ամեն մի առանձին հղումից հետո դրվում է վերջակետ: **Օր.**՝ *Գ. Թորմաջյան, Կենցաղային քիմիա, Երևան, 2013, էջ 40: Ռ. Հակոբյան, Քիմիայի և դեղագործության համառոտ բառարան, 2016 թ., էջ 154:*

5. Այս կամ այն բնագավառին վերաբերող հարցեր, թեմաներ ներկայացնող բառերի, բառակապակցությունների միջև, որոնք թվարկմամբ հաջորդում են իրար: **Օր.**՝

Կինեմատիկայի հիմունքները: Ուղղագիծ հավասարաչափ շարժում: Ուղղագիծ հավասարաչափ շարժման արագություն: Արագության մոդուլը: Արագության միավորը:

Վերջակետ-գիծ համակցված նշանը դրվում է ուրիշի ուղղակի խոսքի՝ երկու ինքնուրույն նախադասությունների միջև ընկած հեղինակային խոսքից հետո: **Օր.**՝ *«Տիեզերքը անսահմանափակ է,- սսել է Ջորդանո Բրունոն 16-րդ դարում: -Արեգակն էլ ընդամենը աստղ է»:*

ՎԵՐՋԱԿԵՏ չի դրվում.

ա) Վերջադիր կախման կետերից հետո: **Օր.**՝ *1895 թ. նոյեմբերի 8-ին Ռենտգենը, մոտանալով անջատել էլեկտրոնային վակուումային խողովակը, հանգրեղ է լամպը ու առեղծվածային ճառագայթներ նկատել... Ցնցող բացահայտումը պատահականության արդյունք է:*

բ) Շարադրանքից դուրս գործածված վերնագրից, ստեղծագործության, պարբերականի կամ այլ անվանումից, կարգախոսից, կոչից, աղյուսակի, քարտեզի կամ նկարի մակագրությունից, գովազդային կամ տեղեկատու նշանակությամբ նախադասությունից հետո: **Օր.**՝

Ռոբոտատեխնիկական համակարգերի մեխանիկա

Հաղորդիչների տաքանալն էլեկտրական հոսանքով. Ջոուլ Լենցի օրենքը

«Գենդանինների պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպություն

Անհնար է պատկերացնել կենցաղն առանց քիմիայի

Աղյուսակ 5. Ջերմաչափիչներ

Ծրագրավորման դասընթացներ

Անվճար

Ծանոթություն: Վերջակետ, միջակետ կամ ստորակետ **չի դրվում** պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ են), զեկուցումներում և այլ կարգի փաստաթղթերում դիմումի հարգական ձևերից հետո. կոչականի կամ դրան նախորդող լրացման վրա կարելի է շեշտ չդնել՝ շարադրանքը ավելորդ նշաններով չծանրաբեռնելու համար: **Օր.**

Տիկնայք և պարոնայք

Հարգարժան գործընկերներ

Մեծահարգ նախագահ, հարգարժան հյուրեր, սիրելի ներկաներ

Վերապատվելի պարոն

ՄԻՋԱԿԵՏ դրվում է.

1. Բարդ **համադասական նախադասության** համեմատաբար ինքնուրույն բաղադրիչների միջև: **Օր.**՝ *Գործն ավարտվեց. ծանր օր էր:*

2. Այնպիսի բառակապակցություններում, որոնցից մեկն արտահայտում է մյուսի վերաբերյալ կամ նրա կապակցությամբ մասնավորում, ընդհանրացում, լրացուցիչ միտք: Դա հաճախ հանդիպում է վերնագրերում, ենթավերնագրերում, բուն վերնագրի և նրա հավելվածի միջև: **Օր.**՝ *Թվային ինտեգրալ սխեմաներում արտահոսքի հզորության ծախս. չափման և արդյունքների վերլուծության ավտոմատացված համակարգ:*

Կարտոնագրե՞ն գյուտը, թե՞ ոչ. հիմնավորումները համոզիչ չեն:

Հայ պատանի մաթեմատիկոսները երկու արծաթե, մեկ բրոնզե մեդալ են նվաճել մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայում. թարմ լուրեր Լոնդոնից:

3. Առաջադաս **հեղինակային խոսքի** վերջում՝ չակերտով կամ անջատման գծով ուրիշի ուղղակի խոսքից առաջ: **Օր.**՝ *Էյնշտեյնն ասել է. «Այս կյանքում երկու անսահման բան կա՝ տիեզերքը և մարդկային հիմարությունը. ընդ որում, տիեզերքի հարցում ես վստահ չեմ»:*

4. Իրենից հետո **թվարկում** ենթադրող ավարտուն նախադասության վերջում, կանոններից, սահմանումներից հետո, երբ դրանց անմիջապես հաջորդում է օրինակը՝ առանց մեկնական **օրինակ, ինչպես, այսպես** և նման բառերի: **Օր.**՝ *Փորձերի հիման վրա կազմվել է մետաղների արտադրման շարքը. **K, Na, Mg, Al, Zn, Fe, Ni, Sn, Pb***

5. Համառոտագրությունից հետո: **Օր.**՝ *հմմտ. (համեմատել), նշվ. աշխ. (նշված աշխատություն):*

6. Թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո: **Օր.**՝ **1.** *Բնչն են ընդունում որպես լարման միավոր:* **2.** *Բնչպե՞ս են անվանում այդ միավորը:* **3.** *Բնչ լարում են օգտագործում լուսավորման ցանցում:*

Եթե թվարկում արտահայտող թվանշաններից կամ տառերից հետո կա փակագիծ, ապա միջակետ չի դրվում: **Օր.**՝

Բազմապատկելի՝ հետևյալ թվերը.

ա) 94×89 , գ) 82×315 ,

բ) 314×15 , դ) 189×563 :

7. Թվարկվող այն միավորների միջև, որոնք արտահայտված են բառակապակցություններով կամ ունեն ստորակետով նշված ներքին տրոհումներ: **Օր.**՝

Անողնաշարավորների կազմի մեջ մտնում են.

1. աղեխորշավորների տիպը. ներկայացուցիչներն են մեղուզաները.

2. տափակ որդերի տիպը. ներկայացուցիչն է պլանարիան.

3. օղակավոր որդերի տիպը. ներկայացուցիչն է անձրևորդը.

4. փափկամարմինների տիպը. ներկայացուցիչն է խխունջը:

Օանթություն 1: Եթե թվարկվող միավորներն ունեն վերջակետով նշված ներքին տրոհումներ, ապա թվարկվող միավորները կարող են տրոհվել վերջակետով: **Օր.**՝

Օրագրով նախատեսված նյութը բաժանվում է մի քանի հիմնական մասերի: (.)

1. Կինեմատիկա և դինամիկա:

2. Պահպանման օրենքները մեխանիկայում: Հեղուկներ և գազեր:

3. Մոլեկուլային ֆիզիկա: Ջերմային երևույթներ:

4. Էլեկտրաստատիստիկա: Մագնիսական դաշտ:

Օանթություն 2: Կապակցված խոսքից դուրս՝ նոր տողից կատարվող սոսկական թվարկումների դեպքում տրոհության նշան չի դրվում: **Օր.**՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2020 թ. բուհական ընդունելության ծրագիր

1. Աշխարհագրական թաղանթ

ա) Աշխարհագրական թաղանթի կառուցվածքը

բ) Երկրագնդի խոշոր պլատֆորմները

գ) Օղային զանգվածներ

դ) Բնական զոնաներ

8. Թվարկում արտահայտող այն նախադասությունների միջև, որոնցից առաջինն արտահայտում է առարկան, երևույթն ընդհանուր կերպով, իսկ մյուսները նրա մասնավոր հատկանիշներն են, դրսևորումները, պակաս ինքնուրույն են և առավել սերտ կա-

պի մեջ են իրար հետ՝ ի տարբերություն վերջակետով տրոհվող նախադասությունների: **Օր.**

Արյան բաղադրամասերը փոխներարկվում են մի քանի փուլերով.

1. *Արյան բաղադրամասերի փոխներարկման հիմնավորումից հետո բժշկի կողմից լրացված բաղադրամասերի պահանջագիրը ներկայացվում է արյան փոխներարկման բժշկական կազմակերպություն.*
2. *Բժշկի կողմից ստուգվում է փոխներարկվող՝ էրիթրոցիտ պարունակող արյան բաղադրամասի խմբային և ռեզուս պատկանելությունը.*
3. *Որոշվում է ռեցիպիենտի արյան և փոխներարկվող արյան բաղադրամասի համատեղելիությունը.*
4. *Միջին բուժաշխատողների կողմից արյան բաղադրամասը փոխներարկվում է միանգամյա օգտագործման ֆիլտրով՝ ներերակային, կաթիլային եղանակով:*

10. Անվանում, կոչ, հարցադրում արտահայտող բառերից, բառերի կապակցություններից, նախադասություններից հետո, որոնց հաջորդում է դրանց հետ ուղղակիորեն կապված, դրանց անմիջականորեն վերաբերող կարծիք, գնահատություն, եզրակացություն: **Օր.**՝ *Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը մեկ հիմնական նպատակ ունի. կիրառական ֆիզիկայի ոլորտում պետք է պատրաստի միջազգային չափանիշներ բավարարող հմուտ ճարտարագետ հետազոտողների:*

ՍՏՈՐԱԿԵՏ դրվում է.

1. Պարզ նախադասության **և, ու, կամ, թե** շաղկապներով չմիացած **բազմակի** (համագոր) և **կրկնվող անդամների** միջև: **Օր.**՝ *Թրթուրներն առավել հաճախ ֆիտոֆագ են, այսինքն՝ սնվում են բուսական կերով, տերևներով, ծաղիկներով, պտուղներով:*

Ծանոթություն: **Եվ, ու, կամ** շաղկապներով կապակցված համադաս նախադասությունների միջև դրվում է ստորակետ, եթե դրանք չունեն ընդհանուր ենթակա: **Օր.**՝ *Առանց պարարտանյութի բազմապատիկ ցանքերից հետո բուսահողը աղքատանում է կալիումի աղերից, ու բերքատվությունն ընկնում է: Անլուծելի միկրոտարրերը մատչելի չեն բույսերին, և դժվարալուծները՝ քիչ մատչելի:*

Եթե ենթական համագոր նախադասություններում կրկնվում է նույնությամբ կամ այլ բառով, դարձյալ դրվում է ստորակետ: **Օր.**՝ *Հողվածոտանիների խիտինային ծածկույթն առաձգական չէ, և այդ ծածկույթը կենդանու հետ միասին չի աճում:*

2. Անշաղկապ բարդ համադասական նախադասության այն բաղադրիչների միջև, որոնք սերտ կապված են թե՛ իմաստով, թե՛ հնչերանգով: **Օր.**՝ *Ատոմի զանգվածը հիմնականում տեղավորված է միջուկում, էլեկտրոնների զանգվածը չնչին է, էլեկտրոնների չափերը 100 հազար անգամ փոքր են ատոմի չափերից:*

3. Շաղկապավոր բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև: **Օր.**՝ *Կենդանի նյութերը մշտապես ինքնանորոգվում են, իսկ անկենդանները՝ միայն արտաքին ուժի ազդելու դեպքում:*

4. Ստորադասական շաղկապներով կամ հարաբերական դերանուններով միացած գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև դրվում է ստորակետ: **Օր.**՝ *Քարակերտ Երկիրը պարունակում է տասնյակ քիմիական նյութեր, որոնք մարդն օգտագործում է տարբեր կարիքների համար:*

Ծանոթություն 1: Իրար հաջորդող երկու շաղկապների դեպքում երկրորդ միավորը կարող է ստորակետով չանջատվել: **Օր.**՝ *Անալիզի էլեկտրակշռային եղանակի հիմքում ընկած է էլեկտրոլիզի երևույթը, և եթե անալիզվող լուծույթի միջով անցկացնում են հաստատուն էլեկտրական հոսանք, էլեկտրոդի վրա կարող է անջատվել մետաղ կամ օքսիդ:*

Ծանոթություն 2: Ստորադասական շաղկապից առաջ ստորակետ չի դրվում, երբ շաղկապը միջադասված է երկրորդական նախադասությանը: **Օր.**՝ *Այդ օրինաչափությունը եթե չլիներ, ապա մեկ բակտերիան անարգել զարգանալու դեպքում 5 օրում կլցներ համաշխարհային օվկիանոսը:*

5. Նախադասության հիմնական մասի և կոչականի միջև (վերջինիս միջանկյալ լինելու դեպքում՝ երկու կողմից): **Օր.**՝ *«Ո՛վ դու, բնություն ևն, որքա՛ն խորհրդավոր ես»:*

6. Նախադասության հիմնական մասի և միջարկումների (միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների) միջև, եթե դրանք փակագծերի մեջ առնված չեն: **Օր.**՝ *Գոյություն ունեն, այսպես կոչված, իզոբարներ, որոնք ունեն հավասար զանգվածային թվեր: Այլևս ոչ մի սարք, թվում էր, չէր կարող որսալ գրավիտացիոն ալիքները:*

7. Չայնարկությունների և նախադասության հիմնական մասի միջև: **Օր.**՝ *Այդ ֆակուլտետը, ավա՛ղ, աստիճանաբար զիջում է իր դիրքերը:*

8. Տրոհվող վերաբերականների և նախադասության հիմնական մասի միջև: **Օր.**՝ *Արեգակնային էներգիայի առաքումը, անշուշտ, ավելի գորեղ կլիներ, եթե Արեգակի լուստլորտում չլինեին ջրածնի բացասական իոններ:*

9. Միջադաս տրոհված դերբայական դարձվածից, ինչպես նաև զեղչված դերբայով դարձվածից առաջ և հետո: **Օր.**՝ *Կրաքարային կառույցները, ձգվելով մայրցամաքի հյուսիսարևելյան ափերին գուգահեռ, առաջացնում են աշխարհի ամենամեծ կորալյան խութը: Մոնան, գիրքը ձեռքին, ներս մտավ:*

10. Հիմունքի ու զիջման միջադաս տրոհված պարագաներից առաջ և հետո: **Օր.**՝ *Շիկացած պտտվող գազային միգամածությունը, ըստ Լասյլասի պատկերացման, պետք է որ տափակ ձև ունենար:*

11. Բացառման կապերով (բացի, բացառությամբ ևն) ձևավորված միջադաս անուղղակի խնդրի սկզբում և վերջում: **Օր.**՝ *Նշված բույսերը, բացի հնդկացորենից, պատկանում են հացազգիների ընտանիքին:*

12. Բուն և պարագայական մասնավորող, ինչպես նաև հետադաս մասնական **բացահայտիչներից** հետո: **Օր.**՝ *Երկշաքիլավորները՝ մագնոլիոփսիդները, ծաղկավոր բույսերի դասն են կազմում: Դրանց վեգետատիվ և գեներատիվ օրգանների բազմազանությունը բարդացնում է դասի ներսում՝ կարգերի և ընտանիքների միջև, ազգակցական կապերի հաստատումը:*

Օսնոթություն: Երբ մասնական բացահայտիչը նախադաս է, բույթը դրվում է նրանից հետո, իսկ բացահայտյալից հետո ստորակետ չի դրվում: **Օր.**՝ *Բոլոր հաղորդիչ՝ այդ միացությունը կարող է ազդել մյուսի վրա:*

13. Տրոհված **հետադաս որոշիչից** հետո: **Օր.**՝ *Անդերի ժայռերի կատարներին սավառնում են աշխարհի ամենամեծ հսկա կոնորոները՝ թևերի 3 մետր բացվածքով:*

14. **Համեմատության կապերով** (ինչպես, *ասես, ոնց որ* են) ձևի պարագաների և նախադասության այլ անդամների միջև: **Օր.**՝ *700 աստիճանում երկաթը շիկանում, կարծես բռնկվում է, ինչպես կուրացնող բոցը:*

15. **Վերջադաս դերբայական դարձվածի** և միավորիչ **և, ու, կամ** շաղկապներով սկսվող հաջորդող համադաս նախադասության միջև: **Օր.**՝ *Գիտնականները համառորեն ուսումնասիրում են երկնաքարերը՝ փորձելով այնտեղ օրգանական նյութ գտնել, և դա նրանց հաջողվել է:*

16. Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **ստորակետ-գիծ** համակցված նշանը: **Օր.**

-Մեզ չհամոզեցին բերված փաստերը, -առարկում էին երկրորդ հոսքի ուսանողները:

ԲՈՒԹ դրվում է.

1. Բացահայտյալի և **բացահայտիչի** միջև: **Օր.**՝ *Հիմնականում անհավասարաչափ են շարժվում գրեթե բոլոր մարմինները՝ փողոցում քայլող մարդը, սարից իջնող դահուկորդը, պատշգամբից ընկնող գնդակը, վայրէջք կատարող ինքնաթիռը և այլն:*

2. Առաջադաս և վերջադաս **դերբայական դարձվածների** (ինչպես նաև գեղջված դերբայով դարձվածների) և նախադասության հիմնական մասի միջև: **Օր.**՝ *Դիտելով նավերի հայտնվելը հորիզոնում՝ Պյութագորասը հանգեց Երկրի գնդաձևության գաղափարին: Էկզոլորտի վերին սահմաններում սկզբում ջերմաստիճանը նվազում է, ապա սկսում է աճել՝ հասնելով մոտ հազար երեք հարյուր աստիճանի:*

3. Առաջադաս և վերջադաս տրոհված **հիմունքի** և **զիջման** պարագաների և նախադասության հիմնական մասի միջև: **Օր.**՝ *Ըստ աղային կազմի՝ լճերը լինում են կարբոնատային կամ սոդային, սուլֆատային և քլորիդային: Սև խոռոչը Արեգակից ծանր է մոտ տասը անգամ՝ չնայած իր փոքրությանը:*

4. **Բացառման կապերով** (բացի, բացառությամբ են) ձևավորված առաջադաս կամ վերջադաս անուղղակի խնդրի և նախադասության այլ անդամների միջև: **Օր.**՝ *Բացի կենդանածին մոդեսից և իժից՝ գեռունները չեն սիրում մոլորակի հյուսիսային շրջան-*

ները: Մետաղների համեմատությամբ հեղուկների ջերմահաղորդականությունը փոքր է՝ **բացառությամբ հալեցրած մետաղների:**

5. Հետադաս բազմակի կամ ծավալուն **որոշիչից** առաջ: **Օր.**՝ 200-300 միլիոն տարի առաջ ուրիշ է եղել մեր մոլորակը՝ **բնակեցված բոլոր չափերի սողուններով ու զեռուններով:**

6. Անորոշ առումով թվարկված վերջադաս **բազմակի ենթականերից** առաջ: **Օր.**՝ Տրանսնեպտունային մարմիններից խոշորագույններն են՝ Պլուտոն, Սեդնա, Հոմեա, Մակեմակե, Կվադար, Օրկ, Էրիս:

7. Հետադաս նպատակի պարագայից առաջ, եթե արտահայտված է առանց նպատակի կապի դերբայական դարձվածով կամ անմիջապես **չի հաջորդում ստորոգյալին:** **Օր.**՝ Ուսանողներն օգտագործում են ստեղծված բոլոր հնարավորությունները՝ **դիտարկելու ավտոմատ գեներացվող ակադեմիական տեղեկագիրը:**

8. Տրոհված հատկացուցիչից հետո՝ իմաստային շփոթը կանխելու համար: **Օր.**՝ Օրգանիզմի՝ խոնավության կորստից պաշտպանող թեփուկավոր ծածկույթի շնորհիվ սողունները գոյատևում են երկրագնդի շոգ և երաշտային տարածքներում:

9. Ստորոգյալի, շաղկապի, երբեմն էլ **դերբայի զեղչումը** նշելու համար: **Օր.**՝ 200-400 կմ մեծություն ունեն 24 աստերոիդներ, իսկ 400-600 կմ՝ ընդամենը երեքը: Շատերը համոզված են՝ **(որ)** թվերն են կառավարում աշխարհը:

10. Կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում՝ **տեղեկույթ պահանջող բառի** կամ **արտահայտության** վրա: Ստորոգյալի զեղչման յուրահատուկ դեպք են անվանական (թերի) այն նախադասությունները, գիտական նկարագրություններն ու թվարկումները, կապակցված խոսքից դուրս գործածվող վերնագրերը, տեղեկատու արտահայտությունները, որոնցում առկա է ոչ վերջադաս ենթակա կամ ստորոգյալի լրացում, որի վրա էլ դրվում է բույթ՝ ստորոգում արտահայտելու համար: **Օր.**

Տիեզերքի և նրա բաղադրամասերի շարժումը՝ նյութի գոյության ձև

Խմբագիր՝ Գ. Ավետիսյան

Չափսը՝ 70 × 100 1/15

11. Տվյալ բաղադրիչ նախադասության սահմաններում վերջադաս հակիրճ (առավելապես մեկ բառով արտահայտված), չակերտների մեջ չառնված և հեղինակային խոսքից պարբերությամբ չանջատված ուրիշի **ուղղակի խոսքից** առաջ: **Օր.** Արքիմեդը լոգարանում կատարած իր հայտնագործությունից այնքան էր հուզվել, որ առանց հագնվելու վազեց փողոց՝ գոռալով՝ **է վրիկա** (գտա՛):

12. Որոշիչի վրա, երբ նրան հաջորդում է մեկնական նշանակությամբ անհամասեռ որոշիչ: **Օր.**՝ Մյուս՝ **զաճաճ** մոլորակը Մերեսն է:

13. Թվարկում արտահայտող նախ, ապա, հետո, մի կողմից, մյուս կողմից, առաջին, երկրորդ, երրորդ, վերջապես և նման այլ բառերի ու բառակապակցությունների վրա: **Օր.**

Մի կողմից՝ ջերմաստիճանն է բարձրանում, մյուս կողմից՝ օդազնացությունն է անհնար դառնում:

14. Թվարկումների, օրինակների, մեկնաբանությունների նկատմամբ նախադաս մեկնական բառերի (այսպես, այսպիսով, որոնք են, դրանք են, որ են, այդպիսիք են, օրինակ են), բացահայտման շաղկապների (այսինքն, այն է) վրա: Օր. Պետք է ավելի գործնական լինել, **այն է՝** համագործակցության նոր ուղիներ առաջարկել: **Այսպիսով՝** 18-րդ դարում պարզվեց, որ Արեգակնային համակարգը Միջ Կաթին գալակտիկայի մասն է կազմում:

Ծանոթություն: Մեկնական բառից առաջ սովորաբար դրվում է ստորակետ, երբեմն՝ միջակետ: **Օրինակ, այսպիսով** բառերը միջադաս գործածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորակետերի մեջ: **Օր.** *Բույսերի ջրասեր ու չորասեր տեսակները, օրինակ, կողք կողքի ապրել չեն կարող: Երկրագնդի միջուկի կազմում, այսպիսով, հիմնականը երկաթն է, ապա՝ ծծումբը, նիկելը, ջրածինը:*

15. Վերջադաս թվարկված (սովորաբար՝ համարակալված) բազմակի անդամների (համադաս նախադասությունների) և նախադասության հիմնական մասի միջև:

Օր. *Քվանտային դինամիկայի հիմնական հավասարումներն են՝ Շրյոդինգերի հավասարումը, Ֆոն Լինդերլադի հավասարումը, Հայզենբերգի հավասարումը, Պաուլիի հավասարումը:*

16. Թվարկումից առաջ, եթե թվարկմանը նախորդում է բառ կամ բառակապակցություն, կամ թվարկվող միավորները բառեր կամ բառակապակցություններ են: Թվարկվող բաղադրիչները տրոհվում են միջակետով կամ ստորակետով: **Օր.**

Երկրագնդի միջուկը շրջապատող ոլորտը՝ միջնապատյանը, բաժանվում է երեք ենթաօլորտների՝

1. *վերին միջնապատյան կամ թույլուրտ (ասթենոսֆերա),*
2. *միջին միջնապատյան,*
3. *ստորին միջնապատյան:*

Թվարկումը կարող է շարունակվել նույն տողում: **Օր.** *Բարձրակարգ բույսերը հիմնականում կազմված են չորս գլխավոր տարրերից՝ ա. ածխածին՝ 45%, բ. թթվածին՝ 42%, գ. ջրածին՝ 6,5%, դ. ազոտ՝ 1,5%, է. այլ տարրեր՝ 5%:*

2. ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մրանք գրավոր խոսքում նախադասության միտքը, բառերի հարաբերությունը պարզող, շարահյուսական որոշակի կառույցներ, անվանումներ, վերնագրեր և խոսքի այլ տարրեր նշող, ինչպես նաև բանավոր խոսքի համապատասխան դադարներն ու ձայ-

նի էլեկտրոնային լրացուցիչ կերպով արտահայտող կետադրական նշաններն են և դրանց համակցությունները: Դրանք են **չակերտները, փակագծերը, կախման կետերը, բազմակետը, անջատման գծիկը, միության գծիկը, ենթամասն, ապաթարցը:**

ՉԱԿԵՐՏՆԵՐՈՎ անջատվում են շարադրանքի՝ որոշակի հատկանիշներով առանձնացող հատվածներ: Հատվածի սկզբում դրվում է բացող (ձախ) չակերտը, վերջում՝ փակող (աջ) չակերտը:

Չակերտների մեջ են առնվում.

1. Մեջբերվող **ուղղակի խոսքը**՝ լինի գրավոր, հնչող թե ներքին, իրական, ենթադրյալ թե վերագրվող, ամբողջական թե թերի, հեղինակի խոսքին քերականորեն ձուլված թե չձուլված:

Օր.՝ *Թոմաս Էդիսոնը մի առիթով ասել է. «Մենք էլեկտրականությունն այնքան մատչելի կդարձնենք, որ մոմեր կսկսեն վառել միայն հարուստները»:*

2. Գիտական և արվեստի երկերի, հոդվածների **վերնագրերը**, պարբերականների անունները, հիմնարկների, կազմակերպությունների, զբոսայգիների, ապրանքների, շքանշանների պայմանական անունները, մակնիշները՝ խոսքում մեջբերվելու դեպքում: Դրանք սկսվում են մեծատառով: Միջադաս լինելու դեպքում չակերտից առաջ կետադրություն չեն պահանջում: **Օր.**՝ *«Կոմիտաս» դաշնամուր, «Պատվո նշան» շքանշան, «Պեժո» ավտոմեքենա, «Գրանդ Քենդի» ընկերություն ևն: Հոլովվելիս վերջավորություններն ու հոդերը սովորաբար չակերտներից դուրս չեն հանվում: **Օր.**՝ *1954 թ.-ին ԵՂԶ հրատարակչությունը լույս ընծայեց Վիկտոր Համբարձումյանի հայտնի աշխատությունը՝ «Կոսմոգոնիան»:* Ս. Ամիրյանի «Ֆիզիոլոգիական տերմինների հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանից» օգտվում է բժիշկների մեծ մասը:*

Վերջավորություններն ու հոդերը չակերտներից դուրս՝ գծիկով միացած են գրվում, եթե անվան կամ վերնագրի հետ միանալիս դժվարացնում են բնագրի ընկալումը կամ առաջ են բերում հայերենի համար անսովոր ձևեր: Մասնավորապես.

ա) Եթե վերնագիրն արտահայտված է ամբողջական նախադասությամբ, կամ եթե վերջավորության կամ հոդի անջատ գրությամբ անհրաժեշտ է լինում առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով: **Օր.**՝ *Հրատարակվել են «Ինչ է, ով է»-ի բոլոր չորս հատորներն էլ: «Աշխարհի հրաշքերի մասին»-ը Մարկո Պոլոն շարադրել է 1300 թվականին:*

բ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ, **օր.**՝ *«tert.am»-ի և «Facebook»-ի օգտատերերը հետաքրքիր հարցադրումներ են անում: Դրամական փոխանցումը կատարվել է «ProCreditBank»-ով:*

Գիտական և արվեստի երկերը խոսքից դուրս՝ որպես վերնագիր, կամ մատենագիտական ցանկերում, ցուցակներում հեղինակի անվան հետ գործածվելիս չակերտների մեջ չեն առնվում, բայց դարձյալ սկսվում են մեծատառով: **Օր.**՝ *Մուսայան Վ. Խ., Մաթեմատիկական անալիզ, մաս 1, Երևան, 2018, 340 էջ:*

Ծանոթագրություն: Պարբերական հրատարակություններից կատարված հղումներում էթե պարբերականի տիպը չի նշվում, ապա պարբերականի անունը գրվում է չակերտներում: **Օր.**՝ *Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, Եր., 2019, թիվ 98: Բայց՝ «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2019, թիվ 98:*

Ժողովածուների (փաստաթղթեր, որոշումներ, օրենքներ, հոդվածներ ևն), խմբագրական համատեղ արդյունք հանդիսացող աշխատությունների վերնագրերը առանց հեղինակի անվան հիշատակվելիս առնվում են չակերտների մեջ: **Օր.**՝ *«Հայաստանի ստանդարտ. ՀՄՏ 6.3-98: Պաշտոնական հրատարակություն», Երևան, 1998: «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», Երևան, 1996 թ.:*

Նախադասությամբ արտահայտված կամ հոլովված բառով վերջացող որոշ անունների հոլովական վերջավորություն կամ հոդ ավելացնելու դեպքում երբեմն առաջանում են անվան ընկալումը դժվարացնող ոչ սովորական ձևեր: Դրանցից խուսափելու համար խորհուրդ է տրվում անվան հետ գործածել համապատասխան լրացյալ: **Օր.**՝ *«Մատյան ողբերգության»-ի հեղինակը > «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը: «Մաթեմատիկական մոդելների կիրառումը աշխարհագրության մեջ»-ը միջգիտակարգային ուսումնասիրություն է > «Մաթեմատիկական մոդելների կիրառումը աշխարհագրության մեջ» մենագրությունը միջգիտակարգային ուսումնասիրություն է:*

3. Հեգնական, ծաղրական, ժխտական կամ փոխաբերական իմաստով գործածված բառերը, արտահայտությունները: **Օր.**՝ *Լինելով չափից ավելի «գաղափարական»՝ նա հակված չէ դավանելու որևէ հաստատուն սկզբունքի:*

4. Խոսքում հիշատակվող բառը, լեզվական միավորը, ինչպես նաև խոսքի բաղադրիչ այն օտարաբանությունները, բարբառային, ժարգոնային բառերն ու արտահայտությունները, որոնց կիրառության միտումնավոր և ոճական բնույթն անհրաժեշտ է շեշտել: **Օր.**՝ *Սյոպիսի մոլորակները մտնում են առանձին դասի՝ սառցային «հսկաների» մեջ: ՀՀ ներկա նախագահից «նեղացածները» հանգրվանել են նախորդ նախագահի «տանհրի» տակ:*

Ծանոթություն: Խոսքի մեջ հիշատակվող բառի, միավորի, խոսքի բաղադրիչ օտարաբանության և այլ արտահայտությունների առանձնացումը կարող է կատարվել նաև ընդգծումով, թավ տառատեսակով, շղատառով կամ բուն շարվածքից տարբեր այլ տառատեսակով: **Օր.**՝ *Պոլիկլինիկա, պոլիտեխնիկ բառերը հունական փոխառություններ են և ունեն ընդհանուր բաղադրիչ պոլի-, որը նշանակում է «բազում, շատ»: Այստեղից էլ պոլիկլինիկա՝ բազում հիվանդությունների բուժման տեղ:*

ՓՄԿԱԳԾԵՐՈՎ անջատվում են շարադրանքին քերականորեն չկապված, շարադրանքի մեջ ներդրված և ազատ կերպով հանվելու ենթակա ասույթները, տեղեկույթները, խոսքի հատվածները, նշանները: Դրանք կարող են միջանկյալ կամ կից լինել շարադրանքին, նախադասությանը, բառին: Ասույթի (տեղեկույթի, հատվածի, տառի) սկզբում դրվում է բացող (ձախ) փակագիծը, վերջում՝ փակող (աջ) փակագիծը:

Փակագծերի մեջ են առնվում.

1. Միջարկումները: **Օր.**՝ *Ըստ օվկիանոսի մակարդակից իրենց բարձրության՝ հարթավայրերը լինում են դաշտավայրեր (մինչև 200 մ), բարձրավայրեր (200-500 մ), սա-*

րահարթեր (500 մ-ից բարձր) և ցածրավայրեր (օվկիանոսի մակարդակից ցածր) (նկար 4.14):

2. Որպես նմուշ կամ լուսաբանում բերվող նշանները, տառերը, բառերը, արտահայտությունները: Օր.՝ *Ընդունենք, որ առաջին անհայտը (x) մեծ է երկրորդից (y): Աստղանիշը (*) դրվում է թե՛ շարադրանքի համապատասխան բառի վրա, թե՛ տողատակում՝ ծանոթագրության սկզբում:*

3. Այլընտրանքի ձևով նշվող վերջավորությունները, բառերի բաղադրիչները: Օր.՝ *Մոլորակ(ներ)ը՝ երկնային մարմին(ներ)ը, պտտվում է(են) ուղեծրով աստղի կամ նրա մնացորդների շուրջ:*

4. Բառերի, արտահայտությունների, անվանումների տարբերակները: Օր.՝ *Գոգավոր (ցրող) ռապնյակը նույնպես ունի կիզակետ, միայն թե այն «կեղծ» է: Ինչպես Երևակի (Սատուրն), այնպես էլ Լուսնթագի (Յուպիտեր) շուրջը գոյություն ունի օղակ, որը գտնվում է 56 հազ. կմ հեռավորության վրա:*

5. Շարադրանքի մեջ տրվող հղումներն ու մատենագիտական տվյալները: Օր.՝ *Մաքուր տոնայնությամբ ձայներ է արձակում կամերտոն կոչվող գործիքը (Մ-աձև մետաղյա երկթևանի ձող է), երբ դրան հարվածում են (նկ. 167.10): Տե՛ս Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, Ներկան և ապագան (ՀԱԸ հիմնադրման 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Եր., 2006:*

6. Մաթեմատիկայում՝ գործողությունների առաջնահերթությունները նշելու համար: Օր.՝

Վարժություն 510: Կատարե՛ք գործողությունները.

ա) $(21058 - 208 : 104) - (394 - 2527 : 19)$

բ) $(1567 + 891 : 33) : (78 - 2052 : 27)$

7. Միակողմանի (փակող) փակագիծ դրվում է թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո: Օր.՝

Ծավալն ունի հետևյալ հիմնական հատկությունները.

1) Հավասար մարմիններն ունեն հավասար ծավալներ:

2) Եթե մարմինը տրոհվում է մասերի, ապա մարմնի ծավալը հավասար է նրա մասերի ծավալների գումարին:

ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ (ԵՌԱԿԵՏ) դրվում են.

1. **Կցկտուր, հեղինակի կողմից միտումնավոր անավարտ կամ իբրև այդպիսին ներկայացվող խոսքի այն հատվածում,** որտեղ ակնկալվում են հնարավոր կամ անհնար (անսպասելի) շարունակությունը, բառերով չարտահայտված հույզը, զգացմունքը: Դրվում է նախորդող բառին (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդող բառին) կից: Վերջադաս եռակետը փոխարինում է վերջակետին: Օր.՝ *Պատմություն ինը... Ա՛հ, դատավորների այդ մեծ և անմահ դատավորը...*

Եռակետը խոսքի՝ չակերտների կամ փակագծի մեջ առնվելու դեպքում մնում է չակերտների ներսում: **Օր.**՝ *«Դժվարությամբ է համակերպվում...»:*

2. Զարմանք հարուցող կամ անսպասելի տեղեկություն նշող բառից, արտահայտությունից առաջ: Բացատրվում է թե՛ նախորդ, թե՛ հաջորդ բառից: **Օր.**՝ *Մարդկության կյանքը միշտ էլ զարգացել ու զարգանում է ... կարիքի շնորհիվ:*

ԲԱԶՄԱԿԵՏԸ կազմված է չորս կամ ավելի կետերից (...): Նշում է մեջբերվող խոսքի որևէ հատվածի, բառի կամ դրա բաղադրիչի կրճատված լինելը: Դրվում է տողի վրա՝ նախորդ (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդ) բառին կից՝ **մեջբերման կրճատված մասի տեղում:** Մեջբերվող խոսքի՝ չակերտների մեջ առնվելու դեպքում մնում է չակերտների ներսում: **Օր.**՝ *Եվ ի՛նչ գեղեցիկ են էս խոսքերը, ի՛նչ վեհ ու պայծառ է էս իդճը. «Տե՛ր, ապրեցրո՛ւ հային և պայծառ արա նրան...»:*

Բազմակետով սկսվող առաջադաս ամբողջական նախադասությունը սկսվում է մեծատառով: **Օր.**՝ *Վ. Ի. Վերնադսկիի մտքերից է հետևյալը. «... Բնագիտությամբ և մաթեմատիկայով լի գիտական աշխարհայացքը ոչ միայն ներկայի, այլև ապագայի ամենամեծ ուժն է»:*

Սկզբից կրճատված նախադասությունը բազմակետից հետո սկսվում է փոքրատառով: **Օր.**՝ *Տարրերի տարածման օրինաչափություններից մեկը դրանց «... կարգային համարի մեծացմանը զուգընթաց» անհավասարաչափ փոքրանալն է:*

Օսանություն 1: Աշխատության կամ ժողովածուի վերնագիրը երկար լինելու դեպքում կարելի է գրել կրճատ՝ շարունակությունը նշելով բազմակետով: **Օր.**՝ *Վ. Գ. Բարխուդարյան, Բարձրամոլեկուլային միացությունների մոլեկուլային բնութագրերի որոշումը, Եր., 1985: > Վ. Գ. Բարխուդարյան, Բարձրամոլեկուլային..., Եր., 1985:*

Օսանություն 2: Վերջին շրջանում բազմակետերի փոխարեն հաճախ գործածում են կախման կետեր:

ԱՆՋԱՏՄԱՆ ԳԻՐԸ բառերից անջատվում է **բացատրով:** Դրվում է՝

1. Իրական կամ ենթադրյալ հնչող **ուրիշի ուղղակի խոսքի**, երկխոսության ամեն մի մասի սկզբում: Անջատման գծով սկսվող ուղղակի խոսքը գրվում է նոր տողից, սկսվում է մեծատառով: Հեղինակի առաջադաս խոսքն ավարտվում է միջակետով: Հեղինակի վերջադաս և միջադաս խոսքերն սկսվում են **ստորակետ-գծով** (երբեմն՝ **եռակետ-գծով**): Հեղինակի միջադաս խոսքն ավարտվում է **ստորակետ-գծով** (երբեմն՝ **միջակետ-գծով, վերջակետ-գծով, եռակետ-գծով**): **Օր.**

ա. Հեղինակն ասաց.

- Ես առարկում եմ:

բ. - Ես, - ասաց հեղինակը, - առարկում եմ:

գ. - Ես առարկում եմ, - ասաց հեղինակը:

2. Տարածական կամ հակադրական հարաբերության մեջ գտնվող անվանումների ու բառերի միջև: **Օր.**՝ *Երևան – Արարատ – Արցախ մայրուղու շինարարությունն ավարտվել է:*

3. **Թատերգություններում՝** խոսողի անվան և նրա խոսքի միջև: **Օր.**՝

Միսոն վանական – Մահն է քու առջեւդ, թշուառակա՛ն:

Աբեղա – Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

4. Թվարկումով ներկայացված բառերի ու անվանումների և դրանց վերաբերյալ տեղեկույթի միջև՝ արտահայտելով տարբեր **հարաբերություններ** (բառ և բացատրություն, հեղինակ և ստեղծագործություն, դեր և դերասան, գործող անձ և բնութագիր են): **Օր.**՝

Լեզուների համառոտագրությունների ցանկ

լատ. – լատիներեն

անգլ. – անգլերեն

Դիագնոզ – ճնշման և ջերմաստիճանի ազդեցությամբ նստվածքներում կատարվող ֆիզիկաքիմիական, քիմիական և օրգանական փոփոխություններ, որոնց հետևանքով նստվածքը ենթարկվում է քարացման:

5. **Թվարկման՝** նոր տողից սկսվող չհամարակալված ծավալուն անդամների սկզբում:

Օր.՝ *Ըստ բարձրության՝ մթնոլորտում առանձնացնում են մի քանի ենթաոլորտներ՝*

- ստորին ոլորտ (ստրատոսֆերա՝ 8-18 կմ բարձրությամբ),

- վերնոլորտ (ստրատոսֆերա՝ մինչև 50-55 կմ բարձրությունները),

- միջնոլորտ (մեզոսֆերա՝ 55-80 կմ բարձրությամբ):

6. Թվանշաններով արտահայտված **թվականների** այնպիսի կապակցության բաղադրիչների միջև, որի առաջին բաղադրիչն ունի բացառականի իմաստ: **Օր.**՝ *էջ 10 – 15, 1 – 3-րդ կուրսեր, IV – VIII հատորներ, ԺԲ – ԺԹ գլուխներ* ևն: Նույնը տառերով գրվում է առանց գծի՝ անջատ (*էջ տասից տասնհինգ* ևն):

Մրանից պետք է տարբերել թվականների այն կապակցությունը, որն ունի մոտավորության իմաստ (**10-15 մարդ, 2-3 ամիս** ևն) և գրվում է միության գծիկով նաև տառերով արտահայտելիս (չորս-հինգ հոգի, քսանհինգ-երեսուն տարեկան):

ՄԻՈՒԹՅԱՆ ԳԾԻԿԸ դրվում է.

1. **Հարադրական բարդության** մի շարք տեսակների բաղադրիչների միջև՝ առանց բացատների: **Օր.**՝ *խումբ-խումբ, ատոմ-մասնիկ:*

2. Որոշ **համառոտագրությունների** առաջին և վերջին տառերի կամ տառախմբերի միջև: **Օր.**՝ *պ-ն (պարոն), դ-ր (դոկտոր), գ-տ (գնդապետ)* ևն:

ԵՆԹԱՄԱՆԱՆ ցույց է տալիս, որ բառի մի մասը տարված է հաջորդ տող: Դրվում է տողադարձված բառի այն մասին աջից կից, որը թողնվել է նախորդ տողում: **Օր.**՝ *բարձր- լեռնային, սահմանա- դրական, քրե- որեն, ի- սպառ:*

Գործածվում է նաև բառը կամ ասույթը **վանկատված** գրելիս: **Օր.**՝ *կո-սի-նուս, ու-դի-կալ:*

Ենթամնան հաճախ նույնացվում է միության գծիկի հետ, երբ վերջինով միացած բաղադրիչներով հարադրավոր բարդությունների տողադարձի ժամանակ հաջորդ տող է տարվում երկրորդ բաղադրիչն ամբողջությամբ: **Օր.**՝ *խտալա-գերմանական:*

ԱՊԱԹԱՐՑԸ գործածվում է.

1. Արևմտահայերենում, միջին հայերենում, բարբառային խոսքում՝ սղված ձայնավորը նշելու համար: **Օր.**՝ *Կ'սպրիհնք այդ երկրին մեջ, բայց կ'երազենք մեր հայրենիքը:*

2. Օտար բաղադրյալ հատուկ անունների որոշ մասնիկ-բաղադրիչներն անջատելու կամ դրանց սղված ձայնավորը նշելու համար: **Օր.**՝ *դ'Արտանյան, Օ'Շենրի, դ'Անունցիո:*

3. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մրանք բանավոր խոսքի առոգանության երանգները, ձայնի ելևէջները և շեշտադրությունը գրավոր խոսքում արտահայտող կետադրական նշաններն են: Դրանք են **շեշտը** (շեշտանշանը), **պարուկը** (հարցական նշանը), **բացականչական** (երկարացման) նշանը:

ՇԵՇՏԸ (ՇԵՇՏԱՆՇԱՆ) դրվում է.

1. Հրամայական նախադասության մեջ՝ **հրամայական բայաձևի վրա:**

Երբեմն հրամայական շեշտը կարող է տեղափոխվել նախադասության այլ անդամի վրա: **Օր.**՝ *Մի՛ ուշացրեք. արա՛ գ ավարտեք այդ աշխատանքը:*

Ծանոթություն 1: Հրամայական եղանակի բայաձևի վրա կարող է շեշտ չդրվել՝ պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով: **Օր.**՝ *Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք հետևյալ հանգամանքին:*

Ծանոթություն 2: Հրամայական նախադասության մեջ շեշտի փոխարեն կարող է գործածվել բացականչական նշան, եթե բառն արտաբերվում է բացականչումով: **Օր.**՝ *Փրկեցե՛ք ինձ Ձեր գթասրտությունից. ես դրա կարիքը չունեմ:*

Ծանոթություն 3: Հարադրավոր բայերի շեշտը դրվում է առաջին ոչ բայական բաղադրիչի վրա՝ **մո՛տ արի, վե՛ր կաց, ցո՛ւյց տուր, բա՛ց արեք, աչքի՛ ընկեք** ևն: Նմանապես **որ, թե** բառերով բաղադրված հարադրավոր կազմություններում շեշտվում է առաջին բաղադրիչը՝ **հե՛նց որ, ասե՛ս որ, ե՛րբ որ, միա՛յն թե, մա՛նավանդ որ, այնպե՛ս որ, ինչպե՛ս որ** ևն:

2. **Կոչականի** կամ դրա՝ դերանունով չարտահայտված նախադաս լրացման վրա: **Օր.**՝

ա) -Պարո՛ն, դա հանճարեղ է:

բ) -Հարգելի՛ ատենախոս, ավարտեցի՞ք Ձեր խոսքը:

3. Կամային (կոչական) **ձայնարկությունների** և բնաձայնությունների վրա: **Օր.**՝ *-է՛յ, տղա՛, արի այստե՛ղ: Մեկ էր, թորը՛ մի, ծառից մի խնձոր ընկավ:*

4. **Կրկնադիր շաղկապների** վրա: **Օր.**՝ *Վիրուսները վարակում են կյանքի բոլոր բջջային ձևերը՝ և՛ կենդանիներին ու բույսերին, և՛ բակտերիաներին ու արքեաներին:*

5. **Մաղթանքի, ողջույնի, շնորհավորանքի** և անվանական բառակապակցությամբ արտահայտված խոսքային այլ բանաձևերի գերադաս անդամի, **պատասխանական բառերի** վրա: **Օր.**՝ *Ողջո՛ւյն, ինչպե՛ս են գործերդ: Բավակա՛ն է, շարժվեցինք: Վե՛րջ, չեմ ուզում շարունակությունը լսել: Ամենայն՛ բարի՛ք Ձեզ: Այո՛, տեղյակ եմ:*

ՊԱՐՈՒՅԿ (ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆ) դրվում է.

1. **Հարցական հնչերանգով արտասանվող բառի վրա՝** հարցում արտահայտելու համար: **Օր.**՝ *Հնարավո՞ր է հավասարումը լուծել մի քանի եղանակով:*

Պարույկ չի դրվում անուղղակի հարցում արտահայտող դերանունների վրա: **Օր.**՝ *Պարզենք, թե որքան՝ ժամանակում մարմինը կհասնի գետնին և ինչ արագություն կունենա գետնին հարվածելու պահին:*

Անուղղակի հարցում արտահայտող նախադասության մեջ **արդյոք** բառի (կամ նախադասության այլ անդամի) վրա սովորաբար հարցական նշան դրվում է: **Օր.**՝ *Կա՞ն արդյո(՞)ք մոլորակներ Արեգակնային համակարգից հետո: Տարբեր գանգվածներ ունեցող երկու մարմիններ արդյո(՞)ք կարո(՞)ղ են ունենալ նույն կինետիկ էներգիան:*

2. Որոշ **վերաբերականների** (մի թե, չլինի՞ թե, պատկերացնո՞ւմ եք, ինչպե՞ս չէ, չէ՞ որ, ո՞վ իմանա) վրա: **Օր.**՝ *Մարդը չի կարող թափանցել Երկրագնդի խորքը. չէ՞ որ նրա շառավիղը 6.371 կմ է: Մի՞ թե 4,6 մլրդ տարին բավական չէր, որ ընդերքում տեղի ունեցող տարբերակումն ավարտվեր:*

ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ (ԵՐԿԱՐԱՑՄԱՆ) ՆՇԱՆ դրվում է.

1. **Բացականչական հնչերանգով և համեմատաբար տևականորեն արտասանվող բառի վրա՝** բացականչություն, հույզ, կիրք արտահայտելու համար: **Օր.**՝ *Հապա հրաբուխնե՛րը. երկրի խորքից դուրս են բերում միլիոնավոր խորանարդ մետրերով լավա, գազեր, գոյացնում են լավային ծովեր: Ի՛նչ հաճելի եղանակ է:*

2. **Սովորաբար բացականչական նշան են կրում ձայնարկությունները:** **Օր.**՝ *Օ՛, ի՛նչ հրաշք աշխարհ է բնությունը՝ իր գարմանայի հարստությամբ: Հէ՛յ, ձայնի՛ր, խնդրում եմ:*

3. **Բացականչումով արտասանվող կոչականի** կամ հրաման, հորդոր, խնդրանք, կոչ արտահայտող բառի վրա՝ շեշտանշանի փոխարեն: **Օր.**՝ *Հայրենի՛ լեռներ, կարոտել եմ ձեզ:*

4. **Բաղձանքի** (երբեմն էլ՝ այլ) **վերաբերականների** վրա: **Օր.**՝ *Երանի՛ նրան, ով վիշտ չի տեսել: Ո՛չ, դա անհրազործելի է:*

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՄՐ ԲՆԱԳՐԵՐ, ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐ

3.1. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լրացրե՛ք համապատասխան տառերը:

Է կամ Է

Այժմ...ական, ան...անալ, առ...ջ, բազմ...րանգ, որև..., գոմ...ջ, խաբ...ություն, չ...ի, դող...րոցք, Էլև...ջ, երբև..., երբևից..., որևից..., հն...աբան, ճամփ...գր, մանր..., միջօր...ական, վեր...լք, քրիստոն...ություն, առ...րևույթ, ան...րկբա, սառը...ական, երփն...րանգ, զարկ...րակ, ան...րևակայելի, չ...մ, չ...իր, չ...նք, չ...ք, չ...ինք:

Օ կամ ո

Ան...գուտ, աման...ր, ամեն...րյա, կողմն...րոշում, միջ...րե, հոգե...րություն, ան...րակ, ան...թևան, ան...րինական, տն...րեն, արծաթագ...ծ, եռ...տանի, բաց...թյա, գիշեր...թիկ, բն...րրան, կես...ր, երկվ...րյակ, հերկվ...ր, մեղմ...րոք, հանապազ...րյա, նախ...րոք, նախ...րե, ջր...րհնեք, հ...դս ցնդել, օրեց...ր, թիկն...թոց, բար...րություն, ապ...րինի, վաղ...րդայն, կող...սկր, փորձան...թ, գ...րուզիշեր, տար...րինակ, հ...տնկայա, ան...թի, ան...դորմ, հ...գուտ:

Ը (ըստ անհրաժեշտության)

Ակ...նբախ, ան...նթեռնելի, լուս...նկա, ակ...նթարթ, անակ...նկալ, ան...նդհատ, ինքն...ստիներյան, որոտ...նդոստ, մեկ...նդմեջ, չ...նկնել, ան...նդմեջ, ակ...նկալել, առ...նչվել, առ...նթեր, գահ...նկեց, երկ...նտրանք, մերթ...նդմերթ, խոչ...նդոտ, համ...նթաց, ձեռ...նտու, սր...նթաց, օր...ստօրե, կոր...նթարդ, մթ...նկա, հյուր...նկալ:

Եվ կամ և

Ամեն...ին, բ...եռ, գեր...արել, գոտ...որել, դափն...արդ, ...րոպացի, թեթ...ամիտ, կար...որ, կար...եր, հետ...ակ, հոգ...արք, հոգ...իճակ, մի...նույն, սեթ...եթել, ս...եռուն, տար...երջ, ոսկ...որել, իսկույն ...եթ, ուղ...որ, ուղ...արձ, սերկ...իլ, հ...իհ..., ...րամիություն, ար...մտա...րոպական, առ...տրական, տեր...աթափ, ար...առ, մտաս...եռում:

Բ, պ կամ փ

Աղ...արկղ, եր...եմն, աղ...յուր, թմ...կաթաղանթ, ա...շահար, Ար...ինե, ներ...ող, բամ...ել, Գա...րիել, դար...աս, դա...նի, եր...ներանգ, թ...րտալ, խարխա...ել, համ...երատար, խա...կանք, խա...ուսիկ, համ...ուրել, հա...ճեպ, հա...շտապ, հար...եցող, հա...շտակել, ճամ...որդական, ս...րդել, ս...քթնել, տուրուդմ...ոց, ուր...աթախոս, սր...ապիղծ, գինար...ուք, ջրար...ի, ձեր...ակալել, Սերո...յան, հար...ուխ, լայնաշեղ..., Ա...շերուն:

Գ, կ կամ ք

Դիցու..., ան...ամ, արտասու..., արևայրու..., ա...ցան, բազրի..., գինարբու... (քեֆ, խրախճանք), գինարբու... (ծաղիկ), գու...վել, թան...ագին, թան...արան, պար...նատրել, կար...ապահ, հրմշտու..., հավա...վել, ձ...տում, ճրա..., մանրու..., քաշքշու..., մ...ացնել, թա...ստոց, շա...անակագույն, ծնկաչո..., սայթա...ել, սրտխառնու..., ս...ավոր, քու..., թա...ստոց, վար...աբեկել, հա...նվել, վար...ագիծ, վար...անիշ, տա...ղեղ, փա...ցնել, փող..., օ...ուտ, տրտմաշու..., քաշկոտու... :

Դ, տ կամ ք

Աղո...ք, անդա...ար, անդա...րում, անթար..., անվր...ով, առըն...եր, ըն...ամենը, ար...ուկ, ար...յունք, ար...ուզար..., բացօ...յա, բեր...աքաղաք, բր...ոտ, գեղար..., գմբեթար..., դր...ել, եր...իկ, եր...վել, շքեր..., զար...ուցիչ, զվար..., զար...ոնք, ըն...հուպ, ըն...հանուր, ըն...արձակ, ըն...ացք, ըն...րիք, ժայ...քել, լյար..., լեր...ացած, կորնթար..., խեղ...ել, խոր...ուբոր..., հար...ագող, կր...սեր, սր...ողել, վա...թար, փ...ել, որ...ատունկ, փ...ախտ, վր...ովվել, վա...սուն, փ...ախտ, գիրք... (քո գիրքը), ծնունդ... (քո ծնունդը):

Ձ, ծ կամ ց

Ամբար...իչ, անդամալույ..., անե...ք, ասա...վածք, ար...ակել, հասարակա...ային, բար...ունք, ճրագալույ..., դեղ...անիկ, դյու...ագուն, ընթեր...ել, տարա...քային, լվա...ք, լու...կի, ար...ունք, խ...կել, խուր..., դաղ..., կ...կվել, կ...կտուր, կուր...ք, հար...ակվել, ընչա...ք, հեղ...ուցիչ, հինավուր..., մտա...ածին, որ...աքար, բաղ...ալի, վերամբար..., բար...իթողի, վար...կան, տր...ակ, փղ...կալ, փոր...անք, ձվա...եղ, դարձվա...ք, վր...ին:

Ջ, ճ կամ չ

Ակնակապի..., անուր..., գաղ..., գա...ած, գեղ...կուռի, խառնիճաղան..., առա...ընթաց, առ...ն, գո...ի, դար...նագույն, գեղ...ել, զղ...ալ, զի...ել, թռ...ել, թր...ոց, խո...կոր, կո...կել, կտրի... (քաջ), ճան..., որ..., պ...նանք, վայրէ...ք, քրք...ալ, ա...ալուրջ, քր...ոտ, թր...ված, շեղ..., ող...ույն, ո...ի, ա...պարար, ալո...ենի, մանրախի..., աղ...ամուղ..., հապ...եպ, կտրի... (կտրող գործիք), չղ...իկ, մխր...վել, մր...նանոց:

Ձ կամ ս, ժ կամ շ

Հետախույ..., կենտրոնախույ..., որպես...ի, հիպնո..., հու...կու, գու...կան, դ...կամ, պատ...գամբ, օ...տված, դ...խուհի, գ...տույթուն, դ...նդակ, ն...տար, նա...իշտ, ժու...կալ, չարագույ..., ա...խետ, օ...տել, հու...կու, Հա...կերտ, ալեհույ..., կարոտակե..., երա...տահավ, պ...գանք, հիպնո..., քննախույ...:

Վ կամ ֆ

Աս...ալտ, ա...տորուս, հարա...ային, ս...ինքս, Ա...դանստան, նա...թամուղ, օ...կիանոս, նա...թավառ, նգո...ք, փլա...քամիչ, Ադ...անք, թա...շյա, հո...հար:

Ղ կամ իս

Ա...տահանել, ա...բանոց, ա...ճատել, անե...ծ, ապ...տած, առե...ծված, բա...կացուցիչ, երկնամու..., գա...թել, գա...տագողի, դժո...ք, դրա...տ, ընձու...տ, թա...տ, թ...թապանակ, թա...ծոտ, սանդու...ք, նա...քան, ա...տորոշել, թ...պոտ, իա...տել, իս...ճալ, կե...ծիք, կե...տոտ, կմա...ք, նա...շագարդ, կո...պեք, հա...ճապակի, ճե...քել, թ...կի, մե...սավոր, սանդ...ակ, սպանա..., նո...կալի, ա...ջամու...ջ, մ...կտալ, ա...տեղություն, վա...ճան:

Մ կամ ն

Ա...բաստանյալ, ա...բարիշտ, ա...բարտավան, բա...բասել, ա...պաճույճ, հա...բույր, հա...պատրաստից, ա...փոփել, ա...բիծ, բա...բեր, ա...բասիր, բա...բեր, որոտը...դոստ, ը...բոստ, ճա...փորդել, ա...բավ, Մա...վել, Մա...վել, սի...ֆոնիա, ա...բիոն, սուսա...բար, ա...պրոպ, ը...բոնել, անձա...ք, ինքնա...փոփ:

Բ կամ ո

Ա...այժմ, սա...սուռ, ա...ջն, ա...դեն, ա...ժանի, ա...համարիել, կ...ճոն, ախորժալու..., բա...բառ, գո...գոռալ, դ...ծել, ե...եսուն, թ...ջել, թ...ջել, Կալիֆո...նիա, թ...վոալ, թ...թիո, իս...պոտ, ծեծկ...տոց, իս...ճիթ, Բե...լին, կա...ջել, կ...ծել, կու...ծք, ճմ...թել, մ...մուռ, կա...կա...ուն, ոսկ...ոտ, գ...գիռ, Պա...նաս, իս...տնել, սա...ջել, փ...փրել, Նիդե...լանդներ, պա...կել, քա...որդ, թ...թուր, ճ...ճ...ոց, Կա...լ, Չա...լի, Շա...լ:

Հ (ըստ անհրաժեշտության)

Անհեթ...եթ, աշխար...այացք, ար...ամար...ել, ընդ...ակառակն, ջրօր...նեք, օր...ներգ, ապաշխար...ել, անշնոր...ք, ընդ...ատել, ընդ...ուպ, ընդ...ամենը, համ...արգ, շնոր...իվ, խոր...րդակցել, ընդ...անրապես, ճանապար...որդ, համընդ...անուր, խորախոր...ուրդ, ջրհեղ...եղ, հեղ...եղուկ, հեղ...եղատ, հայթ...այթել, հայ...ոյել:

Կրկնակ բաղաձայններ (ըստ անհրաժեշտության)

Այ...ենարան, անդո..., Ապո...ոն, բա...ադ, գա...ա, դո...ար, ըն...իմադիր, ե...որդ, չո...որդ, մանրագ...ին, ի...սուն, ֆիդայի...եր, ու...նոր, ու...ակի, ու...արկել,

սովա...ուկ, հարյուր ին...սուին...ը, ու...ենիշ, ու...աձիգ, ճ...ոց, մա...ա, մ...կահողմ, տա...ական, միատա..., տա...ասեռ, տա...անջատել, տո...ա, ֆի...ական, կե...ես, Լիա...ա, դ...ոց, պատճե...եր, Է...ա, տա...ալուծել, Դիա...ա, Կան..., հե...ենական, պ...ահողմ:

Երկհնչյունները (իա, եա, յո, յա, եո, իո), յ կիսաձայնը կամ որևէ ձայնավոր (ըստ անհրաժեշտության)

Մար...մ, Անան..., Օֆել..., Եղ...գարյան, Մուք...ս, Ամալ..., գրե...ի, Լիլ..., Աս... (մայրցամաք), Երեմ..., վայրկ...ն, հեք...թ, դաստ...րակ, մում..., ման...կ, օվկ...նոս, սկոթ...ն, պատան...կան, բամ..., քամել...ոն, ամ...բա, Ռաֆա...ել, Միքա...ել, մի...ակ, նստե...ինք, նա...ել, անէ...անալ, գա...խոն, Սերգե...ի, հի...անալ, միլ...րո, Արաքս..., Կարո...ի, ամենօր..., արդ...ոք, աքս...մ, ակաց..., փաս...ն, կր..., ընտան...կան, մեղալ...ն, միմ...նց, միմի...ն, հա...ելի, բար...ցակամ, այծ...մ, մ...ուս, խավ...ր, ամբ...ն, լ...արդ, ամ...բա:

2. Բացելով փակագծերը՝ բաղադրիչները գրե՛ք միասին, անջատ կամ գծիկով:

ա. Մուգ (կանաչ), խեթ (խեթ) նայել, (դեմ) դիմաց, կողք (կողքի), հեռու (մոտիկ), ինչ (որ) բան, երեք (հարյուր) վաթսուհ, տասից (քսան), քաղաքե (քաղաք), հինգ (հարկանի), վաղուց (ի) վեր, հարավ (արևելյան), լեփ (լեցուն), գյուղից (գյուղ), հյուսիս (արևելք), (ըստ) երևութին, հայ (ռուսական), (ց) պահանջ, նոր (նախիջևանցի), հիսուն (ինը), դեսից (դենից) խոսել, անզլերեն (հայերեն) բառարան, հինգ (վեց) օր, կաս (կարմիր), ոտքով (գլխով), երկու (երրորդ), գլուխ (գլխի) տալ, ոչ (ոք), հարավ (կովկասյան):

բ. Հարյուր (հինգ) ամյա, (ի) սպառ, աներ (որդի), փոխ (նախարար), (տեր) Գրիգոր, այսօր (վաղը), վեր (կենալ), փունջ (փունջ), երես (սրբիչ), ունկն (դրել), բեղ (մորուք), (ի) վերուստ, (ըստ) ամենայնի, (դեփ) դեղին, ռազմա (ծովային), յոթ (իններորդ), բրոնզե (դարյան), (առ) հավետ, այս (կերպ), գեր (բնական), մեծ (բրիտանական), մեն (մենակ), թերի (բարձրագույն), հայր (սուրբ), հնդ (եվրոպական), սև (սպիտակ), ծառս (լինել), մինչ (դեռ), մայր (ցամաքային), հանկարծակիի (գալ), Նյու (Յորք):

գ. Բառ (գրքույկ), (բաց) կապույտ, մեջ (բերում), ցուցահանդես (վաճառք), հօդս (ցնդել), դափնե (պսակ), քանի (դեռ), աշակերտ (աշակերտուհի), ափե (ափ), (Տեր) Հովսեփյան, հայ (ռուսական), (շին) հրապարակ, գիշեր (ու) ցերեկ, թեթև (քաշային), (բուժ) հիմնարկ, հականե (հանվանե), (ի) վերջո, (մեղք) Բարխուդար, թավալ (զոր), (կուժ) կոտրուկ, առիթից (առիթ), հարավ (ամերիկյան), բառ (մասնիկ), դյուր (ընթեռնելի), փոքր (ինչ), ուր (որ) է, հին (հունարեն), Արփա (Սևան):

դ. Ութ (ոտնուկ), միայն (թե), կամա (ակամա), (ի) սկզբանե, Նար (Դոս), (Մելիք) Ադամյան, բարձր (աշխարհիկ), հինգ (հարկանի), հասարակական (քաղաքական), ազոր (ոսկր), ծայրը (ծայրին) հասցնել, ասել (խոսել), դեմ (հանդիման), ընկած

(ելած), տառ (առ) տառ, բողոք (դիմում), վեց (օրյակ), սար (ու) ձոր, ամսե (ամիս), արքայից (արքա), ավի (հանում), արաբա (հրեական), դեն (զգել), քաջ (առողջ), վերո (հիշյալ), սիսեռ (ապուր), (պետ) պատվեր, առ (տնին), օր (ըստ) օրե:

3. Ըստ անհրաժեշտության՝ գրե՛ք մեծատառերը. բացատրե՛ք գրության կանոնները:

ա. Հակոբ մեղապարտ, շախմատի համաշխարհային խորհուրդ, նյու ջերսի, կանարյան կղզիներ, հայկական տավրոս, հյուսիսային սառուցյալ օվկիանոս, երկրորդ համախարհային պատերազմ, գրիգոր մագիստրոս պահլավունի, սուրբ մեսրոպ մաշտոց, օնորե դը Բալզակ, ազգային ժողով, անդրանիկ գորավար, փոքր պունիք, տիգրան մեծ երկրորդ, բյուզանդական կայսրություն, կանաչ հրվանդանի հանրապետություն, խրիմյան հայրիկ, հայաստանի ազգային հերոս, լորդերի աստյան, վերին դվին, եգիպտոսի արաբական հանրապետություն, տրոյական պատերազմ, «պատվո նշան» շքանշան:

բ. Մշո սուրբ կարապետ վանք, ծիր կաթին, իսրայել օրի, երևանյան լիճ, չինական մեծ պարիսպ, թարգմանչաց տոն, ներսես շնորհալի, ազգերի լիգա, աշխատավորների համերաշխության միջազգային օր, հովհաննես ավետարանիչ, մարտական խաչի առաջին աստիճանի շքանշան, ձմեռային պալատ, խորհրդային հայաստան, թախլանդի թագավորություն, փարիզյան կոմունա, պետական դումա, երևանի մատենադարան, թեթեյան մշակութային կենտրոն, հաագայի միջազգային դատարան, իվան ահեղ, հրո երկիր կղզի, ժոզեֆ ռոնի ավագ, արժույթի միջազգային հիմնադրամ, թոնդրակյան շարժում, գաբրիել գարսիա մարկես:

գ. Երուսաղեմի մատենադարան, լատինական ամերիկա, ծննդյան տոներ, հռոմի պապ, մայր աթոռ սուրբ Էջմիածին, հայկազյան բառարան, դյումա-հայր, հյուսիսատլանտյան դաշինք, միսիթարյան միաբանություն, տրդատ գ մեծ թագավոր, վահագն վիշապաքաղ, «սասնա ծռեր» վիպերգ, ցաղաց քարի վանք, նոր շիրական, արևմտյան տիգրիս, գրիմ եղբայրներ, լացի պատ, աշոտ գ ողորմած, կարմիր խաչի միջազգային կոմիտե, գորավար մարկոս կրասոս, գերմանիայի դաշնային հանրապետություն, սահմանադրական դատարան, մեծ յոթնյակ, առևտրի համաշխարհային կազմակերպություն, մեքսիկայի միացյալ նահանգներ, լյուդվիգ վան բեթհովեն:

դ. Էջմիածնի մայր տաճար, բևեռային աստղ, հին հռոմ, կենտրոն համայնք, «մուրճ ու մանգաղ» ոսկե մեղալ, անկախության օր, ներքին դվին, քերթողահայր մովսես խորենացի, վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, նյուրնբերգյան դատավարություն, փառքի առաջին աստիճանի շքանշան, աշոտ Բ երկաթ, հայրենական մեծ պատերազմ, մարդու իրավունքների եվրոպական դատարան, դուկաս ավետարանիչ, դևոնդ երեց, արշակունյաց հարստություն, շվեյցարիայի համադաշնություն, սուրբ աստվածածին, եկեղեցի, նապոլեոն բոնապարտ, ավան հարյուրապետ, երեխաների պաշտպանության միջազգային օր:

ե. Լեոնարդո դա Վինչի, հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, մամիկոնյան տիկին, ծաղկունյաց լեռնաշղթա, ներսես ա մեծ, դաշտային կիլիկիա, հարյուրամյա պատերազմ, մուշեղ սպարապետ, շախմատի միջազգային ֆեդերացիա, վինսենթ վան գոգ, ասեղի հրվանդան, բալկանյան առաջին պատերազմ, գայլ վահան, ելիսեյան դաշտեր, հայ դատի հանձնախումբ, նորվեգիայի թագավորություն, կանանց միջազգային օր, խորագույն տայք, «կարմիր աստղ» շքանշան, ձմեռ պապ, կենտրոնական ամերիկա, հին աշխարհ, նաղիր շահ, կամբոջայի թագավորություն, բարձր հայք, գիտությունների ազգային ակադեմիա, դանիել մարգարե:

3.2. ՀԱՄԻ ԲՆԱԳՐԵՐ

ա) Լրացրե՛ք համապատասխան տառերը (ըստ անհրաժեշտության) և կետադրե՛ք:

1. **ա)** Շոտլանդ...յի Սենտ-Էնդրյուս համալսարանի քիմ...կան լաբորատոր...այի մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է Մենդելե...ի պարբերական աղյուսակի տպագիր տարբերակը այս...ր առկա տարբերակներից ամենահինը:

Ուսանողների համար ստե...ծված աղյուսակը որը տպվել է Վիե...այի գիտական տպարանում տպարանը աշխատել է հազար ութ հար...ր յոթանասունհինգ թվականից հազար ութ հար...ր ու...սունույթ թվակա...երին գերմաներենով է: Այս պարբերական աղյուսակում դեռևս տեղ չեն գտել մի քանի քիմ...ական տա...եր և ակ...նհայտորեն բաց են թողնված շատ վանդակներ: Օրինակ միան...ամից աչքի է ընկնում որ բացակայում է ե...կրորդ տա...ը հել...ումը և մ...ուս քիմիական տա...երն էլ նույնիսկ համարակալված չեն:

բ) Ինքը ռուս քիմիկոս Դմիտրի Մենդելե...ը առա...ին ան...ամ իր պարբերական աղյուսակը ներկայացրել է հազար ութ հար...ր վա...սունինը թվականին: Սենտ-Էնդրյուսի համալսարանում աղյուսակի օրինակը հայտնաբերել էին դեռ երկու հազար տասնչորս թվականին բայց նրա գոյությունը գա...տնի էր պահվում այնքան ժամանակ մինչ... գիտնակա...երը կճշտե...ին դրա տարիքը: Թե... հայտնաբերված աղյուսակում գերման...ում տա...ի փոխարեն ձեռքով հարցական նշան է դրված, սակայն նրա ատոմային զանգվա...ը ճշգրտ...րեն նշված է: Այս տա...ի մասին Մենդելե...ը խոսել է դեռևս 1870 թվականին բայց այն հայտնաբերվել է միայն տասնվեց տարի անց հազար ութ հար...ր ու...սունվեցին: Աղյուսակում ամբող...ությամբ բացակայում են իներտ գազերը քանի որ նրանք հայտնաբերվել են շատ ավելի ուշ:

Ըստ Շոտլանդ...այի համալսարանի ղեկավարության տեսակետի ոչինչ հայտնի չէ այն մասին ար...յոք որև... տեղ կա պարբերական ավելի հին աղյուսակ թե ոչ: Համալսարանի քիմ...այի ֆակուլտետում ամենահին աղյուսակի պատճե... է ցուցադրված և բն...րինակը պահելու համար ստե...ծվել են թանգարանային պայմա...եր:

2. **ա)** Ատոմա...ին ֆիզիկան որն ուսումնասիրում է ատոմների կառուցվա...քն ու վիճակը ծա...ել է տասնի...երորդ դարի վեր...երին և քսանե...որդ դարի սկզբներին:

Չարագսման սկզբնական փուլում ի թիվս այլ...այլ խնդիրների այն ըն...գրկում էր նա... ատումի մի...ուկի կառուցվա...քի հարցերը: Ե...եսունական թվակա...երին պարզվեց ատումի մի...ուկում տեղի ունեցող փոխազդեցություններն իրենց բնու...թով տարբեր են նրա արտաքին թաղանթում տեղի ունեցող փոխազդեցություններից և քա...ասունական թվակա...երին ա...անձնացավ մի...ուկային ֆիզիկական որպես ֆիզիկա...ի ինքնուրույն ճյուղ: Հի...ունական թվակա...երին մի...ուկային ֆիզիկա...ից մասնատվեց տա...ական մասնիկների ֆիզիկական կամ մեծ էներգ...աների ֆիզիկան:

Ատումի որպես նյութի անտա...ալուծելի մասնիկի գոյության մասին միտքը ծա...ել է դեռ...ս հնադարում: Մին...ն տասնութ...որդ դարի վեր...երը ատոմները համարվում էին միայն չափերով ու ձևերով իրարից տարբեր բացար...ակ անբաժանելի և անփոփոխ պինդ մասնիկներ որոնց տարբեր կար...ի գուգոր...ուսները գոյացնում են զանազան նյութեր:

բ) Սկսած տասնի...երորդ դարի սկզբներից տա...աբանությունը զգալի առա...ընթաց ապրեց և նպաստավոր նախադրյալներ ստե...ծվեցին ատոմային ուսմունքի մշակման համար:

Հազար ութ հար...ուր վա...սունինը թվականին Դմիտրի Մենդելե...ը հայտնաբերեց տա...երի պարբերական համակար...ը: Նա ցույց տվեց որ տա...երի ատոմային զանգվածի մեծացմանը զուգ...նթաց նրանց քիմ...ական և ֆիզիկական հատկությունները պարբերաբար կրկնվում են: Սրան հետ...եց բնական եզրակացություն ատոմը ունի բար... կառուցվա...ք որը փոխվում է կապված ատոմա...ին զանգվածի փոփոխվելու հետ: Ատոմի կառուցվա...քի բացահայտման հիմնախն...իրը դար...ավ և քիմ...այի և ֆիզիկայի կար...որագույն հարցը:

3. ա) Համաճարակը սպորադիկ հիվանդա...ության հակառակ վիճակն է տվյալ վայրի իրար հետ կապ չունեցող առան...ին դեպքեր երբ ար...անագրվում են համաճարակային գործ...նթացի ուժ...նացում և սաստիկ բռն...ուսներ: Համաճարակը դուրս գալով առան...ին երկրի սահմա...երից կարող է ըն...գրկել են մեծ թվով երկրներ վերա...վելով գլոբալ համաճարակի կամ պանդեմ...այի:

Կա մի տեսություն ըստ որի յուրաքանչ...ր հար...ր տարին մեկ մոլորակի վրա համաճարակ է բռնկվում: Ժամանակագրական ճ...գրտությունը մտահո...իչ է: 1720 թվականին դա ժանտա...տն էր 1820-ին խոլե...ան իսկ հազար ի...ը հար...ր քսանին իսպանական գրիպը: Ըստ մի շարք հետազոտողների ներկա...իս թա...ավարակի կո...ոնավիրուսի համաճարակը նման է նախոր... դարերի իրադար...ություններին: Տրամաբանական հարց է ծա...ում ինչ կլինի եթե այդ էպիդեմ...ան արհեստականորեն կազմակերպվի ինչ-որ չարագործ ուժի գա...տնի կազմակերպության կողմից: 1720 թվականի ադետալի ժանտա...տը հանգեցրեց հար...ր հազար մար...ու մահվան:

բ) 1820 թվականին Աս...այի երկրներում Ֆիլիպի...երում Բնդոնեգ...այում և Թա...լանդում տարա...ված խոլե...այի առա...ին համաճարակից նույնպես մոտ հար...ր հազար մարդ մահացավ: Ասում են պա...ճառը աղ...յուրների ջրի օգտա-

գործումն է եղել: Հազար ի...ը հազար քսան թվականի իսպանական գրիպը սպանեց ռեկոր...ային թվով մինչ... մեկ միլ...արդ մար...կանց: Սա մար...կության պատմության մեջ ամենամահացու էպիդեմ...ան է:

2020 թվականին Չինաստանում սկսվեց նոր կո...ոնավիրուսի համաճարա...ը որը տարածվեց Հարա...ային Կոր...այում Իրանում Իտալ...այում և այլ երկրներում: Ամենավատն այն է որ օ...ային ճանապար...որությունն ու ժամանակակից տեխնոլոգ...աներն արագացնում են վի...ուսի տարածումն ամբողջ... աշխար...ում:

4. ա) Աշխարհագրական կ...րդինատներով որոշում են երկրի մակեր...ույթի ավելի լայն իմաստով աշխարհագրական թաղան...ի որև... կետի դիրքը: Դրանք որոշվում են գնդաձ... սկզբունքով համանման կ...րդինատներ են օ...տագործվում երկն...լորտի և այլ մոլորակների համար:

Աշխարհագրական լայնությունը չափվում է այն անկյունով որ կազմում է տվյալ կետով անցնող ու...աձիգ գիծը հասարակա...ի հար...ության հետ: Լայնությունները հաշվում են գրո...ից մին...և ի...սուն աստիճան հասարակա...ից հ...ուսիս և հարա...:

Երկայնությունը չափվում է այն անկյունով որ կազմում է տվ...ալ կետի միջ...րեականի հար...ությունը պայմանական...րեն ըն...ունված սկզբնական միջ...րեականի հար...ության հետ: Սկզբնական միջ...րեականից ար...ելք գրո...ից մինչև հարյուր ու...սուն գունվող երկայնությունները կոչվում են ար...եյան ար...մուտք գունվողները ար...մտյան: Նախկինում ըն...ունված էին տարբեր սկզբնական միջ...րեականներ:

բ) Հազար ութ հարյուր ու...սունչորս թվականից մի...ազգային համաձայնությամբ որպես սկզբնական միջ...րեական ըն...ունված է Գրինվիչի միջ...րեականը: Լայնական գոտիների մի...և տարբերություններ ստե...ծող հիմնական կլիմա...ական գո...ծոններն են ռադ...ցիոն հաշվեկշիռը և մ...նոլորտի ընդ...անուր շրջանառությունը: Գոտիների ներսում բնության բազմազանության աստի...անը ի դեպ օրինաչափ...րեն փոփոխվում է ըստ տարբեր սեզոն...երի ըն...ացքում Երկրագնդի մակեր...ույթ հասնող ջերմության և խոնավության քանակի ու հարաբերա...ցության:

Լայնական գոտիների բուսականությանը հողերի ջրերի և այլ տարբերություն...երին համապատասխան նրանց սահմա...երում ձ...ավորվում են աշխարհագրական տարբեր գոնաներ ար...տիկական մեր...արկտիկական հ...ուսիսային բարեխառն հ...ուսիսարևադար...ային հ...ուսիսենթահասարակա...ային հասարակա...ային ենթհասարակա...ային հարա...արևադարձային հարա...մերձարևադարձային հարա...բարեխառն:

5. ա) Բնական լեզվով ասված խոսքը եր...եմն ճշմարիտ չի լինում իսկ մարդը ընտրություն կատարելիս աշխատում է ստանալ հավաստի տեղեկություններ ընտրվող օբ...եկտի վերաբեր...ալ: Այդ տեղեկությունները շատ դե...քերում ունենում են քանակական բնու...թ որոնց մաթեմատիկական արտահայտություն...երը հնարավորություն են տալիս դրանք դար...նել բաղդա...ելի և ընտրությունը կատարել ելնելով համա...ժեք հավաստի համեմատություններից: Մաթեմատիկական այս...ր ներգրա...ում

են ոչ մ...այն բնության այլ.. մար...ուն և հասարակությանն առն...վող տա...ազան գիտությունների ուսումնասիրությունների մեջ:

Մաթեմատիկան խորացնում է մարդու տրամաբանական մտածողությունը և հաշվի առնելով խոսքի և մտածողության սեր... կապը կարող ենք ար...անագրել որ նշված հանգամանքները մեծացնում են մաթեմատիկական խոսքի դերը ա...ժեքի ընտրության գործում:

բ) Շատ եր...ույթներ ունենալով պատահական բնու...թ այնուամենա...նիվ ենթարկվում են որոշակի օրինաչափությունների որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է մաթեմատիկան: Եվ այս ու...ությամբ մաթեմատիկական կիրառությունները կրում են ոչ թե հատվա...ական այլ մա...շտաբային բնու...թ ինչը հանգեցրել է մաթեմատիկայի առանձին բնագավա...ի հավանականությունների տեսության առա...ացման:

Մաթեմատիկայի լեզուն և խոսքը նույնպես կար...որագույն ա...ժեքներ են և կապված են ինչպես առան...ին մարդկանց այնպես էլ կ...թական ու հետազոտական հաստատությունների պետությունների նպատակադրումների հետ: Մաթեմատիկական լեզուն և խոսքը ընկած են գիտա...եխնիկական ու ռազմա...եխնիկական հայտնագործությունների հիմքում:

6. ա) Հազար ութ հար...ր ե...եսունութ թվականին հրա...արակված իր հողվածում հեղինակը ֆրանս...ացի Ֆրանսուա Արագոն առա...ինը ըն...հանրացրեց գնդաձ... կայծակի դիտման մի քանի դեպքեր: Այդ ժամանակներից սկսած գնդաձ... կայծակի ֆիզիկական բնու...թով սկսեցին հետաքրքրվել շատ խոշոր գիտնականներ Ֆարադեյը Կելվինը Տեալան և այլք: Տեալան կարծում էր այդ եր...ույթը կարող էր արհեստական...րեն ստացվել և այդ դե...քում դժվար չ...ր լինի որոշել դրա ֆիզիկական բնու...թը: Առավել ըն...գրկուն փաստերի նկարագրություն և հի...ոթեզ առա...արկեց դոկտոր Ստախանովը իր Գնդաձ... կայծակի ֆիզիկական բնույթը մենագրությունում որտեղ նա թվարկում էր գնդաձ... կայծակի հնարավոր կառուցվա...քները:

բ) Գնդաձ... կայծակի մասին շատ պատմություններ կան մեծ մասը հորինված սակայն կան նաև փաստեր: Դրանցից է կայծակներ ձ...ող մարդու մասին պատմությունը որին ծառայության ժամանակ հարվածում է գնդաձ... կայծակը նրան կիսով չափ կա...վածահար անելով: Տարիներ անց կայծակը կրկին հարվածում է նույն մարդուն այս ան...ամ նա ար...են ամբող...ությամբ է կա...վածահարվում: Մի քանի տարի հետո մարդը վա...ճանվում է սակայն գնդաձ... կայծակը հանգիստ չի թողնում նրան այն հարվածում է գերեզմանին կոտրելով հուշաքարի մի մասը:

Առայս...ր անբացատրելի է մնում գնդաձ... կաձակի պատերի քարերի հա...ուստի և այլ իրերի մի...ով անցնելու հատկությունը:

3.3. ԹԵԼԱՂՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐ⁶⁰

1. Իսկ անտառը չի մեռնում: Դարավոր փտած ծառերին անընդհատ փոխարինում են նորածիլ փթթուն շիվեր:

Մի յուրօրինակ աշխարհ է անտառը՝ լեփ-լեցուն կենդանի տարրերով, տարատեսակ, խայտաբղետ գույներով, տարաբնույթ ձայներով, թրթռուն կյանքով: Դեպի արևը ձգված ծառերը՝ լորին, թեղին, կաղամախին, հարյուրամյա կաղնիները, թխկիները, թվում է, կողք կողքի հարևանություն են անում՝ առանց դույզն-ինչ դժգոհելու միմյանցից: Բայց գոյատևման անզիջում պայքար է գնում նրանց միջև, և ամենքը, հարատևելու տենդով տոգորված, ուղղընթաց ձգտում են դեպի կենարար արևը: Նրանք ճյուղերը տարածում են շուրջօրլորը, իսկ մրրիկի ժամանակ փաթաթվում են մեկմեկու, խշշում, մեջք մեջքի տված օրորվում, ճոճվում, ճռռում՝ կենաց-մահու կռիվ տալով անողոք տարերքի դեմ:

Մի անգամ շառաչուն հողմին չդիմացավ հնօրյա կաղնին: Ապրելու տենչով բռնված՝ նա ընդդիմացավ, ըմբոստացավ, սակայն ապարդյուն:

Դորդյունով ու ճռնչյունով սկսեց ընկնել՝ անօգնական ճյուղերով կառչելով զգուշորեն խույս տվող հարևաններից: Ճարճատյունով գահավիժում էր՝ լսելով մահվան չարագույժ քրքիջը:

Բայց մի գաճաճ ծառ գորավիզ եղավ հոգեվարքի մեջ թպրտացող հսկային: Նա ցնցվեց, օրորվեց, բայց արհամարհելով սարսափը՝ հապշտապ կարկառեց թները՝ կանխելով կաղնու վայրէջքը:

Քիչ անց հորդառատ անձրև տեղաց, և ուժասպառ կաղնին սաղարթներից թափվող անձրևաջրով ողողեց իր փրկարարին՝ ասես երախտագիտության արցունքներ հեղեղելով:

2. Վաղորդյան արեգակի ոսկեհուռ ճառագայթների ներքո երևաց կղզին՝ երկնակարկառ բրնձագույն ժայռերով, փարթամ արևադարձային բուսականությամբ: Օվկիանոսի՝ արևից ոսկեգոծված փայլփլուն մակերևույթի վրա այն ասես խորդուբորդ, չհղկված գմբուխտ լինե՞ր՝ ամփոփված որձաքարե շրջանակի մեջ:

Թվում էր՝ ջրերի վրա շլացուցիչ, անբասիր գեղեցկությամբ օրորվող կղզին նմանվում է սեթևեթող պչրուհու, որը, գիտակցելով իր դժխոյական վեհությունը, ամբարտավան հայացքով է նայում հավերժ իրեն սիրահարված օվկիանոսի հեղեղուկ ալիքներին, որոնք մերթ մեղմանհնչյուն խշշոցով, մերթ բարձր գոռում-գոչյունով փարվում էին իրենց տիրուհու քղանցքներին:

Խաղաղ եղանակին կղզու՝ անզեն ասքով ընդգրկելի տարածքը երևում էր իր ողջ ապշեցուցիչ պճնանքով՝ գույնզգույն ծաղիկներ, գաճաճ, գանգուր թփեր, վայրի խաղող՝ հյութեղ ողկույզներով, միմյանց խառնիճաղանջ փաթաթված բաղեղներ:

⁶⁰ Թելադրության նյութերը որոշ փոփոխություններով և կրճատումներով հիմնականում ներկայացված են ըստ հետևյալ ձեռնարկների՝ «Թելադրության նյութերի ժողովածու», կազմ.՝ Սարգսյան Ա., Տեր-Մինասյան Ա., Եր., 2009: Նազարյան Ռ., «Մայրենին բուրբի համար», Եր., 2006:

Լուսնկա գիշերներին, երբ լռում էր թռչունների ճովողյունը, և գաղջ օդում լսվում էր միայն ալիքների ճողփյունը՝ միախառնված հարավարևմտյան զեփյուռի մեղմ շնկշնկոցին, կղզին նմանվում էր վեղարավոր ապաշխարողի՝ չոքած աղոթելիս: Մակայն երբ մուրը տարբալուծվում էր, խաբկանքը, վայրկենապես անէանալով, տեղը դարձյալ զիջում էր իրական պատկերներին:

Կղզու հյուսիս-արևելքում՝ ուղղակի մեր դիտակետին դեմ հանդիման, փլատակված հնօրյա բերդն էր՝ կառուցված արևելյան ոճով՝ խայտաբղետ աղյուսներով, պատուհաններին գույնզգույն ապակիներով:

3. Անտառում խլրտուք էր, անսովոր եռուզեռ, իրարանցում: Ընդհանուր մի շշուկ հեզհետե ահագնանում էր, տարածվում անընդհատ՝ բամբասանքի գլխապտույտ հորձանքի մեջ ընդգրկելով ամենքին: Կռանում էին հինավուրց կաղնիները, թխկիները, փսփսուքով ինչ-որ բան շշնջում հացիներին՝ մերթընդմերթ արհամարհական հայացք նետելով դեպի վեր, որտեղ միայնակ կանգնած էր սաղարթախիտ գեղուղեջ մի ծառ: Վրդովված ու ջղագրգիռ էին նաև թեղին ու լորին, նույնիսկ գաճաճ թփերը՝ խառնիճաղանջ բաղեղներով փաթաթված:

Ցնցող մի դեպք էր կատարվել՝ անակնկալի բերելով ճահճային գաղջ աշխարհում բնակվող ծառերին, որոնք ուտում էին, փթթում, երբեմն փտում՝ անհաղորդ ամեն ինչի և չձգտելով ոչնչի: Այնինչ ըմբոստ մի ծառ՝ առույգ, առողջ ուստերով, քամահրելով արգելքները, ճեղքելով հողի՝ դարերի ընթացքում կոշտացած կուրծքը, անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամպշող լեռները, սուրսայր գագաթները՝ ծաղրանքով քրքջալով ներքևում՝ տիղմի մեջ խարխափող իր խաբված ընկերների վրա:

-Բարձրանո՞ւմ ես,- ապշեց հնօրյա կաղնին,- իսկույն ևեթ իջի՛ր, անմի՛տ, դու կոչնչանաս:

- Բարձրության՝ ն վրա...

- Անոթի, անօթևան կմնաս՝ ծարավից պապակված, կայծակից շանթահար:

- Փույթ չէ, կայրվեմ բարձրերում:

Եվ իրոք, կանխագուշակությունը կատարվեց: Մի մրբկահույզ օր կայծակից ծառն այրվեց. ճարճատում էր, տնքում, բայց, հոգ չէ, բարձրերում էր, ազատ-արձակ բարձունքներում:

4. Հայ ժողովրդի պատմության, հոգևոր հարստությունների մասին պատմում են ոչ միայն արհավիրքներից փրկված մագաղաթյա մատյանները, այլև հայրենի լեռնաշխարհով մեկ սփռված պատմաճարտարապետական հուշարձանները՝ տարբեր ժամանակահատվածներում ստեղծված մեծաշնորհ ու քրտնաջան վարպետների կողմից:

Դիմանալով հարյուրավոր փորձությունների՝ երկրաշարժ, պատերազմներ, ասպատակություններ, ամբողջությամբ պահպանվել է ազգային ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Հռիփսիմեի վանքը՝ կառուցված յոթերորդ դարում:

Այդ վեհաշուք, միաժամանակ գողտրիկ կառույցը վաղնջական ժամանակներից կանգնած է եղել Վաղարշապատից հյուսիս-արևելք ընկած մի բլրակի վրա, որտեղից

պարզորոշ երևում էին Արարատյան դաշտը, Զվարթնոցը, Մեծ և Փոքր Մասիսների՝ ձյունով ծածկված գագաթները:

Հոփփսիմեի տաճարը, ըստ ավանդության, կառուցվել է հոփփսիմյան կույսերի նահատակության տեղում: Իբր երեսուներկու քրիստոնյա կույսեր, հալածվելով Հռոմի կայսրից, փախչում են՝ գալով Հայաստան: Հայոց Տրդատ արքան (այն ժամանակ հայերը հեթանոս էին) հրամայում է կույսերին սրախողխող անել, և հետապնդողները, հավատարիմ արքայի հրամանին, տարբեր տեղերում բռնում են նրանց՝ հեղելով անմեղների սուրբ արյունը:

Հոփփսիմեն սպանվում է վերոհիշյալ բլրակի վրա, որտեղ էլ վեց հարյուր տասնութ թվականին Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը հիմնում է վանք՝ կորնթարդ գմբեթով, խորշերով, «վեղար» կոչվող սրածայր գլխարկով:

5. Հայոց հինավուրց սրբազնագույն գետը՝ Եփրատը կամ Արածանին, սկզբնավորվելով Բարձրաբերձ Հայկական լեռնաշխարհի՝ երկինք հասնող սառցապատ կատարներից, սրընթաց գահավիժում է, փոքր-ինչ հանդարտվում հարթավայրում և Պարսից ծոց չհասած՝ միավորվում Տիգրիսի հետ:

Ծնվելով Ծաղկանց սիգապանծ լեռների ականակիտ աղբյուրներից՝ Արածանի-Եփրատը շառայունով թռչկոտում է ժայռաբեկորների վրայով, մի վայրկյան շունչ առնում Մշո դաշտում, ապա հանկարծակի սեղմվում-խեղդվում Կնճան լեռների անձուկ կիրճերում՝ մրրկաբաշ ալիքներով ծեծելով լերկ ափերը:

Ասում են՝ հեթանոս հայերի պաշտելի դիցուհին՝ Աստղիկը՝ սիրո աստվածուհին, լոգանք ընդունելու համար ընտրել է այդ վայրը:

Դյուրիչ դիցուհուն տեսնելու անհագ փափագը դեպի այս վայրերն էր ձգում հայ դյուցազուններին, որոնք, հաղթահարելով դժվարին ճամփաներ, հավաքվում էին հաղիպակաց սարի մի դարավանդի վրա, խարոյկ վառում՝ կրակի լույսի տակ տեսնելու դիցուհու չքնաղ մարմինը:

Բնությունն անգամ անտարբեր չէր մնում աստվածուհու նկատմամբ. աստղագարդ երկնքից ասես ապշած-հափշտակված նայում էր լուսնկան, աստղերը զարմանքով թարթում էին աչքերը՝ հիանալով դիցուհու շնորհալի շարժումներով:

Աստղիկը, անշուշտ, նկատում էր հմայված կտրիճներին և նրանց հանդուգն ու սիրատարփ հայացքներից պաշտպանվելու համար դաշտը պատում էր անթափանց մշուշով: Ասում են՝ այդպես է ծնվել դաշտավայրի Մուշ անունը:

6. Մեր թվարկության առաջին դարում հիմնված Գառնո հեթանոսական տաճարը գտնվում է կարկաչուն Ագատ գետի աջ ափին՝ եռանկյունաձև հրվանդանի ժայռեղեն բարձունքի վրա: Հելլենիստական ճարտարապետության յուրօրինակ ոճով կառուցված այդ անըստգյուտ կերտվածքը ապշեցնում է իր նրբակերտ քանդակներով, նախշագարդ խոյակներով՝ փորագրված կապույտ որձաքարի վրա: Այնքան ցնցող է տպավորությունը, որ թվում է՝ տեսնում ես ոչ թե իրական, շոշափելի հորինվածք, այլ մտացածին դյուրանք:

Հատակագծում տաճարն ուղղանկյունի սրահ է՝ շրջապատված վեր խոյացող խրոխտ սյուներով: Անփորձ աչքի համար առեղծված է՝ ինչպես են քարերը միմյանց

վրա նստած առանց միացնող շաղախի: Մակայն երբ մանրագնին դիտում ես, գարմանքով հասկանում ես, որ հսկայաբեկոր որձաքարերը մեկմեկու ամրացված են գամերով՝ երկու ծայրով մխրճված արճճի մեջ:

Իր հորինվածքով տաճարն ընդհանրական գծեր և մասնագիտական առնչություններ ունի փոքրասիական, սիրիական և հռոմեական տաճարների հետ:

Հայերի՝ քրիստոնեության ընդունումից հետո այն եղել է հայոց թագավոր Տրդատ Երրորդի քրոջ՝ Խասրովիդուխտի հովանոցը: Այդ քարեղեն սիմֆոնիան, թվում է, վեր է մարդկային հանճարից և ճարտարապետական ինքնատիպ լուծումներով հեքիաթային մի կառույցի տպավորություն է թողնում:

Փլատակվելով հազար վեց հարյուր յոթանասունինը թվականի ահասարսուռ երկրաշարժից՝ տաճարը հիմնովին վերակառուցվել է մեր օրերում՝ հազար ինը հարյուր յոթանասունչորս թվականին:

7. Օվկիանոսի մոլեգնող տարերքի վրա բարձրանում է ոսկեվարս արեգակը, որի կարմրավուն ճառագայթների ներքո տարրալուծվում է մույժը, և արդեն տարտամորեն տարորոշվում է այն, ինչը քիչ առաջ թաքնված էր խավարի թագավորության սեփ-սև քողի տակ: Արևը՝ կյանքի աղբյուրն ու խորհրդանիշը, դանդաղընթաց բարձրանում է սահմոկեցնող ալիքների՝ առյուծի բաշեր հիշեցնող բլուրների հետևից՝ ասես սանձելու ինքն իրեն կորցրած ըմբոստ օվկիանոսի գայրույթը: Մակայն դյուրին չէ միանգամից կանգնեցնել ընդերքից ժայթքող դժոխային ուժերին, որոնք, թվում է, անթաքույց հրճվանքով ձգվում են դեպի երկինք՝ ներքևում գոյացնելով խավարչտին խորխորատներ:

Բայց զարհուրելին դեռ առջևում է. այդ նա է՝ իններորդ ալիքը՝ ամենամեծը, ահա-սարսուռը: Մանձակոտոր առաջ նետվելով՝ այն ուր որ է փչելու է տարերքի ահռելի ուժից սարսափահար տանջալույկ նավաբեկյալների վրա:

Երեկ, երբ լուսնյակի աղոտ շողերի տակ օրորվող շոգենավը դուրս եկավ նավահանգստից, պարզկա, անդորր երեկո էր: Նավապետը քննախույզ հայացքով զննեց հեռուները՝ դույզն իսկ չգուշակելով, որ ընդամենը մի քանի ժամ հետո ընկնելու են խելակորույս մրրկահողմի մեջ: Մակայն երկինքը հետզհետե ծածկվեց ամպրոպաբեր գորշ թուխպերով, և օձեղեն կայծակների բյուրավոր մտրակներն անգթորեն դաշունահարեցին հորիզոնը:

Կեսգիշերին օվկիանոսը մոնչաց, և մրրկահույզ ալիքները, սեղմ օղակ կազմած, հուժկու հորձանքով արշավեցին նավի վրա: Մի քանի փորձառու ծովայիններ վճռեցին կուլ չգնալ տարերքին. կառչած միմյանցից ու նավակայմից՝ երդվեցին դիմանալ ու կենաց-մահու պայքար մղել այդ խառնիճաղանջ դժոխքում:

Այո՛, մարդը, ամենագոր մարդը կարող է հաղթել:

8. Հրեաստանի Սողոմ և Գոմոր քաղաքներում ապրում էին տասնյակ հարյուրավոր հրեաներ՝ բոլորն էլ ունևոր, ապահովված: Աստված նրանց շնորհ էր արել՝ ընձեռելով բարեկեցիկ պայմաններ, փոխարենը պահանջելով անխախտ հավատ, միմյանց զորավիզ լինելու ձգտում: Դա նշանակում էր ապրել անբասիր կյանքով,

զերծ մնալ ամբարշտությունից, ընչաքաղցությունից, այլևայլ արատներից, մի խոսքով՝ լինել ազնիվ ու պարկեշտ:

Սակայն և՛ Մողոմում, և՛ Գոմորում մարդիկ ուխտադրուժ էին, ապերախտ ու խաբեբա: Փոխանակ անսալու Աստծո՝ իրենց շահերից բխող պատվիրաններին՝ մարդիկ՝ սնափատ ու հղփացած, մխրճվել էին մեղքերի ու ապականության զարշահոտ ճահիճը և մոռացած ամեն կարգ ու սրբություն՝ խարխափում էին ցոփության մեջ՝ քամահերելով Աստծո պատվիրանները, մոռանալով, որ նրա համբերությունն ու մեծահոգությունը ևս կարող են սպառվել:

Կրկին խաբված զգաց իրեն ամենագութ Բարձրյալը. մի՞թե մարդիկ անուղղելի են: Չէ՞ որ արդեն երկու անգամ պատժել էր նրանց: Ու պոռթկաց աստվածային զայրույթը որպես ժայթքող կրակ, որպես հեղեղ ու երկրաշարժ: Մեկին գթաց Տերը միայն՝ սողոմցի Ղովտին՝ բարեպաշտ ու խոնարհ մի մարդու, և նախօրոք զգուշացրեց:

- Ընտանիքիդ հետ հեռացի՛ր քաղաքից, բայց ոչ մեկդ չփորձեք հետ նայել:

Ղովտը, հավաքելով ընտանիքի անդամներին, ճամփա ընկավ, ու քաղաքում սկսվեց արհավիրքը: Այնպիսի ասհասարսոտ աղաղակներ էին լսվում, որ Ղովտի կլինը չդիմացավ ու հետ նայեց: Նայելն ու քարե արձան դառնալը մեկ եղան:

Մողոմն ու Գոմորը հիմնահատակ կործանվեցին, իսկ ժողովուրդն ստեղծեց «սողոմգոմոր» արտահայտությունը, որ նշանակում է խառնաշփոթություն, անասելի իրարանցում, խառնիճադանջություն:

9. Միավորված ազգերի աշխարհահռչակ կազմակերպությունը՝ ՄԱԿ-ը, միջազգային բազմատարր կազմակերպություն է: Այն հիմնադրվել է տարիներ առաջ՝ տարբեր ազգությունների պատկանող ժողովուրդների միջև անխախտ խաղաղություն ու անվտանգություն ամրապնդելու, մերթընդմերթ բունկվող ուխտադրուժ պատերազմները կանխելու, ապօրինությունները խոչընդոտելու, պետությունների համագործակցությունը օրեցօր զարգացնելու, մարդկանց բարօրությունն ապահովելու նպատակով:

ՄԱԿ-ի հիմնադրումը նախաձեռնել են հակահիտլերյան կռալիցիայի գլխավոր երկրները՝ Խորհրդային Միությունը, Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան: Երկպառակությունները վերացնող այսպիսի կազմակերպություն ստեղծելու հարցը նախօրոք արձարծվել է դեռևս հազար ինը հարյուր քառասուներկու թվականին՝ հունվարին, իսկ այնուհետև մանրագնին քննարկվել է տարատեսակ կոնֆերանսներում՝ տեղիք տալով զանազան կարծիքների:

ՄԱԿ-ի կանոնադրությունը ուժի մեջ է մտել հազար ինը հարյուր քառասունհինգ թվականին՝ հոկտեմբերի քսանչորսին, որը նշվում է որպես ՄԱԿ-ի օր: Այս կազմակերպության կանոնադրությամբ ճանաչվում է նրա բոլոր անդամների աներկբա իրավահավասարությունը, և նախատեսվում է միջազգային տարաբնույթ վեճերի՝ միմիայն խաղաղ ճանապարհով լուծման պարտավորություն:

ՄԱԿ-ի՝ տարիների ընթացքում իրականացրած գործունեության մեջ հենց առաջին հայացքից աչքի են ընկնում նրա կողմից ընդունված այն որոշումները, որոնք ակնհայտորեն վերաբերում են ազգային-ազատագրական շարժումներին ու երկրների ինքնորոշմանը: Այս կազմակերպության անընդմեջ և եռանդուն միջնորդությամբ

են ազատագրվել գաղութային դժխեմ լծի տակ հեծող մի շարք երկրներ՝ Թունիս, Մարոկկո, Ալժիր և այլն:

10. Աշխարհում տարատեսակ շատ պետություններ կան՝ մեծ ու փոքր, բայց մի քանիսն այնքան փոքր են, որ հնարավոր է տեսնել միայն քարտեզը մանրագին ուսումնասիրելիս: Դրանք քաղաք-պետություններ են: Այդ պետություններն են՝ Լյուքսեմբուրգ, Անդորրա, Լիխտենշտայն, Ման-Մարինո, Վատիկան, Մոնակո և Մալթա: Այս բոլորի տարածքը միասին ընդամենը երեք հազար չորս հարյուր չորս քառակուսի կիլոմետր է, իսկ դրանցից մեկի՝ Մոնակոյի տարածքը՝ ընդամենը մեկուկես քառակուսի կիլոմետր: Այս պետությունը գտնվում է Միջերկրական ծովի հարավարևելյան ափին: Բնակիչները կոչվում են մոնեգասկներ, որոնք ֆրանսիացիների և իտալացիների խառնուրդ են, իսկ պաշտոնական լեզուն ֆրանսերենն է:

Մոնակոյի արևադարձային յուրօրինակ կլիման, հուռթի բնությունը, Միջերկրականի ակնակալիտ ջրերն ու բարեկարգ լողափերը, հայտնի խաղատունն ու օվկիանոսագիտական ապշեցուցիչ թանգարանը աշխարհի բոլոր կողմերից դեպի իրենց են ձգում անհագուրդ հետաքրքրասիրությամբ համակված միլիոնավոր զբոսաշրջիկների: Պետության մայրաքաղաքում՝ չնաշխարհիկ Մոնտե-Կարլոյում է գտնվում աշխարհահռչակ խաղատունը, որը չորս կողմից շրջապատված է բարձրակարգ հյուրանոցներով: Այդ երկրում ապօրինությունները կանխելու համար կա դատարան, բայց չկան բանտեր, այդ պատճառով էլ անօրեն հանցագործներին ուղարկում են Ֆրանսիայի բանտեր՝ իրենց մեղքերը քավելու և ապաշխարելու: Մոնակոյի բանակը, որքան էլ տարօրինակ է թվում, բաղկացած է տասներկու զինվորից և միմիայն մեկ գնդապետից:

Մեր թվարկությունից առաջ փյունիկցի վաճառականները ներկայիս Մոնակոյի տեղում ամրոց էին հիմնել: Հետագայում՝ քրիստոնեական շրջանում, այդ հինավուրց ամրոցի փոխարեն կառուցվել է գմբեթարդ մի վանք, որն էլ անուն է տվել այս պետությանը, որովհետև լատիներեն «մոնակոս» բառը նշանակում է վանք:

11. Մեկ ամբողջ հինգ տասնորդական կիլոմետր հարթ վազքատրածությունը լավ վազորդն անցնում է մոտավորապես երեք րոպե հիսուն վայրկյանում: Եթե հետիոտնի սովորական արագությունը մեկ և կես մետր վայրկյան է, ապա ստացվում է, որ սրընթաց մարզիկը մեկ վայրկյանում անցնում է յոթ մետր: Բայց ինքնըստինքյան հասկանալի է, որ այս տարատեսակ արագություններն այնքան էլ համեմատելի չեն. հետիոտնը կարող է երկար քայլել՝ մեկ ժամում անցնելով հինգ կիլոմետր, իսկ արագոտն մարզիկն ընդունակ է պահպանելու իր արագությունը միայն կարճ ժամանակ:

Հետաքրքիր է մարդու ընթացքը զանազան կենդանիների, թռչունների ու միջատների արագությունների հետ համեմատելը: Ամենադանդաղաշարժ կենդանիներից մի երկուսը՝ լյարձուն խխունջը և ամրագրահ կրիան, լիովին արդարացնում են իրենց մասին ստեղծված թե՛ իրական, թե՛ մտացածին պատմություններն ու հեքիաթները: Եղջուրավոր խխունջը, իր ոլորապտույտ խեցուց մի փոքր դուրս գալով, դանդաղընթաց սողում է մեկ ամբողջ հինգ տասնորդական միլիմետր մեկ վայրկյանում կամ հինգ ամբողջ չորս տասնորդական դեցիմետր մեկ ժամում, այսինքն՝ մարդուց գրեթե

հազար անգամ քիչ: Մյուս դանդաղաշարժը՝ կարծրապատյան կրիան, փոքր-ինչ գերազանցում է խիսունջին. նա շարժվում է մինչև յոթ մետր-ժամ արագությամբ:

Այս դանդաղաշարժների կողքին, որոնց մասին անթիվ-անհամար հինավուրց առասպելներ կան, մենք՝ մարդիկս, անհամեմատ ժիր ենք ու առույգ, բայց այլ կերպ կերևանք, եթե առանց ամբարտավանության ու կեղծ հպարտության մեզ բաղդատենք շրջապատող մայր բնության մյուս՝ ավելի արագ շարժումների հետ: Մակայն մարդը՝ որպես մեր մոլորակի ամենախելացի էակ, հայտնագործել է բազմազան յուրօրինակ մեքենաներ, որոնք նրան արագընթաց են դարձնում:

12. Քեոփսի բուրգը՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, գտնվում է հինավուրց Կահիրե քաղաքից ոչ հեռու՝ Գիզայում՝ Նեղոսի ձախ ավին՝ պատմական Մեմֆիս քաղաքի մոտ: Հին եգիպտացիներն այն կառուցել են մեզանից մոտ հիսուն դար առաջ: Եգիպտացիները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության թատերաբեմից դարեր առաջ հեռացել են, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են թողել: Այդ հուշարձանները աներկ-բայրեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահոս Նեղոսի կանաչագարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրբաններից մեկը:

Եգիպտական բոլոր հուշարձաններն էլ աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու ապշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բարձրաբերձ բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Քեոփսի հիանալի բուրգը: Իսկպպես, եգիպտական ոչ մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից մարդկանց քաշում են դեպի Եգիպտոս՝ հիանալու և ապշելու մարդկային քանքարով՝ ստեղծագործ ու անբմբհունելի:

Շատերին է ծանոթ «բուրգ» բառը. մաթեմատիկոսներն այդպես են կոչում երկրաչափական այն մարմինները, որոնք բազմանկյունի նիստեր ունեն, և որոնց եռանկյունաձև կողերը միանում են մի կետում՝ բուրգի գագաթին: Եգիպտական բուրգը քառանիստ և հետզհետե բարակող քարե շինություն է, որը փարավոնները կառուցում էին իրենց դամբարանների համար:

Բուրգերից ամենամեծի՝ Քեոփսի բուրգի կառուցման համար օգտագործվել է երկու միլիոն երեք հարյուր հազար խորանարդաձև քար, որոնցից յուրաքանչյուրի միջին քաշը երկուսուկես տոննա է: Տանջալլուկ ստրուկները բուրգերը կառուցում էին իրենց տիրակալների համար՝ որպես անդորրավետ հանգրվան:

13. Լորտուն անտո մոդես է՝ անվնաս ու օգտակար, բայց արտաքուստ այնքան է նման օձի, որ ժողովուրդը դարեր շարունակ նրան համարել է օձ, որը, սակայն, թունավոր չէ: Եթե մոտիկից մանրագնին ուսումնասիրենք լորտունին՝ քննելով նրա կառուցվածքի բոլոր տարրերը, կտեսնենք, որ նրա մանրիկ աչքերը բաց են, իսկ օձերինը ծածկված են լինում թափանցիկ ու նուրբ թաղանթներով: Այդ պատճառով էլ լորտուն աչքերը թարթում է, իսկ օձը նայում է թափանցիկ կոպերի միջով, և թվում է՝ միշտ ակնդետ շուրջբոլորն է գնում: Օձը ամեն տարի փոխում է մաշկը, իսկ լորտուն այդ յուրօրինակ հատկությունը չունի: Ասենք նաև, որ լորտուններն ու օձերը ռյներիմ

թշնամիներ են, և հաճախ են նրանց միջև կռիվներ մղվում, որոնցում, որքան էլ ապշեցուցիչ լինի, սովորաբար հաղթում է լորտուն: Անըմբռնելի է՝ ինչպես է ավելի փոքր ու առաջին հայացքից անուժ թվացող լորտուն սպանում իրենից մեծ և ուժեղ օձերին: Լորտուններն ընդհանրապես զգույշ, մեղմ, հանդարտ պահվածքով սողուններ են. գրեթե հնարավոր չէ բարկացնել նրանց:

Հազար ինը հարյուր վաթսունյոթ թվականին՝ հունիսի քսանիննին, Գառնիի տաճարի շրջակայքում էինք՝ ձորի լանջերին: Լորտուններն ուղղակի վխտում էին ամենուրեք՝ անընդհատ պարզապես ոտքերիս տակ ընկնելով: Երբ բռնում էինք նրանց, գալարվում էին, ջղաձգվում, սակայն թշնամության կամ դիմադրության որևէ նշան չէին ցույց տալիս: Թվում էր՝ խեղճ ու թույլ էակներ են դրանք՝ գուրկ նույնիսկ իրենք իրենց պաշտպանելու տարրական կարողությունից: Ես էլ այդ թյուր կարծիքը կունենայի, եթե տեսած չլինեի մի լորտուի հարվածի հետքը ընկերոջս որդու թիկունքին: Չարաճճի տղան շատ էր չարչարել սողունին, և սա, ի վերջո համբերությունից դուրս գալով, ձգվել էր գավազանի նման ու հարվածել մեջքին: Հարվածի տեղն այտուցվել էր, կարմրել, իսկ մաշկը՝ մի երկար շերտով պոկվել: Նայելով տղայի թիկունքին՝ ես լիովին համոզվեցի, որ իրեն չվնասողների հետ մեղմ վարվող այդ սողունը կարող է մի հարվածով սպանել իր ոտիսին՝ օձին:

14. Երևի բոլորին է ծանոթ կատակով տրվող այն հարցը, թե մեկ տոննա փա՛յտն է ծանր, թե՞ մեկ տոննա երկաթը: Մտացրիվ մարդիկ, հարցից անակնկալի գալով, սովորաբար առանց մտածելու միանգամից պատասխանում են, որ երկաթն ավելի ծանր է՝ իսկույն ևեթ առաջացնելով շրջապատողների սրտաբուխ ծիծաղը: Զվարթ կատակասերները, սակայն, կապշեն ու գուցե անկեղծորեն ավելի բարձր ծիծաղեն, եթե որևէ մեկը աներկբայորեն պատասխանի նրանց, որ մեկ տոննա փայտը ավելի ծանր է մեկ տոննա երկաթից: Այսպիսի անըմբռնելի պնդումը առաջին հայացքից անհեթեթ է թվում ու թերևս հանկարծակիի բերում, և ակնթարթորեն խորհում ես, որ դեմ դիմացո պարզապես մի տաղտկալի շաղակրատ է նստած, որը շաղփաղփելու մարնաջ ունի: Բայց այս տարօրինակ կարծիքը միանգամայն ճիշտ է:

Ինչպես հայտնի է, Արքիմեդի հինավուրց օրենքը, որն արդեն տարրական գիտելիք է դարձել, կիրառելի է ոչ միայն հեղուկների, այլև գազերի համար, այսինքն՝ յուրաքանչ-յուր մարմին օդում ևս կորցնում է այնքան, որքան կշռում է մարմնի դուրս մղած օդի ծավալը: Փայտն ու երկաթը նույնպես օդում կորցնում են իրենց կշռի մի մասը. որպեսզի ստանանք նրանց իրական կշիռները, պետք է ավելացնենք կորուստները: Արդյունքում փայտի իրական կշիռն այս դեպքում հավասար է մեկ տոննայի՝ նրան գումարած փայտի ծավալով օդի կշիռը, իսկ երկաթինը՝ գումարած երկաթի ծավալով օդի կշիռը:

Մեկ տոննա երկաթը զբաղեցնում է մեկ ութերորդ խորանարդ մետր ծավալ, իսկ փայտը՝ մոտ երկու խորանարդ մետր: Հետևաբար նրանց կողմից դուրս մղված օդի կշիռների միջև տարբերությունը կազմում է մոտ երկու ամբողջ հինգ տասնորդական կիլոգրամ: Ահա թե իրականում ինչքանով է մեկ տոննա փայտը ավելի ծանր մեկ տոննա երկաթից:

15. Փարիզի նշանավոր կոթողներից է երկնամուխ Էյֆելյան աշտարակը, որը դարձել է Ֆրանսիայի յուրօրինակ խորհրդանիշներից մեկը, իսկ նրա համբավը տարածվել է աշխարհով մեկ: Այս աշտարակը կառուցվել է Գուստավ Էյֆելի անթերի նախագծով և կոչվում է նրա ազգանվամբ: Աշխարհահռչակ Էյֆելի մանրագնին նախագծերով կառուցվել են բազմաթիվ ամրակուռ շինություններ, որոնցից առավել ուշագրավ է Նյու Յորքի՝ բոլորին քաջ հայտնի «Ազատություն» հոյակապ արձանի մետաղյա կմախքը:

Էյֆելյան աշտարակի կառուցումը կատարվել է ապշեցուցիչ ճշգրտությամբ. այն տևել է երկու տարի, երկու ամիս, երկու օր: Հրապարակային բացումը կատարվել է հազար ութ հարյուր ութսունհինգ թվականին՝ մայիսի տասնհինգին: Առեղի աշտարակի կշիռը յոթ հազար հինգ հարյուր տոննա է, իսկ կառուցման ամբողջ ծախսը կազմել է յոթ ու կես միլիոն ֆրանկ: Այնպես որ կարող ենք ասել, որ աշտարակի ամեն մի կիլոգրամն արժեցել է ընդամենը մեկ ֆրանկ: Աշտարակ բարձրանում են վերելակով կամ համբերատար հաղթահարում են հազար յոթ հարյուր տասը սանդուղքները: Հիրավի, արժե այդքան բարձրանալ, քանի որ գագաթից բացվում է գեղատեսիլ Փարիզի ողջ չնաշխարհիկ համայնապատկերը՝ հոգիդ լցնելով մի անըմբռնելի բերկրանքով ու սիրտդ թրթռացնելով հաճելի ելևէջումներով:

Երկնասլաց աշտարակը ժամանակին եղել է աներոդինամիկայի, այսինքն՝ մարմինների անկման ժամանակ օդի դիմադրությունն ուսումնասիրող գիտության, ինչպես նաև ֆրանսիական ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումների հեռարձակման փորձերի կենտրոն:

Շինարարական տեխնիկայի վերելքը շատ կառույցներ է ստեղծել, որոնք պակաս հիացմունք չեն պարգևում իրենց ճարտարապետական բարդ ու տարաբնույթ լուծումներով, բայց Էյֆելյան աշտարակի հմայքը հարատևում է խորհրդավոր ձգողական ուժով՝ իր յուրօրինակ գրավչության շնորհիվ առ այսօր մնալով զբոսաշրջիկների նախընտրած վայրը:

16. Կատակ թելադրություն. «Դիմորդի երազը»

Մի խառնիճադանջ ու մղձավանջային երազ տեսա ուրբաթ օրը՝ ճրագալույցին: Պատերազմ էր՝ բառերի տարերայնորեն սկսված ճակատամարտ: Կարգ-կարգ շարված, մարտակառքերով ու հետիոտն, տեզերն ու աքցանները ձեռքներին, այծենակաձները ուսներին՝ բառերը վրա էին տալիս ու ջարդուբուրդ անում միմյանց, և մարտադաշտում խառնիխուռն թափված էին **գ**-երի, **հ**-երի և այլ մետրոպյան տառերի կռճոնները: Առաջին ջոկատում արնակոլով մարտնչում էին նշխար, ապաշխարել, չնաշխարհիկ, հայթայթել, հայիոյել, հոպոպ, հեղհեղուկ, հեղեղատ բառերը: Երկրորդ ջոկատում աշտե, հյուլե, միջօրե, առնչվել, առընթեր բառերի զինակիցներն էին պղտոր, մղկտալ, ուխտագանց, ուղտաբեռ, ուղտափուշ, ուխտավոր, ուխտադրուժ, ուղտինձ բառերը: Լուր էին տարածել, որ փեղկ, փողք, բոցամուղ, երկնամուխ, գոջալ, զիջել, գեղչել, զոքանչ, տարորոշել ու տարընթաց, տարրաբանություն ու համատարր բառերը ուղղաթիռով թռչել-փախչելու փորձի ժամանակ անզգուշորեն վթարի են

ենթարկվել, ընկել Վոլգա գետը, թրջվել ու խեղդվել: Մոտակա գաճաճ թփուտներում խարխափելով ու մտախոհ թափառում էր կարեվեր խոցված արհամարհելը:

Գոռգոռալով վեր թռա՝ լսելով դժգոհ քրթմնջունը վաթսունիննամյա տատիկիս, որը «Այֆոն-7»-ով խոսում էր Եղիա և Վոլոդյա երկվորյակ նորածինների մանկաբարձուհի քրոջ հետ.

- Հաջորդ օրը մեր էս աղջկան բառախեղդ են արել էդ բարձրագույն կոչված դժոխքում: Մեր դրկից հարևան Սանդուխտի՝ նախկինում թատերագետ, այժմ հաջողակ բիզնեսմեն երեսունութամյա ամուսինը, որը չգիտի, թե ինչպես են գրվում փեղկն ու փողքը, բողկն ու կողպեքը, կցկտուրն ու կծկվելը, ուղղորդելն ու ուղղագիծը, ամբարիշտն ու անբասիրը, վա՞տ տուն է պահում, նրա ամանորյա սեղանից պակա՞ս են լցոնած փասիանը, ապխտած խոճկորը, «Ախթամար» կոնյակն ու «Աբսոլյուտ» օղին, կամ նրա Վիկտորյա և Երմոնյա դուստրերը ԱՄՆ-ից ու Եվրամիությունից բերված իննսունինըդոլարանոց կեղծամ և ադամանդե ականջօղեր կամ վերջին սերնդի նոսրութուններ չունե՞ն:

Զարմանալի մարդիկ են ԵՊՀ հայոց լեզվի դասախոսները. ուզում են մեր անմեղ երեխաներին անպայման գրագետ դարձնել. հետաքրքիր է՝ նրանք ուրիշ բանուգործ չունե՞ն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԲ – Ակսել Բակունց

ԱԻ – Ավետիք Իսահակյան

ԱՍ – Ասար Սեբաստացի

ԱՇ – Անանիա Շիրակացի

ԱՊ – Արամ Պաչյան

ԲԼ – Բուլվեր Լիտթոն

ԳՆ – Գրիգոր Նարեկացի

ԳԷ – Գևորգ Էմին

ԴԴ – Դերենիկ Դեմիրճյան

ԴՎ – Դանիել Վարուժան

ԵԶ – Եզնիկ Կողբացի

ԵՉ – Եղիշե Չարենց

ԽԱ – Խաչատուր Աբովյան

ՀԳ – Հրաչյա Գաբրիելյան

ՀԹ – Հովհաննես Թումանյան

ՀՄ – Հրանտ Մաթևոսյան

ՀՇ – Հովհաննես Շիրազ

ՀՊ – Հակոբ Պարոնյան

ՀՍ – Համո Սահյան

ՀՍՀ – Հայկական սովետական հան-
րազիտարան

ՄԳ – Մուշեղ Գալշոյան

ՄՄ – Միսաք Մեծարենց

ՆԱ – Նշան Աբասյան

ՆԶ – Նաիրի Զարյան

ՇՇ – Շահան Շահնուր

ՊՍ – Պարոյր Սևակ

ՊԴ – Պետրոս Դուրյան

ՌԴ – Ռազմիկ Դավոյան

ՌՄ – Ռուբեն Սևակ

Ս – Սիամանթոն

ՎՍ – Վիլյամ Սարոյան

ՎՏ – Վահան Տերյան

ՖՐ – Ֆրիկ

ասոր. – ասորերեն

բրբռ. – բարբառային

դ. – դար

դդ. – դարեր

երբ. – եբրայերեն

եզ. – եզակի

Եր. – Երևան

թ. – թվական

թթ. – թվականներ

ժող. – ժողովրդական

լատ. – լատիներեն

խսկց. – խոսակցական

ծան. – ծանոթություն

կրավ. – կրավորական

հազ. – հազար

հզվ. – հազվադեպ

հմմտ. – համեմատել

հնի. – հնդեվրոպական նախալեզու

հնց. – հնացած

հոգն. – հոգնակի

հրամ. եղ. – հրամայական եղանակ

հուն. – հունարեն

մ. թ. ա. – մեր թվարկությունից առաջ

մ. թ. – մեր թվարկության

մլն - միլիոն

մլրդ - միլիարդ

ներգ. - ներգործական

նշվ. - նշված

չեզ. - չեզոք

պատ. - պատասխան

պիլ. - պահլավերեն

պրս. - պարսկերեն

ռուս. - ռուսերեն

վերաբ. - վերաբերական

փխբ. - փոխաբերական

փոխ. - փոխանակ

Ք. ա. - Քրիստոսից առաջ

նն - ն այլն

օր. - օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ.....	3
ՄԱՍ 1	
ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....	6
1.1. Լեզվի հասարակական դերը, հիմնական հատկանիշները	6
1.2. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում	7
1.3. Հայոց լեզվի ձևավորումը	8
1.4. Հայոց լեզվի տարբերակները. բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու.....	10
1.5. Գրական հայերենի զարգացման փուլերը. գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ արևմտահայերեն և արևելահայերեն.....	12
1.6. Արևմտահայերեն և արևելահայերեն	14
1.7. Պետական լեզու: Հայոց լեզվի գործառույթները	15
Վարժություններ և առաջադրանքներ.....	16
ՄԱՍ 2	
ԽՈՍՔ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՍՏԿԱՆԻՇՆԵՐԸ, ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ: ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	18
2.1. Խոսքի մշակույթի ուսումնասիրության առարկան: Խոսքի մշակույթ հասկացությունը: Կապը այլ գիտաճյուղերի հետ	18
2.2. Խոսք	19
2.3. Խոսքի դրսևորման ձևերը	20
2.3.1. Համառոտ և ծավալուն խոսք.....	20
2.3.2. Բանավոր և գրավոր խոսք.....	20
2.3.3. Մենախոսություն և երկխոսություն.....	22
2.3.4. Արտաքին և ներքին խոսք.....	23
2.3.5. Հեղինակային և ուրիշի խոսք.....	23
2.3.6. Արձակ և չափածո խոսք.....	23

2.3.7. Պարբերություն	24
Վարժություններ և առաջադրանքներ	24
ՄԱՍ 3	
ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ	28
3.1. Ընդհանուր բնութագիր	28
3.2. Արտալեզվական գործոններ	29
3.3. Հնչերանգ և դիմելաձև	32
3.4. Իրադրություն և խոսքային կաղապարներ	34
Վարժություններ և առաջադրանքներ	40
ՄԱՍ 4	
ԽՈՍՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ	43
4.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ	44
4.1.1. Բովանդակության ճշտություն	44
4.1.2. Լեզվական նորմի պահպանում.....	44
4.1.3. Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ հնչյունական (արտասանական), բառային, քերականական	45
Ա. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ (ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ) ՆՈՐՄԵՐ	45
Ա.1. Ուղղախոսություն.....	45
Ա.2. Տառադարձություն.....	47
Ա.3. Հնչյունափոխություն	48
Ա.4. Շեշտը.....	50
Վարժություններ և առաջադրանքներ	52
Բ. ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ	54
Բ.1. Հայոց լեզվի բառապաշարը	54
Բ.1.1. Բնիկ հայերեն բառերը.....	55
Բ.1.2. Ստացվածքային բառեր.....	56
Բ.1.3. Փոխառություններ և օտարաբանություններ	56
Բ.1.4. Նորակազմություններ	59
Բ.2. Տերմիններ.....	61
Բ.3. Բառի կազմության սխալ ընկալում	64
Բ.4. Ստուգաբանություն	65
Բ.5. Հապավական բարդություններ և համառոտագրություններ	66
Բ.6. Իմաստափոխություն.....	68
Բ.7. Հոմանիշների շփոթություն	70

Բ.8. Հարանունների շփոթություն.....	71
Բ.9. Բառային գուգակցում (համապատասխանություն). բառերի իմաստային, բառապաշարային և քերականական անհամատեղելիություն	73
Բ.10. Ավելորդաբանություն և կրկնաբանություն	75
Վարժություններ և առաջադրանքներ	77
Գ. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ	85
Գ. 1. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ	85
Գ.1.1. Անձնանիշ և իրանիշ գոյականներ.....	85
Գ.1.2. Գոյականի հոգնակի թվի կազմության յուրահատկություններ.....	86
Գ.1.3. Հավաքական գոյականներ	89
Գ.1.4. Հոգնակերպ գոյականներ.....	90
Գ.1.5. Անեզական գոյականներ.....	90
Գ.1.6. Որոշյալ և անորոշ առումներ.....	90
Գ.1.7. Հոլովական տարբերակային ձևեր (գուգաձևություններ)	91
Վարժություններ և առաջադրանքներ	96
Գ.1.8. Ածականի տարբերակային ձևեր.....	99
Գ.1.9. Թվականի տարբերակային ձևեր	100
Գ.1.10. Դերանվան տարբերակային ձևեր.....	104
Գ.1.11. Դերանվանական հոդեր.....	108
Վարժություններ և առաջադրանքներ	109
Գ.1.12. ԲԱՅ	113
Վարժություններ և առաջադրանքներ	117
Գ.1.13. Սակբայների գործածության յուրահատկություններ.....	121
Գ.1.14. Կապերի գործածության յուրահատկություններ.....	122
Գ.1.15. Շաղկապների գործածության յուրահատկություններ.....	124
Գ.1.16. Վերաբերականների և ձայնարկությունների գործածության յուրահատկություններ	126
Վարժություններ և առաջադրանքներ	127
Գ.2. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՅՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	130
Գ.2.1. Համաձայնություն	130

Գ.2.2. Խնդրառություն (հովվառություն, կառավարում).....	134
Գ.2.3. Առդրություն	135
Գ.2.4. Շարադասություն.....	135
Գ.2.5. Նախադասության տարբերակային ձևեր կամ տեսակներ.....	138
Գ.2.6. Համանիշ շարահյուսական կառույցներ	140
Գ.2.6.1. Դրական և ժխտական նախադասություններ	140
Գ.2.6.2. Նախադասության անդամների համանիշ ձևեր	140
Գ.2.6.3. Շաղկապական և անշաղկապ բարդ նախադասություններ.....	141
Գ.2.6.4. Ներգործական և կրավորական կառույցներ	141
Գ.2.6.5. Դերբայական դարձված և երկրորդական նախադասություն.....	142
Գ.2.6.6. Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք	142
Վարժություններ և առաջադրանքներ	143
4.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ	149
4.2.1. Բովանդակության հարստություն և տեղեկատվականություն	149
4.2.2. Հնչյունական (ձայնական) հարստություն.....	150
4.2.3. Բառային կազմի հարստություն: Բառապաշար	150
4.2.4. Բառային գուգակցում: Դարձվածքներ	152
4.2.5. Խոսքի քերականական հարստություն	153
4.3. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ.....	154
4.3.1. Խոսքի առարկայի իմացություն	154
4.3.2. Բառընտրություն և բառագործածություն. հոմանիշների ընտրություն	154
4.3.3. Ժամանակավրիպություն	155
4.3.4. Բարբառայնություններ և ժարգոնային բառեր	156
4.3.5. Տրամաբանականություն	157
4.3.6. Բառակազմության և ձևակազմության ճշգրտություն.....	157
4.3.7. Շարահյուսական կառույցների հստակություն	158
4.4. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)	158
4.4.1. «Սեղմ» բառապաշար.....	158
4.4.2. Դարձվածքներ, ասույթներ, թևավոր խոսքեր	159
4.4.3. Հապավումներ և համառոտագրություններ	160
4.4.4. Քերականական կարճ ձևեր և կառույցներ	160

4.5. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	161
4.5.1. Տեքստի կառուցվածքային և իմաստային բաղադրիչների սերտ կապի ապահովում	161
4.5.2. Տրամաբանության օրենքների պահպանում	162
4.5.3. Տրամաբանական սխալներ	164
Վարժություններ և առաջադրանքներ	166
4.6. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ - ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	175
4.6.1. Առձայնույթ և բաղաձայնույթ	175
4.6.2. Հոմանշություն	176
4.6.3. Աստիճանավորում	177
4.6.4. Հականշություն և հակադրություն	178
4.6.5. Համանունություն և հարանունություն	179
4.6.6. Բառախաղ	180
4.6.7. Շրջասույթ	181
4.6.8. Ավելադրություն (հավելաբանություն) և կրկնաբերություն	182
4.6.9. Բազմաշաղկապություն և անշաղկապություն	182
4.6.10. Զեղչում	183
4.6.11. Ճարտասանական հարց և ճարտասանական բացականչություն	183
4.6.12. Մեղմասություն	184
4.6.13. Չափազանցություն և նվազաբանություն	185
4.6.14. Նրբաբանություն	186
4.6.15. Շրջադասություն	186
4.6.16. Հեզնանք	187
4.6.17. Պարադոքս	187
4.6.18. Համեմատություն	188
4.6.19. Փոխաբերություն	189
4.6.20. Մակդիր	191
4.6.21. Անձնավորում	191
4.6.22. Փոխանունություն և համըմբոնում	192
Վարժություններ և առաջադրանքներ	194
ՄԱՍ 5	
ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ	202
5.1. ԳԻՏԱԿԱՆ ՈՃ	204
5.1.1. Ընդհանուր հատկանիշներ	205

5.1.2. Ենթառճեր և ժանրեր	209
5.1.3. Գիտական աշխատանքների կառուցվածքը և ձևավորումը	211
Վարժություններ և առաջադրանքներ	214
5.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ) ՈՃ.....	218
Վարժություններ և առաջադրանքներ	224
5.3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ.....	227
Վարժություններ և առաջադրանքներ	233
5.4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ.....	235
Վարժություններ ու առաջադրանքներ	241
5.5. ԼՐԱԳՐԱՅԻՆ - ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՈՃ	244
5.5.1. Զանգվածային լրատվամիջոցների լեզուն	245
5.5.2. Գովազդի լեզուն.....	250
Վարժություններ և առաջադրանքներ	253
ՄԱՍ 6	
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ ԵՎ ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ	260
6.1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ	260
Վարժություններ ու առաջադրանքներ	265
6.2. ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍ.....	267
Վարժություններ և առաջադրանքներ	273
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ	275
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	288
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՄԲ ԲՆԱԳՐԵՐ, ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍԵՐ	304
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	323

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ
ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ**

*(ձեռնարկ բուհերի բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետների համար)*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 15.02.2021:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 20,75:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am